


ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՐԲ

ՑՈՒԲԵՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝
ԱՌՈՋԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ
10-ԱՄԵԱԿԻ ԱՌՁԻ:
ՎԵՐԱՄԵՆՈՒՄ ԵՎ ԲԵՐԱՑՆԱԿՈՒՄ
ՏԱՐԲԵՐՎԷ:

ՇԱՐԻՊՈՂՆԵՐԻ



*Կեանք, որ
նշանակություն ունի
այսօր եւ յաւիտեան:*

ՃՈՒ ՊԻՎԻԻ

Թանկագին ընկեր,

Սաղմոս 90.12-ին մէջ Մովսէս կ'աղաղակէ Աստուծոյ. «Սորվեցո՛ւր մեզի, որ... համբերե՛ք մեր օրերը»: Որքան ալ ըլլայ մարդու օրերու քանակը այս երկրի վրայ, այն իսկապէս որ ոչինչ է՝ անվերջ յաւիտենութեան համեմատ: Բայց եւ այնպէս, այն, թէ ինչպէս մենք կը տնտեսենք մեզի շնորհուած կարծասելու ժամանակը այս աշխարհին մէջ, պիտի որոշէ այն վարձատրութիւնը, որ մենք պիտի ստանանք, երբ դուրս ելլենք ժամանակային սահմաններէն:

«Յաւիտենութեամբ Երկրի Սիրտը» գիրքի ուղերձը ամենաազդեցիկ եւ վերափոխող յայտնութիւններէն մէկն է, որոնք ես ստացած եմ Տիրոջ Հոգիէն: Այն եկեղեցիները, առաջնորդները եւ մարդիկ, որոնք բացայայտած են այս ճշմարտութիւնները, ձեռք ձգած են նոր նպատակներ, հեռանկարներ եւ վճռականութիւն: Աստուծոյ Թագաւորութեան ծառայելու համար: Այս ուղերձը ձեզի փոխանցելը պատիւ է ինծի համար:

Ես կ'ուղարկեմ այս գիրքը ձեզի եւ այլ քրիստոնէայ առաջնորդներու ամբողջ աշխարհի տարածքին՝ որպէս իմ սիրոյ եւ աջակցութեան փոքրիկ նշան: Կը խնդրեմ, որ ուսումնասիրէք այս թեման եւ այլ նիւթեր, որոնք հասանելի են առցանց, եւ փոխանցեք ատոնք բոլորին, որուն որ կը ճանչնաք: Թող որ ուսումնասիրելով այս էջերուն մէջ զետեղուած ճշմարտութիւնները՝ դուք հասկնաք այն մեծ ծրագիրը, նպատակը եւ կոչումը, որոնք Աստուած որոշած է ձեզի համար, եւ մուտք գործէք ատոնց մէջ:

Իմ ընկեր, կ'աղօթեմ, որ Ձեր կեանքը վերափոխուի նոյն չափով, որուն միջոցով վերափոխուեցաւ իմ կեանքը, երբ ես ստացայ այս ուղերձը: Համոզուած եմ, որ եթէ ջանասիրաբար ձգտիք ապրիլ ըստ այս յայտնութեան, ձեր կեանքը, ընտանիքը եւ ծառայութիւնը նոյնը չեն մնար: Մեծ սիրով կը ցանկան լսել, թէ ինչպիսի ազդեցութիւն ունեցաւ այս ուղերձը ձեր եւ ձեր հոգատարութեան ներքոյ գտնուող մարդոց կեանքին մէջ:

Ձեր եղբայրը Քրիստոսի մէջ,



Շոն Դիվի
JohnBevere@ymail.com

 **MESSENGER**
INTERNATIONAL
MessengerInternational.org

ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՐԲ

ՇԱՐԺՈՂԱԵՐԷ



*Կեանք, որ
նշանակութիւն ունի
այսօր եւ յաւիտեան:*

⇐ ΔՈՆ ՊԻՎԻ ⇐

«Այնքան դիրքին է խճճուիլ մեր առօրեայ հոգերուն մէջ եւ չապրիլ յանուն ամենակարեւորին: Ճոն Պիվիլիի այս ազդեցիկ գիրքը, որ կը կոչուի «Յաւիտենութեամբ շարժողները», պիտի քաջալերէ, պիտի ոգեշնչէ եւ պիտի սպառազինէ ձեզ, որպէսզի ձեր կեանքը յաւիտենական ազդեցութիւն ունենայ»:

– Քրէյկ Կրոյշէլ, «Լայֆ Չըրչ» եկեղեցոյ հովիւ, նաեւ «#Պայքարներ. հետեւիլ Յիսուսին սեփիակեղորն աշխարհին մէջ» գիրքին հեղինակ

«Եթէ կը փնտռէք ձեր կեանքի նպատակը, ապա *«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքը ձեր պատասխանն է: Շնորհիւ այս կարեւորագոյն ուղերձին՝ ձեր միտքը վեր պիտի բարձրանայ ձեր առօրեայէն: Այս գիրքը պարտադիր է ընթերցման համար»:

– Ճոն Ք. Մաքսուէլ, հանրաձանաչ հեղինակ եւ քարոզիչ

«*«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքի տասնամեակին նուիրուած յոբելենական հրատարակութիւնը, որուն հեղինակը իմ ընկեր Ճոն Պիվիլին է, մեծ յիշեցում է այն մասին, որ կեանքը անելին է, քան մեր օրերու ընդհանուր քանակը: Կարդալով այս գիրքը՝ դուք խաղաղութիւն եւ յոյս պիտի գտնէք, քանի որ այն կը յիշեցնէ ձեզ, որ համաձայնեցնէք ձեր կեանքը վերին կոչման հետ»:

– Սթիվըն Ֆարթիք, «Էլեվէյշն Չըրչ» եկեղեցոյ հովիւ եւ հանրաձանաչ հեղինակ՝ ըստ *«Նիւ Եորք Թայմզ»* ամսագրին

«*«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքին մէջ Ճոնը, հիմնուելով Աստուծոյ Խօսքին վրայ, կը բացատրէ, թէ որքան վճռորոշ է յաւիտենութեան վրայ կեդրոնացած մտածելակերպ ունենալը: Համոզուած եմ, որ այս ուսմունքը պիտի օգնէ Քրիստոսին հաւատացողներուն՝ անելի մեծ իմաստութիւն ձեռք ձգելու եւ անելի լաւ հասկնալու, թէ ինչպէս պէտք է ապրիլ այսօր յաւիտենութեան համար»:

– Ճոյս Մայեր, հանրաձանաչ գրող եւ քրիստոնէայ ուսուցիչ

«*«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքը համարձակ կերպով կ'անդրադառնայ մարդու գոյութեան մեծագոյն հանելուկներէն մէկուն՝ յաւիտենութեան: Իրեն յատուկ պարզ եւ հիմնաւոր մօտեցումով Ճոն Պիվիլը կը հետազօտէ Աստուածաշունչին մէջ յայտնուած իմաստութիւնը այդ մասին եւ կ'ոգեշնչէ իր ընթերցողները՝ ապրելու յաւիտենութեան համար եւ ընդլայնելու իրենց ազդեցութիւնը՝ դուրս ելլելով իրենց կեանքի սահմաններէն»:

– Պրայան Դիաթոն, «Յիլտոնկ» եկեղեցոյ աագ հովիւ

«Իւրաքանչիւր անձ, որ կը ցանկայ յաւիտենական ժառանգութիւն կառուցել եւ առաջանալ Աստուծոյ Թագաւորութեան մէջ, պէտք է ներառէ *«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքը իր ամենամեայ ընթերցանութեան ցուցակին մէջ: Տրամադրելով ծանրակշիռ աստուածաշնչեան հիմնաւորում՝ ճոնը կոչ կ'ընէ եւ կ'ոգեշնչէ ընթերցողները առաւելագոյնս օգտագործելու այս երկրի վրայ ունեցած ամենամեծ հարստութիւնը՝ ժամանակը, եւ կարելի եղած չափով մեծ ազդեցութիւն ձգել յաւիտենութեան համար: Այս գիրքը ժամանակակից դասական աշխատութիւն է»:

– Քրիստոս Զոհիս, «Չըրչ ըվ Յայընտս» եկեղեցոյ գլխաւոր հովիւ, նաեւ՝ «Թարմ օդ» եւ «Չորս գաւաթ» գիրքերու հեղինակ

«Յաւիտենութեամբ շարժողները» գիրքին մէջ ճոն Պիվիըրը կը հեռացնէ հանելուկային քողը յաւիտենութենէն եւ պատկերաւոր կը բացատրէ, թէ ինչպիսի ազդեցութիւն պիտի ունենան մեր այսօրուան որոշումները այն ժամանակ, երբ հեռանանք այս աշխարհէն: Դուք չէք կրնար դուք ձեզի թոյլ տալ անտեսելու այս գիրքը»:

– Սարք Պեթերսոն, «Շրջաններ գծողը» գիրքի հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք Թայմզ» ամսագրին, եւ «Նեշընլ քոմեունիթի Չըրչ» եկեղեցոյ գլխաւոր հովիւ

«Յաւիտենութեամբ շարժողները» գիրքին մէջ ճոն Պիվիըրը կոչ կ'ընէ ընթերցողներուն մշտապէս յաւիտենական հեռանկար ունենալ: Ճոնը իմ լաւ ընկերներէն է, եւ ինձի համար պատիւ է ներկայացնել այս գիրքը»:

– Ճենթեթեն Ֆրանքլին, Ճորձիա նահանգի Կէյնսուիլ քաղաքին մէջ գտնուող «Ֆրի Չեփըլ» եկեղեցոյ աւագ հովիւ եւ հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք Թայմզ» ամսագրին

«Յաւիտենութեամբ շարժողները» գիրքը պիտի փոխէ ձեր պատկերացումը ժամանակին եւ զայն օգտագործելու մասին: Ճոնը փայլուն կերպով կը մեկնէ շարք մը աստուածաշնչեան ճշմարտութիւններ, որոնք պիտի օգնեն ձեզ ամէն օր ապրելու՝ ունենալով այնպիսի նպատակ, որ կը գերազանցէ ձեր ժամանակաւոր իրականութիւնը»:

– Եպիսկոպոս Թի Տի Ճէյքս, հանրաճանաչ հեղինակ՝ ըստ «Նիւ Եորք Թայմզ» ամսագրին, եւ «ԹիՏիՃէյ Էնթերփրայսիս» ընկերութեան գլխաւոր տնօրէն

«Ազդեցիկ, ուշագրաւ եւ խոնարհեցնող գիրք: Ես չէի կրնար մէկ կողմ դնել այն: Կ'ուզեմ, որ բոլորը կարդան: Կը խնդրեմ, ժամանակ յատկացուցէք այդ գիրքին համար»:

– Պիլ ՄաքՔարթնի, «Փրոմիս Քիվըրս» ծառայութիւն

ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՐԲ

ՑՈՒԲԵՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱՊՈՒԹԻՒՆ՝
ԱՌՋԻՆ ՀՐԱՏԱՐԱՊՈՒԹԵԱՆ
10-ԱՄԵԱԿԻ ԱՌՋԻՒՄ:
ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԸՄԿԱՑՄԱՆԸ
ՑԱՐԲԵՐԱԿ:

ՇԱՐԺՈՂԱՆԵՐԸ



*Կեանք, որ
նշանակություն ունի
այսօր եւ յաւիտեան:*

⇐ ≡ ՃՈՆ ՊԻՎԻՐ ≡ ⇒

Driven by Eternity by John Bevere, Western Armenian

© 2017 Messenger International

www.MessengerInternational.org

Originally published in English as Driven by Eternity

Additional resources in Western Armenian by John Bevere are available
for free download at: www.CloudLibrary.org

To contact the author: JohnBevere@ymail.com

«Յաւիտենութեամբ շարժողները», Ճոն Պիվիր, արեւմտահայերէնով

© 2017 Messenger International

www.MessengerInternational.org

Սկզբնապէս հրատարակուած է անգլերէնով,

«Driven by Eternity» վերնագիրով:

Ճոն Պիվիրի այլ հեղինակային նիւթեր արեւմտահայերէնով կրնաք
անվճար ներբերել հետուեալ կայքէջէն. www.CloudLibrary.org

Հեղինակին հետ կապ հաստատելու համար. JohnBevere@ymail.com

Այս գիրքը կը նուիրեմ...
Անոնց, որոնք անխոնջ աշխատանք
կը կատարեն՝ կառուցելով մարդոց կեանքերը
յաւիտենութեան համար:
Քաջալերուեցէ՛ք ձեր ընթացքին մէջ:
Անոր գալուստը հաստատ է եւ
Անոր վարձատրութիւնը Իր հետն է:
«Այս է յաւիտենական կեանքը,
որ ճանչնան Քեզ՝ միմիայն ճշմարիտ Աստուած,
ու Յիսուս Քրիստոսը, որ Դուն ուղարկեցիր»:
ՅՈՎՀԱՆՆԵՍ 17.3

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Այս գիրքին նասին	11
Նախաբան	13
Ներածություն	15

ԲԱԺԻՆ ԱԷԿ

Գլուխ 1. Յաւիտենություն	19
➤ Գլուխ 2. Աֆապէլի թագաւորութիւնը. կեանքը Էնտելի մէջ	35
➤ Գլուխ 3. Աֆապէլի թագաւորութիւնը. Ղատաստանի օրը Ա	55

ԲԱԺԻՆ ԵՐԿՈՒ

Գլուխ 4. Մահացածներու յաւիտենական տունը	79
Գլուխ 5. Խաբուածներու դատաստանը	97

ԲԱԺԻՆ ԵՐԵՔ

Գլուխ 6. Մեծ նահանջը	125
Գլուխ 7. Հիմքը	149

ԲԱԺԻՆ ՉՈՐԱ

➤ Գլուխ 8. Աֆապէլի թագաւորութիւնը. Ղատաստանի օրը Բ	161
Գլուխ 9. Երկինք	185
Գլուխ 10. Քրիստոսի ատեանը	203

ԲԱԺԻՆ ՀԻՄԳ

Գլուխ 11. Աստուծոյ տունը	219
Գլուխ 12. Կանչուած՝ Աստուծմէ	233

ԲԱԺԻՆ ՎԵՑ

Գլուխ 13. Բազմապատկում	257
Գլուխ 14. Անձնական ազդեցութիւն	283
Յաւելուած. Ինչպէս փրկութիւն ստանալ	299
Նշումներ	301

ԱՅՍ ԳԻՐՔԻՆ ԱՎԱԻՆ

Դուք կրնաք ընթերցել այս գիրքը սկիզբէն մինչեւ վերջ՝ ինչպէս եւ որեւէ այլ գիրք: Այնուամենայնիւ, անոնց համար, որոնք կը ցանկան օգտագործել այս գիրքը անհատական կամ խմբային ուսուցման համար, այն մասնատուած է վեց բաժիններու, որոնց կը հետեւին հարցումներ՝ քննարկման համար: Այս դասընթացքը նախատեսուած է վեց-շաբաթեայ ուսուցման համար, բայց դուք ազատօրէն կրնաք յարմարցնել այն ձեր առօրեային:

Իւրաքանչիւր բաժին կը պարունակէ հետեւեալ գլուխները.

Բաժին Մէկ	Գլուխներ 1-3
Բաժին Երկու	Գլուխներ 4-5
Բաժին Երեք	Գլուխներ 6-7
Բաժին Չորս	Գլուխներ 8-10
Բաժին Հինգ	Գլուխներ 11-12
Բաժին Վեց	Գլուխներ 13-14

Եթէ դուք կ'ընթերցէք այս գիրքը *«Յաւիտենութեամբ շարժողները»* դասընթացքի շրջանակներուն մէջ, մենք կ'առաջարկենք ձեզի, որ ձեր փոքրիկ խումբին մէջ դիտէք կամ ունկնդրէք ամէն շաբթուայ ուսումնական տեսանիւթը եւ պատասխանէք իւրաքանչիւր բաժնի համար նախատեսուած քննարկման հարցումներուն: Խնդրեցէ՛ք ձեր խումբի բոլոր անդամներէն ընթերցել գիրքի համապատասխան գլուխները՝ մինչեւ ձեր յաջորդ հաւաքոյթը: Իւրաքանչիւր շաբթուան համար նախատեսուած է մէկական ուսումնական տեսանիւթ:

«Յաւիտենութեամբ շարժողները» գիրքի ուսուցումը առաւել պատկերաւոր դարձնելու համար ճոճն ներառած է հետաքրքրական եւ առականման պատմութիւն մը Աֆապէլի թագաւորութեան մասին, որուն մէջ կ'իշխէ ակնառու Ճէյլըն թագաւորը, իսկ անոր հպատակները կը նմանին մեզի եւ մեզ շրջապատող մարդոց: Այն տպաւորիչ կերպով կը պատկերէ *«Յաւիտենութեամբ շարժողները»* գիրքի ուղերձը: Այս պատմութեան հերոսները, որոնք թէեւ յօրինուած են, բայց իրական մարդոց կը նմանին, պիտի օգնեն ձեզի՝ ընթերցողին, աւելի լաւ ճանչնալու եւ հասկնալու Աստուծոյ Թագաւորութեան գաղտնիքներն ու խորհուրդները:

Դուք կրնաք գտնել Աֆապէլի պատմութիւնը այս գիրքի 2,3,8 գլուխներուն մէջ: Ատոնք նշուած են հետեւեալ նշանով (⇒) բովանդակութեան մէջ:

Բացի այդ՝ այս պատմութեան հիման վրայ պատրաստուած է շատ ազդեցիկ ներկայացում՝ *Աֆապէլ* Լսաթատրոնը, որ հասանելի է ձոն Պիվիրի «CloudLibrary.org» կայքին մէջ:

Այս ամէնը ձեզի համար է:

ՆԱԽԱԲԱՆ

Պիտի գայ այն օրը, երբ մեզմէ իւրաքանչիւրը պիտի կանգնի Աստուծոյ առջեւ: Հարցը անիկա է, թէ արդեօ՞ք մենք պատրաստ պիտի ըլլանք:

Աստուածաշունչը կը յորդորէ մեզ. «Եղբայրներ՛ր եւ քոյրեր՛ր, ամէն ջանք ըրէ՛ք, որ *համոզուած* ըլլաք ձեր կոչման եւ ընտրութեան մէջ» (Բ. Պետրոս 1.10, NET):

Պատահա՞ծ է ձեր հետ, որ համոզուած ըլլաք ինչ որ բանի մը մէջ, իսկ յետոյ պարզուի, որ սխալած էիք: Ատիկա տհաճ բան է: Ինչպէս եւ տղամարդոց մեծ մասը, ես յաճախ համոզուած կ'ըլլամ, որ ճիշդ ճամբան ընտրած եմ, ցուցմունքները, ընթացակարգը, բանաձեւը կամ մեթոտները: Այնուամենայնիւ, կը պատահի, որ կը յայտնուիմ սխալ վայրի մէջ կամ ստիպուած կ'ըլլամ կրկին սկսելու իմ նախագիծը, հաւաքակցունը կամ բանաձեւը, այս անգամ՝ պատշաճ կերպով հետետելով ցուցմունքներուն: Եւ ատիկա ամէն անգամ հիասթափութիւն կը յառաջացնէ: Ես պարապ տեղ վատնեցի ինքնաշարժի վառելիքը, իմ ժամանակը, միջոցները եւ դրամը: Ես *համոզուած* էի, որ գիտէի ճիշդը, բայց, փաստօրէն, չէի գիտեր:

Ես չեմ ուզեր կրկնել նոյն սխալը յաւիտենութեան հարցին մէջ:

Բոլոր գիրքերէն, որոնք ես գրած եմ, «Յաւիտենութեամբ շարժողները» գիրքը ամենամեծ ազդեցութիւնը ձգած է կեանքիս մէջ: Առաջին անգամ այն լոյս տեսաւ մէկ տասնամեակ առաջ, եւ ատկէ յետոյ իմ խումբը եւ ես անթիւ վկայութիւններ ստացանք փոխուած կեանքերու մասին: Այս գիրքը վերամշակելը եւ թարմացնելը դիւրին առաջադրանք չէր. այնուամենայնիւ, երբ մենք կը քննարկէինք գիրքի վերահրատարակութիւնը, ես գիտէի, որ մենք պէտք է ընենք ատիկա: Ուժգին զգացում ունէի, որ այս էջերուն մէջ գետեղուած ուղերձը ե՛ւ հրատապ է, ե՛ւ խիստ կարեւոր: Մեր՝ Աւետարանի տնտեսներու մեծագոյն կոչումն է՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ մարդիկ պատրաստել յաւիտենութեան համար: Ես կ'ուզեմ, որ դուք յաւիտենական *վստահութիւն* ունենաք:

Գոյութիւն ունի սթափեցնող ճշմարտութիւն մը. երբ մենք կենանք մեր Արարիչին առջեւ, *շատ ուշ պիտի ըլլայ ամէն ինչ կրկին սկսելու համար*: Յոյսով եմ եւ կ'աղօթեմ, որ երբ ընթերցէք եւ վերընթերցէք

այս ուղերձը, Սուրբ Հոգին պիտի օգտագործէ այն, որպէսզի օգնէ ձեզի լիարժէք կերպով իրագործելու ձեր յաւիտենական ներուժը, եւ յաւիտեան պիտի փոխէ ձեզ իր շնորհքով ու ողորմութեամբ:

Անկեղծութեամբ՝

Ճոն Պիվիր,

Մայիս, 2017թ.

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ի՞նչ առանձնայատուկ բան կայ «յաւիտենութիւն» բառին մէջ, որ կը գրաւէ մեր ուշադրութիւնը, եւ նոյնիսկ կրնայ ազդեցութիւն ձգել ամբողջ պետութեան մը վրայ: Կայ պատմութիւն մը Արթիւր Սթէյսի մասին: Ան ծնած է Աւստրալիոյ մէջ, քսաներորդ դարի սկիզբը, եւ անոր կեանքը լեցուն էր անյուսութեամբ: Առաջին համաշխարհային պատերազմի եւ Մեծ Ընկճուածութեան միջեւ ինկած ժամանակահատուածին մէջ ան անտուն թափառական մըն էր, որ միշտ կը գինովնար եւ պզտիկ գողութիւններ կ'ընէր: 1930 թուականի Օգոստոս 6-ին հանդիպեցաւ Յիսուսին, եւ անոր կեանքը առանց ետդարձի փոխուեցաւ: Կարճ ժամանակ յետոյ ան լսեց իր հովիւին աղաղակը. «Երանի՛ ես կարենայի գոչել «յաւիտենութիւն» բառը Սիտնի քաղաքի բոլոր փողոցներուն մէջ»: Եւ ան այդ աղաղակը տարածելու եւ իրագործելու մղում գգաց:

Արթիւրը ամէն օր շատ կանուխ կ'արթննար: Ան մէկ ժամ կ'աղօթէր, իսկ յետոյ դուրս կ'ելլէր տունէն՝ ժամը 05:00–05:30-ին, որպէսզի երթար հոն, ուր որ Աստուծոյ առաջնորդութիւնը կը զգար: Ժամեր շարունակ Սիտնի քաղաքի փողոցներու մայթերուն վրայ ան «յաւիտենութիւն» բառը կը գրէր, մօտաւորապէս իւրաքանչիւր 30 մեթրի վրայ: Աւելի քան քսան տարի անոր գործը հանելուկ մնաց բոլորին համար. ո՞վ կը գրէր այդ բառը, որ կը դրդէր հազարաւոր մարդոց կենալու եւ խորհելու իր՝ թէ՛ անմիջական, թէ՛ երկարաժամկէտ նշանակութեան մասին: Արդեօ՞ք այս անյայտ մարդը հասկցած էր այս բառին ազդեցութիւնը եւ դերը: Այս հանելուկը լուծուեցաւ միայն 1956 թուականին:

Արթիւրին մահէն երկու տարի յետոյ՝ 1967 թուականին, սիտնեցի բանաստեղծ Տակլաս Սթիուարթը հրատարակեց այս տողերը՝ անմահացնելով փողոցային որմնանկարիչ-քարոզիչի գրած միակ բառը.

Բանաստեղծ Արթիւր Սթէյսը՝ երկչոտ, խորհրդաւոր,
Որուն գործը մէկ զօրաւոր բառ էր միայն,
Անցաւ ժամանակի եւ տարածութեան խորքերով,
Ուր հնչեց իր բառը, եւ ան լսեց այն.
«ՅԱԻՏԵՆՈՒԹԻՒՆ, ՅԱԻՏԵՆՈՒԹԻՒՆ»՝ գանգի մը նման,
Քաղցր ղօղանջող՝ երկինքէն, մռայլ՝ դժոխքէն:

Այս մէկ բառէն բաղկացած քարոզը հպեցաւ ամբողջ Աւստրալիային: Արթիւրին ուղերձը պահպանուեցաւ սերունդներու համար՝ ճարտա-

րապետ Ռիսլի Սմիթի կողմէն, որ փորագրեց այն պղինձէ տախտակի վրայ, եւ անոր աշխատանքը տեղադրուեցաւ Սիտնիի հրապարակին մէջ: Հետագային այն ցուցադրուեցաւ աւելի քան չորս միլիառ հեռուստադիտողի: Առաջին անգամ ատիկա տեղի ունեցաւ Սիտնիի ողիմպիական խաղերու բացման արարողութեան ժամանակ: Երկրորդ անգամ այն, զարդարուած Սիտնիի Հարպըր Պրիճ կամուրջի հրավառութեան լոյսերով, երեւեցաւ հեռուստադիտողին նոր հազարամեակի նախօրէին:

Յաւիտենութիւնը կը գրաւէ մարդոց ուշադրութիւնը: Ոչ մէկ ռասա, ցեղ եւ սեռ կրնար հակառակիլ աստոր ձգողութեան: Յաւիտենութիւնը մեր սրտին մէջ գոյութիւն ունի արարչութենէն ի վեր, եւ մենք կը զգանք, որ այն մեր գոյութեան ներյատուկ, թէեւ՝ անյայտ չափումն է: Այդ իսկ պատճառով, մենք իմաստութեամբ պիտի վարուինք, եթէ աւելի խորապէս ուսումնասիրենք այն ամէնը, ինչ որ մեր Արարիչը կ'ընէ յաւիտենութեան մասին: Ի վերջոյ, Անոր Խօսքը կը պնդէ. «Յաւիտենից յաւիտեան Ես Աստուած եմ: Ոչ ոք կրնայ հակառակիլ այն բանին, ինչ որ Ես կ'ընեմ» (Եսայեայ 43.13, TLB). Դուք ընտրած էք այս գիրքը յատուկ այս պատճառով, եւ ես կը հաւատամ, որ դուք իմաստուն որոշում կայացուցած էք:

Աղօթենք՝ մինչ սկսիլը: Ես բարձրաձայն աղօթած եմ այս աղօթքը իմ աշխատասենեակին մէջ՝ ակնկալելով, որ հիմա դուք նոյն աղօթքը պիտի աղօթէք հետս.

«Յաւիտենական Աստուած, ամէն ինչի Արարիչ եւ տիեզերքի Տէր, ես կու գամ արջեղ Քու Որդիին՝ Յիսուս Քրիստոսի անունով: Ես կը խնդրեմ՝ համաձայնելով Քու ծառայիդ՝ Ճոն Պիվիիին հետ, որ այսօր Դուն օծես իմ աչքերը՝ տեսնելու համար, եւ իմ ականջները՝ լսելու համար, որ տաս ինձի այնպիսի սիրտ մը, որ կ'ընկալէ եւ կը հասկնայ այն ամէնը, ինչ որ Դուն կ'ընես այս ուղերձին միջոցով: Ես կը գիտակցիմ, որ Սուրբ Հոգիին օգնութեան կարիքը ունիմ, որպէսզի ճանչնամ Քու կամքն ու ճամբաները ինձի համար: Ես կը ցանկամ հաճեցնել Քեզ իմ կեանքի բոլոր օրերուն մէջ, ինչպէս նաեւ՝ ամբողջ յաւիտենութեան ընթացքին մէջ: Յոյ՛ց տուր ոչ միայն Քու ճանապարհները, այլեւ՝ Քու սիրտը, որպէսզի ես ճանչնամ Քեզ, որովհետեւ ասիկա է յաւիտենական կեանքը, որ ճանչնամ Քեզ՝ իմ Երկնային Հայրը: Շնորհակալութիւն Քու զարմանալի հաւատարմութեան, շնորհքին եւ ողորմութեան համար»:

Եկէ՛ք սկսինք՝ գիտակցելով, որ Սուրբ Հոգին պիտի տայ ձեզի այնպիսի խորաթափանցութիւն եւ հասկացողութիւն, որ դուք արանձին անկարելի է ստանաք: Ասիկա այնքա՛ն ոգեշնչող է:



ԲԱԺԻՆ ԱԷԿ



ՏԱԻՏԵՆՈՒԹԻՒՆ

*«Սորվեցր՛ւր մեզի առաւելագոյնս օգտագործել մեր
ժամանակը... եւ մեր ջանքերը արդիւնաւէ՛տ դարծուր:*

Այո, մեր ջանքերը արդիւնաւէ՛տ դարծուր»:

— Սաղմոս 90.12,17, NLT

Գրեթէ բոլորը կը ցանկան նշանակալի կեանք ունենալ: Ասիկա Ճիշդ եւ աստուածահաճոյ ձգտում է: Մովսէսը Ճիշդ ասիկա կը խնդրէր վերոյիշեալ հաստուածին մէջ: Ան սկսաւ՝ իմաստութիւն խնդրելով, որպէսզի առաւելագոյնս օգտագործէր իր ժամանակը: Շատ բաներ, որոնք կորսուած են մեր կեանքին մէջ, կարելի է վերականգնել, բայց անհնար է վերադարձնել սխալ կերպով սպառած ժամանակը: Արեւը մայր մտնելուն պէս՝ օրը առանց վերադառնալու կը հեռանայ:

Մովսէսը աւարտեց իր աղօթքը՝ խնդրելով. «Մեր ջանքերը արդիւնաւէ՛տ դարծուր»: Այս խնդրանքը նոյնութեամբ կը կրկնուի, եւ պատճառը այն չէ, որ Մովսէսը լաւ չէր տիրապետեր քերականութեան կամ վատ յիշողութիւն ունէր: Կրկնութիւնը՝ շեշտադրման ձեւերէն մէկն է. ասիկա հնար մըն է, որ կ'օգտագործուէր հին եբրայերէն գրաւոր խօսքին մէջ: Այսօր, երբ մենք կը ցանկանք շեշտադրել որեւէ բառ կամ արտայայտութիւն, կրնանք օգտուիլ քանի մը հնարներէն: Մենք կրնանք գրել այդ բառը կամ արտայայտութիւնը թաւատառերով (հաստ տառերով) կամ շեղագիրով, ընդգծել այն, ամբողջովին գրել գլխատառերով, շեշտ կամ բացականչական նշան դնել: Այս ամէնուն նպատակն է՝ ուղղել ընթերցողի ուշադրութիւնը շատ կարեւոր մտքերու վրայ: Հրեայ գրողները կրկնակի կը գրէին որեւէ բառ կամ արտայայտութիւն՝ այն շեշտադրելու համար: Անոնք ընդհանրապէս հակուած չէին չափազանցութիւններ ընելու, այլ մեծ զգուշութեամբ կ'ընտրէին իրենց խօսքերը: Այն, որ Մովսէսի խօսքերը կը կրկնուին Աստուածաշունչին մէջ, ցոյց կու տայ, որ յաջողութիւնը ոչ միայն Աստուծոյ կամքն է մեզի համար, այլեւ՝ որ Ան ի սրտէ կը ցանկայ ատիկա: Նոյն Ինքը՝ Տէրը շեշտադրած է այս արտայայտութիւնը:

Մենք ստեղծուած ենք յաջողութիւններու համար: Աստուած կ'ուզէ, որ մեր կեանքը նշանակալի ըլլայ: Ասիկա, նախ եւ առաջ, եղած է Աս-

տուժոյ ցանկութիւնը, եւ ոչ թէ մերը: Ան յայտնած է Իր ցանկութիւնը Աստուածաշունչին միջոցով: Առիթ տուէ՛ք ընդամենը երկու օրինակ բերել: Առաջինը՝ «Քու Տէր Աստուածդ *յաջողակ* պիտի դարձնէ քեզ՝ քու բոլոր գործերուն մէջ» (Երկրորդ Օրինաց 30.9, NLT): Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ գրուած է «*բոլոր*», ոչ թէ «*որոշ*» գործերու մէջ:

Ուրիշ հատուածի մը մէջ գրուած է. «Այս օրէնքներու գիրքը քու բերնէդ թող չգատուի, հապա գիշեր ու ցերեկ անոր վրայ մտածէ, որպէսզի բոլոր անոր մէջ գրուածները պահես ու կատարես. Քանզի այն ատեն *Քու գործերդ յառաջ պիտի տանիս* եւ այն ատեն *յաջողութիւն պիտի գտնես*» (3Եսուայ 1.8):

Անհրաժեշտ է աստուածային իմաստութիւն՝ յաջողութիւնը վայելելու համար: Աստուածաշունչը կը պնդէ. «Ան, որ իմաստութիւն կը սիրէ, իր շահը կը սիրէ, եւ յաջողակ կ'ըլլայ» (Առակաց 19.8, TLB): Իմաստութիւնը կու տայ մեզի անհրաժեշտ գիտելիք եւ կարողութիւն՝ յարմար ժամանակին ճիշդ ընտրութիւններ կատարելու համար: Իմաստութիւնը պարզապէս խելամիտ մարդոց յատուկ յատկանիշ մը չէ. այն կը պատկանի անոնց, որոնք Տիրոջ երկիւղը ունին եւ Քրիստոսի մէջ են: Եթէ դուք կը ձգտիք յաւիտենական նշանակութիւն ունեցող կեանք մը կառուցել, պէտք է ընէք աստիկա աստուածային իմաստութեամբ, եւ այս ուղերձը յատուկ ատոր մասին է:

Իմաստութենէն կը ծնի յաջողութիւնը, որ իր կարգին յարատեւ բաւականութիւն եւ վարձատրութիւններ կը բերէ. «Եթէ դուն իմաստուն ես, քու իմաստութիւնը պիտի վարձատրէ քեզ» (Առակաց 9.12, NIV): Տէրը ոչ միայն կ'ուզէ, որ դուք իմաստուն ըլլաք, այլեւ կը փափաքի վարձատրել ձեզ ատոր համար: Ուրիշ խօսքի մը մէջ գրուած է. «Տէրը օրէօր կը տեսնէ աստուածապաշտ մարդոց բարի գործերը եւ յաւիտենական վարձատրութիւններ կու տայ անոնց» (Սաղմոս 37.18, TLB):

Այն, որ Աստուած կ'ուզէ մեր յաջողութիւնը, վերջին տարիներուն շեշտադրուած է եկեղեցւոյ բաւականին մեծ հատուածին մէջ, եւ աստիկա ճիշդ է: Այնուամենայնիւ, յաճախ յաջողութիւնը կ'ընկալուի՝ ըստ հասարակութեան բնորոշումին, եւ ոչ թէ՝ Աստուծոյ կարծիքին: Այն կը դիտարկուի ժամանակաւոր, ոչ թէ յաւիտենական տեսանկիւնէն: Վերջաւորութեան մեր տեսիլքը եւ պատկերացումները անորոշ կը դառնան, եւ մենք կը սկսինք սխալ բաներու ձգտիլ:

Օր մը բոլորս պիտի կենանք տիեզերքի Ղատաւորին՝ Յիսուս Քրիստոսին առջեւ: Եթէ մենք ապրած ենք աստուածային իմաստութեամբ եւ պտղաբեր եղած ենք, մենք յաւիտենական վարձատրութիւն պիտի ստանանք: Եթէ շեղած ենք մեր ընթացքէն, մենք կ'մ պիտի պատ-

ժուհինք, կա՛մ յաւիտենական կորուստ պիտի կրենք: Այնպէս որ, դուք իմաստութեամբ վարուած կ'ըլլաք, եթէ քանի մը ժամ տրամադրէք Աստուծոյ չափանիշներուն մասին գիտնալու համար:

Այս գիրքին մէջ պիտի խօսինք այն մասին, թէ ինչպէս ձեր կեանքը նշանակալի կրնաք դարձնել ոչ միայն այսօր, այլեւ ամբողջ յաւիտենութեան ընթացքին: Աստուածաշունչը պարզօրէն կը խօսի ասոր մասին: Եթէ մենք պէտք է յաւիտենական հեռանկար ունենանք, ուրեմն նախ պէտք է հասկնանք, թէ ինչ է յաւիտենութիւնը:

Յաւիտենութիւն

Ուշադրութեա՛մբ կարդացէ՛ք այս երկու խօսքերը.

«Ոչ ոք կրնայ սկսիլ հասկնալ յաւիտենութիւնը» (Յոբայ 36.26, TLB):

«...յաւիտենութիւնը դրած է անոնց սրտին մէջ» (Ժողովող 3.11):

Յաւիտենութիւն... Ի՞նչ է ասիկա: Ինչպէ՞ս կարելի է սահմանել այն: Եւ ինչպէ՞ս կարելի է հասկնալ այն: Բառարան մը ասիկա կը սահմանէ որպէս «անսահմանափակ ժամանակ»¹, իսկ միւսը՝ «գոյութեան վիճակ՝ ժամանակէ դուրս»²: Ինչպէ՞ս բառարան մը կրնայ սահմանել յաւիտենութիւնը՝ որպէս գոյութիւն ժամանակուան մէջ, իսկ միւսը՝ որպէս գոյութիւն ժամանակէն դուրս: Եւ ինչո՞ւ ոչ ոք անդրադարձած է ասոր: Արդեօ՞ք մենք կասկածի չէինք ենթարկեր երկու գիտական գիրքեր, եթէ ատոնք աշխարհի մէջ գոյութիւն ունեցող որեւէ երեւոյթ մը սահմանէին՝ նշելով, որ այն գոյութիւն ունի երկու տարբեր վիճակներու մէջ: Օրինակ՝ եթէ գիրք մը սահմանէր ձուկը, որպէս ողնաշարաւոր, որ կ'ապրի ջուրին մէջ, իսկ միւսը նշէր, որ այն կ'ապրի անջուր միջավայրի մէջ, մենք անմիջապէս պիտի եզրակացնէինք, որ ատոնցմէ մէկը սխալ է, եւ պիտի հրաժարէինք սխալ սահմանումէն: Այդ պարագային, ինչո՞ւ մենք կասկածի չենք ենթարկեր յաւիտենութեան սահմանումները այս բառարաններուն մէջ եւ չենք հրաժարիւր ատոնցմէ մէկէն:

Բանն այն է, որ յաւիտենութիւնը կարելի չէ մտքով ընկալել: Մեր միտքը սահմանափակ է. այն անկարող է ընկալել հասկացողութիւններ, որոնք կը վերաբերին անվերջութեան կամ յաւիտենութեան:

Թոյլ տուէ՛ք բացատրել: Փորձեցէ՛ք պատկերացնել, թէ տիեզերքը ո՛ր կ'աւարտի: Մտածեցէ՛ք ասոր սահմաններուն մասին: Եթէ կրնաք պատկերացնել ասիկա, ապա ի՞նչ պիտի գտնէիք տիեզերքի եզրին: Պա՛տ: Այդ պատը ինչէ՞ն պատրաստուած պիտի ըլլար: Որքա՞ն պիտի ըլլար ասոր հաստութիւնը: Արդեօ՞ք այդ պատին միւս կողմը տիեզեր-

քի վերջնական սահմանը պիտի ըլլար: Եթէ այո, ի՞նչ պիտի ըլլար այդ սահմանէն դուրս: Կրկի՞ն՝ տարածութիւն: Իսկ արդեօ՞ք այն չէր կրնար տիեզերքին շարունակութիւնը համարուիլ: Եւ ո՛ր պիտի ըլլար ասորը աւարտը: Կրնա՞յ ձեր միտքը ընկալել տիեզերքի անսահմանութիւնը: Պարզապէս պահ մը մտածեցէ՛ք ասոր մասին:

Կամ՝ պատկերացուցէ՛ք յատակ չունեցող փոս մը: Կրնա՞ք պատկերացնել, որ իյնալով փոսին մէջ՝ երբեք չէք իյնար: Դուք երբեք չէք հասնիր յատակին, եւ ո՛չ ալ կը տեսնէք այն: Դուք պարզապէս յաւիտեան կ'իյնաք: Այս օրինակին մէջ կայ ոչ թէ մէկ, այլ երկու բան, որոնք չեն կրնար ընկալուիլ մեր կողմէն: Առաջինը՝ այն, որ փոսը յատակ չունի, եւ երկրորդը՝ այն, որ մենք անվերջ կ'իյնանք: Ասիկա դժուար է ընկալել եւ նման է գիտական ֆանթասթիքայի՝ արտառոց երեւակայութեան. այնուամենայնիւ, Աստուածաշունչը եօթը անգամ կը խօսի այսպիսի վայրի մը մասին:

Իսկ Աստուած՝ մարդու Արարի՞չը: Պահ մը մտածեցէ՛ք Անոր սկիզբի կամ, աւելի ճիշդ, անսկիզբ ըլլալուն մասին: Աստուածաշունչը կը հռչակէ, որ Ան «յաւիտենից յաւիտեան» է: Եթէ Ան ծնած չէ, եւ եթէ ոչ ոք ստեղծած է Ձինք, ինչպէ՞ս սկիզբ առած է Անոր գոյութիւնը, եւ ինչպէ՞ս Աստուած դարձած է Ան:

Իրականութեան մէջ, Ան Աստուած չէ դարձած, քանի որ սաղմոսերգուն կը հռչակէ. «Լեռներուն ծնանելէն առաջ՝ երկրի եւ աշխարհի ստեղծուելէն առաջ՝ Յաւիտենից մինչեւ յաւիտեանս Դո՛ն ես Աստուած» (Սաղմոս 90.2): Պահ մը խորհեցէ՛ք ասոր շուրջ: Եթէ շարունակէք խորհիլ, ձեր մտաւոր դատողութիւնները պիտի կենան փակուղիի առջեւ, քանի որ Յոբի գիրքին մէջ գրուած է. «Ոչ ոք կրնայ սկսիլ հասկնալ յաւիտենութիւնը»:

Դրուած՝ մեր սրտերուն մէջ

Այն, ինչ որ իսկապէս անհասանելի է մեր մտքին համար, Արարիչը դրած է մեր սրտին մէջ: Յաւիտենութիւնը յայտնի է մեր սրտին: Այն ամէն մարդու հետ է՝ անոր ծնած պահէն ի վեր: Ահա թէ ինչու գրուած է. «Անգամը ըսաւ իր *սրտին մէջ*, թէ Աստուած չկայ» (Սաղմոս 14.1): Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Աստուածաշունչին մէջ գրուած չէ. «Անգամը ըսաւ իր *մտքին մէջ*»: Կան շատ աթէիսթներ (Աստուածամերժ անհաւատներ), որոնք կտրականապէս կը մերժեն Աստուծոյ գոյութիւնը, բայց իրենց սրտին մէջ գիտեն, որ Ան գոյութիւն ունի, որովհետեւ յաւիտենութիւնը դրուած է հոն: Անոնք տակաւին այլասեռութեան աստիճան չեն խստացուցած իրենց սրտերը:

Ես ընկեր մը ունէի, որ տարիներ առաջ յամառ արէիսք էր. ամէն պարագային, ինքզինք այդպիսին կը համարէր: Ան առիթ չէր տար ոչ ոքի վկայելու Քրիստոսին մասին: Մէկ անգամ ան նոյնիսկ իր աշխատակիցներէն մէկուն ձեռքէն խլեց Աստուածաշունչը, գետին նետեց այն եւ սկսաւ կոխկռտել՝ անհծելով այդ մարդը եւ անոր Աստուածաշունչը: Ան թոյլ եւ անմիտ անուանեց այդ քրիստոնէան:

Որոշ ժամանակ յետոյ՝ տարիներ շարունակ Աստուածամերժական հայեացքներ դաւանել է ետք, այդ մարդուն քով կրծքավանդակի սուր ցաւեր սկսան: Բժիշկները հետազօտական վիրահատութիւն կատարեցին կրծքավանդակին վրայ: Անոնք բացին եւ անմիջապէս փակեցին այն՝ ըսելով, որ ան նոյնիսկ քսանչորս ժամ չ'ապրիր:

Այդ գիշեր ան անկողինին պառկած՝ հասկցաւ, որ պիտի երթայ դէպի իր յաւիտենական բնակավայրը՝ հոն, ուր բոլորովին չէր ուզեր յայտնուիլ: Ուրկէ՞ ան գիտէր ատոր մասին, երբ ոչ մէկուն առիթ տուած էր հետը բաժնեկցելու Աստուծոյ խօսքով: Թերեւս պատճառը անիկա էր, որ յաւիտենութիւնը դրուած էր անոր սրտին մէջ: Աստուածաշունչը կը յայտնէ հետեւեալը ամբողջ մարդկութեան մասին. «Որովհետեւ ճշմարտութիւնը Աստուծոյ մասին՝ բնագոյրպար յայտնի է անոնց. Աստուած ատոր մասին գիտելիք դրած է անոնց սրտերուն մէջ» (Հռովմայեցիս 1.19, TLB):

Այդ գիշեր իմ ընկերոջ սիրտը դադրեցաւ բաբախելէն: Ան հեռացաւ իր մարմինէն եւ իջաւ թաւ խաւարի մէջ: Խաւարը այնքա՛ն թաւ էր, որ անոր թուաց, թէ հագած էր այն. ան չէր տեսներ նոյնիսկ լոյսի նշոյլ: Բաւականին երկար տեւեց անոր իյնալու ընթացքը, յետոյ ան չարչարուող մարդոց սարսռեցնող ճիչեր լսեց: Մեծ ուժ մը գինք դէպի դժոխքի դարպասը կը տանէր, բայց յանկարծ ան վերադարձաւ իր մարմինին մէջ. ան կրկին ողջ էր:

Յաջորդ առաւօտեան ան կանչեց միակ քրիստոնէան, որ կը ճանչնար: Անոր ընկերը եկաւ եւ քարոզեց Յիսուս Քրիստոսի շնորհած փրկութեան Բարի լուրը: Հազիւ որ այդ մարդը ընդունեց Յիսուս Քրիստոսը, որպէս Տէր եւ Փրկիչ, անոր ընկերը աղօթեց իր բժշկութեան համար: Երեք շաբաթ յետոյ ան ելաւ հիւանդանոցէն: Ան ապրեցաւ եւս քանի մը տասնամեակ, մինչեւ որ գնաց դէպի իր յաւիտենական կեանքը. այդ մարդը քալող հրաշք էր:

Աթէիսք եղած ժամանակ այդ մարդը կը պնդէր, որ Աստուած չկայ, սակայն յաւիտենութիւնը անոր սրտին մէջ էր: Անգգամը կամ յիմարը այն մարդն է, որ ոչ միայն մտքով կը մերժէ զԱստուած, այլեւ կը հակառակի իր սրտին մէջ այն աստիճան, որ անոր խիղճը լիովին կը բթանայ:

Նման մարդու մը անկարելի է հասնիլ: Այլ բան է, երբ մարդը կը յարի ինչ որ համոզմունքի մը, որուն ան կը հաւատայ իր մտքին մէջ. աստիկա կարելի է փոխել: Այնուամենայնիւ, բոլորովին այլ բան է, երբ անոր սիրտը լիովին խստացած է: «Անկերի նոր Աստուածաշնչեան բառարանը» կը սահմանէ «անզգամ» կամ «յիմար» բառը հետեւեալ կերպով. «Աստուածաշունչին մէջ «յիմարը» առաջին հերթին այն մարդն է, որ կը ձգէ Տիրոջ երկիւղը եւ կը մտածէ ու կը վարուի այնպէս, ըսես անպատիժ կերպով կրնայ անարգել Աստուծոյ արդարութեան յաւիտենական սկզբունքները»³:

Իրականութեան մէջ, յիմարը կրնայ մտքով ընդունիլ զԱստուած, բայց ան կը հերքէ Անոր գոյութիւնը իր սրտին մէջ, եւ անոր կեանքը կ'արտացոլէ ասիկա: Ճիշդ Աստուծոյ երկիւղի շնորհիւ է, որ Սուրբ Հոգին կրնայ հաղորդակցիլ մեր սրտին հետ: Երբ մենք կը կորսնցնենք այն, մեզի համար այլեւս յոյս չի մնար: Պօղոսը ըսաւ. «Մարդիկ եղբայրներ, Աբրահամի տոհմի որդիներ, անոնք, որ ձեր մէջ *Աստուածավայս են*. այս փրկութեան խօսքը ձեզի դրկուեցաւ» (Գործք 13.26): Միայն Աստուծոյ երկիւղը ունեցող մարդիկ կրնան լսել յաւիտենական կեանքի խօսքերը:

Յաւիտենութեան սահմանումը

Յաւիտենութիւնը դրուած է մեր սրտերուն մէջ, թէւ մենք չենք կրնար մեր մտքով հասկնալ այն: Այնպէս որ, երբ սահմանեմ այն, պիտի խնդրեմ ձեզմէ, որ ընկալէք իմ խօսքերը ձեր սրտով: Իրականութեան մէջ, դուք պէտք է ընէք ասիկա այս գիրքը ուսումնասիրելու ընթացքին, եթէ կը ցանկաք օգուտ ստանալ ատորմէ: Իսկ ինչպէ՞ս ընել ասիկա: Առաջին հերթին, ընդունեցէ՛ք, որ ունիք Սուրբ Հոգիին օգնութեան կարիքը եւ խնդրեցէ՛ք Անորմէ, որ օգնէ ձեզի: Ան կը հաղորդակցի ձեր ներսի մարդուն հետ, ոչ թէ՝ ձեր մտքին: Երկրորդը՝ երբ որեւէ խօսք այս գիրքէն դաչի ձեր սրտին, կա՛նգ առէք եւ խորհեցէ՛ք: Արագօրէն մի՛ ընթերցէք ամբողջ գիրքը: Եթէ այդպէս վարուիք, այն օրհնութիւնը եւ օգուտը, որ կրնաք ստանալ այս գիրքէն, սահմանափակ պիտի ըլլայ:

Կիրառեցէ՛ք այս երկու պարզ քայլերը, որպէսզի ընդունիք Աստուծոյ յաւիտենական Խօսքի ամբողջական ազդեցութիւնը ձեր կեանքին մէջ, եւ դուք յաւիտեան փոխուած պիտի ըլլաք: Ղաւիթը կը գրէ. «Իմ սրտիս մէջ պահեցի Քու խօսքերը, որպէսզի չմեղանչեմ Քեզի դէմ» (Սաղմոս 119.11): Մի՛ ընթերցէք այս գիրքը՝ պարզապէս մտքով հասկնալու համար, քանի որ դուք դիրութեամբ կրնաք մոռնալ կամ կորսնցնել ձեր

ստացած գիտելիքը: Առիթ տուէ՛ք, որ Աստուծոյ Խօսքը պահուի ձեր սրտին մէջ՝ մտորումներու եւ աղօթքներու միջոցով:

Յաւիտենութիւնը մշտատեւ է. այն վերջ չունի: Այնուամենայնիւ, յաւիտենութիւնը՝ պարզապէս անվերջ ժամանակ չէ, քանի որ այն ենթակայ չէ ժամանակին: Յաւիտենութիւնը վեր է ժամանակէն: Եթէ մենք պատկերացնենք յաւիտենութիւնը միայն որպէս անվերջ տեւող բան մը, մենք ամբողջութեամբ չենք ընկալեր այն:

Յաւիտենութիւնը լաւագոյնս հասկնալու համար պէտք է նայինք Աստուծոյ: Ան անսահման է զօրութեամբ, գիտելիքով, իմաստութեամբ, փառքով եւ այլն: Ան ինքնագոյ է. Ան յաւիտեան Աստուած եղած է եւ յաւիտեան Աստուած պիտի ըլլայ: Անոր անուններէն մէկը «Յաւիտենութեան Հայր» է (Եսայեայ 9.6), իսկ այլ թարգմանութիւններու մէջ՝ «Յաւիտենական Հայր»⁴: Ան կը կոչուի «Յաւիտենից Թագաւոր» (Ա. Տիմոթէոս 1.17, AMP): Այն ամէնը, ինչ որ յաւիտենական է, Անոր մէջ է: Իրականութեան մէջ, յաւիտենութիւնն իսկ կը գտնուի Անոր մէջ: Այն ամէնը, ինչ որ Անորմէ դուրս է, ժամանակաւոր է եւ ենթակայ է փոփոխման: Որքան ալ այն բարի, ազնիւ, հզօր կամ մնայուն թուայ, ի վերջոյ աւարտին պիտի հասնի: Նոյնիսկ երկիրը եւ տիեզերքը պիտի փոխուին, բայց Ան՝ ոչ:

«Տէ՛ր, սկիզբը Դուն դրիր երկրի հիմքը, եւ երկինքները Քու ձեռքերու գործն են: Նոյնիսկ ատոնք պիտի կործանուին, բայց Դուն պիտի մնաս յաւիտեան: Ատոնք պիտի մաշին հին հագուստի պէս: Դուն պիտի ոլորես ատոնք հին վերարկուի պէս: Ատոնք պիտի անհետանան հին հագուստի պէս, բայց Դուն միշտ նոյնն ես. Դուն երբեք չես ծերանար» (Եբրայեցիս 1.10–12, NLT):

Բացի այն, որ Անոր գոյութիւնը երբեք չի դադիր, Ան յաւիտեան նոյնն է: Աստուածաշունչը կը յայտնէ.

«Վասնզի ամէն մարմին խոտի պէս է, եւ մարդուն բոլոր փառաւորութիւնը՝ խոտի ծաղիկի պէս. խոտը կը չորնայ ու անոր ծաղիկը կը թափթփի. բայց Տիրոջ Խօսքը յաւիտեան կը մնայ, այսինքն այն Խօսքը, որ Աւետարանով ձեզի քարոզուեցաւ» (Ա. Պետրոս 1.24,25):

Աստուած յաւիտենական է. կը նշանակէ՝ այն, ինչ որ Ան կը խօսի, նոյնպէս յաւիտենական է: Ան չի կրնար ստել, եւ Անոր ըսածը չի կրնար չկատարուիլ: Հակառակ պարագային, ամէն ինչ պիտի ընկղմէր բացարձակ խաւարի մէջ, որովհետեւ Ան լոյս է, եւ ամէն ինչ Իր Խօսքով կը պահէ: Այն, ինչ որ Ան կ'ըսէ, երբեք չի կրնար փոխուիլ. հակառակ պարագային, Ան այլեւս յաւիտենական չէր ըլլար: Ասիկա հաստատ հիմք է, որուն վրայ մենք կրնանք կառուցել մեր կեանքը:

Յաւիտենական դատաստաններ

Այսօր շատերը իրենց կեանքը չեն կառուցեր յաւիտենութեան (Աստուծոյ Խօսքի) վրայ. անոնց հիմքը՝ մշակութային մտածելակերպը, աւանդութիւնը, ենթադրութիւնները եւ պատկերացումներն են այն մասին, թէ ով է Աստուած: Ասիկա չի վերաբերիր միայն ոչ քրիստոնէաներուն, այլեւ՝ շատ հաւատացեալներու: Սարսափելի է, երբ մարդը կը հաւատայ ժամանակաւոր սկզբունքներու՝ ատոնք յաւիտենական ճշմարտութիւններ համարելով: Նման համոզմունքներ ունեցող մարդու կեանքը երերուն հիմք ունի եւ, անշուշտ, անոր անկում կը սպասուի: Ան կը հաւատայ սուտի եւ խաբուած է:

Ես զարմացած եմ, թէ որքան մարդոց հանդիպած եմ, որոնց կեանքը կառուցուած չէ յաւիտենական արժէքներու վրայ: Ոմանք կ'ըսեն, որ կը հաւատան Աստուծոյ եւ Անոր Որդիին, բայց այն անձը, որուն անոնք կը դաւանին, Անիկա չէ, որ յայտնուած է Իր Խօսքին մէջ: Խաբէութիւնը խորունկ արմատներ ունի: Ինչպէ՞ս անոնք կրնան հաւատալ իրենց մտքէն բխող պատկերացումներուն եւ հասարակութեան կողմէն ձեւաւորուած գաղափարներուն, եթէ, համաձայն Սուրբ Գիրքին, ատոնք բացայայտ կերպով հակառակ են Աստուծոյ էութեան: Յիսուս ըսաւ.

«Ան, որ ... Իմ Խօսքերս չընդունիր, կայ Մէկը, որ զանիկա պիտի դատէ. այն Խօսքը որ Ես Խօսեցայ, Ան պիտի դատէ զանիկա վերջին օրը: Վասնզի Ես Ինքնիրո՞ւս չխօսեցայ, հապա Հայրը, որ Ձիս դրկեց, Ի՛նք Ինձի պատուիրեց ինչ որ պիտի ըսեմ եւ ինչ որ պիտի խօսիմ» (Յովհաննէս 12.48,49):

Գոյութիւն ունի Դատաստանի օր, որ հաստատուած է աշխարհի հիմնադրման ժամանակէն (տե՛ս Գործք 17.31): Այդ օրը նոր յայտնութիւններ պիտի չբերէ ճշմարտութեան մասին. այն պարզապէս պիտի որոշէ ամէն ինչ՝ համաձայն արդէն իսկ յայտնուած ճշմարտութեան: Աստուծոյ Խօսքը, որ մենք հիմա ունինք, պիտի դատէ մեզ այդ վերջին օրը: Այդ դատաստանը յաւիտենական է: Այդ դատավճիռները վերջնական են: Ոչ մէկ բացառութիւն, փոփոխութիւն կամ վերանայում պիտի ըլլայ: Արդե՞օք ատելի լաւ չէ գիտնալ, թէ ինչ կ'ըսէ Ան, եւ ապրիլ համաձայն Անոր Խօսքերուն, ենթադրութիւններ ընելու փոխարէն:

Այդ օրուան դատավճիռները կը կոչուին *յաւիտենական դատաստաններ* (տե՛ս Եբր. 6.2): Ուրիշ ձեւով ըսելու համար՝ այդ օրը կայացած որոշումները (հիմնուած այն բանի վրայ, թէ որքանով մենք համապատասխանեցուցած ենք մեր կեանքը Աստուծոյ յաւիտենական Խօսքին) պիտի որոշեն, թէ ինչպէս մենք պիտի անցընենք ամբողջ յաւիտե-

նութիւնը: Այդ որոշումները երբեք պիտի չվիճուին, քանի որ ատոնք *յաւիտենական դատաստաններ* են:

Շատ-շատերը՝ թէ՛ հաւատացեալներ, թէ՛ անհաւատներ, տգիտութեամբ առիթ կու տան, որ այս հաստատուած դատաստանը հասնի՝ առանց ատոր մասին որեւէ բան գիտնալու: Անոնք կեղծ յոյսեր կը փայփայեն՝ հաւատալով այնպիսի բաներու, որոնց մասին Աստուածաշունչը չի խօսիր: Ոմանք կը մտածեն, որ Աստուած հաշուի պիտի առնէ իրենց բարի գործերը, եւ եթէ ատոնք չար գործերէն շատ ըլլան, անոնք բարեհաճութիւն պիտի ստանան: Միւսները, որոնք կը դաւանին, որ վերստին ծնած են, կը մտածեն, որ պիտի չկանգնին Յիսուսին առջեւ՝ որպէս իրենց Ղատաւորը, որովհետեւ Ան իրենց Փրկիչն է: Անոնք կը հաւատան, որ ազատած են ամէն տեսակի դատաստանէ, եւ յատկապէս ամէնէն շատ անոնք անակնկալի պիտի գան: Կան նաեւ մարդիկ, որոնք կը մտածեն, թէ վերջաւորութեան ամէն ինչ լաւ պիտի ըլլայ. անոնք կը հաւատան ոչ սուրբգրային ողորմութեան:

Նոր կտակարանը չի ներկայացներ եւ չի սորվեցներ այս բաները: Այս եւ բազմաթիւ այլ հասկացողութիւններ, որոնք մարդիկ կազմած են իրենց մտքին մէջ, ժամանակաւոր են, եւ այդ օրը ատոնք անգոր պիտի ըլլան: Ղատաստանին օրը բազմաթիւ ապշած տղամարդիկ եւ կանայք պիտի ըլլան, եւ անձամբ ես կը կարծեմ, որ աւելի շատ անակնկալի պիտի գան մարդիկ, որոնք կը դաւանին, որ քրիստոնեայ են, քան՝ անհաւատները:

Վստահութիւն Ղատաստանի ժամանակ

Այնպէս չէ, որ մենք Ղատաստանին օրը պէտք է վախով համակուած ըլլանք: Մենք կրնանք վստահութեամբ կանգնիլ Ղատաստանին առջեւ:

«Եւ Աստուծոյ մէջ ապրելով՝ մեր սէրը աւելի կատարեալ կը դառնայ: Այնպէս որ, մենք չենք վախնար Ղատաստանին օրը, այլ կրնանք վստահութեամբ կանգնիլ Անոր առջեւ, որովհետեւ մենք նման ենք Քրիստոսին հոս՝ այս աշխարհին մէջ» (Ա. Յովհաննէս 4.17, NLT):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք այս հատուածին. «Աստուծոյ մէջ ապրելով՝ մեր սէրը աւելի կատարեալ կը դառնայ»: Մենք վստահութիւն կ'ունենանք Ղատաստանին օրը այդ պարագային, երբ Աստուծոյ սէրը կատարեալ կը դառնայ (կամ հասուննայ) մեր մէջ:

Շատերը եկեղեցւոյ մէջ կը սայթաքին յատկապէս այս հարցին մէջ: Անոնք Աստուծոյ սէրը ժամանակաւոր կը դիտարկեն, ոչ թէ յաւիտենական կեանքի լոյսին տակ: Սիրոյ եւ բարութեան մասին գոյութիւն ունի պատկերացում մը, որ հիացմունք կը պատճառէ թէ՛ մեր հասարակու-

թեան, թէ՛ շատերուն եկեղեցւոյ մէջ, բայց այն հիմնուած է մարդկային չափանիշներու վրայ, որոնք իրականութեան մէջ հակառակ են Աստուծոյ սիրոյն: Առիթ տուէ՛ք քանի մը տարածուած օրինակներ բերել:

«Մենք շատ կը սիրենք իրար եւ կը ծրագրենք ամուսնանալու»: Այս պատճառաբանութիւնը յաճախ կարելի է լսել, երբ զոյգ մը կ'ապրի սեռական կեանքով՝ ամուսնութենէն առաջ: Ասիկա մեղք է նոյնիսկ այն պարագային, եթէ անոնք պահեն իրենց խոստումը եւ ամուսնանան: Այնուամենայնիւ, յաճախ ես տեսած եմ, որ նման զոյգեր այդպէս ալ չեն ամուսնացած: Անոնք մոռցած են պարզ յորդորը Աստուծոյ Խօսքէն. «Ամուսնութիւնը պէտք է պատիւ ստանայ բոլորին կողմէն, եւ ամուսնական անկողինը պէտք է անարատ պահուի, որովհետեւ Աստուած պիտի դատէ ամուսնական դաւաճանութեան առիթ տուողները եւ բոլոր սեռականօրէն անբարոյ մարդիկը» (Եբրայեցիս 13.4, NIV): Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Եբրայեցիներուն ուղղուած նամակի հեղինակը չի գրեր. «...ամուսնական դաւաճանութիւն թոյլ տուողները եւ բոլոր սեռականօրէն անբարոյ մարդիկը, որոնք եկեղեցի չեն յաճախեր»: Ո՛չ, այս խօսքը կը վերաբերի անոնց, որոնք նման ծելով կ'ապրին:

«Ես գիտեմ, որ չըսի ամբողջ ճշմարտութիւնը, բայց այսպէս մենք գործարք պիտի կնքենք, իսկ յետոյ պատշաճ կերպով պիտի սպասարկենք զանոնք»: Այս արդարացումը յաճախ կարելի է լսել գործարար մարդոցմէ, որոնք կը ցանկան վաճառք ունենալ, որ, իրենց համոզումով, շահաւէտ է յաճախորդին համար, բայց անոնք պէտք է քիչ մը աղաւաղեն փաստերը, որպէսզի յաճախորդը որոշում կայացնէ ընդունելու իրենց առաջարկը: Անոնք մեղք կը գործեն, քանի որ կը ստեն, եւ բացի այդ՝ գործարքը միշտ աւելի շահաւէտ կ'ըլլայ յատկապէս իրենց համար: Արդեօ՞ք անոնք մոռցած են Աստուծոյ Խօսքին մէջ եղած զգուշացումը. «Բոլոր ստախօսներուն (որոնք գիտակցաբար սուտ կը խօսին խօսքով կամ գործով) [բոլոր այս մարդոց] բաժինը կրակով եւ ծծումբով բորբոքուած լիճի մէջ է» (Յայտնութիւն 21.8, AMP):

«Այն, ինչ ես ըսած եմ անոր մասին, ճշմարտութիւն է»: Այս խօսքերը յաճախ կարելի է լսել այն մարդոցմէ, որոնք վատ կը խօսին (կը բամբասեն կամ կը չարախօսեն) իրենց աշխատակիցի, ընկերոջ, տնօրէնի եւ այլոց մասին: Իրականութեան մէջ, դուք կրնաք հարիւր տոկոսով ճիշդ ըլլալ, բայց եւ սխալիլ՝ համաձայն յաւիտենական չափանիշներու: Ինչպէս կը յիշէք, Նոյին կրտսեր որդին՝ Քամը, ճշդօրէն յայտնեց եղբայրներուն իր հօր մերկութեան եւ գինովութեան մասին: Այնուամենայնիւ, իր հայրը անարգելու արդիւնքով ան անէծք բերաւ իր ցեղին վրայ, որ տեսց սերունդներ շարունակ: Արդեօ՞ք բամբասողները կամ չարա-

խօսները մոռցած են հաւատացեալներուն ուղղուած յորդորը Աստուծոյ Խօսքէն. «Մի՛ տրտնջաք իրարմէ, իմ եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր, որ Աստուած չդատէ ձեզ: Որովհետեւ ահա, մեծ Ղատաւորը կու գայ: Ան կեցած է դրան քով» (Յակոբոս 5.9, NLT):

Կարելի է անթիւ այսպիսի օրինակներ բերել, բայց ատոնց ընդհանրութիւնն անիկա է, որ ատոնք հակառակ են Աստուծոյ յաւիտենական կամքին: Սարսափելին այն է, որ շատերը, որոնք այս կերպով կ'ապրին եւ նման անմեղ թուացող արդարացումներ ունին, կրնան եկեղեցի յաճախել, հաճելի վարք ունենալ եւ օրինակելի քաղաքացիներ համարուիլ: Բայց որքանո՞վ անոնք կը համապատասխանին Աստուծոյ յաւիտենական չափանիշներուն:

Աւելի վաղ իր նամակին մէջ Յովհաննէսը ցոյց տուաւ, թէ ինչպէս կատարելագործել (հասունցնել) Աստուծոյ սէրը.

«Ով որ կ'ըսէ ես գիտեմ Ձինք [եւ կ'ըմբռնեմ, կը ճանչնամ, կը հասկնամ Ձինք եւ ծանօթ եմ Անոր հետ (Յիսուս Քրիստոսի)], բայց չի պահեր Անոր պատուիրանները (ուսմունքները) եւ չի հնազանդիր ատոնց, ստախօս է, եւ (Աւետարանի) ճշմարտութիւնը անոր մէջ չէ: Բայց ան, որ կը պահէ (զանձի պէս) Անոր Խօսքը [ով որ կը պահէ իր մտքին մէջ Անոր կանոնները, որ կը պահէ Անոր ուղերձը ամբողջութեամբ], ճշմարտապէս Աստուծոյ սէրը եւ սէրը Աստուծոյ հանդէպ կատարեալ կը դառնայ անոր մէջ...» (Ա. Յովհաննէս 2.4,5, AMP):

Յիշեցէ՛ք, որ Աստուծոյ կատարեալ (կամ՝ հասունցած) սիրոյ պատճառով է, որ մենք կրնանք վստահաբար կենալ մեր Ղատաւորին առջեւ: Յովհաննէսը պարզ կ'ըսէ, որ Աստուծոյ սէրը կատարեալ կը դառնայ Անոր պատուիրանները պահելով, ոչ թէ հասարակութեան համար ընդունելի վարք ունենալով: Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Եւայի՛ն չգրաւեց բարիի եւ չարի գիտութեան ծառի չար կողմը. ան հրապուրուեցաւ ատոր *բարի* կողմով: «Կինը տեսաւ, թէ որքան *գեղեցիկ* էր ծառը, եւ որքան *ախորժելի* պիտի ըլլար ատոր պտուղը» (Ծննդոց 3.6, TEV): Մարդկային դատողութիւնը կրնայ ստեղծել այնպիսի գեղեցկութիւն եւ բարութիւն, որ հակառակ է Աստուծոյ կատարեալ կամքին:

Աստուածաշունչը նոյնպէս կը պնդէ, որ մենք չենք կրնար պահել Աստուծոյ պատուիրաններու մէկ մասը եւ հաւատալ, որ վստահութիւն պիտի ունենանք Ղատաստանին օրը: Աստուծոյ սէրը հասուն կը դառնայ մեր մէջ, երբ մենք զգուշօրէն կը պահենք Աստուծոյ Խօսքը ամբողջութեամբ: Ասիկա է պատճառը, որ Աստուած շնորհք կու տայ մեզի. շնորհքը կը զօրացնէ մեզ, որ կարենանք լիովին հնազանդիլ Աստուծոյ Խօսքին՝ Անոր համար ընդունելի կերպով: «Ուստի, անշարժ թագաւոր»

րութիւն ընդունած ըլլալով՝ պինդ բռնենք այն շնորհքը, որուն միջոցով զԱստուած հաճութեամբ կը պաշտենք՝ ահով եւ երկիւղածութեամբ» (Եբրայեցիս 12.28):

Կարելորը անիկա է, որ գիտնանք, թէ Թագաւորը ինչ կը ցանկայ եւ կը փնտռէ մեր մէջ, ոչ թէ այն, ինչ որ մեր հասարակութիւնը կամ մարդկային դատողութիւնը լաւ կը համարէ: Այս պատճառով Աստուած կ'ըսէ մեզի. «Եւ մի՛ կերպարանուիք այս աշխարհին կերպարանքով, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորոգութեամբ, որ դուք քննէք, թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին եւ կատարեալը» (Հռովմայեցիս 12.2): Այն, ինչ որ բարի կը թուայ մեր մշակոյթին, կրնայ ընդդիմանալ Աստուծոյ ցանկութիւններուն՝ յաւիտենականին:

Առիթ տուէք օրինակ մը բերել: Այս պահուն նստած եմ հիւրանոցային սենեակը՝ Սինկափուրի մէջ: Այս շաբաթավերջին ես պիտի քարոզեմ մօտաւորապէս քսան հազար մարդու: Ես շատ անգամներ եղած եմ այս հրաշալի երկրին մէջ: Ես նոյնպէս քանի մը անգամ քարոզած եմ Աւետարանը Նիտերլանտներու մէջ: Նիտերլանտներու մէջ մարիկուանա ունենալը հակառակ չէ օրէնքին: Մարդիկ կրնան ազատօրէն ծխել այն՝ առանց վախճալու, որ պիտի պատժուին: Այնուամենայնիւ, եթէ Սինկափուրի մէջ ձեր քով թմրանիւթեր գտնեն (խօսքը շատ փոքր քանակութեան մասին է), ձեզ կը ձերբակալեն եւ խիստ կը պատժեն: Եթէ ձեր քով գտնեն ծանր թմրանիւթեր, ձեզ մահապատիժի կ'ենթարկեն՝ կախաղան հանելով: Երբ Սինկափուր կը թռչիք, այս օրէնքին մասին գրուած է անմիջապէս ձեր նուտքի քարտի վրայ. «Համաձայն Սինկափուրի օրէնքներու՝ թմրանիւթեր վաճառողներուն մահապատիժ կը սպառնայ»:

Իսկ հիմա պատկերացուցէք, որ հոլանտացի երիտասարդ մը, որ պարբերաբար մարիկուանա կ'օգտագործէ, Սինկափուր կ'երթայ եւ կ'առաջարկէ այն սինկափուրցիներուն: Ան զուարթօրէն կ'ըսէ իր նոր ընկերներուն. «Լսեցէ՛ք, ասիկա հիանալի բան մըն է: Դուք պիտի հանգստանաք, ձեր ջիղերը հաճելիօրէն պիտի գրգռուին, իսկ վատ տրամադրութիւնը պիտի հեռանայ: Կուզէ՞ք փորձել: Սիրով կը բաժնեկցիմ ձեր հետ»:

Անմիջապէս կը ձերբակալեն այդ երիտասարդը: Ան ցնցուած է: Առաջին հարցումը, որ ան կու տայ ոստիկաններուն, հետեւեալն է. «Ինչո՞ւ կը ձերբակալէք զիս»:

Կու գայ դատավարութեան օրը: Հոլանտացին կանգնած է դատարանին մէջ՝ դատաւորին առջեւ, եւ ի սրտէ կը հաւատայ, որ այս ամէնը պարզապէս պատահականութիւն է: Դատաւորը մեղաւոր կը սեպէ զինք եւ կ'ազդարարէ անոր պատիժը:

Ցնցուած երիտասարդը կ'ըսէ. «Պարոն դատաւոր, այն երկրին մէջ, ուրկէ ես եկած եմ, ընկերներուն մարիկուանա առաջարկելը յանցագործութիւն չի համարուիր»:

Դատաւորը կը պատասխանէ. «Դուք Նիտերլանտներու մէջ չէք, այլ՝ Սինկափուրի մէջ, եւ այս երկրին մէջ ատիկա օրէնքին հակառակ է»:

Հոլանտացիի վստահութիւնը ի չիք կը դառնայ. ան չունի ոչ մէկ հիմք՝ ինքզինքը արդարացնելու համար: Ոչինչ կրնայ օգնել անոր: Ան անպաշտպան կանգնած է այդ երկրի գերագոյն ատեանին առջեւ, որ դատապարտած է զինք:

Քանի մը տարի առաջ, երբ կրկին Սինկափուրի մէջ էի, երիտասարդ ամերիկացի մը ձերբակալուած էր՝ մէկ ուրիշ մարդու մեքենայի արտաքին տեսքը դիտաւորեալ փճացնելու համար: Ան ձերբակալուած էր, մեղաւոր ճանչցուած եւ դատապարտուած էր ռոթանի (rotan) քանի մը հարուածներու: Այս պատիժը, որուն պարագային մարդուն մէջքին հարուածներ կը հասցնեն քիմիական նիւթերով մշակուած հնդկեղէգի (bamboo) որեւէ տեսակով, կրնայ անդառնալի մարմնական վնասներ պատճառել: Դատաւճիռը չափազանց ծանր կը թուար: Նոյնիսկ Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահը փորձեց միջամտել՝ այդ երիտասարդին պատիժը մեղմացնելու համար, բայց՝ ապարդիւն: Այդ երիտասարդը խախտած էր Սինկափուրի օրէնքները եւ պէտք է կրէր իր պատիժը:

Բոլորս պէտք է կենանք տիեզերքի գերագոյն ատեանի առջեւ: Այս ատեանին որոշումները *յաւիտենական* եւ անփոփոխ պիտի ըլլան: Շատերը պիտի ցնցուին՝ լսելով իրենց կեանքի դատաւճիռը, բայց այդպէս պէտք չէ ըլլար: Այդպէս պէտք չէ ըլլայ նաեւ ձեր պարագային:

Դուք պատրաստ էք: Համաձայն Աստուծոյ Խօսքին՝ մենք կրնանք վստահութեամբ մօտենալ տիեզերքի Դատաւորին: Այս գիրքին նպատակն է՝ օգնել ձեզի, որ պատրաստուիք: Եթէ երիտասարդ հոլանտացի մեր օրինակին մէջ ժամանակ յատկացնէր, որ սորվէր եւ պատրաստուէր Սինկափուր երթալու համար, ան պիտի խուսափէր այդ խիստ պատիժէն: Որքան աւելի կարելոր է, որ մենք պատրաստուինք մեր իսկ դատաստանին, քանի որ դատաւճիռները, որոնք պիտի կայանան Դատաստանի գահին առջեւ, *յաւիտենական* պիտի ըլլան:

Վարձատրութիւններ

Յաւիտենութեան մէջ պիտի ըլլայ աւելի քան մէկ դատաստան: Պիտի ըլլայ դատաստան՝ անհաւատներու համար, դատաստան՝ հաւատացեալներու համար եւ նոյնիսկ դատաստան՝ հրեշտակներու համար: Ատոնց մէջ պիտի կայնան շատ տարբեր դատաւճիռներ: Ոմանք

կորուստ կամ պատիժ պիտի կրեն, իսկ միւսները վարձատրութիւններ պիտի ստանան: Մենք աւելի մանրամասնօրէն պիտի խօսինք ասոր մասին յաջորդ գլուխներուն մէջ, բայց առիթ տուէք կրկին նշել, որ այդ դատավճիռները յաւիտենական պիտի ըլլան: Այս փաստը անկարելի է չափէն շատ շեշտադրել: Փորձեցէ՛ք կրկին անգամ մտքով պատկերացնել այն, ինչ որ չ'աւարտիր: Աստուծոյ կամքն է, որ մենք նախապէս գիտնանք ասոր մասին եւ ջանք ընենք, որ վարձատրութիւն ստանանք Անոր Խօսքին հետեւելու համար: Պօղոսը կը գրէ.

«Չէք գիտե՞ր, որ մրցավագքի մէջ կը մրցին բոլոր վագողները, բայց [միայն] մէկ հոգի կը ստանայ մրցանակը: Այնպէս մը վագեցէ՛ք [ծեր ընթացքը], որ տիրանաք [մրցանակին] եւ ծերը դարձնէք այն: Իւրաքանչիւր մարգիկ, որ մրցումներու կը պատրաստուի, զուսպ կը վարուի եւ կը սահմանափակէ ինքզինքը ամէն ինչի մէջ: Ան կ'ընէ ատիկա, որպէսզի շահի ծաղկեպսակ մը, որ շուտով կը թառամի, բայց մենք [այդպէս կը վարուինք, որ յաւիտենական երանութեան թագ ստանանք]՝ այնպիսին, որ չի թառամիր: Այդ իսկ պատճառով, ես չեմ վագեր անորոշ կերպով (առանց յստակ նպատակի): Ես նման չեմ բռնցքամարտիկին, որ կը ծեծէ օդը եւ կը հարուածէ՝ առանց թշնամի ունենալու: Այլ [բռնցքամարտիկի պէս] ես կը ծեծեմ իմ մարմինը [խստօրէն կը վերաբերիմ ասոր, կը խրատեմ այն դժուարութիւններով] եւ կը հնազանդեցնեմ այն...» (Ա. Կորնթացիս 9.24–27, AMP):

Պօղոսը պարզօրէն կ'ըսէ. «Ես չեմ վագեր անորոշ կերպով (առանց յստակ նպատակի)»: Մէկ այլ թարգմանութեան մէջ այսպէս գրուած է. «Այնպէս որ, ես կը վագեմ ուղիղ դէպի նպատակը, եւ իմ ամէն քայլը նպատակաուղղուած է» (խօսք 26, NLT): Ամէն մարդ պէտք է ճիշդ այսպէս վարուի. ամէն մէկը պէտք է վստահաբար վագէ եւ յաղթելու նպատակ ունենայ: Մենք չենք մրցիր ուրիշներուն հետ, այլ՝ մենք մեզի հետ:

Յաւիտենութեանը շարժողները

Մենք չենք կրնար պարզապէս մտածել, որ Ղատաստանի գահին առջեւ ամէն բան ինչ որ կերպով պիտի շտկուի: Մենք չունինք ոչ մէկ արդարացում, որովհետեւ Աստուած յայտնի դարձուցած է մեզի Իր կամքը: Շատերը, որոնք պիտի կենան Ղատաստանին առջեւ, ամբողջ կեանքին ընթացքին համոզուած եղած են, որ աւելի լաւ ապրած են իրենց շրջապատող մարդոցմէ, բայց անոնք երբեք առիթ չեն տուած, որ յաւիտենութիւնը ըլլայ իրենց շարժիչ ուժը եւ առաջնորդէ գիրենք: Հոսկէ ալ ծագած է այս գիրքի վերնագիրը՝ «Յաւիտենութեանը շարժողները»:

«Շարժել» բառը կրնայ նշանակել «բարձրացնել», «առաջնորդել», «վերահսկել», «ուղղորդել» կամ նոյնիսկ՝ «շարժիչ ուժ հաղորդել»: Ի՞նչը կ'առաջնորդէ եւ կը խթանէ մեզ այս երկրին վրայ: Յաւիտենակա՞նը, թէ՞ ժամանակաւորը: Մենք կը վարուինք աստուածային իմաստութեա՞մբ, թէ՞ կը համեմատենք մենք մեզ ուրիշներու հետ: Հնարաւոր է, որ մենք ականջ դրած ենք շողոքորթութեան, ամանդութիւններու կամ առասպելներու, որոնք կ'ուսուցանուին որոշ եկեղեցիներու կամ դպրոցներու մէջ: Արդեօ՞ք այն, ինչին վրայ որ կառուցած ենք մեր կեանքը, կանգուն պիտի մնայ Աստուծոյ Ղատաստանի գահին առջեւ, թէ՞ մեր ջանքերը յաւիտեան պիտի կորսուին: Յիշեցէ՛ք՝ մենք արդէն գիտենք, թէ որը պիտի ըլլայ մեր դատաստանի չափանիշը. «Այն խօսքը, որ Ես խօսեցայ, Ան պիտի դատէ զինք վերջին օրերուն» (Յովհաննէս 12.48):

Շատ մարդիկ, որոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են, ցնցուած պիտի ըլլան, երբ կենան Յիսուս Քրիստոսի ատենանին առջեւ: Անոնք ապահովութիւն կառուցած են Նոր կտակարանի որոշ ուսմունքներու հիման վրայ, բայց ջանք չեն գործադրած, որ գիտնան Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդը: Իմ հարցումը ձեզի հետեւեալն է՝ դուք կ'ուզէք գիտնալ ճշմարտութիւնը յաւիտենական դատավճիռէն յետո՞յ, երբ արդէն շատ ուշ պիտի ըլլայ եւ անկարելի պիտի ըլլայ որեւէ բան փոխել, թէ՞ հիմա կ'ուզէք գիտնալ այն չափանիշը, որուն միջոցով պիտի դատուիք:

Յաջորդ գլուխին մէջ պիտի սկսի այլաբանական պատմութիւն մը, որ պիտի շարունակուի նաեւ միւս գլուխին մէջ: Ուշադրութեամբ կարդացէ՛ք այն եւ փորձեցէ՛ք, կարելի եղածին չափով, լաւ յիշել, որովհետեւ մենք յաճախ պիտի անդրադառնանք ատոր: Մենք պիտի կարդանք այդ պատմութեան աւարտը 8-րդ գլուխին մէջ եւ պիտի խօսինք ատոր մէջ գտնուող ճշմարտութիւններուն մասին մինչեւ այս գիրքի աւարտը: Ամբողջ գիրքը կառուցուած է այդ այլաբանական պատմութեան շուրջ. այնպէս որ, կը խնդրեմ, մի՛ կարդաք այն թռուցիկ կերպով: Դուք կրնաք կրկին անդրադառնալ ատոր այս ուսուցման ընթացքին մէջ:

Աստուած աշխատանք կատարած է հետս այս գիրքին մէջ ներկայացուած նիւթին մեծ բաժնին վերաբերեալ: Ես պիտի պատմեմ իմ կեանքին մէջ տեղի ունեցած բազմաթիւ ծախողութիւններուն մասին, որոնք Սուրբ Հոգին հանգամանօրէն ցոյց տուած է ինձի Իր ճշմարտութեան «մանրադիտակով»: Յոյսով եմ, որ ասիկա պիտի դրդէ ձեզ ջանասիրաբար ուսումնասիրելու Աստուածաշունչը, որպէսզի Ղատաստանին օրը դուք կեցած ըլլաք հաստատ հիմքի վրայ: Ես պիտի ներկայացնեմ մեր հասարակութեան մեծագոյն թիրըմբռումներէն մէկ քանին, որոնց պատճառով մարդիկ կը հեռանան Անորմէ, Որուն իրենց

Փրկիչը կ'անուանեն: Ժամանակ առ ժամանակ դուք պիտի զարմանաք, պիտի յանդիմանուիք եւ պիտի խրատուիք, բայց այդ ամէնուն պիտի հետեւին խոստումները, յոյսը եւ մխիթարութիւնը:

Եթէ դուք խիզախ էք, կ'ուզէք գիտնալ ճշմարտութիւնը եւ ի սրտէ կը ձգտիք Աստուծոյ, եկէ՛ք առաջ երթանք: Դուք ուրախ պիտի ըլլաք, երբ անցնիք այս ճամբան: Ընդունեցէ՛ք հետեւեալ յորդորը.

«Աստուծոյ պարգեւը վերականգնած է մեր յարաբերութիւնները Անոր հետ եւ վերադարձուցած է մեր կեանքը մեզի: Եւ աւելին՝ յաւիտենական կեանքը տակաւին առջեւն է: Կրնաս վստահ ըլլալ ասոր մէջ: Ես կ'ուզեմ, որ դուն հաստատ դիրքորոշում ունենաս: Վճռական դիրքորոշում ունեցիր այս հարցերուն մէջ, որպէսզի այն մարդիկ, որոնք կը վստահին Աստուծոյ, կեդրոնանան այն հիմքային ճշմարտութիւններուն վրայ, որոնք օգտակար են բոլորին համար» (Տիտոս 3.7,8, MSG):



ԱՓԱՊԷԼԻ ՈԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՄ.

ԿԵԱՄԷՐ ԷՆՏԵԼԻ ՄԷՉ

«Եւ [Յիսուսը] կը սորվեցնէր անոնց շատ բաներ առակներով (օրինակներով կամ համեմատութիւններով, որոնք կ'օգտագործուէին ճշմարտութիւններու հետ մէկտեղ՝ ատոնք բացատրելու համար)...»:

— Մարկոս 4.2, AMP

Ժամանակին կար աշխարհի մը, որ նման էր մեր աշխարհին, բայց եւ տարբեր էր շատ առումներով: Այդ աշխարհին մէջ չկային առանձին պետութիւններ. կար միայն մէկ մեծ թագաւորութիւն, որ կը կոչուէր Աֆապէլ: Թէեւ այն սփռուած էր ամբողջ յայտնի աշխարհով, ունէր միայն մէկ մայրաքաղաք, որ կը ղեկավարէր ամբողջ թագաւորութիւնը: Այն կը կոչուէր Աֆապէլի Մեծ քաղաք, որ մենք պարզապէս Աֆապէլ պիտի անուանենք:

Այդ աներեւակայելի քաղաքին տիրակալը մեծանուն թագաւոր Ճէյլընն էր: Ճէյլըն թագաւորին հպատակները մեծ սիրով եւ հիացմունքով կը վերաբերէին անոր: Ան կը ցուցաբերէր խորունկ սէր բոլորին հանդէպ, որ անսպառ կը թուար: Թագաւորը ուժեղ եւ իմաստուն էր, բայց միեւնոյն ժամանակ կատակի մեծ զգացում ունէր: Թէեւ ան թագաւորական կեցուածք ունէր, ան նոյնպէս կը սիրէր հաղորդակցիլ իր հպատակներուն հետ: Անոր հետ հաղորդակցելու ժամանակ մարդիկ կը պարուրուէին բարութեան մթնոլորտով: Անոր ներկայութիւնը կեանքի բոլոր ոլորտները նոր մակարդակի վրայ կը բարձրացնէր: Ան զարմանալի խորաթափանցութիւն եւ հեռատեսութիւն ունէր, եւ նայելով մարդոց գործերուն՝ անբացատրելի կերպով կարողութիւն ունէր տեսնելու անոնց սրտի դրդապատճառները:

Ճէյլընի հայրը, որ հիմնադրած էր Աֆապէլը, յայտնի էր Հիմնադիր Հայր թագաւոր անունով: Քաղաքին մէջ կարգ ու կանոն հաստատելուն պէս, ան փոխանցեց թագաւորութեան կառավարումը իր որդիին: Այս մեծ քաղաքի բնակիչները կ'օգնէին Ճէյլընին կառավարելու իր թա-





գաւորութեան արտաքին շրջանները: Կառավարումը կ'իրականացուի իշխանութեան աստիճանական համակարգով, ինչպէս նաեւ՝ մայրաքաղաքին մէջ գտնուող կառավարիչներու միջոցով:

Քաղաքը չափազանց մեծ էր. տարածքը հաւասար էր մօտաւորապէս 520 քառակուսի քիլօ մեթրի: Քաղաքը այնքան լաւ նախագծուած էր, որ թէւեւ այն խիտ բնակչութիւն ունէր, կարելի չէր գերբնակեցուած անուանել: Այն բաղկացած էր արուարձաններէ, քաղաքային բնակելի տարածքներէ եւ առանձնատուններէ:

Աֆապելի արեւմտեան շրջանի հարթավայրերուն մէջ աշխատաւորներու համեստ տուները կը գտնուէին(որոնք աննկարագրելիօրէն ճոխ կը համարուէին մեր աշխարհին մէջ): Այդ մարդիկ ծանր աշխատանք կը կատարէին, սակայն անոնք շնորհակալ էին պարզապէս թագաւորի քաղաքին մէջ ապրելու հնարաւորութեան համար:

Քաղաքի հիւսիսային եւ հարաւային սահմաններու լեռնային շրջանները բնակեցուած էին արհեստագործ եւ արուեստագէտ վարպետներու՝ երաժիշտներու, գրողներու, նկարիչներու եւ գեղագիտական աշխատանքներ կատարող մարդոցմով: Անոնց տուները գեղեցիկ տեսարաններ ունէին եւ աւելի ընդարձակ էին աշխատաւորներու տուներէն:

Քաղաքի ամենագրաւիչ մասը արեւելեան շրջանն էր, որուն մէջ բազմաթիւ գեղեցիկ առանձնատուններ կային: Այս հատուածը կը կոչուէր Թագաւորական կեդրոն: Թագաւորը կ'ապրէր եւ իր ժամանակին մեծ մասը ճիշդ հոս կ'անցընէր: Թագաւորական կեդրոնին մէջ նոյնպէս կ'ապրէին մարդիկ, որոնք կ'աշխատէին անմիջապէս թագաւորին հետ: Հոս անոր վարչակազմը եւ տեղակալները կը հաղորդակցէին եւ կ'աշխատէին:

Թագաւորական կեդրոնը ըսես թանկարժէք քար ըլլար՝ դրուած բարձրադիր ժայռի վրայ, ուրկէ տեսարան կը բացուէր դէպի Մեծ ծովուն ափերը: Կապտաւուն ծովէն մշտապէս մեղմ գեփիւռ կը փչէր՝ թարմութիւն բերելով քաղաքին: Այս ջուրերը շրջապատուած էին չաղտոտած սպիտակ լողափերով, որոնց գեղեցկութիւնը կը գերազանցէին միայն թագաւորական պարտէզները: Այդ պարտէզները տնկուած էին ամէնուր Թագաւորական կեդրոնին մէջ եւ գունեղութիւն ու պայծառութիւն կը հաղորդէին ամէն ինչին: Անկասկած՝ ասիկա ամենացանկալի բնակավայրն էր Աֆապելի մէջ: Քաղաքի այս մասը գտնուող իւրաքանչիւր տուն իր վայելչութեամբ կը զիջէր միայն թագաւորի պալատին:

Աֆապելի մէջտեղը կը գտնուէր կեանքի ծառը: Միայն թագաւորին ենթակաները արտօնութիւն ունէին ճաշակելու ատոր հրաշալի պտուղէն: Այդ պտուղը հիանալի համ եւ հաճելի տեսք ունէր, իսկ ատոր բուրունմաւէտ պտղամիսը օժտուած էր հրաշագործ զօրութեամբ:



ԷՆՏԵԼԻ ԲՆԱԿԻՋՆԵՐԸ


Աֆապելի հարթավայրերէն դէպի արեւմուտք կը գտնուէր Արտաքին անապատը, որ կը տարածուէր գրեթէ հարիւր քիլօ մէթր՝ մինչեւ Ատոնկա մեծ գետը: Անցնելով Ատոնկա գետը՝ դուք պիտի յայտնուէիք թագաւորութեան միւս մասը, որ կը կոչուէր Էնտել: Ծնելուն պէս Աֆապելի քաղաքացիներու մանուկները անմիջապէս կը բերուէին Էնտել: Մինչեւ անոնց առաջին շաբաթը ամբողջանալը, անոնք կը յանձնուէին թագաւորին դայակներու խնամքին: Երբ այս նոր քաղաքացիները, որոնք արդէն էնտելցիներն էին, հինգ տարեկան դառնային, զանոնք կ'ուղարկէին Էնտելի դպրոց, ուր անոնք կը սորվէին տասը տարի: Անոնց կը սորվեցնէին Աֆապելի կեանքին եւ մեծ թագաւոր Ճէյլընին մասին:

Միայն թագաւորի դայակները եւ ուսուցիչները արտօնութիւն ունէին հանդիպելու Ճէյլընին: Հինգ տարին անգամ մը ան գաղտնաբար Էնտել կ'այցելէր եւ ցուցմունքներ կու տար դպրոցին եւ մանուկներուն վերաբերեալ՝ ըստ այն ամէնուն, ինչ որ կար իր սրտին մէջ: Ան երբեք չէր յայտնէր իր ներկայութիւնը բոլորին, բայց նոյնիսկ այդ պարագային անոր բարութիւնը ակնյայտօրէն կ'երեւէր Էնտելի կեանքի ամէն բնագաւառի մէջ:

Տասնամեայ կրթութիւնը Էնտելի դպրոցին մէջ կը պատրաստէր աշակերտները իրենց հետագայ կեանքին համար: Տասնհինգ տարեկան հասակին անոնց կը տրուէր կարճ ժամանակահատուած՝ կիրառելու համար այն ամէնը, ինչ որ անոնք սորված էին: Այդ ընթացքին անոնց պիտի վստահուէր հարստութիւն եւ պատասխանատուութիւն: Անոնց կեանքի տեսողութիւնը հարիւր յիսուն տարի էր, եւ այն, թէ ինչպէս անոնք պիտի տնօրինեն իրենց երիտասարդ տարիները եւ միջոցները, պիտի որոշէր, թէ ինչպէս եւ ուր անոնք պիտի անցնէին իրենց կեանքի մնացած մասը: Թէեւ փորձաշրջանը պիտի տեսէր ուղիղ հինգ տարի, աշակերտներէն ոչ մէկը գիտէր այդ մասին: Անոնց պարզապէս ըսած էին, որ այն պիտի չգերազանցէ տասը տարին: Երբ այդ ժամանակահատուածը աւարտէր, անոնցմէ իւրաքանչիւրը պիտի կենար թագաւորին առջեւ, որպէսզի հաշիւ տար իր կայացուցած որոշումներուն համար:

Այդ փորձաշրջանը պիտի որոշէր, թէ արդեօ՞ք աշակերտները հաւատարիմ էին: Անոնք, որոնք կը հետեւէին Ճէյլընի հրամաններուն՝ խօսքով եւ գործով, եւ կը ճանչնային անոր իշխանութիւնը, կ'ընդունուէին Աֆապելի մէջ՝ որպէս քաղաքացիներ: Այդ աշակերտները վարձատրութիւններ կը ստանային ըստ իրենց կայացուցած որոշումներուն:

Այնուամենայնիւ, եթէ աշակերտները ամբողջ փորձաշրջանի ընթացքին ապստամբէին եւ ապրէին միայն իրենց համար, անոնք պի-



տի արտաքսուէին Լոն երկիր: Լոնը անապատային տարածք էր, որուն մէջ բացարձակ խաւար, միայնութիւն եւ անյուսութիւն կը տիրէր: Ապստամբները պիտի բանտարկուէին հոն եւ տառապանք պիտի կրէին մինչեւ իրենց կեանքի աւարտը:

Առաջին մարդը, որ արտաքսուած էր այդ լքուած վայրը, Տակոնն էր. ան դարձաւ Լոնի հիմնադիրը եւ չար տիրակալը: Թէեւ ան ապստամբած էր Ճէյլընի դէմ շատ տարիներ առաջ, անոր ազդեցութիւնը կը շարունակէր մնալ Էնտելի մէջ: Այն էնտելցիները, որոնք ընդունեցին Ճէյլընի իշխանութիւնը, ազատեցան Տակոնի չար ազդեցութենէն, իսկ անոնք, որոնք հրաժարեցան ծառայել Ճէյլընին, մնացին այդ անկում ապրած տիրակալի ազդեցութեան ներքոյ:

Որպէսզի խաւարը չշարունակէր իր թագաւորութեան մէջ թափանցել, մեծ թագաւոր Ճէյլընը ստիպուած էր օրէնքը ընդունիլ՝ պաշտպանելու համար Աֆապէլի տարածքային ամբողջականութիւնը եւ բնակիչները: Անոնք, որոնք կը հետեւէին Տակոնին եւ չէին ընդունիր Ճէյլընի իշխանութիւնը խօսքով եւ գործով, պիտի արտաքսուէին Լոն երկիր՝ մինչեւ իրենց կեանքի աւարտը:

Այսպէս կը սկսի մեր պատմութիւնը: Մենք կը հետեւինք Էնտելի հինգ աշակերտներու կեանքին: Անոնց անուններն են՝ Անկախ, Խաբուած, Յուսահատ սիրտ, Եսասէր եւ Բարեգործ: Առիթ տուէք ներկայացնելու իւրաքանչիւրը:

Անկախ

Անկախը մշտապէս կը վիճարկէ Աֆապէլի գոյութիւնը: Ան իսկապէս չի կրնար հաւատալ, որ Ճէյլըն անունով անձնաւորութիւն մը կայ, որուն ան երբեք չէ հանդիպած եւ չէ տեսած, կը պահանջէ հաւատարիմ ըլլալ իրեն, ինչպէս նաեւ՝ խստօրէն հետեւիլ շարք մը կանոններու: Ան կը մտածէ, որ պատմութիւնը Ճէյլընի մասին խաբէութիւն է, որուն նպատակն է՝ զինք եւ միւս աշակերտները ուսուցիչներու վերահսկողութեան տակ պահել: Ան արհամարհանքով կը հրաժարի դպրոց յաճախել եւ այդ երեւակայական թագաւորութեան մասին սորվել:

Անկախը կը ծաղրէ միւսները՝ այսպիսի անհեթեթութեան հաւատալու համար: Ան կ'որոշէ ապրիլ այնպէս, ինչպէս ճիշդ կը համարէ, եւ ազատ ըլլալ Ճէյլընի օրէնքներէն: Ան պատրաստ է բացառութիւն ընելու միայն՝ եթէ թագաւորին կարգադրութիւնները ձեռնտու են իրեն: Այդ պարագային ան կը հետեւի ատոնց, բայց միայն՝ որովհետեւ ինքը կը ցանկայ ատիկա: Ան վստահաբար կ'ըսէ բոլորին, որ չի պատրաստուիր հնազանդիլ ինչ որ մէկուն կամքին:



Խաբուած

Խաբուածը չի վիճարկեր Աֆապէլի գոյութիւնը: Ան կը հաւատայ Ճէյլըն թագաւորին եւ նոյնիսկ հիացմունքով կը վերաբերի անոր խոստումներուն: Ան մտքով եւ բերանացի կը համաձայնի դպրոցի ուսմունքներուն եւ կանոններուն, բայց անոր կեանքը հիմնականին կը հակասէ այդ ուսմունքներուն: Ան պատրաստակամօրէն կը խօսի այն մասին, որ հաւատարիմ է թագաւորին եւ անոր ուսմունքներուն, եւ կը մասնակցի դպրոցի ծրագիրներուն, երբ ատոնք հաճելի են իրեն, բայց երբ ան անձնական շահ չի տեսներ ատոնց մէջ, անոր կարծիքը արագօրէն կը փոխուի: Անոր կենսառճը կը հակասէ Ճէյլընի ճշմարիտ հետեւորդի նկարագրին, բայց շնորհիւ իր ազդեցիկ անհատականութեան՝ ան անկատ կը գրաւէ ուրիշներուն դէպի իր ճանապարհը: Ան երբեք լրջօրէն չի մտածեր իր փորձաշրջանին եւ մօտալուտ դատաստանին մասին:

Խաբուածը շատ լաւ յարաբերութիւններ ունի Անկախին հետ, թէեւ անոնք տարածայնութիւններ ունին Ճէյլընի գոյութեան վերաբերեալ: Խաբուածը ուրախ ու կատակասէր անձնաւորութիւն է, եւ Անկախին հաճելի է հաղորդակցիլ անոր հետ:

Յուսահատ սիրտ

Յուսահատ սիրտը ամենախանդավառ աշակերտն է դպրոցին մէջ: Ան յաճախ կը պատասխանէ դասերուն եւ մշտապէս կը ստանայ ամենաբարձր գնահատականները: Ան շատ աշխոյժ է, եւ սովորաբար արտադպրոցական միջոցառումներ կը նախաձեռնէ, որպէսզի օգնէ դպրոցականներուն՝ ներգրաւուիլ հասարակութեան մէջ: Նայելով դպրոցի աշակերտներուն՝ կարելի է վստահաբար ըսել, որ ան բոլորէն շատ կը ձգտի ծառայել Ճէյլընին:

Եսասէր

Եսասէրը նոյնպէս կը հաւատայ Ճէյլընին եւ անոր ուսմունքներուն: Ան չի կասկածիր Աֆապէլի գոյութեան եւ բացայայտ կը խօսի այդ մասին՝ ինչպէս եւ իր ընկերները: Ան կը հաւատայ, որ Ճէյլընը այնքա՛ն հրաշալի իշխան է եւ այնքա՛ն բարի թագաւոր է, որ ողորմած կ'ըլլայ անոնց հանդէպ, որոնք կը դաւանին, որ հաւատարիմ են իրեն: Այնուամենայնիւ, անոր պատկերացումը Ճէյլընի ուսմունքներու եւ բնաւորութեան մասին թերի է: Ան կը մոռնայ, որ Ճէյլընը արդար եւ սուրբ թագաւոր է՝ միաժամանակ սիրող եւ ողորմած: Այնպէս որ, իր ներսը Եսասէրը



աղաւաղուած պատկերացում ձեւաւորած է Ճէյլընի մասին: Ան համոզուած է, որ Խաբուածը, Յուսահատ սիրտը եւ Բարեգործը պիտի ընդունուին Ճէյլընի փառաւոր թագաւորութեան մէջ. ան որոշ մտահոգութիւններ ունի միայն Անկախին վերաբերեալ՝ անոր բացայայտ հակառակութեան պատճառով:

Եսասէրը համոզուած է, որ անոնք, որոնք բերանացի կ'ընդունին Ճէյլընը եւ այնպէս մը կ'ապրին, որ չխախտեն անոր գլխաւոր օրէնքները, մուտք կը գործեն Աֆապէլ: Այնուամենայնիւ, ինչպէս իր անունը կը յուշէ մեզի, ան հիմնականին եսակեդրոն է, եւ յաճախ բարի գործեր կ'ընէ իր իսկ օգտին համար: Երբեմն Եսասէրը կ'առաջնորդուի գթասրտութեամբ, բայց վճռական պահերուն ան իր շահերուն համաձայն կը գործէ:


Բարեգործ

Եւ վերջինը՝ Բարեգործ անունով աղջիկը, որ ի սրտէ կ'ընդունի Ճէյլըն թագաւորի օրէնքները եւ կը հնազանդի: Ան ոչ միայն կը սորվի Ճէյլընի սկզբունքները, այլեւ կը ձգտի գիտնալ, թէ ինչ կայ ատոնք կարգադրողի սրտին մէջ: Ան շատ ժամանակ կ'անցընէ՝ Ճէյլընին կամքը փնտռելու եւ հասկնալու համար: Ան ժամեր շարունակ ուսումնասիրութիւններ կը կատարէ եւ անձնուիրաբար կը ծառայէ Էնտելի դպրոցին եւ համայնքին բարօրութեան համար: Ան գիտէ, որ տասնհինգ տարեկան դառնալէն ետք քիչ ժամանակ պիտի ունենայ՝ մեծ թագաւորի ցանկութիւնները կատարելու համար: Անոր նպատակն է՝ լիարժէք կերպով ապրիլ Ճէյլընի փառքին համար, եւ ան առիթ չի տար, որ իր շահերը խանգարեն իր գլխաւոր նպատակը:

Բարեգործը կը սիրէ Ճէյլընը եւ կը փափաքի այն օրուան, երբ պիտի հանդիպի անոր: Ան ջերմեռանդօրէն կը հնազանդի անոր եւ յաճախ կը խօսի մարդոց հետ անոր բարութեան մասին: Այս պատճառով շատերը կը ծաղրեն զինք եւ կը դադրին անոր հետ հաղորդակցելէ: Թէեւ ան տուժած է իր դիրքորոշման, այսինքն՝ Ճէյլընի հանդէպ իր անսասան հաւատարմութեան պատճառով, ոչինչ կրնայ ետ պահել զինք թագաւորին հաւատարիմ մնալէն:

Շրջանաւարտները

Այս հինգ էնտելցիներն ալ տասնհինգ տարեկան դարձան: Եկաւ որոշուած օրը, եւ անոնք աւարտեցին դպրոցը երկու հազար այլ աշակերտներու հետ: Ամէն մէկուն վստահուեցաւ յատուկ յանձնարարու-



թին եւ սկզբնական գումար, որուն չափը որոշուած էր Ճէյլընին կողմէն: Աւարտական երեկոյին դպրոցի տնօրէնը ամէն մէկուն յանձնեց իր գումարը:

Մեր հինգ ուսանողներէն իւրաքանչիւրը ստացաւ հետեւեալը. Անկախը՝ յիսունհինգ հազար աւանդ: Խաբուածը եւ Յուսահատ սիրտը՝ իւրաքանչիւրը ստացաւ քառասուն հազար աւանդ: Եսասէրը ստացաւ ամենամեծ գումարը՝ եօթանասունհինգ հազար աւանդ, իսկ Բարեգործը՝ քսանհինգ հազար աւանդ: Վերցնելով իրենց գումարները եւ ստանալով վերջին հրահանգները՝ երիտասարդ քաղաքացիները արծակուեցան դպրոցէն:

Առեւտրականը

Թէեւ Անկախը հազուադէպ կը յաճախէր դասերուն, միեւնոյնն է, որոշ ուսուցումներ կը յիշէր: Երբեմն ան կը մտածէր, թէ կրնա՞յին արդեօք դպրոցի անհեթեթութիւնները ճիշդ ըլլալ: Եթէ այդպէս էր, ան յոյս ունէր, որ իր վարքը չէր ազդեր այն բանին վրայ, թէ որքան գումար պիտի ստանար դպրոցը աւարտելուն պէս:

Անկախի ծեռքերը կը դողային, երբ ան կը վերցնէր իր աւանդներով ծրարը: Այն բանալուն պէս ան պէտք է գսպեր իր գարմանքը եւ թեթեւութեան զգացումը՝ հասկնալով, թէ որքան գումար տրուած էր իրեն: Ան նոյնիսկ աւելի ոգեշնչուեցաւ, երբ գիտցաւ, որ ստացած էր տասնհինգ հազարով աւելի, քան Յուսահատ սիրտը, եւ աւելին էր, քան Բարեգործի գումարի կրկնակին: Ան մտածեց. *«Ժամանակի եւ ուժերու ինչպիսի՞ վատնում: Բարեգործը եւ Յուսահատ սիրտը իրենց ամբողջ ժամանակը անցուցին՝ նստելով այդ անհիմաստ դասերուն, եւ այնքան աւելորդ ժամեր տրամադրեցին դպրոցին: Եւ անոնք ի՞նչ ստացան ատոր փոխարէն»:*

Այս միջադէպը աւելի ամրապնդեց Անկախի համոզմունքը այն մասին, որ Ճէյլընը գոյութիւն չունէր: Ան որոշեց, որ այդ գումարը ձգած էին ուսանողներուն ծնողները, որոնք անյայտացած էին շատ տարիներ առաջ: Ասիկա աւելի հաստատեց անոր կարծիքը այն մասին, որ պատմութիւնը Ճէյլըն թագաւորին մասին կեղծիք էր, որը դպրոցը յօրինած էր, որպէսզի վերահսկէր երիտասարդները եւ սահմանափակէր անոնց ազատամտութիւնը:

Ուսման աւարտը քանի մը շաբաթ տօնելէն յետոյ Անկախը հասկցաւ, որ պէտք է ինչ որ գործ մը սկսէր: Ան արդէն խուճապի մատնուած էր՝ տեսնելով, թէ որքան արագօրէն կը զրկուէր իր աւանդներէն:



Անկախը զբաղեցաւ ինքնաշարժներու առետուրով եւ հասկցաւ, որ ինքը օժտուած առետորական է: Գործը զարմանալիօրէն լաւ կ'ընթանար: Նորաւարտ աշակերտներէն շատերը օգտագործեցին իրենց սկզբնական գումարի մէկ մասը՝ Անկախին քովէն գնելով գործածուած եւ նոյնիսկ նոր ինքնաշարժներ: Անոր միջոցները աւելցան: Ան ընդլայնեցաւ՝ նոր գործեր ձեռնարկելով, եւ ատոնց մէջ նոյնպէս յաջողութեան հասաւ: Իր շահոյթներու յաւելումին հետ մէկտեղ ան բարելաւեց իր անձնական կեանքը: Եւ արագ հասկցաւ, որ դրամը՝ ազդեցութեան զարմանալի միջոց է, որ, կը թուայ, թէ կրնար երջանկութիւն գնել: Անոր հարստութիւնը, ունեցուածքը եւ արագօրէն ընդլայնուող կեանքը կը գրաւէին կիները, ինչ որ ալ աւելի ոգեւորեց զինք:

Անկախը չէր յաճախեր իր համայնքի շաբաթական հաւաքոյթներուն, բայց միեւնոյնն է՝ էնտելցիներու մեծ մասը շատ լաւ քաղաքացի կը համարէր զինք, քանի որ ան աջակցութիւն կը ցուցաբերէր տարբեր համայնքային նախագիծերու: Կը թուար՝ այս քրտնաջան աշխատող էնտելցիի կեանքը չէր կրնար աւելի լաւ դասաւորուիլ:

Շինարար եւ հողատարածքներ իւրացնող

Խաբուածը մեծ ուրախութեամբ քանի մը շաբաթ շարունակ տօնեց ուսման աւարտը Անկախին հետ: Թէեւ ան միւսներուն պէս շատ չէր ստացած, ան ուրախ էր, որ ունէր աւելին, քան Բարեգործը: Ատիկա հաստատեց անոր աղաւաղած պատկերացումը այն մասին, որ Ճէյլընը այնքան ողորմած էր, որ որոշ հարցեր կարելոր չէին անոր համար:

Դպրոցին մէջ Խաբուածը սեռական կապեր ունէր քանի մը աղջիկներու հետ, թէեւ ատիկա կը հակասէր այն ուսմունքներուն, որոնք ան կը ստանար: Ան խնդիր չէր տեսներ ատոր մէջ, որովհետեւ սրտանց կը հաւատար Ճէյլընին եւ անոր թագաւորութեան: Ան ձեւաւորած էր իր ուրոյն մօտեցումը կեանքին. *«Քանի դեռ ես կ'ըսեմ, որ հաւատարիմ եմ Ճէյլընին, եւ մեծ ցաւ չեմ պատճառեր մարդոց, ես արդար դիրք կ'ունենամ թագաւորին առջեւ»*: Ըստ անոր դատողութեան՝ Ճէյլընը կը հասկնար, որ բոլորը կարիքներ ունին, եւ որ ոչ ոք կատարեալ է: Ան համոզուած էր, որ դատաստանի ժամանակ իր բոլոր ծախողութիւնները պիտի ծածկուէին Ճէյլընի ողորմութեամբ եւ շնորհքով, որովհետեւ ան ամբողջ սրտով կը հաւատար թագաւորին:

Աւարտելէն քանի մը շաբաթ յետոյ Խաբուածը սկսաւ իր գործը: Ան տուներ կը կառուցէր: Սկիզբը ան կը դժուարանար յաճախորդներ գտնելու մէջ: Անոր կառուցած տուները գերազանց էին ամէն առումով, բայց ոչ ոք կը գնէր ատոնք: Ոմանք կը մտածէին, որ անոր գիները շատ սուղ



էին, միւսները պարզապէս չէին կրնար առիթ տալ իրենց նման գեղեցիկ տուններ ձեռք ձգելու: Յուսահատելով՝ Խաբուածը գիները իջեցուց:


Ան շարունակեց տուներ կառուցել նոյն գեղեցիկ ոճով՝ յաճախորդներ գրաւելու համար: Ան նոյն խոստումները կու տար, ինչպէս նախկինին, բայց կ'օգտագործէր շատ աւելի ցածրորակ նիւթեր, քան կը ներկայացնէր կամ կը խոստանար: Անոր օգտագործած նիւթերու մէկ մասը արգիլուած էր Էնտելի օրէնքներով եւ չէր համապատասխաներ Էնտելի չափանիշներուն: Խաբուածը կ'արդարացնէր ինքզինքը՝ մտածելով, որ Էնտելի օրէնսդիրները, որոնք որոշած էին այդ չափանիշները, չափէն դուրս զգոյշ էին: Ան համոզուած էր, որ իր ընտրած նիւթերը կը դիմանային որեւէ ճնշումներու եւ եղանակային պայմաններու: Քանի որ Խաբուածի տուները շատ գեղեցիկ տեսք ունէին՝ իրենց գինի համեմատ, շահագրգռուած էնտելցիները սկսան պայմանագիրներ կնքել անոր հետ աւելի արագ, քան ան կը հասցնէր կառուցել ատոնք: Անոր գործը վերջապէս թափ հաւաքեց:

Քանի մը տարի յետոյ Խաբուածը որոշեց զբաղիլ հողատարածքներու իւրացմամբ: Ան յոգնած էր բողոքող յաճախորդներէն: Ան մտածեց, որ այս պարագային, հողատարածքը վաճառելէն յետոյ, ազատ պիտի ըլլար բոլոր պարտաւորութիւններէն, եւ արդէն ստիպուած չէր ըլլար երաշխիքային վերանորոգման աշխատանքներ կատարելու:

Խաբուածի ոգեւորութեան չափ չկար, երբ ան գտաւ հողատարածք մը, որուն արժէքը ընդամենը հազար աւանդ էր՝ ամէն մէկ աքրի (1 աքր = 4046,86 քմ².) համար: Նման ձեռնտու պայմանները գրեթէ անհնար կը թուէին: Այնուամենայնիւ, պարզուեցաւ, որ հողատարածքը կը գտնուէր ջրհեղեղի ենթակայ հարթավայրի մէջ: Այս մասին գիտէին միայն մէկ քանին, եւ բոլորը Խաբուածի ընկերներն էին: Ան քաղաքի խորհուրդի անդամներէն մէկուն համոզեց, որ Անկախ ընկերն էր, հաստատել իր իւրացման ծրագիրը՝ առանց պատշաճ երկրաբանական ստուգման: Ի վերջոյ, անոր ամբողջ կեանքի ընթացքին հոն նոյնիսկ մէկ անգամ ջրհեղեղ չեղաւ. այնպէս որ, իրականութեան մէջ ոչ մէկ խնդիր կար: Այդ գործարքը կայացաւ առանց որեւէ խոչընդոտի: Անկէ յետոյ, կը թուար, թէ կեանքը չէր կրնար աւելի լաւ դասաւորուիլ երիտասարդ ձեռնարկատիրոջ համար:

Ուսուցիչի օգնականը

Անմիջապէս աւարտելէն յետոյ, Յուսահատ սիրտը քանի մը ընկերուհիներու հետ, ամբողջ շաբաթավերջը նուիրեց գնումներ կատարելուն: Ան մտածեց, որ արժէր ընել աստիկա երկու պատճառով. առաջի-



նը՝ ան ժամանակ պիտի անցնէր իր մտերիմ ընկերուհիներուն հետ, եւ երկրորդը՝ պիտի կարենար հագուստ եւ լրացուցիչ առարկաներ գնել, որոնց կարիքը պիտի ունենար՝ քարիերա (աշխատանքային գործունէութիւն) սկսելու համար: Յուսահատ սիրտը ամէնէն շատ կը ցանկար ուսուցիչի օգնական դառնալ էնտելի դպրոցին մէջ: Որքան ան կը յիշէր զինք, աստիկա իր մեծագոյն ցանկութիւնն էր: Ան պէտք է հարցազրոյցի ներկայանար գալիք շաբթուան ուրբաթ օրը:


Գնումներու երկրորդ օրը Յուսահատ սրտի ընկերուհիներէն մէկը՝ Բամբաստղը, պատմեց անոր, թէ ինչպէս իրենց ընդհանուր ընկերուհի Չարախօսը ըսած էր տնօրէնին, որ Յուսահատ սիրտը սեռական կապ մը ունեցած էր աշակերտներէն մէկուն հետ: Յուսահատ սրտի բարկութիւնը բռնկեցաւ: Այսպիսի մեղադրանք կրնար շատ մեծ խոչընդոտ դառնալ ուսուցիչի օգնականի աշխատանքը ստանալու համար: Ատիկա անհեթեթ սուտ էր, որուն մէջ նոյնիսկ ճշմարտութեան նշոյլ չկար: Ան անարատ պահած էր ինքզինքը ուսման ամբողջ ընթացքին: Յուսահատ սիրտը համոզուած էր, որ Չարախօսը ըրած էր աստիկա նախանձէն եւ թերեւս նաեւ ատելութենէն դրդուած:

Յուսահատ սրտի բարկութեան չափ չկար: Ան խորապէս վիրաւորուեցաւ, եւ մինչեւ նոր շաբթուան սկիզբը անոր միտքը կլանուած էր Չարախօսի դաւաճանութեամբ, որուն ան իր ընկերը կը համարէր: Ան երդում ըրաւ, որ պիտի ստիպէր Չարախօսին՝ վճարելու իր արարքին համար:

Եկաւ հարցազրոյցին օրը, եւ ի գարմանս Յուսահատ սրտին՝ ան ընդունուեցաւ իր ցանկալի աշխատանքին: Տնօրէնը տեղեկացուց զինք, որ այդ ըսի-ըսաները իսկապէս հասած էին իրեն, բայց որոշակի քննութենէ յետոյ պարզուեցաւ, որ ատոնք ճիշդ չէին: Բացի այն, որ Յուսահատ սիրտը աշխատանք ստացաւ, ան նշանակուեցաւ իր ամենասիրելի ուսուցիչներէն մէկուն քով: Երկակի կեանքը դպրոցի ամենատաղանդաւոր ուսուցիչներէն էր: Ան քսանհինգ տարեկան էր եւ արդէն տարիներ շարունակ կը սորվեցնէր երիտասարդ էնտելիցիներուն: (Ուսուցիչներու դատաստանը չէր գար քսան տարեկանին, ինչպէս միւս էնտելիցիներունը, այլ՝ երեսուն տարեկանին): Յուսահատ սիրտը զարմացաւ, որ ընտրուած էր՝ աշխատելու նման եռանդուն առաջնորդի հետ:

Ուսումնական կիսամեան սկսաւ, եւ ամէն ինչ շատ լաւ կ'ընթանար, բայց Յուսահատ սիրտը թունոտ ոխ կը պահէր իր նախկին ընկերուհիին դէմ: Անկախ այն բանէն, թէ ինչպէս ամէն ինչ դասաւորուեցաւ՝ ան, կը թուար, չէր կրնար մոռնալ Չարախօսին սուտը:

Թէեւ ամէն ինչ հիասքանչ կը թուար, վտանգը կը հասունանար աննկատ: Երկակի կեանքի անունը լիովին վայելած էր իրեն: Հասարակու-



թեան առջեւ ան ուսուցիչ էր, բայց անոր անձնական կեանքը բոլորովին այլ էր: Անոր դատաստանը ամենախիստը պիտի ըլլար, քանի որ ուսուցիչ ըլլալով՝ Երկակի կեանքը անձամբ ճէլընը տեսնելու արտօնութիւն ունեցած էր:

Երեկոյ մը, երբ Յուսահատ սիրտը եւ Երկակի կեանքը առանձին էին, ան փորձեց գայթակղեցնել իր օգնականը: Ապշած եւ բարկացած՝ Յուսահատ սիրտը անմիջապէս հեռացաւ: Երկակի կեանքը ջանձնուեցաւ, այլ շարունակեց հետամուտ ըլլալ անոր յաջողոյ քանի մը շաբաթներու ընթացքին: Յուսահատ սիրտը սկսաւ փոխել իր դիրքորոշումը եւ լսել իր ուսուցիչին համոզիչ խօսքերը, քանի որ ան յայտնի եւ խելացի անձնաւորութիւն էր: Յուսահատ սրտին հաճելի էր Երկակի կեանքի ուշադրութիւնը: Ան հաճելի վարք ունէր, բարի էր, եւ բացի այդ՝ կը համարուէր ամբողջ քաղաքի ամենագեղեցիկ տղամարդոցմէն մէկը: Երկարատեւ ներքին պայքարէն յետոյ Յուսահատ սիրտը տուաւ իր կուսութիւնը Երկակի կեանքին, եւ անոնց միջեւ բուռն սիրավէպ սկսաւ:

Յուսահատ սրտին մինչ այդ անձանօթ էին տենչանքի եւ սիրոյ ոգեւորիչ զգացումները: Ամէն անգամ, երբ ան կը տեսնէր Երկակի կեանքը, անոր սիրտը արագօրէն կը բաբախէր: Անոր միտքը ամբողջովին կլանուած էր Երկակի կեանքին հետ անցուցած երեկոներով: Իր նոր մտքերուն պատճառով, ան ժամանակաւորապէս մոռցած էր իր խորունկ եւ պահուած վիրաւորանքը Չարախօսին հանդէպ:

Այնուամենայնիւ, չորս ամիս յետոյ Երկակի կեանքը անսպասելիօրէն ձգեց գինք: Յուսահատ սիրտը շփոթութիւն եւ դատարկութիւն կը զգար. ան պէտք է գիտնար, թէ որն էր պատճառը: Ան մտովի վերլուծեց իրենց բոլոր հանդիպումները եւ ստիպեց Երկակի կեանքին՝ ըսել իր որոշման պատճառը: Ի վերջոյ, Երկակի կեանքը ըսաւ, որ լսած էր Չարախօսի պատմութիւնը այն մասին, որ Յուսահատ սիրտը սիրավէպ ունեցած էր աշակերտի մը հետ: Իրականութեան մէջ, ատիկա անոր զգացումներու փոփոխութեան իրական պատճառը չէր. Երկակի կեանքը կորսնցուցած էր հետաքրքրութիւնը Յուսահատ սրտի հանդէպ: Ան արդէն կը հաճոյախօսէր մէկ ուրիշ աղջկայ: Երիտասարդ կանայք դիրին կը հրապուրուէին այդ ակնառու ուսուցիչով:

Յուսահատ սիրտը խիստ վիրաւորուած էր: Անոր համար անտանելի էր միտքը այն մասին, որ ան ամէն օր պիտի տեսնէր Երկակի կեանքը: Չկարենալով դիմանալ այս իրավիճակին՝ ան անմիջապէս հեռացաւ աշխատանքէն:

Քանի մը օր վիրաւորանքէն տանջուելէն յետոյ Յուսահատ սիրտը գեղեցկութեան սրահ բացաւ իրեն վստահուած քառասուն հազար



աւանդի մնացորդով: Ան դադրեցաւ դպրոցի շաբաթական հաւաքոյթներուն յաճախելէ, թէեւ Ճէյլընը պատուիրած էր, որ իր ենթակաները չծճէին այդ հաւաքոյթները: Յուսահատ սիրտը չէր ուզեր կապ ունենալ կեղծաւորներուն հետ, իսկ մարդոց մեծ մասը այդ հաւաքոյթներուն ճիշդ այդպիսին կը թուային անոր:

Յուսահատ սիրտը օրէօր աւելի կը խստանար: Ան հազուադէպ կը յիշատակէր Ճէյլընին դպրոցը: Այն ջերմեռանդութիւնը, որ ան ժամանակ մը ազատօրէն կ'արտայայտէր, փոխարինուեցաւ անտարբերութեամբ, արհամարհանքով եւ ծաղրանքով: Երբ Յուսահատ սրտին կը հարցնէին այդ մասին, ան կը դաւանէր իր հաւատարմութիւնը Ճէյլընին, բայց սրտին խորքէն ան կը մեղադրէր զինք, քանի որ առիթ տուած էր Երկակի կեանքին պէս այլասեռուած մարդու մը՝ ուսուցիչ ըլլալ իր դպրոցին մէջ:


Երբ Յուսահատ սրտի փորձաշրջանը կը մօտենար աւարտին, ան արդէն խիստ վիրաւորուած եւ դառնացած կին էր, թէեւ ինքը կտրականապէս պիտի հերքէր ատիկա, եթէ անոր հարցնէին այդ մասին: Ան անցուց իր մնացած օրերը՝ փորձելով հաշուեյարդար տեսնել անոնց հետ, որոնք խորունկ վիրաւորանք հասցուցած էին իրեն:

Էնտելի քաղաքապետը

Այժմ մենք պիտի պատմենք Եսասէրի մասին: Ան պարզապէս զարմացած էր իր ստացած գումարի չափէն: Ան նոյնպէս տօնեց իր ուսման աւարտը, բայց բաւականաչափ տեղեակ էր Ճէյլընի ուսմունքներէն, որպէսզի հեռու մնար անգուսպ քայլերէն: Քանի օր հանգստանալէն յետոյ ան սկսաւ ներդրումներ ընել: Անոր ներդրումները շահաւէտ էին, եւ ան արագօրէն աւելցուց իր սկզբնական միջոցները: Իր դրամական միջոցներու աճին հետ մէկտեղ ան աւելի յայտնի կը դառնար իր հասակակիցներուն միջեւ:

Եսասէրը տուն գնեց էնտելի լաւագոյն թաղամասերէն մէկուն մէջ. ան հրաւիրեց ազդեցիկ եւ իշխանութիւն ունեցող մարդիկ: Պետական պաշտօնեաները, արհեստավարժ մարզիկները, ընկերութիւններու գործադիր տնօրէնները եւ այլ ակնառու անձիք կը վայելէին անոր առատածէմն հիւրասիրութիւնը: Ան արագօրէն ամենամեծ կապերը ունեցող մարդը կը դառնար ամբողջ քաղաքին մէջ:

Երեք տարի յետոյ Եսասէրը որոշեց առաջադրել իր թեկնածութիւնը էնտելի քաղաքապետի պաշտօնին համար եւ դիւրին յաղթեց ընտրութիւնները՝ շնորհիւ իր դրամական ազդեցութեան եւ հասարակական



կապերուն: Իր պաշտօնավարութեան ճիշդ ամենասկիզբը ան ստիպուած էր բազմաթիւ որոշումներ կայացնելու: Ատոնցմէ մէկը կը վերաբերէր դպրոցին: Քաղաքի բնակչութեան աճի պատճառով դպրոցը աւելի մեծ տարածքի պէտք ունէր: Դպրոցը պէտք է հողատարածք գնէր, պայմանագիրներ կնքէր վարձակալներու հետ, զգալի ծախսեր ընէր, ինչպէս նաեւ՝ ձեռք ձգէր անհրաժեշտ գոյք եւ սարքաւորումներ:

Առաջին քայլը՝ միջոցներ հանգանակելն էր: Շաբաթական հաւաքոյթի ժամանակ Եսասէրը լսեց, որ դպրոցին միջոցներ անհրաժեշտ էին: Մինչեւ հանգանակութեան աւարտը, ան հազար աւանդէն ընդամէնը քիչ մը պակաս գումար նուիրաբերած էր:

Եւ ահա եկաւ կարեւոր որոշում կայացնելու պահը: Դպրոցը բաւականաչափ գումար հանգանակած էր՝ իր ընտրած հողատարածքը գնելու համար: Այդ հողատարածքը շատ յարմար էր, եւ դպրոցի ունեցած գումարը բաւական էր ատոր համար: Այնուամենայնիւ, նոյն հողատարածքը կը ցանկար գնել մեծ հանրախանութներու ցանց մը: Քաղաքային խորհուրդը բաժնուած էր դպրոցի եւ հանրախանութներու ցանցին միջեւ: Դպրոցը շահոյթ չհետապնդող կազմակերպութիւն էր, այսինքն ընդլայնուելու պարագային ատիկա պիտի չաւելցնէր քաղաքի հարկային եկամուտները: Իսկ նոր հանրախանութը մեծ հարկային եկամուտներ պիտի բերէր եւ յաւելեալ աշխատատեղեր ստեղծէր քաղաքացիներուն համար:

Քաղաքային խորհուրդի ծայները կիսուեցան, եւ որոշիչ ծայնը կը պատկանէր քաղաքապետին: Եսասէրը հակասական զգացումներ ունէր: Հանրախանութներու ցանցի սեփականատէրերը մեծապէս աջակցած էին անոր նախընտրական արշաւին՝ տրամադրելով մեծ գումարներ, ինչպէս նաեւ օգտագործելով իրենց ազդեցութիւնը անոր համար: Անոնք յաճախ կը հիւրընկալուէին Եսասէրին տունը՝ տարբեր առիթներով:

Եսասէրը քուէարկեց նոր հանրախանութի օգտին: Ան արդարացուց իր որոշումը հանրութեան առջեւ՝ պնդելով, որ այն մեծ օգուտ կը բերէ Էնտելի քաղաքացիներուն: Ան ըսաւ, որ հնարաւորութիւն ստեղծեց նոր աշխատատեղերու համար եւ աւելցուց քաղաքի շահոյթը: Ան դպրոցին առաջարկեց փորձել ընդլայնել իր ներկայ շինութիւնը, թէեւ գիտէր, որ անոնք չէին կրնար ընել ատիկա: Անոր որոշումը հիասթափեցուց Ժէյլընի անկեղծ հետետորդները, բայց քաղաքացիներու մեծ մասը ի սրտէ ողջունեց այն:

Եսասէրի երկամեայ պաշտօնավարութիւնը կը մօտենար աւարտին, եւ ան կը պատրաստուէր նախընտրական արշաւ սկսիլ վերընտրուելու համար: Խղճի խայթ զգալով՝ ան հինգ հազար աւանդ նուիրաբերեց



Էնտելի դպրոցին: Ատոր հետ մէկտեղ, խոստացաւ տրամադրել մէկ այլ հողատարածք, որուն վրայ դպրոցը կրնար կառուցել իր նոր մասնաշէնքը: Ասիկա օգնեց անոր վերստանալ Ճէյլընի հետեւորդներու մեծ մասի վստահութիւնը: Կը թուար՝ երիտասարդ առաջնորդը դիրութեամբ պիտի վերընտրուէր իր պաշտօնին:

Ճաշարանի տիրուհին


Աւարտելուն պէս Բարեգործը, իր քսանհինգ հազար աւանդէն նուիրաբերեց երեքը՝ Էնտելի դպրոցի նոր մասնաշէնքի շինարարութեան: Ան շնորհակալ էր այն ամէն բանի համար, ինչ որ սորված էր իր ուսուցիչներէն, եւ կը ցանկար ինչ որ ձեռով յայտնել իր երախտագիտութիւնը: Մնացած քսաներկու հազարով Բարեգործը ճաշարան բացաւ:

Բարեգործը կը սիրէր զբաղիլ խոհարարութեամբ: Հաշուի առնելով իր նախասիրութիւնը եւ գործարար ծիրքը՝ ճաշարան բանալը իր պարգեւները գործածելու եւ իր համայնքին ծառայելու լաւագոյն ձեւը թուաց անոր: Ան հրաւիրեց Էնտելի լաւագոյն խոհարարներէն մէկ քանին: Համակարգելով անոնց գիտելիքները՝ ան գերազանց ճաշացանկ պատրաստեց: Անոր ճաշարանը անմիջապէս յաջողութիւն ունեցաւ:

Թէեւ Բարեգործը բազմաթիւ մրցանակներ ստացաւ իր ճաշարանին համար, ան միշտ իր յաջողութիւնը Ճէյլընի իմաստութեան կը վերագրէր: Բոլոր հարցազրոյցներուն մէջ ան մշտապէս շնորհակալութիւն կը յայտնէր իր նախկին ուսուցիչներուն եւ կը գովէր իր աշխատակազմը: Ան կը հրաժարէր իր ջանքերով պարծենալէ եւ պնդէր, որ իր ուժերով յաջողութեան հասած է: Ան գիտէր, որ այդ ամէնը միայն Ճէյլընի շնորհիւ էր:

Բարեգործը օգտագործեց իր շահոյթները՝ օգնելու համար ե՛ւ իր համայնքին, ե՛ւ Էնտելի դպրոցին: Ան անվճար սնունդ կը տրամադրէր դպրոցի բարեգործական ճաշարանին, որ կը կերակրէր կարիքաւոր մարդոց: Յաճախ ինքը անձամբ երեկոներ կը կազմակերպէր, որպէսզի սնունդ բաժնէր այդ բարեգործական ճաշարանին մէջ: Ան սիրով տաք կերակուր կու տար աղքատներուն: Ան որոշում կայացուցած էր իր ճաշարանի բոլոր եկամուտներու 25 տոկոսը նուիրաբերել Էնտելի դպրոցին: Իր հինգամեայ փորձաշրջանի աւարտին ան դպրոցին արդէն նուիրաբերած էր աւելի քան երկու հարիւր հազար աւանդ:

Բարեգործը միշտ կ'օգնէր անոնց, որոնք շատ կ'աշխատէին, բայց չէին կրնար հոգալ իրենց ծախսերը: Դրամական օգնութեան հետ մէկտեղ, ան պատրաստակամօրէն կը բաժնեկցէր մարդոց հետ Ճէյլընի իմաստութեան եւ յաջողութեան սկզբունքներով: Ան շարունակ կ'ըսէր



անոնց, որոնց օգնութիւն կը ցուցաբերէր, որ պարտական է Ճէյլընին իր բոլոր ձեռքբերումներուն եւ յաջողութիւններուն համար:

Թէեւ Բարեգործի ճաշարանը յաջողութիւն ունէր, ոչ մէկ անգամ հրաւիրեցին զինք մասնակցելու Եաստի տունին մէջ տեղի ունեցող հասարակական միջոցառումներուն, եւ ո՛չ ալ խնդրեցին անորմէ որեւէ ղեկավարող դիրք զբաղեցնել քաղաքին մէջ: Ան չափազանց ծայրայեղ կը համարուէր՝ Ճէյլընին հետեւելուն պատճառով: Ազդեցիկ էնտելիցիներու կողմէն մերժուիլը բնաւ չէր հիասթափեցներ Բարեգործը: Ան կը ձգտէր հասնիլ կարիքաւորներուն: Ան կը սիրէր շաբաթական հաւաքոյթները դպրոցին մէջ եւ մշտապէս կ'առաջարկէր իր օգնութիւնը՝ նուիրատուութիւններ կատարելով կամ տարբեր ծառայութիւններ մատուցելով: Բարեգործը՝ կայացած երիտասարդ կին էր:

Պատաստանի որոշուած օրը

Եկաւ փորձաշրջանի վերջին օրը: Անոնք, որոնք պէտք էր դատաստանի արջեւ կենային, կը մտածէին, որ ատիկա տեղի պիտի ունենայ յաջորդ հինգ տարիներուն ընթացքին, որովհետեւ առաջին հինգ տարին արդէն անցած էր: Ոչ ոք կը պատկերացնէր, որ դատաստանը այդքան շուտ պիտի գայ:

Այդ օրը սկսաւ սովորականի պէս, բայց ւարտեցաւ շատ անսպասելի: Ուշ գիշերով Աֆապէլի թագաւորական պահապանները տարին երկու հազար նախկին աշակերտները: Անոնց գաղտնի ելքը քաղաքէն տեղի ունեցաւ, երբ մնացած բոլոր էնտելիցիները քնացած էին: Այս երկու հազար երիտասարդ քաղաքացիները տարուեցան գաղտնի անցումով: Ատիկա խորունկ թունել էր, որ կ'անցնէր Ատոնկա գետին վարէն: Այդ անցումէն դուրս գալուն պէս անոնք եւս երկու օրուան ճամբայ անցան անշուր անապատով: Ամբողջ ճանապարհին Գլխաւոր պահապանը կը հոգար անոնց իւրաքանչիւր կարիքը՝ տրամադրելով սնունդ, ջուր եւ այլ իրեր՝ յատուկ պահեստէն:

Պահապանները սիրալիւր էին, բայց՝ զուսպ: Անոնք ամբողջովին կեդրոնացած էին իրենց առաջադրանքը կատարելուն վրայ: Թէեւ անոնք կը պատասխանէին էնտելիցիներու որոշ հարցումներուն, կային հարցումներ, որոնց լիազօրուած չէին պատասխանելու: Պահապաններու սովորական պատասխանը նման հարցումներուն՝ «Ամէն ինչ յայտնի պիտի ըլլայ իր ժամանակին», միայն ատելի կը բորբոքէր էնտելիցիներու հետաքրքրութիւնը:

Էնտելիցիները գրեթէ չէին նկատեր անապատի դժուարութիւնները՝ դէպի երկար սպասուած քաղաքը ուղեւորուելու ժամանակ: Երրորդ օրուան



արեւածագին անոնք հասան բլուրի մը գագաթին: Այդտեղէն՝ վաղորդայնի արեւի տակ երեւեցաւ վեհաշուք քաղաքը: ԱՖապէլը նոյնիսկ աւելի փառահեղ էր, քան անոնցմէ ոեւէ մէկը կը համարձակէր պատկերացնել:

Քաղաքին մօտենալու պահուն՝ յայտնութիւնը այդ քաղաքի վեհութեան մասին կ'աւելնար եւ կ'ընդալայնէր: Նոյնիսկ նայելով ԱՖապէլին հայթափայրերու կողմէն՝ ակնյայտ էր, որ այն անզուգական էր: Այդ քաղաքի արուարձաններու համեմատ էնտելը անշուք էր:

Հասնելով քաղաքի կեդրոնական մասին՝ էնտելցիները բացայայտեցին, որ ԱՖապէլի ամէն ինչի մէջ կենդանութիւն կար: Այդ աներեւակայելի վայրին մէջ թռչունները ոչ միայն կ'երգէին, այլեւ կը խօսէին: Անոնց հիասքանչ եւ քաղցրածայն երգերը կ'արտացոլէին այն գեղեցկութիւնը, որ անոնք կը տեսնէին, եւ ա՛լ աւելի կը փառաւորէին այդ քաղաքը:

Ասիկա այնքան ալ չզարմացուց էնտելցիները, քանի որ անոնք արդէն նկատած էին, որ թագաւորական պահապաններու ձիերը կը խօսէին: Այդ ազնիւ արարածները կը հաղորդակցէին ոչ միայն իրար հետ, այլեւ՝ իրենց հեծեալներու: Ակնյայտ էր, որ ձիերը եւ հեծեալները ջերմ յարաբերութիւններ ունէին: Անոնք հասկցան, որ բոլոր արարածները ԱՖապէլի մէջ օժտուած էին խօսելու, ինչպէս նաեւ սէր եւ ուրախութիւն զգալու ունակութեամբ:

Որտեղ ալ դառնային երիտասարդ էնտելցիները, անոնց առջեւ յափշտակիչ տեսարաններ կը բացուէին: Անոնք ակնածանքով կը համակուէին ԱՖապէլին հանդէպ: Նոյնիսկ քաղաքի օդը թարմութիւն կը բերէր: Այն կը հաղորդէր ե՛ւ պարզութիւն անոնց մտքերուն, ե՛ւ ուժ՝ ճանապարհէն յոգնած մարմիններուն: Ամէնէն շատ անոնց կը հետաքրքրէր ամբողջ քաղաքով հոսող գետը: Կը թուար՝ այն կենդանի էր, ըսես ստոր մէջ կեանք կ'առկայօժէր: Հնայիչ մեղեդիները կը միահիւսուէին օդին հետ եւ կը հանդարտեցնէին անոնց յոգնած անձերը յարատեւ խաղաղութեան զգացումով: Ամէն ինչը՝ ամենափոքր բոյսերէն մինչեւ նոյնիսկ օդը, աւելի քան կեանքով լեցուն կը թուար. ամէն ինչ հոն կեանք պարգեւելու կարողութիւն ունէր: Այդ հրաշալի վայրին մէջ ամէն ինչ համակուած էր լեցունութեամբ:

Երիտասարդ քաղաքացիները, չկարենալով զսպել իրենք զիրենք, կը պարզէին իրենց ձեռքերը եւ հպէին այն ամէնուն, ինչ որ կը տեսնէին՝ անցնելով այդ մեծ քաղաքին մէջէն: Անոնք կ'ուզէին աննկատ փախչիլ եւ ամէն ինչ անձամբ հետազօտել հոն, բայց կը հասկնային, որ այդ պահուն ատիկա անթոյլատրելի էր:

Չանոնք առաջնորդեցին դէպի հսկայական դահլիճի մը մեծ նախասրահը: Հոս տղամարդիկն ու կիները առանձնացուցին իրարմէ:



Այն գերկառոյցը, ուր ուղեկցեցան երիտասարդ էնտելիցիներուն, այն-քա՛ն մեծ էր, որ անսահման կը թուար: Առնուազն հարիւր հազար մարդ ազատօրէն կրնար տեղաւորուիլ ասոր ներսը:

Նախասրահին մէջ գտնուող բաժններուն մէջ էնտելիցիներուն առիթ տուին թարմանալ անուշաբոյր բաղնիքներուն կամ ցնցուղներուն տակ, որմէ ետք բոլորին տրուեցան զգեստներ, որոնցմով անոնք պէտք է հանդիպէին թագաւորին: Բոլորը ուրախութեամբ հանեցին էնտելի փոշիոտ հագուստները: Անոնց հին զգեստները անյարմար եւ տարօրինակ կերպով անտեղի կը թուային այդ լուսապայծառ քաղաքին մէջ: Աֆապէլի մէջ բնակելու խորունկ ցանկութիւնը կը միահիսուէր իւրաքանչիւր էնտելիցիի էութեան մէջ: Անոնք տունդարձի խիստ տարօրինակ զգացում ունէին:

Լոզնալէն եւ հագնելէն յետոյ բոլորը կրկին միացան՝ նախաճաշի համար: Անոնց հանդիսաւոր նախաճաշը տեղի կ'ունենար հոյակապ բացօթեայ բակին մէջ, ուր անոնց կարճ ժամանակով առիթ տուին սնիլ եւ հաղորդակցիլ իրար հետ: Նախաճաշէն ետք զանոնք կրկին բաժնեցին, այս անգամ՝ անուններով: Բարեգործը, Եսասէրը եւ գրեթէ հինգ հարիւր այլ էնտելիցիներ տարուեցան բակին աջ կողմը գտնուող սրահը: Յուսահատ սիրտը, Խաբուածը եւ Անկախը մնացած հազար հինգ հարիւրին հետ տարուեցան մէկ ուրիշ սրահ, որ կը գտնուէր ձախ կողմը: Մուտք գործելով սրահները՝ անոնք նկատեցին, որ իւրաքանչիւր սրահի դռներու շրջանակներուն վերը անուանում մը գրուած էր: Այդ անուանումները գրուած էին տարօրինակ լեզուով, որ յայտնի չէր երիտասարդ էնտելիցիներուն: Սրահներէն մէկուն անունը «Կեանքի սրահ» էր, իսկ միւսինը՝ «Արդարադատութեան սրահ»:

Կեանքի եւ Արդարադատութեան սրահները

Մուտք գործելով ձախ կողմը գտնուող սրահի շէմէն՝ Անկախը տարօրինակ անհանգստութիւն զգաց, որ գրեթէ սարսափի կը հասներ: Ան մտքով վերադարձաւ իր դպրոցական տարիներուն եւ փորձեց ինքզինքը մխիթարել այն բաներով, որոնք հայանցիկ կերպով լսած էր Ճէյլընին մասին: Հիմա այդ ամէնը այնքա՛ն շփոթեցնող կը թուար: Ան զղջաց, որ այդքան շատ դասեր կորսնցուցած էր:

Ակնյայտ է, որ ան սխալ էր. թէ՛ քաղաքը, թէ՛ թագաւորը, որոնց մասին կը պատմէին դպրոցին մէջ, գոյութիւն ունէին: Ան փորձեց զսպել ուժգնացող վախը եւ կեդրոնանալ այն ամէնուն վրայ, ինչ որ կը յիշէր Ճէյլընին սիրոյ եւ ողորմութեան մասին: Այդ պահուն ան չէր ցանկար մտածել Ճէյլընի արդարութեան եւ սրբութեան մասին, թէեւ ճիշդ




ատոնք կը պայքարէին իր ուշադրութեան համար: Ան փորձեց հանգստացնել ինքզինքը այն բանով, որ ան լաւ քաղաքացի էր եւ կ'աջակցէր քաղաքի կամաւորական նախաձեռնութիւններուն:

Անկախը խորունկ շունչ քաշեց եւ սկսաւ նայիլ իր շուրջը՝ գնահատելու համար այն շրջապատը, ուր ան կը գտնուէր: Առանց որեւէ ջանք ընելու ան նկատեց, որ կը գտնուէր էնտելի ամենավատ բնակիչներուն միջեւ: Ան ճանչցաւ գողերը, խաբեբաները եւ զինովները: Այդտեղ կը գտնուէին այնպիսի մարդիկ, որոնք հազուադէպ կ'աշխատէին, նաեւ անոնք, որոնք կ'աշխատէին ամէն ինչ իրենց ուզածին պէս ընել: Անոր վախը հետզհետէ կ'աւելնար, բայց ճիշդ այն պահուն, երբ այն արդէն կը սպառնար կլանել զինք, ան նկատեց Յուսահատ սիրտը: Անկախը գոցեց աչքերը եւ թեթելութեան հոգոց հանեց: Ան անմիջապէս յիշեց, որ Յուսահատ սիրտը Ճէյլընի ամենաանկեղծ եւ խանդավառ հետետորդն էր իրենց դասարանին մէջ: Ան կարծես նոյնիսկ լսած էր, որ Յուսահատ սիրտը դպրոցին մէջ կ'աշխատէր: Եթէ ան այս սրահին մէջ է՝ իր հետ, ամենայն հաւանականութեամբ, ամէն ինչ լաւ աւարտ պիտի ունենայ:

Քալելով դէպի Յուսահատ սիրտը՝ Անկախը զարնուեցաւ խաբուածին: Եւս մէկ լաւ նշան: Դպրոցէն յետոյ Անկախը չէր հաղորդկացած Յուսահատ սրտին հետ, բայց ան նուիրուած հաւատացեալ կը համարէր խաբուածը: Անոնք նոյնիսկ կը վիճէին Ճէյլընի մասին: Հին ընկերոջը գտնելէն յետոյ Անկախի տրամադրութիւնը լիովին փոխուեցաւ:

Խաբուածը աշխոյժ էր եւ դրականօրէն տրամադրուած: Անոնք սկսան զրուցել, եւ Անկախը դադրեցաւ վախնալէ: Հաւանաբար, Ճէյլընի ողորմութիւնը աւելին է, քան ան կը կարծէր: Չէ՞ որ ան ներած է բոլորը այդ սրահին մէջ, թէեւ նոյնիսկ իր մտքով չէր անցներ, որ այդ մարդիկ կրնային փրկուած ըլլալ: Անշուշտ, ասիկա ճշմարիտ է: Չէ՞ որ նոյնիսկ մեծ ուսուցիչ Երկակի կեանքը կանգնած էր ընդամենը քիչ մը հեռու: Անկախը աւելի վստահ զգաց ինքզինքը, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Այնուամենայնիւ, ան քիչ մը մտահոգուած էր Բարեգործին եւ Եսասէրին բացակայութեամբ: Ան նոյնպէս չէր կրնար անտեսել, որ մէկ քանին կու լային սրահին անկիւնները: Բայց թերեւս անոնք պարզապէս տպաւորուած էին Ճէյլընի բարութեամբ:

Միւս սրահը նոյնպէս լեցուն էր բուռն զգացումներով: Այն ընկերները, որոնք իրար հետ կապը կորսնցուցած էին դպրոցը աւարտելէն յետոյ, ոգետորուած էին, քանի որ կրկին միացած էին իրար: Բոլոր գրոյցները լեցուն էին ոգեշնչումով, քանի որ շուտով անոնք պիտի տեսնէին Ճէյլընը: Եկած էր ժամանակը, երբ իրենք մուտք պիտի գործէին իրենց ճշմարիտ կոչման եւ նախասահմանութեան մէջ:



Բոլորը աշխուժորեն կը քննարկեին վեհաշուք քաղաքը: Անոնք միշտ գիտեին, որ այն ասելի լաւ պիտի ըլլար էնտելէն, բայց առաջին տպաւորութիւնը գերազանցած էր իրենց սպասումները: Անոնց տեսածը ասելին էր, քան որ իրենք կրնային ընկալել: Հնարաւոր է արդեօք, որ անոնք իրենց կեանքի մնացած մասը պիտի անցընէին այդ փառաւոր վայրին մէջ: Անոնցմէ իւրաքանչիւրը պատրաստ էր գետիններ ճաքել՝ նման պատուի արժանանալու համար: Անոնք, որոնք կը սպասէին այդ սրահին մէջ, գիտէին, որ իրենք հետեւած էին Ճէյլընին, բայց աստիճանաբար ներկաները ասելի լրջախոհ դարձան: Արդեօք անոնք հաւատարիմ եղած էին: Շուտով պիտի գիտնային ատոր մասին: Ոգեւորութիւնը որոշ չափով խառնուեցաւ վախի հետ, մինչ այդ խոնարհ ծառաները կը սպասէին՝ տեսնելու իրենց Թագաւորը:

Սկիզբը պէտք է, որ Կեանքի սրահին մէջ գտնուող մարդիկ դատուէին: Այնուամենայնիւ, մենք ասելի ուշ պիտի անդրադառնանք անոնց: Իսկ այժմ տեսնենք, թէ ինչ տեղի ունեցաւ Արդարադատութեան սրահին մէջ:

Կանչերը

Արդէն կէսօր էր: Արդարադատութեան սրահին մէջ գտնուողները հասցուցած էին մխիթարութիւն եւ վստահութիւն ունենալ՝ մտածելով, որ ամէն ինչ լաւ պիտի ըլլայ: Այն ամէնը, ինչ որ շփոթեցնող կամ սխալ կը թուար իրենց կեանքին մէջ, անոնք կը վերագրէին Ճէյլընի ողորմութեան կամ Անոր հանելուկային ճանապարհներուն: Այս մտքերը կը մխիթարէին զանոնք:


Առաջինը հազար հինգ հարիւր էնտելիցներէն կանչուեցաւ Անկախը: Չորս թագաւորական պահապաններ եկան, որպէսզի ուղեկցէին անոր դէպի Դատաստանի մեծ սրահը: Սենեակէն դուրս գալու պահուն փորձելով թեթեւցնել ծանր մթնոլորտը՝ ան ժպտաց եւ աչքով նշան ըրաւ պահապաններէն մէկուն, որ պատահաբար նայեցաւ իր աչքերուն: Ինչ զարմանալի՝ պահապանը բոլորովին չարձագանգեց:

Իր ետեւէն լսելով սրահի դռներու գոցուելու ծայնը՝ Անկախի հարցերը սկսան վերադառնալ: Անոր սիրտը թմբուկի պէս կը բաբախէր կրծքավանդակին մէջ: Սրտի հարուածները այնքան բարձր էին, որ անոր կարծիքով՝ պահապանները նոյնպէս կը լսէին ատոնք, բայց նոյնիսկ այդ պարագային որեւէ կերպով ցոյց չէին տար ատիկա: Ան այնքան կ'ուզէր, որ Խաբուածը իր հետ գար: Շուտով ան պիտի կենար Դատաւորին առջեւ եւ կը նախընտրէր առանձին չըլլալ: Անկախը արագօրէն պիտի կորսնցնէր իր վստահութիւնը:



Մինչեւ Մեծ սրահը մտնելը, պահապաններէն մէկը արագօրէն ծանօթացուց զինք Պատաստանի սրահին մէջ պատշաճ պահուածքի կանոններուն հետ: Անկախը գլուխով նշան ըրաւ, թէ եւ կը վախնար, որ ջիշէր անոր ըսածները: Անոր զարկերակը գրեթէ կը հարուածէր ականջներուն մէջ՝ սպառնալով վնասել անոր լսողութիւնը: Պահապանը գլուխով նշան ըրաւ, որ Անկախը հասկցաւ ընթացակարգը, եւ սրահի դռները լայն բացուեցան:

Առաջին քայլը առնելով դէպի այդ ահռելի սրահը՝ Անկախը նկատեց, որ իր մարմինը կը դողայ: Քրտինքի կաթիլները հաւաքուեցան անոր՝ սովորաբար հանդարտ յօնքերու վերի բաժինը: Ան լիովին շփոթուած էր, որովհետեւ այն, ինչ որ տեսաւ, խորապէս ցնցեց զինք:



ԱՅԱՊԷԼԻ ԸԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՄ.

ԴԱՏԱՏԱՄ ՕՐԸ Ա

«Յիսուսը շարունակ կ'օգտագործեր այս օրինակները, երբ կը խօսեր բազմութիւններու հետ: Իրականութեան մէջ, քանի որ մարգարէները ըսած էին, որ Ան բազմաթիւ օրինակներ պիտի օգտագործեր, ան երբեք չէր խօսեր անոնց հետ առանց՝ գոնէ մէկ օրինակի: Որովհետեւ այսպիսի մարգարէութիւն եղած է. «Ես պիտի խօսիմ առակներով. Ես պիտի բացատրեմ ժամանակուայ սկիզբէն պահուած խորհուրդները»»:

— Մատթէոս 13.34,35, TLB

Արնչեւ մեր այլաբանական պատմութիւնը շարունակելը, կ'ուզեմ եւս մէկ անգամ ընդգծել Յիսուսի խօսքերը զալիք դատաստանին մասին: Յովհաննէս 12.28-ին մէջ Ան կը յայտնէ. «Այն խօսքը, որ Ես խօսեցայ, ան պիտի դատէ անոր վերջին օրը»: Մենք արդէն գիտենք այն չափանիշը, որմով պիտի դատուինք Անոր գահին առջեւ: Այդ չափանիշը՝ Սուրբ Գիրքն է:

Այդ իսկ պատճառով, Ճէյլընի խօսքերէն շատերը, որոնք ան կ'ըսէ Դատաստանի սրահին մէջ, վերտողային նշումներ պիտի ունենան՝ թիւերու տեսքով: Ատոնք Աստուածաշնչեան հատուածներու մէջբերումներ են՝ տարբեր թարգմանութիւններով, որոնք դուք կրնաք գտնել այս գիրքի վերջաւորութեան: Ճէյլընի խօսքերու մեծ մասը բաղկացած է Աստուածաշնչեան հատուածներէն, որոնք կ'օգտագործուին մեր պատմութեան հերոսներէն ամէն մէկուն վերաբերեալ:

Մտապահեցէ՛ք ասիկա եւ եկէ՛ք վերադառնանք Աֆապէլ:

Անկախի դատաստանը

Մեծ սրահը շատ աւելի տպաւորիչ էր, քան Անկախը կրնար պատկերացնել: Եթէ անոր հնարաւորութիւն տրուէր պատմելու իր տպաւորութիւններուն մասին այն հազար հինգ հարիւր մարդոց, որոնք տակա-





լին կը սպասէին, ան չէր կրնար օգտագործել ոչ մէկ բառ, կամ օրինակ՝ ատոր վեհութիւնը նկարագրելու համար: Այն ամէնը, ինչ որ ան տեսած էր Էնտելի մէջ, հին դարձած էր այդ սրահին ճարտարապետութեան համեմատ: Սրահին մէջ, ամենայն հաւանականութեամբ, ներկայ էր Բաբելոնի քան հարիւր հազար մարդ: Անկախը երբեք չէր տեսած այդքան շատ մարդիկ՝ միաժամանակ եւ մէկ վայրի մէջ:

Առաջ քալելով՝ Անկախը նկատեց Աֆապէլի քաղաքացիներուն դէմքերը: Առաջինը՝ ան ուշադրութիւն դարձուց, որ անոնք արքայական կեցուածք եւ պայծառ դէմքեր ունէին: Բացի այդ՝ անոր կողմնակի միտք մը այցելեց. ան ապշած էր այդ մարդոց զարմանալի գեղեցկութեան: Անոնք ըսես այլ աշխարհէ ըլլային: Այս վերափոխման պատճառը այն էր, որ բոլորին թոյլատրուած էր ուտել Կեանքի ծառէն:

Անկախը մտածեց. «Կարելի՞ է, որ այս մարդիկ նախկին էնտելցիները ըլլան»: Յանկարծ ան տեսաւ ծանօթ կին մը: Անոր անունը Բարութիւն էր, եւ ան քանի մը տարիով մեծ էր Անկախէն: Ան յիշեց, որ Բարութեան մշտապէս կը ծաղրէին անոր անբարետես արտաքինին համար: Այժմ ան հոյակապ տեսք ունէր: Անոր դիմագիծերը նոյնն էին՝ այնպէս, որ Անկախը դիւրին ճանչցաւ, բայց ինչ որ կերպով ան Բաբելոնի գեղեցիկ էր, քան ռեւէ մարդ, որուն ան կը ճանչնար էնտելի մէջ: Իրականութեան մէջ, որուն որ ան կը տեսնէր, նոյնիսկ՝ ամենապակաս գեղեցիկ մարդիկ, շատ Բաբելոնի գրաւիչ էին իր ծննդավայրի մարդոցմէն:

Ուշքի գալով՝ Անկախը նկատեց, որ բոլոր ներկաներու հայեացքները ուղղուած էին տեղ մը, որ կը գտնուէր անմիջապէս իր առջեւ: Ան երբեք այսպիսի բան չէր տեսած:

Սրահի վերջաւորութեան գահ մը դրուած էր, բայց «գահ» բառը չի կրնար արդարացիօրէն նկարագրել այն: Յիրաւի՝ ատիկա ամենափառաւոր գահն էր: Տեսնելով ատոր վրայ նստողը՝ Անկախը անմիջապէս հասկցաւ, որ ճիշդ անիկա էր այդ քաղաքի վեհութեան աղբիւրը: Ամէն բան կը թխէր գահին վրայ նստած մարդէն: «Կ'երեւի թէ՛ ան ճէյլընն է», – մտածեց Անկախը: Յանկարծ ան խորապէս հաւատաց անոր, որուն գոյութիւնը կտրականապէս կը հերքէր:

Ճէյլընի դիմագիծերը գեղեցիկ էին, բայց եւ՝ խիստ, յամենայն դէպս, այդ պահուն: Աւելի ճիշդ պիտի ըլլայ ըսել՝ հրաշալի, բայց վախցնող: Ճէյլընի տեսքը գերող եւ տպաւորիչ էր, սակայն՝ որքան Բաբելոնի Անկախը մօտենար անոր, այնքան սարսափը կ'աւելնար իր սրտին մէջ: Այն վստահութիւնը, որ ան մինչեւ այդ վայրկեանը ունէր, լիովին կորսուած էր: Ի՞նչ պիտի ըլլայ իր հետ:

Անկախը կը փորձէր պահպանել ինքնատիրապետումը՝ կրկնելով ինքնիրեն, որ ան կը մօտենայ ողորմած առաջնորդին: Անոր ներ-



սը պայքար կ'ընթանար. ան սկսաւ կասկածիլ, որ դրական դատավճռի պիտի արժանանայ:

Շարունակելով մօտենալ՝ Անկախը հասաւ նեղ հարթակի մը, ուր անոր պատուիրեցին կենալ: Անոր վերը՝ գահին վրայ, կը խոյանար Ճէյլընը: Նոյնինքն ան վճռականութեան մարմնաւորումն էր, երբ դիմեց հաւաքուածներուն.

– Բոլորը... պէտք է ճանչնան եւ հասկնան, որ Ես եմ Ան, որ կը քննէ մտքերը (մտածումները, զգացումները եւ մտադրութիւնները) եւ սրտերը [սրտի խորքերը], եւ Ես պիտի տամ ձեզմէ ամէն մէկուն այն [վարձատրութիւնը ձեր կատարածին համար], ինչին որ ձեր գործը արժանի է¹:

Անկախը կը լսէր միւսներուն հետ, երբ յանկարծ Ճէյլընը նայեցաւ ուղիղ անոր աչքերուն եւ հրամայեց.

– Հաշի՛ւ տուր քու տնտեսութեան համար²:

Մինչեւ Անկախը հասնէր բառ մը ըսելու, յայտնուեցաւ հոլոկրաֆիք պատկեր, որ անոր կեանքը կը ցուցադրէր Էնտելի մէջ՝ դպրոցին առաջին օրունէ մինչեւ նախորդ օրը: Ամէն գործ, խօսք եւ դրդապատճառ երեւեցաւ եւ յայտնուեցաւ ներկայ գտնուող վկաներու բազմութեան: Անկախը երկիւղած էր այն յայտնութենէն, զոր ան ստացաւ Ճէյլընի մասին. «Չկայ ոչ մէկ էակ, որ ծածկուած է Անորմէ, այլ ամէն ինչ բաց եւ բացայայտ է, մերկ եւ անպաշտպան է Անոր աչքերուն առջեւ, Որուն մենք պէտք է հաշիւ տանք»³:

Անկախը կծկուեցաւ՝ դիտելով իր յիմար, անբարոյ եւ եսասէր արարքները: Այս ամէնուն հետ բախիլը այսպիսի բազմամարդ հաւաքոյթի առջեւ՝ անակնկալի բերաւ, շփոթեցուց եւ ապշեցուց զինք: Այն, ինչ որ անկարելի էր եւ նոյնիսկ անվնաս կը թուար Էնտելի մէջ, այժմ զարշելի կը թուար այդ փառաւոր դատաւորի եւ Աֆապէլի թագաւորական քաղաքացիներուն առջեւ: Ան զարհուրեցաւ իր իսկ վարքէն: Ինչպէ՞ս կրնար այդքան սխալ, անզգայ եւ անխելք ըլլալ: Ան միտքով ձիգ գործադրեց՝ յոյսի նշոյլ մը գտնելու համար, եւ գտաւ այն. անոր թուաց, որ իր բարի գործերը աւելի շատ էին իր չար գործերէն:

Երբ անոր կեանքի դիտումը ամբողջութեամբ աւարտեցաւ, ան թեթեւութիւն զգաց, թէեւ կը սպասէր շատ խիստ յանդիմանութեան կամ այլ տեսակի պատիժի: Ան երջանիկ պիտի ըլլար, եթէ համարուէր փոքրագոյնը այդ ժողովին մէջ: Ան համոզուած էր՝ Ճէյլընը պիտի տեսնէր, որ իր բարի գործերը իր չար գործերէն աւելի են:

Ատկէ յետոյ Ճէյլընը հարցուց Գլխաւոր դպիրին.

– Անկախին անունը գրուա՞ծ է Կեանքի գիրքին մէջ:

– Ո՛չ, իմ Տէ՛ր, – անվարան պատասխանեց Գլխաւոր դպիրը:



Ատկէ յետոյ Ճէյլընը խօսեցաւ.

– Անկախ, դուն մեղաւոր ես՝ չար բնութիւնը ընտրելու մէջ: Դուն պիտի տարուիս Լոն լքուած երկիրը, ուր պիտի անցընես կեանքիդ մնացած մասը՝ չարչարուելով բացարձակ խաւարի, անյուսութեան եւ միայնութեան մէջ:

Ցնցուած՝ Անկախը բացազանչեց.

– Տէ՛ր, ինչո՞ւ:

– Դուն չէիր հաւատար ինձի,– պատասխանեց Ճէյլընը:– Քու ուսուցիչները կը սորվեցնէին. «Եթէ չհաւատաք, թէ Ես Եմ, ձեր մեղքերուն մէջ կը մեռնիք»⁴: Նոյնպէս եւ կը սորվեցնէին. «Եւ ալ ուրիշ ոչ մէկու մը միջոցով փրկութիւն կայ, որովհետեւ երկնքի տակ մարդոց տրուած ուրիշ անուն ալ չկայ, որմով կարելի ըլլայ մեզի՝ փրկուիլ»⁵:

Անկախը կրկին խօսեցաւ.

– Տէ՛ր Ճէյլըն, իսկ իմ բարի գործե՞րը: Արդե՞օք ատոնք չեն գերակշռեր իմ չար գործերը:

Տէր Ճէյլընը պատասխանեց.

– Հարցը այն չէ՝ մարդը քի՞չ կը խախտէ օրէնքը, թէ՞ շատ, որովհետեւ «ան, որ կը պահէ Ճէյլընի օրէնքը ամբողջութեամբ, բայց փոքրիկ մը կը սայթաքի, նոյնքան մեղաւոր է, որքան ան, որ խախտած է բոլոր օրէնքները»⁶:

Անկախը, քիչ մը համարձակութիւն ձեռք բերելով, պատասխանեց.

– Այդ պարագային, ինչպէ՞ս կարելի է փրկուիլ:

Ճէյլընը անմիջապէս չպատասխանեց այդ հարցումին: Ան նայեցաւ Աֆապէլի քաղաքացիներէն կնոջ մը: Այդ կինը, հաւանաբար, Ճէյլընի կառավարիչներէն մէկն էր, քանի որ ան նստած էր գահի մը վրայ, որ նման էր Ճէյլընի գահին, բայց աւելի փոքրիկ էր: Այդ կինը խօսեցաւ.

Արդե՞օք քու ուսուցիչները չեն սորվեցուցած քեզի. «Ճէյլընը փրկեց ձեզ իր յատուկ բարեհաճութեամբ, երբ դուք հաւատացիք: Եւ դուք չէք կրնար համարել, որ ատիկա ձեր արժանիքն է: Ատիկա պարգեւ է Ճէյլընէն: Փրկութիւնը՝ վարձատրութիւն մը չէ մեր բարի գործերուն համար, որպէսզի մեզմէ ոչ ոք պարծենայ ատորմով»⁷:

– Շատ առաջ ես զին վճարեցի այն օրինազանցութիւններուն համար, որոնք Էնտելի քաղաքացիները գործած էին եւ պիտի գործէին: Անհնար էր, որ ոեւէ մէկը անմեղ մնար իմ առջեւ, կամ փրկէր ինքզինքը իր դաւաճանութիւններէն: Բայց քանի որ ես սիրեցի բոլորը, ես անձամբ վճարեցի անոնց անօրինութիւններուն զինը: Իմ փրկութիւնը՝ պարգեւ է, որ անկարելի է վաստակիլ: Անհնար էր կատարել բաւականաչափ բարի գործեր՝ Աֆապէլի քաղաքացիութեան արժանանալու համար.



Այն կը տրուի ինձի հաւատալու միջոցով: Սակայն դուն մերժեցիր այն, ինչ որ ես ըրած էի՝ քու կեանքը փրկելու համար:

Ցնցուած՝ Անկախը լուռ էր քանի մը վայրկեան, իսկ յետոյ սթափ կերպով պատասխանեց.

– Ես կը հասկնամ:

Ան այնպիսի զգացողութիւն ունէր, ըսես պիտի խորտակուէր անյուսութեան ծովին մէջ: Փորձելով ինչ որ փաստ մը գտնել՝ ան հարցուց.

– Ուրեմն իմ բոլոր գործերը զո՞ւր էին:

Ճէյլընը պատասխանեց.

– Կրկին գրուած է. «Մահացածները ոչինչ գիտեն: Անոնք վարձատրութիւն չունին ապագային, եւ ո՛չ ալ կը յիշուին: Այն, ինչ որ անոնք գործած են իրենց կեանքին մէջ՝ անոնց սէրը, ատելութիւնը, նախանձը՝ ամէն բան անցած-զացած է: Անոնք այլեւս բաժին չունին որեւէ բանի մէջ»⁸: Եւ կրկին. «Որովհետեւ չարերը ապագայ չունին: Անոնց լոյսը կը մարի»⁹:


Անկախը անակնկալի եկաւ Ճէյլընի խօսքերէն՝ չկրնալով ոչինչ պատասխանել: Ան զղջաց բոլոր կորսնցուցած դասերուն համար: Թերեւս, եթէ յաճախէր այդ դասերուն, ան պիտի լսէր ճշմարտութիւնը եւ պիտի չընէր այն սխալը, որ ճակատագրական դարձաւ իրեն համար:

Ատոր հետեւող լռութեան վայրկեաններուն Անկախը մտաբերեց այն, ինչով որ ինքզինքը կը մխիթարէր ամբողջ օրը: Ան կրկին զինուէցաւ համարձակութեամբ եւ ըսաւ.

– Այո՛, այն, ինչ որ դուն կ'ըսես, ճշմարիտ է, բայց Ճէյլըն՝, դուն ողորմած թագաւոր ես: Եթէ ատիկա ճիշդ է, ինչպէ՞ս դուն կրնաս արտաքսել զիս:

Ճէյլընը պատասխանեց.

– Ես ողորմած թագաւոր եմ, եւ յատկապէս այդ պատճառով կ'արտաքսեմ քեզ: Որոշելով ապրիլ Էնտելի մէջ այնպէս, ինչպէս դուն ապրեցար՝ դուն ընդմիշտ ընտրեցիր քու բնութիւնը, որ չար տիրակալ Տակոնի բնութիւնն է: Ինչպէ՞ս ես կրնայի ողորմած, արդար եւ սիրող ըլլալ, եթէ առիթ տայի քու անբարոյ բնութեան՝ պղծելու այս մեծ քաղաքի մաքրութիւնը: Ես վտանգի կ'ենթարկէի Աֆապէլի անմեղ բնակիչները: Կարճ ժամանակ յետոյ այն էութիւնը, որ դուն ընտրած ես, պիտի արտայայտուէր եւ պիտի ապականէր հազարաւոր մաքուր մարդոց: Դուն ընտրած ես քու ճանապարհը: Եւ դուն պիտի ստանաս այն նոյն յատուցումը, ինչ որ ստացաւ Տակոնը, որուն դուն հետեւած ես: Եթէ այն պատիժը, որ ես տուի քեզի, պակաս ըլլար անոր պատիժէն, ես անարդար իշխան պիտի ըլլայի: Իսկ ես այդպիսին չեմ:



Ճէլընը դիմեց բազմութեան եւ մէջբերեց իր հօր վաղեմի խօսքերէն.

– Ան, որ կ'անարգէ խօսքը, պիտի կործանի, բայց ան, որ կը վախանայ պատուիրանէն, պիտի վարձատրուի¹⁰:

Բազմութիւնը հանդիսաւոր լռութեամբ ընդունեց այն, ինչ որ կատարուեցաւ անկէ յետոյ: Թագաւորը պատուիրեց իր ծառաներուն.

– Անոր ոտքերը եւ ձեռքերը կապեցէ՛ք: Վե՛ր հանեցէ՛ք անոր, դուրսի խաւա՛րը նետեցէ՛ք: Հոն պիտի ըլլայ լացը եւ ակռաներու կրճտոցը: Որովհետեւ շատերը կանչուած են, բայց քիչերը՝ ընտրուած¹¹:

Անկախը սարսափով եւ զարհուրանքով լեցուն ճիչեր կ'արձակէր, մինչ Գլխաւոր պահապանը կապեց զինք եւ դուրս հանեց սրահի քովի դուռէն: Հազարաւոր ներկաներէն նոյնիսկ մէկ ձայն չլսուեցաւ: Անոնք ափսոսանքով կը հետեւէին իր կեանքը անմտօրէն վատնած մարդուն, որ կը տարուէր դէպի իր ցմահ պատիժը:


Սրահէն դուրս բերելուն պէս՝ Անկախին տարին մեծ սպասարահ մը: Հոն կային հազարաւոր փոքրիկ ճաղապատ բանտի խցիկներ, որոնց մէջ դատապարտուածները կը պահուէին, մինչեւ որ լրանար արտաքսուողներու թիւը: Սպասարահի մուտքի վերը հետեւեալ բառերը գրուած էին.

«Երանելի՛ են Անոր պատուիրանները պահողները, որ անոնց պիտի ըլլայ իշխանութիւնը կեանքի ծառին վրայ, եւ քաղաքի դռնով ներս պիտի մտնեն: Բայց դուրս են շուները եւ կախարողները եւ պոռնիկները եւ սպաննողները եւ կռապաշտները եւ ամէն ստութիւն սիրողներն ու գործողները»¹²:

Անկախը յառեց իր հայեացքը այդ խօսքերուն: Կատաղութիւնը սկսաւ եռալ անոր մէջ: Այժմ ան բոլորովին կը գտնուէր իր էութեան ազդեցութեան տակ: Որեւէ լաւ բան, որ տակաւին կար անոր բնաւորութեան մէջ, կլանուած էր այն բարոյական կեցուածքով, որ ան ընտրած էր: Անոր վարքը արագօրէն կը վատթարանար, եւ ան կատաղած շունի մը կը նմանէր: Առանց թագաւորի ազդեցութեան՝ ան ամբողջովին իր անբարոյ մտքին ձգուած էր:

Խաբուածը Ճէլընին առջեւ

Անցաւ քանի մը ժամ: Շատերը կանչուած էին Ղատաստանի սրահը: Քանի մը հարիւր սպասողներու կարգին էին Խաբուածը, Յուսահատ սիրտը եւ Երկակի կեանքը: Խաբուածը տակաւին դրական տրամադրուած էր, եւ անոր կեցուածքը յոյս կը հաղորդէր միւսներուն:



Դռները բացուեցան, եւ չորս պահապանները կրկին անգամ յայտնուեցան՝ այս անգամ կանչելով Խաբուածը: Ան ամբողջովին լարուեցաւ եւ սկսաւ դողալ: Եկած էր անոր ժամանակը: Իր լարուածութիւնը պահելու համար (ինչ որ անոր քով լաւ կը յաջողէր) ան ըսաւ մնացողներուն.

– Տէ՛ր ինչ, իմ կարգը հասաւ:

Այն բանէն յետոյ, երբ Խաբուածին արագ ծանօթացուցին պատշաճ պահուածքի կանոններուն, Դատաստանի սրահի դռները բացուեցան, եւ անոր ուղեկցեցան գլխաւոր անցումով: Ան գրեթէ նոյն բանը զգաց, ինչ որ զգաց Անկախը: Ան նոյնպէս տեսաւ սրահի չափը եւ գեղեցկութիւնը, ինչպէս նաեւ՝ քաղաքացիներուն դէմքերը: Քալելով գլխաւոր անցումով՝ ան ճանչցաւ քանի մը մարդ, որոնց գիտէր Էնտելի դպրոցէն, որոնք աւարտած էին իրմէ մէկ կամ երկու տարի առաջ: Խաբուածը ճանչցաւ աւելի շատ քաղաքացիներ, քան Անկախը, քանի որ ան գրեթէ չէր փախցներ դպրոցի հաւաքոյթները:

Ան ճանչցաւ մարդ մը, որ բոլորովին չէր յաճախեր դպրոցի դասերուն: Անոր անունը Անողորմ էր: Ան ամենաչար եւ անպիտան մարդոցմէն էր ամբողջ քաղաքին մէջ: Խաբուածը կեցաւ՝ մտածելով. «*Ի՞նչ կ'ընէ ան այստեղ*»: Գլխաւոր պահապանը գլուխով նշան ըրաւ Խաբուածին՝ ցոյց տալով, որ ան կրնար խօսիլ այդ մարդուն հետ:

Խաբուածը մօտեցաւ անոր եւ հարցուց.

– Դուն Անողո՞րմն ես:

– Ժամանակ մը ես յայտնի էի Անողորմ անունով,– պատասխանեց ան,– բայց Տէր Ճէյլընը փոխեց իմ անունը իր Դատաստանի գահին առջեւ՝ զիս Հաշտուած անուանելով:

Խաբուածը առանց մտածելու հարցուց.

– Ինչպէ՞ս դուն յայտնուած ես այստեղ: Քաղաքին մեծ մասը քեզ չար մարդ կը համարէր: Դուն ոչ մէկ անգամ դպրոցին մէջ կը գտնուէիր եւ աւելի շատ կը հակառակէիր Ճէյլընին, քան ռեւէ մարդ, որուն ես ճանչցած եմ:

– Այո՛, ճի՛շդ է,– պատասխանեց Հաշտուածը:– Բայց ես կ'ատէի անձս եւ այն, ինչ որ կ'ընէի: Քանի որ ես դպրոց չէի յաճախեր, երբեք չէի լսած Ճէյլընին խօսքը, որ կեանքեր կը փոխէ: Այնուամենայնիւ, իմ Դատաստանին օրուընէ մէկ շաբաթ առաջ ես գացի Բարեգործին ճաշարանը՝ ճաշելու համար: Ան գիտէր, որ իմ կեանքը խորտակուած էր, եւ ինչ որ կերպով հասկցաւ իմ ցաւը: Ան վճարեց իմ ճաշին համար մէկ պայմանով՝ որ ես մնայի եւ զրուցէի անոր հետ: Ան երկու ժամ շարու-



նակ պատմեց ինծի Ճէյլընին, անոր բարութեան, անոր փրկութեան եւ այս վայրի՝ Աֆապէլի մասին:

Հաշտուածը շարունակեց.

– Ան ըսաւ ինծի, որ տակաւին ուշ չէ, որ կեանքս նուիրեմ այդ մեծ իշխանին: Ես տակաւին կրնայի անպայմանական ներում ստանալ եւ ընդունուիլ՝ որպէս անոր թագաւորութեան քաղաքացի: Թէեւ ես կրցայ ծառայել անոր Էնտելի մէջ միայն մէկ շաբաթ, ես ըրի ատիկա ամբողջ սրտով: Գացի անոնց քով, որուն գրկած էի կամ որմէ գողցած էի, եւ ներում խնդրեցի: Եղան դէպքեր, որ ես վերադարձուցի աւելի շատ, քան խլած էի:

Խաբուածը զարմանքէն լռած էր: Ան ետ նայեցաւ պահապանին, որ գլուխով համաձայնութեան նշան ըրաւ: Հաշտուածը ետ գնաց իր տեղը, իսկ Խաբուածը շարունակեց մօտենալ գահին:

Առաջ երթալով՝ Խաբուածը չէր կրնար չմտածել այն մասին, ինչ որ յատկապէս նոր լսեց: Անոր պատմած էին Ճէյլընին մեծ ողորմութեան մասին, բայց այն, ինչին ականատեսը ան եղաւ քիչ առաջ, ապշեցուցիչ էր: Անողորմը ամենավատ մարդոցմէն էր, որուն ինքը երբեք ճանչցած էր, եւ այժմ ան ստացած էր նոյն արքայական դիրքը, ինչ միւսները: Խաբուածը ա՛լ աւելի համոզուեցաւ, որ բարեհաճութիւն պիտի գտնէ Ճէյլընին առջեւ, որովհետեւ սրտանց կը հաւատար անոր:


Հազիւ որ Խաբուածը կեցաւ գահին առջեւ, անոր տրուեցաւ նոյն հրամանը, ինչ որ տրուեցաւ Անկախին.

– Հաշի՛ւ տուր քու տնտեսութեան համար:

Ինչպէս եւ Անկախը, Խաբուածը եւս տեսաւ իր կեանքը՝ դպրոցին առաջին օրուընէ մինչեւ նախորդ օրը՝ եռաչափ հոլոկրաֆիք պատկերով: Ինչպիսի՛ թեթեւութիւն էր՝ տեսնել, որ ինքը հաւատարիմ կերպով դպրոց կը յաճախէր եւ բացայայտ կը սատարէր Ճէյլընին:

Այնուամենայնիւ, շուտով Խաբուածը գունատեցաւ: Անոր կեանքը կը մեղադրէր զինք: Ան կ'արդարացնէր իր ճանապարհները, բայց երբ ատոնք ի յայտ եկան վեհ դատաւորին եւ սուրբ վկաներու առջեւ, ան շփոթութիւն եւ ամօթ զգաց: Երբ իր սեռական այլազանութիւնը յայտնի դարձաւ այդ թագաւորական ժողովին առջեւ, ան փափաքեցաւ սողալ փոսի մը մէջ եւ պահուըտիլ:

Ի յայտ կու գային ոչ միայն անոր գործերը, այլեւ՝ մտադրութիւնները եւ դրդապատճառները: Ուրկէ՞ Ճէյլընը գիտէր այդ բաները: Ինչպէ՞ս ան կրնար դատել զինք՝ Խաբուածը, այն բաներուն համար, որոնք յայտնի չէին ոչ ոքի: Անոր ամենախորունկ գաղտնիքները այլեւս ծածուկ չէին: Ամբողջ ժողովը կը տեսնէր անոր շահամոլութիւնը գործարք-



ներու, կառուցած տուներու վաճառքի եւ հողատարածքներու իւրացման մէջ: Անոնք կը տեսնէին, որ ան մշտապէս կը դիմէր չարախօսութեան եւ բամբասանքի՝ իր ուզածը ստանալու համար: Կը թուար՝ այն ամէնը, ինչ որ ան կ'ընէր, դրդուած էր ատելին ունենալու ցանկութեամբ: Ան ամէն ինչի մէջ կը ձգտէր իր ուզածին եւ կը ձգտէր ստանալու ամէն ինչ միմիայն իրեն համար: Անհնար էր վիճիլ փաստերու հետ: Խաբուածը կը մխիթարէր զինք, որ այդ ամէնը կարելոր չէր, քանի որ ինքը կը հաւատար ճէյլընին եւ կը դաւանէր, որ հաւատարիմ էր անոր:

Երբ Խաբուածին կեանքը ամբողջութեամբ դիտեցին, ճէյլընը նայեցաւ Գլխաւոր դպիրին եւ հարցուց.

– Խաբուածին անունը գրուած է Կեանքի գիրքին մէջ:

– Ո՛չ, իմ տէ՛ր, – պատասխանեց ան:

Ճէյլընը ազդարարեց.

– Խաբուած, դուն մեղաւոր ես ինծի ուրանալուդ մէջ: Դուն պիտի տարուիս Լոն քրօած երկիրը, ուր պիտի անցընես քու կեանքի մնացած մասը՝ չարչարուելով բացարձակ խաւարի, անյուսութեան եւ միայնութեան մէջ:

Խաբուածը զարմանքէն քարացաւ: Անոր մտքերը խառնուեցան. *«Ո՛չ, ասիկա սխալմունք է: Այսպէս չի՛ կրնար ըլլալ: Ես կը հաւատամ ճէյլընին: Ի՞նչ կը նշանակէ «ինծի ուրանալը»»: Յանկարծ ան հարցուց.*

– Ինչպէ՞ս ես ուրացած եմ քեզ:

Ճէյլընը ըսաւ.

– Արդեօ՞ք դուն չէիր լսեր, երբ քու ուսուցիչները կը զգուշացնէին անոնց մասին, որոնք «կ'ըսեն, թէ կը ճանչնան ճէյլընը, բայց իրենց կեանքով կ'ուրանան զինք»¹³:

– Բայց մե՛ծ թագաւոր, – ընդդիմացաւ Խաբուածը, – ես կը յաճախէի քու դպրոցը: Ես հաւատարմօրէն չէի փախցներ դասերը եւ ներգրաւուած էի դպրոցի գործերէն շատերուն մէջ: Ես նոյնիսկ Տէր կ'անուանէի քեզ:

Ճէյլընը անմիջապէս պատասխանեց.

– Ինչո՞ւ կը կանչես զիս «Տէ՛ր, Տէ՛ր», բայց չես կատարեր այն, ինչ որ ես կը պատուիրեմ քեզի՞¹⁴: Դուն չե՞ս լսած իմ խօսքերը, երբ ես ըսի, որ ոչ բոլոր կրօնական կեցուածք ունեցողները իրականութեան մէջ Աստուածապաշտ են: Անոնք կրնան «Տէր» անուանել զիս, բայց ԱՖապէլ չեն մտներ, քանի որ որոշիչ գործօնը՝ իմ Հօրը հնազանդիլն է: Դատաստանի ժամանակ շատերը պիտի ըսեն ինծի. «Տէ՛ր, Տէ՛ր, մենք պատմած ենք մարդոց քու մասին եւ դաւանած ենք քու անունը»: Բայց ես պիտի պատասխանեմ. «Դուք երբեք իմ չէք եղած: Հեռացէ՛ք, որովհետեւ ձեր գործերը չար են»¹⁵:



Խաբուածը խելայեղութեան աստիճանի հասաւ.

– Բայց ես հաւա՛տք ունէի: Ես կը հաւատա՛յի քեզի: Ուրեմն, համաճայն քու խօսքին՝ ես պէտք է փրկուա՛ծ ըլլամ:

Ճէյլընը համբերատար էր, բայց եւ՝ վճռական: Ան նայեցաւ ժողովին մէջ նստած Աֆապէլի քաղաքացիներէն մէկուն, որ դպրոցի նախկին ուսուցիչներէն էր եւ նստած էր աւելի պզտիկ գահի մը վրայ.

– Կարդա՛ խաբուածին այն, ինչ որ դուն սորվեցուցած ես քու դասերուն:

Այս մարդը կարդաց սրբազան գրուածքներէն.

– Սիրելի եղբայրնե՛ր եւ քոյրե՛ր, ի՞նչ օգուտ, որ ըսէք, թէ հաւատք ունիք, եթէ չէք ապացուցեր այն ձեր գործերով: Այդ տեսակի հաւատքը չի կրնար փրկել ոչ մէկը: Բաւական չէ պարզապէս հաւատք ունենալ: Հաւատքը, որ չ'արտայայտուի բարի գործերով, բոլորովին հաւատք չէ. այն մահացած ու անօգուտ է: Ինչ որ մէկը կրնայ վիճիլ. «Որոշ մարդիկ հաւատք ունին, իսկ միւսները՝ բարի գործեր»: Ես պիտի ըսեմ. «Ես չեմ կրնար տեսնել քու հաւատքը, եթէ դու չունիս բարի գործեր, բայց ես ցոյց պիտի տամ քեզի իմ հաւատքը իմ բարի գործերով»: Դուք տակաւին կը մտածէք, որ բաւարար է պարզապէս հաւատա՛լ, որ Ճէյլընը մէկ է: Նոյնիսկ դեւերը կը հաւատան ատոր, եւ անոնք սարսափէն կը դողան: Յիմա՛ր: Ե՞րբ դուն ի վերջոյ պիտի սորվիս, որ հաւատքը, որուն արդիւնքը բարի գործերը չեն, անօգուտ է¹⁶:


Ճէյլընը կրկնեց.

– Դուն կ'ըսես, որ հաւատք ունիս, բայց հաւատքը՝ հաւատք, չէ, եթէ այն չ'ուղեկցուի հնազանդութեան քայլերով: Բաւարար չէ ըսել, որ դուն կը հաւատաս, որովհետեւ նոյնիսկ դեւերը կը հաւատան, բայց անոնք, անշուշտ, փրկուած չեն: Անոնք, որոնք ճշմարտապէս կը հաւատան, կ'արտայայտեն իրենց փոխուած բնութիւնը եւ այլեւ չարին պտուղը չեն բերեր: Դուն շարունակ կը բերէիր չար տիրակալ Տակոնի պտուղը, ինչ որ միայն կը վկայէ, որ դուն երբեք ճշմարտապէս չես հաւատացած ինծի քու ամբողջ սրտով:

Խաբուածին համար դժուար էր ընկալել այն ամէնը, ինչ որ ան ըսաւ: Ան ընդդիմացաւ.

– Իսկ այն չար Անողո՞րմը: Ես աւելի լա՛ւ անձ մըն էի, քան անիկա: Ինչպէ՞ս դուն կրնաս ընդունիլ զինք եւ վտարել զիս: Դուն արդար չե՛ս:

– Դուն կ'ըսես, որ Ճէյլընը անարդա՞ր է,– պատասխանեց Ճէյլընը:– Լսէ՛ ինձի: Ե՞ս եմ անարդարը, թէ՞ դուն: «Եթէ անօրէն մարդը դառնայ իր անօրինութենէն, հնազանդի օրէնքին եւ արդարութիւն գործէ, ան պիտի փրկէ իր անձը, որովհետեւ ան կշռադատած է ամէն ինչ եւ որոշած է



դառնալ իր մեղքերէն եւ լաւ կեանքով ապրիլ: Ան անպատճառ պիտի ապրի. ան չի՛ մահանար»¹⁷:

Յուսահատած եւ բարկացած՝ Խաբուածը շարունակեց.

– Բայց ես բաժնեկցած եմ քու խօսքով եւ վկայած եմ մարդոց քու մասին: Ես նոյնիսկ կամաւոր հիմունքներով փոխարինող ուսուցիչ եղած եմ քու դպրոցին:

Ճէյլընը, արդէն՝ խստութեամբ, պատասխանեց.

– Այլեւս մի՛ կրկնիր իմ օրէնքները եւ հերի՛ք է ազդարարես իմ խոստումները, որովհետեւ դուն մերժած ես իմ խրատը՝ անարգելով իմ օրէնքները: Դուն գողը կը տեսնես եւ կ'օգնես անոր, քու ժամանակդ կ'անցընես չար եւ անբարոյ մարդոց հետ: Դուն կ'անհիծես եւ կը ստես, եւ պիղծ խօսքերը կը բխին քու բերանէն: Դուն կը չարախօսես քու իսկ եղբորը: Ես լուռ մնացի, եւ դուն մտածեցիր, որ ես անտարբեր եմ ատոր հանդէպ: Բայց հիմա եկած է քու պատիժի ժամը, եւ ես կը թուարկեմ բոլոր վերոնշեալ մեղադրանքները քու դէմ¹⁸:

Խաբուածը լուռ էր: Անոր միտքը կը պտըտէր, բայց ան ըսելու ոչինչ ունէր, որ ինքզինքը պաշտպանէր:

Անցաւ քանի մը վայրկեան: Թագաւորը ըսաւ իր ծառաներուն.

– Անոր ոտքերը եւ ձեռքերը կապեցէ՛ք: Վեր՛ հանեցէք զինք, դուրսի խաւարը նետեցէք: Հոն պիտի ըլլայ լացը եւ ակռաներու կրճտոցը¹⁹:

Երբ Գլխաւոր պահապանը մօտեցաւ, Խաբուածը սկսաւ անվերահսկելի կերպով հայիոյել Ճէյլընին, պահապաններուն եւ Աֆապէլի քաղաքացիներուն: Ան խիստ բարկացաւ եւ կատաղօրէն կը հակառակէր: Ամէն բարի բան անոր մէջ կլանուեցաւ անոր բացայայտուած իրական էութեամբ:

Խաբուածին ձեռքերը եւ ոտքերը կապեցին, եւ ան դուրս տարուեցաւ սրահէն՝ հայիոյելով ամբողջ այդ ընթացքին: Ինչպէս եւ Անկախը, ան պահուեցաւ բանտի խցիկին մէջ՝ մինչեւ դատաստանի աւարտը:

Հազիւ որ Խաբուածը արդէն սրահին մէջ չէր, Ճէյլընը դիմեց վկաներու բազմութեան. «Ազգ կայ, որ իր աչքին մաքուր կ'երեւի, բայց իր աղբէն մաքրուած չէ»²⁰:

Յուսահատ սիրտը Ճէյլընին առջեւ

Արդարադատութեան սրահին մէջ արդէն հարիւր հոգի ալ չէր մնացած: Յուսահատ սիրտը եւ Երկակի կեանքը անոնց կարգին էին: Յուսահատ սիրտը այնքան հեռու կը մնար Երկակի կեանքէն, քանի որ տակաւին դառնութիւն եւ վրդովմունք կը զգար անոր հանդէպ: Վերջինս նոյնպէս կը խուսափէր Յուսահատ սրտէն:



Չորս Թագաւորական պահապանները ներս եկան եւ կանչեցին Յուսահատ սիրտը: Ան անհանգիստ էր իր երթալուն կապակցութեամբ, բայց շնորհակալ էր, որ կը հեռանար Երկակի կեանքէն: Ինչպէս եւ միւսները անոնցմէ առաջ, անոր նոյնպէս մօտեցուցին Մեծ սրահի դրան, արագ ծանօթացուցին պատշաճ պահուածքի կանոններուն եւ ներս տարին:

Անցնելով Աֆապէլի քաղաքացիներուն քովէն՝ ան նոյնպէս ճանչցաւ շատերուն, որոնք գացած էին իրմէ առաջ: Անոնց մեծ մասը դպրոցին մէջ այնքան ակնառու եւ ջերմեռանդ վերաբերմունք չունէին հաւատքի հանդէպ, որքան ինքը: Յուսահատ սիրտը զարմացաւ՝ տեսնելով շարք մը մարդոց, որոնք, իր կարծիքով, ոչ մէկ պարագային պէտք է հոն ըլլային:


Յուսահատ սիրտը մօտեցաւ մեծ գահին եւ նկատեց աւելի փոքրիկ գահեր, որոնք կը շրջապատէին այն: Ան ճանչցաւ քանի մը ուսուցիչներ եւ ուրիշ մարդոց, որոնց ան կը սպասէր տեսնել առաջնորդներու շարքին այդ թագաւորութեան մէջ: Այնուամենայնիւ, ան զարմացաւ՝ տեսնելով շատ այլ մարդիկ այդ գահերուն: Այդ մարդիկ այնքան ալ յայտնի չէին Էնտելի մէջ: Ներկաներու կարգին նոյնպէս հարուստ մարդիկ կային: «Ինչպէ՞ս հարուստները կրնան նման պատուաւոր տեղեր զբաղեցնել», – մտածեց ան:

Մինչեւ ան հասնէր իր մտածած հարցումին պատասխանելու, լսեց Ճէյլընին ձայնը.

– Հաշի՛ւ տուր քու տնտեսութեան համար:

Հոլովրաֆիք պատկերը ցուցադրեց անոր կեանքը: Յուսահատ սիրտը հիացմունքով կը դիտէր իր դպրոցական շրջանը: Անոր ամբողջ կամաւորական աշխատանքը, լրացուցիչ դասերը եւ աւագութիւնը դասարանին մէջ՝ դրական կերպով կը ներկայացնէին զինք: Ան կը հպարտանար իր համարձակութեամբ եւ աշխատասիրութեամբ: Այնուամենայնիւ, անոր տրամադրութիւնը փոխուեցաւ, երբ երեւեցաւ անոր արծագանգը Չարախօսի սուտին: Ակնյայտ էր, որ ան կը հրաժարէր ձգել իր վիրաւորանքը: Անոր սրտին եղածը բացայտուեցաւ, եւ ատիկա բնաւ հաճելի չէր:

Ատոր հետեւեցաւ անոր կապը Երկակի կեանքին հետ: Ան այդպէս ալ չէր ապաշխարած այդ յարաբերութեան համար: Ան միշտ ինքզինքը զոհի դերի մէջ կը տեսնէր եւ կը բարդէր ամբողջ մեղքը Չարախօսի եւ Երկակի կեանքին վրայ: Այդ իսկ պատճառով, ան այդպէս ալ պատասխանատուութիւն չստանձնեց իր կայացուցած որոշումներուն համար: Շարունակելով հետեւիլ իր կեանքին՝ ան տեսաւ, թէ ինչպէս բարկութիւնը, դառնութիւնը եւ վրիժառութեան զգացումները կ'աւելնային իր



մէջ: Թէեւ անոր յաջողած էր ճնշել այդ խնդիրներէն քանի մը հատը, ան այդպէս ալ չէր հեռացուցած ատոնց արմատը: Վերջաւորութեան ան ոչ միայն մշտապէս վիրաւորուած էր Երկակի կեանքէն եւ Չարախօսէն, այլեւ կը մեղադրէր Ճէյլընը իր դժուարութիւններուն համար: Ինչպէ՞ս Ճէյլընը կրնար թոյլ տալ, որ Երկակի կեանքին պէս մարդ մը դասաւանդէր իր դպրոցին մէջ: Անոր խիստ վրդովմունքը եւ անզիջում կերպով չներելը բացայայտուած էին:

Երբ դիտարկուին վերջացաւ, ակնյայտ էր, որ Յուսահատ սիրտը՝ դառնացած կին էր, որ բարութիւն չէր տածեր մարդոց հանդէպ: Այնուամենայնիւ, թէեւ այս ամէնը յայտնուեցաւ մեծ բազմութեան առջեւ, ան վստահ էր, որ իր առաջուան նուիրումը պէտք է ապահովէր թագաւորին բարեհաճութիւնը իրեն հանդէպ: Ան կը վախճար փոքրիկ յանդիմանութենէ մը, բայց չէր ալ կրնար պատկերացնել, թէ ինչ տեղ պիտի ունենար:

Ճէյլընը նայեցաւ Գլխաւոր դպիրին.

– Յուսահատ սրտին անունը գրուած է Կեանքի գիրքին մէջ:

– Ո՛չ, իմ տէ՛ր, – պատասխանեց Ան:

Ճէյլընը ազդարարեց իր դատաստանը.

– Յուսահատ սի՛րտ, դուն մեղաւոր ես արդարութենէն ինչալուր եւ զիս դաւաճանաբար ուրանալուդ համար: Դուն պիտի տարուիս Լոն լքուած երկիրը, ուր պիտի անցընես քու կեանքի մնացած մասը՝ չարչարուելով բացարձակ խաւարի, անյուսութեան եւ միայնակութեան մէջ:

Յուսահատ սրտի ցնցումը անկարելի էր նկարագրել: Ան աւելի խորունկ ցնցուած էր, քան բոլոր անոնցմէ առաջ եկածները: Այդպիսի բան չի կրնար տեղի ունենալ: Ան վատ երազ կը տեսնէր. ո՛չ, ասիկա մղձավանջ էր, եւ ան պէտք է արագ արթնցնէր ինքզինքը: Թերեւս ան սխալ՝ հասկացաւ:

Չհաւատալով լսածին՝ ան հարցուց.

– Ճէյլը՛ն, դուն ըսիր, որ զիս պէտք է տանին սարսափելի Լոն երկի՞րը:

– Այո՛, Յուսահատ սի՛րտ, դուն ճիշդ լսեցիր, – պատասխանեց թագաւորը:

– Ինչպէ՞ս թէ, Տէ՛ր Ճէյլըն Ես կը հաւատամ քեզի: Ատիկա յստակ երեւեցաւ իմ կեանքէն: Ես ունեցած եմ օրինակելի կեանք, որ կը սատարէ իմ համոզմունքները: Ես գիտեմ, որ իմ սիրտը խստացաւ, եւ սէրը մէջս մահացաւ, բայց ատիկա իմ մեղքը չէր: Մեղաւոր էին Չարախօսը եւ Երկակի կեանքը: Իմ սիրտը սառեցաւ անոնց դաւաճանութեան պատճառով:

– Դուն մոռցած էիր իմ զգուշացումը քու ուսուցիչներուն միջոցով, – պատասխանեց Ճէյլընը, – «Չարութիւնը այնքան պիտի տարածուի, որ



շատերուն սէրը պիտի սառի: Բայց ով որ մինչեւ վերջ դիմանայ, պիտի փրկուի»²¹: Դուն չդիմացար մինչեւ վերջ:

– Բայց, Տէր Ճէյլըն, – շարունակեց Յուսահատ սիրտը, – ես արդար եմ, քանի որ կը հաւատամ քեզի: Թերեւս ես կորսնցուցի իմ վկայութիւնը, բայց կը հաւատայի, որ փրկուելուն պէս մարդը մշտապէս փրկուած կը մնայ եւ երբեք չի կորսնցներ իր փրկութիւնը: Նոյնիսկ մեր ուսուցիչներէն մէկ քանին կը սորվեցնէին այդ մասին: Անոնք կ'ըսէին, որ ոչ ոք կրնայ խլել զիս քու ձեռքէն:

– Այո՛, ճիշդ է, – պատասխանեց Ճէյլընը: – Ոչ ոք կրնայ խլել քեզ իմ ձեռքէն, բայց ես երբեք չեմ ըսած, որ չես կրնար դուն ինքդ հեռանալ: Այդ իշխանութիւնը միայն քու ձեռքն է: Արդեօ՞ք չես կարդացած Սրբազան գրուածքներուն մէջ. «Եթէ մարդիկ փախչին այս աշխարհի ապականող ուժերէն՝ մեր Տէր եւ Փրկիչ Ճէյլընի մասին ունեցած գիտելիքին միջոցով, իսկ յետոյ կրկին բռնուին եւ յաղթուին ատոնցմով, նման մարդիկ աւելի վատ վիճակի մէջ պիտի գտնուին վերջաւորութեան, քան սկիզբը: Շատ աւելի լաւ պիտի ըլլար, որ անոնք երբեք չզգիտնային արդարութեան ճանապարհը, քան զհտնային եւ յետոյ շրջուէին այն սուրբ պատուիրանէն, որ տրուեցաւ անոնց»²²: Ես ըսի, որ աւելի լաւ պիտի ըլլար՝ անոնք երբեք չզգիտնային արդարութեան ճանապարհը, որովհետեւ այժմ անոնք աւելի վատ վիճակի մէջ են, քան մինչեւ փրկուիլը: Ուրեմն, ինչպէ՞ս դուն կրնայիր հաւատալ, որ փրկութիւնը անկարելի է կորսնցնել: Եթէ այն անկարելի էր կորսնցնել, ինչպէ՞ս անոնք կրնային առաջուընէ աւելի վատ վիճակի մէջ յայտնուիլ:

Ինչո՞ւ կը լսէիր այն ուսուցիչներուն, որոնք կը սորվեցնէին հակառակ իմ խօսքին: Ես ճշգրտօրէն գրի առած եմ այն, որպէսզի բոլորն ալ գիտնան արդարութեան ճանապարհը: Ինչո՞ւ առիթ տուիր դուն քեզի, որ խաբուիս: Եթէ հաւատայիր իմ խօսքերուն, դուն պիտի պայքարէիր քու սրտի դառնութեան դէմ: Փոխարէնը, քանի որ դուն կեղծ մխիթարութիւն գտար անպայմանական ապահովութեան մէջ, դուն թոյլ տուիր, որ դառնութիւնը առանց արգելքի աւելնայ քու մէջ: Եւ հիմա դուն կեցած ես դատաստանին առջեւ, որ հնարաւոր էր կանխել:

– Իսկ իմ բոլոր բարի գործե՞րը, որոնք ըրի էնտելի մէջ, – աղաչեց Յուսահատ սիրտը:

Տէր Ճէյլընը պատասխանեց.

– Կրկին, դու չե՞ս կարդացած, թէ ես ինչ ցոյց տուի իմ մարգարէի միջոցով. «Եթէ արդար մարդիկ մեղաւոր ճանապարհներուն դառնան եւ սկսին վարուիլ միւս մեղաւորներուն պէս, արդեօ՞ք անոնց թոյլ պիտի տրուի ապրիլ: Ո՛չ. անշուշտ՝ ո՛չ: Անոնց նախկին բարութիւնը լիովին



պիտի մոռցուի, եւ անոնք պիտի մահանան իրենց մեղքերուն մէջ: Սակայն դուք կ'ըսէք. «Տէրը արդար չէ»: Լսեցէ՛ք ինծի... Ե՞ս եմ անարդարը, թէ՞ դուք: Եթէ արդար մարդիկ դառնան բարի ըլլալէն եւ սկսին մեղք գործել, անոնք պիտի մահանան ատոր պատճառով: Այո՛, անոնք պիտի մահանան իրենց մեղաւոր գործերուն պատճառով»²³: Հետո՞ պատահած է այն, ինչ որ գրուած է. քու բարութիւնը եւ արդար գործերը մոռցուած են եւ հաշուի չեն առնուիր:

Տակաւին հրաժարելով յանձնուիլ՝ Յուսահատ սիրտը ըսաւ.

– Բայց տէ՛ր, դուն ըսիր, որ եթէ ես դաւանին քեզ որպէս իմ փրկիչ, իմ անունը պիտի գրուի Կեանքի գիրքին մէջ: Ինչպէ՞ս եղած է, որ իմ անունը այլեւս այդ գիրքին մէջ չէ: Ինչո՞ւ դպիրդ չի կրնար գտնել այն: Մի՞թէ այն կրնար ջնջուիլ:

Տէր ճէլընը համբերութեամբ, բայց՝ վճռականօրէն պատասխանեց.

– Արդե՞օք դուն չլսեցիր այն, ինչ որ արդէն ըսուեցաւ: «Ով որ մինչեւ վերջ դիմանայ, պիտի փրկուի»²⁴: Մինչեւ դատաստանը դիմացողները՝ այն մարդիկն են, որոնք կը յաղթեն, եւ ես պարզ ըսի. «Ան, որ կը յաղթէ, այսպէս սպիտակ հանդերձներ պիտի հագնի, եւ ես չեմ ջնջեր անոր անունը Կեանքի գիրքէն»²⁵: Եթէ ես ըսի, որ չեմ ջնջեր ինչ որ մէկուն անունը Կեանքի գիրքէն, կը նշանակէ, որ այն կրնայ ջնջուիլ: Հակառակ պարագային, ես պիտի ըսէի. «Եթէ դուն դաւանիս զիս որպէս Տէր, քու անունը յաւիտեան պիտի մնայ Կեանքի գիրքին մէջ»:

Յուսահատ սիրտը աղաչեց.

– Ինչպէ՞ս դուն կրնաս Լոն ուղարկել զիս՝ այն վայրը, ուր կ'ուղարկուին կենդանի մահացածները:

Ճէլընը նայեցաւ իր կառավարիչներէն մէկուն.

– Կարդա՛ այն Հին գրուածքները, որոնք յայտնի դարձած են Էնտելի քաղաքացիներուն:


Կառավարիչը կարդաց.

– «Այն մարդը, որ կը մոլորի խոհեմութեան ճանապարհէն, պիտի բնակի մահացածներու ժողովին մէջ»²⁶:

Յուսահատ սիրտը այլեւս ըսելու ոչինչ ունէր: Թագաւորը ըսաւ ծառաներուն.

– Անոր ոտքերը եւ ձեռքերը կապեցէ՛ք: Վե՛ր հանեցէ՛ք անոր, դուրսի խաւարը նետեցէ՛ք: Հոն պիտի ըլլայ լացը եւ ակռաներու կրճտոցը: Որովհետեւ շատերը կանչուած են, բայց քիչերը՝ ընտրուած²⁷:

Երբ Գլխաւոր պահապանը կը մօտենար Յուսահատ սրտին, ան անիծեց Ճէլընը: Ան լեցուցեաւ դաժանութեամբ, որուն պատճառը անոր ներսի դառնութիւնը եւ երկու անգամ մահացած բնութիւնն էր



(տե՛ն Յուդայ 12): Ան նման էր արմատախիլ եղած աշնանային ծառի մը, որուն վրայ ոչ մէկ արդարութեան պտուղ մնացած էր:

Յուսահատ սրտի ոտքերը եւ ձեռքերը կապեցին, եւ ան դուրս տարուեցաւ սրահի քովի դուռին միջոցով: Անոր նոյնպէս փակեցին խուցերէն մէկուն մէջ: Հազիւ որ դուրս ելան լսարանէն, Գլխաւոր դպիրն ա՛լ աւելի պարզօրէն բացատրեց կատարուածը վկաներու բազմութեան.

– «Սիրելի՛ ընկերներ, եթէ մենք գիտակցաբար շարունակենք մեղք գործել այն բանէն յետոյ, երբ ստացանք ամբողջական գիտելիքը ճշմարտութեան մասին, այլեւս չ'ըլլար զոհ մը, որ այդ մեղքերը ծածկէ: Այլեւս ոչ մէկ ակնկալիք կ'ըլլայ, այլ միայն Ճէյլընի դատաստանի եւ անոր թշնամիներուն կլանող բորբոքած կրակի սարսափելի սպասումը: Որովհետեւ մենք գիտենք զինք, որ ըսաւ. «Ես վրէժ կը լուծեմ: Ես կը հատուցեմ անոնց, որոնք արժանի են ատոր»: Ան նոյնպէս ըսաւ. «Ճէյլընը պիտի դատէ իր ժողովուրդը»: Սարսափելի բան է կենդանի Ճէյլընին ձեռքը իյնալը»²⁸:

Երկակի կեանքի դատաստանը

Վերջին մարդը, որ պէտք է Արդարադատութեան սրահէն կանչուէր, Երկակի կեանքն էր: Ան գիտէր Ճէյլընի օրէնքները եւ տեղեակ էր, որ իր դատաստանը նպաստաւոր պիտի չըլլար: Շուտով ան պիտի պարզէր, թէ իր անօրինութիւնները որքա՛ն սուղ պիտի նստին իր վրայ:

Երկակի կեանքը թուլութիւն կը զգար՝ տարուելով Դատաստանի սրահը, եւ պահապանները պէտք է օգնէին անոր, որպէսզի ան մօտենար Ճէյլընի Դատաստանի գահին: Անոր կեանքը վերանայուեցաւ, եւ ան նոյնպէս լսեց սարսափելի բառերը այն մասին, որ անոր անունը չէ գտնուած Կեանքի գիրքին մէջ:

Ճէյլընը հաստատակամօրէն յայտարարեց.

– Երկակի կեանք, դուն մեղաւոր եւ դաւաճանութեան մէջ, արդարութենէն իյնալու մէջ եւ գլորման քար ըլլալու մէջ: Դուն պիտի տարուիս Լոն երկիրը, ուր պիտի ստանաս ծանրագոյն պատիժը եւ չարչարանքները:

Երկակի կեանքը սարսափով լսեց, ինչէն յետոյ աղաչեց.

– Բայց տէ՛ր, ես ուսուցիչ էի քու դպրոցիդ մէջ: Ես տուի իմ կեանքը քու գործիդ համար:

Ճէյլընը պատասխանեց.

– Արդեօ՞ք դուն, ուսուցիչ ըլլալով, չես կարդացած այն գիրքերը, որոնցմով կը սորվեցնէիր: «Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, ձեզմէ ոչ բո-



լորը պէտք է ուսուցիչներ դառնան դպրոցին մէջ, որովհետեւ մենք՝ ուսուցիչներս, պիտի դատուինք Ճէյլընի կողմէն աւելի մեծ խստութեամբ»²⁹:

Երկակի կեանքը շարունակեց.

– Ինչպէ՞ս թէ ես գլորման քար էի:

Ճէյլընին ծայնը աւելի խստացաւ.

– Դուն դրդեցիր իմ փոքրերէն շատերը սայթաքելու եւ յաւիտեան իյնալու: Յուսահատ սիրտը ընդամէնը անոնցմէ մէկն է: Ան վստահուած էր քու հոգատարութեան: Ես տուի քեզի իշխանութիւն, որպէսզի պաշտպանէիր զինք, ոչ թէ օգտագործէիր զինք: Դուն շահագործեցիր ազդեցութիւնդ՝ յագեցնելով քու կիրքը, եւ վնասեցիր թէ՛ զինք, թէ՛ ուրիշները: Ան արդէն խոցուած էր քրոջ մը կողմէն, եւ դուն, բժշկութիւն բերելու փոխարէն, օգուտ քաղեցիր անոր վիճակէն: Դուն նաւաբեկութեան ենթարկեցիր անոր հաւատքը: Եւ հիմա ան դատապարտուած է Լոն երթալու: Անշուշտ դուն պիտի յիշես այն զգուշացումը, որ ես ըրած էի. «Ով որ սայթաքելու դրդէ այս փոքրերէն մէկուն, որոնք կը հաւատան ինձի, աւելի լաւ պիտի ըլլար անոր համար, որ մէկ ջաղացքար կապուէր անոր վիզէն, եւ զինք նետէին ծովուն մէջ»³⁰:

Երկակի կեանքը աղաչեց.

– Ճէյլըն, ես գիտէի, որ Լոն պիտի արտաքսուիմ, բայց ինչո՞ւ պէտք է ծանրագոյն չարչարանքները ստանամ: Ինչո՞ւ դուն այդքան խստորէն կը վարուիս հետս: Ես անհաւատ չէի, այլ քու ծառաներէն էի: Ես Անկախին պէս չէի, որ չէր ցանկար գործ ունենալ հետդ: Ինչո՞ւ:

Ճէյլընը կրկին անդդուելիօրէն ըսաւ.

– Դուն գիտես եւ սորվեցուցած ես Հին գրուածքները: Ինչո՞ւ կը հարցնես ինձի ատոր մասին: Ե՞ս պիտի յիշեցնեն քեզի, որ յիշես այս խօսքերը: Հին գրուածքները պարզօրէն կ'ըսեն. «Բայց եթէ ծառան մտածէ՝ իմ Տէրը երկար ժամանակ չի վերադառնար, եւ սկսիմ ճնշել միւս ծառաները... Տէրը պիտի վերադառնայ առանց նախագուշացման եւ անսպասելի: Ան կտոր-կտոր պիտի ընէ այդ ծառան եւ պիտի արտաքսէ զինք անհաւատարիմներուն հետ: Այդ ծառան դաժանօրէն պիտի պատժուի, որովհետեւ թէեւ ան գիտէր իր պարտականութիւնը, ան հրաժարեցաւ կատարել այն: Բայց մարդիկ, որոնք չեն գիտեր, որ սխալ կը գործեն, միայն քիչ մը կը պատժուին: Շատ կը պահանջուի անոնցմէ, որոնց շատ տրուած է, եւ շատ աւելին կը պահանջուի անոնցմէ, որոնց շատ աւելին տրուած է»³¹:

Անկախը շատ աւելի քիչ կը հասկնար իր անօրինութիւնները,– շարունակեց Ճէյլընը– Իսկ դուն ե՛ւ կը հասկնայիր, ե՛ւ գիտէիր: Թէեւ անոր



պատիժը խիստ է, այն անելի թեթև պիտի ըլլայ, քան քուկդ: Քեզի համար ես տեղ պահած եմ... «խաւարի մութին մէջ»³²:

Ճէյլընը պատուիրեց Գլխաւոր պահապանին.

– Ատոր ոտքերը եւ ձեռքերը կապեցէ՛ք: Վե՛ր հանեցէ՛ք ատոր, դուրսի խաւարը նետեցէ՛ք: Հոն պիտի ըլլայ լացը եւ ակռաներու կրճտոցը: Որովհետեւ շատերը կանչուած են, բայց քիչերը՝ ընտրուած³³:

Երբ Գլխաւոր պահապանը կը մօտենար, Երկակի կեանքը սկսաւ հայհոյել Ճէյլընին, պահապաններուն եւ Աֆապէլի քաղաքացիներուն: Ան կատաղիորէն կը պայքարէր եւ նոյնիսկ փորձեց ազատիլ պահապաններէն՝ անձամբ Ճէյլընի վրայ յարձակելու համար: Անոր ճշմարիտ բնութիւնը բոլորովին արտայայտուեցաւ: Որեւէ բարի բան, որ կար անոր մէջ, կլանուած էր անոր կեղծաւորութեամբ: Պահապանները կապեցին Երկակի կեանքի ոտքերը եւ ձեռքերը եւ դուրս տարին զինք սրահի քով դուռին միջոցով: Ամբողջ այդ ընթացքին ան հայհոյանքներ կը տեղացնէր: Ան միացաւ միւս հազար հինգ հարիւր մարդոց, որոնք անմիջապէս տարուեցան Լոն երկիր:

Հազիւ որ Երկակի կեանքը դուրս տարուեցաւ լսարանէն, Գլխաւոր դպիրը փակեց գիրքը եւ գոչեց.

– Քու դատաստանները արդար՛ են: Անոնք ստացան այն, ինչին որ արժանի էին:


Խորանին քովէն ձայն մը պատասխանեց.

– Յիրաւի ճշմարիտ եւ արդար են քու դատաստանները³⁴:

Լոն լքուած երկիրը

Հազար հինգ հարիւր դատապարտուած եւ բանտի խցիկներուն մէջ պահուած էնտելցիներ տարուեցան Թագաւորական պահապաններու կողմէն երկու շաբաթ տեւող ճանապարհորդութեան՝ դէպի կործանուած Լոն երկիրը: Անոնք հասան Կրակի մեծ անապատը, ուր այրած հողէն բարձրացող տաքութիւնը անտանելի էր: Յանկարծ, հասկնալի չէ, թէ ուրկէ, հեռուն խոշոր եւ չարագոյժ կառոյց մը երեւեցաւ: Երբ անոնք կը մօտենային, դատապարտուածները կարդացին ճանապարհի վրայի ցուցանակը՝ «Լոն լքուած երկիր»:

Աւելի ուշադիր նայելով՝ անոնք հասկցան, որ այդ խոշոր կառոյցը ունի ոչ մէկ պատուհան կամ այլ բացուածք՝ բացի մէկ վիթխարի դարպասէն ստորին մասին մէջ: Դռնէն մտնելով՝ անոնք լսեցին ներսէն եկող ձայներ, որոնք կը նմանէին տասնեակ հազարաւոր ձիչերու: Քանի մը վայրկեաններու ընթացքին անոնք լսեցին մուտքի քով գտնուող բանտարկեալներու աղերսանքները՝ ուղղուած Գլխաւոր պահապանին.



– Արդեօ՞ք բաւական չէ: Կը խնդրենք, ողորմութի՛ն խնդրեցէք մեր փոխարէն: Մեր պատիժը անտանելի՛ է:

– Որքա՞ն ժամանակ է, որ անոնք հոս են,– հարցուց Անկախը պահապաններէն մէկուն:

– Մէկէն մինչեւ 129 տարի:

Խաբուածը ցնցուեցաւ: Ան տակաւին յոյս ունէր, որ այդ ամէնը պիտի անցնէր քանի մը շաբաթէն եւ պիտի պարզուէր, որ աստիկա մղձաւանջ էր կամ յատուկ մարտավարութիւն՝ զիրենք վախեցնելու համար: Ան հարցուց նոյն պահապանին.

– Արդեօ՞ք ես հոս պիտի անցընեմ իմ կեանքի մնացած մասը:

– Այո՛, ինչպէս որ քեզ զգուշացուցած էին Էնտելի մէջ:

Շատերը, որոնց համար աւելի խիստ պատիժ որոշուած էր, տարուեցան այդ մետաղէ շինութեան աւելի բարձր բաժինները, ուր տաքութիւնը աւելի ուժգին էր: Անոնք, որոնք չէին գիտեր ճշմարտութիւնը, բայց, միեւնոյնն է, արտաքսուելու արժանի արարքներ գործած էին, տարուեցան այդ ահռելի կառոյցի աւելի ցած բաժինները: Բայց նոյնիսկ, թէկուզ մէկ օրով, անոնց տեղը անտանելի էր, ալ ի՞նչ խօսք՝ հարիւրէն աւելի տարիներու մասին:

Երկակի կեանքի տանջանքը աննկարագրելի էր՝ աւելի սարսափելի, քան շէնքի ամենավերին բաժինն մէջ գտնուողներունը: Ան տարուեցաւ ստորգետնեայ զնտան՝ տաք ծծմբաբէկորներու քով: Միայն այդ հոտը անտանելի էր, եւ քանի որ օդափոխութիւն չկար, տաքութիւնը հոն աւելի զօրաւոր էր, քան որեւէ այլ տեղ մը Լոնի մէջ: Այդ վայրը ահռելի մետաղէ շէնքի մէջ չէր, այլ՝ երկրի խորքերուն մէջ: Անկասկած՝ այն չարչարանքի եւ տանջանքներու ամենասարսափելի վայրն էր: Հոն Երկակի կեանքը պիտի տանջուէր միայնութեան մէջ: Այդ վայրը բաւականին մեծ էր՝ մեկուսացնելու համար զանոնք, որոնք դատապարտուած էին նոյնպիսի ծանր յանցանքներու համար: Միակ ծայնը, որ անոնք պիտի լսէին, իրենց իսկ ձայնն էր:

Հազիւ որ դատապարտուածները բանտարկուեցան, Գլխաւոր պահապանը քալեց դէպի մուտքը: Երբ վիթխարի մետաղէ դարպասը գոցուեցաւ, ամբողջ շինութեան մէջ չկար նոյնիսկ լոյսի մէկ նշոյլ: Ներսը գտնուող թշուառները պիտի անցընէին աւելի քան 125 տարի բացարձակ խաւարի եւ միայնութեան մէջ: Լոյս տեսնելու միակ յոյսը այն ժամանակ էր, երբ տարին մէկ անգամ նոր բանտարկեալներ կը բերուէին: Այնուամենայնիւ, այդ լոյսը տեսանելի էր ոչ բոլորին, այլ միայն անոնք, որոնք մօտիկ էին վիթխարի դարպասին: Միւսները, ինչպէս Երկակի կեանքը, այլեւս պիտի չտեսնէին ցերեկային լոյսը: Անոր պատիժը՝ անոր համար պահուած խաւարի մութն էր:



Խորհրդածություններ

Էնտելի այս չորս քաղաքացիները կը զղջային մինչեւ իրենց գոյութեան աւարտը, որ որոշում կայացուցած էին չլսել ճշմարտութիւնը: Միայնութեան մէջ անոնք շարունակ կը մտածէին իրենց յիմարութեան մասին, քանի որ ուշադրութեամբ չէին լսեր Ճէյլընի խօսքերը Էնտելի մէջ: Անոնք պիտի ընէին ամէն ինչ՝ վերադառնալու եւ իրենց ճակատագիրը փոխելու հնարաւորութեան համար: Անոնք այնքա՛ն կը զղջային, որ ականջ դրին մարդոց մեծամասնութեան եւ իրենց օրերու ընդունուած կարծիքներուն: Եթէ անոնք եւս մէկ հնարաւորութիւն ունենային, իւրաքանչիւրը արհամարհանքով պիտի մերժէր իր անմիտ դատողութիւնը եւ ի սրտէ պիտի յարէր հին գրուածքներուն, որոնք երբեք չեն փոխուած եւ չեն կրնար չկատարուիլ:

Ղատապարտուածները տառապանք կ'ապրէին, երբ կը յիշէին պատկերներ Աֆապէլէն՝ ամենաակնառու թագաւորութենէն: Իրենց մշտական տանջանքին մէջ անոնք տակաւին կը յիշէին այդ քաղաքի գեղեցկութիւնը, որ անոնք այնքա՛ն կարճ վայելեցին: Այդ հակադրութիւնը ա՛լ աւելի կը ծանրացնէր անոնց չարչարանքը: Լոնի կիզիչ տաքութիւնը, կծու գարշահոտութիւնը եւ խաւարն ա՛լ աւելի կ'ընդգծէին այդ ճշմարտութիւնը: Այդ հրաշքը իրենցը պիտի ըլլար, միայն եթէ անոնք ընտրէին այն. այնուամենայնիւ, անոնք կորսնցուցին Աֆապէլը իրենց յիմարութեան պատճառով:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՄԵԿ, ԳԼՈՒԽՆԵՐ 1-3

1. Մինչեւ այս գիրքը կարդալը, ինչպէ՞ս կը սահմանէիք «յաջողութիւն» բառը: Ինչպէ՞ս ձեր նպատակները, առաջնահերթութիւնները եւ սովորութիւնները կ'արտացոլէին այդ սահմանումը: Արդեօ՞ք ձեր տեսանկիւնը փոխուեցաւ կամ հաստատուեցաւ՝ այս բաժինի ընթերցելէն յետոյ:
2. Մտածելով յաւիտենութեան լրջութեան մասին՝ գրեթէ անմտութիւն կը թուայ, որ ինչ որ մէկը կրնայ վստահ ըլլալ դատաստանի ժամանակ, որ կ'որոշէ իր յաւիտենական ճակատագիրը: Այնուամենայնիւ, Յովհաննէս 4.17-ը ճիշդ ասիկա կը խոստանայ մեզի: Մենք պիտի անդրադառնանք այս գաղափարին հետագայ բաժիններուն ընթացքին: Այնուամենայնիւ, ձեր ներկայ գիտելիքներու հիման վրայ կրնա՞ք բացատրել, թէ ուրկէ, ձեր համոզմամբ, կը բխի այդ վստահութիւնը:
3. Այս բաժինին մէջ դուք ծանօթացաք Աֆապէլի թագաւորութեան հետ, որ կը խորհրդանշէ մեր կեանքը այս երկրին մէջ եւ մեր յաւիտենական ճակատագիրը: Ի՞նչ որ ամէնէն շատ տպաւորեց ձեզ այս թագաւորութեան եւ ատոր կառավարման մէջ: Կա՞ր արդեօ՞ք այնպիսի բան, ինչ որ ոգեշնչեց կամ զարմացուց ձեզ: Արդեօ՞ք Աստուածաշունչը կը խօսի այդ բաներուն մասին:
4. Եկէ՛ք խօսինք Էնտելի բնակիչներու մասին: Ինչպէ՞ս դուք արձագանգեցիք առաջին չորս դատաստաններուն: Դուք կը սպասէի՞ք, որ ատոնք ուրիշ ձեւով ըլլային: Եթէ այո, ինչո՞ւ:
5. Ո՞րն է ձեր ամենամտահոգիչ հարցը մեր ուսուցման այս պահուն:



ԲԱՇԻՍ ԵՐԿՈՒ



ԱՆՀԱՅԱԾՆԵՐՈՒ ՅԱԻՏԵՆԱԿԱՆ ՏՈՒՄ

«Եւ երբ Անոր աշակերտները հարցուցին Անոր այս առակին իմաստը, Ան ըսաւ անոնց. «Ձեզի տրուած է, որ [աստիճանաբար] գիտնաք (ճանչնաք եւ հասկնաք ասելի ազդեցիկ եւ պարզ կերպով) Աստուծոյ թագաւորութեան խորհուրդները եւ գաղտնիքները...»:

— Ղուկաս 8.9,10, AMP

Յաջորդ չորս գլուխներուն մէջ մենք պիտի ձգենք մեր այլաբանական պատմութիւնը եւ պիտի կեդրոնանանք այն ճշմարտութիւններուն վրայ, որոնք յայտնուեցան Անկախի, Խաբուածի, Յուսահատ սրտի եւ Երկակի կեանքի դատաստաններուն ժամանակ: Ատկէ յետոյ մենք պիտի աւարտենք մեր պատմութիւնը՝ խօսելով Եսասէրին եւ Բարեգործին մասին, եւ մինչեւ գիրքին աւարտը պիտի կեդրոնանանք այն ճշմարտութիւններուն վրայ, որոնք կը յայտնուին անոնց կեանքերուն մէջ: Գիրքի վերջաւորութեան՝ լաւագոյն մասին մէջ, մենք պիտի խօսինք Յիսուս Քրիստոսի հետեւորդներուն յաւիտենական վարձատրութիւններուն մասին:

Հիմնարար ճշմարտութիւն

Մեր այլաբանութեան մէջ ճէյլընը կը խորհրդանշէ Յիսուս Քրիստոսին, Հայր Թագաւորը՝ Ամենակարող Հայր Աստուծոյն, Տակոնը՝ սատանային: Կեանքը Էնտելի մէջ կը խորհրդանշէ մարդոց կեանքը այս երկրին վրայ, իսկ Աֆապէլը՝ Աստուծոյ երկնային քաղաքը: Լոն լքուած երկիրը կը խորհրդանշէ Կրակի լիճը, ուր յաւիտենութիւնը պիտի անցընէ ան, որ չունի Յիսուս Քրիստոսի փրկարար շնորհքը: Նախորդ գլուխին մէջ ներկայացուած օրինակները ցոյց կու տան տարբեր տեսակի մարդիկ, որոնք յաւիտեան պիտի դատապարտուին, քանի որ Աստուծոյ Խօսքը շատ պարզ կը խօսի այս մասին:

Այո՛, դուք ճիշդ կարդացիք՝ յաւիտեան պիտի դատապարտուին: Պատրաստուելով գրել այս ուղերձը՝ իմ ներսը պայքար էր. ես կը մտածէի, թէ ինչպէ՞ս բացատրեմ ձեզի՝ ընթերցողին այն, ինչ որ Աստուա-

ծաշունչը կ'անուանէ «յաւիտենական դատաստան»: Ուշադրութեամբ կարդացէ՛ք հետեւեալ հատուածը:

«Ուրեմն, եկէ՛ք առաջ երթանք եւ անցնինք Քրիստոսի (Մեսիայի) ուսմունքներու տարրական փուլէն՝ հաստատուն կերպով առաջանալով դէպի ամբողջականութիւնը եւ կատարելիութիւնը, որոնք յատուկ են հոգեւոր հասունութեան: Եկէ՛ք կրկին չդնենք... յաւիտենական դատաստանի եւ պատիժի հիմքը: [Այս ամէնը բաներ են, որոնց մասին դուք պէտք է լիովին տեղեակ ըլլայիք շահտ, շահտ երկար ժամանակէ ի վեր]» (Եբրայեցիս 6.1,2, AMP):

Ինչպէս կը տեսնէ՛ք, ես բաց ձգեցի միւս հինգ հիմնարար վարդապետութիւնները, որոնց կարգին են՝ ապաշխարութիւնը մեռած գործերէն եւ հաւատքը Աստուծոյ հանդէպ, որպէսզի շեշտադրեմ, որ յաւիտենական դատաստանը եւ պատիժը՝ Քրիստոսի *տարրական* ուսմունքներն են:

Բառարան մը կը սահմանէ «տարրական» բառը հետեւեալ կերպով. «պարզագոյն, էական կամ հիմնարար մասը կազմող»¹: Ասիկա այն էական մասն է, որուն վրայ մենք պէտք է կառուցենք յատկապէս ամենասկիզբէն. ասիկա հիմք է, որպէսզի հասկնանք այս պնդումը եւ դիտարկենք մեր կրթական համակարգը: Տարրական դպրոցին մէջ մենք կը ստանանք հիմնարար գիտելիքներ, որոնք կ'օգտագործուին մեր հետագայ կրթութիւնը ձեւաւորելու համար՝ գրելը, կարդալը եւ թուաբանութիւնը: Եթէ այս գիտելիքները չըլլան մեր ուսման հիմքը, մենք ոչ մէկ պարագային կրնանք զարգացնել մեր ուսումը: Նոյնը կը վերաբերի հաւատացեալներուն: Եթէ մենք պատշաճ կերպով չհասկնանք վարդապետութիւնը յաւիտենական դատաստաններու մասին, չենք կրնար ճիշդ կեանք կառուցել Քրիստոսին մէջ: Ասիկա կարելի է համեմատել այն բանին հետ, որ ինչ որ մէկը կը փորձէ զարգացնել իր կրթութիւնը՝ չգիտնալով գրել եւ կարդալ, եւ չկարենալով առաւել եւ նուազ ընել:

Այնուամենայնիւ, գրեթէ քսան տարի տարբեր երկիրներուն մէջ ծառայելու ընթացքին ես յայտնաբերած եմ, որ շատերը (ես նաեւ կը խօսիմ Յիսուս Քրիստոսի նուիրուած հետեւորդներու մասին) տեղեակ չեն այս մասին: Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ հեղինակը կը պնդէ. «Այս ամէնը բաներ են, որոնց մասին դուք պէտք է բոլորովին տեղեակ ըլլայիք շահտ, շահտ երկար ատենէ ի վեր»: Ան չ'ըսեր, որ մենք պէտք է պարզապէս պատկերացում ունենանք աստուծոյ մասին, այլ՝ որ պէտք է *լիարժէք* կամ *ամբողջական* տեղեկութիւն ունենանք: «Շատ, շատ երկար ատենէ ի վեր» բառերը միայն կ'ընդգծեն, որ այս ճշմարտութիւնները հիմքային նշանակութիւն ունին մեր հաւատքին համար, ինչպէս որ գրելը եւ կարդալը՝ մեր կրթութեան համար:

Շուտով պիտի տեսնենք, թե ինչու «յաւիտենական դատաստանը» տարրական վարդապետութիւն է, որ մենք պէտք է հասկնանք, որպէսզի առողջ քրիստոնէական կեանք կառուցենք: Շարունակեցէք ընթերցել՝ մտապահելով ասիկա: Առանց այս բանը հասկնալու՝ ձեզի համար շատ դժուար պիտի ըլլայ իւրացնել այն, ինչին մասին մենք պիտի խօսինք, եւ թերեւս սկսիք մտածել. «Ո՞րն է այս ամէնուն իմաստը»:

Դժոխք. փոխաբերակա՞ն, թե՞ իրական

Նախքան այս գիրքը գրելը՝ ես կը պայքարէի իմ մտքին մէջ. *«Ինչպէ՞ս բացատրել սերունդի մը, որ «կ'ապրի այսօրուան օրով», որ գոյութիւն ունին յաւիտենական որոշումներ, որոնք տիեզերքի Ղատաւորը կարճ ժամանակէ ետք պիտի կայացնէ մեր մասին»:* Քանի մը օր տեսող մտաւոր պայքարէն յետոյ աղօթքի ժամանակ միտք մը ծագեցաւ: Ես հասկցայ, որ Յիսուսը պատմութիւններ կը պատմէր, որպէսզի հասկնալի դարձնէր հոգեւոր ճշմարտութիւնները մարդկային մտքի համար: Այսպէս ծնաւ «Աֆապէլ» այլաբանական պատմութեան գաղափարը:

Երբ կը գրէի Աֆապէլի բնակիչներու դատաստանին եւ Լոն երկրին մէջ անոնց ցմահ պատիժի մասին, ես ներսէս կը դողայի: Ես կը գրէի նախորդ գլուխի վերջին մասը, երբ տուն կը վերադառնայի Կիրակի երեկոյան օր մը: Այդ օրը երեք անգամ քարոզած էի: Իմ օգնականները խորունկ քնացած էին, բայց ես չէի կրնար կանգ առնել այդ հատուածը համակարգիչով գրի առնելէն: Ես տուն հասած էի կէսգիշերէն շատ ուշ, բայց չէի կրնար քնանալ՝ վախնալով այն մարդոց համար, որոնք պիտի յայտնուէին անըսելիօրէն աւելի վատ վայրին մէջ, որ կը կոչուի Կրակի լիճ, եւ համաձայն Յիսուսի խօսքերուն՝ այդտեղ պիտի յայտնուէին մարդկութեան մեծ մասը:

«Ներս մտէք նեղ դռնէն, որովհետեւ դուք դէպի դժոխքը լայն է, եւ ճանապարհը, որ կը տանի հոն, դիւրին է, եւ շատերը կ'երթան ատորմով: Բայց դուք դէպի կեանքը՝ նեղ է, եւ ճանապարհը, որ կը տանի հոն, դժուար է, եւ քիչ մարդիկ են, որ կը գտնեն այն» (Մատթէոս 7.13,14, TEV):

Այդ գիշեր անկողինին մէջ պառկած՝ ես յիշեցի, որ քանի մը տարի առաջ ինձմէ խնդրեցին քարոզել յատուկ օրինակարգով (ռեժիմով) տղամարդոց կալանավայրին մէջ, որ Հարաւային Ափրիկէի մէջ էր: Կը յիշեմ, որ երթալով այդ սարսափելի վայրը՝ ականատես եղայ զարհուրելի բաներու, որոնց կարգին էին անտանելի զարշահոտութիւնը, կեանքի զգուելի պայմանները, բանտի խուցերը, որոնց մէջ կը պահուէին քսանէն երեսուն տղամարդիկ՝ քանի մը տասնեակ սանթիմէթր

հեռաւորութեամբ դրուած անկողիններով, եւ նոյնիսկ պահպանակներ՝ կախուած բանտի խուցերու պատերէն: Ես ծառայած էի քանի մը ամերիկեան բանտերու մէջ, բայց իմ կեանքին մէջ նման անյուսալի պայմաններ չէի տեսած: Մեր բանտերը նման են գիւղական ակումբներու՝ այդ վայրին համեմատ:

Ես չէի կրնար պատկերացնել, թէ ինչպէս կարելի էր նոյնիսկ մէկ շաբաթ ապրիլ այդ վայրին մէջ, ալ ի՛նչ խօսք քառասունէն յիսուն տարուան մասին: Կարելի էր բացարձակ յուսահատութիւն տեսնել այն մարդոց դէմքերուն, որոնք չէին հաւատար Յիսուսին: Ես գրեթէ կը լսէի անոնց մտքերը. «*Գոնէ մէկ օր ես կ'ազատիմ այստեղէն, երբ մահանամ*»: Միեւնոյն ժամանակ անոնք կը սարսափէին մահուան անյայտութենէն: Անոնք սարսափելի վիճակի մէջ եւ բացարձակ անյուսութեան մէջ: Եթէ ազատութեան մէջ ապրելէն ետք դուք հարկադրուած ըլլայիք մինչեւ ձեր կեանքի աւարտը նման վայրի մէջ ապրիլ, ատիկա իսկական տանջանք պիտի ըլլար: Այդ բանտարկեալները ճիշդ այդպիսի վիճակի մէջ էին:

Երբ հոն էի, ես մտածեցի, որ որքան ալ այդ վայրը զարհուրելի ըլլար, այն հրաշալի էր՝ դժոխքին համեմատ: Այդ բանտարկեալները գոնէ ընկերակիցներ ունէին եւ կը տեսնէին արեւի լոյսը, որ ներս կը թափանցէր բանտի քանի մը ճաղապատ պատուհաններով: Դժոխքին մէջ չկան ո՛չ ընկերակիցներ, ո՛չ լոյս, այլ միայն՝ կրակ, որ երբեք չի մարիր: Կրակի լիճին մէջ յաւիտեան թեթեւութիւն պիտի չըլլայ: Մարդիկ պիտի ըլլան մշտական տանջանքի մէջ: Դժոխքին մէջ մարդիկ չեն կրնար մտածել. «*Մէկ օր ես կ'ազատիմ հոսկէ*»: Անոնք *յաւիտենական* պատիժ ստացած են:

Քանի որ դժոխքը Յիսուսի տարրական ուսմունքներէն մէկն է, Ան յաճախ կը խօսէր այդ մասին՝ շատ աւելի յաճախ, քան մեր օրերու եկեղեցական ամպիոններէն: Ան չէր կարծեր, որ դժոխքը նկարագրելը (այն, որ մարդոց տանջանքները հոն երբեք պիտի չվերջանան) գթասրտութեան պակաս կը նշանակէ: Ընդհակառակը՝ որպէս Բարի Հովիւ, Ան անհրաժեշտ կը համարէր սորվեցնել մեզի այդ մասին: Այսպիսով, դժոխքի մասին յիշատակելու եւ սովորեցնելու պատճառը սերն էր, քանի որ այն ամէնը, ինչ որ Ան կ'ընէր եւ կը սորվեցնէր, դրդուած էր գթասրտութենէն: Ես կը ցանկամ տալ հետեւեալ հարցը. արդեօ՞ք այսօր մենք ծառայութիւն կը մատուցենք մարդոց՝ յիշատակելով դժոխքը մեր ամպիոններէն: Արդեօ՞ք ատիկա ճշմարիտ սէր է:

Աստուածաշունչին մէջ դժոխքը քանի մը անուանում ունի: *Շեղը* (միայն Հին կտակարանին մէջ), *Հատկը* եւ *գերեզմանը* մահուան մի-

ջանկեալ վայրերու անուանումներն են: *Չեհենը* եւ *Կրակի լիճը* յաւիտեանական տանջանքի վայրի անուանումներն են: Շուտով մենք ցոյց պիտի տանք տարբերութիւնը միջանկեալին եւ յաւիտեանականին միջեւ:

Աստուածաշունչը կը սորվեցնէ, որ դժոխքը իրական վայր է, ոչ թէ վերացական, ինչպէս մեր հասարակութիւնը կը ձգտի ներկայացնել: Թուոց 16-րդ գլուխին մէջ երկիրը բացուեցաւ, եւ բազմաթիւ վկաներու առջեւ Շեուը կենդանի-կենդանի կլլեց երեք ամբողջական ընտանիք: Նոր կտակարանին մէջ գրուած է Հակաքրիստոսի եւ անոր Սուտ մարգարէի մասին. «Երկուքն ալ ողջ-ողջ նետուեցան կրակի լիճը, որ բորբոքուած ծծումբով կ'այրի» (Յայտնութիւն 19.20, AMP): Այնպէս չէր, որ անոնք մահացան, եւ միայն անոնց անձերը տարուեցան այդ վայրը. անոնք նետուեցան Կրակի լիճը՝ իրենց մարմիններով եւ անձերով հանդերձ:

Ղազարոսը եւ հարուստը

Ղուկասի Աւետարանին մէջ Յիսուս կը պատմէ իրականութեան մէջ տեղի ունեցած դէպք մը հարուստ մարդու մը մասին, որ կ'ապրէր լիովին իր անձին համար՝ անտեսելով աղքատ մը, որ ամէն օր իր տան առջեւ կը պառկէր: Մենք գիտենք, որ այս պատմութիւնը առակ չէ, քանի որ Յիսուս այն սկսաւ՝ ըսելով. «...հարուստ մարդ մը կար...»: Բացի այդ՝ Ան օգտագործեց Աբրահամին անունը եւ աղքատը Ղազարոս անուանեց: Իր առակներուն մէջ Յիսուս անուններ չէր տար եւ չէր խօսեր իրական մարդոց մասին:

Ղազարոսը մահացաւ, եւ հրեշտակները տարին զինք Աբրահամի գոգը՝ վայր մը, ուր կը պահուէին եւ կը մխիթարուէին Հին կտակարանի սուրբերը, մինչեւ որ Յիսուս ճամայ բացաւ անոնց համար դէպի Աստուծոյ ներկայութիւնը Երկնքին մէջ: Հարուստ մարդը մահացաւ եւ յայտնուեցաւ դժոխքին մէջ (Հատէսի մէջ): Գրուած է.

«...Եւ Հատէսի մէջ, ուր ան մեծ ցաւի մէջ էր, ան վեր նայեցաւ եւ հեռուն տեսաւ Աբրահամը, եւ Ղազարոսը՝ անոր կողքին: Ան կանչեց. «Հայր Աբրահամ: Խղձա՛ ինձի, եւ ուղարկէ՛ Ղազարոսը, որ թաթխէ իր մատը ջուրին մէջ եւ սառեցնէ իմ լեզուն, որովհետեւ ես մեծ ցաւի մէջ եմ այս կրակին մէջ»» (Ղուկաս 16.23,24, TEV):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ հարուստը մեծ ցաւի մէջ էր: Այլ թարգմանութիւններու մէջ կ'օգտագործուին «տանջանք», «տառապանք» կամ «չարչարանք» բառերը: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ան սարսափելի տանջանքի մէջ էր: Դժոխքը՝ գիտակցուած չարչարանքներու վայր է: Նոյնպէս ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ այդ մարդը ճանչցաւ Աբրահամը

եւ Ղազարոսը, իսկ անոնք ճանչցան զինք: Դժոխքին մէջ գտնուող մարդիկ լիարժէք մարդ են, անոնք կը պահպանեն իրենց մտաւոր կարողութիւնները, զգացումները, կամքը, արտաքին տեսքը եւ զգայարանները: Այդ մարդը կը տեսնէր, կը լսէր եւ ցաւ կը զգար: Մարդիկ հոն նոյնպէս ինչ որ տեսակի մարմին ունին: Մենք կը տեսնենք, որ հարուստը ուժգին կ'ուզէր պարզապէս զովացնել իր լեզուն: Յիսուսը կ'ըսէ, որ ե՛ւ մարմինը, ե՛ւ անձը յաւիտեան կը կործանուին դժոխքին մէջ (տե՛ս Մատթ. 10.28): Ուրիշ ձեւով ըսելու համար՝ մարդկային մարմինը մշտապէս պիտի փճանայ եւ ապականի կրակին եւ որդերուն կողմէն:

Նոյնպէս ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ հարուստը ողորմութիւն կը խնդրէր իր հանդէպ, ինչպէս եւ Լոնի զնտանին մէջ գտնուողները՝ մեր պատմութեան մէջ: Դժոխքը վայր մըն է, ուրկէ *յաւիտեան* ազատում չկայ: Ոչ ոք երբեք կու գայ դժոխք՝ հոն բնակնողները մխիթարելու համար, թէեւ անոնք մեծապէս կը փափաքին սփոփանք ստանալ: Նոյնպէս կը թուայ, թէ մարդը բոլորովին չի գիտակցիր դժոխքի իրականութիւնը: Աբրահամը պէտք է յիշեցնէր հարուստին. «Կայ մեծ անդունդ, որ կը բաժնէ մեզ: Ոեւէ մարդ, որ կ'ուզէր անցնիլ այդտեղէն եւ գալ քովդ *[մխիթարութիւն բերելու համար]*, կը կանգնեցուի ատոր եզրին, եւ ոչ ոք հոնկէ կրնայ հատել ատոր սահմանը եւ գալ մեր քով» (Ղուկաս 16.26, NLT): Ես կը ճանչնամ մարդ մը, որ եղած է դժոխքին մէջ: Ան կը պատմէր, որ անոնց, որոնց տեսած է ան, կ'աղաղակէին, որ այն չափազանց ծանր է՝ կրելու համար: Նոյնը կը գոչէր այս պատմութեան հարուստը մարդը:

Շարունակենք կարդալ.

«Բայց Աբրահամը ըսաւ. «Յիշէ՛, որդի՛ս, որ քու կեանքի ընթացքին դուն ստացար բոլոր բարի բաները, իսկ Ղազարոսը ստացաւ բոլոր վատ բաները: Բայց հիմա ան կը վայելէ հոս, մինչ դուն ցաւի մէջ ես...»:

Հարուստը պատասխանեց. «Այդ պարագային, կ'աղաչեմ, հա՛յր Աբրահամ, ուղարկէ՛ Ղազարոսը իմ հօր տունը, ուր ես հինգ եղբայր ունիմ: Թող ան երթայ եւ զգուշացնէ, որ զոնէ անոնք չի գան այս տանջանքներու վայրը»» (Ղուկաս 16.25,27,28):

Դուք լսած պիտի ըլլաք հին ասացուածք մը. «Մահը ընկերներու հետ՝ երանութիւն է»: Ինչո՞ւ այն չգործեց այս պարագային: Ինչո՞ւ հարուստը չէր ուզեր, որ իր եղբայրները իր հետ ըլլային: Պատասխանը հետեւեալն է՝ դժոխքին մէջ չկայ ընկերակցութիւն եւ հաղորդակցութիւն: Ոմանք կը մտածեն, որ դժոխքին մէջ երեկոյթներ պիտի ըլլան: Միւսները կը մտածեն, որ հոն անոնք պիտի ըլլան իրենց ընկերներուն հետ: Եթէ այդպէս ըլլար, հարուստը պիտի ուզէր, որ իր բոլոր մտերիմները միանային իրեն, բայց ան յուսահատօրէն կը ձգտէր, որ անոնք չի

գային այդ չարչարանքի վայրը: Դժոխքը բացարձակ միայնութեան եւ անյուսութեան վայր է: Այն նոյնպէս յաւերժ յուշերու վայր է, ինչ որ, իմ համոզումով, դժոխքի մեծագոյն չարչարանքներէն մէկն է:

Կարդացէ՛ք, թէ ինչպէս Աբրահամը կ'արձագանգէ հարուստին խնդրանքին՝ իր եղբայրներուն համար.

«Աբրահամը ըսաւ. «Քու եղբայրները ունին Մովսէսը եւ մարգարէները՝ զանոնք զգուշացնելու համար. քու եղբայրները պէտք է լսեն անոնց խօսքերը»:

Հարուստը պատասխանեց. «Ատիկա բաւական չէ, հա՛յր Աբրահամ, բայց եթէ ինչ որ մէկը մահէն յարութիւն առնէր եւ երթար անոնց քով, անոնք իրենց մեղքերէն պիտի դառնային»:

Բայց Աբրահամը ըսաւ. «Եթէ անոնք չեն լսեր Մովսէսին եւ մարգարէներուն, չեն ալ համոզուիր, եթէ նոյնիսկ ինչ որ մէկը յարութիւն առնէր մահէն»» (Դուկաս 16.29–31, TEV):

Հոս գրուած է շատ կարեւոր ճշմարտութիւն մը: Շատերը կը ձգտին արտասովոր վերապրումներու, որպէսզի համոզուին Աւետարանի վաւերականութեան մէջ կամ համոզեն ատոր մէջ ուրիշ մարդիկ: Այնուամենայնիւ, Յիսուս ցոյց կու տայ, որ չկայ աւելի մեծ բան, քան Աստուծոյ Խօսքը, որ կրնայ հաւատք ծնիլ մարդուն մէջ՝ դրդելով զինք լիարժէք կերպով հետեւելու Աստուծոյն մինչեւ վերջ: Սխալ մի՛ հասկնաք ինծի: Անոնք, որոնք գերբնական դրսեւորումներ կը տեսնեն, մեծ զարմանք կ'ապրին եւ կը փոխուին կարճ ժամանակով, բայց այդ փորձառութիւնները մշտական համոզուածութիւն չեն առաջացներ անոնց սրտին մէջ:

Երբ ես դեռահաս էի (հայիոյոյ եւ երեկոյթներու մշտական մասնակից), հայրս տարաւ զիս դիտելու «Տասը պատուիրանները» ֆիլմը, որուն զլխաւոր դերին մէջ Չարլթոն Հէսթոնն էր: Ես պարզ կը յիշեմ, որ հայեացքս յառած էի կինոթատրոնի մեծ պաստառին, երբ երկիրը բացուեցաւ եւ կլլեց մարդիկը՝ դժոխք տանելով: Ատիկա անըսելիօրէն ցնցեց զիս: Երբ դուրս եկայ կինոթատրոնէն, կեանքս փոխուած էր: Ես սկսայ ուրիշ ձեւով վարուիլ եւ գրեթէ մէկ շաբաթ այդ մասին կը խօսէի, ինչէն յետոյ կրկին վերադարձայ իմ հին սովորութիւններուն: Ո՞րն էր պատճառը. ես չէի լսած Աստուծոյ Խօսքը, չէի ապաշխարած իմ ճանապարհներէն եւ կեանքս լիովին չէի նուիրած Յիսուսին՝ առիթ տալով, որ Անոր շնորհքը փոխէր զիս:

Ընկերներս եւ ես այլ արտասովոր վերապրումներ ունեցած էինք, որոնք նոյնպէս ցնցում կ'առաջացնէին մէջս. այնուամենայնիւ, գերբնական վերապրումները չփոխեցին զիս: Իմ կեանքը փոխուեցաւ այն ժամանակ, երբ ես համալսարանական էի, եւ մեր տղոց հանրակացարա-

նի ուսանողներին մէկը եկաւ իմ սենեակ եւ ծանօթացուց զիս Աստուծոյ Խօսքին՝ Յիսուս Քրիստոսի Աւետարանին միջոցով: Աստուծոյ Խօսքը յատկապէս կ'ըսէ մեզի. «Հաւատքը լսելէն է, եւ լսելը՝ Աստուծոյ Խօսքէն» (Հռովմայեցիս 10.17), եւ «Նորէն ծնած ըլլալով ոչ թէ ապականացու սերմէն, հապա՝ անապականուցէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական Խօսքովը» (Ա. Պետրոս 1.23): Այս պատճառով, շատ կարելոր է, որ մենք սորվեցնենք եւ քարոզենք Աստուծոյ Խօսքը, ոչ թէ միայն մեր վերապրումները:

Այնուամենայնիւ, այս ճշմարտութիւնը պարզօրէն ներկայացնելէն յետոյ, առիթ տուէք շեշտել հետեւեալը. *Եթէ վերապրումները կը լրացնեն Աստուծոյ Խօսքը կամ կը մեծցնեն Աստուծոյ Խօսքի ազդեցութիւնը, ատոնք շատ տեղին են եւ նոյնիսկ՝ անհրաժեշտ:* Վկայութիւնները մեծ դեր կը կատարեն Աւետարանը ներկայացնելու մէջ, բայց մենք յաւիտենական կեանք կը ստանանք՝ ընդունելով Աստուծոյ Խօսքը եւ հաւատալով Աստուծոյ Խօսքին:

«Ինչո՞ւ ես հոս կ'երթամ»

Այժմ թոյլ տուէք ինծի վկայութիւն մը պատմելու, որ պիտի լրացնէ այն աստուածաշնչեան ճշմարտութիւնները, որոնց մասին մենք խօսեցանք: Երեկոյ մը կինս եւ ես հիւր էինք մեր ընկերոջ տունը, եւ երբ միասին նստած էինք անոր հիւրասենեակը, ան պատմեց դէպք մը, որ տեղի ունեցած էր իր երիտասարդ տարիներուն: Ան մեծցած էր Քարիպիան կղզիներուն մէջ եւ անձրեւոտ եղանակի մը ժամանակ ինկած էր այն փոսին մէջ, որուն մէջ անձրեւաջրեր կը հաւաքէին՝ շինարարութեան մէջ օգտագործելու համար: Անոր եղբայրը ցատկած էր փոսը եւ փորձած էր օգնել զինք, բայց չէր կրցած. ան վազած էր՝ օգնութիւն կանչելու, քանի որ մեր ընկերը լողալ չէր գիտեր: Մինչեւ օգնութեան գային, ան արդէն երեսուն վայրկեան է՝ մահացած էր:

Ան կը պատմէր մեզի, որ երբ դուրս ելած էր մարմինէն, անոր բոլոր զգայարանները գործած էին: Ան մեծ արագութեամբ իջած էր ներքեւ՝ շատ թանձր խաւարի մէջ: Ան ըսաւ, որ խաւարը այնքան թանձր էր, որ չէր կրնար տեսնել նոյնիսկ իր ձեռքը: Այնպիսի՛ խաւար էր, որ անոր կը թուար, թէ ինքը հագած էր այն: Եւ ան ըսաւ.

– Ես այնքան վախցած էի, որ կը մտածէի՝ *աւելի վատ բան արդէն չի կրնար ըլլալ:* Բայց որքան աւելի կ'իյնայի, այնքան աւելի իմ վախը կը զօրանար: Ես երբեք այսպիսի վախ չէի զգացած երկրի վրայ: Այն անկարելի է բառերով նկարագրել:

Ան շարունակեց.

– Ատկէ՛ յետոյ ես առկայծող լոյսեր տեսայ. գիտէի, որ դժոխք կ'երթայի: Ես սկսայ գոչել. «Ինչո՞ւ ես հոս կ'երթամ: Ես քրիստոնեայ՛ն եմ»:

Մեր ընկերոջ մայրը եւ հայրը նուիրուած հաւատացեալներ էին, բայց ան պարզապէս եկեղեցի կը յաճախէր, քանի որ չէր կրնար չհնազանդիլ իր ծնողներուն:

Ան կը պատմէր, որ ատկէ՛ յետոյ վախի եւ տառապանքի ճիչեր լսած է: Ես վառ կերպով կը յիշեմ, թէ՛ ինչպէս ան ըսաւ.

– Ճո՛ն, Լի՛զա, կան հասարակ ճիչեր, բայց կան ճիչեր, որոնցմէ արհունդ երակներուդ մէջ կը սառի: Ես ճիշդ այդպիսի ճիչեր լսեցի:

Ան շարունակեց.

– Ատկէ՛ յետոյ ես երես առ երես բախեցայ թեփուկաւոր արարածի մը, որ շարունակ կ'ըսէր ինծի. «Եկո՛ւր հոս, դուն ի՛նչ ես»: Ես կը կռուէի անոր հետ: Սկիզբը վախէն չէի կրնար խօսիլ, բայց յետոյ պոռացի. «Ձգէ՛ զիս, ձգէ՛ զիս»:

Յանկարծ յայտնուեցայ մարմինիս մէջ: Ես կը պոռայի, եւ նոյնիսկ խածի այն բժիշկին ձեռքը, որ իր մատը կոկորդոս մտցուցած էր: Մայրս ըսաւ ինծի այդ մասին, երբ ես պատմեցի անոր, թէ՛ ինչ վերապրած էի: Ամբողջ այդ ընթացքին մայրս նստած էր վիրահատարանի միջանցքին եւ կ'աղաղակէր Աստուծոյ. «Հա՛յր, եթէ վերադարձնես որդիս, զինք ընդմիշտ Քեզի պիտի ընծայեմ»:

Տարիներ յետոյ իմ ընկերը ծառայութիւն սկսաւ Քարիպեան կղզիներուն մէջ:

Դուք կրնաք վիճարկել այն, ինչ որ ան վերապրած էր. այնուամենայնիւ, կան բազմաթիւ տղամարդիկ, կանայք եւ երեխաներ, որոնց հետ նման դէպքեր պատահած են: Մահամերձ փորձառութիւններ չափազանց յաճախ տեղի կ'ունենան բժիշկներու ներկայութեամբ, բայց քիչերը զբաղած են ատոնց հետազօտմամբ:

Նման հետազօտողներէն մէկը՝ Մելվին Մորգէ անունով բժիշկ մը, ընդարձակ հետազօտութիւն ըրած է՝ ներգրաւելով երեխաներ, որոնք մահամերձ փորձառութիւն ունեցած են: Դոկտոր Մորգէն ուսումնասիրած է երեխաներու երկու խումբ: Առաջին խումբը բաղկացած էր 3–16 տարեկան 121 երեխաներէ, որոնք ծանր հիւանդ էին, բայց մահամերձ չէին: Անոնց մարմինը միացուած էր արհեստական շնչառական գործիքներու, անոնք յաճախակի եւ տեւական խնամք կը ստանային կամ բարձր չափաբաժիններով դեղորայք կ'առնէին: Այս խումբի երեխաներէն ոչ ոք յայտնեց իր մարմինէն դուրս ելլելու մասին:

Երկրորդ խումբը բաղկացած էր նոյն տարիքային խումբի 12 երեխաներէ: Այս խումբին մէջ եղած էին սրտի աշխատանքի դադարեց-

ման, ինքնաշարժի արկածներու, ջուրին մէջ խեղդուելու եւ այլ դէպքեր: Այս փոքրիկ խումբին մէջ իւրաքանչիւրը իր մարմինէն դուրս ելլելու վերապրում ունեցած էր: Մէկ քանին կարճ ժամանակով տեսած էին իրենց մարմինները եւ պատմած էին բժիշկներուն այն, թէ ինչ կ'ընէին, երբ անոնք իրենց մարմինին հետ կ'աշխատէին:

Ոմանք կրնան մտածել, որ մեր ընկերոջ վերապրումը՝ պատրանքի արդիւնք էր: Այնուամենայնիւ, այս երեխաներուն հետ կատարուած դէպքերը համոզիչ կերպով ցոյց կու տան հակառակը: Բացի այդ՝ ինչպէ՞ս ան կրնայ պատրանքներ ունենալ իր մտքին մէջ, երբ գրեթէ երեսուն վայրկեան քլինիքապէս (ոչ վերջնական) մահացած եղած է:

Դժոխքը (Հատէսը) եւ Կրակի լիճը

Իմ ընկերը, ինչպէս նաեւ ինծի ծանօթ այլ մարդիկ, տեսած էին չարչարանքներու այն միջանկեալ վայրը, որ կը կոչուի դժոխք (կամ՝ Հատէս): Ասիկա փրկութիւն չստացած մարդոց յաւիտենական բնակավայրը չէ: Այն չարչարանքներով լեցուն սպասելավայր է, ուր չփրկուածները կը պահուին՝ մինչեւ Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Մշտական վայրը, ուր մարդիկ, դէւերը եւ իյնկած հրեշտակները յաւիտենութիւնը պիտի անցընեն իրենց դատաստանէն յետոյ, կը կոչուի *Կրակի լիճ*: Ասիկա ակնյայտօրէն կ'երեւայ հետեւեալ Աստուածաշնչեան հատուածէն.

«Ատկէ յետոյ եւ տեսայ Մեծ Սպիտակ գահը եւ Ջինք, Որ նստած էր ատոր վրայ... Եւ ծովը տուաւ այն մեռելներուն, որոնք իր մէջ էին, մահը եւ Հատէսը (դժոխքը) յանձնեցին իրենց մէջ եղած մեռելներուն, եւ բոլորը քննուեցան, եւ անոնց գործերը վճռուեցան՝ ըստ այն ամէնուն, ինչ որ անոնք ըրած են [համաձայն անոնց դրդապատճառներուն, նպատակներուն եւ գործերուն]: Ատկէ յետոյ մահը եւ Հատէսը նետուեցան կրակի լիճին մէջ: Ասիկա երկրորդ մահն է՝ կրակի լիճը: Եւ եթէ ինչ որ մէկուն [անունը] չգտնուեցաւ արձանագրուած Կեանքի գիրքին մէջ, զինք կրակի լիճը նետեցին» (Յայտնութիւն 20.11,13–15, AMP. երկու հատուած քառակուսի փակագիծերու մէջ բաց ձգուած է՝ պարզութեան համար):

Նախ՝ կ'ուզեմ նշել, որ անոնք, որոնք կը գտնուէին չարչարանքներու միջանկեալ վայրին մէջ՝ դժոխքին մէջ (Հատէսին մէջ), պիտի բերուին դատաստանի առջեւ: Հազիւ որ այս դատաստանը աւարտի, բոլոր գայթակղութիւնները եւ բոլոր անօրինութիւն գործողները պիտի նետուին Կրակի լիճը՝ ներառեալ դէւերը, իյնկած հրեշտակները եւ, անշուշտ, յատկապէս ինքը՝ դժոխքը (Հատէսը):

Տեսիլք Կրակի լիճին մասին

Կինս եւ ես ունինք ընկերներ, որոնք ազգութեամբ յոյն են: Այդ ամուսնացած զոյգի կինը՝ Ճոյը, երրորդ սերունդի ծառայող է: Անոր մեծ մայրը ծնած եւ մեծցած է Յունաստանի մէջ, եւ երիտասարդ տարիքէն փնտռած է զԱստուած: Անոր հարցումները՝ ուղղուած իրեն շրջապատող մարդոց, կ'ընդունուէին անտարբերութեամբ եւ ծաղրանքի առարկայ կը դառնային: Ան կ'ուզէր որեւէ եկեղեցի երթալ, բայց անոր կ'ըսէին, որ Աստուած չկայ, եւ ան պէտք է դադրի այդ անմտութեան մասին խօսելէ:

Օր մը, երբ Ճոյին մեծ մայրիկը, ազգային տօներէն մէկուն ժամանակ իր ընկերուիկներուն հետ իրենց գիւղի հրապարակին մէջ ազգային պարեր կը պարէր, ծայն մը խօսեցաւ անոր հետ «Եփրոսիմի՛, ձգտի՛ր յաւիտենական պարին»:

Ան անակնկալի եկաւ: «Ո՞վ խօսեցաւ հետս»,– մտածեց ան եւ անմիջապէս դադրեցաւ պարելէ ու տուն վազեց՝ յուսալով, որ պիտի ստանայ իր հարցումին պատասխանը: Վազելու ընթացքին անոր վրայ մեծ բռն մը եկաւ, ըսես մէջքին մեծ ծանրութիւն ըլլար:

Տուն մտնելուն պէս Եփրոսիմին անմիջապէս գնաց իր ննջասենեակը, ծունկի եկաւ եւ սկսաւ լալ: Ան կը ցանկար խօսիլ այդ ծայնին հետ: Ո՞վ կը խօսէր հետը: Ի՞նչ խօսքեր էին, որ ըսուեցան անոր: Ի՞նչ կը փորձէ ան ըսել ատորմով: Այս հարցերը կը տանջէին անոր միտքը, ինչ որ, սակայն, երկար չտեսեց: Հագիւ Եփրոսիմին ծունկները դպչած էին գետնին, երբ ան զգաց, որ կրակի պէս բան մը մտաւ իր սենեակը՝ կլանելով զինք: Ան ետ իյնկաւ եւ յայտնուեցաւ տեսիլքի մէջ:

Տեսիլքի մէջ տեսաւ սպիտակ հագած հրեշտակ մը, որ մօտեցաւ իրեն: Ան բարձրացուց Եփրոսիմին եւ տեղափոխեց վայր մը, ուր աղօտ լոյս էր: Հրեշտակը հոն ձգեց զինք: Ուշադիր նայելով՝ ան զարմանքով հասկցաւ, որ կանգնած էր Գողգոթայի տեսարանին առջեւ: Տէրը խաչին վրայ էր. արիւնը կը կաթէր Անոր վերքերէն: Ան տեսաւ տանջանքներու ենթարկուող Տիրոջ տառապեալ դէմքը:

Միեւնոյն ժամանակ Եփրոսիմին հեռուէն եկող ճիչեր լսեց: Ան դարձաւ՝ տեսնելու համար, թէ ուրկէ կու գային ատոնք, եւ տեսաւ մեծ անդունդ մը, որ կը գտնուէր խաչին եւ այդ վայրին միջեւ: Այն վայրը, ուրկէ կը լսուէին ճիչերը, անդունդի միւս կողմն էր: Գետնէն կրակի մեծ ալիքներ դուրս կը թռչէին. ատիկա կրակէ ովկիանոս էր: Ան կը լսէր ճիչեր, որոնք հոն գտնուող մարդոց մեծ բազմութիւնները կ'արձակէին: Անոնք կ'անիծէին զԱստուած: Այդ պահուն ան ուժ մը զգաց, որ կը հրէր իր գլուխը դէպի բաժնող անդունդի միւս կողմը, եւ այն ծայնը, որ ան արդէն լսած էր, խօսեցաւ հետը. «Դուն նոյնպէս պէտք է այս վայրին մէջ ըլլաս»:

Ան զարհուրեցաւ եւ սկսաւ լալ ու ողորմութիւն խնդրել իրեն համար: Ան իյնկաւ խաչափայտին մօտ՝ կրելով իր մէջքին այն ծանր բեռը, որ զգացած էր ատկէ առաջ, եւ մնաց հոն՝ որոշ ժամանակ լալով: Այդ ծայրնը՝ լեցուն էր սիրով եւ գթասրտութեամբ, կրկին խօսեցաւ իր հետ. «Ան ըրաւ ատիկա քե՛զի համար: Ան մահացաւ քե՛զի համար: Եթէ ներում խնդրես եւ ընդունիս այն գոհը, որ Ան ըրաւ քեզի համար, դուն ստիպուած չես ըլլար երթալ հոն (Կրակի լիճը)»:

Ատկէ յետոյ Եփրոսիմին անելի գօրաւոր լացաւ՝ անմիջապէս արծազանգելով այդ ծայնի խօսքերուն: Ան ներում խնդրեց, եւ այն բեռը, որ կը կրէր, անմիջապէս վեր բարձրացուեցաւ եւ գլորեցաւ դէպի խաչը:

Ան վեր նայեցաւ ու իր առջեւ տեսաւ Տէր Յիսուսը՝ կեցած Իր փառաւոր կերպարանքով: Տէր Յիսուսը բարձրացուց զինք եւ տարաւ անչափ գեղեցիկ կանաչ լերան մը վրայ: Այժմ Եփրոսիմին կրնար հաղորդակցիլ Անոր հետ իր մտքին մէջ: Ան հարցեր կու տար, իսկ Յիսուս կը պատասխանէր: Ատիկա զարմանալի՛ էր: Ան հարցուց, թէ ուր կ'երթային անոնք, եւ Յիսուս պատասխանեց. «Հանդիպելու քու Երկնային Հօրը»:

Մինչ անոնք կը մօտենային լերան գագաթին, ան տեսաւ դարպաս մը, ուրկէ լոյս կը ճառագէր: Ծաղիկներէն եւ ծառերէն բխող գեղեցիկ հրեշտակային երաժշտութիւնը եւ երգեցողութիւնը կը սփռուէր ամենուր: Անոնք հասան գագաթին եւ ներս մտան այդ դարպասով: Ատիկա անհաւատալի՛ էր: Այդ գեղեցկութիւնը աննկարագրելի՛ էր:

Անոնք գացին ուղիղ դէպի գահը: Եփրոսիմին չտեսաւ Աստուծոյ երեսը, քանի որ այն ծածկուած էր, բայց տեսաւ մեծ գիրք մը եւ ձեռք մը, որ դուրս ելաւ ամպերէն: Այն սկսաւ գրել: Ան առաջ գնաց՝ տեսնելու, թէ ինչ կը գրուէր, եւ ի զարմանս իրեն՝ տեսաւ իր անունը Կեանքի գիրքին մէջ (թէեւ այդ ժամանակ ան չէր գիտեր, որ ատիկա Կեանքի գիրքն էր):

Երբ երկնային Հայրը գրեց անոր անունը Կեանքի գիրքին մէջ, Ան ըսաւ. «Բարի գալո՛ւստ ընտանիք», եւ համբուրեց Եփրոսիմինին ճակատը: Այդ պահուն ան տեսաւ շրջանակ կազմած հրեշտակներ, որոնք մեծ ուրախութեամբ կ'երգէին եւ կը պարէին: Ան միացաւ անոնց: Այդ տեսիլքէն շատ ժամանակ յետոյ ան գիտցաւ, որ հրեշտակները կ'ընէին ատիկա ի պատիւ իրեն, քանի որ ինքը փրկուած էր:

Որոշ ժամանակ յետոյ Տէրը խօսեցաւ անոր հետ եւ ըսաւ, թէ ժամանակն է, որ ան երկիր վերադառնայ, որովհետեւ Ինքը մեծ գործ ծրագրած էր անոր համար: Եփրոսիմին պէտք է անցնէր կրակէ փորձութիւններով Անոր անուան համար, բայց Տէրը անոր հետ պիտի ըլլար, եւ երբ

այդ ամէնը աւարտէր, ան պիտի վերադառնար, որպէսզի յաւիտեան Տիրոջ հետ ըլլար:

Այդ պահուն Եփրոսիմին կրկին յայտնուեցաւ տունը: Ան մեծապէս հիասթափած էր, որ երկիր վերադարձած էր իր երկնային ճամբորդութենէն, բայց չէր կրնար փոխել ասիկա:

Երբ գիւղին մէջ տարածուեցաւ Եփրոսիմինին վերապրման մասին լուրը, հալածանք սկսաւ: Այն սկսաւ անոր հօրմէն, որ սպառնաց, որ կացինով պիտի սպաննէ զինք, եթէ ան չուրանայ իր հաւատքը: Եփրոսիմին ըսաւ, որ երբեք չի կրնար ուրանալ այն, ինչ որ վերապրած է:

Երեկոյ մը հալածանքը ա՛լ աւելի խստացաւ: Եփրոսիմինին քոյրը զգուշացուց զինք, որ յաջորդ առաւօտեան քանի մը մարդիկ որոշած էին անոնց տունը երթալ եւ զինքը գիւղի հրապարակը տանիլ, ուր յոյն ուղղափառ եկեղեցի մը կար: Անոնք դուրս հանած էին Մարիամի սրբապատկերը, եւ եթէ ան չխոնարհէր՝ ի նշան երկրպագութեան, եւ չհամբուրէր այն, անոնք վառելանիւթ պիտի թափէին անոր մարմինին վրայ եւ պիտի այրէին:

Եփրոսիմին չէր հաւատար, որ մարդիկ այդքան հեռու պիտի երթային, բայց, հաւանաբար, անոնք որոշած էին ընել ասիկա, քանի որ այդ գիշեր հրեշտակ մը՝ Տիրոջմէն ուղարկուած եկաւ երիտասարդ Եփրոսիմինին քով եւ արթնցուց զինք՝ հրելով անոր ուսը: Հազիւ որ ան արթնցաւ, հրեշտակը պատուիրեց անոր հագնիլ եւ մօտենալ իր տան մուտքի դրան: Ան հնազանդեցաւ, եւ հասնելով մուտքին՝ զգաց, որ ինչ որ մէկը բարձրացուց զինք զետնէն: Ան ֆիզիքապէս տեղափոխուեցաւ իր տունէն եւ իջաւ քանի մը քիլօ մեթր հեռու գտնուող գիւղ մը, ուր անոր ոչինչ կը սպառնար:

Աննկարագրելի չարչարանք

Ճոյի մեծ մայրը չէր տեսած դժոխքը (Հատէսը): Ան տեսած էր Կրակի լիճը, որ նոյնպէս կը կոչուի «երկրորդ մահ»: Անոր կեանքը փոխուած էր, որովհետեւ ան ի սրտէ որոշած էր հետեւիլ Յիսուս Քրիստոսին: Աստուածաշունչը կը պատուիրէ մեզի.

«Բայց վախկոտները, որոնք կը դառնան Ինծի (Յիսուսին) հետեւելէն, եւ անոնք, որոնք անհաւատարիմ են Ինծի, ե՛ւ պիղծերը, ե՛ւ մարդասպանները, ե՛ւ անբարոնները, ե՛ւ անոնք, որոնք կը հաղորդակցին դեւերու հետ, ե՛ւ կուռք պաշտողները, ե՛ւ բոլոր ստախօսները՝ անոնց վիճակուած է Կրակի լիճը, որ կը վառի կրակով եւ ծծումբով: Ասիկա Երկրորդ մահն է» (Յայտնութիւն 21.8, TLB):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ այդ լիճը «կը վառի կրակով եւ ծծումբով»: Ծծումբը՝ ոչ մետաղեայ նիւթ է, որ այրելու ժամանակ ուժգին ջերմութիւն կ'արտադրէ եւ տհաճ հոտ կ'արձակէ: Անոնք, որոնք կը նկարագրէին դժոխքը, կը պատմէին ատոր սարսափելի գարշահոտութեան մասին: Անոնք կ'ըսէին, որ այն «անտանելի» է: Այդ վայրին մէջ եղած մարդիկ, որոնց ես կը ճանչանամ, կ'ըսեն ինծի, որ անկարելի է մարդկային բառերով նկարագրել այն տառապանքը եւ սարսուռը, որ կը վերապրին մարդու զգայարանները:

Նոյնպէս, ուշադրութիւն դարձուցէ՛ք «երկրորդ մահը» թերմինին: Յիսուս կ'ըսէ. «Ով որ ականջ ունի, թող լսէ, թէ Հոգին ինչ կ'ըսէ եկեղեցիներուն: Ան, որ կը յաղթէ, երկրորդ մահէն պիտի չվնասուի» (Յայտնութիւն 2.11):

Թերեւս ձեզի տարօրինակ թուայ, որ Յիսուս ասիկա եկեղեցիներուն կ'ըսէ: Այնուամենայնիւ, ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ վերոյիշեալ խօսքին մէջ գրուած է երեք տեսակի մարդոց մասին, որոնք պիտի վառին Կրակի լիճին մէջ: Առաջինը անոնք են, որոնք դադրած են Անոր հետեւելէն: Երկրորդը անոնք են, որոնք անհաւատարիմ եղած են Անոր: Երրորդը՝ մեղաւորներն են, որոնք երբեք չեն ապրած Անոր հետ: Առաջին երկու խումբերը, որոնց մասին գրուած է այս խօսքին մէջ, ժամանակ մը եկեղեցւոյ մէջ եղած են:

Յիշեցէ՛ք առաջին երեք հերոսները, որոնց մասին մենք կը խօսէինք մեր այլաբանական պատմութեան մէջ՝ Յուսահատ սիրտը, Խաբուածը եւ Անկախը: Անոնցմէ երկուքը աշխոյժ էին Էնտելի դպրոցին մէջ, որ եկեղեցւոյ խորհրդապատկերն է: Շուտով մենք աւելի խորապէս պիտի անդրադառնանք այս հարցին:

Երկրորդ մահը՝ Կրակի լիճին մէջ յաւիտեան չարչարուիլն է: Կրկին յիշեցէ՛ք առաջին գլուխը, որուն մէջ մենք կը խօսէինք յաւիտենութեան մասին. յաւիտեանս յաւիտենից՝ առանց աւարտի, առանց թեթեւութեան կամ առանց ազատելու հնարաւորութեան: Ոմանք կը կարծեն, որ այս չարչարանքը ի վերջոյ պիտի աւարտի, բայց ասիկա պարզօրէն կը հակասէ Աստուծոյ խօսքին: Սուրբ գիրքը կը պնդէ. «Եւ պիտի չարչարուին գիշեր ու ցերեկ յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն 20.10):

Աւելի յստակ ցոյց տալու համար, որ այս չարչարանքը անվերջ է, Յիսուս կ'ըսէ հետեւեալ խօսքերը բոլոր այն մարդոց մասին, որոնք չեն հնազանդիր Իր խօսքին. «Ասոնք պիտի երթան յաւիտենական տանջանքը, իսկ արդարները՝ յաւիտենական կեանքը» (Մատթէոս 25.46):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «յաւիտենական տանջանք» բառերուն: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ այդ տանջանքը երբեք չ'աւարտիր: Այն յաւիտենական է: Յիսուսը կ'ըսէ մեզի.

«Եւ եթէ քու աչքը կը դրդէ քեզ սայթաքելու եւ մեղք գործելու, հանէ՛ այն: Քեզի համար աւելի օգտակար ու բարեբար է, որ մտնես Աստուծոյ թագաւորութիւնը մէկ աչքով, քան երկու աչքով նետուիս դժոխքը (Գեհեննը)» (Մարկոս 9.47, AMP):

Ինչպէս կը տեսնէք, Յիսուս կը խօսի Գեհենի՝ Կրակի լիճին մասին: Այժմ տեսէք, թէ ինչպէս գրուած է այս հաստուածը մէկ ուրիշ թարգմանութեան մէջ:

«Եւ եթէ քու աչքը կը դրդէ քեզ կորսնցնելու քու հաւատքը, հանէ՛ այն: Աւելի լաւ է, որ մտնես Աստուծոյ թագաւորութիւնը միայն մէկ աչքով, քան պահես երկու աչքերդ եւ դժոխքը նետուիս: Այդտեղ «որդերը, որոնք կ'ուտեն զանոնք, երբեք չեն մեռնիր, եւ կրակը, որ կ'այրէ զանոնք, երբեք չի մարիր»» (Մարկոս 9.47,48, TEV):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ անոնց ուտող որդերը երբեք չեն մեռնիր, ինչ որ կը նշանակէ, որ անոնք մշտապէս կերակուր ունին: Եկէ՛ք համեմատենք ասիկա բնական աշխարհին մէջ տեղի ունեցածին հետ: Հազիւ որ մարդը ֆիզիքապէս կը մահանայ, որդերը կ'ուտեն անոր մարմինը, մինչեւ որ այն կը սպառի, եւ կը մնան միայն ոսկորները: Ատկէ յետոյ որդերը կը մահանան: Գեհենի մէջ գտնուող որդերը չեն մահանար, քանի որ այն, ինչ որ անոնք կը սպառեն, երբեք չի դադրիր գոյութիւն ունենալէ: Մարդ մը, որ եղած էր դժոխքին մէջ, կը պատմէր, որ տեսած է մեծ որդեր, որոնք մարդոց միսը կ'ուտէին, բայց կարելոր չէ, թէ որքան ժամանակ այդ մարդիկ դժոխքի մէջ էին. անոնց վրայ միշտ միս կար, որ կարելի էր ուտել:

Այո՛, դուք ճիշդ կը հասկնաք. այդ վայրը աննկարագրելի է: Դուք պէտք է մտապահէք, որ Աստուած չէր ստեղծած Կրակի լիճը մարդոց համար: Ահա թէ Յիսուսը ինչ կ'ըսէ այն մարդոց, որոնք կը նետուին այդ ահռելի վայրը.

«Այն ատեն ձախ կողմիններուն ալ պիտի ըսէ. «Մէկդի գացէ՛ք Ինձմէ, անիծեալներ, յաւիտենական կրակին մէջ, որ պատրաստուած է սատանային ու իր հրեշտակներուն»» (Մատթէոս 25.41):

Կրակի լիճը ստեղծուած էր սատանային եւ անոր անկում ապրած հրեշտակներուն համար, ոչ թէ՝ մարդկութեան: Այնուամենայնիւ, սատանան կը խաբէ շատերը՝ իր հետ յաւիտենական դատաստանի տանելով: Ասիկա նման է մեր այլաբանութեան. Տակոնի ազդեցութեան արդիւնքով շատերը խաբուեցան, եւ Ճէյլընի բարկութիւնը, որ նախատեսուած էր Տակոնի համար, պէտք է գործադրուէր նաեւ այն մարդոց

հանդէպ, որոնք առիթ տուած էին անոր ազդեցութեան: Հակառակ պարագային, Ճէյլընը արդար չէր ըլլար:

Յաւիտենական բարեկեցութիւն

Նախորդ գլուխին մէջ մենք տեսանք, թէ որքան զօրաւոր կերպով կ'արտայայտուի Ճէյլընին բարկութիւնը: Աստուածաշունչը կը յայտարարէ, որ այն տղամարդը կամ կինը, որ «Աստուծոյ սրտմտութեան գինիէն պիտի խմէ... պիտի տանջուի կրակի եւ ծծումբի մէջ սուրբ հրեշտակներուն եւ Գառնուկին առջեւ: Եւ անոնց տանջանքին ծուխը վեր կ'ելլէ յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն 14.10,11):

Եւս մէկ անգամ՝ «յաւիտեանս յաւիտենից»: Կը յիշէ՞ք, երբ այս գիրքի առաջին գլուխին մէջ կը խօսէինք յաւիտենութեան մասին, այսինքն՝ այն մասին, որ մենք կը փորձենք ընկալել այն, ինչ որ երբեք չ'աւարտիր: Դուք չէք կրնար ընկալել աստիկա ձեր մտքով, բայց կրնաք հասկնալ ձեր սրտով: Այս պատճառով Աստուած կը սգար ամբողջ սերունդի մը համար, որ չլսեց Ձիւնք.

«Երանի՛ թէ անոնց սիրտն ալ այնպէս ըլլար, որ Ինծմէ վախճալով միշտ Իմ բոլոր պատուիրաններս պահէին, որպէսզի իրենց աղէկ ըլլար եւ իրենց որդիներուն ալ յաւիտեան» (Երկրորդ Օրինաց 5.29):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «*յաւիտեան*» բառին: Երանի՛ այդ մարդիկ առաջնորդուէին մնայուն բաներով. երանի՛ անոնք յաւիտենութեամբ շարժէին:

Նոյնպէս, ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Աստուած ըսաւ. «Իմ բոլոր պատուիրանները պահէին ամէն ժամանակ»: Ան չըսաւ. «Իմ բոլոր պատուիրանները պահէին *որոշ ժամանակ*», եւ ո՛չ ալ՝ «Իմ պատուիրաններու *մէկ նասը* պահէին ամէն ժամանակ»: Ո՛չ, գրուած է՝ *մշտապէս* պահել *բոլոր* պատուիրանները: Մեզի պատուիրուած է լիովին եւ մշտապէս հնազանդիլ Աստուծոյ:

Թերեւս մտածէ՛ք. «*Ես չեմ պահած Անոր բոլոր պատուիրանները: Ես մեղաւոր պիտի գտնուիմ դատաստանի ժամանակ*»: Այո՛, դուք բոլորովին ճիշդ էք: Աստուծոյ օրէնքը ցոյց կու տայ եւ կ'ապացուցէ, որ ոչ մէկ մարդ կը համապատասխանէ Աստուծոյ արդար չափանիշին, եւ որ բոլորը մեղաւոր պիտի գտնուին դատաստանի ժամանակ: Ոչ մէկ մարդ պիտի կարենայ կենալ Աստուծոյ առջեւ եւ ըսել. «Ես այնպէս ապրած եմ, որ արժանի եմ Քու թագաւորութեան, եւ արժանի չեմ յաւիտենական պատիժ ստանալուն»:

Մեր սխալներուն պատճառը անիկա է, որ ամենասկիզբը՝ պարտեզին մէջ, մարդը գիտակցաբար անհնազանդութեան առիթ տուաւ Աստուծոյ հանդէպ: Որպէս հետեւանք՝ ան ծեռք բերաւ մեղաւոր բնութիւնը: Իր դաւաճանութեան արդիւնքով ան դարձուց ինքզինքը սատանային ստրուկը եւ անոր տիրոյթի գերին: Ան ոչ մէկ կերպով կրցած էր փրկել կամ ազատել ինքզինքը: Այս անկում ապրած բնութիւնը փոխանցուեցաւ Ադամի եւ Եւայի իւրաքանչիւր ժառանգին, այսինքն՝ ամբողջ մարդկութեան, քանի որ մենք կը ծնինք մեր ծնողներուն բնութեամբ:

Միմիայն Իր սիրոյ շնորհիւ Աստուած խոստում տուաւ, որ թէեւ մարդկութիւնը բոլորովին պատասխանատու էր իր անկում ապրած վիճակին համար, Ան Փրկիչ պիտի ուղարկէր՝ մեզ ազատելու համար: Այդ Փրկիչը՝ Յիսուս Քրիստոսն է: Անոր ծնունդէն հարիւրաւոր տարիներ առաջ մարգարէութիւն մը եղած էր այն մասին, որ Ան պիտի ծնի կոյսէ մը (տե՛ս Եսայեայ 7.14): Անոր Հայրը պիտի ըլլար Աստուած, իսկ մայրը՝ Մարիամ անունով կոյս աղջիկ մը, որ Դաւիթ թագաւորին ցեղէն էր: Այսպէս պէտք է ըլլար, քանի որ եթէ Յիսուսին երկու ծնողներն ալ մարդ ըլլային, Ան նոյնպէս ադամական բնութեան գերին պիտի ըլլար: Ան մեղքի ստրուկ պիտի ըլլար: Ան չէր կրնար ապրիլ կատարեալ կեանքով, եւ կը նշանակէ՝ չէր կրնար փրկել մեզ: Բայց եւ այնպէս, Ան պէտք է ծներ կնոջմէն, քանի որ մարդը անկում ապրած էր, եւ մարդն ալ պէտք է վճարեր մեր դաւաճանութեան գինը: Այսպիսով, Յիսուս՝ հարիւր տոկոսանոց Աստուած եւ հարիւր տոկոսանոց մարդ էր:

Խաչուելով՝ Յիսուս մեր բոլոր մեղքերը Իր վրայ կրեց: Ան մահացաւ եւ թափեց Իր արիւնը՝ վճարելով մեր մեղքերուն գինը: Այնուամենայնիւ, քանի որ Ան ապրեցաւ կատարելապէս արդար կեանքով, Հայրը յարութիւն տուաւ Անոր մեռելներէն եւ նստեցուց Իր աջ կողմը: Դաւիթ թագաւորը, որ նաեւ մարգարէ էր եւ Յիսուսին նախահայրերէն մէկը, կանխասեց այն, ինչ որ պէտք է տեղի ունենար Յիսուսին խաչելութենէն յետոյ՝ այդ դէպքերէն աւելի քան հազար տարի առաջ: Պետրոսը յիշատակեց անոր խօսքերը Պենտեկոստէի օրը՝ հռչակելով.

«Արդ որովհետեւ անիկա [Դաւիթ թագաւորը] մարգարէ էր եւ գիտէր, թէ Աստուած հաստատ երդում ըրաւ իրեն, թէ երկկամունքներու պտուղէն՝ մարմնի կողմանէ՝ Քրիստոսը պիտի յարուցանէ, որ Իր պառօնը նստի. Ինք կանխատեսութեամբ խօսեցաւ Քրիստոսին յարութեանը համար եւ թէ Անոր անձը գերեզմանը (կամ՝ դժոխքը, Հատկապէս) չթողուեցաւ եւ Անոր մարմինը ապականութիւն չտեսաւ: Աստուած այս Յիսուսը յարուցանեց, Որուն մենք ամէնքս ալ վկայ ենք» (Գործք 2.30–32):

Աստուած Յիսուսին յարութիւն տուաւ մեռելներէն՝ մեզ ազատելու համար: Ուշադրութիւն դարձուցէ՛ք Պետրոսի խօսքերուն. Ան կ'ըսէ, որ Յիսուս չձգուեցաւ Հատէսի մէջ, ինչ որ կը նշանակէ, որ Ան հոն էր: Ե՞րբ հոն էր Ան: Ինչ որ ժամանակ խաչի եւ յարութեան միջեւ: Յիսուս բոլորիս փոխարէն ճաշակեց մահը կամ դժոխքը, որպէսզի մենք ստիպուած չըլլանք ստանալու մեր արդար յաւիտենական պատիժը: Երբ կ'ուրանանք մեր եսակեդրոն կեանքը եւ լիովին անձնատուր կ'ըլլանք Քրիստոսի իշխանութեան, Անոր կատարած աշխատանքը՝ Իր արիւնը թափելը եւ մահը ճաշակելը, կը դառնայ ե՛ւ մեր փրկագինը, որ կ'ազատէ մեզ, ե՛ւ արդարացունը Աստուծոյ առջեւ: Մենք արդար դիրք ձեռք կը բերենք Անոր արդարութեամբ եւ կրնանք վստահաբար կենալ Անոր դատաստանի գահին առջեւ: Փա՛ռք Աստուծոյն յաւիտեան:

Այդ իսկ պատճառով, Աստուծոյ խօսքը յստակօրէն կը յայտնէ. «Աստուած փրկեց ձեզ Իր յատուկ բարեհաճութեամբ, երբ դուք հաւատացիք: Եւ դուք չէք կրնար համարել, որ ասիկա ձեր արժանիքն է. ասիկա պարգէւ է Աստուծմէ: Փրկութիւնը վարձատրութիւն չէ այն բարի գործերուն համար, որոնք մենք ըրած ենք, որպէսզի մեզմէ ոչ ոք պարծենայ ատորմով» (Եփեսացիս 2.8,9, NLT):

Եթէ դուք երբեք չէք ապաշխարած Աստուծմէ անկախ ապրելու համար, չէք ուրացած ձեր մեղաւոր ճանապարհները եւ բոլորովին չէք յանձնած ձեր կեանքը Յիսուսի իշխանութեան, ճիշդ հիմա բացէ՛ք գիրքի վերջին Յաւելուածը: Այդ բաժինին մէջ ես պիտի բացատրեմ Աստուծոյ ծրագիրը ձեր փրկութեան համար եւ պիտի աղօթեմ ձեր հետ, որպէսզի ընդունիք Յիսուս Քրիստոսը՝ որպէս ձեր Տէր եւ Փրկիչ:

Շատ հաւատացեալներ քաջատեղեակ են այն մասին, ինչ որ ներկայացուցի վերջին քանի մը էջերուն մէջ: Այնուամենայնիւ, ես յայտնաբերած եմ, որ անոնք լիովին չեն հասկնար այն, ինչին մասին որ ես պիտի խօսիմ յառաջիկայ երկու գլուխներուն մէջ: Իրականութեան մէջ, շատ մարդիկ, որոնք որ կը դաւանին, որ քրիստոնեայ են, ցնցուած պիտի ըլլան այն պարզ Աստուածաշնչեան ճշմարտութիւններէն, որոնք մենք պիտի դիտարկենք յաջորդ էջերուն մէջ: Յառաջիկայ գլուխներուն մէջ մենք նոյնպէս պիտի խօսինք այն մասին, թէ ինչու ճշմարտութիւնը յաւիտենական պատիժի մասին՝ կը համարուի հիմնարար գիտելիք, որ անհրաժեշտ է իւրաքանչիւր հաւատացեալի՝ առողջ հոգեւոր աճ ունենալու համար:

ԽԱՐՈՒԱԾՆԵՐՈՒ ԴԱՏԱՏԱՆԸ

«Մենք գիտենք, որ Աստուծոյ դատաստանը

ճշմարտութեամբ է...»:

— Հռովմայեցիս 2.2

Յիսուսը եկաւ՝ փրկելու մեզ մեղքի յաւիտենական պատիժէն, որ սկիզբը նախատեսուած էր միայն սատանային եւ անոր դեւերուն համար: Տալով Իր կեանքը մեզի համար՝ Ան յայտնեց Աստուծոյ զարմանալի սէրը:

Մտածեցէ՛ք հետեւեալին մասին. սկիզբը, երբ Տէրը ստեղծեց մարդկութիւնը, կենդանիները, թռչունները, միջատները, ծովային կենդանիները, այն ամէնը, ինչ որ կայ երկրի վրայ եւ նոյնիսկ՝ մթնոլորտը, ամէն ինչ կատարեալ էր: Գրուած է. «Եւ Աստուած իր բոլոր ըրածը տեսաւ: Ահա շատ բարի էր» (Ծննդոց 1.31): Այնուհետեւ Ան վստահեցաւ Իր կատարեալ ստեղծագործութիւնը մարդուն, որպէսզի ան հսկէր եւ պահպանէր այն: Համաձայն սաղմոսերգոյի հռչակման՝ «Երկինքը կը պատկանի միայն Տիրոջը, բայց Ան երկիրը մարդուն տուաւ» (Սաղմոս 115.16, TEV): Ադամը պարտաւոր էր պաշտպանելու ոչ միայն ինքզինքը, այլեւ՝ ամբողջ ստեղծագործութիւնը Աստուծոյ գլխաւոր թշնամի Լիցիֆերէն:

Աստուած չէր ուզեր ռոպոթներ, որոնք չէին ունենար Ջինք սիրելու, հնազանդելու եւ Իր հետ հաղորդակցելու ազատ ընտրութիւն: Այնպէս որ, Ան տուաւ հետեւեալ պատուէրը պարտէզին մէջ գտնուող անթիւ ծառերէն մէկուն վերաբերեալ. «Դուն կրնաս ուտել պարտէզին մէջ գտնուող որեւէ մէկ ծառի պտուղը՝ բացի այն ծառէն, որ կու տայ գիտելիք բարիի եւ չարի մասին: Դուք պէտք չէ ուտէք այդ ծառին պտուղը. եթէ ուտէք, նոյն օրը պիտի մահանաք» (Ծննդոց 2.16,17, TEV):

Աստուած չէր խօսեր ֆիզիքական մահուան մասին, որովհետեւ Ադամը մահացաւ այդ պատուիրանը խախտելէն շատ տարիներ յետոյ (թէեւ առիկա նոյնպէս անոր անհնազանդութեան հետեւանքներէն մէկն էր): Փոխարէնը՝ Տէրը ցոյց տուաւ մարդուն, որ ան պիտի առանձնանայ Աստուծոյ կեանքէն եւ ձեռք պիտի բերէ Լիցիֆերի բնութիւնը, որ ճիշդ մահ է:

Որոշ ժամանակ յետոյ Լիցիֆերը խաբեց Եւան՝ աղաւաղելով Աստուծոյ բնաւորութիւնը անոր մտքին մէջ: Ան կրցաւ շեղել Եւային ուշադրու-

թիւնը բոլոր հասանելի ծառերէն դէպի միակ արգիլուածը: Հազիւ որ Եւան որոշեց, որ այդ ծառը բարի, օգտակար եւ հաճելի էր, ան կերաւ ատկէ: Պատճառը այն էր, որ իր մտքին մէջ ան սկսաւ համարել, որ Տէրը զրկող է, ոչ թէ ամէն ինչ առատապէս շնորհող: Այնուամենայնիւ, այդ պահուն մարդկութիւնը տակաւին անկում չէր ապրած: Աստուծոյ ստեղծագործութիւնը ձեռք չբերաւ մահուան բնութիւնը մինչեւ այն պահը, երբ Եւային ամուսինը կերաւ արգիլուած ծառի պտուղէն: Այս պատճառով, Ադամին մեղքը ատելի մեծ էր: Եւան խաբուած էր, իսկ ան՝ ոչ (տե՛ս Ա. Տիմոթէոս 2.14):

Հետեւեալը, ոչ միայն Ադամը, այլեւ՝ ամբողջ ստեղծագործութիւնը, որուն վրայ ան կարգուած էր, անմիջապէս ձեռք բերաւ մահուան բնութիւնը: Մինչեւ Ադամի դաւաճանութիւնը, կենդանիները չէին սպաններ զիրար, չէին ուտեր իրար միս, եւ ո՛չ ալ կը մահանային: Պտտահողմեր, երկրաշարժեր, փոթորիկներ, սովեր, հիւանդութիւններ եւ համաճարակներ գոյութիւն չունէին: Այդ ամէնը առաջացաւ, քանի որ մարդը չհսկեց այն, ինչ որ Աստուած վստահած էր իրեն: Գրուած է.

«Ամէն բան երկրի վրայ ենթարկուեցաւ Աստուծոյ անէծքին՝ սեփական կամքին հակառակ: Ամբողջ ստեղծագործութիւնը կ'ակնկալէ այն օրուան, երբ այն պիտի միանայ Աստուծոյ զաւակներուն՝ փառաւոր ազատութեան մէջ մահէն եւ քայքայումէն» (Հռովմայեցիս 8.20,21, NLT):

Բնութիւնը մահուան անէծքը իր ընտրութեամբ չի կրեր, այլ՝ մարդու անհնազանդութեան պատճառով: Ադամը չպաշտպանեց այն, ինչ որ վստահուած էր իրեն: Անոր պատճառով ոչ միայն բնութիւնը, այլեւ՝ ինքը, իր կինը եւ իրենց ապագայ սերունդները կրեցին այն անէծքը, որ սկիզբը միայն Լիցիֆերը կը կրէր: Այդ անէծքը Աստուծո՛մէ առանձնացուած ըլլալն է: Ինչպիսի՞ դաւադրութիւն: Ինչպիսի՞ դաւաճանութիւն:

Երբ ատիկա տեղի ունեցաւ, Աստուած կրնար ըսել. «Մարդկութիւնը, որուն Ես սիրեցի, օրհնեցի եւ ստեղծեցի կատարեալ ձեւով, ձգեց Ձիս՝ գերադասելով Լիցիֆերը: Թող որ բոլորը երթան Կրակի լիճը, իսկ Մենք (Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին) ամէն ինչ նորէն կը սկսինք: Մենք կը ստեղծենք մէկ այլ տիեզերք՝ այնպիսի արարածներով, որոնք հաւատարիմ կը մնան Մեզի եւ կը սիրեն Մեզ՝ ինչպէս Մենք կը սիրենք զանոնք:

Եթէ Աստուած այդպէս վարուէր, Ան լիովին արդար կ'ըլլար Իր որոշումին մէջ: Այնուամենայնիւ, դրդուած Իր զարմանալի սէրէն՝ Ան խոստացաւ մարդկութեան, որ Փրկիչ մը պիտի ուղարկէ, որպէսզի ազատէ մեզ այն գերութենէն, որուն մէջ մենք յայտնուեցանք: Այդ Փրկիչը պիտի ըլլար Իր Որդին, Որուն հետ Ան ստեղծեց երկինքը եւ երկիրը: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Որդին պիտի վճարէր մեր մեղքի, ինչպէս նաեւ՝ մահուան բնութեան սարսափելի գինը, թէեւ ամենասկիզբէն ի վեր Ան ոչինչ ըրած էր՝ մարդկութիւնը սիրելէն բացի: Աստուծոյ սէրը զարմանալի է:

Ահա թէ ինչու Յիսուս խաչուեցաւ Գողգոթային մէջ: Ես կը զարմանամ, որ քրիստոնէաները չեն կրնար պատասխանել, երբ ոեւէ անհաւատ կը հարցնէ. «Ինչպէ՞ս կրնայ սիրող Աստուած դժոխք ուղարկել այն մարդիկը, որոնք չեն լսած Աւետարանը»: Ես պարզ պատասխան մը ունիմ. «Աստիկա ոչ թէ Աստուծոյ մեղաւորութիւնն է, այլ՝ մերը»: Յիսուս սարսափելի գին վճարեց՝ մարդկութիւնը ազատ արձակելու համար: Ասկէ յետոյ Ան պատուիրեց այն մարդոց, որոնք արդէն գիտեն այս բարի լուրը, երթալ ամբողջ աշխարհի տարածքով եւ պատմել անոնց, որոնք չեն գիտեր, թէ մենք փրկագնուած ենք այն անէծքէն, որ բերած ենք թէ՛ մեր, թէ՛ ամբողջ ստեղծագործութեան վրայ: Մենք պէտք է հաշիւ տանք մեր սերունդին համար: Աստուած կատարած է Իր բաժինը մարդկութեան փրկութեան գործին մէջ:

Մենք կը ստանանք Աստուծոյ բնութիւնը

Բացի այն, որ Յիսուս կրեց մեր մեղքերուն պատիժը, Անոր մէջ մենք նոր բնութիւն ստացանք՝ Աստուծոյ բնութեան նմանութեամբ: Մենք այլեւս մեղքի ստրուկներ չենք: Երբ մարդը ամբողջովին կը նուիրէ իր կեանքը Յիսուսին, ան բոլորովին նոր ստեղծուած կը դառնայ:

«Երբ ինչ որ մէկը քրիստոնէայ կը դառնայ, ան լիովին նոր մարդ կը դառնայ իր մէջէն: Ան այլեւս նոյնը չէ: Սկսած է նոր կեանք» (Բ. Կորնթացիս 5.17, TLB):

Մենք բառացիօրէն կը մահանանք, երբ կ'ընդունինք Յիսուս Քրիստոսը՝ որպէս Տէր: Աստուծոյ համար մեր հին բնութիւնը կը սպաննուի՝ խաչուելով Քրիստոսի հետ: Այս կերպով մենք վերստին կը ծնինք: Այժմ մենք ազատ ենք այն բնութենէն, որ ժամանակ մը կը ղեկավարէր մեր կեանքը: Աստուածաշունչը պարզօրէն ցոյց կու տայ. «Եւ ինչպէս որ Քրիստոսը յարութիւն առաւ մահացածներէն Հօր փառաւոր զօրութեամբ, այժմ մենք նոյնպէս կրնանք նոր կեանք ունենալ... Մեր հին անձերը խաչուեցան Քրիստոսի հետ, որպէսզի մեղքը կորսնցնէ իր իշխանութիւնը մեր կեանքին մէջ: Մենք այլեւս մեղքի ստրուկներ չենք: Որովհետեւ երբ մենք մահացանք Քրիստոսին հետ, ազատեցանք մեղքի իշխանութենէն» (Հռովմայեցիս 6.4, 6–8, NLT): Այժմ կրնանք ապրիլ համաձայն Քրիստոսի բնութեան, ոչ թէ այն բնութեան, որուն մենք գերի դարձած էինք Ադամի ուխտադրժութեան պատճառով:

Բացարձակ տգիտութիւն է, երբ քրիստոնէան կ'անարգէ ինչ որ մէկը, որ չէ ընդունած Յիսուսը որպէս իր Տէրը, անոր կեանքի ոճին պատճառով: Նման մարդու հոգեւոր Տի էն էյ-ը (DNA) ծրագրուած է մեղք գործելու համար, եւ ան ճիշդ այդպէս ալ կը վարուի: Տարօրինակ եւ

անբնական երեւոյթը անիկա է, որ «հաւատացեալ» մարդը շարունակ եւ յօժարական կը մեղանչէ: Այն մարդը, որ շարունակ կը մեղանչէ, կրնայ դաւանիլ, որ Յիսուս իր Տէրն ու Փրկիչն է, բայց իրականութեան մէջ այդպէս չէ. սիւս թէ ինչու ես չակերտներու մէջ վերցուցի *հաւատացեալ* բառը: Եթէ Յիսուս իրականութեան մէջ այդ մարդուն Տէրը ըլլար, անոր կեանքին մէջ պիտի արտայայտուէր Աստուածային բնութիւնը: Յիսուս պարզօրէն ներկայացուց այս սկզբունքը.

«Կարելի է արագօրէն որոշել տարբեր տեսակի պտղատու ծառերը՝ ստուգելով աստուծոյ պտուղը: Այն տեսակը, որ համեղ պտուղ կու տայ, երբեք անուտելի արդիւնք չի տար: Եւ այն ծառը, որ անուտելի արդիւնք կու տայ, չի կրնար բարի պտուղ տալ: Անուտելի պտուղ ունեցող ծառերը կը կտրուին եւ կը նետուին կրակի մէջ: Այո՛, ծառը կամ մարդը կ'որոշեն անոնց տուած պտուղով» (Մատթէոս 7.17–20, TLB):

Յիսուսին պնդումը այս հատուածին մէջ դժուար չէ հասկնալ, եւ այն անշուշտ փոփոխման ենթակայ չէ: Պտուղի ձեւը չ'որոշուիր ինքնիրմով. այն կ'որոշուի ծառին տեսակով: Այնուամենայնիւ, յատկապէս պտուղը ցոյց կու տայ ծառին տեսակը:

Եթէ մօտենաք թուփի մը, որուն վրայ առողջ հատապտուղներ կան, դուք պիտի իմանաք, որ այդ թուփին պտուղը ուտելի է: Այնուամենայնիւ, եթէ դուք թունաւոր հատապտուղներ գտնէք, կը նշանակէ՝ այդ թուփը լաւ չէ: Այն, թէ արդեօ՞ք ծառը լաւ է կամ թունաւոր, կ'որոշուի աստոր պտուղով: Նոյն կերպով, Յիսուսը կ'ըսէ, որ ճշմարիտ կամ ոչ ճշմարիտ քրիստոնէաները կ'որոշեն ոչ թէ անոնց խօսքերով, ոչ թէ այն բանով, թէ որքան կրօնական կը թուան անոնք, կամ որքան յաճախ կը մասնակցին քրիստոնէական հաւաքոյթներու, այլ՝ անոնց գործերով: Արդեօ՞ք անոնք անձնագրի են եւ կեդրոնացած են Երկնքի թագաւորութեան վրայ, թէ՞ անոնք եսասէր են եւ կեդրոնացած են այս աշխարհին վրայ, ինչպէս որ Յովհաննէս առաքեալը կը նկարագրէ իր նամակին մէջ.

«Մի՛ սիրէք այս աշխարհի բարքերը: Մի՛ սիրէք այս աշխարհի բարիքները: Այս աշխարհի սէրը կը քամէ ձեզմէ սէրը՝ Հօր հանդէպ: Ըստ էութեան, այն ամէնը, ինչ որ տեղի կ'ունենայ այս աշխարհին մէջ՝ ձեր ուզածը ընելու ցանկութիւնը, ամէն ինչ ձեզի համար ստանալու ցանկութիւնը եւ կարելոր թուալու ցանկութիւնը, որեւէ առնչութիւն չունին Հօր հետ: Այդ ամէնը միայն կը մեկուսացնէ ձեզ Անորմէ: Այս աշխարհը եւ իր բոլոր ցանկութիւնները, ցանկութիւնները, ցանկութիւնները պիտի անցնին, բայց ան, որ կը կատարէ Աստուծոյ կամքը, յաւիտեան հաստատ պիտի մնայ» (Ա. Յովհաննէս 2.15–17, MSG):

Լիզայէն եւ ինձմէ՛ երկար ժամանակ պահանջուեցաւ, որ համոզիմք մեր երեխաները ասոր մէջ: Անոնք կը յաճախէին քրիստոնէական

դպրոցներ եւ կը տեսնէին բազմաթիւ համադասարանցիներ, որոնք կանոնաւոր կերպով եկեղեցի կը յաճախէին իրենց ծնողներուն հետ եւ կը դաւանէին, որ քրիստոնէայ էին, բայց շարունակ կը գոհացնէին իրենց անձերը, ինչպէս գրուած է վերոյիշեալ հատուածին մէջ: Անոնց կեանքի պտուղը՝ Քրիստոսին նմանիլը չէր: Մեր երեխաներուն համադասարանցիները կ'ապրէին իրենց համար, փոխարէնը ցանկային եւ ձգտէին կատարել Աստուծոյ կամքը եւ բերկրանք զգային ատոր մէջ:

Այն, ինչ որ մեր երեխաները կը տեսնէին դպրոցին մէջ, ընդամենը մէկն է այն անթիւ օրինակներէն, որոնք ես կրնայի բերել: Այս խնդիրը առկայ է ընտանիքներուն, գործարար աշխարհին եւ նոյնիսկ՝ եկեղեցիներուն եւ քրիստոնէական ծառայութիւններուն մէջ: Շատերը կը դաւանին, որ քրիստոնէայ են, բայց անոնց կեանքի պտուղը ակնյայտօրէն հակառակը ցոյց կու տայ:

Սովորական «դարձը»

Մենք քարոզած ենք Աւետարանը ոչ հաւասարակշռուած կերպով: Մենք շեշտադրած ենք Յիսուսին ընդունիլը՝ մեղաւորի աղօթքը աղօթելու միջոցով: Անհրաժեշտ է դաւանիլ Ձինք որպէս «Տէր», ինչէն յետոյ մենք յաւիտեան պիտի փրկուինք: Այնուամենայնիւ, Յիսուսը այսպէս չի սորվեցներ: Ան կ'ըսէ. «Ոչ թէ ամէն ով որ Ինձի «Տէ՛ր, Տէ՛ր» կ'ըսէ, պիտի մտնէ Երկնքի արքայութիւնը» (Մատթէոս 7.21):

Եթէ մենք պարզապէս լսենք Յիսուսին ըսածը՝ առանց զտելու այն տարիներ շարունակ իւրացուցած անզուգակշիռ քարոզներով, ուսմունքներով, գիրքերով եւ երգերով, մենք պիտի հասկնանք, որ մեր ժամանակակից Աւետարանը կը հակասէ ատոր: Յիսուսը չէր կրնար աւելի պարզ արտայայտուիլ. ոչ բոլորը, որոնք աղօթած են մեղաւորի աղօթքը եւ Տէր դաւանած են Ձինք, Երկինք պիտի երթան: Իսկ եթէ անոնք Երկինք պիտի չերթան, կայ միայն մէկ այլընտրանք, ինչպէս որ տեսանք նախորդ գլուխին մէջ:

Եկէք ամփոփենք սովորական աւետարանչական ծառայութիւնը: Քարոզիչը կը խօսի «Յիսուսին ընդունելու եւ օրհնութիւններ ստանալու» մասին: Ան կ'ըսէ, որ Յիսուսը պիտի տայ մեզի ուրախութիւն, խաղաղութիւն, բարգաւաճում, երջանկութիւն, առողջութիւն, Երկինքը եւ այլն: Սխալ մի՛ հասկնաք ինձի. Աստուած կ'ուզէ օրհնել մեզ: Բայց Յիսուս ոչ մէկ անգամ չօգտագործեց Իր օրհնութիւնները, որ գրաւէր մարդոց՝ Իրեն հետեւելու համար:

Իր վաճառքի առարկան մօտաւորապէս երեսունհինգ վայրկեան ներկայացնելէն յետոյ այդ ծառայողը կը խնդրէ լսարանին խոնարհեց-

նել իրենց գլուխները: Ան հարց կու տայ՝ եթէ անոնք մահանային այս գիշեր, պիտի յայտնուէի՞ն Երկինքը: Որոշ հաւաքոյթներուն մէջ ծառայողը կը խրախուսէ ներկաները՝ նայիլ իրենց ծախ եւ աջ կողմը գտնուող մարդոց եւ տալ միեւնոյն հարցը՝ ներգրաւելով անոնց: Եթէ անոնք մահանային այս երեկոյ, պիտի յայտնուէի՞ն Երկինքը: «Եթէ անոնք չեն կրնար «այո» ըսել,– կը շարունակէ ծառայողը,– բռնեցէ՛ք անոնց ձեռքը եւ առջեւ բերէ՛ք զանոնք»:

Մինչ նոր թեկնածուները կը մօտենան, երգչախումբը այդ պահուն համապատասխան երգեր կ'երգէ, օրինակ՝ իննսունական թուականներուն սիրուած «Ինչպէս որ կամ» երգը: Այլ պարագաներուն ներկաները պարզապէս կը ծափահարեն եւ կը ժպտան, իսկ երաժիշտները յաղթական մեղեդի կը նուագեն առջեւ եկողներուն համար:

Երբ բոլորը կու գան, ծառայողը կը խնդրէ անոնցմէ խոնարհեցնել գլուխները եւ կրկնել պարզ աղօթք մը. «Հայր, ես կը խոստովանիմ, որ մեղաւոր եմ: Ներէ՛ իմ մեղքերը: Այսօր ես կը խնդրեմ Յիսուսէն, որ գայ իմ կեանքին մէջ՝ որպէս իմ Տէր եւ Փրկիչ: Շնորհակալ եմ՝ ինծի Քու զաւակը դարձնելու համար: Յիսուսի անունով, ամէ՛ն»:

Լսարանը կը ցնծայ, երաժիշտները կը նուագեն, եւ նոր «դարձի եկածները» կը հեռանան հաւաքոյթէն՝ «ինչպէս որ կային», միայն թէ հիմա անոնք խաբուած են: Անոնք ոչինչ լսեցին անհնազանդութենէն ապաշխարելու, սեփական ցանկութիւնները ուրանալու, Աստուծոյ կամքը կատարելու, ինչպէս նաեւ՝ իրենց կեանքը Քրիստոսի գործին նուիրելու մասին: Անոնք դաւանեցան Յիսուսը՝ որպէս Տէր, բայց անոնց սիրտը չփոխուեցաւ: Այժմ Յիսուսը պարզապէս անոնց կեանքի մէկ մասն է:

Թոյլ տուէ՛ք ըսելու ձեզի, որ թագաւորներու Թագաւորը եւ Տէրերու Տէրը չի գար մարդու կեանքին մէջ, եթէ Ան պիտի ըլլայ երկրորդը կամ, նոյնիսկ, առաջինը՝ այլ սիրեկաններու կարգին: Ան միայն պիտի գայ՝ որպէս մեր լիարժէք եւ միակ Թագաւորը, երբ ոչ մէկ մարդ, առարկայ, երեւոյթ կամ գործունէութիւն կը մրցակցի Անոր դիրքին հետ մեր սրտին մէջ: Ան պէտք է ըլլայ Տէրը, ինչ որ կը նշանակէ, որ Ան մեր գերագոյն տիրակալն ու իշխանն է, եւ որ մեր կեանքը այլեւս չի պատկանիր մեզի:

Մտածեցէ՛ք այս մասին. դուք կ'ամուսնանայի՞ք ինչ որ մէկուն հետ, որ հաւատարիմ պիտի ըլլար ե՛ւ ձեզի, ե՛ւ իր միւս սիրեկաններուն, բայց որ դուք առաջինը պիտի ըլլայիք: Որքա՛ն աւելի անմտութիւն է նոյնը ըսել տիեզերքի Թագաւորին: Արդեօ՞ք Ան պիտի ընդունի այնպիսի հարսնցու մը, որ կ'ըսէ. «Դուն առաջինն ես իմ բոլոր սիրեկաններէն»: Նման պայմաններու մէջ չի կրնար ըլլալ ո՛չ ուխտի յարաբերութիւններ, ո՛չ մէկ դառնալ: Ինչպիսի՞ խաբէութիւն:

Այս «նորադարձները» առիթ չեն տուած, որ խաչը սպաննէ իրենց եսասէր, աշխարհիկ կեանքերը եւ տեղ պարպէ, որ Քրիստոսի բնութիւն-

նը ձեւաւորուի անոնց մէջ: Անոնք պարզապէս համաձայնած են ստանալ ե՛ւ աւելի լաւ կեանք այս աշխարհի մէջ, ե՛ւ երկնային խոստումը: Որքա՛ն հետաքրքրական է: Բազմաթիւ երկիրներու մէջ, ուր քրիստոնէաները կը հալածուին, անոնք կ'ընդունին Յիսուսը՝ գիտակցելով, որ պիտի կորսցնեն իրենց կեանքը: Այսօր Արեւմտեան երկիրներուն մէջ մենք կ'ընդունինք Յիսուսը՝ աւելի լաւ կեանք ունենալու եւ Երկինք երթալու համար: Բայց մենք նոյնպէս պէտք է կորսնցնենք մեր կեանքը՝ յանուն Անոր:

Այսօր բազմաթիւ Աւետարանական եկեղեցիներու հաւատացեալներ մեր երկրին մէջ խաբուած են այն Աւետարանի պատճառով, որ մենք քարոզած ենք: Նորադարձները կրնան ոգեւորուիլ իրենց նորագիւտ «հաւատքով», մասնակցիլ քրիստոնէական միջոցառումներու, եկեղեցի յաճախել եւ նոյնիսկ ընդգրկուիլ աւետարանչական նախագիծերու մէջ, քանի որ անոնք նոր են եւ խանդավառուած են: Ատիկա նման է նոր ակումբ յաճախելուն, նոր դպրոց երթալուն կամ նոր աշխատանքի ընդունուելուն. ատոր մէջ թարմութիւն կայ: Բայց այս քրիստոնէաները չեն ըրած այն, ինչ որ Յիսուս պատուիրած է Իր բոլոր ճշմարիտ հետեւորդներուն. Իրեն հետեւելու գինը հաշուել, իսկ յետոյ մինչեւ վերջ Իրեն ծառայելու որոշում կայացնել (տե՛ս Ղուկաս 14.27–33):

Կորսնցնել՝ գտնելու համար

Ասիկա փոխանակում է: Մենք պէտք է տանք մեր ամբողջ կեանքը, եւ ատոր փոխարէն ստանանք Անոր կեանքը (բնութիւնը): Յիսուսը շարունակ կը խօսի այս մասին: Ան կ'ըսէ.

«Եթէ ինչ որ մէկը մտադրած է Իմ ետեւէն գալ, թող ուրանայ ինքզինքը [նոռնայ, անտեսէ, մերժէ, անուշադրութեան մատնէ ինքզինքը եւ իր հետաքրքրութիւնները], վերցնէ իր խաչը եւ [որպէս աշակերտ միանայ Ինծի եւ աջակցի Իմ խումբին], հետեւի Ինծի՝ [շարունակ, ամուր կապուած ըլլալով Ինծի]» (Մարկոս 8.34, AMP):

Մենք պէտք է շարունակ ամուր կապուած ըլլանք Անոր: Փրկութիւնը պարզապէս մէկ անգամուան համար աղօթք մը չէ, ինչէն յետոյ կեանքը կ'ընթանայ իր հունով՝ այն տարբերութեամբ միայն, որ այժմ դուք «քրիստոնէական» ակումբի մէջ էք եւ Երկինք կ'երթաք: Յիսուս կը շարունակէ. «Եթէ փորձէք պահել ձեր կեանքը ձեզի համար, դուք պիտի կորսնցնէք այն: Բայց եթէ իրաժարիք ձեր կեանքէն՝ յանուն Ինծի եւ յանուն Բարի լուրի, դուք ճշմարիտ կեանք պիտի գտնէք» (Մարկոս 8.35, NLT): Աստուածաշունչի «Էմփիֆայտ» թարգմանութեան մէջ այսպէս գրուած է. «Ով որ կը ձգէ իր կեանքը [որ կ'ապրի միայն այս երկրի

վրայ] յանուն Ինծի եւ Աւետարանին, պիտի փրկէ այն [իր բարձրագոյն հոգեւոր կեանքը Աստուծոյ յաւիտենական թագաւորութեան մէջ]»:

Ասիկա յստակ փոխանակում է: Մենք կը հրաժարինք մեր կեանքի Տէրը ըլլալու իրաւունքէն: Ընելով առիկա՝ մենք կարողութիւն կը ստանանք կատարելու Անոր ցանկութիւնները եւ, ի պատասխան, կը ստանանք Անոր յաւիտենական կեանքը: Այն Աւետարանին մէջ, որ կը քարոզուի այսօր, չի շեշտադրուիր Յիսուսին հետեւելու այս անչափ կարեւոր կողմը: Մենք միայն կը լսենք առաւելութիւններու մասին: Ըստ էութեան, մենք քարոզած ենք *յարութեան խոստումները՝ չիշատակելով խաչի ազդեցութիւնը եւ կանչը:*

Պատկերացուցէ՛ք, որ երիտասարդ մը հեռատեսիլով զինուորական հաւաքագրման գովազդ մը կը դիտէ: Ան կը տեսնէ տպաւորիչ տեսք ունեցող նաւաստի մը, որ մօտաւորապէս իր տարիքի է՝ կեցած շատ մեծ եւ գեղեցիկ նաւի տախտակամածին: Նաւը դուրս կու գայ բաց ծով՝ բիրտեղի պէս պարզ երկինքի ներքոյ, եւ նաւաստին կը ժպտայ իր ընկերներուն հետ: Ատկէ յետոյ այդ նաւաստին կը նկարուի աշխարհով մէկ գտնուող տարբեր նաւահանգիստներուն մէջ, եւ գովազդի մէջ կը նշուի, որ բոլոր այդ ճամբորդութիւնները անվճար են:

Երիտասարդը անմիջապէս կ'երթայ հաւաքագրման կեդրոն եւ կ'արձանագրուի: Ան չի կարդար ռազմական նաւատորմին միանալու պայմանները, քանի որ բոլորովին կլանուած է առաւելութիւններով: Ան այնքա՛ն ուրախ է: Անոր կեանքին մէջ իսկական արկած պիտի սկսի. Ան պիտի տեսնէ ամբողջ աշխարհը, պիտի դառնայ ռազմական նաւատորմի մասնիկը եւ բազմաթիւ նոր ընկերներ ծեռք պիտի բերէ:

Այնուամենայնիւ, արդէն նախնական պատրաստութեան փուլին մէջ ան կը պարզէ, որ չի կրնար քնանալ մինչեւ ժամը ինը՝ ըստ իր սովորութեան: Անոր կը պատուիրեն կտրել իր փայփայած երկար մազերը: Ան չի կրնար մասնակցիլ տարբեր միջոցառումներու, քանի որ անոր չի թոյլատրուիր մէկ ամսուան ընթացքին լքել իր զօրամասը երկու օրէն աւելի: Ամենավատը անիկա է, որ անոր ամբողջ օրը ցուցակագրուած է, ինչ որ թոյլ չի տար անոր հաղորդակցիլ միւսներուն հետ: Ամբողջ օրը ան զուգարաններ եւ ճաշարաններ կը մաքրէ, կը կատարէ հրումներ գետնէն եւ այլ բարդ վարժութիւններ: Ան գրեթէ չունի ազատ ժամանակ, եւ ամէն երեկոյ խիստ յոգնած կը պառկի քնանալու:

Այս երիտասարդը տակաւին յոյսեր ունի, քանի որ գիտէ, որ շուտով պիտի յայտնուի նաւուն վրայ: Նախնական պատրաստութիւնները աւարտելուն պէս զինք կը նշանակեն նաւու մը անձնակազմին մէջ, բայց ան պիտի կը կատարէ նոյն աշխատանքը, միայն թէ այժմ ան բաց ծովի մէջ

է: Յանկարծ պատերազմը կը սկսի, եւ ան կը հասկնայ, որ ստիպուած է մասնակցիլ մարտերուն, թէեւ ան չէր հաւաքագրուած աստոր համար:

Այդ երիտասարդը հաւաքագրուած էր, քանի որ զինուորական ծառայութիւնը կ'առաջարկէր այնպիսի կեանք, որ ինքնիրեն առիթ չէր կրնար տալ, եւ այն ալ՝ անվճար: Ան ուշադրութիւն չէր դարձուցած հաւաքագրման կեդրոնի բոլոր պայմաններուն: Այո, այդ կեանքը անվճար էր, բայց ան պէտք է իր ազատութեամբ վճարեր աստոր համար: Շատ առումներով, հիմա այս երիտասարդը վիրաւորուած եւ խաբուած կը զգայ ինքզինքը: Անոր կարծիքով՝ իրեն ցոյց տուած էին միայն առաւելութիւնները, բայց չէին տեղեկացուցած այն զինին մասին, որ ինքը պէտք է վճարեր:

Մենք քարոզած ենք այնպիսի Աւետարան, ըստ որուն փրկութիւնը ծրի է, եւ ասիկա բացարձակ ճշմարտութիւն է. այնուամենայնիւ, մենք չենք ըսած «փրկութեան թեկնածուններուն», որ իրենք պէտք է զոհեն իրենց ազատութիւնը: Խօսելով ազատութեան մասին՝ ես նկատի ունիմ ոչ թէ իրական, այլ թուացեալ ազատութիւնը, քանի որ առանց Քրիստոսի բոլոր մարդիկ մեղքի ստրուկներ են: Անոնք ստրուկներ են, թէեւ կրնան լիովին համոզուած ըլլալ, որ ազատ են:

Ասիկա կարելի է համեմատել «Մաթիթս» ֆիլմի հետ: Տարիներ առաջ իմ աւագ որդին վարձեց այդ ֆիլմի խմբագրուած տարբերակը, եւ երեկոյ մը մենք ամբողջ ընտանիքով դիտեցինք այն: Ես զարմանալի զուգահեռներ նկատեցի այդ ֆիլմին մէջ:

«Մաթիթս» ֆիլմին մէջ հետաքրքրական հարցադրում մը կայ. «Ինչպէ՞ս կը տարբերէք երազը իրականութենէն, եթէ տակաւին չէք արթնցած երազէն»¹:

Այս ֆիլմին մէջ կը պատկերուի քսաներորդ դարուն կեանքի սովորական ընթացքը, ինչ որ ընդամէնը պատրանք է: Իրականութեան մէջ, այս պատմութիւնը կը սկսի քսանմէկերորդ դարի վերջաւորութեան: Մարդկութիւնը արհեստական բանականութիւն կը ստեղծէ, որ անոնք պարզապէս Մեքենաներ կ'անուանեն: Մեքենաները երկրի վրայ վերահսկողութիւն կը ստանձնեն, եւ մարդիկ պատերազմ կը սկսին ատոնց դէմ: Այդ պատերազմը կործանարար ազդեցութիւն կ'ունենայ ամբողջ երկրագունդին համար, եւ վերջաւորութեան Մեքենաները կը յաղթեն:

Մեքենաները կը յայտնաբերեն, որ կրնան պահպանել իրենց գոյութիւնը՝ օգտագործելով մարդոց մարմինէն յառաջացող էլեկտրական հոսանքը, եւ կը ստեղծեն ահռելի պատրանք՝ խաբելով եւ ծառայեցնելով մարդկութիւնը: Կը թուայ՝ աշխարհի մէջ ամէն ինչ սովորականի պէս է, եւ որ տակաւին 20-րդ դարն է, բայց իրականութեան մէջ մարդոց մարմինները կը պահուին յատուկ խցիկներու մէջ, եւ անոնց բառացիօրէն կ'աճեցնեն հսկայական «ազարակներու մէջ»: Անոնց միտքը միացած է համաշխար-

հային **կարծեցեալ*** իրականութեան ծրագրին, որ կը կոչուի «Մաթրիքս» եւ կը ներկայացնէ սովորական կեանքը: Մարդկութեան թուացեալ ազատութիւնը իրական չէ. իրականութեան մէջ անոնք ստրուկներ են:

Ֆիլմը կը պատմէ խումբ մը ընտրեալներու մասին, որոնք, կոտորելով Մաթրիքսը եւ դուրս ելլելով ատորմէ, կը յայտնաբերեն իրենց իրական ինքնութիւնը: Անոնք «Սիօն» անունով գաղութ մը կը կազմեն իրական աշխարհի մէջ, ուր այլեւս ոչ մէկ կենդանութիւն կայ: Անորմէ մէկ քանին պարբերաբար Մաթրիքս կը վերադառնան, որպէսզի պայքարին Մեքենաներու դէմ եւ ազատ արծակեն մարդկութիւնը: Անոնք լարուած պայքարներու մէջ են, եւ անոնց կեանքը դիւրին չէ, բայց այս մարդիկ աւելի կը ձգտին իրական ազատութեան, քան կեղծ ճշմարտութեան մէջ ապրելուն: Անոնք կը գերադասեն իրական ազատութիւնը՝ դժուարութիւններու հետ, քան ստրկութիւնը՝ խաբուսիկ յարմարաւէտութեան մէջ:

Ջուզահեռը հետեւեալն է. շատ անհաւատներ կը համարեն, որ քրիստոնէականները ստրուկներ, գերիներ եւ ազատութիւն չունեցող մարդիկ են, իսկ իրենք ազատ են: Այնուամենայնիւ, ճշմարտութիւնը այն է, որ առանց Քրիստոսի բոլորը գերիներ են՝ նման պատրանքի մէջ ապրող մարդոց, որոնք ստրկացած են Մեքենաներու կողմէն: Մարդիկ մեղքի ստրուկներ են:

Քրիստոնէայ ըլլալը դժուար է

Գերութեան մէջ են ոչ միայն անոնք, որոնք երբեք չեն լսած Աւետարանը կամ կը հրաժարին հաւատալ ատոր: Շատ «դարձի եկածներ» մեր օրերուն մէջ նոյնպէս մեղքի գերութեան մէջ են: Մենք ստեղծած ենք այս երկրութիւնը՝ հրաժարելով ազդարարել ամբողջ ուղերձը այն մասին, թէ ինչ կը նշանակէ ճշմարտապէս հետեւիլ Յիսուսին: Շատերը կ'ենթադրեն, որ իրենք ազատ են, այնինչ, իրականութեան մէջ, անոնք գերութեան մէջ են, եւ անոնց կեանքը կ'ապացուցէ ատիկա: Յիսուս կ'ըսէ.

«Ես կը հաւաստիացնեմ ձեզ եւ խիստ հանդիսաւոր կերպով կ'ըսեմ՝ ան, որ մեղք կը գործէ եւ շարունակ մեղքի մէջ է, մեղքի ստրուկն է: Ստրուկը մշտապէս [յաւիտեան] չի մնար տունը. [տան] որդին կը մնայ յաւիտեան: Այնպէս որ, եթէ Որդին ազատ արծակէ [ազատ մարդ դարձնէ] ձեզ, դուք իսկապէս եւ անվիճարկելիօրէն ազատ կ'ըլլաք» (Յովհաննէս 8.34–36, AMP):

Այս խօսքերը կը կրկնեն այն ճշմարտութիւնը, որ մենք տեսանք պտղատու ծառին օրինակով: Եթէ ինչ որ մէկը շարունակ կը մեղանչէ, ատիկա կը վկայէ այն մասին, որ ան տակաւին մեղքի ստրուկ է: Ան որդի չէ, որովհետեւ անոր ներքին էութիւնը չէ փոխուած: Այդ մարդը

* virtual – իրական կեանքի արհեստական, ելեկտրոնային կամ համակարգչային ձեւը

կրնայ մտածել, որ ինքը ազատ է, քանի որ աղօթած է մեղաւորի աղօթքը, բայց ան չէ հրաժարած իր «իրաւունքներէն»՝ Յիսուսին հետեւելու համար: Ան տակաւին կ'ուզէ պահպանել իր ազատութիւնը (որ կեղծ է)՝ փրկութեան առաւելութիւններուն հետ մէկտեղ: Այնուամենայնիւ, անկարելի է ունենալ ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը:

Ինչպէս արդէն նշուեցաւ, այս մարդիկ կրնան սկսիլ իրենց «վերստին ծնած» կեանքը ուրախութեամբ, ոգեշնչմամբ եւ եռանդով, քանի որ այն թարմ ու նոր է: Այնուամենայնիւ, ի վերջոյ անոնց չփոխուած էութիւնը ի յայտ պիտի գայ, բայց ատիկա տեղի պիտի ունենայ քրիստոնէական շրջանակներուն մէջ եւ քողարկուած պիտի ըլլայ աւետարանական լեզուով եւ կենսաոճով: Եւ յատկապէս այս պատճառով անոնց գործերը խաբուսիկ են: Այնուամենայնիւ, Նոր կտակարանը կը զգուշացնէ յատկապէս այս խաբէութեան մասին:

Պօղոսը կը գրէ. «Վերջին օրերուն մէջ քրիստոնէայ ըլլալը շատ դժուար պիտի ըլլայ» (Բ. Տիմոթէոս 3.1, TLB): Մենք կ'ապրինք ճիշդ վերջին օրերուն մէջ: Ատոր մէջ նոյնիսկ կասկած չկայ: Բոլոր Աստուածաշնչեան մարգարէութիւնները կը յայտնեն, որ Յիսուս շուտով պիտի վերադառնայ: Պօղոս մեր օրերը ամենադժուար ժամանակահատուածը անուանեց քրիստոնէայ ըլլալու համար:

Այլ թարգմանութիւններու մէջ կ'օգտագործուին «չար» եւ «սարսափելի» բառերը՝ մեր օրերը նկարագրելու համար: Ո՞րն է պատճառը: Ուսումնասիրելով այն ժամանակահատուածը, որուն մէջ Պօղոսը կ'ապրէր՝ մենք կը տեսնենք, որ ան մեծ հակառակութեան կը բախէր: Ան հինգ անգամ երեսունինը մտրակ ստացած էր իր մէջքին: Եւս երեք անգամ զինք փայտերով ծեծած էին: Մէկ անգամ զինք քարկոծած էին, եւ ան տարիներ անցուցած էր բանտերուն մէջ: Ուր ալ երթար, ան կը բախէր կատաղի հալածանքներու: Այնուամենայնիւ, ան կը գրէ, որ մեր օրերուն մէջ քրիստոնէայ ըլլալը աւելի դժուար պիտի ըլլայ: Եւ կը յայտնէ ատոր պատճառը.

«Վասնզի մարդիկ պիտի ըլլան անձնասէր, արծաթասէր, ամբարտաւան, հպարտ, հայիոյիչ, ծնողներու անհնազանդ, ապերախտ, անսուրբ, անգութ, անհաշտ, բանասարկու, անժուժկալ, դաժանաբարոյ, բարին չսիրող, մատնիչ, յանդուգն, գոռոզ, աւելի ցանկասէր, քան թէ Աստուածասէր...» (Բ. Տիմոթէոս 3.2-4):

Քննելով այս հատուածը՝ դուք թերեւս այդպէս ալ չհասկնաք, թէ ինչ կը ցանկայ Պօղոսը ըսել: Մի՞թէ անոր ատեն ամէն ինչ ուրիշ ձեւ էր: Մարդիկ անոր հասարակութեան մէջ ունէին բոլոր այս յատկանիշները: Անոնք ինքնասէր եւ արծաթասէր էին: Անոնք անսուրբ էին, չներող եւ այլն: Պետրոսը նոյնիսկ ըսաւ Հոգեգալուստի օրը. «Փրկուեցէ՛ք

այս թիր (արատաւոր, չար, անարդար) ազգէն» (Գործք 2.40, AMP): Ուրեմն, ինչո՞ւ Պօղոսը կ'առանցնացնէ այս սերունդը եւ կը մատնանշէ այս յատկանիշները՝ անուանելով ասիկա ամենադժուար ժամանակը քրիստոնէայ ըլլալու համար:

Ան կը շարունակէ՝ գրելով. «Որովհետեւ [թէեւ] անոնք Աստուածապաշտութեան [ճշմարիտ կրօնի] ձեւ ունին, անոնք կ'ուրանան եւ կը մերժեն ատոր զօրութիւնը եւ օտար են ատոր [անոնց վարքը կը հակասէ անոնց դաւանանքի իրական ըլլալուն]» (Բ. Տիմոթէոս 3.5, AMP), կամ՝ «...որոնք Աստուածապաշտութեան կերպարանք ունին, բայց ուրացած են ատոր զօրութիւնը»:

Այժմ դուք կը հասկնաք, թէ ինչու դժուար է քրիստոնէայ ըլլալը մեր օրերուն մէջ: Պիտի ըլլան շատերը (համաձայն այլ յղումներու՝ Նոր կտակարանին մէջ), որոնք պիտի դաւանին, որ *վերստին ծնած* են, *փրկուած* են եւ *քրիստոնէայ* են, սակայն անոնք ամբողջովին պիտի չտան, որ խաչը սպաննէ իրենց եսակեդրոն կեանքը: Անոնք չեն ձգած իրենց բոլոր իրաւունքները եւ կիրքերը՝ Յիսուսին հետեւելու համար: Այդ մարդիկ սրտանց կը հաւատան, որ Ան իրենց Փրկիչն է, բայց անոնք կ'ուզեն Յիսուսին հետ ըլլալ, քանի որ հրապուրուած են Անոր օրհնութիւններով, ոչ թէ Անոր Անձով: Ասիկա կարելի է համեմատել այն բանին հետ, երբ կինը կ'ամուսնանայ տղամարդու մը հետ անոր հարստութեան համար: Թերեւս ան կ'ամուսնանայ սիրելով, բայց անոր սիրոյ դրդապատճառները սխալ են: Նոյն կերպով, շատերը պիտի փնտռեն Յիսուսը, որպէսզի ստանան փրկութիւն, պատկանելիութիւն, յաջողութիւն այս կեանքին մէջ եւ մուտք դէպի Երկինք՝ հանդերձեալ կեանքին մէջ: Անոնք անկեղծօրէն պիտի հաւատան, որ Քրիստոսը իրենց Փրկիչն է, բայց երբեք չեն դադարի անձամբ իրենց կեանքը տնօրինել:

Պօղոսը կը շարունակէ՝ ըսելով, որ այս «հաւատացեալները» «... ամէն ժամանակ կը սորվին, եւ երբեք դէպի ճշմարտութեան գիտութեան չեն կրնար գալ» (խօսք 7): Անոնք կը յաճախեն եկեղեցական ծառայութիւններու, տնային խմբակներու եւ այլ հաւաքոյթներու, կը լսեն Աստուծոյ խօսքը, բայց չեն փոխուիր:

Ոչ յստակ սահմաններ

Դժուարութիւնը կը յառաջանայ այն պատճառով, որ այլեւս յստակ սահմաններ չկան: Պատկերացուցէ՛ք այնպիսի մարդ մը, որ եսակեդրոն ձգտումներ ունի, բայց կը դաւանի, որ վերստին ծնած է, կը խօսի ճշմարիտ հաւատացեալի լեզուով, ընկերութիւն կ'ընէ Աստուածապաշտ մարդոց հետ եւ նոյնիսկ խանդավառութեամբ կը մասնակցի հաւատա-

ցեալներու հաւաքոյթներուն, բայց անոր բնութիւնը չի փոխուիր: Փաստօրէն, այդ մարդը խաբեբայ է, թէեւ ինքը չէր ալ գիտակցիր աստիկա, եւ դժուարութիւնը կը յառաջանայ այն պատճառով, որ այդպիսի մարդոց ինքնախաբէութիւնը կը տարածուի հիւանդութեան պէս:

Միւսները կը կառուցեն իրենց կեանքը քրիստոնէական մշակոյթի «չափանիշներու» հիման վրայ, բայց նոյնիսկ այդ չափանիշները չեն համապատասխանիր երկնային չափանիշներուն: Վերջաւորութեան այդ մարդոց համար դժուար է ըլլալ ճշմարիտ հաւատացեալ: Պօղոսի օրերուն, եթէ դուք քրիստոնէայ ըլլայիք, ձեր կեանքը ամէն վայրկեան վտանգուած կ'ըլլար: Ատիկա նոյնիսկ չէր վիճարկուեր. որոշելով հաւատարիմ ըլլալ Յիսուսին՝ դուք այդ կարգին մէջ էիք:

Բ. Տիմոթէոս 3-րդ գլուխին մէջ Պօղոս կը շարունակէ.

«Բայց դուն գիտես, թէ ինչ կը սորվեցնեմ ես, Տիմոթէոս, եւ թէ ինչպէս ես կ'ապրիմ, եւ թէ որն է իմ կեանքի նպատակը: Դուն գիտես իմ հաւատքը, եւ թէ որքան ես չարչարուած եմ: Դուն գիտես իմ սէրը, իմ համբերութիւնն ու տոկունութիւնը: Դուն գիտես, թէ որքան հալածանք եւ տառապանք կրած եմ: Դուն գիտես ամէն ինչ այն մասին, թէ ինչպէս ես հալածուած եմ Անտիոքի, Իկոնիոյ եւ Լիստրայի մէջ, բայց Տէրը ազատեց զիս այդ ամէնէն: Այո՛, եւ ամէն մէկը, որ կը կամենայ Աստուածահաճոյ կեանք վարել Քրիստոս Յիսուսին մէջ, հալածանք պիտի կրէ: Բայց չար մարդիկն ու խաբեբաները առաջ պիտի երթան: Անոնք պիտի շարունակեն խաբել մարդիկը, եւ իրենք ալ խաբուած պիտի ըլլան» (Բ. Տիմոթէոս 3.10–13, NLT):

Պօղոսը պարզ ցոյց տուաւ, որ Տիմոթէոսը կրնար վստահիլ իրեն ոչ միայն իր սորվեցուցածին պատճառով: Պօղոս վստահելի էր նաեւ իր ապրելակերպին եւ իր կեանքի նպատակին պատճառով (ան յաւիտենութեամբ շարժող մարդ էր, ինչին մասին մենք պիտի խօսինք աւելի ուշ այս գիրքին մէջ): Պօղոսին վկայութիւնը բաղկացած չէր իր պատասխանուած աղօթքներէն, իրեն հետեւող նշաններէն, իր ծառայութեան համբաւէն, եւ ո՛չ ալ Աստուծոյ խօսքը ուսուցանելու գերազանց կարողութենէն: Ո՛չ, ան չմատնանշեց այս բաները: Ան խօսեցաւ իր կեանքի մասին: Ահա թէ ինչը միշտ եղած է որոշիչ գործօնը հաւատացեալի կեանքին մէջ, եւ միշտ ալ պիտի ըլլայ:

Պօղոսը շարունակեց՝ ըսելով, որ «չար մարդիկն եւ խաբեբաները առաջ պիտի երթան»: Բոլորս գիտենք, որ պէտք է հեռու մնալ չար մարդոցմէ: Այնուամենայնիւ, խաբեբաները՝ այն մարդիկ, որոնց արտաքին կերպարանքը չի համապատասխաներ անոնց ճշմարիտ էութեան, ամէնէն վտանգաւորն են: Անոնք կը դաւանին, որ քրիստոնէայ են, եւ քրիստոնէայի կերպարանք ունին, բայց անոնց վարքին մէջ չկայ ոչ մէկ

վկայութիւն՝ Աստուծոյ շնորհքով կեանքեր փոխող զօրութեան մասին: Ուշադրութիւն դարձուցէք՝ Պօղոս կ'ըսէ, որ անոնք ոչ միայն կը խաբեն ուրիշները, այլեւ իրենք խաբուած են:

Այս նկարագրութիւնը բոլորովին կը համապատասխանէ Խաբուածին մեր այլաբանութեան մէջ: Այս երիտասարդը աշխոյժ էր Էնտելի դպրոցին մէջ, նուիրուած հետետւորդ կը համարէր ինքզինքը եւ սրտանց կը հաւատար, որ ճիշդ դիրք ունէր թագաւորին առջեւ: Ան կը դաւանէր իր հաւատարմութիւնը թագաւորին, բայց չէր ձգտեր իր կեանքով ցոյց տալ աստիկա: Ան ոչ միայն խաբուած էր, այլեւ կը խաբէր այլ մարդոց: Խաբուածի չափանիշներուն պատճառով շատերը փոխզիջման գացին՝ սկսած այն աղջիկներէն, որոնց հետ ան կապեր ունէր, մինչեւ այն բազմաթիւ աշակերտները, որոնց վրայ ան ազդեցութիւն ձգեց իր *ուղերձով*:

Թերես հարցնէք. «Ուղերձով: Չէ՞ որ ան ուսուցիչ չէր»: Ճիշդ է, բայց ես նկատի ունիմ, որ մեր կեանքը շատ անելի բարձր կը քարոզէ, քան մեր խօսքերը: Այն աշակերտները Էնտելին մէջ, որոնք հաւատարիմ էին Ճէյընին, պէտք է պայքարէին, որ չենթարկուէին Խաբուածի զօրաւոր անհատականութեան եւ ազդեցիկ կենսաոճին: Անոնք, որոնք հաստատ կեցած չէին, ենթարկուեցան անոր ազդեցութեան:

Այս պայքարի մասին կը զգուշացնէ ոչ միայն Պօղոսը, այլեւ Նոր կտակարանի հեղինակներէն շատերը: Յուդան կը գրէ.

«Իմ թանկագին ընկերներ, ես ամէն ջանք կ'ընէի, որ գրէի ձեզի բոլորիս փրկութեան մասին, երբ զգացի, որ պէտք կայ եւս մէկ անգամ գրեցի ձեզի՝ խրախուսելով պայքարիլ այն հաւատքին համար, որ Աստուած մէկընդմիջտ տուաւ Իր ժողովուրդին» (Յուդայ 3, TEV):

Ուշադրութիւն դարձուցէք անոր խօսքերուն հրատապութեան: Յուդան կը ցանկար խօսիլ այն հրաշալի բաներուն մասին, որոնց բոլորս կը բաժնեկցինք փրկութեան մէջ, բայց հարկադրուած էր գրել մէկ այլ թեմայով: Ան պէտք է խրախուսէր Աստուծոյ ժողովուրդը պայքարելու հաւատքի համար: Ի՞նչ պայքարի մասին է խօսքը: Ան կը բացատրէ՝ գրելով.

«Որովհետեւ որոշ անաստուած մարդիկ աննկատ թափանցեցին մեր միջեւ՝ մարդիկ, որոնք կ'աղաւաղեն ուղերձը մեր Աստուծոյ շնորհքի մասին՝ իրենց անբարոյ ճանապարհները արդարացնելու համար, եւ որոնք կը մերժեն Յիսուս Քրիստոսը՝ մեր միակ Տէրը եւ Իշխանը: Շատ վաղուց Սուրբ գիրքերը կանխասած են այն դատապարտութիւնը, որ անոնք ընդունած են» (Յուդայ 4, TEV):

Այս պայքարը ուղղուած է անբարոյ մարդոց ազդեցութեան դէմ, որոնք աղաւաղած են Աստուծոյ շնորհքը՝ իրենց մեղաւոր կեանքը ար-

դարացնելու համար: Այս յարձակումը աւելի մահացու է, քան համաշխարհային հալածանքը եկեղեցւոյ դէմ: Այն աւելի վտանգաւոր է, քան Աստուածաշնչեան սկզբունքներուն հակասող օրէնքները, օրինակ՝ արհեստական վիժեցման, թոյլ թմրամիջոցներու օգտագործման եւ միասեռ ամուսնութիւններու օրինականացումը, կամ բնաշրջութեան (evolution – զարգացման գործընթաց) տեսութեան դասաւանդումը դպրոցներուն մէջ: Այն շատ աւելի կորստաբեր է, քան որեւէ աղանդ կամ սուտ կրօն: Այն յաւիտեան կը կործանէ մարդկութիւնը:

Թերեւս հարցնէք, թէ ի՞նչ կապ ունի ասիկա եկեղեցւոյ մարդոց հետ: Այն մարդոց, որոնց մասին Յուդան կը խօսէր, կը ժխտէին կամ կ'ուրանային Յիսուս Քրիստոսը: Ոչ ոք կրնայ ընել ասիկա մեր եկեղեցիներուն մէջ եւ տակաւին կրնայ քրիստոնէայ համարուիլ:

Այնուամենայնիւ, ի՞նչը կը դրդէ ձեզ մտածելու, որ հաւատացեալները աւելի պարզամիտ էին Յուդայի օրերուն, քան այսօր: Կրկին ուշադիր կարդացէք: Այս մարդիկ *աննկատ* կը թափանցեն մեր շրջանակները: Ոչ ոք կրնայ կենալ մեր հաւաքոյթներուն այսօր (կամ Յուդայի օրերուն), դաւանիլ իր բերանով, որ կ'ուրանայ Յիսուս Քրիստոսը եւ աննկատ մնալ: Ուրեմն, ինչպէ՞ս այդ մարդիկ կ'ուրանան Ջինք: Պատասխանը մէկ այլ նորկտակարանեան գիրքի մէջ է. «Նման մարդիկ *կը պնդեն, որ կը ճանչնան զԱստուած*, բայց իրենց կեանքով *կ'ուրանան Ջինք»* (Տիտոս 1.16, NLT): Անոնք կ'ուրանան զԱստուած իրենց կեանքով, ոչ թէ խօսքերով: Այդ մարդիկ կ'ըսեն, որ կը ճանչնան զԱստուած: Անոնք կը դաւանին, որ Յիսուս իրենց Տէրն է: Բայց անոնց գործերը այլ բան ցոյց կու տան: Յիշեցէ՛ք՝ անոնք ոչ միայն կը խաբեն ուրիշները, այլեւ իրենք ալ խաբուած են. անոնք ամբողջ սրտով կը հաւատան, որ քրիստոնէայ են:

Աստուծոյ ճշմարիտ շնորհքը

Յուդան կը պնդէ, որ այս մարդիկ կ'աղաւաղեն Աստուծոյ շնորհքի ուղերձը: Այս վերջին օրերուն մէջ ասիկա լայնօրէն տարածուած է, որովհետեւ մեր ուսմունքները դուռ բացած են ատոր համար: Մենք սորվեցուցած ենք, որ շնորհքը՝ Աստուծոյ ծածկոցն է, որ կը ներէ աշխարհիկ եւ նոյնիսկ՝ անաստուած կենսառձը: Այս մտածելակերպը եկեղեցւոյ մէջ յատուկ է շատերուն, որոնք, օրինակ, կ'ըսեն. «Ես գիտեմ, որ չեմ ապրիր այնպէս, ինչպէս պէտք է ապրիլ, բայց փա՛ռք Աստուծոյ Անոր շնորհքին համար»: Ասիկա լուրջ խաբէութիւն է: Աստուածաշունչը չի սորվեցներ, որ շնորհքը մեծ սպեղանի է. *շնորհքը՝ Աստուծոյ գորութիւնն է մեր ներսը, որ ճշմարտութեան պահանջները կատարելու կարողութիւն կու տայ մեզի:*

Մենք սորվեցուցած ենք, որ շնորհքը պարզապէս Աստուծոյ անարժանաբար տրուող բարեհաճութիւնն է: Այո՛, շնորհքը Աստուծոյ բարե-

պահելն է: Ան, որ կ'ըսէ, որ կը ճանչնայ Յիսուսը, բայց չի պահեր Անոր Խօսքը, խաբուած է, ստախօս է եւ օտարացած է ճշմարտութենէն, նոյնիսկ եթէ ան իր բերանով կը դաւանի Աստուծոյ Խօսքը: Այս պատճառով, Յովհաննէսը կը գրէ. «Որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, որպէսզի մեղք չգործէք, եւ եթէ մէկը մեղք գործելու ըլլայ, Հօրը քով բարեխօս ունինք` Յիսուս Քրիստոս Արդարը» (Ա. Յովհաննէս 2.1):

Ուշադրութիւն դարձուցէք, որ Յովհաննէսը չի գրեր. «...այս բաները կը գրեմ ձեզի, որ... եթէ մէկը մեղք գործելու ըլլայ, բարեխօս ունինք...»: Ո՛չ: Մեր նպատակը` մեղք չգործելն է: Մեր ներսը Աստուծոյ շնորհքի զօրութիւնն է, որպէսզի մեր նպատակը ըլլայ Քրիստոսի պէս ապրիլը (ինչպէս գրուած է Ա. Յովհաննէս 2.6-ին մէջ, մենք պէտք է երթանք «ինչպէս որ Ան գնաց»), քանի որ մենք ազատ ենք մեր անհնազանդ բնութեան ազդեցութենէն: Բայց եթէ տեղի տանք մեղքին, մենք Բարեխօս ունինք:

Մենք` հաւատացեալներս, ուրախանալու պատճառ ունինք, քանի որ այժմ կրնանք ընդունելի կերպով ծառայել մեր Աստուծոյ.

«Ուստի, անշարժ թագաւորութիւնը առած ըլլալով, ամուր բռնենք այն շնորհքը ու Աստուած պաշտենք հաճելի կերպով` ահով եւ երկիւղածութեամբ»: (Եբրայեցիս 12.28):

Ահա եւ շնորհքի նպատակը: Այն կը զօրացնէ մեզ, որ ընդունելի կամ հաճելի կերպով ծառայենք Աստուծոյ:

Ինչո՞ւ մենք չենք հռչակած ամբողջական Աւետարանը. ինչո՞ւ պատմած ենք միայն Աւետարանին կէտը: Այո՛, փրկութիւնը պարզեւ է. այն անկարելի է գնել կամ վաստակիլ: Այս ամէնը ճշմարիտ է: Այնուամենայնիւ, մենք մոռցած ենք ըսելու մարդոց, որ փրկութիւնը կարելի է ստանալ, միայն եթէ ուրանանք մեր կեանքը եւ դաւանինք Յիսուսին իշխանութիւնը: Այդ պարագային, մենք պիտի ունենանք շնորհքի զօրութիւնը, որպէսզի ապրինք Անոր բնութեան համեմատ: Պետրոսը կը գրէ.

«Շնորհք եւ խաղաղութիւն ձեր վրայ աւելնան Աստուծոյ ու մեր Տիրոջը Յիսուսին գիտութիւնովը: Ինչպէս որ Անոր Աստուածային զօրութիւնը մեզի տուաւ, այն բոլոր բաները, որոնք պէտք են կեանքի եւ Աստուածապաշտութեան համար` Անոր գիտութիւնով, որ մեզ փառքով եւ առաքինութիւնով հրաւիրեց, որոնցմով ամենամեծ ու պատուական խոստումներ տրուած են մեզի, որպէսզի ասոնցմով Աստուածային բնութեանը հաղորդակցինք` աշխարհի ցանկութենէն եղած ապականութենէն փախչելով» (Բ. Պետրոս 1.2-4):

Ուշադրութիւն դարձուցէք քանի մը պնդումներու. մենք ստացած ենք շնորհքը Յիսուս Քրիստոսին ճանչնալու միջոցով. շնորհքը` Անոր

Աստուածային զօրութիւնն է, որ կու տայ մեզի այն ամէնը, ինչին կարիքը որ ունինք՝ Աստուածահաճոյ կերպով ապրելու համար, եւ այս Աստուածահաճոյ կեանքը կը համապատասխանէ Անոր Աստուածային բնութեան: Մենք փրկուած ենք այն ապականութենէն, որ մուտք գործած է այս աշխարհ Ադամին միջոցով եւ շատցած է մարդկային ցանկութիւններուն պատճառով, որոնք հակառակ են Աստուծոյ: Այնպէս որ, առիթ մի՛ տաք ռեւէ մէկուն վիատեցնել ձեզ խօսքով կամ գործով, որ չապրիք ըստ Աստուածային բնութեան, որ փոխանցուած է ձեր էութեան մէջ: Պօղոսը պարզօրէն կը նշէ.

«Որովհետեւ Աստուծոյ շնորհքը, որ փրկութիւն կը բերէ, յայտնուած է բոլոր մարդոց: Այն կը սորվեցնէ մեզ «ոչ» ըսել անօրինութեան եւ աշխարհի ցանկութիւններուն եւ ապրիլ զուսպ, արդար եւ Աստուծապաշտ կերպով այս աշխարհին մէջ, մինչ մենք կը սպասենք մեր երանելի յոյսին՝ մեր մեծ Աստուած եւ Տէր Յիսուս Քրիստոսի փառաւոր յայտնութեան, Որ զոհեց Ինքզինը մեզի համար, որ փրկէ մեզ ամէն անօրինութենէն եւ սրբացնէ Իրեն համար՝ որպէս Իր սեփական ժողովուրդ, որ պատրաստակամութեամբ բարին կը գործէ: Ասոնք են այն բաները, որոնք դուն պէտք է սորվեցնես» (Տիտոս 2.11–15, NIV):

Աստուծոյ շնորհքը կը սորվեցնէ մեզ՝ ուրանալ ամէն ամբարշտութիւն եւ այս աշխարհի ցանկութիւնները եւ ապրիլ զուսպ, արդար եւ Աստուծապաշտ կերպով: Աստուծոյ շնորհքը մեր կեանքին մէջ նման է ուսուցիչի, որ ցուցնունքներ կու տայ եւ կ'օժտէ ատոնց հետեւելու կարողութեամբ:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ մենք պէտք է սորվեցնենք այս բաները: Պօղոսը կը շարունակէ. «Այս խօսքը հաւաստի է, եւ ես կ'ուզեմ, որ դուն *մշտապէս* հաստատես այս բաները, որպէսզի Աստուծոյ հաւատացողները ջանք ընեն բարի գործեր ընելու» (Տիտոս 3.8):

Մենք պէտք է շարունակ բարի գործեր ընենք մեր մէջ գտնուող Աստուծոյ շնորհքի զօրութեամբ: Մենք չունէինք շնորհք մինչեւ փրկուիլը: Հին կտակարանի սուրբերը նոյնպէս չունէին: Այն Աստուծոյ պարգեւն է, որ տրուած է մեզի Յիսուս Քրիստոսի միջոցով:

Այս պատճառով Յիսուս կ'ըսէ մեզի, որ Հին կտակարանի ժամանակաշրջանին մէջ դուք մարդասպան պիտի համարուէիք եւ դժոխք երթալու վտանգի ենթակայ պիտի ըլլայիք, եթէ խլէիք ինչ որ մէկուն կեանքը: Այնուամենայնիւ, շնորհքի ներքոյ հերիք է, որ յիմար անուանէք ձեր եղբայրը, կանխակալ վերաբերմունք ունենաք, հրաժարիք ներել կամ այլ տեսակի ատելութիւն կրէք ձեր մէջ, եւ դուք դժոխքի կրակը իյնալու վտանգի մէջ պիտի յայտնուիք (տե՛ս Մատթէոս 5.21,22): Ինչո՞ւ այդ-

պէս է: Այժմ մենք կրնանք ապրիլ համաձայն Աստուծոյ բնութեան թէ՛ ներքուստ, թէ՛ արտաքուստ՝ Անոր շնորհքի զօրութեան միջոցով:

Մշտապէս հաստատէ՛

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Տիտոս 3.8-ը կը պատուիրէ մեզի *մշտապէս* հաստատել կամ սորվեցնել այս բաները: Դուք լսեցի՞ք ասիկա: Ես կը տեսնեմ, որ մեր օրերուն մէջ այս բաները *հազուադէպ* կը քարոզուին ամպիոններէն, եւ հաւատացեալները հազուադէպ կը խօսին այս մասին, ալ ի՞նչ խօսք մշտապէս սորվեցնելու մասին: Ահա թէ ինչու շեղած ենք Աստուծոյ շնորհքով շարունակ բարի գործեր ընելու կարելորութենէն: Ըստ էութեան, մենք առիթ տուած ենք, որ մեր ներսի զօրութիւնը քնացած մնայ՝ հաւատքի կամ հասկացողութեան պակասի պատճառով: Մեր հաւատքը, որ մուտք ունի դէպի Աստուծոյ շնորհքը, պէտք է գործուն մնայ՝ մեր համոզմունքներու մասին շարունակ խօսելու միջոցով: Պօղոսը կը գրէ. «Որպէսզի քու հաւատքիդ հաղորդակցութիւնը պտղաբեր ըլլայ՝ Քրիստոս Յիսուսով ձեր մէջ եղած բոլոր բարի գործերը ճանչնալով» (Փիլիմոն 6):

Եթէ մենք մշտապէս չհաստատենք այս բաները, կը շեղինք ճշմարտութենէն: Ասիկա պարզօրէն կ'երեւայ Եբրայեցիներու նամակին մէջ գրուած հետեւեալ խօսքերէն.

«Անոր համար պէտք է ա՛լ աւելի ուշադրութիւն ընենք մեր լսած բաներուն, որ չըլլայ թէ պակսինք: Վասնզի եթէ այն խօսքը, որ հրեշտակներուն ձեռքով ըսուեցաւ, հաստատուն եղաւ եւ ամէն յանցանք ու անհնազանդութիւն արդար հատուցում առին: Հապա մենք ի՞նչպէս պիտի ազատինք, եթէ անհոգ ըլլանք այնպիսի մեծ փրկութեան մը մասին, որ նախ Տիրոջմէն հռչակուեցաւ եւ լսողներուն ձեռքով հաստատուեցաւ» (Եբրայեցիս 2.1–3):

Մշտապէս հաստատելով այս բաները՝ մենք երբեք չենք մոռնար յաւիտենութեան հետ կապուած այն կարեւոր ճշմարտութիւնները, որոնք առիթ չեն տար մեզի շեղելու:

Պատանի հասակին ես յաճախ ծուկ կը բռնէի: Երբեմն ընկերս եւ ես կը մոռնայինք խարսխել մեր նաւակը, եւ մինչ մենք տարուած էինք ծուկ բռնելով, նաւակը աննկատ կը հեռանար ափէն: Քառասունհինգ վայրկեան յետոյ, նայելով մեր շուրջը, մենք նոյնիսկ չէինք հասկնար, թէ ուր յայտնուած էինք: Մենք հեռացած էինք մեր գտնուելու վայրէն, քանի որ կեդրոնացած էինք այլ բաներու վրայ, մեր պարագային՝ ձկնորսութեան:

Նման անփութութիւնը շատ սուղ նստած է որոշ մարդոց վրայ, քանի որ անոնք ծուկ կը բռնէին այնպիսի գետերու մէջ, որոնք կ'աւարտէին

մահացու վտանգաւոր ջրվէժներով: Շատերը մահացած են գետերու թափման հատուածներու մէջ, քանի որ հեռացած են այն վայրէն, ուր սկիզբը կը գտնուէին:

Նոյնը ճշմարիտ է յաւիտենութեան վերաբերող կարեւոր հարցերուն մէջ: Եթէ Աստուած կ'ըսէ, որ մենք պէտք է մշտապէս հաստատենք այս բաները, կը նշանակէ՝ մենք պէտք է ընենք ասիկա: Ինչո՞ւ մենք չենք խօսիր շնորհքի գօրութեան մասին, որ Աստուածահաճոյ եւ հնազանդ կեանք վարելու կարողութիւն կու տայ մեզի:

Ես պարզած եմ, որ առաջին եկեղեցին այսպէս ալ կը վարուէր: Ես ուսումնասիրած եմ առաջին եկեղեցւոյ հայրերու գործերէն մէկ քանին եւ տեսած եմ, որ անոնք կը սորվեցնէին այնպիսի բաներ, որոնք գրեթէ խորթ կը թուան մեր այսօրուան ուսմունքներու համեմատ, բայց չեն հակասեր Աստուածաշունչին: Առաջին դարերուն մէջ ապրող եկեղեցւոյ հայրերը կը հաւատային, որ գործերը խիստ կարեւոր ապացոյց են մեր փրկութեան համար: Դիտարկենք քանի մը օրինակ:

Առաջին անձնաւորութիւնը, որուն խօսքը պիտի մէջբերեմ, Պոլիկարպոսն է (մ.թ. 69–156թթ.): Ան եպիսկոպոս էր Չմիւռնիայի եկեղեցւոյ մէջ եւ Յովհաննէս առաքեալի գործակիցն էր: Տարեց հասակին զինք ձերբակալեցին եւ այրեցին սիւնի վրայ: Ան կը գրէ. «Շատերը կ'ուզեն մուտք գործել այս ուրախութեան (փրկութեան) մէջ՝ գիտնալու, որ դուք փրկուած էք շնորհքով, ոչ թէ գործերով»²: Այս արտայայտութիւնը ընդունուած պիտի ըլլար այսօրուան աւետարանական շրջանակներուն մէջ: Մենք շեշտադրած ենք այն փաստը, որ մենք փրկուած չենք մեր բարի գործերով: Այնուամենայնիւ, Պոլիկարպոսը նոյնպէս կը գրէ հաւատացեալներուն. «Ան, Որ յարութիւն տուաւ Անոր մեռելներէն, նոյնպէս յարութիւն պիտի տայ մեզի, եթէ կատարենք Անոր կամքը, վարուինք ըստ Անոր պատուիրաններուն եւ սիրենք այն, ինչ որ Ան կը սիրէ՝ հեռու պահելով մենք մեզ ամէն անարդարութենէ»³: Այսօր դուք յաճախ մեր ամպիոններէն չէք լսեր այս մասին:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «եթէ» բառին վրայ: Ան կ'ըսէր, որ մենք պէտք է կատարենք Աստուծոյ կամքը եւ վարուինք ըստ Անոր պատուիրաններուն, որպէսզի յարութիւն առնենք հաւատացեալներու յարութեան ժամանակ: Շուտով պիտի տեսնէք, որ ճիշդ նոյն խօսքերը կ'ըսէ նաեւ Յիսուսը:

Յաջորդ անձնաւորութիւնը, որուն խօսքը պիտի մէջբերեմ, Կղեմես Հռովմայեցին է (մ.թ. 30–100թթ.): Ան եղած է Պօղոս եւ Պետրոս առաքեալներու գործակիցը եւ Հռովմի եկեղեցւոյ վերակացուն: Ան կը գրէ. «Մենք չենք արդարանար մեզմով, եւ ո՛չ ալ՝ մեր Աստուածապաշտութեամբ կամ գործերով, այլ՝ հաւատքով, որուն միջոցով Ամենակարող Աստուած արդարացուց բոլոր մարդիկը»⁴: Այս արտայայտութիւնը նոյն-

պէս լայնօրէն պիտի ընդունուէր մեր օրերու քրիստոնէական շրջանակներուն մէջ: Այնուամենայնիւ, Կղեմէսը նոյնպէս կը գրէ հաւատացեալներուն. «Անհրաժեշտ է, որ մենք բարի գործեր ընելու մեծ ձգտում ունենանք: Որովհետեւ Ան նախագուշացուց մեզ. «Ահա Տէրը կու գայ, եւ Անոր վարձատրութիւնը Իր առջեւ է, որ հատուցէ ամէն մարդու՝ ըստ անոր գործերուն» (Հռովմայեցիս 2.6–10)»⁵:

Թերեւս ճիշդ այդ պատճառով Պօղոսը կը գրէ. «Այն երկնային տեսիլքին անհնազանդ չեղայ ես. հապա առաջ Դամասկոս ու Երուսաղէմ եղողներուն եւ բոլոր Հրէաստանի երկիրը ու հեթանոսներուն քարոզեցի, որ ապաշխարեն ու Աստուծոյ դառնան եւ *ապաշխարութեան արժանաւոր գործեր ընեն*» (Գործք 26.19,20): «NLT» թարգմանութեան մէջ գրուած է. «...եւ ապացուցել, որ անոնք փոխուած են՝ այն բարի գործերով, որ կ'ընեն»: Քանի որ Պօղոսը կը շեշտէր ասիկա, տրամաբանական կը թուայ, որ անոր գործակիցը՝ Կղեմէս Հռովմայեցին, նոյնը կ'ընէր:

Յաջորդ առաջնորդը, որուն կ'ուզեմ յիշատակել, Կղեմէս Ալեքսանտրացին է (մ.թ. 150–200թթ.): Ան Ալեքսանտրիայի մէջ՝ Եգիպտոսի մէջ գտնուող եկեղեցւոյ առաջնորդն էր, ինչպէս նաեւ կը ղեկավարէր իր եկեղեցիին մէջ գործող նորադարձներու դպրոցը: Անհաւատներու մասին ան կը գրէ. «Նոյնիսկ եթէ հիմա անոնք բարի գործեր ընեն, ատոնք որեւէ օգուտ չեն բերեր իրենց մահէն յետոյ, եթէ հաւատք չունենան»⁶:

Այս խօսքը նոյնպէս սրտաբաց պիտի ընդունուէր մեր օրերու աւետարանական քրիստոնէաներու կողմէն: Մենք գիտենք, ինչպէս ես արդէն նշեցի վերջին քանի մը գլուխներուն մէջ, որ անկախ այն բանէն, թէ որքան բարի գործեր կ'ընեն անհաւատները՝ անոնք, միեւնոյնն է, չեն կրնար մուտք գործել Աստուծոյ յաւիտենական թագաւորութիւնը: Մենք փրկուած ենք Աստուծոյ շնորհքով: Այնուամենայնիւ, ահա թէ ինչ կը գրէ Կղեմէսը հաւատացեալներուն.

«Ով որ կը գտնէ ճշմարտութիւնը եւ աչքի կ'իյնայ բարի գործերով, պիտի ստանայ յաւիտենական կեանքի մրցանակը... Ոմանք ճշգրիտ եւ պատշաճ կերպով կը հասկնան, թէ ինչպէս Աստուած կու տայ անհրաժեշտ գործերը (փրկուելու համար), բայց քանի որ քիչ կը կարեւորեն այն գործերը, որոնք կը տանին դէպի փրկութիւն, անոնք չեն կրնար անհրաժեշտ կերպով պատրաստուիլ՝ իրենց յոյսի առարկային հասնելու համար»⁷:

Թերեւս ձեզմէ ոմանք մտածեն. «Երեւի թէ այս մարդիկ չեն կարողացած Նոր կտակարանը»: Ո՛չ, անոնք կարողացած են այն: «Վերջնական վկայութիւն» աշխատութեան մէջ Ճոշ ՄաքՏաուելը կը նշէ, որ Կղեմէս Ալեքսանտրիացին օգտագործած է 2.400 մէջբերում ընդամէնը Նոր կտակարանի երեք գիրքերէն»⁸: Նոյն կերպով կը վարուէին միւս առաջ-

նորդները, որոնց խօսքերը ես մէջբերեցի: Ի հակադրութիւն՝ պէտք է ըսեմ, որ շատ գիրքեր մեր ժամանակակից քրիստոնէական գրախանութներուն մէջ շատ քիչ Աստուածաշնչեան հատուածներ կը բովանդակեն: Թերեւս մեր շեղելու պատճառը ճիշդ այն է, որ մենք մշտապէս չե՞նք հաստատած այն, ինչ որ կարելի է:

Մեր թերի Աւետարանը

Դժբախտաբար, մենք հիմնականին կը մէջբերենք այնպիսի սուրբգրային հատուածներ, ինչպիսիք են, օրինակ, Հռովմայեցիներու 10.9-ը. «Եթէ բերանովդ Յիսուսը Տէր դաւանիս եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած յարութիւն տուաւ Ջինք մեռելներէն, պիտի ապրիս»: Մենք կ'ըսենք մարդոց, որ անոնք պէտք է պարզապէս կրկնեն այս կախարդական աղօթքը, եւ փրկուած կ'ըլլան:

Այնուամենայնիւ, ինչո՞ւ մենք ուշադրութիւն չենք դարձնել Յիսուսի խօսքերուն եւ չենք սորվեցներ ատոնք: Ան ըսաւ. «Ինչո՞ւ Ջիս «Տէ՛ր, Տէ՛ր» կը կոչէք ու ըսած բաներս չէք կատարել» (Ղուկաս 6.46): Ինչպէս տեսանք, «Տէր» բառը կը նշանակէ գերագոյն իշխան: Այն սեփականատիրութեան իմաստ կը կրէ: Այնպէս որ, Յիսուս կը զգուշացնէ. «Ինձի «Տէր» մի՛ անուանէք, եթէ տակաւին դուք անձնապէս կը վերահսկէք ձեր կեանքը: Աւելի լաւ է՝ անուանէք Ինձի «Մեծ մարգարէ» կամ «Ուսուցիչ», որպէսզի դուք ձեզ չխաբէք»:

Այժմ կրկին ուսումնասիրենք Յիսուսին խօսքերը, որոնցմով սկսանք ամբողջ այս քննարկումը. «Ոչ թէ ամէն Ինձի «Տէ՛ր, Տէ՛ր» ըսողը պիտի մտնէ Երկնքի արքայութիւնը» (Մատթէոս 7.21ա):

Ինչպէս արդէն ըսինք, ոչ ամէն մէկը, որ *Տէր* կ'անուանէ Յիսուս Քրիստոսին, Երկինք պիտի երթայ: Ասիկա ակնյայտօրէն ցոյց կու տայ, որ միայն «մեղաւորի աղօթքը» աղօթելը մեզի համար Երկնքի մէջ տեղ չ'ապահովել: Այդ պարագային, ես կ'ուզեմ տալ հետեւեալ հարցումը. ո՞վ պիտի մտնէ Երկնքի թագաւորութիւնը:

Յիսուս կը պատասխանէ այս հարցումին՝ ըսելով. «Այլ ան, որ կը կատարէ Իմ Հօր կամքը, որ Երկինքն է» (Մատթէոս 7.21բ):

Հետաքրքրական է, որ Պոլիկարպոսը գրեթէ նոյնութեամբ կը կրկնէ այս խօսքերը: Այսպիսով, մենք Երկինք չենք երթար, եթէ միայն դաւանինք Յիսուսին: Մենք Երկինք կ'երթանք, եթէ դաւանինք Յիսուսին եւ կատարենք Աստուծոյ կամքը: Եւ մենք կրնանք կատարել Աստուծոյ կամքը միայն Անոր շնորհքով: Աստուած կու տայ մեզի Իր շնորհքը, երբ կը խոնարհինք՝ ուրանալով մեր կեանքը եւ ընդունելով Ջինք՝

որպէս Տէր: Դաւանիլը դիւրին է. դժուար է Անոր իշխանութեան լիովին անձնատուր ըլլալը:

Իսկ այժմ տեսէ՛ք, թէ ինչու այսպէս կը շեշտադրէ այս ճշմարտութիւնը.

«Երբ Դատաստանի օրը գայ, շատերը պիտի ըսեն Ինձի. «Տէ՛ր, Տէ՛ր: Քու անունովդ մենք խօսեցանք Աստուծոյ ուղերձը, Քու անունովդ մենք շատ դէւեր հանեցինք եւ շատ հրաշքներ գործեցինք»: Այդ ժամանակ Ես պիտի ըսեմ անոնց. «Ես երբեք չեմ ճանչցած ձեզ: Հեռո՛ւ գացէ՛ք Ինձմէ, անօրէ՛ն մարդիկ»» (Մատթէոս 7.22,23, TEV):

Ուշ 1980-ական թուականներուն Աստուած տեսիլք մը ցոյց տուաւ: Ես տեսայ այնպիսի մեծ բազմութիւն, որուն վերջը չէր երեւեր: Այդ բազմութիւնը ըսես մարդոցմէ բաղկացած ծով ըլլար: Ես գիտէի, որ այդ խումբին մէջ չկային աթէիսթներ, ինքնավստահ մեղաւորներ կամ այլ կրօններու հետեւորդներ: Բոլորը այդտեղ կը դաւանէին, որ քրիստոնէայ էին: Այս բազմութիւնը եկաւ Դատաստանի գահին մօտ՝ լիովին ակնկալելով, որ Յիսուս պիտի ըսէր իրենց. «Մտէ՛ք ձեր Տիրոջ ուրախութեան մէջ՝ Աստուծոյ թագաւորութիւնը»: Փոխարէնը՝ անոնք լսեցին. «Մէկդի գացէ՛ք, դուք անօրինութիւն գործողներ» (Մատթէոս 7.23):

Ես տեսայ լիակատար զարմանք եւ սարսափ անոնց դէմքերուն: Կրնա՞ք պատկերացնել, որ վստահ եղած էք ձեր փրկութեան մէջ, այնինչ երբեք փրկուած չէք եղած: Պատկերացուցէ՛ք, որ պէտք է յաւիտեան աքսորուիք դէպի դժոխքի կրակները, թէեւ դուք հաւատացած էք, որ Երկինք պիտի երթաք: Եւ պէտք է յաւիտեանս յաւիտենից մնաք այն մտքին, որ ե՛ն դուք, ե՛ն հաւանաբար անոնք, որոնց դուք կը քարոզէիք, շատ թէթեւօրէն վերաբերած էք ձեր յաւիտենական հանգրուանը հասնելուն:

Արդեօ՞ք մենք կրնանք դրական ուղերձ քարոզել զԱստուած փնտռողներուն՝ չիշատակելով Յիսուսին յորդորները:

Դուք կը հասկնա՞ք, թէ ինչու մենք պէտք է ազդարարենք Աստուծոյ ամբողջական խորհուրդը, ոչ թէ միայն ատոր դրական կողմերը կամ առաւելութիւնները: Այո՛, մեզի համար հաճելի են առաւելութիւնները, եւ մենք պէտք է պատմենք ատոնց մասին եւ ուրախանանք ատոնցմով: Բայց պէտք չէ ընենք ասիկա՝ Աստուծոյ Խօսքի պատուիրանները եւ զգուշացումները անտեսելու հաշուին:

Կը յիշեմ, որ մէկ անգամ համաժողովի մը ընթացքին ըսի, որ ես ճշմարտութիւնը կը քարոզեմ, որովհետեւ «...չեմ ուզեր, որ Դատաստանի օրը մարդիկ պորան իմ վրաս՝ ըսելով. «Ինչո՞ւ դուն չըսիր ինձի ճշմարտութիւնը», եւ անոնց արիւնը կաթկթի իմ ձեռքերէն»:

Իմ քարոզէն յետոյ հովիւ մը, որ շատ բարկացած էր, անմիջապէս մօտեցաւ ինձի: Կարելի է ըսել, որ ան կ'եռար գայրոյթէն: Ան ըսաւ.

– Ինչպե՞ս կը համարձակիք բարդել հինկտակարանեան Աստուածաբանութիւնը մեր ժառանգողներուն վրայ: Իմ ձեռքերէն չէր կաթկթեր ոչ ոքի արիւնը՝ ամբողջական Աւետարանը չհռչակելու համար:

Ակնյայտ էր, որ այդ մարդուն հաճելի էին Աստուծոյ Խօսքի դրական կողմերը, բայց ան կ'աշխատէր չիշատակել վիճարկելի հատուածները: Ես պատասխանեցի.

– Կարդացէ՛ք, թէ ինչ ըսաւ Պօղոսը Եփեսոսի առաջնորդներուն:

Իմ Աստուածաշունչս քովս էր, եւ ես բացի Գործք առաքելոց գիրքը ու խնդրեցի անորմէ կարդալ. «Ուստի՝ այսօր կ'իմացնեմ ձեզի, թէ ես անպարտ եմ ամէնուդ արիւնէն: Վասնզի ետ չկեցայ Աստուծոյ բողոք կամքը ձեզի յայտնելէ» (Գործք 20.26,27):

Ան բարձրացուց գլուխը եւ ցնցուած նայեցաւ ինձի. անոր աչքերը եւ բերանը լայն բացուած էին: Եւ ըսաւ.

– Ես շատ անգամներ կարդացած եմ Նոր կտակարանը, բայց երբեք չեմ նկատած ասիկա:

Ատկէ յետոյ մենք ընկերաբար գրուցեցինք: Այդ գրոյցի ընթացքին մէջ ես նշեցի, որ մարդկութիւնը Քրիստոսի մէջ հասուն դարձնելու համար մենք պէտք է ոչ միայն սորվեցնենք, այլեւ զգուշացնենք անոնց (տե՛ս Կողոս. 1.28): Ո՞րն է մեր զգուշացումը: «Մի՛ հեռանաք ճշմարտութենէն: Մի՛ շեղիք խաբեբայ մարդոց ուղերձով, որոնք խաբէութեամբ կը հեռացնեն Աստուածապաշտութենէն ոչ միայն իրենց, այլեւ անթիւ մարդոց»:

Մինչ Գործք 20-րդ գլուխին մէջ նկարագրուած իրադարձութիւնը, Պօղոսը երկար ժամանակ անցուցած էր Եփեսոսի հաւատացեալներուն հետ: Ան սրտանց կը սիրէր այդ մարդիկը եւ Աստուծոյ Հոգիով գիտէր, որ այլեւս պիտի չտեսնէր զանոնք՝ մինչեւ Երկինքը հանդիպիլը: Մտածեցէ՛ք, թէ որքան զգուշօրէն կ'ընտրէիք ձեր Խօսքերը, եթէ գիտնայիք, որ վերջին անգամ կը դիմէք անոնց, որոնք մանուկներու պէս եղած են ձեզի համար: Պօղոս տուաւ հետեւեալ իրահանգները անոնց հրաժեշտ տալու ժամանակ.

«Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն եւ բոլոր հօտին համար, որուն վրայ Սուրբ Հոգին ձեզ տեսուչ դրաւ: Աստուծոյ եկեղեցին հովուելու, որ Իր արիւնովը ստացաւ: Քանզի գիտեմ, թէ իմ զատուելէս ետքը ձեր մէջ յափշտակող գայլեր պիտի մտնեն, որոնք պիտի չխնայեն հօտը: Եւ ձեզմէ ալ այնպիսի մարդիկ պիտի ելլեն, որոնք ծուռ բաներ պիտի Խօսին՝ աշակերտները իրենց ետեւէն քաշելու համար: Ուստի՝ արթուն կեցէ՛ք եւ մտքերնիդ բերէ՛ք, թէ երեք տարի գիշեր ու ցերեկ չդադրեցայ ամէն մէկը արցունքով խրատելէ» (Գործք 20.28–31):

Ինչպէ՞ս այս մարդիկ պիտի աղաւաղէին ճշմարտութիւնը: Հաւանաբար՝ խօսքերով, բայց աւելի հաւանական է, որ գործերով: Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Պօղոսը այնքան զօրաւոր կը զգար, թէ աստիկա տեղի պիտի ունենայ, որ երեք տարի ցերեկ ու գիշեր անդադար կը զգուշացնէր եկեսացիները: Կրկին, մենք կը տեսնենք շեշտադրումը այն մասին, որ պէտք է մշտապէս հաստատենք այս բաները:

Սիրոյ եւ արդարութեան Աստուած

Մեր այլաբանութեան մէջ կարելի էր զգալ Խաբուածի ցնցումը եւ հոգեվարքը: Դուք հեւոց արծակեցիք՝ կանխազգալով անոր բանտարկութիւնը Լոնի մէջ: Դուք կծկուեցաք՝ պատկերացնելով անոր կեանքի մնացած 130 տարին խաւարի, անտանելի տաքութեան եւ աղտոտած օդին մէջ: Այնուամենայնիւ, աստիկա ոչինչ է՝ համեմատած այն բանին, ինչին պիտի բախին անթիւ տղամարդիկ եւ կանայք, եթէ մենք չհռչակենք Աստուծոյ ամբողջական խորհուրդը:

Եթէ կը յիշէք, Ճէյլընը ե՛ւ սիրող էր, ե՛ւ արդար: Իր դատաստանին մէջ սէրը յայտնուեցաւ այն կերպով, որ ան չէր կրնար առիթ տալ Տակոնի բնութիւնը եւ բնաւորութիւնը ունեցող ոչ մէկ մարդու մուտք գործել Աֆապէլ քաղաքը: Եթէ աստիկա պատահէր, այդ մարդը կ'աղաւաթր եւ կը պղծէր ամբողջ քաղաքը եւ բոլոր բնակիչները: Ճէյլընի սէրը կը պաշտպանէր անմեղ մարդիկը:

Միեւնոյն ժամանակ Ճէյլընը չէր կրնար առիթ տալ, որ Տակոնի բնութիւնը ունեցող մարդը ստանար աւելի ցած պատիժ անհնազանդութեան համար, քան ինքը՝ Տակոնը: Այս պատճառով, անոնք, որոնք որոշած էին չհետեւիլ Ճէյլընին, պէտք է արտաքսուէին եւ բանտարկուէին Լոնի մէջ՝ ինչպէս եւ ան:

Նոյն կերպով, Աստուծոյ սէրը չի կրնար թոյլ տալ ռեւէ մարդու մը, որ սատանայի բնութիւնը ունի, ապրիլ յաւիտենական քաղաքին մէջ: Անարդար պիտի ըլլար դատապարտել սատանան եւ անոր զօրքերը յաւիտեան Կրակի լիճին մէջ տանջուելուն՝ բացառութիւն ընելով անոնց համար, որոնք, գտնուելով սատանայի իշխանութեան տակ, որոշեցին պահպանել անոր բնութիւնը: Այն մարդիկ, որոնք ունին անոր բնութիւնը, յաւիտեան պիտի դատապարտուին անոր հետ Կրակի լիճին մէջ ըլլալուն: Աստուած ողորմած եւ արդար է, եւ միշտ ալ այդպիսին պիտի ըլլայ, եւ Անոր փառքը պիտի յայտնուի ամբողջ աշխարհին մէջ:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՄԵԿ, ԳԼՈՒԽՆԵՐ 4,5

1. Մինչեւ այս բաժինը կարդալը դուք կը համարէի՞ք, որ յաւիտենական դատաստանը հիմնարար վարդապետութիւն է, որ ամէն քրիստոնէայ պէտք է հասկնայ: Ի՞նչ կը կատարուի, երբ մենք կ'աշակերտենք մարդոց՝ առանց խորապէս սորվեցնելու այս թեման:
2. Շատ քրիստոնէաներ չեն պատմեր մարդոց դժոխքի մասին, քանի որ կը վախնան, որ իրենց պիտի համարեն բացասական կամ քննադատող անձնաւորութիւն: Այնուամենայնիւ, այս մասին մարդոց հետ խօսիլը գթասրտութեան քայլ է: Ինչպէ՞ս հաւատացեալները (թէ՛ առանձին մարդիկ, եւ թէ՛ եկեղեցիները) կրնան խօսիլ այս մասին՝ սէրէն դրդուած:
3. Ինչպէ՞ս պիտի բացատրէք հաւատքի եւ պտուղի (կամ՝ գործերու) կապը: Եթէ փրկութիւնը պարգեւ է, ինչո՞ւ մեր գործերը կարելոր են մեր հաւատքին համար:
4. Հինգերորդ գլուխին մէջ նշեցինք, որ մենք հակուած ենք պատմելու Աւետարանի խոստումներու մասին՝ չանդրադառնալով այն բանին, թէ ինչ ազդեցութիւն պիտի ունենայ Յիսուսին հետեւելու որոշումը մարդու կեանքին մէջ: Ինչո՞ւ Քրիստոսին հնազանդ կեանքը աւելի լեցուն է, քան այն կեանքը, որ պարզապէս մեզի հոգեւոր արտօնութիւններ կու տայ եւ չի պարտադրեր մեր ապրելակերպը փոխել:
5. Մտովի վերլիչեցէ՛ք այն ամէնը, ինչ որ գիտցաք մինչեւ հիմա փրկութեան եւ դատաստանի մասին, նաեւ այն մասին, թէ ինչպէս մեր այսօրուան կեանքը կ'ազդէ յաւիտենութեան վրայ: Արդե՞օք շնորհքի նկարագրութիւնը հինգերորդ գլուխին մէջ օգնեց ձեզի աւելի խորապէս հասկնալու այս թեմաները:



ԲԱԺԻՆ ԵՐԵՔ



ՄԵԾ ՆԱՀԱՆՁՐ

«Բայց ով որ մինչեւ վերջ դիմանայ, պիտի փրկուի...»:
— Սատթէոս 24.13, TEV

Այս գլուխին մէջ մենք պիտի խօսինք այն ճշմարտութիւններուն մասին, որոնք ներկայացուած են Երկակի կեանքի եւ Յուսահատ սրտի կերպարներու միջոցով: Ժամանակ մը անոնք ճշմարտապէս կը հետեւէին Ճէյընին: Այնուամենայնիւ, անոնցմէ մէկը անոր ճիշդ դրդապատճառներով չէր հետեւեր, իսկ միւսը, ի վերջոյ, բոլորովին հեռացաւ անոր ճանապարհներէն: Երկուքին վերջն ալ ողբերգական էր:

**«Կարդալ այն, ինչին կը հաւատանք»,
թէ՞ «Հաւատալ մեր կարդացածին»**

Այն ճշմարտութիւնները, որոնց մասին պիտի խօսինք այս գլուխին մէջ, վիճարկելի են որոշ ատետարանական շրջանակներու մէջ: Այնուամենայնիւ, եթէ մենք կը ցանկանք գիտնալ ճշմարտութիւնը եւ անկեղծ ենք մենք մեզի հետ, Աստուածաշունչի մանրակրկիտ ուսումնասիրութիւնը պիտի հեռացնէ բոլոր հակասութիւնները: Մինչ կը խօսինք այն մասին, թէ Աստուածաշունչը ինչ կը սորվեցնէ Երկակի կեանքի եւ Յուսահատ սրտի պէս մարդոց մասին, Առիթ տուէք խնդրել ձեզի, որ շարունակէք ընթերցանութիւնը բաց սրտով եւ բաց մտքով:

Մեծագոյն խոչընդոտներէն մէկը, որուն կը բախինք, երբ կը ձգտինք ճանչնալ Աստուծոյ կամքը, այն է, որ Աստուածաշունչը կարդալու ժամանակ մենք կը *կարդանք այն, ինչին որ կը հաւատանք*, փոխարէնը *հաւատանք մեր կարդացածին*: Մենք կը կարդանք այն, ինչին որ կը հաւատանք, երբ կ'որոշենք նայիլ ճշմարտութեան «աղտոտած ակնոցով»: Պատճառը ոչ ճշգրիտ գիտելիքն է՝ ստացուած այլ մարդոցմէ կամ մեր յարանուանութեան ուսմունքներէն, եւ նոյնիսկ՝ մեր սեփական կանխակալ պատկերացումները Աստուծոյ եւ Անոր ճանապարհներու մասին: Ասիկա շատ վտանգաւոր է, քանի որ կրնայ խաբէութեան տանիլ մեզ: Այսպիսի օրինակ մը կարելի է գտնել Յոբայ գիրքին մէջ:

Վերջերս ես վերցուցի Աստուածաշունչս եւ տակաւին չէի հասած գիրքը բանալու, երբ Աստուծոյ Հոգին ըսաւ. «Բա՛ց Յոբայ գիրքը եւ կարդա՛ երեսուներկրորդ գլուխէն»: Ես անմիջապէս բացի այդ գլուխը եւ տեսայ, որ այն Եղիուսի խօսքի սկիզբն էր:

Փոքրիկ նախապատմութիւն մը: Յոբը մեծ ողբերգութիւն կրեց, որմէ՛ յետոյ անոր պատկերացումը Աստուծոյ մասին արագօրէն փոխուեցաւ՝ իր մեծ տառապանքի եւ տարաբախտութեան պատճառով: Ան սկսաւ դիտարկել զԱստուած իր փորձառութեան տեսանկիւնէն, Անոր իմաստութիւնը փնտռելու փոխարէն (տե՛ս Յակոբ. 1.2–8): Ժամանակի ընթացքին անոր դատողութիւնները հասցուցին զինք ինքնաարդարացման: Յոբի երեք ընկերները, որոնք կը խօսէին մինչեւ այն գլուխը, որմէ ես սկսայ կարդալ, վարուեցան սխալական եւ ինքնակոչ աստուածաբաններու պէս՝ փորձելով բացատրութիւն տալ Յոբի ողբերգութեան: Անոնց փորձերը աւելի վատթարացուցին իրավիճակը: Չկարենալով հերքել Յոբի սխալ դատողութիւնները՝ ընկերները զինք մեղադրեցին:

Եղիուսը, որ ամենաերիտասարդն էր այդ խումբին մէջ, երկար սպասեց, որպէսզի Աստուծոյ իմաստութիւնը լսէր Յոբէն եւ անոր երեք ընկերներէն: Ի վերջոյ, հասկնալով, որ Յոբի երեք ընկերները այլեւս ըսելիք չունէին, ան սկսաւ խօսիլ. «Ես համբերատար կը լսէի, մինչ դուք կը խօսէիք, եւ կը սպասէի, մինչ դուք իմաստուն խօսքեր կը փնտռէիք: Ես ուշադիր կը հետեւէի եւ լսեցի, թէ ինչպէս ձայնողեցաք. դուք չհերքեցիք Յոբին ըսածը: Ինչպէ՞ս կրնաք պնդել, որ իմաստութիւն գտած էք: Աստուած պէտք է պատասխանէ Յոբին, քանի որ դուք ձայնողեցաք» (Յոբայ 32.11–13, TEV):

Եղիուսը շարունակեց՝ յանդիմանելով բոլորը: «Արդե՞օք Աստուած պէտք է համապատասխանեցնէ Իր արդարութիւնը ձեր պահանջներուն» (Յոբայ 34.33, NLT): Որքա՛ն ճշդօրէն ան խօսեցաւ մեր օրերուն մէջ լայնօրէն տարածուած սխալմունքի մասին: Ասիկա եկեղեցւոյ մոլորած Աստուածաբանութեան գլխաւոր արմատներէն մէկն է. *մենք առիթ կու տանք մեր փորձառութեան մեկնաբանելու Աստուծոյ խօսքը, փոխարէնը առիթ տանք Աստուծոյ խօսքին սահմանելու ճշմարտութեան չափանիշները*:

Եղիուսը չխօսեցաւ մարդկային դատողութեամբ, կամ այնպիսի Աստուածաբանութեամբ, որ ձեւաւորուած է որոշակի իրադարձութիւններու, դէպքերու կամ Աստուծոյ մասին կանխակալ կարծիքներու հիման վրայ: Ան ներկայացուց Աստուծոյ անարատ խօսքը՝ առանց կեղծելու ճշմարտութիւնը: Անմիջապէս անոր խօսքի աւարտէն յետոյ մենք կը կարդանք.

«Եւ փոթորիկի մէջէն Տէրը խօսեցաւ Յոբին հետ. «Ո՞վ ես դուն, որ վիճարկես Իմ իմաստութիւնը քու անտեղեակ, դատարկ բառերով: Կեցի՛ր տղամարդու պէս եւ պատասխանէ՛ այն հարցերուն, որոնք Ես պիտի տամ քեզի»» (Յոբայ 38.1–3, TEV):

Աստուածաշունչի «Էմփիլֆայտ» թարգմանութեան մէջ Աստուծոյ հարցումը այսպիսին է. «Ո՞վ է ասիկա, որ խորհուրդը կը խաւարեցնէ անիմաստ խօսքերով»: Ահա թէ ինչ տեղի կ'ունենայ, երբ մենք կը զտենք Աստուծոյ խօսքերը մեր փորձառութեամբ, այլ մարդոց կարծիքներով, սխալ Աստուածաբանութեամբ կամ Աստուծոյ մասին կանխակալ գաղափարներով: Մենք կը խաւարեցնենք Անոր խորհուրդը՝ այն դարձնելով անհասանելի մեզ շրջապատող մարդոց համար: Փաստօրէն, մենք կը ծածկենք ճշմարտութիւնը անոնցմէ, որոնք կը ցանկան գիտնալ այն: Ահա թէ ինչու Աստուած այդքան բարկացած էր Յոբին եւ անոր ընկերներուն վրայ, եւ նոյնպէս խիստ կը բարկանայ այսօր, երբ մենք սխալմամբ կը ներկայացնենք Անոր ճամբաները: Մենք առիթ չենք տար մարդոց ճանչնալու ճշմարտութիւնը:

Տէրը չորս զուլխ տրամադրեց՝ Յոբին Իր Խօսքը յայտնելու համար: Հազիւ որ Ան աւարտեց, Յոբը զղջումով ըսաւ.

«Ես գիտեմ, Տէ՛ր, որ Դուն ամենագոր ես, որ Դուն կրնաս ընել՝ ինչ որ կ'իզես: Դուն կը հարցնես, թէ ինչպէս ես կը համարձակիմ վիճարկել Քու իմաստութիւնը՝ այսքան տգէտ ըլլալով: Ես խօսեցայ այն բաներուն մասին, որոնք չէի հասկնար, սքանչելիքներու մասին, որոնք շատ մեծ են իմ գիտնալուն համար: Դուն պատուիրեցիր, որ լսէի, երբ խօսեցար, եւ որ փորձէի պատասխանել Քու հարցումներուն: Անցեալին ես գիտէի ընդամէնը այն, ինչ որ ուրիշները ըսած էին ինձի, բայց հիմա ես տեսայ Քեզ իմ աչքերով: Այնպէս որ, ես կ'ամչնամ այն ամէնուն պատճառով, ինչ որ ըսած եմ, եւ կ'ապաշխարեմ հողի եւ մոխրի մէջ» (Յոբայ 42.2–6, TEV):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Յոբը ըսաւ. «Անցեալին ես գիտէի ընդամէնը այն, ինչ որ ուրիշները ըսած էին ինձի, բայց հիմա ես տեսայ Քեզ իմ աչքերով»: Այս խօսքին մէջ շատ մեծ ճշմարտութիւն կայ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ մենք կը փոխուինք փառքէ դէպի փառք, երբ կը տեսնենք Տէրը (տե՛ս Բ. Կորնթ. 3.18), ոչ թէ՛ երբ կը լսենք Անոր մասին: Յիսուս՝ Աստուծոյ կենդանի Խօսքն է: Ձինք տեսնելը կը նշանակէ՛ ճանչնալ Ձինք եւ Անոր ճանապարհները:

Ահա թէ ինչ կ'ընէ յայտնուած ճշմարտութիւնը մարդու կեանքին մէջ: Մենք կը լսենք Աստուծոյ Խօսքը, բայց չենք փոխուիր, քանի տակաւին չենք լուսաւորուած: Երբ Աստուծոյ Խօսքի ճշմարտութիւնը մուտք կը գործէ մեր սիրտը, մենք կ'աղաղակենք. «Ես հասկցայ՝ Ես հասկցայ՝»: Այդ պահուն մենք կը լուսաւորուինք եւ կը վերափոխուինք՝ շարունակելով նմանիլ Անոր:

Այս հոգեւոր ճշմարտութիւնը դրդեց Պողոսը աղօթելու. «Ես... չեմ դադրիր ձեզ համար զոհութիւն տալէն՝ ձեզ իմ աղօթքներուն մէջ յիշելով, որ

մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աստուած՝ փառքի Հայրը, տայ ձեզի իմաստութեան եւ յայտնութեան Հոգին՝ Իր գիտութեամբ, որ ձեր սրտերու աչքերը լուսաւորուելով...» (Եփեսացիս 1.15–18): Յոբը լուսաւորուեցաւ աւելի, քան երբեք, թէեւ ան Աստուածապաշտ կեանք կը վարէր իր ողբերգութենէն առաջ: Ան ճանչցաւ զԱստուած աւելի բարձր մակարդակի վրայ:

Հազիւ որ Աստուած աւարտեց Յոբին հետ, Ան դիմեց Եղիփազին՝ Յոբի ընկերներէն մէկուն. «Ես բարկացած եմ քու եւ երկու ընկերներուդ վրայ, որովհետեւ դուք չխօսեցաք ճշմարտութիւնը Իմ մասին» (Յոբայ 42.7, TEV):

Տէրը շատ լուրջ կ'ընդունի, երբ մենք սխալ կերպով կը ներկայացնենք Ձիւնք եւ Իր ճանապարհները: Ատիկա կը խաւարեցնէ Անոր խորհուրդը եւ կ'աղաւաղէ Անոր արդարութիւնը: Ինծի համար շատ տարօրինակ է, որ մարդիկ առանց մտածելու կ'աջակցին այնպիսի Աստուածաբանական ուղղութիւններու, որոնք չեն հաստատուիր Աստուծոյ Խօսքի ամբողջական խորհուրդով: Որքա՛ն սարսափելի է: Ինչպէ՞ս մենք կրնանք ըսել, որ կը ճանչնանք ճշմարտութիւնը, եթէ չենք ուզեր խրատուիլ կամ շտկուիլ ատորմով:

Երբ աւարտեցի Յոբին գիրքը, Տէրը այնպիսի բան մը ըսաւ ինծի, ինչ որ շատ հարցերու պատասխան դարձաւ: Ան ըսաւ. «Որդի՛ս, դուն նկատեցի՞ր, որ Ես չյայտնուեցայ այն ընթացքին, երբ Յոբը եւ Անոր ընկերները սխալ կը խօսէին Իմ մասին: Իմ ներկայութիւնը չյայտնուեցաւ, քանի տակաւին ինչ որ մէկը չէր կեցած եւ չէր խօսած ճշմարտութիւնը»:

Ես երկիւղ ապրեցայ այն բանէն, ինչ որ Աստուած խօսեցաւ իմ սրտին, եւ սկսայ մտածել Անոր ըսածին մասին: Ես կրկին լսեցի Անոր. «Ահա թէ ինչու բազմաթիւ մարդիկ, եկեղեցիներ եւ յարանուանութիւններ չեն վերապրիր Իմ ներկայութիւնը եւ կեանքեր փոխող զօրութիւնը: Անոնք չեն հռչակեր Իմ անարատ Խօսքը, անոնք կը զտեն այն իրենց մեկնաբանութիւններով կամ դատողութիւններով, եւ ոչինչով կը տարբերին Յոբէն եւ անոր ընկերներէն: Անոնք կը խաւարեցնեն Իմ խորհուրդը իրենց անմիտ բառերով»:

Եթէ մենք կ'ուզենք ճանչնալ Աստուծոյ ներկայութիւնը եւ զօրութիւնը, պէտք է ձգտինք ճանչնալ ճշմարտութիւնը՝ առանց այն կեղծելու: Այնպէս որ, երբ շարունակենք ուսումնասիրել Աստուածաշունչը Աստուծոյ դատաստաններու վերաբերեալ, առիթ մի՛ տաք Աստուծոյ մասին կանխակալ պատկերացումներուն, սխալ Աստուածաբանութեան եւ ձեր հանգամանքներուն փոխելու ձեր տեսանկիւնը այն բաներու մասին, որոնք Ան արդէն պարզօրէն յայտնած է: Փոխարէնը՝ փնտռեցէ՛ք Ձիւնք՝ յայտնուած Աստուծոյ Խօսքով, որպէսզի լուսաւորուիք՝ տեսնելով Անոր ճանապարհները:

Հետեւիլ Յիսուսին շահի համար

Եկէ՛ք խօսինք Երկակի կեանքի մասին: Մենք պիտի սկսինք՝ վերադառնալով Յիսուսին խօսքերուն, որոնց մասին խօսեցանք նախորդ գլուխին մէջ:

«Երբ Ղատաստանի օրը գայ, շատերը պիտի ըսեն Ինձի. «Տէ՛ր, Տէ՛ր: Քու անունով մենք խօսեցանք Աստուծոյ ուղերձը, Քու անունով մենք շատ դէւեր հանեցինք եւ շատ հրաշքներ գործեցինք: Այդ ժամանակ Ես պիտի ըսեմ անոնց. «Ես երբեք չեմ ձանչցած ձեզ: Հեռո՛ւ գացէք Ինձմէ՛, անօրէ՛ն մարդիկ» (Մատթէոս 7.22,23, TEV):

Մէկ ուրիշ թարգմանութեան մէջ, որ աւելի մօտ է բնագիրին, Յիսուսին պատասխանը այսպիսին է. «Երբեք ձեզ չեմ ձանչցած. Ինձմէ՛ մէկդի գացէք, ո՛վ *անօրէնութիւն գործողներ*»: «Անօրէնութիւն» բառը յունարէնի մէջ («անոմիա») կը նշանակէ գործել հակառակ Աստուծոյ օրէնքին կամ կամքին, կամ՝ չհնազանդիլ Աստուծոյ իշխանութեան:

Յիսուս նաեւ կ'աւելցնէ «գործել» բառը՝ ցոյց տալով, որ նկատի չունի այնպիսի մարդոց, որոնք ժամանակ առ ժամանակ կը սայթաքին, եւ ո՛չ ալ Քրիստոսի մէջ գտնուող մանուկ հաւատացեալներուն, որոնք կը պայքարին ազատ ըլլալու համար: Ան կը խօսի այնպիսի մարդոց մասին, որոնք չեն ապրիր Աստուծոյ հաճելի կերպով եւ կ'անտեսեն, կ'արդարացնեն կամ պարզապէս կը ծածկեն իրենց կեանքի ոճը: Այնպէս որ, Յիսուսին խօսքերը կը վերաբերին թէ՛ հաբուածին պէս մոլորած մարդոց, թէ՛ Երկակի կեանքին պէս անհաւատարիմներուն:

Այն բազմութիւնները, որոնց Յիսուս կը դիմէ, պիտի լսեն դատաւճիռներ, որոնք յաւիտեան հանգիստ չեն ձգեր իրենց անիծեալներու բնակավայրերուն մէջ: Անչափ կարեւոր է, որ մենք չանտեսենք Տիրոջ զգուշացումը կամ թեթեւօրէն չվերաբերինք աստոր:

Եկէ՛ք քիչ մը աւելի ուշադրութիւն դարձնենք երկրորդ խումբին, որուն Յիսուս կը դիմէ վերոյիշեալ հատուածին մէջ: Աստուծոյ թագաւորութիւնը մուտք չգործողներու կարգին պիտի ըլլան այնպիսի մարդիկ, որոնք դէւեր կը հանեն *Յիսուսի անունով*:

Որո՞նք են այս մարդիկ: Արդեօ՞ք ինչ որ մէկը կրնայ օգտագործել Յիսուսին անունը՝ դէւեր հանելու համար, եթէ որեւէ կապ չունի Տէր Յիսուսին հետ: Կարդանք հատուած մը Գործք առաքելոց գիրքէն՝ այս հարցումին պատասխանը ստանալու համար.

«Խումբ մը հրեաներ, որոնք քաղաքէ քաղաք կ'երթային, չար հոգիներ հանելով՝ փորձեցին օգտագործել Տէր Յիսուսին անունը: Անոնք այսպիսի հմայախօսութիւն ըրին. «Կը հրամայեմ քեզ, Յիսուսո՛վ, Որուն Պօղոսը կը

քարոզի՝ դո՛րս ելիր»: Սկեայի՝ գլխաւոր քահանաներէն մէկուն եօթ որդիները կ'ընէին ասիկա: Բայց երբ անոնք փորձեցին ասիկա մէկ մարդու մը վրայ, որ բռնուած էր չար հոգիով, հոգին պատասխանեց. «Ես գիտեմ Յիսուսը եւ գիտեմ Պօղոսը: Իսկ դո՞ւք ով էք»: Եւ ան ցատկեց անոնց վրայ եւ յարձակեցաւ այնպիսի սաստկութեամբ, որ անոնք փախան այդ տունէն՝ մերկ եւ ծանր վէրքեր ստացած» (Գործք 19.13–16, NLT):

Այդ չար հոգիներ հանողները (երդմնեցուցիչները) չէին կրնար դէեր հանել Յիսուսին անունով: Այս պատմութեան մէջ մէկ ճշմարտութիւն մը կայ. դէեր հանելու համար բաւական չէ ունենալ միայն Յիսուսին անունը: Դուք պէտք է հաղորդակցութիւն ունենաք այդ անունը Կրողին հետ: Դուք պէտք է ըլլաք Քրիստոսի հետեւորդներու կարգին, ոչ թէ այն մարդոց, որոնց մասին մենք խօսեցանք նախորդ գլուխին մէջ:

Թերեւս մտածէք. «*Չէ՞ որ Յիսուս ըսաւ, որ երբեք չէր ճանչցած զանոնք: Ինչպէ՞ս անոնք կրնային դէեր հանել եւ հրաշքներ գործել Անոր անունով: Արդեօ՞ք ասիկա կարելի է*»:

Կան մարդիկ, որոնք սրտանց միացած են Յիսուսին, որպէսզի ստանան փրկութեան առաւելութիւնները, բայց ըրած են ասիկա միմիայն իրենց շահին համար: Անոնք երբեք չեն ճանչցած Աստուծոյ սիրտը, այլ միայն ցանկացած են Անոր զօրութիւնը եւ օրհնութիւնները: Պօղոսը կը զգուշացնէ, որ նման մարդիկ «մտքով ապականած եւ ճշմարտութենէն հեռացած են, որոնք Աստուածապաշտութիւնը շահավաճառութիւն մը կը սեպեն. այնպիսիներէն մէկդի՛ կեցիր» (Ա. Տիմոթէոս 6.5):

Այս մարդիկ կը փնտռէին Յիսուսը իրենց շահին համար: Կը նշանակէ՝ անոնք կը ծառայէին Անոր՝ մեկնելով իրենց շահէն, ոչ թէ սերէն: Յիսուս չէր ճանչնար զանոնք, քանի որ գրուած է. «Իսկ եթէ մէկը Աստուած կը սիրէ, *ինք Անկէ ճանչցուած է*» (Ա Կորնթացիս 8.3):

Ան ճանչցուած է Աստուծմէ: «Ճանչնալ» բառը այս խօսքին մէջ չի նշանակեր՝ պարզապէս իմանալ ինչ որ մէկուն մասին, քանի որ Աստուած բոլորին մասին ամէն ինչ գիտէ: Ան ամենագէտ է: Այս բառը մտերիմ ճանաչողութեան իմաստ կը կրէ: Աստուածաշունչի «Էմփիլիֆայտ» թարգմանութիւնը ի յայտ կը բերէ այս իմաստը. «Բայց եթէ ինչ որ մէկը ճշմարտապէս [սիրող ակնածանքով, արագօրէն հնազանդելով եւ գոհութեամբ ընդունելով Անոր օրհնութիւնը] կը սիրէ զԱստուած, ան ճանչցուած է Աստուծոյ կողմէն [կը համարուի արժանի *Անոր մտերմութեան* եւ սիրոյն, եւ ան կը պատկանի Անոր]»:

Յիսուս Ղատաստանի օրը պիտի ըսէ այդ բազմութիւններուն. «Երբեք ձեզ չե՛մ ճանչցած»: Այնպէս որ, անոնք, որոնք չեն սիրեր զԱստուած (ինչ որ ակնյայտ է, քանի որ անոնք արագօրէն չեն հնազանդիր Անոր եւ

չեն վերաբերիր սիրող ակնածանքով եւ երկիւղածութեամբ), մտերմօրէն *ճանչցուած* չեն Հօր եւ Յիսուսին կողմէն, նոյնիսկ եթէ անոնք կը սպասեն Անոր փրկութեան: Յիսուսին սիրելը կը նշանակէ, որ դուք կը դնէք ձեր կեանքը Անոր համար: Դուք այլեւս չէք ապրիր ձեզի համար, այլ՝ Անոր:

Յուդան նման մարդու օրինակ է: Ան միացաւ Յիսուսին: Քանի որ Յուդան մեծ զոհ ըրաւ՝ Անոր հետեւելու համար, կը թուար, թէ ան կը սիրէր զԱստուած: Յուդան ձգեց ամէն ինչ, որպէսզի միանար Յիսուսի ծառայողական խումբին եւ հետեւէր Տիրոջը: Ան դիմացաւ թէժ հալածանքներուն, նոյնիսկ երբ ծառայութեան միւս անդամները հեռացան (տե՛ս Յովի. 6.66): Ան ջանձնուեցաւ: Ան դեւեր կը հանէր, կը բժշկէր հիւանդները եւ կը քարոզէր Աւետարանը (տե՛ս Ղուկ. 9.1):

Այնուամենայնիւ, Յուդային դրդապատճառը սկիզբէն ի վեր ճիշդ չէր: Ան այդպէս ալ չապաշխարեց իր եսասիրական շարժառիթներէն: Մենք կը տեսնենք անոր բնաւորութիւնը հետեւեալ Աստուածաշնչեան հատուածներէն: Ան ըսաւ. «Ի՞նչ կը կամենաք *տալ ինձի*, եւ ես...» (Մատթէոս 26.15): Ան կը ստէր եւ կը շողոքորթէր շահի համար (տե՛ս Մատթ. 26.25) դրամ կը գողնար Յիսուսի ծառայութեան միջոցներէն՝ իրեն համար (տե՛ս Յովի. 12.4–6), եւ այսպէս շարունակ: Ան այդպէս ալ մտերմօրէն չճանչցաւ Տէրը, թէ եւ երեք ու կէս տարի անցուց Անոր ներկայութեան մէջ՝ ըլլալով Անոր աշակերտը: Այս պատճառով, Յիսուս ըսաւ անոր մասին. ««Չէ՞ որ Ես ձեզ՝ տասներկուք ընտրեցի, եւ ձեզմէ մէկը սատանայ է»: Եւ ասիկա Իսկարիովտացի Սիմոնեան Յուդայի մասին կ'ըսէր...» (Յովհաննէս 6.71,72):

Շատերը չեն տարբերիր Յուդայէն: Անոնք մեծ զոհեր ըրած են ծառայութեան համար, ազատած են մարդիկ դեւերէն, բժշկած են հիւանդներ, քարոզած են Աւետարանը եւ հաւատացած են Յիսուսին իրենց փրկութեան համար, բայց երբեք մտերմօրէն չեն ճանչցած Ձինք: Անոնց բոլոր գործերը կատարուած են՝ մեկնելով անձնական շահէն, ոչ թէ Աստուծոյ հանդէպ ունեցած սէրէն: Այս նկարագրութիւնը բոլորովին կը համապատասխանէ Երկակի կեանքին մեր այլաբանութեան մէջ: Անոր հաճելի էր այն իշխանութիւնը եւ ազդեցութիւնը, որ կը ստանար Ճէյընին հետեւելու շնորհիւ: Հազիւ ամենասկիզբէն անոր դրդապատճառները արմատացած չէին Ճէյընը սիրելու մէջ:

Այդպիսի մարդոց կը սպասուի մեծագոյն դատապարտութիւնը: Յիսուս ըսաւ Յուդային մասին. «Աղէկ էր այն մարդու, որ ծնած չըլլար» (Մատթէոս 26.24): Տէրը ըսաւ այն կրօնական առաջնորդներուն, որոնք կը ծառայէին Աստուծոյ իրենց օգուտին համար եւ Տիրոջ անունով մարդիկ կը շահագործէին. «Անոր համար աւելի դատապարտութիւն պի-

տի ընդունիք» (Մատթեոս 23.14): Այդ տղամարդիկ եւ կանայք, որոնք Երկակի կեանքին պէս են, պիտի յայտնուին դժոխքի ամենախաւար եւ ամենատանջալի վայրերուն մէջ:

Փրկութիւնը ձգելը

Այս ամէնը ճշդօրէն կը նկարագրէ Երկակի կեանքը մեր այլաբանութեան մէջ: Իսկ ի՞նչ կրնանք ըսել Յուսահատ սրտին մասին: Ան ճշմարիտ յարաբերութիւններ ունէր Ճէյլընին հետ եւ նոյնիսկ կը սիրէր զինք, սակայն ան նոյնպէս չդիմացաւ մինչեւ վերջ: Ի՞նչ կը խօսի Աստուածաշունչը այս մասին: Սկսինք պատասխանել այս հարցումին Եզեկիէլ մարգարէի խօսքերով.

«Բայց եթէ արդարը իր արդարութենէն դառնայ ու ամբարիշտին ըրած բոլոր զարշուքներուն պէս անօրէնութիւն ընէ, պիտի ապրի՞: Անոր ըրած արդար գործերէն մէկը պիտի չիշուի. Անիկա իր ըրած յանցանքին ու գործած մեղքին համար պիտի մեռնի» (Եզեկիէլ 18.24):

Նախ եւ առաջ, Աստուած կը խօսի *արդար* մարդու մասին, ոչ թէ այնպիսի մարդու, որ արդար *համարած* է ինքզինքը, բայց երբեք արդար չէ եղած: Անկասկած՝ այս մարդուն կարելի չէ համեմատել խաբուածներու կամ խաբեբաներու հետ, որոնց մասին մենք խօսեցանք նախորդ գլուխին մէջ:

Աստուած կ'ըսէ, որ *պիտի չիշէ* այս մարդու արդարութիւնը: Երբ Աստուած ինչ որ բան մը կը մոռնայ, ասիկա ըսես երբեք տեղի չէ ունեցած: Մենք գիտենք, որ Աստուած կը մոռնայ մեր մեղքերը՝ հեռացնելով այնքան, որքան արեւելքը հեռու է արեւմուտքէն, եւ թաղելով աստուծ մոռացութեան ծովին մէջ: Անշուշտ, ասիկա ճիշդ է: Ան կը յայտարարէ. «...Անոնց մեղքերն ու անօրէնութիւնները ա'լ պիտի չիշեն» (Եբրայեցիս 8.12): Աստուած կը մոռնայ մեր մեղքերը, հազիւ որ մենք կ'ընդունինք Յիսուսը՝ որպէս մեր Տէրը: Սատանան կը փորձէ մեղադրել մեզ, բայց Աստուած ըսած է, որ այլես պիտի չիշէ մեր մեղքերը: Այնպէս որ, Անոր համար այնպէս է, կարծես մենք երբեք չենք մեղանջած:

Տէ ինչ, հակառակը նոյնպէս ճշմարիտ է: Երբ Աստուած կ'ըսէ, որ ինչ որ մէկուն արդարութիւնը պիտի չիշուի, Ան նկատի ունի, որ պիտի մոռնայ, որ երբեք ճանչցած է այդ մարդը: Իր յարաբերութիւնները այդ մարդուն հետ աւարտած են: Յակոբոս առաքեալը կը գրէ.

«Եղբայրներ, եթէ ձեզմէ մէկը ճշմարտութեան ճանապարհէն մոլորի, եւ ինչ որ մէկը զանիկա դարձի բերէ, գիտցած եղէք թէ ան, որ մեղաւորը իր մոլորութեան ճանապարհէն կը դարձնէ, հոգի մը մահուանէ կ'ազատէ ու մեղքերու բազմութիւնը կը ծածկէ» (Յակոբոս 5.19,20):

Առաջին բանը, որ պետք է նշել այս հատուածին մէջ, հետեւեալն է. «Եղբայրներ, եթէ ձեզմէ մէկը...»: Յակոբոսը չի խօսիր այն մարդոց մասին, որոնք միայն կը կարծեն, որ քրիստոնէայ են: Ան կը խօսի *հաւատացեալի* մասին, որ կը մոլորի ճշմարտութեան ճանապարհէն: Այս հատուածին մէջ այն եղբայրը, որ մոլորած է ճշմարտութենէն, *մեղաւոր* կը կոչուի: Ասիկա չի նշանակեր, որ այլեւս վերստին ծնած չէ, այլ՝ որ մեղքը անոր կեանքին մէջ սովորական դարձած է, եւ ան պետք է վերադառնայ հնազանդութեան: Այնուամենայնիւ, Յակոբոսը պարզ ցոյց կու տայ, որ եթէ ան յամառի իր մոլորութեան մէջ, վերջաւորութեան անոր անձը պիտի մահանայ. եթէ ան չվերադառնայ Աստուծոյ (չապաշխարէ), ան պիտի կորսուի: Առակաց գիրքը կը հաստատէ ասիկա՝ ըսելով. «Այն մարդը, որ կը *շեղի* իմաստութեան ճանապարհէն, պիտի բնակի (մահացածներու) հոգիներու ժողովքին մէջ» (Առակաց 21.16, AMP):

Առակաց գիրքը կը հաստատէ Յակոբոսի խօսքերը. այն մարդը, որ կը շեղի Աստուծոյ ճանապարհներէն եւ չի վերադառնար արդարութեան, կը բնակի մահացածներու ժողովքին մէջ, որ Հատէսն է, եւ ի վերջոյ կը յայտնուի Կրակի լիճին մէջ:

Կեանքի գիրքը

Նոր կտակարանին մէջ ութ անգամ գրուած է Կեանքի գիրքին մասին: Պօղոսը եւ Յովհաննէսը կը գրեն, որ այս գիրքին մէջ գրուած են այն մարդոց անունները, որոնք յաւիտենութիւնը Յիսուսին հետ պիտի անցընեն: Մեր անունները հոն կը գրուին այն պահուն, երբ վերստին կը ծնինք:

Յիշեցէ՛ք Եփրոսիմիին վկայութիւնը չորրորդ գլխուխին մէջ: Հագիւ որ այդ յոյն աղջիկը կեանքը նուիրեց Յիսուսին, Հայր Աստուած գրեց անոր անունը Կեանքի գիրքին մէջ եւ ըսաւ. «Բարի գալուստ ընտանիք»: Նմանապէս, Պօղոսը կը գրէ հաւատացեալի մը. «Եւ ես կը խնդրե՛մ քեզմէ, իմ ճշմարիտ թիմակից, օգնել այս կիներուն, որովհետեւ անոնք ջանասիրաբար աշխատեցան հետս՝ պատմելով մարդոց Բարի լուրը: Եւ անոնք աշխատեցան Կղեմեսի եւ իմ այն գործակիցներուն հետ, որոնց անունները գրուած են Կեանքի գիրքին մէջ» (Փիլիպպեցիս 4.3, NLT):

Հակառակը նոյնպէս ճշմարիտ է: Որոնց անունները գրուած չեն Կեանքի գիրքին մէջ, կորսուած են: Լսեցէ՛ք, թէ ինչ կ'ըսէ Յայտնութիւն գիրքը. «Եւ ով որ Կեանքի գիրքին մէջ գրուած չգտնուեցաւ, կրակի լիճին մէջ ձգուեցաւ» (Յայտնութիւն 20.15): Միւսները պիտի յայտնուին մահացածներու ժողովքին մէջ:

Յայտնութիւն գիրքի 3-րդ գլուխին մէջ Յիսուս կը դիմէ եկեղեցւոյ մը (ո՛չ թէ քաղաքի, ո՛չ թէ կորսուած մարդոց խումբի, ո՛չ թէ կեղծ աս-

տուածներ պաշտողներու, եւ ո՛չ ալ չակերտաւոր եկեղեցւոյ): Ան կը խօսի այն մարդոց հետ, որոնք ճշմարտապէս Իրենն են, եւ կը զգուշացնէ. «Ան, որ կը յաղթէ, ճերմակներ պիտի հագնի, ու Ես անոր անունը Կեանքի գիրքէն պիտի չջնջեմ» (Յայտնութիւն 3.5):

Դուք նկատեցի՞ք «ջնջել» բառը: Ձեր անունը կրնայ ջնջուիլ Կեանքի գիրքէն միայն՝ եթէ այն գրուած եղած է հոն: Կեանքի գիրքին մէջ գրուած են միայն անոնց անունները, որոնք վերստին ծնած են՝ հաւատալով Յիսուս Քրիստոսին: Անհաւատները եւ նոյնիսկ խաբուած մարդիկ, որոնք երբեք ճշմարտապէս չեն քալած Յիսուսին հետ, չեն եղած այդ Գիրքին մէջ. այնպէս որ, անոնց անունները չեն կրնար ջնջուիլ հոնկէ: Ան կը դիմէ այն մարդոց, որոնք Իր ընտանիքին մէջ են:

Սթափեցնող տեսիլք

Այս պատմութիւնը գրի առած է ծառայող մը, որ քսաներորդ դարի ընթացքին գրեթէ Եօթանասուն տարի շարունակ հաւատարմօրէն ծառայած է Աստուծոյ: Ան ահռելի ազդեցութիւն ձգած է Քրիստոսի ամբողջ մարմինին վրայ: Անոր գիրքերը տպագրուած են աւելի քան վաթսունհինգ միլիոն օրինակով, իսկ անոր Աստուածաշնչեան դպրոցը աւարտած է աւելի քան 20.000 մարդ:

Ան կ'անդրադառնայ այս թեմային իր գիրքերէն մէկուն մէջ: Ան կը գրէ, որ 1952 թուականին Յիսուս տեսիլքով յայտնուեցաւ իրեն եւ ցոյց տուաւ հովիւի մը կինը, որուն ան կը ճանչնար: Այդ կինը հաւատացած էր սուտի մը, որ ինքը իր տաղանդներն ու գեղեցկութիւնը կը վատնէր ծառայութեան մէջ: Ժամանակի ընթացքին ան ընդունած էր միտքեր համբաւի, յայտնի ըլլալու եւ հարստութեան մասին, որոնք ինքը կրնար ունենալ աշխարհին մէջ: Ի վերջոյ, ան առիթ տուած էր այդ մտքերուն, լքած էր իր ամուսնինը եւ սկսած էր փնտռել այն յաջողութիւնը, որ կը ցանկար:

Տէրը յատուկ ըսաւ այդ ծառայողին. «Այդ կինը Իմ զաւակն էր», եւ պատուիրեց զինք չաղօթել այդ կնոջ համար: Յաջորդ հատուածը մէջբերուած է անմիջապէս գիրքէն.

– Տէ՛ր, ի՞նչ պիտի ըլլայ անոր հետ, – հարցուցի եւ:

– Ան պիտի անցնէ յաւիտենութիւնը անիծեալներու բնակավայրին մէջ, ուր լաց եւ ակռաներու կրճտոց է, – պատասխանեց Աստուած:

Այդ տեսիլքին մէջ ես տեսայ, թէ ինչպէս ան կ'իյնար դժոխքի փոսը: Ես լսեցի անոր սարսափած ճիչերը:

– Այդ կինը Քու զաւակն էր, Տէ՛ր: Ան լեցուած էր Քու Հոգիով եւ կը ծառայէր Քեզի: Չնայած ատոր՝ Դուն պատուիրեցիր ինծի չաղօթել անոր համար: Ես չեմ հասկնար:

Տէրը յիշեցուց ինծի հետեւեալ խօսքը. «Եթէ մէկը տեսնէ, որ իր եղբայրը, ոչ մահացու մեղք մը գործեց, թող խնդրէ ու Աստուած կեանք տայ այն մահացու չեղած մեղքը գործողին: Մեղք կայ, որ մահացու է, չեմ ըսեր, թէ անոր համար խնդրէ» (Ա. Յովհաննէս 5.16):

Ես ըսի.

– Բայց Տէ՛ր, ես միշտ հաւատացած եմ, որ այս խօսքին մէջ գրուած է այնպիսի մեղքի մասին, որուն հետեւանքով կը մահանայ մարմինը, եւ որ մարդը փրկուած է, թէեւ ան մեղք կը գործէ:

– Ո՛չ, այս խօսքին մէջ չէ գրուած մարմնի մահանալուն մասին,– նշեց Տէրը:– Դուն այլ բաներ կ'աւելցնես այս խօսքին: Եթէ ամբողջութեամբ կարդաս Ա. Յովհաննէսի հինգերորդ գլուխը, պիտի տեսնես, որ այն կը խօսի կեանքի եւ մահուան մասին` հոգեւոր կեանքի եւ հոգեւոր մահուան մասին, եւ այս խօսքին մէջ գրուած է յատկապէս հոգեւոր մահուան մասին: Ասիկա կը վերաբերի այն հաւատացեալին, որ կը մեղանչէ դէպի մահ տանող` մահացու մեղքով. ահա թէ ինչու ես կ'ըսեմ, որ այս պարագային դուն պէտք չէ աղօթես: Ես ըսի քեզի, որ չաղօթե՛ս այդ կնոջ համար, որովհետեւ ան մեղանչած է դէպի մահ տանող մեղքով:

– Ատիկա բոլորովին կը տապալէ իմ Աստուածաբանութիւնը, Տէ՛ր: Կրնա՞ս աւելի մանրամասնօրէն բացատրել,– հարցուցի ես (երբեմն մեր Աստուածաբանութիւնը պէտք է տապալի, եթէ անիկա չի համապատասխանիր Աստուծոյ խօսքին):

Յիսուս յիշեցուց ինծի հետեւեալ խօսքը Աստուածաշունչէն.

Եբրայեցիս 6.4–6

4 «Վասնզի անհնար է մէկ անգամ լուսաւորուածներուն, որոնք երկնաւոր պարգեւին համը առին, Սուրբ Հոգիին հաղորդակից եղան,

5 Աստուծոյ բարի խօսքին ու գալու աշխարհիին զօրութիւններուն համը առին,

6 Որ եթէ իյնան, նորէն ապաշխարութիւնով նորոգուին, որովհետեւ Աստուծոյ Որդին իրենց համար կրկին խաչը հանեցին եւ խայտառակեցին»¹:

Այս հատուածին մէջ թուարկուած են քանի մը պայմաններ, որոնց մենք պէտք է անդրադառնանք: Առաջինը` հաւատքէն իյնալու համար մարդը պէտք է լուսաւորուած ըլլայ եւ ճաշակած ըլլայ երկնային պարգեւը: Ասիկա կը վերաբերի այն մարդոց, որոնք ընդունած են Յիսուսը, քանի որ Ան է երկնային պարգեւը: Երկրորդը` այդ մարդը պէտք է լեցուած ըլլայ Սուրբ Հոգիով: Երրորդը` ան պէտք է ճաշակած ըլլայ Աստուծոյ բարի խօսքը եւ գալիք աշխարհի զօրութիւնները: Այս ցուցակէն պարզ կը դառնայ, որ ասիկա չի վերաբերիր մանուկ քրիստոնէսներուն, այլ` միայն հասուն հաւատացեալներուն:

Պատահած է, որ քովս մարդիկ եկած են եւ արցունքը իրենց աչքերուն պատմած են, որ այլեւս չեն ցանկար ծառայել Տիրոջը: Հետագա-

յին անոնք խորապէս զղջացած եւ ապաշխարած են: Անոնք մեծ վախ զգացած են՝ կարդալով այս եւ նմանատիպ հատուածներ Աստուածաշունչին մէջ: Այնուամենայնիւ, հոգեւոր մանուկները երբեմն անմտօրէն կը վարուին իրենց անգիտութեան պատճառով, եւ Տէրը գիտէ ատիկա: Եբրայեցիներու նամակի հեղինակը չի խօսիր մանուկ քրիստոնէաներու մասին, այլ՝ հասուն հաւատացեալներու:

Այդ մտահոգուած մարդիկը մխիթարելու համար ես կ'ըսեմ, որ եթէ անոնք դէպի մահ տանող մեղք գործած ըլլային (որուն մասին գրուած է վերոյիշեալ հատուածին մէջ), անոնք այլեւս չէին ուզեր Յիսուսին քով վերադառնալ: Այն փաստը, որ անոնք քաղց զգացած են Անոր հանդէպ եւ ապաշխարած են, եւ որ անոնց ապաշխարութիւնը հոգեւոր պտուղ ունեցած է, արդէն իսկ ցոյց կու տայ, որ Սուրբ Հոգին վերադարձուցած է զանոնք դէպի Իր հետ հաղորդակցութիւնը: Եթէ այդ մարդիկ մշտապէս հեռացած ըլլային Աստուծմէ, ինչպէս մեր պատմութեան հովիւի կինը, անոնք այլեւս չէին փափաքեր մտերիմ ըլլալ Յիսուսին հետ եւ սուրբ կեանք վարել:

Յիսուս ըսաւ, որ այդ կինը Աստուծոյ ճշմարիտ զաւակն էր: Այն ծառայողը, որ գրած է այս պատմութիւնը, իր հաւատքի ընթացքը սկսած էր այնպիսի յարանուանութեան մէջ, ուր չեն հաւատար, որ մարդը կրնայ կորսնցնել իր փրկութիւնը. անոնք կը հաւատան անպայմանական յաւիտենական ապահովութեան: Ահա թէ ինչու ան ըսաւ. «Ատիկա բոլորովին կը տապալէ իմ Աստուածաբանութիւնը»: Այդ կինը Աստուծոյ զաւակն էր, եւ անոր անունը գրուած էր Կեանքի գիրքին մէջ: Ան չհամբերեց մինչեւ վերջ, այլ մէկընդմիշտ հեռացաւ՝ այս աշխարհէն երթալով. այդ իսկ պատճառով, անոր անունը ջնջուեցաւ՝ համաձայն Յայտնութիւն գիրքի երրորդ գլուխին մէջ նշուած Յիսուսի զգուշացման, որ ուղղուած էր եկեղեցւոյ: Ան որոշում կայացուց մէկընդմիշտ հեռանալ: Ան «յաղթող» չէր: Ահա թէ ինչու Եբրայեցիներու թուղթի հեղինակը կը գրէ մեզի, որ նման մարդը չի կրնար վերականգնիլ: Այժմ ան երկու անգամ մահացած էր: Ժամանակ մը ան մահացած էր իր մեղքերուն մէջ, ատկէ յետոյ ժառանգեց յաւիտենական կեանքը, բայց կրկին մահացաւ մեղքի մէջ՝ մէկընդմիշտ Աստուծմէ հեռանալով (տե՛ս Յուդա 12):

Հազիւ որ մարդը կը յայտնուի այսպիսի վիճակի մէջ, ան այլեւս չի կրնար վերստին ծնիլ: Ահա թէ ինչու Եբրայեցիներու թուղթի հեղինակը կը գրէ. «...անկարելի է... որ անոնք դարձեալ նորոգուին ապաշխարութեան համար»: Այնպէս որ, սխալմունք է մտածելը, որ մարդը կրնայ նորէն վերստին ծնիլ:

Առիթ տուէք կրկնել եւս մէկ անգամ. երբ մարդը կը գործէ այս մեղքը, ան այլեւս չունի ապաշխարելու եւ Յիսուսին նուիրուելու ցանկութիւն: Ոչ ոք կրնայ Յիսուսին քով բերել մեզ՝ բացի Սուրբ Հոգիէն: Եթէ Ան հեռանայ ճշմարիտ հաւատացեալէն այն պատճառով, որ մարդը նահանջած է՝ ինչպէս, օրինակ, մեր պատմութեան հովիւի կնոջ պարագան, Ան այլեւս չի վերադառնար: Ասիկա է պատճառը, որ Սուրբ Հոգին երկայնամիտ է: Ան դիւրութեամբ չի յանձնուիր:

Խաւարի մութը

Պետրոս առաքեալը կը շարունակէ սորվեցնել մեզի.

«Երբ մարդիկ կը փախչին այս աշխարհի չարութենէն՝ ճանչնալով մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսը...» (Բ. Պետրոս 2.20, NLT):

Եկէք կանգ առնենք հոս եւ տեսնենք, թէ որուն մասին կը խօսի Պետրոսը: Եթէ մարդիկ կը փախչին այս աշխարհի ապականութենէն (չարութենէն) Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսը ճանչնալու միջոցով, անոնք, անկասկած, քրիստոնէայ են: Անոնք չեն կրնար խաբեբաներ ըլլալ, որոնց մասին մենք խօսեցանք նախորդ գլուխին մէջ, այսինքն՝ այնպիսի մարդիկ, որոնք կը դաւանին, որ կը ճանչնան զԱստուած, այնինչ իրականութեան մէջ չի ճանչնար Ձինք: Անոնք իսկապէս փախչած են այս աշխարհի պղծութիւններէն Տէր Յիսուսի փրկարար շնորհքով: Անկասկած՝ Պետրոսը կը խօսի ճշմարտապէս վերստին ծնած մարդոց մասին:

Շարունակելով՝ մենք կը կարդանք.

«...իսկ յետոյ կրկին կը խճճուին մեղքի մէջ եւ կը ստրկացուին ատորմով, անոնք աւելի վատ վիճակի մէջ են, քան նախկինին: Աւելի լաւ պիտի ըլլար, եթէ անոնք երբեք չճանչնային արդարութեան ճանապարհը, քան ճանչնային այն, իսկ յետոյ մերժէին սուրբ կեանք վարելու պատուէրը, որ անոնք ստացած էին» (Բ. Պետրոս 2.20,21, NLT):

Պետրոսը կը խօսի այն քրիստոնէաներուն մասին, որոնք կրկին վերադարձած են մեղքի ստրկութեան: Աւելի լաւ պիտի ըլլար, եթէ անոնք երբեք չճաշակէին փրկութիւնը Յիսուս Քրիստոսի միջոցով: Անոնք մէկընդմիջտ որոշեցին հետեւիլ հաճոյքներուն, կիրքին եւ այս կեանքի հպարտութեան՝ մերժելով սուրբ կեանքը:

Ինչո՞ւ աւելի լաւ պիտի ըլլար, եթէ անոնք երբեք չճանչնային արդարութեան ճանապարհը: Յուդան կը պատասխանէ այս հարցումին:

Ինչպէս եւ Պետրոսը, ան կը խօսի փրկութենէն հեռացած մարդոց մասին: Ան կը գրէ. «Կա՛յ անոնց, որոնք Կայէնին ճանապարհով գացին, եւ Բաղասամի մոլորութեանը պէս ցանկութեամբ վարձքի ետեւէ գացին ու Կորխին հակառակութեանը պէս կորսուեցան» (Յուդա 11):

Ե՛ւ Կայէնը, եւ՛ Բաղասամը, եւ՛ Կորխը ժամանակ մը յարաբերութիւններ ունէին Տիրոջ հետ: Անոնցմէ երկուքը ծառայողներ էին: Կայէնի սխալը Աստուծոյն բացայայտ կերպով չհնազանդիլն էր, Բաղասամի սխալը՝ դրամի հանդէպ սէրն էր, իսկ Կորխի սխալը՝ ապստամբութիւնն էր լիազօրուած իշխանութեան դէմ:

Յուդան կը շարունակէ.

«Ասոնք ձեր սիրոյ խնճոյքներուն մէջ գայթակղութեան ժայռեր (արատներ) են, երբ ձեզի հետ կերուխումի կը նստին, աներկիւղ իրենց անձը կը կերակրեն: Անջուր ամպեր են հովերէն քշուած, պտուղնին կորսնցուցած ծառեր, բերք չունեցող, երկու անգամ մեռած, արմատէն խլուած: Ծովու կատղած ալիքներ, որոնք իրենց անձերուն ամօթը կը փրփրացնեն. մոլորուած աստղեր, որոնց համար խաւարին մէզը պահուած է յախտեան» (Յուդա 12,13):

Առաջին եկեղեցւոյ մէջ սիրոյ խնճոյքը կը նշանակէր երեկոյեան ընթրիք, որուն ժամանակ եկեղեցւոյ անդամները կը հաւաքուէին: Այն կ'արտացոլէր անոնց մտերիմ յարաբերութիւնները Աստուծոյ եւ մէկը միւսին հետ: Սիրոյ խնճոյքը սովորաբար կ'աւարտէր սուրբ հաղորդութեան խորհուրդով²: Այս հատուածին մէջ մենք սթափեցնող փաստ մը կը տեսնենք. ոչ բոլորը, որոնք կը հեռանան հաւատքէն, պիտի ձգեն եկեղեցին, ինչպէս որ վարուեցաւ մեր պատմութեան հովիւի կինը: Նման մարդիկ ամէնէն վտանգաւորը կը դառնան, քանի որ անոնք ազդեցութիւն կը ձգեն մանուկ հաւատացեալներու վրայ, որոնք թոյլ խղճմտանք ունին, եւ անոնցմէ ստացուած վէրքերը կրնան մահացու ըլլալ:

Կորխը նման մարդու օրինակ է: Թէեւ ան Ահարոնի օգնականներէն մէկն էր, ան ըսաւ ե՛ւ Մովսէսին, եւ՛ Ահարոնին. «Դուք շատ հեռու գացած էք: Ամբողջ Իսրայէլը առանձնացուած է Տիրոջ կողմէն, եւ *Ան բռլորիս հետ է*: Ի՞նչ իրաւունքով այնպէս կը վարուիք, ըսես աւելի մեծ էք, քան միւսները Տիրոջ ժողովուրդի մէջ» (Թուոց 16.3, NLT): Կորխի ազդեցութեան պատճառով մահուան դատապարտուեցաւ 250 առաջնորդ եւ 14.700 մարդ ժողովուրդէն:

Յուդան կ'ըսէ մեզի, որ այդ նահանջողները, որոնց ան *գայթակղութեան ժայռեր* (այլ թարգմանութիւններուն մէջ՝ *արատներ*) կ'անուանէ, կը մնան մեր համայնքներուն մէջ: Անոնք կեղծ ապահովութիւն ունին այն շնորհքի մէջ, որուն մէջ ժամանակ մը վարուած են, բայց անոնք

աղաւաղած են այն՝ ապրելով իրենց համար եւ կորսնցնելով Աստուծոյ երկիրը: Ուշադրութիւն դարձուցէք՝ Կորնթ ըսաւ, որ Աստուած «բոլորիս հետ է»: Ան նոյնպէս ապահովութեան կեղծ զգացում ունէր, քանի որ յաջորդ օրը երկիրը բացուեցաւ եւ կենդանի-կենդանի կուլ տուաւ զինք՝ դժոխք տանելով:

Կը նշանակէ՝ այդ նահանջողները գիտեն քրիստոնէական բառապաշարը: Անոնք կը հաղորդակցին այլ հաւատացեալներու հետ, բայց չեն գտնուիր այն յաղթողներու կարգին, որոնց համար Յիսուսը պիտի վերադառնայ: Ան պիտի վերադառնայ *արատ* չունեցող եկեղեցւոյ համար (տե՛ս Եփեսացիս 5.27):

Յուդան կը նշէ, որ այդ մարդիկ *երկու անգամ մահացած* են: Ինչպէ՞ս մարդը կրնայ երկու անգամ մահանալ: Ժամանակ մը ան մահացած էր մեղքի մէջ. յետոյ ան յաւիտենական կեանք ստացաւ վերստին ծնելու շնորհիւ, բայց ցաւօք, ան կրկին մահացաւ՝ շարունակ մեղանչելու եւ չապաշխարելու պատճառով: Յիշեցէ՛ք՝ Յակոբոսը կը գրէ, որ եթէ քրիստոնէան հեռանայ ճշմարտութենէն եւ մնայ այդ վիճակին մէջ, անոր անձը *պիտի մահանայ*: Իսկ Յովհաննէսը կ'ըսէ, որ կայ մեղք, որ մահուան կը տանի հաւատացեալները: Երկուքն ալ կը խօսին *երկու անգամ մահանալու* մասին:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք Յուդայի խօսքերուն. «...որոնց կը պահուի *յաւիտեան խաւարի մուրճ*»: *Խաւարի մուրճ*՝ վատագոյն յաւիտենական պատիժն է: Մենք կրնանք պարզօրէն տեսնել ասիկա Յիսուսի խօսքերէն Իր գալստեան եւ դատաստանի մասին: Ան կ'ըսէ.

«Երանի՛ այն ծառաներուն, որ երբ տէրը գայ՝ զանոնք արթուն պիտի գտնէ... Հապա եթէ այն ծառան իր սրտին մէջ ըսէ. «Իմ տէրս իր գալը կ'ուշացնէ», եւ սկսի ծառաները եւ աղախինները ծեծել եւ ուտել ու խմել եւ գինովնալ: Այն ծառային տէրը պիտի գայ այնպիսի օր մը, որ չի սպասեր եւ այնպիսի ժամ մը, որ չի գիտեր եւ զանիկա մէջտեղէն պիտի կտրէ ու անոր բաժինը անհաւատարիմներուն հետ պիտի դնէ: Այն ծառան, որ իր Տիրոջը կամքը գիտէ ու չի պատրաստուիր, ո՛չ ալ անոր կամքը ի գործ կը դնէ, շատ ծեծ պիտի ուտէ: Բայց ան որ չի գիտեր ու ծեծի արժանի բան մը ընէ, քիչ ծեծ պիտի ուտէ...» (Ղուկաս 12.37, 45–48):

Այս խօսքերը այնքա՛ն շատ տեղեկութիւն կը պարունակեն: Նշենք քանի մը կարեւոր փաստ: Առաջինը՝ ուշադրութիւն դարձուցէք, որ խօսքը հոս *ծառայի* մասին է, ոչ թէ օտարականի, հեթանոսի կամ մեղաւորի: Ծառան *գիտէր իր տիրոջ կամքը*, բայց ատոր հակառակ վարուեցաւ: Այս նկարագրութիւնը չի վերաբերիր Անկախին. ան կ'ըլլայ այն մարդոց կարգին, որոնք չէին գիտեր եւ *քիչ ծեծուեցան*: Այն նոյնպէս չի

վերաբերի խաբուածին. ան կը մտածէր, որ ծառայ էր, բայց ըստ Ճէլլընին՝ երբեք ճշմարիտ ծառայ չէր եղած: Այն մարդը, որուն մասին Յիսուսը կը խօսի այս հատուածին մէջ, *ծառայ* կը կոչուի եւ բոլորովին կը հասկնայ իր տիրոջ կամքը: Ահա թէ ով կը ձգէ իր փրկութիւնը:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ այդ մարդը կը ծեծէր իր ծառաները: Խօսքը այլ մարդիկ շահագործելու մասին է՝ սեփական շահի կամ հաճոյքներու համար: Մենք կը տեսնենք, որ այդ ծառան կը սկսի ապրիլ այսօրուան օրով: Ան կ'ուտէ, կը խմէ եւ կը գինովնայ: Ան կը սկսի ծառայել ինքնիրեն: Յիշեցէ՛ք Յուդային խօսքերը այն մասին, որ նահանջած մարդիկ խնճոյքի կը մասնակցին այլ հաւատացեալներու հետ՝ առանց Աստուծոյ երկիրի: Անոնք կը ծառայեն միայն իրենք իրենց: Անոնց բոլոր որոշումները, նոյնիսկ եթէ ատոնք վեհ թուան, միայն իրենց օգուտին համար են:

Ի վերջոյ, մենք կը կարդանք այս ծառային դատաստանին մասին, որ անոր բաժինը անհաւատներու (չփրկուած մարդոց) հետ եղաւ: Անհաւատները *քիչ ծեծուեցան*, բայց այս ծառան, որ գիտէր իր տիրոջ կամքը եւ հեռացաւ, *շատ ծեծուեցաւ*: Ասիկա կը նշանակէ, որ ան պիտի ստանայ խստագոյն դատապարտութիւնը Կրակի լիճին մէջ կամ խաւարի մութին մէջ՝ յաւիտեան:

Դառն չներում

Անկասկած՝ ասիկա կը վերաբերի Յուսահատ սրտին (ինչպէս նաեւ՝ Երկակի կեանքին): Յուսահատ սիրտը գիտէր, որ Ճէլլընին կամքը մարդոց ներելն էր, բայց հրաժարեցաւ ատիկա ընելէն: Ան որոշեց պահել իր վիրաւորանքը Չարախօսէն: Անոր դառնութիւնը դուռ բացաւ զինք պղծելու համար: Ահա թէ ինչու Աստուծոյ ժողովուրդի մասին գրուած է. «Ջգուշացէ՛ք, չըլլայ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ. չըլլայ, որ դառնութեան արմատ մը վեր երեւնալով՝ ձեզ նեղէ ու անով շատեր պղծուին» (Եբրայեցիս 12.15):

Աստուծոյ խօսքը ուսումնասիրելու եւ երկար տարիներու ծառայողական փորձառութեան վերջաւորութեան ես սորված եմ, որ մեծագոյն ծուղակը, որ կը հեռացնէ մարդոց Աստուծոյ հետ ընթացքէն, չներումն է: Ինչպէս Յուսահատ սրտի պարագային, չներումը դուռ կը բանայ ամէն տեսակի սխալ համոզմունքներու եւ վարքի համար:

Մատթէոս 18-րդ գլուխին մէջ Յիսուս արակ պատմեց թագաւորի մը մասին, որ հաշիւ կը տեսնէր իր ծառաներուն հետ: Անոր քով բերուեցաւ ծառայ մը, որ տասը հազար քանքար կամ տաղանդ պարտք էր անոր: Տաղանդը ոչ թէ դրամական միաւոր էր, այլ՝ կշիռքի: Այն կ'օգ-

տագործուէր որպէս չափման միաւոր ոսկիի (տե՛ս Բ. Թագ. 12.30), արծաթի (տե՛ս Գ. Թագ. 20.39) եւ այլ մետաղներու կամ նիւթերու համար: Այս առակին մէջ տաղանդը կը խորհրդանշէ պարտքի չափը. այնպէս որ, մենք կրնանք ենթադրել, որ Յիսուս կ'օգտագործէր այդ չափը որպէս փոխանակման միաւոր, եւ խօսքը արծաթի կամ ոսկիի մասին էր: Ենթադրենք՝ խօսքը ոսկիին մասին էր:

Տաղանդը հաւասար էր մօտաւորապէս 35 քիլօ կրամի: Այն կը համարուէր ամբողջական կշիռք, որ մէկ մարդը կրնար կրել (տե՛ս Դ. Թագ. 5.23): Տասը հազար տաղանդը հաւասար է մօտաւորապէս 350.000 քիլօ կրամի կամ 350 թոնի: Այնպէս որ, այդ ծառան 350 թոն ոսկի պարտք էր թագաւորին: Երբ ես կը գրէի այս գիրքը, ոսկիին գինը մօտաւորապէս 40 տոլար էր մէկ կրամի դիմաց: Այնպէս որ, փորձեցէ՛ք բազմապատկել: Տասը հազար տաղանդ ոսկին հաւասար է մօտաւորապէս 14 միլիառ տոլարի: Ահա թէ որքան այդ ծառան պարտք էր թագաւորին: Յիսուսը կը շեշտադրէր, որ այդ ծառան անհաշիւ պարտք ունէր, որ ան երբեք չէր կրնար վճարել:

Թագաւորը հրամայեց վաճառել զինք եւ անոր ընտանիքը՝ պարտքը վճարելու համար: Այդ մարդը իյնկաւ թագաւորին ոտքերուն քով եւ աղաչեց ողորմութիւն ցուցաբերել, եւ թագաւորը շնորհեց անոր իր խնդրանքը՝ ներելով անոր ամբողջ պարտքը:

Այս առակին մէջ թագաւորը կը խորհրդանշէ Հայր Աստուծոյն: Ներուած մարդը անիկա է, որ ստացած է Աստուծոյ ներումը Յիսուս Քրիստոսի միջոցով: Ամէն մարդու կեանքին մէջ պարտք կը գոյանայ որեւէ անօրէնութեան դիմաց: Դուք լսած էք, որ մարդիկ կ'ըսեն. «Ան պիտի վճարէ ատոր համար»: Ներումը չեղեալ կը դարձնէ այդ պարտքը: Այդ մարդը, ինչպէս եւ մենք, անասելի պարտք ունէր, եւ անոր պարտքը ներուած էր:

Այնուամենայնիւ, գրուած է. «Նոյն ծառան ելաւ, իր ծառայակիցներէն մէկը գտաւ, որ իրեն հարիւր դահեկան պարտք ունէր ու զանիկա բռնելով կը խեղդէր ու կ'ըսէր «վճարէ՛ ինձի ունեցած պարտքդ»» (Մատթէոս 18.28):

Մէկ դահեկանը՝ մէկ օրուան աշխատավարձ էր: Ենթադրենք, որ այն հաւասար է 100 տոլարի՝ ըստ այսօրուան տարադրամին: Ընդհանուր պարտքը պիտի ըլլար մօտաւորապէս 10.000 տոլար: Այնպէս որ, խօսքը աննշան վիրաւորանքի մասին չէ:

Մենք կը շարունակենք կարդալ. «Հիմա անոր այն ծառայակիցը անոր ոտքերուն իյնկաւ եւ կ'աղաչէր ու կ'ըսէր. «Համբերէ՛ ինձի համար, եւ բոլորը պիտի հատուցեմ քեզի»: Բայց ան չէր կամենար, այլ գնաց եւ զինք բանտը նետեց, մինչեւ որ պարտքը վճարէ» (Մատթէոս 18.29,30):

Ան ներում ստացած էր 14 միլիառ տոլարի չափով, իսկ անոր ծառայակիցը պարտք ունէր անոր ընդամէնը 10.000 տոլար, բայց ան չձգեց այդ պարտքը: Ան վճռեց հարկադրել դիմացինը այդ գումարը վճարելու:

Կարելու է նշել, որ մէկս միւսին դէմ ունեցած վիրաւորանքները՝ Աստուծոյ դէմ մեր յանցանքի համեմատ, կը նմանին 10.000 տոլարի՝ 14 միլիառ տոլարի համեմատ: Անկախ այն բանէն, թէ որքան վատ վարուած են ձեր հանդէպ, մարդոց յանցանքը չի կրնար համեմատուիլ այն օրինազանցութեան հետ, որ մենք գործած ենք Աստուծոյ դէմ: Թերեւս ձեզի թուայ, որ ոչ ոք այնքան վատ վիճակի մէջ չէ, որքան դուք: Այդ պարագային, դուք չէք հասկնար, թէ որքան վատ վարուեցան Յիսուսի հետ: Ան անմեղ էր. Ան անարատ գառնուկ էր, որ մորթուեցաւ՝ վերցնելով Իր վրայ մեր 14 միլիառ տոլարնոց պարտքը:

Այն մարդը, որ չի կրնար ներել, մոռցած է, թէ որքան մեծ պարտք ներուած է իրեն: Երբ դուք գիտակցիք, որ Յիսուս ազատած է ձեզ մահէն եւ յաւիտենական տանջանքէն, դուք դիւրին պիտի ձգէք մարդոց յանցանքները: Չկայ աւելի վատ բան, քան յաւիտենութիւնը կրակի լիճին մէջ: Հոն չկայ ոչ մէկ թեթեւութիւն: Հոն որդը չի մահանար, եւ կրակը չի մարիր: Այն մեր վերջին հանգրուանն էր, մինչեւ որ Աստուած ներեց մեզ Իր Որդի Յիսուս Քրիստոսի մահուան միջոցով: Եթէ մարդը չի կրնար ներել, ուրեմն ան չի գիտակցիր, որ դժոխքը իրական է: Ան չէ հասկցած Աստուծոյ սէրը եւ ներումը:

Եկէ՛ք շարունակենք կարդալ այս առակը.

«Երբ իր ծառայակիցները տեսան եղած բաները, խիստ տրտմեցան ու եկան, իրենց տիրոջը իմացուցին բոլոր եղածը: Այն ատեն անոր տէրը կանչեց զանիկա ու ըսաւ. «Չա՛ր ծառայ, այն բոլոր պարտքը ես քեզի շնորհեցի, ինծի աղաչելուդ համար: Ուրեմն պէտք չէ՞ր, որ դուն ալ քու ծառայակիցիդ ողորմէիր, ինչպէս ես քեզի ողորմեցայ»» (Մատթէոս 18.31–33):

Կ'ուզեմ շեշտադրել, որ այս առակին մէջ Յիսուս չի խօսիր անհաւատներու մասին: Ան կը խօսի թագաւորի ծառաներու՝ վերստին ծնած հաւատացեալներու մասին: Այս մարդը արդէն ստացած էր իր անասելի պարտքի ներումը (փրկութիւնը) եւ թագաւորի ծառայ կը կոչուէր: Այն մարդը, որուն ան չէր կրնար ներել, անոր ծառայակիցն էր: Այնպէս որ, մենք կրնանք եզրակացնել, որ այն, ինչ որ տեղի ունեցաւ հետագային, այն «հաւատացեալի» աւարտն է, որ կը հրաժարի ներելէ:

Այս առակին մէջ ես զարմանալի փաստ մը կը գտնեմ: Երբ Յիսուս առակներ կը պատմէր, մարդիկ պէտք է հարցնէին՝ ատոնց մեկնութիւնը գիտնալու համար: Այնուամենայնիւ, Յիսուսը կը մեկնէ այս առակը՝ չսպասելով մարդոց հարցումներուն: Կը կարծեմ՝ պատճառը անիկա է,

որ Անոր ըսածը այնքան անհամապատասխան էր մարդկային չափանիշներուն, որ Ան պէտք է համոզուէր, որ մարդիկ հասկցան ատիկա: Ահա Անոր մեկնութիւնը.

«Անոր Տէրը բարկանալով՝ դահիճներուն մատնեց զանիկա, մինչեւ որ պարտքը վճարէ:

Այսպէս իմ երկնաւոր Հայրս պիտի ընէ ձեզի, եթէ ձեր ամբողջ սրտերէն չներէք ամէն մէկդ իր եղբօրը յանցանքները» (Մատթէոս 18.34,35):

Գոյութիւն ունին երեք կարելուր ճշմարտութիւններ, որոնք կ'ուզեն մշտել այս երկու խօսքերուն մէջ: Առաջինը՝ չներող ծառան մատնուեցաւ դահիճներու (կամ՝ չարչարողներու) ձեռքը: Երկրորդը՝ այժմ ան պէտք է վճարէր իր սկզբնական պարտքը, որ 375 թոն ոսկի կը կազմէր: Եւ երրորդը՝ ահա թէ ինչպէս պիտի վարուի Հայր Աստուած անոնց հետ, որ չի ներեր իր եղբօր վիրաւորանքը:

Եկէք արագօրէն քննարկենք այս կէտերէն ամէն մէկը: Առաջինը՝ *չարչարանքը* կը նշանակէ՝ չափազանց ուժգին ցաւ եւ տառապանք պատճառել մարդու մտքին եւ մարմինին, ինչպէս նաեւ՝ տեղաշարժել սովորական դիրքէն: Դահիճը կամ չարչարողը անիկա է, որ չարչարանք կը պատճառէ:

Այն հաւատացեալը, որ կը հրաժարի ներելէ, պիտի չարչարուի դիւային հոգիներու կողմէն: Այս դահիճներուն թոյլատրուած է ցաւ եւ տառապանք պատճառել մարդու մտքին եւ մարմինին՝ իրենց ցանկութեամբ: Ես յաճախ աղօթած եմ հաւաքոյթներուն ներկայ մարդոց համար, որոնք չէին կրնար բժշկութիւն, մխիթարութիւն կամ ազատագրում ստանալ, եւ միակ պատճառը անիկա էր, որ անոնք չէին ձգեր մարդոց յանցանքները եւ ամբողջ սրտէն չէին ներեր անոնց: Այս դառնութիւնը գրեթէ միշտ կը տանի Աստուծոյ դէմ բարկութեան եւ վիրաւորանքի: Մարդու հաւատքը կը պղծուի, եւ եթէ ան չապաշխարէ եւ չներէ, անոր վերջը ողբերգական կ'ըլլայ:

Երկրորդ կէտը այն է, որ այդ ծառան պէտք է վճարէ իր սկզբնական ահռելի պարտքը: Անորմէ անհնարին բան մը կը պահանջուի: Խօսքը այն պարտքի մասին է, որ Յիսուս վճարեց Գողգոթային մէջ: Թերեւս դուք կծկուիք, երբ կարդաք ասիկա, բայց ահա թէ ինչ կ'ընէ Յիսուսը մէկ ուրիշ խօսքի մէջ. «Երբ աղօթքի կը կայնիք, ներեցէ՛ք, եթէ մէկուն դէմ բան մը ունիք, որպէսզի ձեր Հայրն ալ, որ Երկինքն է, ներէ ձեզի ձեր յանցանքները» (Մարկոս 11.25):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, թէ որու կը դիմէ Յիսուսը հոս: Ան կ'ընէ. «...ձեր Հայրն ալ, որ Երկինքն է...»: Աստուած Հայր չէ մեղաւորներուն

համար: Ան Աստուած է մեղաւորներուն համար եւ Հայր՝ հաւատացեալներուն համար: Նոյնպէս, մեղաւորները սովորաբար չեն աղօթեր: Այնպէս որ, ակնյայտ է, որ Յիսուս կը դիմէ Աստուծոյ զաւակներուն:

Եկէք շարունակենք: Յիսուս կ'ըսէ. «Իսկ եթէ դուք չներէք, ձեր Հայրն ալ, որ Երկինքն է, պիտի չներէ ձեր յանցանքները» (Մարկոս 11.26): Աւելի պարզ չէր ալ կարելի ըսել: Հոսկէ մենք կը հասնինք երրորդ կէտին. եթէ մարդը հրաժարի ներելէ, ան չարչարանք պիտի կրէ, մինչեւ որ վճարէ այն պարտքը, որ անկարելի է վճարել: Ատիկա անհնար է, քանի որ ոչ ոք կրնայ փրկագին տալ իր անծին համար (տե՛ս Սաղմոս 49.7, NLT): Յիսուս կ'ըսէ, որ եթէ դուք չներէք, ձեր Հայրը չի ներեր ձեր անօրէնութիւնները: Արդեօ՞ք արժէ այդպէս վարուիլ:

Խօսքը հոս այն մարդու մասին չէ, որ կ'աշխատի յաղթահարելու իր վիրաւորանքը եւ կ'աղօթէ, որ կարենայ ներել: Մենք կը խօսինք Յուսահատ սրտի պէս մարդոց մասին, որոնք յամառօրէն կը հրաժարին ներելէն: Ուշադրութիւն դարձուցէք, որ մեր այլաբանութեան մէջ անոր չներելը դուռ բացաւ այլ չարիքներու համար, եւ ան աստիճանաբար դադրեցաւ Ճէյընին նուիրուած ըլլալէ: Արդեօ՞ք արժէր պահել վիրաւորանքը եւ նման ողբերգական աւարտ ունենալ: Կրկին, ասիկա է պատճառը, որ Եբրայեցիներու նամակի հեղինակը կը շեշտադրէ, որ զգուշօրէն քննենք մեզ եւ հեռացնենք մեզմէ ամէն տեսակի դառնութիւն, քանի որ *շատերը* կը պղծուին ատորմով:

Այժմ մենք կրնանք հասկնալ Յիսուսին խօսքերը եկեղեցւոյ վերջին օրերուն մասին: Ան կ'ըսէ. «Եւ այն ժամանակ շատերը պիտի գայթակղին ու մէկզմէկ պիտի մատնեն եւ մէկզմէկ պիտի աւտեն... Եւ անօրէնութեան շատնալուն համար շատերուն սէրը պիտի պաղի: Բայց ով որ մինչեւ վերջ համբերէ, անիկա պիտի ապրի (փրկուի)» (Մատթէոս 24.10,12,13):

Ուշադրութիւն դարձուցէք, որ այս վերջին օրերուն պիտի գայթակղին ոչ թէ մէկ քանին կամ ոմանք, այլ՝ *շատերը*: «Շատերը» բառը անսահման, շատ մեծ կամ անհաշուելի թիւ կը նշանակէ: Վիրաւորանքը կամ չներումը պիտի տանի անօրէնութեան, եւ անթիւ մարդոց սէրը պիտի պաղի:

Այն բառը, որ «սէր» թարգմանուած է այս խօսքին մէջ, յունարէն «ագապէ»-ն է: Խօսքը Աստուծոյ սիրոյ մասին է, որ սփռուեցաւ քրիստոնէայի սրտին մէջ այն պահուն, երբ ան փրկուեցաւ: Յիսուս չի խօսիր խաբուածներու մասին, քանի որ անոնք երբեք ճշմարտապէս չեն ստացած Աստուծոյ սէրը: Ան կը խօսի հաւատացեալներու մասին, քանի որ Ան կ'ըսէ. «Բայց ով որ մինչեւ վերջ համբերէ, ան պիտի փրկուի»: Ոչ ոք չ'ըսեր մեղաւորին կամ խաբուած մարդուն. «Եթէ մինչեւ վերջ համբերես, պիտի փրկուիս»: Այդ մարդիկ տակաւին չեն սկսած իրենց ընթացքը:

Հաւատքն հեռանալը

Աստուածաշունչը կը զգուշացնէ մեզ մեծ նահանջի մասին, որ տեղի պիտի ունենայ մեր օրերու հաւատացեալներուն միջեւ: Պօղոսը կը գրէ. «Չըլլայ թէ ձեզ մէկը խաբէ կերպով մը, վասնզի այն օրը (Տէրը) պիտի չի գայ, *ապաստութենէն առաջ* (կամ՝ նահանջը)» (Բ. Թեսաղոնիկեցիս 2.3): Եւ կրկին ան կը կանխասէ. «Հոգին յայտնի կ'ըսէ, թէ վերջին ատենները մէկ քանին հաւատքն պիտի հեռանան» (Ա. Տիմոթէոս 4.1):

Ո՞րն է պատճառը: «Վասնզի ժամանակ պիտի գայ, որ ողջամիտ վարդապետութեանը պիտի չհամբերեն, հապա հաճելի բաներ լսելու մարմաջով իրենց ցանկութիւններուն համեմատ վարդապետներ պիտի դիզեն իրենց եւ *ճշմարտութենէն ականջնին պիտի դարձնեն* ու առասպելներու ետեւէ պիտի մոլորին» (Բ. Տիմոթէոս 4.3,4):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ վերոյիշեալ խօսքին մէջ Պօղոսը կը գրէ, որ «ոմանք հաւատքն պիտի հեռանան»: Ան չի խօսիր հոս երեւակայական հաւատքի մասին, այլ՝ Յիսուս Քրիստոսի հանդէպ ճշմարիտ հաւատքի: Որպէսզի այս մարդիկ հեռանային հաւատքէն, անոնք պէտք է ժամանակ մը հաւատքի մէջ ըլլային:

Ես ներկայացուցի Աստուածաշնչեան հատուածներ գրեթէ բոլոր նորկտակարանեան հեղինակներէն այն մասին, որ հաւատացեալները կրնան հեռանալ հաւատքէն: Այժմ առիթ տուէք մէջբերելու ակնառու եկեղեցական հայրերու աշխատութիւններէն, որոնցմէ մէկ քանին Նոր կտակարանի հեղինակներու գործակիցներն էին: Ես կը տեսնեմ, որ անոնց խօսքերը բոլորովին կը համապատասխանեն այն Աստուածաշնչեան հատուածներուն, որոնք մենք ուսումնասիրեցինք:

«Ուրեմն, եկէ՛ք արդարութեամբ վարուինք, որ պահպանենք մեր փրկութիւնը մինչեւ վերջ»:

– Կղեմես Գրովմայեցի³

«Նոյնիսկ այն պարագային, եթէ ինչ որ մէկը կատարած ըլլայ մեծագոյն բարի գործերը իր կեանքի ընթացքին, բայց վերջաւորութեան գլխակորոյս անօրինութեան գիրկը իյնայ, անոր բոլոր նախկին ջանքերը անօգուտ պիտի ըլլան անոր համար: Որովհետեւ ան ձգեց իր բաժինը իր կեանքի վերջաւորութեան»:

– Կղեմես Ալեքսանտրիացի⁴

«Ոմանք կը մտածեն, որ Աստուած պարտաւոր է շնորհել նոյնիսկ անարժաններուն այն, ինչ որ խոստացած է [տալ]: Այնպէս որ, անոնք կը կարծեն, որ Ան ստրկացած է Իր իսկ առատածեռնութեան... Որովհետեւ

չէ՞ որ շատերը հետագային պիտի իյնան [շնորհքէն]: Մի՞թէ այս պարգեւը չի վերցուիր շատերէն»:

– Տերտուղիանոս⁵

«Մարդը կրնայ ունենալ ձեռք բերուած արդարութիւն, որմէ հնարաւոր է իյնալ»:

– Օրիկենես⁶

«Ան կը գրկէ ժառանգութենէն այն մարդիկը, որոնք չեն հնազանդիր Իրեն, եւ անոնք կը դադրին Անոր որդիները ըլլալէն»:

– Յիրինես⁷

Լսելով իմ դիրքորոշումը Աստուածաշնչեան ճշմարտութիւններու վերաբերեալ՝ ոմանք սխալմամբ ըսած են ինծի. «Ճո՛ն, դուն արմինիական ես»: Այս թերմինը հետեւեալ կերպով կը սահմանուի բառարանին մէջ. «Առնչուող Յակոբոս Արմինիոսի եւ անոր հետեւորդներու Աստուածաբանութեան հետ, որոնք մերժեցին Քալվինիստական վարդապետութիւնները նախասահմանման եւ ընտրութեան մասին, եւ կը հաւատային, որ մարդու ազատ կամքը համատեղելի է Աստուծոյ գերիշխանութեան հետ»⁸:

Ես պարզ պատասխան կու տամ նման մարդոց. «Ո՛չ, ես ո՛չ քալվինական եմ, ո՛չ արմինիական: Ես քրիստոնէայ եմ, որ կը հաւատայ, որ Աստուածաշունչը՝ Աստուծոյ անսխալական Խօսքն է»:

Յակոբոս Արմինիոսը կ'ապրէր շատ աւելի ուշ Աստուածաշունչի հեղինակներէն, եւ նոյնիսկ աւելի ուշ, քան առաջին եկեղեցւոյ առաջնորդները, որոնց մենք վերի բաժինին մէջ մէջբերեցինք: Արդեօ՞ք դուք կրնաք արմինիական անուանել այդ հեղինակներուն: Ակնյայտ է, որ չէք կրնար, քանի որ անոնք կ'ապրէին եւ կը գրէին Արմինիոսի ծնելէն շատ առաջ: Այն, ինչ որ ես կը գրեմ, անձնական գաղափար, հասկացութիւն կամ համոզմունք չէ, այլ՝ նորկտակարանեան ճշմարտութիւն, որ պարզօրէն յայտնուած է Աստուածաշունչին մէջ: Աստուած շատ պարզօրէն փոխանցած է Իր զգուշացումը մեզի՝ հաւատացեալներու: Մենք պէտք է զգոյշ ըլլանք, որ կախուած չըլլանք Աստուածաբանական դպրոցներէն, այլ բաց ըլլանք Աստուածաշունչի համայօդուածին համար, որը ներշնչուած է Սուրբ Հոգիով, որովհետեւ.

«Ամբողջ Սուրբ գիրքը ոգեշնչուած է Աստուծմէ եւ օգտակար է՝ սորվեցնելու մեզ այն, ինչ որ ճշմարիտ է, եւ հասկցնելու, թէ ինչը սխալ է մեր կեանքին մէջ: Այն կը շտկէ մեզ եւ կը սորվեցնէ ճիշդ վարուիլ: Այն Աստուծոյ միջոցն է՝ մեզ ամէն կերպով պատրաստելու համար...»
(Բ. Տիմոթէոս 3.16,17, NLT):

Հետաքրքրական է նշել, որ այն կեղծ առաջնորդները, որոնց Յիսուսը խստորեն կը զգուշացնէր եւ կը յանդիմանէր, համախմբուած էին տարբեր Աստուածաբանական դպրոցներու շուրջ եւ կը սորվեցնէին ատոնց համաձայն: Այնուամենայնիւ, Աստուածաշունչին մէջ բազմիցս գրուած է Յովհաննէս Մկրտիչի, Յիսուսի եւ այլ մարդոց մասին, որոնք կը խօսէին ճշմարտութիւնը, որ անոնք կը սորվեցնէին «...իշխանութիւն ունեցողի պէս... եւ ոչ թէ դպիրներու պէս» (Մատթէոս 7.29): Այս պատճառով Պօղոսը կը խրատէ Տիտոսը. «Այս բաները խօսի՛ր եւ յորդորէ՛ եւ յանդիմանէ՛ բոլոր սաստկութեամբ (կամ՝ իշխանութեամբ)» (Տիտոս 2.15): Ան նոյնպէս կը գրէ Տիմոթէոսին. «...որ Եփեսոսի մէջ մնաս... որ պատուիրես ոմանց, որ օտար ուսմունք չսորվեցնեն» (Ա. Տիմոթէոս 1.3): Պօղոսը նոյնպէս պատուիրեց Տիմոթէոսին հետեւեալը.

«Ազդարարէ՛ եւ քարոզէ՛ Խօսքը: Պահէ՛ քու հրատապութեան զգացումը [եղի՛ր հասանելի, մօտ եւ պատրաստ], անկախ այն բանէն՝ հնարաւորութիւնը բարենպաստ կը թուայ, թէ՞ ոչ [Անկախ այն բանէն՝ յարմար է, թէ՞ անյարմար, ցանկալի՞ է, թէ՞ անցանկալի, դուն՝ որպէս Խօսքի քարոզիչ, պէտք է ցոյց տաս մարդոց, թէ ինչ կերպով անոնց կեանքերը սխալ են]: Եւ համոզէ՛ զանոնք՝ յանդիմանելով եւ շտկելով, զգուշացնելով եւ յորդորելով եւ խրախուսելով՝ առանց թուլանալու եւ յոգնելու, համբերութեամբ եւ վարդապետութեամբ» (Բ. Տիմոթէոս 4.2, AMP):

Եփեսացիներու 6-րդ գլուխին մէջ Պօղոսը աղօթք կը խնդրէ իրեն համար, որ «...համարձակ ըլլամ, ինչպէս որ պէտք է ինծի խօսիլ» (Խօսք 20): Կրնաք տեսնել, որ այս յատկութիւնը բնորոշ է Աստուծոյ բոլոր ճշմարիտ պատգամաբերներուն: Անոնց իշխանութիւնը Աստուծոյ Խօսքի մէջ է: Անոնք չեն համախմբուիր անձնական զգացողութիւններու, Աստուածաբանական դպրոցներու կամ մեծամասնութեան կարծիքի շուրջ: Երբեմն մեծամասնութիւնը կրնայ սխալ ըլլալ: Մենք պէտք է գիտնանք, որ Աստուած նկատի ունի այն, ինչ որ կ'ըսէ, եւ որ Ան կ'ըսէ այն, ինչ որ նկատի ունի:

Անարատ պահել ձեզ

Ուսմունքը շնորհքէն իյնալու մասին, որն այնքան ակնյայտ է Աստուածաշունչին մէջ, ցնցում յառաջացուցած է ոմանց մօտ: Անոնք տազնապահար քովս եկած են՝ ըսելով. «Ես կը կարծէի, որ մենք յաւիտենական ապահովութիւն ունինք»:

Նման պարագաներու մէջ ես կը պատասխանեմ. «Անշո՛ւշտ, ատիկա ճիշդ է: Մենք ունինք յաւիտենական ապահովութիւն: Յիսուս ըսաւ, որ չի կորսնցներ անոնց, որոնց Հայրը տուաւ Իրեն (տե՛ս Յովհ. 18.9),

քանի որ ան չի ձգեր եւ չի լքեր մեզ: Բայց Ան չըսաւ, որ մենք չենք կրնար ձգել Ձինք»: Այս խօսքերէն յետոյ մարդիկ սովորաբար մտահոգուած հայեացքով կը նային ինծի: Ես կը շարունակեմ. «Եթէ դուք ճշմարտապէս կը սիրէք Յիսուս Քրիստոսը, ինչո՞ւ պէտք է ուզէք հեռանալ Անորմէ: Դուք չէք ուրանար Ձինք, եթէ ճշմարտապէս սիրէք Ձինք»:

Եթէ դուք կը սիրէք զԱստուած, ձեզի համար դժուար չ'ըլլար պահել Անոր պատուիրանները: Եթէ Աստուծոյ ծառայելը պարտաւորութիւն դառնայ, կը նշանակէ՝ դուք մուտք գործած էք օրինապաշտական յարաբերութիւններու մէջ, եւ ձեզի համար դժուար պիտի ըլլայ պահել Անոր պատուիրանները: Մենք պէտք չէ ծառայենք Աստուծոյ՝ Անոր հաւանութիւնը ստանալու համար. մենք պէտք է ծառայենք Աստուծոյ, որովհետեւ սիրահարուած ենք Անոր:

Յուդան կը պատուիրէ մեզի պահել մեր սէրը թարմ վիճակի մէջ, թէեւ եկեղեցւոյ մէջ վատ ազդեցութիւններ կան: Ան կը գրէ. «Ձեր անձերը Աստուծոյ սիրոյ մէջ պահեցէ՛ք՝ սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեան յաւիտենական կեանքի համար» (Յուդա 21): Մենք պէտք է փնտռենք Տէրը ամէն օր եւ ամէն պահ: Մենք պէտք է փափաքինք Ձինք եւ շարունակ փնտռենք Ձինք, որ Ան աւելի զօրաւոր կերպով յայտնէ Ինչզինքը մեզի, որովհետեւ «Ամէն ան որ այս յոյսը Անոր վրայ ունի, ինքզինքը կը մաքրէ(կը սրբէ), ինչպէս Անիկա մաքուր(սուրբ) է» (Ա. Յովհաննէս 3.3): Յովհաննէսը յատկապէս կը խօսէր Յիսուս Քրիստոսի յայտնութեան մասին:


Եթէ փնտռէք Ձինք եւ հաղորդակցիք Սուրբ Հոգիին հետ, դուք երբեք չէք փափաքիր հեռանալ: Այնպէս որ, ցնցուելու կարիք չկայ: Իմ ամենասիրելի խոստումներէն մէկը Աստուածաշունչին մէջ կը գտնուի Յուդայի նամակին վերջաւորութեան: Յուդան կ'ըսէ անոնց, որոնք սիրահարուած կը մնան Աստուծոյ եւ կը փնտռեն Յիսուսին յայտնութիւնը.

«Եւ անոր, որ կարող է ձեզ անբիծ պահել եւ իր փառքին առջեւ անարատ կայնեցնել ցնծութիւնով, մեր Փրկիչին՝ միմիայն իմաստուն Աստուծոյ, մեր Տէր Յիսուս Քրիստոսին ձեռքով փառք ու մեծութիւն, զօրութիւն ու իշխանութիւն բոլոր դարերէն առաջ եւ հիմա ու բոլոր դարերուն մէջ: Ամէն» (Յուդա 24,25):

Ասիկա իմ ջերմեռանդ աղօթքն ու ցանկութիւնն է ձեզի համար:

ՄԵՆՔ ԿՐՆԱՆՔ ԿԱՌՈՒՑԵԼ
ԱՍՏՈՒԾՈՅ ԹԱԳԱԻՐՐՈՒԹԻՒՆԸ
ՄԻՄԻԱՅՆ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ
ՀՆԱԶԱՆԴԵԼՈՎ,
*ԵՒՈՉ ԹԷ ՄԵՐ
ԲՆԱԿԱՆ ՏԱՂԱՆԴՆԵՐՈՎ:*

- ՃՈՆ ՊԻՎԻՐ
#ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՄԲՇԱՐԺՈՂՆԵՐԸ



ՄԵՆՔ ՉԵՆՔ ԳԱՐ ՀԻՍՈՒՍԻՆ ՔՈՎ
ԱԻԵԼԻ ԼԱԻ ԿԵԱՆՔԻ ՀԱՄԱՐ:

ՄԵՆՔ ԿՈՒ ԳԱՆՔ ՀԻՍՈՒՍԻՆ ՔՈՎ,
ՈՐՈՎՅԵՏԵՒ ԱՆ **է** ԿԵԱՆՔԸ:

- ԵՈՆ ՊԻՎԻՐ

#ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՄԲՇԱՐԺՈՂՆԵՐԸ







ԵԹԷ ԴՈՒՔ ՈՐՈՇԷՔ
ՉԿԱՏԱՐԵԼ ԱՅՆ ԿՈՉՈՒՄԸ,
ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ՏՈՒԱԾ Է ՁԵԶԻ...





...ԱՆ ԿՈՒ ՏԱՅ ԶԱՅՆ
ՈՒՐԻՇ ՄԷԿՈՒ ՄԸ:

- ՇՈՆ ՊԻՎԻՐ

#ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՄԲՇԱՐԺՈՂՆԵՐԸ

ԵԹԷ ԿԱՌՈՒՑԵՆՔ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ
ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻ
ԱՆՓՈԹՈՒՆ ԵՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՐԱՅ,

ՄԵՆՔ ՊԱՏՐԱՍ Կ'ԸԼԼԱՆՔ
ՎՍՏԱՅԱԲԱՐ ՔԱՅԼ ԱՌՆԵԼՈՒ
ԴԷՊԻ ՅԱԻՏԵՆՈՒԹԻՒՆԸ:

- ԵՆՆ ՊԻՎԻՐ
#ՅԱԻՏԵՆՈՒԹԵԱՄԲՇԱՐԺՈՂՆԵՐԸ





ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԴԱՏԷ ՄԵԶ
ՀԱՄԱՁԱՅՆ ԻՐ ԽՕՍՔԻՆ,
ՈՉ ԹԷ ՀԱՄԱՁԱՅՆ ՄԵՐ
ՄԱՐԴԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐՈՒՆ:

- ՃՈՆ ՊԻՎԻՐ
#ՅԱԻԻՏԵՆՈՒԹԵԱՄԲՇԱՐԺՈՂՆԵՐԸ



հնացել է ք աւելին [CloudLibrary.org](https://www.CloudLibrary.org) կայքին մէջ.



ՀԻԱՔԸ

«...Փոխզիջման չզացող արդարը յաւիտենական
հիմք ունի»:

— Առակաց 10.25, AMP

Մախքան վերադառնանք Աֆապելի այլաբանութեան եւ ներկայաց-
նենք այն դատաստանները եւ վարձատրութիւնները, որոնք Եսա-
սիրտն ու Բարեգործը պիտի ստանան, մենք պիտի ամփոփենք այն ին-
չին մասին, որ խօսեցանք վերջին երեք գլուխներուն մէջ: Եկէ՛ք վերյիշենք
Աստուածաշնչեան հատուածը, որ մէջբերուած էր չորրորդ գլուխին մէջ:

«Ուրեմն, եկէ՛ք առաջ երթանք եւ անցնինք Քրիստոսի (Մեսիայի) ուսմունք-
ներու տարրական փուլէն՝ հաստատուն կերպով յառաջանալով դէպի ամ-
բողջականութիւնը եւ կատարելիութիւնը, որոնք յատուկ են հոգեւոր հա-
տունութեան: Եկէ՛ք կրկին չդնենք... յաւիտենական դատաստանի եւ պա-
տիժի հիմքը: [Այս ամէնը բաներ են, որոնց մասին դուք պէտք է բոլորովին
տեղեակ ըլլայիք շատ, շատ ատենէ ի վեր]» (Եբրայեցիս 6.1,2, AMP):

Չունենալով յաւիտենական դատաստանի եւ պատիժի հաստատ
հիմքը՝ մենք չենք կրնար ճիշդ կառուցել մեր կեանքը Քրիստոսի մէջ:
Որպէս համեմատութիւն՝ պատկերացուցէ՛ք, որ ինչ որ մէկը կը փորձէ
լաւ կրթութիւն ստանալ՝ չունենալով հիմնարար գիտելիքներ տարրա-
կան դպրոցէն, օրինակ՝ չգիտնալ գրել եւ կարդալ:

Եթէ ուշադրութեամբ ուսումնասիրէ՛ք Աւետարանները, պիտի նկա-
տէ՛ք, որ Յիսուսը աւելի շատ կը խօսէր դժոխքի մասին, քան Երկնքի:
Ան կ'ընէր ատիկա, որպէսզի հիմք դնէր մեր կեանքին մէջ, որ Տիրոջ եր-
կիւղն է: Ահա մէկ օրինակ.

«Ինչ որ ըսած էք խաւարին մէջ, պիտի լսուի լոյսին մէջ, եւ ինչ որ շշնջա-
ցած էք փակ դռներու ետեւը, հրապարակաւ պիտի ազդարարուի տա-
նիքներէն: Թանկագին ընկերներ, մի՛ վախճաք անոնցմէ, որոնք կ'ու-
զեն սպաննել ձեզ: Անոնք կրնան սպաննել միայն մարմինը, եւ աւելին
չեն կրնար ընել ձեր հետ: Բայց ես պիտի ըսեմ ձեզի, թէ որմէ վախ-
նաք: Վախցէ՛ք Աստուծմէ, Որ ի զօրու է մարդիկ սպաննելու, իսկ յետոյ՝
զանոնք դժոխք նետելու» (Ղուկաս 12.3–5, NLT):

Այս խօսքերը կտրուկ եւ յստակ են. երբ մենք կը հասկնանք յաւիտենական պատիժի եւ դատաստանի վարդապետութիւնը, Տիրոջ երկիւղը ամուր կը հաստատուի եւ կը մնայ մեր սրտերուն մէջ:

Առիթ տուէք բացատրել: Միայն Աստուած կրնայ յաւիտենութիւնը դժոխքին մէջ անցընելու դատավճիռ կայացնել: Այն, ինչ որ մենք խօսած ենք ծածուկին մէջ, ի յայտ պիտի գայ Անոր փառքի լոյսի տակ՝ դատաստանի ժամանակ: Յայտնի պիտի դառնան ոչ միայն մեր խօսքերը, այլեւ՝ մեր դրոպապատճառները, վերաբերմունքը եւ գործերը: Աստուծոյ երկիւղը մշտապէս կը յիշեցնէ մեզի, որ ոչինչ կրնայ պահուիլ Անորմէ, նոյնիսկ՝ ամենածածուկ բաները: Մենք գիտենք, որ ոչինչ կը խուսափի Անոր դատաստանէն, եւ որ Անոր դատաստանը արդար է: Եթէ մենք չհասկնանք ասիկա, պիտի խաբուինք՝ հաւատալով, որ Աստուած կ'անտեսէ կամ նոյնիսկ չի տեսներ մեր անօրէնութիւնները, եւ մխիթարութիւն պիտի գտնենք ոչ սուրբգրային ողորմութեան մէջ, որն իրականութեան մէջ գոյութիւն չունի (ինչպէս Խաբուածը, Յուսահատ սիրտը եւ Երկակի կեանքը): Մենք կրնանք դիւրութեամբ դառնալ վերջին օրերու այն բազմաթիւ մարդոցմէ մէկը, որոնք կը շեղին անսասան նուիրումէն դէպի անօրէնութիւնը:

Անոնք, որոնք չունին այս հիմքը, կ'իյնան մարդոցմէ վախճալու ծուղակին մէջ, իսկ մարդը ի վերջոյ կը ծառայէ անոր, որմէ կը վախճնայ: Եթէ վախճանք Աստուծմէ, մենք կը հնազանդինք Անոր՝ նոյնիսկ ճնշման տակ: Եթէ վախճանք մարդոցմէ, մենք առիթ կու տանք մարդոց, յատկապէս՝ ճնշման ներքոյ, եւ կը շեղինք դէպի մեր հաճոյքները, մարմնի ցանկութիւնները եւ հպարտութիւնը: Մարմնական բնութեան շարունակ առիթ տալը լուրջ հետեւանքներու պիտի յանգեցնէ: Այնպէս որ, եթէ չհասկնանք յաւիտենական դատաստանի եւ պատիժի իրողութիւնը, մենք պիտի թերանանք Տիրոջ երկիւղի մէջ, քանի որ սուրբ երկիւղածութիւնը Քրիստոսի դատաստաններէն՝ Տիրոջ երկիւղի կողմերէն մէկն է: Պօղոսը կը ձեւակերպէ այս միտքը հետեւեալ կերպով.

«Վասնզի պէտք է որ ամէնքս ալ Քրիստոսին ատեանին առջեւ ներկայանանք, որպէսզի ամէն մէկը իր մարմնովը ըրածներուն փոխարէնը առնէ (կամ հատուցում ստանայ) ինչ որ գործեր է, թէ՛ բարի եւ թէ՛ չար: Ուստի Տիրոջը վախը (ահաւորութիւնը) գիտնալով՝ կը համոզենք մարդիկ...» (Բ. Կորնթացիս 5.10,11):

Պօղոսը նկատի չունէր Մեծ Սպիտակ գահի դատաստանը (որուն մասին Յիսուս կը խօսէր Ղուկաս 12-րդ գլխուխին մէջ), որուն ժամանակ մարդիկ պիտի դատապարտուին եւ դժոխք պիտի երթան: Ան կը խօսէր հաւատացեալներու դատաստանի մասին: Մենք պիտի սկսինք խօսիլ այս դատաստանի մասին յաջորդ գլուխին մէջ, բայց ուշադրու-

թին դարձուցէք, որ Պօղոսը կը հաւասարեցնէ Տիրոջ երկիւղը Քրիստոսի ատեանին: Ան նոյնիսկ «Տիրոջ ահաւորութիւն» կ'անուանէ Քրիստոսի ատեանը: Իմաստը այն է, որ անկարելի է առանձնացնել Տիրոջ երկիւղը դատաստանի մասին պատկերացումէն, եւ որ Տիրոջ երկիւղը ողջամիտ կեանքի բանալին է:

Լսեցէ՛ք Եսայեայ մարգարէին խօսքերը. «Ան կ'ըլլայ քու ժամանակներու հաստատ հիմքը, փրկութեան, իմաստութեան եւ գիտելիքի առատ պաշար. Տիրոջ երկիւղը՝ այս գանձի բանալին է» (Եսայեայ 33.6, NIV):

Սուրբ երկիւղը՝ Աստուծոյ հաստատ հիմքի բանալին է: Յիշեցէ՛ք Յիսուսի խօսքերը՝ մէջբերուած նախորդ գլուխներուն մէջ, որոնց մէջ Ան կը խօսէր այն բազմութիւններու մասին, որոնք հրաշքներ պիտի գործեն Իր անունով, բայց պիտի մերժեն՝ երթալով դէպի յաւիտենական պատիժը: Ջարմանալի չէ, որ Մատթէոս 7-րդ գլուխին մէջ՝ այդ խօսքերէն յետոյ, Յիսուս անմիջապէս սկսաւ բացատրել, որ անոնց անկման պատճառը՝ անոնց հիմքն էր: Անոնք կառուցած էին իրենց կեանքը այնպիսի մտածելակերպերու եւ համոզմունքներու վրայ, որոնք չէին կրնար դիմանալ կեանքի փոթորիկներուն: Յիսուսի խօսքերով՝

«Ուրեմն, ամէն մէկը, որ կը լսէ Իմ այս խօսքերը եւ կը հնազանդի, կը նմանի իմաստուն մարդու, որ կը կառուցէ իր տունը ժայռի վրայ: Անձրեւը տեղաց, գետերը վարարեցան, եւ քամին ուժգնօրէն փչեց այդ տունին վրայ: Բայց այն չիյնկաւ, որովհետեւ կառուցուած էր ժայռի [Աստուծոյ հաստատ հիմքի՝ Տիրոջ երկիւղի] վրայ:

Բայց ամէն մէկը, որ կը լսէ իմ այս խօսքերը եւ չի հնազանդիր ատոնց, նման է յիմար մարդու, որ կառուցեց իր տունը ւազի վրայ: Անձրեւը տեղաց, գետերը վարարեցան, քամին ուժգնօրէն փչեց այդ տունին վրայ, եւ այն իյնկաւ: Եւ որքա՛ն սարսափելի էր այդ անկումը» (Մատթէոս 7.24–27, TEV):

Այն մարդիկ, որոնք կը համբերեն մինչեւ վերջ, իրենց ամուր հիմքի շնորհիւ, կը դիմանան փոթորիկներուն: Այդ հիմքը՝ Տիրոջ երկիւղն է, որ կայունութիւն կը բերէ մեր կեանքին մէջ: Այն Աստուծոյ հարստութեան պահոցն է: Անոր փրկութիւնը, իմաստութիւնը եւ գիտելիքը՝ ամէն ինչ պահուած է ատոր մէջ:

Տիրոջ երկիւղը

Ի՞նչ է Տիրոջ երկիւղը: Արդեօ՞ք այն կը նշանակէ՝ սարսափ զգալ Աստուծոյ հանդէպ: Անշուշտ՝ ոչ: Ինչպէ՞ս մենք կրնանք մտերմութիւն ունենալ Տիրոջ հետ (ինչ որ Անոր սրտի ցանկութիւնն է), եթէ վախնանք Անորմէ: Երբ Աստուած եկաւ՝ յայտնելու Ինքզինքը Իսրայէլին, Անոր

նպատակը՝ ժողովուրդի հետ հաղորդակցիլն էր այնպես, ինչպես Ան կը հաղորդակցեր Մովսէսին հետ, բայց ամբողջ ժողովուրդը փախաւ՝ հրաժարելով մօտենալ Անոր: Մովսէս ըսաւ ժողովուրդին. «Մի՛ վախնաք, որովհետեւ Աստուած եկած է, որ փորձէ ձեզ, եւ որ Անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որ դուք չմեղանչէք» (Ելից 20.20, NKJV):

Կը թուայ՝ Մովսէսը կը հակասէր ինքնզինքը, բայց այդպէս չէ: Ան կը բաղդատէր Աստուծո՛վ վախնալու եւ Տիրոջ երկիւղի միջեւ, քանի որ ատոնց մէջ տարբերութիւն կայ: Այն մարդը, որ կը վախնայ Աստուծո՛վ, ծածկելու բան մը ունի: Յիշեցէ՛ք, թէ ինչ ըրաւ Ադամը, երբ անհնազանդութիւն ցուցաբերեց Եդէմի պարտէզին մէջ. ան ծածկուեցաւ Տիրոջ ներկայութենէն: Այնուամենայնիւ, Աստուծոյ երկիւղը ունեցող մարդը կը վախնայ հեռու ըլլալ Աստուծո՛վ եւ կը փախչի անհնազանդութենէն: Այնպէս որ, սուրբ երկիւղի առաջին սահմանումն է՝ սարսափիլ Աստուծո՛վ հեռու ըլլալէն:

Եկէք շարունակենք բացատրել Տիրոջ երկիւղը: Տիրոջ երկիւղը ունենալը կը նշանակէ՝ պատուել, արժեւորել, գնահատել, նաեւ՝ յարգանքով եւ երկիւղածութեամբ վերաբերիլ Անոր՝ շատ աւելի, քան ոեւէ մարդու, առարկայի կամ երեւոյթի: Տիրոջ երկիւղը կը նշանակէ՝ սիրել այն, ինչ որ Ան կը սիրէ, եւ ասել այն, ինչ որ Ան կ'ատէ: Այն, ինչ որ կարելոր է Անոր համար, կարելոր է մեզի համար, եւ այն, ինչ որ կարելոր չէ Անոր համար, կարելոր չէ նաեւ մեզի համար: Երբ ունինք Անոր երկիւղը, մենք *կը դողանք Անոր խօսքէն*, ինչ որ կը նշանակէ, որ մենք անմիջապէս կը հնազանդինք Անոր, նոյնիսկ երբ ատիկա անիմաստ կը թուայ, երբ ատիկա ցաւ կը պատճառէ մեզի, եւ երբ չենք տեսներ ոչ մէկ շահ ատորմէ: Եւ մենք կը հնազանդինք մինչեւ վերջ: Տիրոջ երկիւղի դրսեւորումը՝ Անոր խօսքին, ճանապարհներուն եւ պատուիրաններուն հնազանդիլն է:

Աստուածաշունչը կը յայտնէ մեզի, որ Տիրոջ երկիւղը՝ իմաստութեան սկիզբն է: Կարելի է նաեւ ըսել, որ այն իմաստութեան *հիմքն* է: Իմաստութիւնը, որուն մասին մենք աւելի խորապէս պիտի խօսինք յաջորդ գլուխներուն մէջ, կը նշանակէ հետեւեալը. գիտելիք եւ կարողութիւն՝ ճիշդ ժամանակին ճիշդ որոշումներ կայացնելու համար: Այն մարդիկ, որոնք, գտնուելով ճնշումի տակ, սխալ որոշումներ կը կայացնեն, իմաստութեան պակաս ունին, իսկ իմաստութեան աղբիւրը Տիրոջ երկիւղն է:

Աստուածաշունչը կը յայտնէ, որ մեր կեանքը կարելի է համեմատել տուն կառուցելու հետ: Նախ կը դրուի հիմքը, իսկ յետոյ կը կեցնեն հիմնակառոյցը: Գրուած է. «Տունը կը շինուի իմաստութեամբ» (Առակաց 24.3): Եթէ մենք կառուցենք մեր կեանքը՝ կայացնելով ճիշդ որոշումներ, մենք կ'ապրինք ճիշդ կերպով եւ վստահութեամբ կը կենանք Քրիստոսի ատեանի առջեւ: Իմաստութեան սկիզբը կամ հիմքը՝ Տիրոջ երկիւղն է:

Ինչպե՞ս շեղիլ

Քրիստոնեաները չէին շեղիր, եթէ Տիրոջ երկիւղը ամուր տնկուած ըլլար անոնց սրտերուն մէջ: Մենք չէինք սայթաքիր կամ շեղիր Յիսուսին հանդէպ մեր անսասան նուիրումէն: Մենք չէինք թերագնահատեր Անոր Խօսքը, եւ ո՛չ ալ թեթեւօրէն կը վերաբերէինք ատոր: Մենք սիրախաղ չէինք ըներ մեղքի հետ, ինչին պատճառով հաւատացեալի սիրտը կը խստանայ, եւ ի վերջոյ ան կ'իյնայ շնորհքէն (տե՛ս Եբր. 3.12,13): Մենք միշտ կը գիտնայինք, որ այն, ինչ ըսուած եւ եղած է ծածուկին մէջ, հրապարակաւ պիտի ազդարարուի Քրիստոսի ատեանին մէջ:

Ահա թէ ինչ ըսաւ Աստուած Երեմիային Նոր կտակարանի հաւատացեալներու մասին.

«Եւ անոնք Ինծի ժողովուրդ պիտի ըլլան, Ես ալ անոնց Աստուած պիտի ըլլամ: Անոնց մէկ սիրտ ու մէկ ճամբայ պիտի տամ, որպէսզի ամէն ժամանակ (յաւիտեան) Ինծմէ վախնան եւ իրենց ու իրենցմէ ետքը իրենց գաւակներուն աղէկ ըլլայ: Անոնց հետ յաւիտենական ուխտ մը պիտի ընեմ, որ անոնց բարիք ընելէն անոնցմէ ետ չքաշուիմ ու Իմ վախս անոնց սրտին մէջ պիտի դնեմ, որպէսզի Ինծմէ չխտորին» (Երեմեայ 32.38–40):

Ուշադրութիւն դարձուցէք՝ Աստուած կ'ըսէ Իր ժողովուրդի մասին.
«...որ Ինծմէ վախնան ամէն ժամանակ (կամ՝ յաւիտեան)... որ Ինծմէ չհեռանան»:

Ես կը յիշեմ այն հաւաքոյթը Մալիզիայի մէջ, ուր զօրաւոր կերպով յայտնուեցաւ Տիրոջ երկիւղի Հոգին: Այդ հաւաքոյթին ներկայ էին մարդիկ երկրագունդի ամբողջ արեւելեան կիսագունդէն. դահիճը, ուր կը քարոզէի, լեւի-լեցուն էր Աստուածաշնչեան դպրոցի ուսանողներով, հովիւներով եւ շատ այլ մարդոցմով: Արդէն ծառայութեան աւարտին շատերը պառկած էին յատակին՝ բեմահարթակի քով, եւ անվերահսկելի կերպով կու լային:

Տիրոջ սարսափը այնքա՛ն զարմանալի էր այդ վայրին մէջ: Յանկարծ եւ մտածեցի. «Ճո՛ն Պիվիր, եթէ մէկ սխալ շարժում ընես կամ մէկ սխալ բան ըսես, դուն պիտի մեռնիս հոս»: Արդեօ՞ք ասիկա տեղի պիտի ունենար: Ես չեմ գիտեր, բայց կրնամ ըսել, որ Նոր կտակարանին մէջ գրուած է տղամարդու մը եւ կնոջ մը մասին, որոնք սխալ վարուեցան այդպիսի մթնոլորտի մէջ եւ մահացան: Անոնց դատաստանի անմիջական արդիւնքը այն էր, որ «մեծ ահ եղաւ ամբողջ եկեղեցւոյ վրայ եւ ամէնուն վրայ, որ ասիկա լսեցին» (Գործք 5.11):

Այդ հաւաքոյթէն յետոյ զոյգ մը Հնդկաստանէն մօտեցաւ ինծի եւ ըսաւ.

- Ճո՛ւն, մենք այնպիսի՛ մաքրութիւն (սրբութիւն) կը զգանք մեր ներսը:
- Այո՛, ես՝ նոյնպէս,– պատասխանեցի:

Յաջորդ առաւօտեան ես իմ հիւրանոցային սենեակն էի եւ գտայ այս խօսքը. «Տիրոջ վախը սուրբ է, *կը մնայ յաւիտեան*» (Սաղմոս 19.9):

Սուրբ Հոգին անմիջապէս խօսեցաւ սրտիս՝ ըսելով. «Լիցիֆերը հրեշտակ էր, որ կը դեկավարէր երկնային երկրպագութիւնը: Ան օծուած էր, գեղեցիկ էր եւ օրհնուած էր, բայց չէր վախնար Ինձմէ. *ան չմնաց յաւիտեան*»:

Ես կը խորհէի ասոր շուրջ եւ յանկարծ լսեցի. «Հրեշտակներու մէկ երրորդը, որոնք կը շրջապատէին Իմ գահը եւ կը տեսնէին Իմ փառքը, չէին վախնար Ինձմէ: *Անոնք չմնացին յաւիտեան*»:

Ես ցնցուած էի այն բանով, ինչ Աստուած յայտնեց ինծի: Ես կրկին լսեցի. «Ադամը եւ Եւան կը քալէին Իմ փառքի ներկայութեան մէջ: Անոնք կը հաղորդակցէին հետս, բայց չէին վախնար Ինձմէ: *Անոնք չմնացին Իմ ներկայութեան մէջ յաւիտեան*»:

Տիրոջ երկիւղը յարատելելու կարողութիւն կու տայ մեզի: Ատոր շնորհիւ մենք մշտապէս հնազանդ ենք Աստուծոյ խօսքին: Աստուածաշունչը կը զգուշացնէ հաւատացեալները. «Ուրեմն, քանի տակաւին Անոր հանգիստը մտնելու խոստումը կը մնայ, եկէք *վախնանք*, որ չըլլայ, թէ ձեզմէ մէկը զրկուի աստորմէ» (Եբրայեցիս 4.1, NKJV): Հետաքրքրական է, որ հեղինակը օգտագործած է «վախ» բառը, ոչ թէ «Սէր»-ը: Աստուծոյ վախն է, որ առիթ չի տար մեզի վերադառնալու դէպի մեղքը:

Յայտնի Աւետարանիչը

Ես երբեք չեմ մոռնար իմ այցելութիւնը յայտնի Աւետարանիչի, որ բանտին մէջ կ'անցընէր իր հինգամեայ ազատագրկումի վերջին տարին: Անոր բանտարկութիւնը յայտնի դարձած էր ամբողջ աշխարհին մէջ եւ մեծ նախատինք բերած էր Աստուծոյ թագաւորութեան վրայ: Այնուամենայնիւ, բանտին մէջ գտնուելու վերջին տարուան ընթացքին ան իրական հանդիպում ունեցած էր Տիրոջ հետ: Մեր տեսակցութեան ժամանակ առաջին բաներէն մէկը, որ ան ըսաւ ինծի, հետեւեալն էր.

– Ճո՛ւն, այս բանտը՝ Աստուծոյ դատաստանը չէր ինծի համար, այլ՝ անոր ողորմութիւնը: Եթէ ես շարունակէի ապրիլ այնպէս, ինչպէս կ'ապրէի, ես պիտի անցընէի յաւիտենութիւնը դժոխքին մէջ:

Ան անմիջապէս գրաւեց իմ ուշադրութիւնը: Ես հասկցայ, որ կը խօսէի կոտորուած սիրտ ունեցող Աստուծոյ մարդու եւ Քրիստոսի ճշմարիտ ծառային հետ: Ես գիտէի, որ անոր ծառայութեան սկիզբը ան շատ

կը սիրէր Յիսուսը սիրահարութեան աստիճան: Անոր ջերմեռանդութիւնը ակնյայտ էր: Ինծի համար հարց էր, թէ ինչպէ՞ս ան այդքան հեռացաւ Տիրոջմէն՝ ըլլալով իր ծառայութեան գագաթնակէտին: Ես հարցուցի անոր.

– Ե՞րբ դուք դադրեցաք Յիսուսը սիրելէն:

Ան նայեցաւ ինծի եւ անվարան պատասխանեց:

– Երբե՛ք:

Ես տարակուսած պատասխանեցի.

– Իսկ ինչպէ՞ս կը բացատրէք ձեր փոստային խարդախութիւնները եւ շնութիւնը ձեր ծառայութեան վերջին եօթ տարիներու ընթացքին՝ այն ամէնը, ինչին համար որ դուք հիմա բանտին մէջ էք:

– Ճո՛ւն,– պատասխանեց ան,– ես կը սիրէի Յիսուսը ամբողջ այդ ընթացքին, բայց չէի վախնար Աստուծմէ: Ան իմ կեանքի գերագոյն իշխանը չէր:

Ատկէ յետոյ ան ըսաւ այնպիսի բան, ինչ որ գրաւեց իմ ուշադրութիւնը.

– Ճո՛ւն, Ամերիկայի մէջ ինծի պէս միլիոնաւոր քրիստոնէաներ կան: Անոնք կ'անուանեն Յիսուսը իրենց Փրկիչը եւ կը սիրեն Ձինք, բայց չեն վախնար Անորմէ՝ որպէս իրենց գերագոյն Տիրոջմէն:

Իմ ներսը լոյս ծագեցաւ այս հարցին մէջ: Ես հասկցայ, որ մենք կրնանք սիրել Յիսուսը, բայց միայն ատիկա մեզ անկումէն ետ չի պահեր: Մենք պէտք է նոյնպէս վախնանք Աստուծմէ: Յիշեցէ՛ք Մովսէսի խօսքերը. «Աստուած եկած է, որ փորձէ ձեզ, եւ *որ Անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որ դուք չմեղանչէք*» (Ելից 20.20, NKJV): Տիրոջ երկիւղը այն է, որ յարատեւելու կարողութիւն կու տայ մեզի, որպէսզի չհեռանանք Աստուծոյ հնազանդէլէն, ինչպէս Լուցիֆերը, հրեշտակներու մէկ երրորդը, ինչպէս Ադամը, եւ ինչպէս այն մարդիկ եկեղեցւոյ մէջ, որոնք կը նահանջեն այս վերջին օրերուն մէջ:

Կատարեցէ՛ք ձեր փրկութիւնը

Այս պատճառով, Պօղոսը կը պատուիրէ մեզի. «Գործեցէ՛ք (մշակեցէ՛ք, *իրագործեցէ՛ք* եւ *լիովին աւարտին հասցուցէ՛ք*) ձեր փրկութիւնը *երկիւղածութեամբ, ահով* եւ *դողալով* (անվստահութեամբ սեփական անծի հանդէպ, լուրջ զգուշաւորութեամբ, խղճի զգայունութեամբ, հսկելով ընդդէմ գայթակրութիւններու, երկչոտութեամբ խուսափելով որեւէ բանով, ինչ որ կրնայ վիրաւորել զԱստուած եւ վարկաբեկել Քրիստոսի անունը)» (Փիլիպպեցիս 2.12, AMP): Մենք կ'իրագործենք եւ աւարտին կը հասցնենք մեր փրկութիւնը *երկիւղած ահով եւ դողալով*: Մենք կը պահպանենք գիտակցումը այն մասին, որ ամէն մէկ միտք, խօսք եւ

գործ ի յայտ պիտի գայ դատաստանի ժամանակ: Յիշելով այս մասին՝ մենք կը մնանք խոնարհ, սթափ, զգայուն եւ տեղեակ անհնազանդութեան դրդող գայթակղութիւններու մասին: Գիտակցումը այս մասին կը դրդէ մեզ մշտապէս հեռու մնալու այն ամէնէն, ինչ որ կրնայ տհաճ ըլլալ Աստուծոյ համար:

Ուշադրութիւն դարձրուցէ՛ք, որ Պօղոսը չ'ըսեր, որ մենք բոլորովին աւարտին կը հասցնենք մեր փրկութիւնը սիրով եւ բարութեամբ: Տիրոջ երկիւղը ուժ կու տայ մեզի, որ չիյնանք Անոր շնորհքէն եւ չզլորինք անօրէնութեան մէջ: Միւս կողմէն՝ Աստուծոյ Սէրը հեռու կը պահէ մեզ օրինապաշտութենէն, ինչ որ նոյնպէս կը կործանէ մտերմութիւնը Աստուծոյ հետ: Մեր Սէրը Աստուծոյ հանդէպ նոյնպէս կը խթանէ մեր դրդապատճառները եւ մտադրութիւնները՝ պահելով մեր եռանդը, եւ օգնելով չշեղիլ ճշմարտութենէն: Մեր կեանքին մէջ պէտք է գործեն այս երկու մեծ ուժերը՝ Սէրը եւ երկիւղը, որպէսզի առողջ յարաբերութիւններ ունենանք Աստուծոյ հետ: Այս պատճառով, Պօղոսը Աստուծոյ կ'անուանէ մեր երկնային Հայրը եւ Աբբան (ինչ կը նշանակէ՝ Հայրիկ), բայց նոյնպէս կ'ըսէ, որ մեր Աստուած՝ մաշող կրակ է (տե՛ս Եբր. 12.29): Ան Սէր է, բայց Ան նոյնպէս արդար եւ սուրբ Ղատաւոր է: Եթէ չվախնանք Անորմէ, մենք չենք յարատեւեր, իսկ Յիսուս շարունակ կ'ըսէ. «Ով որ մինչեւ վերջ համբերէ, անիկա ալ կ'ապրի (կը փրկուի)» (Մատթէոս 10.22):

Մեր ազդեցութիւնը

Մենք պէտք է հիմնաւոր պատկերացում ունենանք յաւիտենական դատաստանի եւ պատիժի վարդապետութեան մասին եւս մէկ կարեւոր պատճառով, որ մեր ազդեցութիւնն է այլ մարդոց վրայ: Եթէ չուենանք Տիրոջ երկիւղը, մենք կը փոխանցենք մարդոց ոչ հաւասարակշռուած Աւետարան՝ խօսքով կամ գործով: Վերջաւորութեան մեր ազդեցութեան տակ գտնուող մարդոց կրնայ նահանջի եւ նոյնիսկ յաւիտենական կորուստի վտանգ սպառնալ:

Եթէ մենք՝ Աւետարանի ուսուցիչներս եւ հովիւներս, չիմանանք այս հիմնարար վարդապետութիւնները, մենք չափէն շատ կը շեշտադրենք օրինուած, բարգաւաճ եւ երջանիկ կեանքի սկզբունքները, որոնց մասին կը սորվեցնէ Աստուածաշունչը: Այս սկզբունքները կը գործեն այնպէս, ինչպէս նախատեսուած է. ատոնք կը բերեն առողջութիւն, նիւթական-դրամական յաջողութիւն, խաղաղութիւն, աւելի լաւ յարաբերութիւններ մարդոց հետ եւ այլն: Այնուամենայնիւ, չունենալով հիմնաւոր պատկերացում յաւիտենական դատաստաններու մասին՝ մենք կը

խուսափինք քարոզելն խաչի մասին եւ այն գինին մասին, որ պէտք է վճարել՝ Յիսուսին հետեւելու համար: Մենք աւելի շատ կը քարոզենք ուղերձներ, որոնք հաճելի են մարդոց, քան կոչ կ'ընենք ամէն գինով մեր կեանքը դնելու Աստուծոյ համար:

Եթէ մենք չշարժինք յաւիտենութեամբ, մենք պիտի ապրինք եւ պիտի հաղորդակցինք մարդոց հետ՝ առաջին կարգին փնտռելով մեր օգուտը այս կեանքին մէջ, ոչ թէ դիտարկելով կեանքը յաւիտենական տեսանկիւնէն: Մենք պիտի սորվեցնենք մարդոց ապրիլ այսօրուան օրով, ոչ թէ ապրիլ՝ ինչպէս նահապետները, որոնք կը սպասէին «հիմերով հաստատուած քաղաքին, որուն ճարտարապետն ու արարափչը Աստուած է» (Եբրայեցիս 11.10):

Այո, այս կեանքին մէջ կան վարձատրութիւններ Աստուծոյ սկզբունքներուն հնազանդ ըլլալու համար, եւ մենք շատ մանրամասնօրէն սորվեցուցած ենք ատոր մասին: Բայց չմոռնանք, որ մեր կեանքը այս երկրի վրայ ժամանակաւոր է: Մենք պէտք է յաջողութեան հասնինք այս կեանքին մէջ, բայց պէտք է ընենք ատիկա համաձայն Երկնքի չափանիշներու, ոչ թէ՝ համաձայն մեր մշակոյթի: Մեր իրական տունը հոս է:

Ուշադրութեամբ կարդացէ՛ք այն սուրբերու դրդապատճառներու մասին, որոնք ծագեցին այս աշխարհը՝ Աստուծոյ հետեւելու համար:

«Ասոնք ամէնքն ալ հաւատքով մեռան՝ խոստումները չառած, հապա հեռուէն տեսան զանոնք ու ողջունեցին եւ խոստովանեցան, թէ իրենք օտարներ եւ պանդուխտներ են երկրի վրայ: Քանզի անոնք որ այսպիսի բաներ կը խօսին, յայտնի կ'ընեն, թէ գաւառ (հայրենիք) մը կը փնտռեն: Եւ յիրաւի եթէ զանիկա յիշէին, ուրկէ որ ելան, ժամանակ չունէին հոն դառնալու: Բայց հիմա լաւագոյն գաւառի (հայրենիքի) մը կը փափաքին, այսինքն երկնաւորին. ուստի Աստուած ամօթ չի սեպեր անոնց Աստուածը կոչուիլը, վասնզի Ինք անոնց քաղաք մը պատրաստեց» (Եբրայեցիս 11.13–16):

Այն հայրենիքը, որ այս սուրբերը կ'որոնէին, Աստուծոյ քաղաքն է՝ Նոր Երուսաղէմը, որուն մենք կ'ուղղենք մեր ուշադրութիւնը մինչեւ այս գիրքի աւարտը: Այն մարդիկ, որոնք կ'ապրին այս քաղաքին մէջ, կը կոչուին *յաղթողներ*: Անոնց վարձատրութիւնը պիտի ըլլայ անսահմանօրէն աւելին, քան լաւագոյն կեանքը, որն այս աշխարհը կրնայ առաջարկել:

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ԵՐԵՔ, ԳԼՈՒԽՆԵՐ 6,7

1. Ձեր կարծիքով՝ Քրիստոսին հետեւելու առաւելութիւններէն ո՞րմէկը կրնայ աւելի գայթակղիչ ըլլալ ձեզի համար, քան մտերմութիւնը անձամբ Յիսուսին հետ: Ի՞նչ որ կրնայ օգնել ձեզ, որ մշտապէս ուղղէք ձեր սիրտը ամենակարեւոր նպատակին:
2. Այն միտքը, որ հաւատացեալը կրնայ իր կամքով հեռանալ հաւատքէն, սթափեցնող է: Այն կը հակասէ՞ ձեր համոզմունքներուն: Պատասխանեցէ՛ք այս հարցումին հետեւեալ ճշմարտութեան լոյսին տակ. որպէս հաւատացեալներ՝ մենք պէտք է ապրինք ոչ թէ վախով, այլ՝ Տիրոջ երկիւղով:
3. Մտածեցէ՛ք անողորմ ծառայի առակին մասին, որ գրուած է Մատթէոս 18.23–35-ին մէջ: Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Աստուած այդքան լուրջ կը վերաբերի ներումին:
4. Ձեր բառերով նկարագրեցէ՛ք, թէ ինչպէս սխալական շեշտադրումը Աստուծոյ ողորմութեան վրայ, որ հաւասարակշռուած չէ սուրբ երկիւղով, կրնայ հաւատացեալը խաբէութեան տանիլ:
5. Մեր պատկերացումը յաւիտենութեան մասին կ'ազդէ ոչ միայն մեր վրայ, այլեւ՝ մեզ շրջապատող մարդոց: Ձեր կարծիքով՝ ինչպէ՞ս կարելի է քարոզել Աստուծոյ հետեւելու երկրային առաւելութիւններուն մասին (օրինակ՝ առողջութեան, յաջողութեան կամ ներքին բաւակաւորութեան)՝ առանց շեղելու ամենակարեւոր նպատակէն:



ԲԱԺԻՆ ՉՈՐԱ





ԱՖԱԿԷԼԻ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԻՒՆԸ. ԴՏԱՍՏԱՆԻ ՕՐԸ Բ

«...Ես եմ Ան, Որ կը քննէ մտքերը (մտածումները, զգացումները եւ մտադրութիւնները) եւ [ներսի] սրտերը, եւ Ես պիտի տամ ձեզմէ ամէն մէկուն [վարձատրութիւնը ձեր կատարածին համար], ինչին որ ձեր գործը արժանի է»:

— Յայտնութիւն 2.23, AMP

Մերադառնանք Աֆապէլի թագաւորութեան այլաբանութեան եւ վարդենք, թէ ինչ կատարուեցաւ Եսասէրին եւ Բարեգործին հետ: Անոնց միջոցով մենք կարելոր բացայայտումներ կ'ընենք հաւատացեալներու դատաստանին մասին, որոնցմէ մէկը այն է, որ բոլոր հաւատացեալները հաւասար վարձատրութիւն չեն ստանար:

Հաւատացեալներու դատաստանը

Այս դատաստանը տեղի ունեցաւ առաւօտեան՝ կարճ ժամանակ յետոյ այն բանէն ետք, երբ Էնտելցիները Մեծ սրահ եկան: Մօտաւորապէս հինգ հարիւր Էնտելցիներ կը սպասէին Կեանքի սրահին մէջ՝ յուզմունքով ակնկալելով իրենց առաջին հանդիպումը Ճէյլըն թագաւորին հետ: Բարեգործը եւ Եսասէրը գտան Ե՛ւ հին, Ե՛ւ նոր ընկերներ եւ կը զրուցէին անոնց հետ, երբ յանկարծ Թագաւորական պահապանները սրահ մտան: Բոլոր խօսակցութիւնները դադրեցան, երբ Գլխաւոր պահապանը դիմեց անոնց.

Շուտով դուք պիտի կենաք ձեր Թագաւորին առջեւ: Ան միշտ սիրած է ձեզ եւ փափաքած է այս օրուան, երբ պիտի միանաք Իրեն: Թէեւ դուք երբեք չէք հանդիպած Անոր, սակայն Ան տեսած է ձեզ: Ան տեսած է ձեր սիրտը եւ ձեր պտուղը: Ան գիտէ ձեր սիրտը, ձեր դրդապատճառները, ձեր մտքերը եւ ձեր զգացումները, ինչպէս նաեւ՝ ձեր գործերը: Ոչինչ ծածուկ եղած է: Գիտցէ՛ք, որ Անոր դատաստանը արդար է: Ոչ ոք կ'անտեսուի, եւ ոչ ոքին կեանքը սխալ կը ներկայացուի:





Գլխաւոր պահապանը շարունակեց՝ հրահանգելով անոնց, թէ ինչպէս պէտք է ուղեկցուէին դէպի Մեծ սրահ, եւ թէ ինչպիսին էր անհրաժեշտ ընթացակարգը Մեծ սրահին մէջ: Հրահանգաւորունը աւարտելէն յետոյ ան յայտարարեց.

Առաջինը ճէլըն թագաւորին քով պիտի երթայ Եսասէրը: Առաջ եկուր, որ ուղեկցինք քեզի դէպի Մեծ սրահ:

Եսասէրը եւ անոր դատաստանը

Եսասէրը ենթադրեց, որ առաջինը կանչուած է, քանի որ ինքը քաղաքապետ եղած էնտելի մէջ: Ան վստահ էր, որ առատ վարձատրութիւն պիտի ստանայ թագաւորին արտաքին տիրոյթներուն մէջ ղեկավար ըլլալու համար: Ան կը յիշէր Հին գրուածքներու ուսմունքներէն, որ անոնք, որոնք հաւատարիմ կը համարուէին էնտելի մէջ, վարձատրութիւններ եւ իշխանական դիրք պիտի ստանային Աֆապելի մէջ: Էնտելը կը բարգաւաճէր անոր երկամեայ պաշտօնավարման ընթացքին: Ան վստահութիւն կը զգար թագաւորին հետ հանդիպելու զացած ժամանակ:

Մեծ սրահի դռները բացուեցան, եւ Եսասէրը դէպի թագաւորի ներկայութեան մէջ առաջնորդեցին: Անոր վրայ խիստ տպաւորութիւն գործեց այդ հոյակերտ սրահի մեծութիւնը: Ան նկատեց, որ այն գրեթէ ամբողջովին լեցուն էր մարդոցմով: Բոլոր ներկաները կեցած էին: Եսասէրը զարմացաւ՝ դատարկ տեղեր տեսնելով, բայց արագօրէն փարատեց այդ միտքը՝ որոշելով, որ քաղաքացիները զբաղեցուցած են տեղերը՝ ըստ իրենց ցանկութեան:

Սրահի վերջաւորութեան՝ ամենահեռուն, ճէլընի գահն էր: Այն աւելի վեհ էր, քան Եսասէրը կրնար երեւակայել: Ան նոյնպէս նկատեց փոքրիկ գահեր, որոնք, ինչպէս ան ճշդօրէն ենթադրեց, կը պատկանէին ճէլընի կառավարիչներուն: Պահ մը անոր սիրտը կարծես կեցաւ. հոն տակաւին քանի մը չզբաղած տեղեր կային: Ան համոզուած էր, որ այդ դատարկ գահերէն մէկը իրեն համար էր:

Հին ընկերը

Մինչ Եսասէրը առաջ կ'երթար, ան ապշած էր նախկին էնտելիցիներու տեսքէն, որոնք այժմ Աֆապելի քաղաքացիներ էին: Ընդամենը քանի մը քայլ առնելով դէպի գահը՝ սրահի ետեւի մասը ան ճանչցաւ իր հին ընկերներէն մէկը: Անոր անունը Հաղորդակցող էր: Ան ճաշարան ունէր, ուր Եսասէրը յաճախ կը գտնուէր: Ան նայեցաւ. Գլխաւոր պահապանին՝ կարծես հարցնելով, թէ արդեօ՞ք կարելի է խօսիլ: Պահապանը գլուխով հաւանութեան նշան տուաւ:



Եսասէրը մօտեցաւ, եւ երկուքը գրկախառնուեցան:

– Ինչպէ՞ս էիր ամբողջ այս ընթացքին, Հաղորդակցո՛ղ,– հարցուց Եսասէրը:

– Շատ լա՛ւ,– պատասխանեց հին ընկերը,– բայց իմ անունը այլեւ Հաղորդակցող չէ, այլ՝ Գոհացող: Տէր Ճէյընը նոր անուն տուաւ ինձի. ան նոր անուններ կու տայ իր բոլոր ծառաներուն, երբ անոնք կենան իր գահին առջեւ: ԱՖապէլը աւելի հրաշալի վայր է, քան մենք կրնայինք երազել,– շարունակեց Գոհացողը:– Այս Մեծ սրահը՝ միայն մուտքն է դէպի այս փառահեղ, գեղեցիկ, պերճաշուք եւ հոյակապ քաղաքը: Մեր թագաւորը աւելի հրաշալի, սիրող եւ վեհ է, քան ոեւէ մարդ, որուն դուն երբեք հանդիպած կամ ճանչցած ես: Ես այնքա՛ն շնորհակալ եմ, որ կը ճանչնամ եւ կը ծառայեմ Անոր: Մեծ պատիւ է անոր թագաւորութեան մէջ ըլլալը: Եթէ ես Էնտելի մէջ գիտնայի այն, ինչ որ հիմա գիտեմ, ուրիշ ձեւով կ'ապրէի: Ես աւելի շատ կը ձգտէի թագաւորը հաճեցնելուն: Ես աւելի լաւ քաղաքացի կ'ըլլայի Էնտելի մէջ իմ անցուցած կարճ ժամանակուան ընթացքին: Եթէ այդպէս ըլլար, հիմա ես աւելի մօտ կ'ըլլայի անոր:

– Ի՞նչ նկատի ունիս,– ընդդիմացաւ Եսասէրը:– Դուն Էնտելի ամենալաւ քաղաքացիներէն էիր: Քեզի կը պատկանէր լաւագոյն ճաշարաններէն մէկը, եւ դուն անթիւ հասարակական միջոցառումներ կը հովանաւորէիր: Դուն բազմիցս դրամական միջոցներ եւ անվճար ճաշեր կը տրամադրէիր դրամահաւաքներ կազմակերպող ընկերութիւններուն: Յաճախ դուն նոյնիսկ կը նուիրաբէրէիր քու օրական եկամուտը:

Գոհացողը շարժեց գլուխը.

– Ես կ'ընէի այդ ամէնը, որպէսզի համբաւ ձեռք բերէի եւ ընդունուած ըլլայի: Ես նոյնպէս գիտէի, որ այդ կերպով աւելի շատ յաճախորդներ ձեռք կը բերեմ: Իմ դրդապատճառը ոչ թէ մարդոց օրհնելն էր, այլ՝ իմ յաջողութիւնը ապահովելը: Ես պէտք է լսէի Ճէյընի խօսքերը: Ան ըսած էր մեզի. «Երբ հացկերոյթ կամ ընթրիք կը կազմակերպես, մի՛ կանչեր քու բարեկամները, եւ ոչ՝ քու եղբայրները, եւ ոչ՝ քու ազգականները, եւ ոչ՝ քու հարուստ դրացիները. թերեւս անոնք ալ ատոր փոխարէն կանչեն քեզ, եւ հատուցում ըլլայ քեզի: Այլ՝ երբ որ հացկերոյթ կ'ընես, կանչէ՛ աղքատները, խեղերը, կաղերը, կոյրերը: Եւ երանելի կ'ըլլաս, որովհետեւ բան մը չունին, որ փոխարէնը վճարեն քեզի, որովհետեւ արդարներու յարութեան ժամանակ կ'ըլլայ քեզի հատուցումը»¹: Ես նուիրատուութիւններ կը կատարէի իմ շահին, ոչ թէ մեր քաղաքի օգուտին համար: Ես կ'ուզէի Էնտելի ամենաազդեցիկ մարդոց կարգին ըլլալ:

Եսասէրը շարունակեց.



– Բայց դուն յաճախ նուիրատուութիւններ կը կատարէիր Էնտելի դպրոցին համար: Արդեօ՞ք դուն բարեհաճութիւն չստացար Ճէյլընին առջեւ այդ պատճառով:

Գոհացողը պատասխանեց.

– Այո, ես նուիրատուութիւններ կը կատարէի Էնտելի դպրոցին համար, բայց ատոնք իմ եկամուտներուն շատ փոքրիկ մասը կը կազմէին: Ես կը պահէի ճաշարանի շահոյթի մեծ մասը, որովհետեւ կը վախճայի սնանկանալէն: Ես կ'ընէի ատիկա, քանի որ կը ցանկայի լաւ կեանք ունենալ: Իմ իրական շարժառիթը՝ իմ անձս պաշտպանելն էր: Այն քիչը, որ ես կու տայի, իմ խիղճը հանգստացնելու համար էր: Ես հարկադրուած կը զգայի ես ինքս, որովհետեւ մեր ուսուցիչները յաճախ կ'ըսէին, թէ որքան կարելոր էր թագաւորութեան համար նուիրատուութիւններ կատարելը եւ կարիքաւորներուն օգնելը: Ես կու տայի մեղքի զգացման եւ հարկադրանքի պատճառով, ոչ թէ՛ մեկնելով գթասրտութենէն եւ սէրէն:

Գոհացողը շարունակեց.

– Ես սոռցայ Ճէյլընի օրինակը այն այրի կնոջ մասին, որ կը սիրէր Աֆապէլի թագաւորութիւնը: Յիշէ՛, որ ան ըսաւ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, թէ այս աղքատ որբեւայրին զանձանակը նետողներէն ամէնէն աւելին նետեց: Որովհետեւ ամէնքը իրենց աւելորդէն նետեցին, բայց ասիկա իր չքաւորութենէն այն, ինչ որ ունէր, նետեց՝ իր կեանքի ամբողջ ապրուստը»²:

Եսասէրը մտածեց այն հասարակական միջոցառումներուն եւ ընթրիքներուն մասին, որոնք ան իր տունին մէջ կ'անցընէր: Այդտեղ չկար ոչ մէկ աղքատ կամ նոյնիսկ իրմէ աւելի ցած կեանքի մակարդակ ունեցող մարդ: Յետոյ ան յիշեց այն հինգ հազար աւանդը, որ տուած էր, որպէսզի մեղմէր այն մարդիկ, որոնք հիասթափած էին, երբ ինքը որոշած էր տրամադրել վիճելի հողատարածքը հանրախանութներու ցանցին, ոչ թէ դպրոցին: Այդ պահուն ան կը մտածէր, որ մեծ գումար տուած էր, բայց այժմ ան կ'ամչնար իր տուած գումարի փոքր չափի պատճառով: Ինչպէ՞ս Ճէյլընը պիտի գնահատէ ատիկա:

Անոր մտորումները ընդհատուեցան Գոհացողին վերջին դիտողութիւններով.

– Եթե ես իրականութեան մէջ ջերմեռանդ ըլլայի Ճէյլընին եւ անոր ժողովուրդի համար, – ըսաւ ան, – ես ժամանակ կը տրամադրէի, որպէսզի ծառայէի դպրոցին: Երբ ամէն մէկը կը կատարէ իր գործը, բեռը կը թէթեւնայ, այլապէս քանի մը հոգի կը կրէ ամբողջ բեռը: Եթէ բոլորս կատարէինք Ճէյլընի ծրագիրը, ոչ ոք գերբեռնուած կ'ըլլար: Այն մէկ քանին, որ վերցուցած էին ծանր բեռները, մեծ վարձատրութիւն ստացան



ատոր համար: Իմաստը անիկա է, որ նոյնիսկ այն քիչը, որ ես կու տայի, իմ խիղճը թեթեւցնելու համար էր, քանի որ ես գիտէի, որ նուիրուած չէի Ճէյլընի թագաւորութեան:

Երբ իմ կեանքը վերանայուեցաւ, ակնյայտ էր, որ ես կ'ապրէի աւելի շատ իմ յարմարաւէտութեան, ապահովութեան եւ համբաւի համար, քան՝ Անոր փառքի: Այժմ ես այս քաղաքի փոքրագոյն քաղաքացիներէն եմ: Այնուամենայնիւ, չնայած որ այսպէս յաջողեցաւ, ես տակաւին ցնցուած եմ Ճէյլընի բարութեամբ եւ սիրով, որ ան կը ցուցաբերէ իմ հանդէպ: Ես իրականութեան մէջ արժանի չէի այն ամէնուն, ինչ որ ստացայ անորմէ, բայց ինչպէս դուն շուտով պիտի յայտնաբերես, անոր սէրը եւ առատածեռնութիւնը ամէն մտքէն վեր եմ: Մինչեւ իմ կեանքի աւարտը ես պարտական եմ անոր շնայլութեան եւ բարութեան համար:

Ցնցուած՝ Եսասէրը գոչեց.

– Փոքրագոյն քաղաքացի՛: Կ'ուզես ըսել, որ հոս դասակարգե՞ր կան: Գոհացողը ժպտաց եւ ըսաւ.

– Այո՛, անշուշտ: Էնտելի մէջ մեզի կը սորվեցնէին այդ մասին, թէ եւ մեզմէ շատերը լրջօրէն չէին վերաբերիր ատոր: Բայց մենք խորապէս գիտէինք ատիկա: Իրականութեան մէջ, դուն անծնապէս կը մտածէիր այդ ճշմարտութեան մասին, երբ մտար այս սրահը: Ես լսեցի քու մտքերը. դուն կ'ակնկալես, որ պիտի ստանաս այստեղի գահերէն մէկը: Դուն գիտէիր, որ ատիկա հնարաւոր է՝ համաձայն հին գրուածքներուն, որոնք մենք կ'ուսումնասիրէինք, սակայն կ'երեւի թէ մեծ ուշադրութիւն չէիր դարձներ քու համոզմունքներուն՝ ապագայ դիրքիդ մասին, քանի տակաւին Էնտելի մէջ էիր:

Այն մարդիկ, որոնք հաւատարիմ էին Ճէյլընին այն կարճ ժամանակուան ընթացքին, որ մենք անցուցինք Էնտելի մէջ, առաջնորդներ են եւ կը զբաղեցնեն ամենացանկալի պաշտօններն այս հասարակութեան մէջ: Անոնք կ'ապրին քաղաքի ամենագեղեցիկ մասը եւ թագաւորին հետ յաճախակի հաղորդակցելու արտօնութիւն ունին: Որոնք ապրած են աւելի շատ իրենց համար, երբ Էնտելի մէջ էին, պաշտօններ ստացած են այս քաղաքի արտաքին մասերը: Ատիկա նոյնպէս կարելի է տեսնել այս սրահին մէջ: Մենք՝ ետելի շարքերուն մէջ նստածներս, կ'ապրինք հարթավայրերու մէջ եւ ծանր աշխատանքներ կը կատարենք: Մենք փոքրագոյնն ենք այս թագաւորութեան մէջ: Անոնք, որոնք սրահի մէջտեղի մասը կը զբաղեցնեն, կ'ապրին լեռները եւ կը զբաղեցնէին աւելի ստեղծագործական պաշտօններ: Իսկ սրահի առջեւի եւ գահերու վրայ նստողները կ'ապրին Թագաւորական կենդրոնը, ուր թագաւորին նստավայրն է: Անոնք արտօնութիւն ունին ապրելու եւ գործելու անոր հետ: Անոնք մեծագոյնն են այս թագաւորութեան մէջ:



Գոհացողը ամփոփեց.

– Իմ ընկեր Եսասէ՛ր, գիտցի՛ր, որ Ճէյլընը արդար եւ սիրող առաջնորդ է: Ինչ ալ ան տայ քեզի, վարձատրութիւն պիտի ըլլայ: Մեզմէ ոչ ոք կ'ապրի նոյնիսկ այս քաղաքի ամենաաննշան վայրին մէջ, եթէ ան չըլլար:

Ըսելով ասիկա՝ Գոհացողը վերադարձաւ իր տեղը: Գլխաւոր պահապանը ձեռքի շարժումով պատուիրեց Եսասէրին շարունակել իր ճանապարհը դէպի գահը:

Յայտնի ուսուցիչը

Եսասէրը եւս քանի մը քայլ առաւ եւ նկատեց ուրիշ մարդ մը, որուն կը ճանչնար եւ կը համակրէր: Անոր անունը Խրախուսող էր: Ան ուսուցիչ էր Էնտելի դպրոցին մէջ, եւ Եսասէրը ակնառու անձնաւորութիւն կը համարէր զինք: Անոր ուսուցումները բովանդակալից եւ պերճախօս էին եւ միշտ կ'ոգեշնչէին Եսասէրը: Այս անգուգական ուսուցիչը այնպէս կը սորվեցնէր, որ աշակերտները բարձր եւ արժէքաւոր կը համարէին զանոնք: Միւս ուսուցիչները նոյնպէս կ'ոգեշնչէին, բայց երբեմն քիչ մը խիստ կը խօսէին, եւ անոնց խօսքը ցաւոտ յանդիմանութիւն կը բերէր: Խրախուսողը այդպիսին չէր, երբ ան դասարանէն դուրս կ'ելլէր, բոլորը հրաշալի զգացողութիւն կ'ունենային: Իրականութեան մէջ, մինչեւ այդ պահը ան Եսասէրին սիրելի ուսուցիչն էր:

Եսասէրը կրկին ուղղեց հայեացքը Գլխաւոր պահապանը՝ իր նախկին ուսուցիչին հետ խօսելու թոյլտուութիւն խնդրելով: Պահապանը կրկին գլուխով հաւանութեան նշան տուաւ: Եսասէրը մօտեցաւ Խրախուսողին, եւ երկուքը ջերմօրէն ողջունեցին իրար:


Չկարողանալով զսպել ինքզինքը՝ Եսասէրը հարցուց.

– Ինչո՞ւ դուք հոս էք՝ ետեւի շարքերը:

– Ասիկա իմ դիրքը եւ տեղն է: Ես Աֆապէլի փոքրագոյն քաղաքացիներէն եմ: Կ'ապրիմ հարթավայրերու եւ ջրմուղագործ կ'աշխատիմ:

– Ի՞նչ,– գոչեց Եսասէրը:– Դուք Ճէյլընի լաւագոյն ուսուցիչներէն էիք: Ինչպէ՞ս կրնաք փոքրագոյն քաղաքացիներէն մէկը ըլլալ: Դուք պէտք է նստած ըլլայիք առջեւի գահերէն մէկուն վրայ:

– Կան քանի մը պատճառներ, թէ ինչու ես չեմ գտնուիր աւելի բարձր դիրքի վրայ այս մեծ ժողովքին մէջ, եւ թէ ինչու ես չեմ իշխեր Ճէյլընին հետ,– ըսաւ Խրախուսողը:– Ժամանակը խնայելու համար՝ ես պիտի պատմեմ միայն իմ յիմարութեան արմատի մասին: Կը յիշե՞ս՝ որոնք նուիրած են իրենց կեանքը Ճէյլընին, կը համեմատուին շինարարնե-



րու հետ: Մեզի կը սորվեցնէին ասիկա դպրոցի ամբողջ ընթացքին: Մեր գլխաւոր պարտականութիւններէն մէկն էնտելի մէջ՝ այլ մարդոց կեանքերը կառուցելն էր: Մենք կ'ընէինք ասիկա մեր ուղերձներուն միջոցով, որոնք կը փոխանցէինք մեր խօսքով, վարքով կամ գործերով:

Ուսուցիչ ըլլալով՝ ես ստացած էի ե՛ւ մեծ արտօնութիւն, ե՛ւ մեծ պատասխանատուութիւն: Ես կը սորվեցնէի աշակերտներուն Ճէյլընի սկզբունքները եւ ճանապարհները: Այնուամենայնիւ, որպէս ուսուցիչ՝ ես ծախողեցայ այնքա՛ն շատ առումներով:

Իմ ուսմունքները անհաւասարակշռուած էին: Ես կը շեշտադրէի միայն Ճէյլընին ծառայելու դրական կողմերը: Ես կը խրախուսէի իմ աշակերտներէն շատերը՝ ձգտիլ յաջողութեան՝ առանց մտածելու հետեւանքներու մասին: Ես չէի սորվեցներ անոնց, որ կեանքի իրական նպատակը՝ Ճէյլընին հաճելի ըլլալն է: Ես կը սորվեցնէի, թէ ինչպէս օգտագործել Անոր սկզբունքները՝ կեանքի յաջողութեան հասնելու համար: Հետեւաբար, երբեք չէի զգուշացներ անոնց մեր հասարակութեան փոսերու եւ ծուղակներու մասին:

Հին գրուածքները պարզ կը նշեն, որ ես պէտք է քարոզէի Ճէյլընի խորհուրդը ամբողջութեամբ: Ասիկա կ'ընդգրկէ հետեւեալը. «Ամէն մարդու խրատելը եւ ամէն մարդու սորվեցնելը ամէն իմաստութեամբ, որ ամէն մարդու կատարեալ կեցնենք Ճէյլընի առջեւ»³: Ես կը սորվեցնէի, բայց չէի զգուշացներ: Քանի որ ես բացառապէս դրական ուսուցիչ էի եւ երբեք ողջամիտ զգուշացումներ չէի ըներ, ես կառուցեցի անթիւ կեանքեր, որոնք քիչ փառք բերին Ճէյլընին:– Այդ պահուն ան իջեցուց գուլխը:– Անոնցմէ շատերը հիմա նզովուած են:

Տեսնելով Եսասէրին ցնցուիլը՝ ուսուցիչը շեշտադրեց իր ըսածը.

– Այո՛, անոնք նզովքի մէջ իյնկան: Շատերը այժմ բնակեցան Լոն Լքուած երկիրը՝ մասամբ իմ՝ ոչ հաւասարակշռուած ուսմունքներու պատճառով: Ես չէի տար իմ աշակերտներուն այն, ինչին կարիքը, որ անոնք ունէին. ես կու տայի այն, ինչ որ անոնք կ'ուզէին: Ես չէի ուզեր կորսնցնել անոնց հաւանութիւնը եւ իմ համբաւը: Այդ պատճառով, ես սխալ կերպով կառուցեցի: Ես արմատախիլ չէի ըներ անոնց կեանքի թոյլ եւ արատաւոր բնագաւառները, այլ կը փոխանցէի անոնց գաղափարներ, որոնք միայն կը բորբոքէին անոնց եսասիրական ցանկութիւնները:

Յիշէ՛ այն զգուշացումը հին գրուածքներէն, որ ուղղուած էր ուսուցիչներուն. «Քանի որ անոնք կը մոլորեցնեն Իմ ժողովուրդը՝ ըսելով. «Խաղաղութիւն», երբ խաղաղութիւն չկայ, եւ քանի որ, երբ անկայուն պատ կը կառուցուի, անոնք այն կը ծածկեն ծեփով, ուրեմն ըսէ՛ անոնց,



որոնք այն ծեփով կը ծածկեն, կ'իյնայ»⁴: Իմ աշակերտներէն շատերը կանգնեցուցած եւ պատսպարած էին իրենց կեանքերը ժամանակաւոր բաներով: Սրտիս խորքին գիտէի, որ ատոնք փխրուն պատեր էին, բայց չէի զգուշացներ զանոնք: Ես կ'ըսէի, որ ամէն ինչ լաւ էր, երբ այդպէս չէր: Ես կը խրախուսէի անոնց ընթացքը՝ հաստատելով զանոնք խաբէութեան մէջ:

Ես կը տրտմիմ իմ նախկին աշակերտներու համար, որոնք հիմա Լոնոնի մէջ են: Իմ աշակերտներէն ոմանք յայտնուեցան Աֆապէլի մէջ, բայց անոնցմէ շատերը, որոնք կ'ընդունէին միայն դրական ուսմունքները, – խրախուսողը ետ նայեցաւ եւ իջեցուց իր ձայնը՝ շշնջոցի հասցնելով, – այս ետելի շարքերուն մէջ են: Անոնք վատնեցին իրենց կեանքերը, իսկ անոնց գործերը կրակով այրուեցան այս Դատաստանի գահին առջեւ:


– Այրուեցան Դատաստանի գահի առջեւ՞, – հարցուց Եսասէրը:

– Այո՛, – պատասխանեց ուսուցիչը: – Արդեօ՞ք չես յիշեր հին գրուածքները: «Ամէն մէկը, որ կը կառուցէ այդ հիմքի վրայ, կրնայ օգտագործել ոսկի, արծաթ, թանկարժէք քարեր, փայտ, յարդ կամ ծղօտ: Բայց պիտի գայ ստուգման ժամանակը՝ դատաստանի օրը, երբ պիտի պարզուի, թէ ինչ գործ կատարած է իւրաքանչիւր կառուցող: Ամէն մէկուն գործը պիտի անցնի կրակով՝ պարզելու համար՝ արդեօ՞ք այն կը պահպանէ իր արժէքը: Եթէ գործը դիմանայ կրակին, կառուցողը վարձատրութիւն պիտի ստանայ: Բայց եթէ գործը այրի, կառուցողը մեծ կորուստ պիտի կրէ: Այդ կառուցողը պիտի փրկուի՝ բայց ինչպէս մէկ մարդ, որ հազիւ ազատած է մեծ կրակէն»⁵:

Յայտնի ուսուցիչը շարունակեց.

– Այն հիմքը, որուն մասին կը խօսէր հին առաքեալը, Ճէյլընի իշխանութիւնն է, եւ մենք գիտենք, որ այն միակ ճանապարհն է՝ այս թագաւորութիւն մուտք գործելու համար: Այնուամենայնիւ, երբ մենք ճշմարտապէս կը պատկանինք Ճէյլընին, պէտք է կառուցենք այս հիմքի վրայ:

Ըստ հին գրուածքներուն՝ իմ կեանքը չէր համապատասխաներ Ճէյլընի արդար չափանիշներուն. ես ձախողած էի սորվեցնելու բնագաւառին մէջ, ուր որ ազդեցիկ էի: Ես չէի օգտագործեր իմ իշխանութիւնը, որպէսզի դրդէի աշակերտներս՝ կատարելու Աֆապէլի գործը, եւ ես անխուսափելիօրէն կորսնցուցի իմ վարձատրութիւնը: Կը յիշե՞ս, թէ ինչ ըսաւ հին ժամանակներու մեծ ուսուցիչ Պօղոսը այն մարդոց մասին, որոնց կեանքերուն մէջ ան կանչուած էր. «Ի վերջոյ, ի՞նչն յոյս կու տայ եւ ուրախութիւն կը պատճառէ ինձի, եւ ի՞նչն է մեր վարձատրութիւնը եւ թագը, որմով կը հպարտանանք: Այդ դու՛ք էք: Այո՛, դուք մեծ ուրախութիւն կը բերէք մեզի, երբ մենք միասին կենանք Տիրոջ առջեւ»⁶:



Ես լաւ գիտէի Ճէյլընի ճշմարտութիւնները, երբ նոր սկսած էի սորվեցնել, բայց ես առիթ տուի, որ անապահովութեան զգացումը, հաւանութիւն ստանալու ցանկութիւնը եւ հպարտութիւնը շեղէին զիս: Շատ ժամանակ չանցած ես արդէն շեղած էի իմ գիտցածէն: Ի վերջոյ, ես ինքս սկսայ ապրիլ այնպէս, ինչպէս կը քարոզէի: Շեղելով՝ ես անտեսեցի Ճէյլընի զգուշացումները նաեւ իմ անձնական կեանքին մէջ: Ես խաբուած էի: Հանրայայտ ըլլալը եւ բարեհաճութիւն վայելելը բոլորովին այլ ծեսով կ'ընկալուին հոս, քան Էնտելի մէջ: Գրեթէ այն ամէնը, ինչ որ ես կը կարելորէի հոս, աննշան կը համարուի հոս:

Եսասէրը հարցուց սթափ ծայնով.

– Խրախուսող, ընկերս ըսաւ ինձի, որ Ճէյլընը կը փոխէ մեր անունները: Ինչպէ՞ս է քու նոր անունը:

Ուսուցիչը ժպտաց.

– Իմ անունը Խոնարհած է:

Այդ ըսելով՝ ան խոնարհեցուց իր գլուխը եւ վերադարձաւ իր տեղը: Եսասէրը նայեցաւ Գլխաւոր պահապանին, որ գլուխով նշան ըրաւ՝ հաստատելով, որ այն ամէնը, ինչ որ ան լսեց Խոնարհածէն, ճիշդ էր:

Եսասէրը շարունակեց երթալ դէպի գահը: Այժմ ան այնքան վստահ չէր, որքան այն ժամանակ, երբ նոր կանչուած էր այս սրահը: Ան մտածեց իր կեանքի մասին: Ինչպիսի՞ն էին իր դրդապատճառները: Արդեօք ինքը Ճէյլընի փառքին համա՞ր կ'իշխէր, թէ՞ իր եսասիրական ձգտումներու: Ինչպէ՞ս ան ապրած էր: Արդեօ՞ք անոր կեանքը կը համապատասխանէր Ճէյլընի խօսքերուն, թէ՞ ինքը նոյնպէս խաբուած էր: Ան կը կառուցէ՞ր մարդոց կեանքերը, թէ՞ միայն կ'օգտագործէր զանոնք՝ իր կեանքը կառուցելու համար:

Կառավարիչը

Եսասէրը կ'անցնէր Մեծ սրահի մէջտեղի բաժինով: Ան նկատեց, որ այդտեղի քաղաքացիները աւելի թագաւորական տեսք ունէին: Իւրաքանչիւրը կը նայէր անոր այնպիսի՝ սիրով եւ հաւանութեամբ: Անոնց հայեացքները մխիթարեցին Եսասէրը: Ան անգնահատելի օգնութիւն ստացաւ, քանի որ սկսած էր բաւականին անվստահ զգալ ինքզինքը եւ արդէն չէր գիտեր, թէ ինչի սպասէր:

Եսասէրին կը թուար, թէ դարեր անցան, մինչեւ որ ան գահին քով հասաւ: Ամէն քայլ առնելու ժամանակ ան այնքան բաներ կը յիշէր իր կեանքէն Էնտելի մէջ: Ան տակաւին յոյս ունէր, որ կրնար Ճէյլընի կառավարիչներէն մէկը դառնալ՝ յաջողակ քաղաքապետ ըլլալու շնորհիւ:



Եսասէրը հասաւ հոն, ուր Ճէյլընի կառավարիչներն էին: Ան նկատեց անոնց թագաւորական հանդերձները եւ անոնց գլուխներուն վրայ դրուած թագերը: Ամէն մէկուն ձեռքը գաւազան կար: Անոնք իսկապէս որ ամէնէն ազնուագոյն կեցուածքը ունէին այս մեծ քաղաքի բոլոր քաղաքացիներէն: Ան զարմացած էր՝ տեսնելով, որ մարդը կրնայ այդքան փառաւոր տեսք ունենալ:

Կառավարիչներու կարգին Եսասէրը նկատեց Քաղաքային խորհուրդի անդամներէն մէկուն քարտուղարուհին: «Ինչո՞ւ ան նստած է այս գահերէն մէկուն վրայ»,– մտածեց Եսասէրը: Այդ կինը ոչինչով կ'առանձնանար դպրոցին մէջ: Ան աւարտած էր Եսասէրէն մէկ տարի առաջ: Եսասէրը անծամբ չէր ճանչնար զինք, քանի որ ան քիչ մը ինքնամփոփ անձնաւորութիւն էր:

Այդ կինը առաջ եկաւ, եւ Գլխաւոր պահապանը կեցաւ ու խոնարհեցաւ անոր առջեւ: Ան ողջունեց Եսասէրը գրկախառնութեամբ եւ ջերմ ժպիտով:

Եսասէր, բարի գալուստ Աֆապէլ: Ես Համբերատարն եմ: Ճէյլընը խնդրեց ինձմէ խօսիլ հետոյ, մինչեւ որ կենաս Անոր առջեւ: Ես անոր կառավարիչներէն մէկն եմ Աֆապէլի մէջ:

Եսասէրը պատասխանեց՝ առանց մտածելու:

– Կառավարի՞չ: Ինչպէ՞ս դուն կրնաս կառավարիչ ըլլալ: Դուն ոչինչ կ'ընէիր Էնտելի մէջ:

Ան կարմրեցաւ՝ հասկնալով, թէ որքան անտեղի եւ կոպիտ էր անոր ըսածը:

Համբերատարը գլուխով նշան ըրաւ՝ ցոյց տալով, որ հասկցաւ անոր:

– Մի՛ շփոթիր քու ըսածէն: Խաբէութիւնը չի կրնար պահուիլ այս սրահին մէջ, եւ ո՛չ ալ՝ այս մեծ քաղաքին մէջ: Դուն պարզապէս անկեղծ էիր: Էնտելի մէջ դուն կը մտահոգուէիր մարդոց կարծիքներով եւ քու համբաւով: Ատիկա կը վարժեցնէ շատերը խորամանկօրէն խօսիլ, եւ անոնք նոյնիսկ չեն գիտակցիր իրենց անմտութիւնը: Հոս բառերը շատ կարեւոր են, բայց դրդապատճառները եւ մտադրութիւններն ա՛լ աւելի ծանրակշիռ են, քանի որ ատոնք միշտ ակնյայտ են: Շատ շուտով դուն կը գիտնաս այդ մասին, երբ դատուիս ամէն բառի համար, որ ըսած ես Էնտելի մէջ:

– Ամէն բառի՞,– գոչեց Եսասէրը:– Կ'ուզես ըսել՝ ամէն մէկ խօսակցութեան ամէն բառի՞:

– Այո՛,– պատասխանեց Համբերատարը,– ամէն բառի: Յիշէ՛ Տէր Ճէյլընի խօսքը ի՞նչ գրուածքներուն մէջ. «Դուք կրնաք համոզուած ըլլալ, որ Դատաստանի օրը ամէն մէկը պէտք է հաշիւ տայ ամէն դա-



տարկ բառի համար, որ ան երբեք ըսած է: Չեր բառերը պիտի օգտագործուին ձեզ դատելու համար՝ յայտարարելու ձեզ կամ անմեղ, կամ մեղաւոր»⁷: Դատարկ բառերը՝ ունայն, զուր տեղը կամ թեթեւամտօրէն ըսուած բառերն են, որոնք հակառակ են Ճէյլընի բնութեան:

Եսասէրը վիճարկեց ատիկա.

– Ես միշտ կը կարծէի, որ մենք պէտք է հաշիւ տանք մեծ սուտերու կամ մեծ ճշմարտութիւններու համար, որոնք խօսած ենք, ինչպէս նաեւ՝ մեծ գործերու կամ խոշոր ձեռքբերումներու համար:– Ան պահ մը մտածեց, իսկ յետոյ աւարտեց իր խօսքը.– Ի՞նչ կը սպասուի ինծի:

Համբերատարը պատասխանեց.

– Հին գրուածքները պարզ կը յայտնեն. «Քու վարձատրութիւնը կախուած է քու խօսքերէն եւ քու գործերէն»⁸: Այնպէս որ, դուն պիտի դատուիս ոչ միայն քու բոլոր գործերուն համար, այլեւ՝ ամէն բառի, որ ըսած ես: Ասիկա կը վերաբերի չար, բարի եւ նոյնիսկ՝ դատարկ բառերուն, որոնք դուրս ելած են քու բերանէն: Այնուամենայնիւ, պիտի ստուգուին ոչ միայն քու խօսքերը եւ գործերը, այլ ատոնց ետեւը գտնուող դրդապատճառները նոյնպէս դատաստանի պիտի ենթարկուին: Դուն նաեւ պիտի դատուիս այն մտքերու համար, որոնք ընդունած ես: Մի՛ մոռնար, որ Ճէյլընի դատաստանը արդար է. այն «կը ստուգէ միտքն ու սիրտը»⁹: Ան անձնապէս ըսաւ. «Ես՝ Ճէյլընս, կը քննեմ բոլոր սրտերը եւ կը ստուգեմ ծածուկ դրդապատճառները: Ես կու տամ մարդոց իրենց արժանի հատուցումը՝ ըստ այն բանին, թէ ինչի արժանի են անոնց գործերը»¹⁰: Ան կը ստուգէ ոչ միայն ամէն մէկ խօսքն ու գործը, այլեւ՝ ատոնց ետեւը գտնուող դրդապատճառները:

Համբերատարը շարունակեց.

– Ահա թէ ինչու դուն այդքան զարմացար՝ տեսնելով զիս գահին վրայ: Դուն կը դատես իմ ձեռքբերումները էնտելի լոյսին ներքոյ: Ճէյլընի դատաստանը այլ կերպով է. հիմա դուն կը սկսիս տեսնել այն, եւ շուտով կը տեսնես շատ աւելի ակնյայտ կերպով: Թանկագին եղբայր, դուն արդար վարձատրութիւն պիտի ստանաս էնտելի մէջ քու ապրած կեանքին համար:

Եսասէրին նման խիստ ճշմարտութիւն ոչ ոք ըսած էր: Այնուամենայնիւ, այն յագեցած էր այնպիսի՝ սիրով, որ ան երբեք չէր ճանչցած: Այժմ ան գիտէր, որ Ճէյլընը պէտք է սիրող եւ գթասիրտ իշխան ըլլայ, քանի որ ան որոշ չափով վերապրեցաւ այդ սէրը անոր կառավարիչներէն մէկուն միջոցով: Համբերատարը յանդիմանեց զինք, բայց այդ յանդիմանութիւնը ամփոփուած էր սիրով: Ան հասկցաւ, որ սիրոյ նպատակը ոչ թէ այլ մարդոց հաճեցնելն է, այլ՝ ճշմարտութիւնը:



Համբերատարը խոնարհեցուց իր գլուխը.

– Քու թագաւորը կը սպասէ քեզի:

Այս ըսելով՝ ան վերադարձաւ դէպի իր գահը, եւ Գլխաւոր պահապանը նշան ըրաւ Եսասէրին, որ ան առանձին մօտենար գահին: Պահապանը պիտի սպասէր հարթակի ստորին հատուածը, ուր կառավարիչները կը գտնուէին:

Եսասէրը՝ Ճէյլընին առջեւ

Համաձայն իր ստացած հրահանգներուն՝ Եսասէրը զգուշօրէն բարձրացաւ աստիճաններով դէպի վերնահարթակը, որ անմիջապէս վեհաշուք գահի ներքեւ էր: Ան վեր նայեցաւ եւ տեսաւ թագաւորը: Ոչ ոք ամբողջ այդ ժողովքին մէջ չէր հասներ Ճէյլընին գեղեցկութեամբ, արքայական կեցուածքով եւ վեհութեամբ: Ան ե՛լ հմայիչ էր, ե՛լ սարսափազդու: Եսասէրը երբեք չէր տեսած անոր պէս մէկը: Ան անմիջապէս հասկցաւ, որ ոչ ոք կրնայ հակառակիլ անոր իմաստութեան եւ ուժին:

Առաջին անգամ նայելով Ճէյլընի աչքերուն՝ Եսասէրը հասկցաւ, որ թագաւորը շատ աւելի մեղմ եւ շատ աւելի ահարկու էր, քան ինքը կրնար երեւակայել: Անոր հայեացքը թափանցեց անմիջապէս Եսասէրի մէջէն, եւ ան մերկ զգաց ինքզինքը: Ակնյայտ էր, որ ոչինչ իր մասին ծածկուած էր այդտեղ: Եսասէրը լիովին կորսնցուց վստահութիւնը բարեացակամ դատաստանի վերաբերեալ, բայց ան այլեւս չէր հոգար այդ մասին: Հիմա ան կը ցանկար ճշմարտութիւնը աւելի, քան որեւէ բան:

Ճէյլընը ըսաւ.

– Բարի գալու՛ստ իմ թագաւորութիւն, Եսասէ՛ր: Ես այս պահուն կը փափաքէի: Դուն Էնտելի մէջ կ'իշխէիր իմ ժողովուրդը: Արդեօք արժանի՞ ես իշխելու եւ նստելու Աֆապէլի գահերէն մէկուն վրայ:

Համարձակ Եսասէրը, որ պատասխան ունէր ամէն իրավիճակի մէջ, պապանձեցաւ: Քիչ առաջ ան կը զգար, որ կրնար հրաշալի առաջնորդ ըլլալ Աֆապէլի մէջ, բայց Մեծ սրահին մէջ գրուցելով Աֆապէլի քաղաքացիներէն մէկ քանիին հետ՝ ան հասկցաւ, որ իր մտքերը, ամենայն հաւանականութեամբ, պարզապէս պատրանք էին:

Ճէյլընը հարցուց իր քով գտնուող կառավարիչներէն մէկուն.

– Քանի՞ քաղաքացիի կեանքին մէջ Եսասէրը ազդեցութիւն ձգած է այս թագաւորութեան համար:

Հնչեցին քանի մը անուններ: Եսասէրը ցնցուած էր եւ խօսք չունէր՝ լսելով ատիկա:

Թագաւորը հարցուց նոյն կառավարիչին.



– Քանի՞ քաղաքացիի կեանքին վրայ Համբերատարը ազդեցութիւն ձգած է այս թագաւորութեան համար:

– Հինգ հազարէն քիչ մը աւելի, իմ տէ՛ր,– պատասխանեց կառավարիչը:

– Ինչպէ՞ս ասիկա հնարաւոր է,– չդիմացաւ Եսասէրը:– Ան ընդամէնը քարտուղար էր, իսկ ես քաղաքապետ էի: Ինչպէ՞ս է, որ ես ազդեցութիւն ձգած եմ այդքան քիչ մարդոց կեանքին վրայ, իսկ ան՝ այդքան շատ:

Ճէյընը հաստատակամօրէն պատասխանեց.

– Ես չհարցուցի, թէ որքան ազդեցութիւն դուն ունեցած ես, այլ թէ քանիներու կեանքին վրայ դուն ազդեցութիւն ձգած ես այս թագաւորութեան համար:

Անոր ծայրը քիչ մը մեղմացաւ, բայց ան պահպանեց վճռականութիւնը.

– Նոյնիսկ քու նախկին ուսուցիչ Խրախուսողը, որ այժմ յայտնի է Խոնարիած անունով, ազդեցութիւն ունէր աւելի շատ մարդոց կեանքին վրայ, քան դուն: Այնուամենայնիւ, այդ ազդեցութեան շատ փոքրիկ մաս մը հասաւ այս թագաւորութիւնը: Ահա թէ ինչու ան չ'իշխեր այս քաղաքին մէջ: Այն ազդեցութիւնը, որ մնայուն կը համարուի այս Դատաստանի գահին առջեւ, կը համապատասխանէ Իմ ճանապարհներուն եւ Իմ թագաւորութեան:

Ճէյընը շարունակեց.

– Առիթ տո՛ւր պատմելու քեզի, թէ ինչպէս Համբերատարը ազդեցութիւն գործած է աւելի քան հինգ հազար մարդու կեանքին վրայ: Ան ուրախութեամբ նուիրատուութիւններ կը կատարէր դպրոցին համար՝ ե՛ւ դրամական, ե՛ւ ծառայութեան միջոցով: Այնպէս որ, մարդիկ, որոնք օգուտ ստացան դպրոցի ծառայութենէն, հաշուեգրուեցան անոր:

– Բայց ես նոյնպէս նուիրատուութիւններ կատարած եմ դպրոցին համար,– ընդդիմացաւ Եսասէրը:

– Դուն նուիրատուութիւններ կը կատարէիր, որպէսզի թեթեւցնէիր քու խիղճը, ինչպէս նաեւ՝ պահպանէիր կամ վերականգնէիր քու համբաւը,– պատասխանեց Ճէյընը:– Էնտելի մէջ դուն լրիւ վարձատրութիւնդ ստացար ատոր համար: Իսկ Համբերատարը նուիրատուութիւններ կը կատարէր, քանի որ կը փրէր այս թագաւորութիւնը եւ մարդկութիւնը:

Համբերատարը դարձի բերաւ Դաժան անունով մարդ մը, որ սկսաւ ծառայել ինծի: Այս պահուն ան Կեանքի սրահին մէջ է եւ կը սպասէ իր դատաստանին: Ես պիտի տամ անոր Աւետարանիչ անունը, քանի որ ան հրաշալի կերպով տարածեց իմ ուղերձը: Ան անձամբ ազդեցութիւն ձգած է աւելի քան հազար մարդու կեանքի վրայ՝ այս թագաւորութեան



համար: Այն մարդիկ, որոնց կեանքը ան կառուցած է, հաշուեգրուած են Համբերատարին, քանի որ ան առաջնորդեց այդ մարդը Ինձի ծառայելու համար, եւ ան կ'աջակցէր դպրոցին, որ կրթեց եւ սորվեցուց զինք:

Եսասէրը կը յիշէր Ղաթանը Էնտելէն: Ան կը համարէր, որ Ղաթանը չափէն շատ նախանձաւոր էր հաւատքի մէջ: Ան տեղական թերթի համահեղինակներէն մէկն էր, եւ յաճախ կը գրէր իր սիւնակներուն մէջ այն մասին, որ քաղաքացիները նուիրուած չէին Աֆապէլին: Ան նոյնպէս միաբանեց բազմաթիւ Էնտելցիներ՝ դրդելով զանոնք կապուիլ քաղաքային խորհուրդի անդամներուն հետ եւ պահանջել անոնց աջակցութիւնը դպրոցի ընդլայնման համար: Ան բացայայտ կերպով արտայայտեց իր տհաճութիւնը, երբ Եսասէրը փոխեց քուէարկութեան ընթացքը՝ չտրամադրելով հողատարածքը դպրոցին: Եսասէրը չէր սիրեր Ղաթանը այդ ամէնուն համար: Այժմ ան կ'ամչնար՝ հասկնալով, որ այն ամէնը, ինչին համար Ղաթանը կը պայքարէր, կապուած էր Աֆապէլի թագաւորութեան տարածման հետ: Ինչպէ՞ս ինքը կրնար այդքան կոյր ըլլալ:

Ճէլլընը շարունակեց ցոյց տալ այլ բաներ, որոնց շնորհիւ Համբերատարը ազդեցութիւն ձգած էր Էնտելցիներու կեանքին վրայ՝ Աֆապէլի թագաւորութեան համար: Կային բազմաթիւ փոքրիկ բաներ, որոնք միասին մեծ համարուած էին: Ան կը վերաբերէր բոլորին բարութեամբ եւ մաքուր, սիրով լեցուն սրտով: Ան առատածեռն էր կարիքաւորներուն հանդէպ եւ անսասան կը հետեւէր ճշմարտութեան:


Երբ թագաւորը աւարտեց Համբերատարին մասին խօսիլը, ան մանրակրկիտ վերանայեցաւ Եսասէրին կեանքին: Ինչպէս որ ըսաւ Համբերատարը՝ գնահատուեցաւ ամէն դրդապատճառ, խօսք եւ գործ:

Եսասէրը տեսաւ այն բարին, որ գործած էր թագաւորին անունով, բայց ճնշուեցաւ այն փաստէն, որ իր գործերու մեծ մասը դրդուած էր իր անձի ապահովութեամբ, սեփական համբաւով եւ եսակեդրոն նպատակներով: Մինչեւ իր կեանքի քննութեան աւարտը Եսասէրը համոզուած էր, որ պիտի դատապարտուէր:

Ան աղաղակեց թագաւորին առջեւ.

– Ես արժանի եմ պատժուելու մինչեւ իմ կեանքի աւարտը: Ես արժանի եմ Լոնին: Ես այնքան բան վատնած եմ, եւ այնքան քիչ արդիւնք տուած եմ՝ ի հատուցում այն տաղանդներուն եւ պարտաւորութիւններուն, որոնք ստացած էի:

Եսասէրը անտանելի ցաւ կը զգար. արցունքները առատօրէն կը հոսէին անոր երեսին վրայէն: Այն մարդը, որ մեծ վստահութիւն ունէր, երբ մուտք գործեց Մեծ սրահը, այժմ նոյնիսկ մէկ թել կը փնտռէր՝ կառչելու համար: Միակ բանը, որ մնացած էր, ողորմութեան յոյսն էր, բայց ան



չէր հաւատար, որ նոյնիսկ ատոր արժանի էր: Ան հաւաքեց ինքզինքը՝ սպասելով, որ թագաւորը պիտի ազդարարէ իր աքսորը դէպի Լոն:

Քանի մը վայրկեան ծանր լռութենէն յետոյ թագաւորը վերջապէս խօսեցաւ.

– Եսասէ՛ր, դուն իմ ծառան ես: Դուն հաւատացիր ինձի եւ հնազանդեցար իմ իշխանութեան: Թէեւ դուն այդքան բան վատնեցիր, բայց ես կը սիրեմ եւ կ'ողջունեմ քեզ իմ թագաւորութեան մէջ՝ մինչեւ քու կեանքին աւարտը:

Եսասէրը ապշած էր: Ան վեր նայեցաւ, իսկ յետոյ սկսաւ անվերահսկելիօրէն լալ, ոչ թէ տրտմութենէն, այլ՝ անսահման ուրախութենէն: Ան ցնցուած էր այդ մեծ թագաւորին ողորմութեամբ եւ բարութեամբ: Մէկ ակնթարթի մէջ գրեթէ այն ամէնը, ինչ ան լսած էր Ճէյլընի բնաւորութեան մասին, պարզ դարձաւ անոր համար: Ընդամէնը քանի մը վայրկեան առաջ ան այնպիսի՝ դատապարտութիւն եւ ցաւ կը զգար, որ երբեք չէր կրնար երեւակայել: Ան արժանի էր ոչինչի՝ բացի աքսորուած ըլլալէն: Ան արժանի էր դատապարտութեան. անոր կեանքի քննութիւնը ցոյց տուաւ ատիկա: Այժմ, ամենամեղմ եւ բարի բառերով, որոնք միայն կարելի էր երեւակայել, այս երկիւղ ներշնչող թագաւորը կ'ողջունէր զինք իր անպատմելի քաղաքին մէջ: Ինչպիսի՝ ողորմութիւն: Ինչպիսի՝ զարմանալի սէր:

Գրեթէ այն ամէնը, ինչ որ Եսասէրը գործած էր Էնտելի մէջ, այրեցաւ անոր աչքերուն առջեւ, բայց ան տակաւին կը լսէր թագաւորին խօսքերը. «Ես կը սիրեմ քեզ եւ կ'ողջունեմ քեզ իմ թագաւորութեան մէջ»: Ան հասկցաւ, որ իր ընկեր Գոհացողը ճիշդ էր. ինչ ալ որ ան ստանար, աւելին էր, քան ան արժանի էր:

Թագաւորը կրկին խօսեցաւ.

– Եսասէ՛ր, դուն այլեւս յայտնի չես ըլլար քու նախկին անունով: Ես նոր անուն կու տամ քեզի: Իմ թագաւորութեան մէջ դուն յայտնի պիտի ըլլաս Համեստ անունով: Ես բնակարան պատրաստած եմ քեզի համար հարթավայրերու մէջ, եւ դուն բնատեսարաններ ձեւաւորող պիտի ըլլաս: Թէեւ դուն չես իշխեր այս քաղաքին մէջ, դուն կ'օգնես ինձի իշխելու արտաքին շրջաններուն մէջ:

Եսասէրը հարցուց.

– Իշխել հետդ արտաքին շրջաններո՞ւ մէջ:

– Անոնք, որոնք այս քաղաքին մէջ են, իշխաններ են,– պատասխանեց Ճէյլընը:– Իմ թագաւորութիւնը կը տարածուի մինչեւ մոլորակի հեռաւոր անկիւնները: Այս արտաքին քաղաքներու քաղաքացիները չեն ուսանած Էնտելի մէջ այնպէս, ինչպէս Աֆապէլի քաղաքացիները, եւ



ո՛չ ալ դատաստանի առջեւ կեցած են: Հետեւաբար, անոնք չունին այն գերազանց յատկութիւնները, որոնք բնորոշ են այս քաղաքի բնակիչներուն: Թէեւ դուն չես իշխեր անմիջապէս Աֆապէլ քաղաքի մէջ, բայց կ'օգնես ինծի՝ տարածելու իմ իշխանութիւնը աշխարհով մէկ: Քու յատուկ առաջադրանքը կ'ըլլայ ղեկավարել Պենկիլա աշխարհամասի քսան քաղաքներու բոլոր բնատեսարաններ ձեւաւորողները՝ անոնց ծառայելու եւ սորվեցնելու միջոցով:

Եսասէրը խոնարհեցուց գլուխը եւ լացաւ. թագաւորին բարութիւնը աներեւակայելի էր:

Թագաւորը մօտեցաւ սեղանի մը եւ ինչ որ առարկայ վերցուց, իսկ յետոյ շրջուեցաւ եւ քալեց դէպի Համեստը: Ան հասաւ այն հարթակին, ուր Համեստը կեցած էր, եւ ըսաւ.

– Իսկ հիմա, վերցո՛ւր եւ կե՛ր այս պտուղը:


Համեստը վերցուց պտուղը Ճէյլընի ձեռքէն եւ կերաւ: Այն ամենահամեղ բանն էր, որ ան երբեք ճաշակած էր: Այն կարծես մաքրեց անոր միտքը եւ սիրտը: Անոր մտքերը համակուեցան մեծ սիրով եւ ծառայելու ցանկութեամբ: Ուտելու ընթացքին ան կը մաքրուէր իր նախկին ցաւէն եւ խաւար մտքերէն: Ան կը զգար ոգեշնչում եւ երջանկութիւն, կը լեցուէր յոյսով եւ հաւատքով: Ան անմիջապէս հասկցաւ, որ այդ պտուղը յայտնի Կեանքի ծառէն էր, որուն մասին ուսուցիչները կը խօսէին դպրոցին մէջ: Համեստի դէմքին մեծ ժպիտ յայտնուեցաւ՝ մինչ Ճէյլընը հաճոյքով կը նայէր անոր:

Այնուհետեւ Ճէյլընը ըսաւ.

– Շրջուի՛ր եւ նայի՛ր քու ընտանիքին:

Համեստը զգուշօրէն շրջուեցաւ: Ան տակաւին քիչ մը ամօթ կը զգար՝ գիտակցելով, որ բոլորը տեսան եւ լսեցին իր կեանքի մանրամասները: Երբ ան լիովին շրջուեցաւ, բազմութիւնը ծափահարութիւններ եւ ուրախութեան գոչիւններ արձակեց: Երաժշտութիւնը սկսաւ, եւ քաղաքացիներէն ոմանք նոյնիսկ սկսան պարել: Համեստը չէր հաւատար, որ ինքը նման սիրոյ եւ ընդունելութեան կ'արժանանար այդ թագաւորական քաղաքացիներէն: Ատիկա այն դարմանն էր, որ բոլորովին բժշկեց զինք Էնտելի մէջ գործած բոլոր սխալներէն:

Համեստը շրջուեցաւ եւ տեսաւ ամէնէն փառաւոր եւ ուրախ ժպիտը Ճէյլընի դէմքին: Այդ ժամանակն էր, որ ան նկատեց Ճէյլընին աչքերը: Ատոնք կը նայէին Համեստին այնպիսի սիրով եւ ջերմութեամբ, ինչպիսին ան երբեք չէր տեսած անցեալին: Այժմ ան կը լսէր Ճէյլընին մտքերը, ինչպէս որ Համբերատարը եւ միւսները կը լսէին իր մտքերը: Ան կը լսէր հաւանութիւն, բերկրանք եւ երանութեան տարիներու ականկալիք



իր համար, այսինքն՝ այն քաղաքացիին, որուն ճէյընը անչափ կը սիրէր: Համեստը իյնկաւ ծունկներու վրայ եւ գոհացաւ թագաւորէն: Թագաւորը ոտքի կանգնեցուց զինք, ամուր գրկեց եւ ժպտալով ըսաւ.

– Բարի գալուստ, ընկեր:

Այնուհետեւ Համեստին ուղեկցեցան իր տեղը՝ լսարանին վերջը, ուր ան պիտի սպասէր միւս էնտելիցիներու դատաստանին: Ամէն արցունք սրբուած էր: Այլեւս չկար տրտմութիւն, ցաւ եւ լաց: Հին բաները անցած էին:

Բարեգործին դատաստանը

Առաւօտը անցաւ. բոլոր քաղաքացիները արդէն կանչուած էին Կեանքի սրահէն՝ բացի Բարեգործէն: Թէեւ ան առանձին մնացած էր, բայց բոլորովին չէր մտահոգուած, քանի որ այդ սրահին մէջ կային հրաշալի գիրքեր, որոնց հեղինակները Աֆապէլի քաղաքացիներն էին: Ան կը կարդար *Աֆապէլի Պատմագրութիւններու երկրորդ գիրքը*, երբ Գլխաւոր պահապանը մօտեցաւ անոր եւ մեղմօրէն ըսաւ.

– Բարեգործ, քու թագաւորը կը սպասէ քեզի:

Անոր սիրտը սկսաւ ուրախութենէն արագ բաբախել: Ի վերջոյ ան պիտի տեսնէր զինք, որուն կը սիրէր եւ կը փափաքէր հանդիպիլ: Ան տարիներ շարունակ սպասած էր այս վայրկեանին, եւ այժմ այն հասած էր: Պահապանը ժպտաց, երբ Բարեգործը մօտեցաւ անոր, եւ անոնք միասին քալեցին դէպի Մեծ սրահը:

Մեծ սրահի դռները բացուելուն պէս Բարեգործը համակուեցաւ զգացումներով՝ իր տեսածին վեհութեան պատճառով: Այնուամենայնիւ, անոր ուշադրութիւնը գրաւեց հեռուն գտնուող ճէյընին գահը: Այդ պահուն ան միայն կը տեսնէր զինք՝ հեռուէն երեւացող ուրուագիծերը: Ան սկսաւ նայիլ Աֆապէլի թագաւորութեան քաղաքացիներուն: «Ինչպիսի՜ բացառիկ մարդիկ, – մտածեց ան:– Ինչպէ՞ս ես կրնամ զիս հասար անուանել անոնց»:

Ան նկատեց, որ բոլոր քաղաքացիները կը խոնարհէին, երբ ինքը կ'անցնէր: Ինչո՞ւ այս վսեմ մարդիկ պէտք է խոնարհէին իր առջեւ: Անոնք տպաւորիչ եւ գեղեցիկ էին, եւ որքան ան կը մօտենար գահին, մարդոց հանդերձները ա՛լ աւելի փառաւոր կը դառնային: Կը թուար՝ անոնք գերմարդիկ էին: Ինչպէ՞ս նման մարդիկ կրնան խոնարհիլ, յատկապէս՝ իր առջեւ:

Բարեգործը ճանչցաւ քանի մը մարդիկ, որոնց ան գիտէր էնտելի մէջ: Անոնք կը ժպտային՝ լեցուն ոգեւորութեամբ եւ իր հանդէպ սիրով: Ան կ'ուզէր կենալ եւ գրկել անոնցմէ ամէն մէկը, բայց զգաց, որ յարմար



Ժամանակը չէ: Ան նկատեց Անողորմը եւ չկրցաւ զսպել ինքզինքը: Ան վազեց անոր քով եւ ամուր գրկեց: Երկուքն ալ անչափ ուրախ էին:

Գրկախառնութենէն յետոյ Անողորմը խոնարհեցաւ անոր առջեւ եւ ըսաւ.

– Բարի գալու՛ստ քու նոր տուն:

– Ինչո՞ւ կը խոնարհիս իմ առջեւ,– հարցուց Բարեգործը:– Ես Աստուած չեմ, որ երկրպագութիւն ստանամ:

– Կայ տարբերութիւն երկրպագութեան եւ պատուի միջեւ,– պատասխանեց արքայական քաղաքացին:– Միայն մեր Տէրը արժանի է երկրպագութեան, բայց այս թագաւորութեան մէջ մենք կը պատուենք անոնց, որոնք բարեսրտօրէն ծառայած են մեզի Էնտելի մէջ: Մենք նաեւ կը պատուենք անոնց, որոնք կ'իշխեն հոս: Էնտելի մէջ մենք չէինք հասկնար պատուի կարեւորութիւնը:

Բարեգործ, դուն ծառայեցիր ինծի Էնտելի մէջ: Եթէ քու հնազանդութիւնը թագաւորին չըլլար, ես հոս չէի գտնուեր. ես կը բնակէի լքուած Լոն երկրին մէջ: Նախ եւ առաջ պարտական եւ շնորհակալ եմ իմ թագաւորին, բայց ես նոյնպէս պարտական եւ շնորհակալ եմ քեզի: Ես հաճոյքով կը ծառայեմ եւ կը պատուեմ քեզ՝ մինչեւ իմ կեանքի աւարտը:

– Իմ անունս այլեւս Անողորմ չէ,– շարունակեց ան: Տէր Ճէյլընը փոխեց իմ անունս Դատաստանի գահին քով՝ զիս Հաշտուած անուանելով: Կ'երեւի թէ, ես ստացայ մեծագոյն ողորմութիւնը մեր թագաւորին առջեւ:

– Հաշտուած: Ինչպիսի՞ սքանչելի անուն,– պատասխանեց Բարեգործը:– Սիրելի՛ ընկեր, ես չչափեցայ քեզ Էնտելի մէջ, որ դուն ի պատասխան ծառայես ինծի: Ես ըրի ատիկա, քանի որ կը սիրէի քեզ եւ կը մտահոգուէի քու կեանքին համար:

– Ես կը պատուեմ եւ կը ծառայեմ քեզի յատկապէս քու դրդապատճառներուն համար: Դուն մեծապէս պիտի վարձատրուիս թագաւորին կողմէն: Դուն աշխատեցար Ճէյլընին սիրելու պատճառով: Դուն ոչինչ ըրիր, որպէսզի ճանաչում ունենայիր Ճէյլընի հետեւորդներուն միջեւ, կամ ինչ որ վարձատրութիւն ստանայիր: Ճէյլընը բերկրանք կ'ապրի այն մարդոց պատճառով, որոնք կը շահին իր սիրով: Երբ մենք Էնտելի մէջ էինք, այնքան կարեւոր էր, որ հասկնայինք անոր սիրտը, ոչ թէ՛ միայն անոր տեսիլքը: Դուն ունէիր այս երկուքն ալ, թանկագին քոյր, եւ քու սրտի դրդապատճառները փոխանցուեցան ինծի: Ահա թէ ինչու ես մեծ եռանդով շահեցայ շատերը՝ Էնտելի մէջ գտնուելուս իմ վերջին շաբթուան ընթացքին: Հոս ես շրայլ վարձատրութիւն ստացայ իմ աշխատանքի համար, թէեւ այն շատ կարճ էր:

Բարեգործը ժպտաց.



– Հաշտուած՝ ես այնքան ուրախ եմ քեզի համար: Ես կը ծառայեմ քեզի մինչեւ իմ կեանքիս աւարտը:

– Բարեգործ, դուն արդէն իսկ այնպէս կը խօսիս, ըսես տարիներ շարունակ ապրած ես Աֆապէլի մէջ,– պատասխանեց Հաշտուածը:– Այս մեծ քաղաքին մէջ մենք կ'ապրինք՝ մէկս միւսին ծառայելու համար: Իրականութեան մէջ, այն մարդիկ, որոնք կ'առաջնորդեն, մեծագոյն ծառաներն են: Մենք ունինք աւելի շատ պարտականութիւններ եւ հաճոյքով կը կատարենք: Այստեղի կեանքը նման չէ Էնտելին: Հոս առաջնորդները չեն ձգտիր, որ մարդիկ ծառայեն իրենց, այլ աւելի շատ կ'ուրախանան, որ իրենց աւելի շատ հնարաւորութիւններ պիտի տրուին՝ ծառայելու համար: Հոս ապրող ամէն քաղաքացիի մեծագոյն ուրախութիւնը ծառայելն է, նախ՝ մեր թագաւորին, իսկ յետոյ՝ մեր համաքաղաքացիներուն, եւ յատկապէս՝ որոնք ազդեցութիւն ձգած են մեր վրայ Էնտելի մէջ, եւ վերջապէս՝ արտաքին շրջաններուն մէջ ապրող քաղաքացիներուն, որոնց մասին դուն շուտով պիտի գիտնաս:

Հաշտուածը ամփոփեց իր խօսքը.

– Թանկագին քոյր, ես կը հպարտանամ քեզմով: Գնա՛ քու թագաւորին քով: Ան կը փափաքէր տեսնել քեզ եւ վարձատրել՝ իրեն ծառայելու համար:

Այս խօսքերով՝ երկուքը գրկախառնուեցան: Բարեգործը միացաւ պահապանին, եւ անոնք շարունակեցին մօտենալ գահին:

Բարեգործը՝ Ճէլլընին առջեւ

Բարեգործը արդէն կրնար աւելի պարզ տեսնել Ճէլլընը, քանի որ ան ընդամէնը քսան մեթրով հեռու էր գահէն: Անցնելով կառավարիչներու կողքով՝ ան նոյնիսկ չնկատեց, որ անոնք խոնարհեցան իր առջեւ. անոր հայեացքը ուղղուած էր Ճէլլընին: Ան երկիւղած էր թագաւորին վեհաշուք փառքէն:

Բարեգործը բարձրացաւ աստիճաններով եւ հասնելով վերնահարթակին՝ երեսնիվայր իյնկաւ թագաւորին առջեւ: Ճէլլընը ելաւ գահէն, քայլ առաւ եւ ոտքի կեցուց զինք: Ան քնքշօղէն խօսեցաւ.

– Բարեգործ, իմ թանկ ծառայ, բարի գալուստ իմ թագաւորութիւն: Ես կը փափաքէի այս պահուն, որպէսզի անձամբ հանդիպէի քեզի:

Բարեգործը պատասխանեց.

– Տէ՛ր, ե՛ս մեծապէս կը փափաքէի այս պահուն: Դուն իմ թագաւորն ես: Հիմա յոյսով եմ, որ պիտի ըլլամ քու ներկայութեան մէջ՝ մինչեւ իմ կեանքին աւարտը, եւ աւելի լիարժէք կերպով պիտի ծառայեմ քեզի:



Թագաւորը ըսաւ.

– Եկո՛ւր եւ ժառանգե՛ այն թագաւորութիւնը, որ պատրաստուած եղած է քեզի համար, նոյնիսկ՝ աշխարհի ստեղծագործութենէն առաջ: Ես անօթի էի, եւ դուն կերակրեցիր զիս: Ծարաւ էի, եւ դուն խմցուցիր ինձի: Ես օտարական էի, եւ դուն ընդունեցիր զիս քու տունը: Մերկ էի, եւ դուն հագցուցիր զիս: Ես հիւանդ էի, եւ դուն հոգ տարիր ինձի համար: Բանտն էի, եւ դուն այցելեցիր զիս:

Բարեգործը զարմացած պատասխանեց.

– Տէ՛ր, Ե՞րբ տեսայ քեզ անօթի եւ կերակրեցի, կամ՝ ծարաւ, եւ խմցուցի: Ե՞րբ ես տեսայ, որ դուն օտարական էիր, եւ ողջունեցի քեզ իմ տունին մէջ, կամ՝ մերկ, եւ հագցուցի քեզ: Ե՞րբ տեսայ քեզ հիւանդ կամ բանտին մէջ, եւ այցելեցի:

Թագաւորը պատասխանեց.

– Կ'ըսեմ քեզի՝ երբ դուն ըրիր ատիկա իմ փոքր եղբայրներու եւ քոյրերու համար, դուն ըրիր ատիկա ինձի համար¹¹:

Ճէյլընը ցոյց տուաւ Բարեգործին անոր հրաշալի ծառայութիւնը, որ ցուցաբերած է իրեն՝ այլ մարդոց ծառայելու եւ իր օրէնքներուն հնազանդելու միջոցով: Վերանայուեցաւ անոր ամբողջ կեանքը՝ ամէն մէկ բառը, գործը, միտքը եւ սրտի դողապատճառը: Ամէն ինչ ի յայտ եկաւ՝ անոր ծառայութիւնը, անոր նուիրատուութիւնները դպրոցին մէջ, այն սէրը, որ ան ցուցաբերած էր իր համաքաղաքացիներուն, այն, որ ան հրաժարած էր մասնակցիլ անպարկեշտ գործերու եւ զրոյցներու, այն հալածանքը, որ ան կրած էր Ճէյլընին համար, այն, թէ ինչպէս ան ծառայած է մարդոց իր ճաշարանին միջոցով, մոլորած մարդոց հասնիլը, անոր՝ ժամեր տեսող հառաչանքները եւ լացը՝ կորսուածներու համար, Ճէյլընի ճանապարհներուն մէջ խստօրէն հետեւելու անոր դիրքորոշումը, այն, որ անոր չէին հրաւիրեր հասարակական միջոցառումներու՝ Ճէյլընի հանդէպ նախանձաւորութեան համար, այն, որ ան կը հրաժարէր խօսիլ իր համաքաղաքացիներու դէմ եւ մասնակցիլ բամբասանքներուն, եւ այսպէս շարունակ:

Բարեգործը ցնցուած էր՝ տեսնելով այն բազմաթիւ միջոցները, որոնցմով ան ազդեցութիւն գործած էր մարդոց վրայ: Անոր գործերու մեծ մասը, որոնք ան ըրած էր՝ Ճէյլընին փառք բերելու համար, ծրագրուած եւ կանխամտածուած չէր: Ան պարզապէս ջանասիրաբար կը ձգտէր ապրիլ այնպէս, ինչպէս կը սորվեցնէին հին գրուածքները:

Որոշ բաներ, որոնք Բարեգործը ըրած էր, այրեցան: Ան մեծ զղջում եւ կսկիծ ապրեցաւ կորսուած հնարաւորութիւններու եւ իր գործած սխալներու համար: Այնուամենայնիւ, կորսուեցաւ ընդամենը անոր կեանքի փոքրիկ մասը:



Բարեգործին վարձատրութիւնը

Անոր գործերը եւ խօսքերը վերանայելէն յետոյ թագաւորը նայեցաւ իր քով նստած կառավարիչներէն մէկուն եւ հարցուց.

Քանի՞ մարդու վրայ Բարեգործը ազդեցութիւն ձգած է՝ իմ թագաւորութեան համար:

– Իմ տէ՛ր, 5183 մարդու,– պատասխանեց կառավարիչը:– Քիչ մը աւելի՝ ամբողջ բնակչութեան մէկ վեցերորդէն:

– Այդքան շա՞տ,– զարմացաւ Բարեգործը:

Ճէյլընը պատասխանեց.

– Կը յիշե՞ս, որ հին գրուածքներուն մէջ ես խոստացայ «շատցնել այն սերմը, որ դուն ցանած ես, եւ աւելցնել քու արդարութեան պտուղը»¹²: Բարեգործ, իմ թագաւորութիւնը կը գործէ բազմապատկման սկզբունքով:

Ատկէ յետոյ թագաւորը աւելի մանրամասնօրէն ցոյց տուաւ, թէ ինչպէս անոր հնազանդ գործերը բազմապատկուեցան՝ ազդելով բազմաթիւ մարդոց վրայ, թէեւ ան ղեկավարի դիրք չէր զբաղեցնէր իր համայնքին մէջ: Անոր գործերու ալիքային ազդեցութիւնը ապշեցնող էր: Ճէյլընը աւելցուց.

– Ինչպէս գրուած է. «Առատածեռնը կը ցրէ եւ կը բաժնէ: Ան կու տայ աղքատներուն: Անոր արդար, լաւ, բարի եւ առատածեռն գործերը կը յարատեւեն եւ կը մնան յաւիտեան»¹³: Այն կեանքը, որ հնազանդ է ինծի, բազմապատիկ արդիւնք կ'ունենայ: Ոչ մէկ քաղաքացի տեղակ կ'ըլլայ իր կեանքի իրական ազդեցութեան մասին, քանի տակաւին չէ կեցած այս Դատաստանի գահին առջեւ: Ասիկա է պատճառը, որ շատերը չեն հնազանդիւր փոքր բաներու մէջ: Մարդիկ անկարելի կը համարեն ստոնք: Այնուամենայնիւ, շատ յաճախ յատկապէս աննշան թուացող բաներն են, որ ամենամեծ հունձքը կը բերեն այս թագաւորութեան մէջ: Բանալին քու հնազանդութիւնն էր՝ անկախ հանգամանքներէն:

Ճէյլընը հարցուց.


– Բարեգործ, կը տեսնե՞ս այս ազատ գահը իմ աջ կողմի վրայ:

– Այո՛, իմ տէ՛ր,– պատասխանեց ան:

Ասիկա պիտի ըլլայ այն գահը, որուն վրայ դուն պիտի նստիս: Դուն պիտի իշխես հետոս՝ մինչեւ քու կեանքի աւարտը:

Բարեգործը ցնցուած էր.

– Տէ՛ր, ես արժանի չեմ իշխելու: Ես ընդամենը ճաշարան ունի: Կան շատ մարդիկ, որոնք աւելի օժտուած են, քան ես: Ինչպէ՞ս ես կրնամ իշխել նման իրաշալի թագաւորութեան մէջ: Եսասէրը մեծ առաջնորդ



էր մեր համայնքին մէջ: Արդեօ՞ք ան չի կրնար իշխել: Կը խնդրե՛մ, տո՛ւր ինձի այնպիսի աշխատանք, որուն միջոցով ես պարզապէս կը ծառայեմ քեզի եւ քու ժողովուրդին:

Ճէյլընը պատասխանեց.

– Եսասէրը կը գտնուի Մեծ սրահի ետնամասը: Ան բնատեսարաններ ձեւաւորող պիտի աշխատի մեր քաղաքի «Հարթավայրեր» կոչուող հատուածին մէջ: Ան նոյնպէս պիտի ծառայէ այլ բնատեսարան ձեւաւորողներու շարք մը արտաքին քաղաքներուն: Իսկ դուն կառավարիչ կ'ըլլաս այն սիրոյ շնորհիւ, որ ցուցաբերած ես իմ եւ իմ ժողովուրդի հանդէպ: Քու համբերութիւնը, հաւատարմութիւնը եւ խոնարհութիւնը արժանացուցին քեզ այս պատուին: Չե՞ս յիշեր իմ խօսքերը իմ գրուածքներէն. «Որովհետեւ ամէն մէկը, որ կը մեծարէ զինք, կը խոնարհեցուի (կը ստանայ դիրք, որ ցած է պատիւ ստացած կամ վարձատրուած մարդոցմէ)»¹⁴, եւ ան, որ խոնարհեցնէ ինքզինքը (համեստ կարծիք կ'ունենայ իր մասին եւ համապատասխանաբար կը վարուի), կը մեծարուի (բարձր դիրք կը ստանայ)»¹⁴: Բացի այն, որ դուն պիտի իշխես հետս, եւ փառաւոր տուն մը պատրաստած եմ քեզի համար Մեծ ծովու ափին՝ Ճիշդ իմ տան մօտիկ, Թագաւորական Կեդրոնին մէջ: Ես գիտեմ, թէ դուն որքան ծովը կը սիրես, եւ որքան կը սիրես ծովու ափքներուն ձայնը, եւ այդ պատճառով ես շնորհած եմ այն, ինչ որ դուն կը ցանկաս, եւ ինչ որ բերկրանք կը պատճառէ քեզի: Իւրաքանչիւր հաւատարիմ ծառայի եւ կը շնորհեմ անոր սրտի ցանկութիւնները:

Բարեգործը խօսք չունէր:

– Դուն կ'իշխես այս քաղաքի տասը շրջաններուն մէջ,– պատասխանեց թագաւորը:– Տասնմէկ այլ իշխաններ հետդ միասին կը վերահսկեն Աֆապէլ քաղաքի բոլոր 120 շրջանները: Դուն կ'աշխատիս անմիջապէս հետս եւ մեր քաղաքի միւս եօթանասունեօթ կառավարիչներուն հետ, որոնք կը նստին այս գահերուն վրայ: Միւս կառավարիչներուն վստահուած են այնպիսի բնագաւառներ, ինչպիսիք են կրթութիւնը, արտադրութիւնը, ժամանցային հաստատութիւնները, արուեստը եւ շատ այլ բնագաւառներ: Միայն այս եօթանասունեօթ կառավարիչները, իմ Հայրը եւ ես կը ծրագրենք, կ'որոշենք եւ կը ղեկավարենք Աֆապէլի կեանքը: Դուն պիտի ըլլաս իմ վստահելի խորհրդականներէն եւ միջնորդներէն մէկը՝ իմ եւ իմ քաղաքացիներուն միջեւ:

Մինչ Ճէյլընը կ'ըսէր այս ամէնը Բարեգործին, Համեստը կանգնած էր սրահին ետեւը եւ սրտանց կ'ուրախանար իր համադասարանցիին համար: Այնուամենայնիւ, անոր ուրախութեան մէջ նաեւ զղջման խայթ կար այն բանին համար, որ ինքը հնարաւորութիւն ունէր ազդեցութիւն



ծգել հազարաւոր մարդոց կեանքերուն վրայ Աֆապէլի թագաւորութեան համար, բայց այդպէս ալ չըրաւ ատիկա: Ան կրնար ըլլալ այդ կառավարիչներէն մէկը, որոնք իշխանութիւն ունէին աշխատելու անմիջապէս Ճէյընին հետ: Ան շնորհակալ էր, որ ընդունուած էր Աֆապէլի թագաւորութեան մէջ, բայց կը գիտակցէր, որ վատնած էր իր կարճ ժամանակը էնտելի մէջ, եւ որ ատիկա կ'ազդէր իր կեանքի մնացած 130 տարիներուն վրայ:

Թագաւորը ըսաւ Գլխաւոր պահապանին.

– Բէ՛ր ինձի Յաղթողին թագը եւ իշխանութեան գաւազանը:

Թագը եւ գաւազանը վերցնելուն պէս՝ Ճէյընը դրաւ թագը Բարեգործին գլխուն:

– Կեցցե՛ս, – բացականչեց թագաւորը: – Դուն վստահելի ծառայ ես: Դուն հաւատարիմ եղար այն փոքրի մէջ, որ ես վստահած էի քեզի, եւ այժմ, որպէս վարձատրութիւն, դուն տասը շրջաններու եւ տասներկու քաղաքներու կառավարիչ պիտի ըլլաս¹⁵:

Թագաւորը տուաւ անոր գաւազանը եւ ըսաւ.

– Քու անունդ այլեւս չ'ըլլար Բարեգործ, որովհետեւ ես նոր անուն կու տամ քեզի: Քու անունդ պիտի ըլլայ Յոյսով յաղթող: Չէ՞ որ ես ըսած էի էնտելի բոլոր քաղաքացիներուն. «Անոր, որ յաղթէ եւ կատարէ իմ կամքը մինչեւ վերջ, ես պիտի տամ իշխանութիւն շրջաններու եւ ազգերու վրայ. ան կ'իշխէ անոնց երկաթ գաւազանով, ինչպէս որ ես իշխանութիւն ստացայ իմ Հօրմէն»:¹⁶

Ճէյընը մօտեցաւ այն սեղանին, ուր դրուած էր վերջին պտուղը: Ան բերաւ այդ պտուղը Յոյսով յաղթողին եւ ըսաւ.

– Իմ թանկագին ընկեր եւ իշխանակից, դուն կրնաս ճաշակել Կեանքի ծառի պտուղէն:

Միւսներուն պէս Յոյսով յաղթողն ալ զգաց, թէ ինչպէս կը մաքրուի եւ կը սրբուի՝ ճաշակելով այս ամենահամեղ պտուղը: Անոր մտքերը համակուեցան աւելի մեծ սիրով, եւ անոր ծառայելու ցանկութիւնը ընդլայնեցաւ՝ հասնելով այնպիսի չափերու, որոնք անցեալին անյայտ էին իրեն: Ան մաքրուեցաւ էնտելի բոլոր ցաւերէն եւ խաւար մտքերէն: Ամէն ինչ արդէն նոր էր: Ան զգաց ոգեշնչում, երջանկութիւն, յոյս եւ հաւատք: Ան նայեցաւ Ճէյընին ու ժպտաց: Ասիկա մինչեւ կեանքի վերջը տեսող ընկերակցութեան սկիզբն էր:

Ճէյընը ուղեկցեցաւ Յոյսով յաղթողին վեր՝ դէպի իր գահը, եւ ըսաւ.

– Յոյսով յաղթող, շրջուի՛ր եւ նայի՛ր քու ընտանիքին:

Ան շրջուեցաւ՝ հանդիպելով բուռն ծափահարութիւններու: Ամբողջ սրահը թնդաց ուրախութեան ձայներով, մարդիկ սկսան պարել: Ոգեւո-



րութիւնը աւելին էր, քան որեւէ այլ մարդու դատաստանի ժամանակ: Մթնոլորտը լեցուն էր ցնծութեամբ եւ տօնակատարութեան բացական-
չութիւններով: Յոյսով յաղթողի դէմքը ողողեցաւ լուսաւոր ժպիտով.
այդպիսի սիրառատ ընդունելութիւնը զարմացուց զինք: Անոր թագաւո-
րը գրկեց զինք եւ ուրախութեամբ յայտարարեց.

– Լա՛ւ, բարի եւ հաւատարիմ ծառայ՝ Մտի՛ր քու տիրոջ ուրախու-
թեան մէջ¹⁷:

Այսպէս կ'աւարտի մեր պատմութիւնը մեծ թագաւորի, անոր ծառա-
ներու եւ Աֆապէլի թագաւորութեան մասին:

Խրատի եւ զգուշացման խօսք

Այս գլուխին մէջ մենք պատկերացում կազմեցինք այն մասին, թէ
ինչպիսին պիտի ըլլայ սուրբերու դատաստանը: Անկասկած, Քրիստոսի
ատենանի փառքը պիտի ըլլայ շատ աւելին, քան որեւէ բան՝ նկա-
րագրուած այս պատմութեան մէջ: Այնուամենայնիւ, այս այլաբանութիւ-
նը կը ներկայացնէ բազմաթիւ ճշմարտութիւններ Աստուծոյ թագաւորու-
թեան մասին:

Այս պատմութեան նպատակը ոչ թէ ճշմարտութիւնը հաստատելն է,
այլ՝ բացայայտելը եւ փոխանցելը: Երբ Յիսուս առակներ կը պատմէր,
մարդիկ կը հասկնային իմաստը եւ չէին կեդրոնանար այն մանրուքնե-
րուն վրայ, որոնք այնքան ալ էական չէին՝ Անոր կողմէն փոխանցուող
ճշմարտութիւնները հասկնալու համար:

Նոյն կերպով ես փորձեցի մանրամասնօրէն շեշտադրել այն կա-
րեւոր գաղափարները այս պատմութեան մէջ, որոնք կը պատկերեն
Քրիստոսի յաւիտենական թագաւորութիւնը: Մինչեւ գիրքի աւարտը,
դուք կրնաք կրկին կարդալ այս այլաբանութիւնը, ինչի շնորհիւ աւելի
խորապէս կ'ընկալէք այն Աստուածաշնչեան ուսմունքները, որոնք կը
գտնուին այս գիրքի մնացած գլուխներուն մէջ:

ԵՐԿԻՆՔ

*«Բայց ես արդարութեամբ պիտի տեսնեմ Քու երեսդ.
Երբ արթննամ, Քու դէմքէդ պիտի կշտանամ»:*
— Սաղմոս 17.15

Այժմ խօսինք այն մասին, թէ ինչ կը կատարուի, երբ արդարները կը հեռանան այս կեանքէն: Ինչպէս որ գոյութիւն ունի ժամանակաւոր բնակավայր անհաւատներու համար, որ կը կոչուի դժոխք (Հատէս), եւ վերջնական բնակավայր, որ կը կոչուի Կրակի լիճ, այնպէս ալ գոյութիւն ունի երկու վայր այս կեանքէն հեռացած հաւատացեալներուն համար: Ներկայ վայրը, ուր անոնք կը բնակին, շատերուն կողմէ կը կոչուի *Երկինք*, բայց ըստ Աստուծոյ Խօսքին՝ այն կը կոչուի *Երկնային Երուսաղէմ*: Արդարներու վերջնական բնակավայրը նոյնպէս կը կոչուի Երուսաղէմ, բայց այն այս երկրին վրայ պիտի ըլլայ: Ասիկա այն քաղաքն է, որ երկինքէն կ'իջնէ վերջնական դատաստանէն յետոյ: Այն կը կոչուի *Նոր Երուսաղէմ* (տե՛ս Յայտն. 21.2):

Վերին Երուսաղէմը

«Բայց դուք Սիօն լեռան մօտեցեր էք ու Աստուծոյ քաղաքին, երկնաւոր Երուսաղէմին եւ բիւրաւոր հրեշտակներուն ու երկինքը գրուած անդրանիկներուն հանդիսաւոր ժողովին ու եկեղեցիին եւ Աստուծոյ, որ ամէնուն Դատաւորն է ու արդարներուն հոգիներուն, որոնք կատարելութեան հասեր են, եւ Յիսուսին, որ Նոր ուխտին միջնորդն է...» (Եբրայեցիս 12.22–24):

Երկնային Երուսաղէմը կամ «վերին Երուսաղէմը» (տե՛ս Գաղատ. 4.26) քաղաք մըն է, որուն մեր այլաբանութեան մէջ կը համապատասխանէ Աֆապէլ քաղաքը: Այն կառուցուած է Սիօն կոչուած լեռան վրայ: Այդտեղ կը բնակին Հայրը, Որդին եւ անթիւ հրեշտակներ: Երկինքը գրուած անդրանիկներու հանդէսը եւ եկեղեցին, այսինքն՝ հինկտակարանեան սուրբերը եւ Քրիստոսին մէջ ննջածները, նոյնպէս կը բնակին այդտեղ:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ «կատարեալ արդարներուն հոգիները» նոյնպէս այս քաղաքին մէջ են: Որո՞նք են այս մարդիկ, եթէ հաշուի

առնենք, որ հեղինակը արդեն նշած է ե՛լ Հին, ե՛լ Նոր ուխտերու սուրբերը, որոնք գացած են՝ իրենց վարձատրութիւնը ստանալու համար:

Յիշեցէ՛ք, որ Աստուծոյ Հոգիէն ծնելէն յետոյ մենք նոր ստեղծուածներ կը դառնանք: Մեր հոգիները կը դառնան կատարեալ՝ Քրիստոսի նմանութեամբ, եւ մենք կը գտնուինք Անոր մէջ: Այս խօսքին մէջ հեղինակը չի խօսիր մարդոց անձերու եւ մարմիններու մասին, այլ միայն՝ հոգիներու: Ես կը հաւատամ, որ ասիկա կը վերաբերի այն սուրբերուն, որոնք կը ծառայեն Յիսուսին հոս՝ երկրի վրայ: Մտածեցէ՛ք այս մասին: Եբրայեցիներու նամակի հեղինակը կը դրդէ մեզ. «Ուրեմն, համարձակութեամբ մօտենանք շնորհքի աթոռին (գահին)...» (Եբրայեցիս 4.16): Շնորհքի աթոռը կամ գահը կը գտնուի Աստուծոյ քաղաքին մէջտեղը, եւ այս հրաւերը ուղղուած է մեզի՝ այս երկրին մէջ գտնուողներու: Կարելի՞ է արդեօք, որ շատերը, որոնք տակաւին կ'ապրին այս երկրի վրայ, քաջ յայտնի են գահի սրահին մէջ, որովհետեւ անոնք յաճախ կ'երթան հոն՝ աղօթքի միջոցով:

Մենք հոգիներ ենք, որոնք ունին անձ՝ բաղկացած մտքէ, կամքէ եւ զգացումներէ, եւ ներկայիս կ'ապրինք ֆիզիքական մարմիններու մէջ: Յիսուս ըսաւ, որ մենք կրնանք ճշմարտապէս երկրպագել Աստուծոյ միայն «հոգիով եւ ճշմարտութեամբ» (Յովհաննէս 4.24): Պօղոսը կրկին կը շեշտադրէ ասիկա. «Քանզի վկայ է ինծի Աստուած, Ջոր ես կը պաշտեմ իմ հոգիովս՝ Անոր Որդիին Աւետարանին մէջ...» (Հռովմայեցիս 1.9): Քանի որ մեր հոգիները ստեղծուած են Աստուծոյ պատկերով, եւ մենք վերստին ծնած ենք, Յիսուսի արեան եւ Սուրբ Հոգիին զօրութեան միջոցով կրնանք մուտք գործել Աստուծոյ գահի սրահը, երբ երկրպագելու կարիք կամ ցանկութիւն ունենանք:

Երկինք կատարած այցելութիւններ

Վերին Երուսաղէմը ներկայիս վայրի մը մէջ է, որ կը կոչուի երրորդ երկինք: Ասիկա իրական վայր է, որ Պօղոս առաքեալը այցելած էր իր մահէն առաջ: Ան կը գրէ.

«...Միայն թէ Տիրոջ տեսիլքներուն եւ յայտնութիւններուն հասնիմ: Մարդ մը կը ճանչնամ Քրիստոսով, որ տասնչորս տարի առաջ, (թէ մարմինով էր՝ չեմ գիտեր, եւ թէ առանց մարմինի չեմ գիտեր, Աստուած գիտէ) յափշտակուեցաւ մինչեւ երրորդ երկինք: Ու գիտեմ. թէ այդպիսի մարդ մը (մարմինով, թէ առանց մարմինի՝ չեմ գիտեր, Աստուած գիտէ), որ դրախտ յափշտակուեցաւ ու լսեց անպատմելի խօսքեր, որոնց մասին արտօնուած չէ պատմել» (Բ. Կորնթացիս 12.1-4):

Աստուածաբանները համաձայն են, որ Պօղոսը կը խօսէր իր մասին: «Նիւ իլվինկ» թարգմանութեան մէջ երկրորդ խօսքը գրուած է հետեւեալ ձեւով. «Ես Երկինք յափշտակուեցայ տասնչորս տարի առաջ»: Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Պօղոսը չէր գիտեր՝ ինքը մարմինով այդտեղ էր, թէ՞ ոչ: Ասիկա կարելի է բացատրել այն բանով, որ Երկինքը՝ իրական եւ նիւթական վայր է: Շատերը կը մտածեն, որ այն անտեսանելի վայր է, ուր մարդիկ կը սաւառնին ուրուականներու պէս: Ո՛չ, այն նիւթական վայր է, ուր կան փողոցներ, ծառեր, կենդանիներ, շէնքեր, ջուր եւ այլն:

Ես կը ճանչնամ քանի մը մարդիկ, որոնք Երկինք գացած եւ վերադարձած են, բայց առիթ տուէք պատմելու իմ ամենասիրելի պատմութիւններէն մէկը: Ես հովիւ ընկեր մը ունիմ, որուն անունը Կրեկ է: 1979 թուականին՝ անոր հովվական ծառայութեան առաջին օրը, ան տուն վերադարձաւ հաւաքոյթէն եւ տեսաւ, որ իր կինը նստած է աստիճաններուն եւ անվերահսկելի կերպով կու լայ: Ան անմիջապէս հասկցաւ, որ շատ վատ բան տեղի ունեցած էր: Ան գիտցաւ, որ իր տասնամեայ որդի Ճասթինը¹ փոքրիկ հեռատեսիլ տարած էր լոգասենեակ, որպէսզի լոգանքի ժամանակ ֆուտպոլային խաղ մը դիտէր: Ան պատահաբար հեռաստեսիլը նետած էր լոգարանին մէջ եւ ելեկտրահարուած էր:

Երբ Կրեկը գնաց զաւակին քով, Ճասթինի զարկերակը չէր աշխատեր: Անոր մարմինը սառած եւ կապոյտցած էր, անոր բիւրերը խիստ լայնցած էին, ինչ որ ցոյց կու տար, որ անոր ուղեղը չէր գործեր: Կրեկը շերիֆի տեղակալ եղած էր Լոս Անձելէսի ոստիկանութեան մէջ, այնպէս որ, ան գիտէր, թէ ինչպէս ցուցաբերէր առաջին բուժօգնութիւնը: Ան ականատես եղած էր բազմաթիւ մահերու: Եթէ ան նման իրավիճակի հանդիպէր, երբ ոստիկանութեան սպայ էր, կը յայտարարէր, որ տուժածը մահացած է, եւ քննիչ կը կանչէր:

Այնուամենայնիւ, Կրեկը հաւատացեալ էր եւ գիտէր աղօթքի զօրութեան մասին: Ան սկսաւ աղօթել եւ արիեստական շնչառութիւն տալ իր որդիին: Քանի մը վայրկեան յետոյ եկան շտապ օգնութեան աշխատողները: Կրեկը առիթ տուաւ, որ մասնագէտները կատարէին իրենց գործը, իսկ ինքը շարունակեց աղօթել: Շտապ օգնութեան խումբը աշխատեցաւ մանուկին հետ քառասունհինգ վայրկեան, բայց չկրցաւ կեանքի վերադարձնել զինք: Ելեկտրասրտագրումի գործիքը ամբողջ ընթացքին ուղիղ գիծ մը ցոյց կու տար: Շտապ օգնութեան աշխատողները այլեւս չէին ցանկար շարունակել այն, ինչ որ, իրենց կարծիքով, մոլեռանդութիւն էր:

Ի վերջոյ, Կրեկը աղօթեց. «Հայր, ես այլեւս հաւատք չունիմ: Ես սպառեցի իմ հաւատքը, բայց գիտեմ, որ Քու Խօսքին մէջ Դուս կը խօսիս մէկ ուրիշ հաւատքի մասին» (ան կը խօսէր հաւատքի պարզելի մասին, որուն մասին գրուած է Ա. Կորնթացիս 12.9-ին մէջ):

Կրեկին խօսքերով՝ ան ձեռքի պէս բան մը զգաց իր գլխավերելը: Հազիւ այդ պահուն ան զգաց, որ իր հոգիէն մեծ ուժ եւ իշխանութիւն բարձրացաւ, եւ ան գոչեց իր որդիին.

– Դուն կ'ապրի՛ն եւ չե՛ս մահանար: Յիսուսի անունով:

Յանկարծ էլեկտրասրտագրումի գործիքը սկսաւ ազդանշաններ տալ, եւ զարկերակային շարժ երեւեցաւ պաստառին վրայ: Շտապ օգնութեան աշխատողները լեցուեցան խանդավառութեամբ: Երբ Ճասթինը տան աստիճաններէն իջեցուցին եւ շտապ օգնութեան ինքնաշարժին մէջ դրին, անոր մարմինին գոյնը կապոյտէն փոխուած էր վարդագոյնի, անոր աչքերը լիովին վերականգնած էին, իսկ մարմինը արդէն տաք էր:

Կրեկը այնքա՛ն ոգեշնչուած էր: Անոր որդին կենդանի էր եւ առողջ: Այժմ ան վկայութիւն ունէր մեծ հրաշքի մասին եւ կրնար պատմել իր բոլոր ընկերներուն, թէ ինչ ըրաւ Աստուած: Այնուամենայնիւ, ան չէր գիտեր, որ պայքարը իր որդիին կեանքին համար տակաւին նոր սկսած էր:

Բժիշկները տեղեկացուցին, որ տղան անգիտակից վիճակի մէջ է: Հետազօտութիւններէն յետոյ անոնք նկատեցին, որ անոր երկվամետրու հիւսուածքները դուրս կ'ելլէին կաթեթերով (ձկուն երակասեղ, խողովակասեղ): Ոչ մասնագիտական լեզուով ատիկա կը նշանակէ, որ անոր ներքին օրկանները կը քայքայուէին: Բժիշկները ըսին Կրեկին, որ եթէ անոր որդին ապրի, ան կ'ըլլայ բոյսի պէս: Աւելի ուշ անոնք ըսին, որ անոր ուղեղը կը գործէ երեք ամսական մանուկի ուղեղին պէս, իսկ անոր մտաւոր զարգացման գործակիցը հաւասար կ'ըլլայ 0.01-ի:

Եօթ ամիս շարունակ անոր ընտանիքը կ'աղօթէր եւ կը հրաժարէր յանձնուելէ, ի վերջոյ, Ճասթինը յանկարծ արթնցաւ անգիտակից վիճակէն: Հայրը նստած էր անոր անկողինին քով, երբ ատիկա տեղի ունեցաւ, եւ սկսաւ յաջորդաբար հարցումներ տալ որդիին՝ անմիջապէս պատասխաններ ստանալով:

Ճասթինը միջնակարգ ուսում ստացաւ, աւարտեց Լոս Անճելէսի համալսարանը եւ սորվեցաւ Աստուածաշնչեան դպրոցին մէջ՝ ստանալով պատուոյ գիրքեր բոլոր այդ հաստատութիւններուն կողմէն: Ան նոյնիսկ իր դասարանի նախագահն էր միջնակարգ դպրոցին մէջ: Այսօր ան հրաշալի ընտանիք ունի:

«Հայրի՛կ, ես Յիսուսին հետ էի»

Երեք օր յետոյ այն բանէն ետք, երբ Ճասթինը հիւանդանոցէն արձակեցին, Կրեկը նկատեց, որ իր որդիին երեսը կը լուսաւորուի:

– Ի՞նչ կը կատարուի, Ճասթի՛ն,– հարցուց ան:

– Հայրի՛կ, ես Յիսուսին հետ էի,– պատասխանեց Ճասթինը: Երբ հեռատեսիլը իյնկաւ լոգարանին մէջ, ես ոչինչ զգացի: Մեծ հրեշտակ մը բռնեց իմ աջ ձեռքը եւ իմ մարմինէս դուրս հանեց զիս: Մենք թռչեցանք թունելով մը. մեր թռիչքը աւելի ու աւելի կ'արագանար: Հասանք լոյսի արագութեան, մինչեւ որ վայրէջք կատարեցինք Երկնքի փողոցներէն մէկուն մէջ:

Ճասթինը պատմեց իր հօրը, որ երկնքի փողոցները ոսկեպատ չեն. ատոնք պատրաստուած են մաքուր ոսկիէ, եւ ան կը տեսնէր այդ փողոցներուն մէջէն: Երկրի վրայ ոսկին չի կրնար այնքան լիարժէք մաքրուած ըլլալ, որքան Երկինքին մէջ, բայց իր ամենամաքուր վիճակին մէջ ոսկին թափանցիկ է: Նոյնիսկ երկրի վրայ այն յաճախ կ'օգտագործուի պատուհաններու պատրաստման մէջ՝ ատոնց ոսկեգոյն երանգ հաղորդելու համար (այդպէս կը պատրաստէին հին տիեզերագնացներու սաղաւարտներու ապակիները, որոշ օդանաւներու մէջ՝ օդաչուններու խցիկներու պատուհանները, նաեւ՝ որոշ շէնքերու պատուհանները):

Ճասթինը պատմեց, որ առաջին մարդիկ, որոնք ողջունեցին զինք այդ երկնային փողոցին մէջ, իրենց մահացած բարեկամներն էին: Ան տուաւ այդ մարդոց անունները, թէւ երբեք չէր հանդիպած անոնցմէ մէկ քանիին, եւ չէր գիտեր անոնց անունները (անոր մայրը եւ հայրը ճանչցան այդ մարդիկը): Այդ խումբին մէջ կ'իւն մը կար, որուն անունը Ֆիլիս էր: Ան իրենց դրացին էր: Ճասթինին մայրը աղօթած էր անոր հետ եւ առաջնորդած էր զինք Յիսուսին՝ Ճասթինի ելեկտրահարումէն մէկ ամիս առաջ: Այդ կ'իւնը մահացած էր Յիսուսը ընդունելէն երկու շաբաթ յետոյ:

Ճասթինը կը խօսէր այդ մարդոց հետ, երբ յանկարծ ինչ որ ծայներ լսեց, եւ զինք շրջապատող մարդիկ սկսան հեռանալ. ան տեսաւ Յիսուսը:

Տէրը տարաւ Ճասթինը երկնային շրջագայութեան: Երկնային քաղաքին մէջ շատ փողոցներ եւ շէնքեր կային: Այն իսկապէս մեծ էր: Ծաղիկները, խոտը եւ նոյնիսկ քարերը կենդանի էին եւ ներդաշնակ կերպով կ'երգէին: Ճասթինը ըսաւ, որ կը թուար՝ ատոնք զԱստուած կը փառաբանէին: Երբ ան իր ոտքը որեւէ խոտի կամ ծաղիկի վրայ կը դնէր, այն չէր վնասուէր, այլ անմիջապէս կը վերադառնար իր նախկին տեսքին: Ճասթինը նկատեց, որ բոլոր գոյները արտայայտիչ եւ վառ էին՝ շատ աւելի վառ, քան երկրի վրայ: Այդտեղ նոյնիսկ կային այնպիսի գոյներ, որոնք ան երբեք չէր տեսած: Ան նոյնպէս արտօնութիւն ունեցաւ տեսնելու իր մօր, հօր, եղբօր եւ քրոջ առանձնատուները:

Այդ ամէնէն յետոյ անոր մեծ ցնցում կը սպասուէր. Յիսուս ըսաւ, որ ինքը պէտք է երկիր վերադառնար: Ճասթինը չէր ուզեր հեռանալ Երկն-

քէն, բայց Յիսուսը տարաւ զինք տեղ մը, ուր քող մը վեր քաշեց: Ճասթինը տեսաւ, որ իր հայրը ետ կը կանչէր զինք: Յիսուս ըսաւ.

– Ան քու հայրն է եւ քեզ ետ կանչելու իշխանութիւն ունի:

Աւարտելով իր պատմութիւնը՝ Ճասթինը խնդրեց հորմէն, որպէսզի ետ չկանչէ զինք, եթէ ինքը կրկին մահանայ: Երբ Կրեկը պատմեց ինծի այդ մասին, աստիկա զուարճալի թուաց ինծի: Երկինքը այն աստիճան զերագանց է երկրէն, որ, ինչպէս ես պարզեցի, այն մարդիկ, որոնք ճաշակած են այն, միշտ մեծ դժուարութեամբ ետ վերադարձած են:

Պօղոսը նոյնպէս այդ պատճառով ներքին պայքար ունէր: Ան կը գրէ այդ մասին Փիլիպպէի եկեղեցւոյ. «Ես կը փափաքիմ եւ կ'ուզեմ հեռանալ (ազատիլ այս աշխարհէն, մեկնիլ) եւ ըլլալ Քրիստոսի հետ, որովհետեւ աստիկա շատ, շատ աւելի լաւ է» (Փիլիպպեցիս 1.23, AMP): Ոչ թէ ուղղակի լաւ է, այլ՝ շատ, շատ աւելի լաւ է: Պօղոսը ճաշակած էր Աստուծոյ քաղաքը եւ կը կամենար վերադառնալ հոն, բայց ան որոշեց մնալ՝ Աստուծոյ թագաւորութեան օգուտին համար:

Հետագային Ճասթինը պատմեց իր հօրը, որ երբ Երկինքն էր, տասը տարեկան չէր: Ան չափահաս տղամարդու մարմին ունէր: Շատերը, ինչպէս եւ Ճասթինը, կը հաւատան, որ յայտնուելով մեր փառաւորուած մարմիններուն մէջ՝ բոլորս երեսուներեք տարեկան պիտի ըլլանք: Ատիկա տրամաբանական կը թուայ, քանի որ այդ տարիքին Յիսուս խաչուեցաւ, եւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Այո՛, թանկագին ընկերներ, մենք արդէն Աստուծոյ զաւակներ ենք եւ չենք կրնար նոյնիսկ պատկերացնել, թէ ինչպիսին կ'ըլլանք, երբ Քրիստոսը վերադառնայ: Բայց հաստատ գիտենք, որ երբ Ան գայ, մենք կ'ըլլանք Անոր նման» (Ա. Յովհաննէս 3.2, NLT):

Ահա միայն մէկը այն բազմաթիւ պատմութիւններէն, որոնք ես կրնայի պատմել: Ինչպէս եւ Աստուծոյ Խօսքը, այն ցոյց կու տայ, որ Երկինքը իրական է: Անոնք, որոնք հաւատարմօրէն կը ծառայեն Յիսուսին, մուտք կը գործեն այդ քաղաքը, երբ երթան այս երկրէն:

Հոգիի, անծի եւ մարմինի փրկութիւնը

Ինչպէս արդէն նշեցի, մարդու հոգին նոր արարած կը դառնայ այն պահուն, երբ ան կ'ընդունի Յիսուսը՝ որպէս իր Տէրը: Ան ակնթարթօրէն կը վերստեղծուի՝ Յիսուսի նմանութեամբ: Յովհաննէս առաքեալը կը հաստատէ այս փաստը. «Ինչպէս Ան է, այնպէս ալ մենք ենք *այս աշխարհին մէջ*» (Ա. Յովհաննէս 4.17): Ինչպէս կը տեսնէք, Յովհաննէսը կը դիմէ հաւատացեալներուն, որոնք հոս՝ երկրի վրայ են, ոչ թէ անոնց,

որոնք արդէն գացած են՝ իրենց վարձատրութիւնը ստանալու համար: Այն մարդը, որ ճշմարտապէս վերստին ծնած է, կատարեալ կը դառնայ Աստուծոյ Հոգիով հոս եւ հիմա:

Անմիջապէս մեր հոգիին փրկութենէն յետոյ կը սկսի մեր անձի փրկութեան ընթացքը: Ինչպէս արդէն նշեցինք, անձը բաղկացած է մտքէն, կամքէն եւ զգացումերէն: Մեր անձը կը փրկուի կամ կը վերափոխուի Աստուծոյ Խօսքով եւ Աստուծոյ Խօսքին հնազանդելով: Յակոբոս առաքեալը կը հաստատէ ասիկա՝ ըսելով. «Ուստի, իմ սիրելի եղբայրներ... ամէն աղտեղութիւն եւ չարութեան առաւելութիւնը մէկ կողմ ձգեցէ՛ք եւ խոնարհութեամբ ընդունեցէ՛ք *ծեր մէջ սերմուած խօսքը*, որ կրնայ *ծեր հոգիները* (կամ՝ անձերը) *սպրեցնել*: Բայց խօսքը *ընձի եղէք*, եւ ոչ միայն լսողներ՝ ձեր անձերը խաբելով» (Յակոբոս 1.19, 21,22): Կարելոր է նշել, որ Յակոբոսը անձի փրկութեան մասին իր խօսքը կ'ուղղէր *եղբայրներուն*, ոչ թէ անհաւատներուն: Ան կը շեշտադրէր խօսքին ե՛ւ լսելը, ե՛ւ կատարելը:

Անձը՝ մարդու միակ մասն է, որուն փրկուած ըլլալու աստիճանը մենք կ'որոշենք: Մենք կրնանք արագացնել մեր անձի փրկութեան գործընթացը՝ լսելով Աստուծոյ Խօսքը եւ հնազանդելով: Այնուամենայնիւ, մենք կրնանք նաեւ դանդաղեցնել այդ գործընթացը՝ անտեսելով այն, ինչ որ Աստուած ըսած է: Մեր անձերու վերափոխումը անչափ կարելոր է՝ մեր հաւատքի ընթացքը բարեյաջող աւարտելու համար:

Վերջապէս, մենք ունինք եւս մէկ մաս, որ պէտք է փրկուի՝ մեր մարմինները: Ուշադրութեամբ կարդացէք այն, ինչ որ Պօղոսը կը գրէ այս մասին:

«Որովհետեւ մենք գիտենք, որ երբ այս երկրային վրանը, որուն մէջ մենք կ'ապրինք, քանդուի (երբ մենք մահանանք եւ ձգենք մեր մարմինները), մենք տուն կ'ունենանք Երկինքը՝ յաւիտենական մարմին՝ պատրաստուած մեզի համար անծամբ Աստուծոյ կողմէն, եւ ոչ թէ մարդոց ձեռքերով: Մենք կը յոգնինք մեր այս մարմիններուն մէջ եւ կը փափաքինք այն օրուան, երբ կը հազնինք մեր երկնային մարմինները՝ նոր հագուստի պէս: Որովհետեւ մենք չենք ըլլար հոգիներ՝ առանց մարմիններու, այլ՝ նոր երկնային մարմիններ կը հազնինք: Մեր մահացող մարմինները կը դրդեն մեզ՝ հառաչանքներ եւ հոգոցներ հանելու, բայց այնպէս չէ, որ կ'ուզենք մահանալ եւ ընդհանրապէս մարմին չունենալ: Մենք կ'ուզենք մտնել մեր նոր մարմիններուն մէջ, որպէսզի այս մահացող մարմինները կլանուին յաւիտենական կեանքով: Ինքը՝ Աստուած, ասոր համար պատրաստած է մեզ, եւ որպէս երաշխիք՝ տուած է մեզի Իր Սուրբ Հոգին: Այնպէս որ, մենք միշտ վստահ ենք, թէւ գիտենք, որ քանի տակաւին կ'ապրինք այս մարմիններուն մէջ, մենք Տի-

րոջ հետ չենք: Ահա թէ ինչու կ'ապրինք հաւատալով, եւ ոչ թէ տեսնելով: Այո՛, մենք լիովին վստահ ենք եւ աւելի կը ցանկայինք հեռանալ այս մարմիններէն, քանի որ այդ պարագային մենք Տիրոջ հետ կ'ըլլայինք» (Բ. Կորնթացիս 5.1-8, NLT):

Այս խօսքերը մեծ յոյս կու տան մեզի եւ նոյնիսկ կը մաքրեն մեր անծերը: Ուշադրութիւն դարձուցէք, որ Պօղոսը պարզապէս չէր նշեր այն փաստը, որ մենք յաւիտենական մարմիններ կ'ունենանք, այլ կը հիմնուի ատոր վրայ: Մէկ այլ հատուածի մէջ ան կը գրէ. «Որովհետեւ այս կործանուողը պէտք է հագնի անկործանելին, եւ այս մահացողը՝ անմահութիւնը» (Ա. Կորնթացիս 15.53, NIV): Մեր մարմինները կ'ըլլան ճիշդ Յիսուսի մարմինին պէս, որովհետեւ Աստուծոյ Խօսքին մէջ գրուած է. «...Անոր յարութեանը... նման կ'ըլլանք» (Հռովմայեցիս 6.5), եւ «Սիրելիներ՛, հիմա մենք Աստուծոյ որդիներ ենք, եւ տակաւին յայտնի չէ, թէ ի՞նչ պիտի ըլլանք: Բայց գիտենք, թէ երբ Ան յայտնուի, Անոր պէս պիտի ըլլանք» (Ա. Յովհաննէս 3.2):

Տեսնենք, թէ ինչպիսին էր Յիսուսի մարմինը յարութենէն յետոյ: Մենք կ'ունենանք Անոր մարմինին բոլոր յատկանիշները, երբ տեղի ունենայ մեր մարմնի փրկութիւնը: Եկէք սկսինք այն բանէն, թէ ինչ կատարուեցաւ ճիշդ գերեզմանին քով այն առաւօտ, երբ Ան յարութիւն առաւ: Մարիամ Մագդաղենացին առաջինը յայտնաբերեց դատարկ գերեզմանը եւ լացաւ՝ մտածելով, որ Տիրոջ մարմինը գողցած էին:

«[Ան] ...ետին դարձաւ եւ տեսաւ Յիսուսը, ու չէր գիտեր, թէ Յիսուսն է: Յիսուս անոր ըսաւ. «Ո՛վ կին, ինչո՞ւ կու լաս, ո՞վ կը փնտռես»:

Ան ալ, կարծելով, թէ պարտիզպանն է, ըսաւ Անոր. «Տէ՛ր, եթէ դուն վերցուցիր Ձինք, ըսէ ինձի, ո՞ւր դիր զայն, որպէսզի ես գԱնիկա առնեմ»» (Յովհաննէս 20.14,15):

Յիսուսի տեսքը չէր տարբերեր պարզ մարդու տեսքէն: Ան նման չէր երեւակայական եւ անիրական ֆիլմերուն մէջ ներկայացուած այլնորակայիններուն: Մարիամը չճանչցաւ Ձինք, որովհետեւ ան չէր համարձակեր հաւատալու, որ Յիսուսը ողջ էր: Ան տեսաւ, թէ ինչպէս Յիսուսին դաժանաբար սպաննեցին, իսկ յետոյ թաղեցին: Միայն, երբ Յիսուս անձամբ խօսեցաւ անոր հետ, ան հաւատաց, որ իր առջեւ կեցած էր Տէրը: Ան շփոթեց Յիսուսը պարտիզպանին հետ: Այնպէս որ, Անոր մարմինը շատ կը նմանի մեր մարմինին :

Յիսուսին մարմինը իր տեսքով չէր տարբերեր սովորական մարդու մարմինէն: Այնուամենայնիւ, մենք պէտք է հարցնենք՝ Մարիամը տեսիլքով կը տեսնէր Անոր հոգի՞ն, թէ՞ Ան իսկապէս մարմին ունէր: Այս հարցը

պարզօրէն կը պատասխանուի մէկ ուրիշ պատմութեան մէջ, որուն մէջ Յիսուս յայտնուեցաւ Իր աշակերտներուն: Ան ըսաւ. «Ինչո՞ւ խռոված էք: Ինչո՞ւ սրտերնուդ մէջ խորհուրդներ կ'ելլեն: Տեսէ՞ք ձեռքերս եւ ոտքերս, որ Ես Ինքս եմ. շօշափեցէ՛ք Ձիս ու տեսէ՛ք, վասնզի հոգին մարմին ու ոսկոր չունենար, մինչդեռ կը տեսնէք, թէ Ես ունիմ» (Ղուկաս 24.38,39):

Յիսուսը մարմին եւ ոսկորներ ունէր: Ուրեմն, մենք նոյնպէս պիտի ունենանք ատոնք: Բայց ուշադրութիւն դարձուցէք, որ Յիսուս ոչինչ ըսաւ արեան մասին: Պատճառը այն է, որ Անոր արիւնը թափուեցաւ Աստուծոյ Շնորհքի գահին առջեւ: Այժմ, իմ համոզմամբ, Անոր երակներուն մէջ կը հոսի Աստուծոյ փառաւոր կեանքը:

Յիսուս նոյնպէս կրնար կերակուր ուտել: Գրուած է. «Եւ տակաւին իրենց ուրախութենէն չէին հաւատար եւ զարմանքի մէջ էին, ըսաւ անոնց. «Ուտելիք մը ունի՞ք հոս»: Անոնք ալ կտոր մը խորոված ձուկ ու մեղրախորիսխ տուին Իրեն: Առաւ, կերաւ անոնց առջեւ» (Ղուկաս 24.41–43):

Յիսուս մէկ անգամ չէ, որ կերաւ Իր աշակերտներու ներկայութեամբ: Կան եւս երկու գրի ամբողջ դէպքեր. մէկը՝ մարդու մը տունը, որուն Ան հանդիպեցաւ Էմմաուսի ճանապարհին, եւ միւսը՝ երբ Ան ծովուն քով նախաճաշ պատրաստեց Իր տասնմէկ աշակերտներուն համար: Կը նշանակէ՝ մենք պիտի ուտենք մեր փառաւոր մարմիններով:

Իր փառաւորութեամբ մարմինով Յիսուսը կրնար խօսիլ, երգել, քալել, ամբողջութեամբ բռնել եւ այլն՝ ինչպէս պարզ մարդ, բայց Ան նոյնպէս կրնար անցնիլ պատերուն մէջէն եւ մէկ ակնթարթի մէջ անհետանալ:

Թերեւս հարցնէք. «Ան մարմին եւ ոսկորներ ունէր, բայց կրնար անցնիլ պատերուն մէջէն եւ անհետանա՞լ»: Անշուշտ: Կարդացէ՛ք, թէ ինչ կը գրէ Յովհաննէսը. «Այդ երեկոյ՝ շաբթուան ամառիկն օրը, աշակերտները հաւաքուած էին փակ դռներու ետեւը, որովհետեւ կը վախճային հրեայ ամառնորդներէն: Յանկարծ Յիսուսը կեցաւ հոն՝ անոնց միջեւ» (Յովհաննէս 20.19, NLT):

Իւրայիմներու հետ այս հանդիպման ընթացքին Յիսուս խնդրեց Թովմասէն՝ դնել մատը Իր ձեռքերու ափերուն մէջ, եւ մտցնել ձեռքը Իր կողին մէջ: Կրկին մենք յստակօրէն կը տեսնենք, որ Յիսուս մարմին եւ ոսկորներ ունէր: Այդ պարագային, ինչպէ՞ս Ան յանկարծակի կեցաւ անոնց միջեւ, թէի դռները գոցուած էին: Ան մտաւ պատին մէջէն եւ պարզապէս յայտնուեցաւ: Բացի այդ՝ Ան դիւրին կ'անհետանար, որուն մասին նոյնպէս գրուած է: Գրուած է, որ Ան հաց կիսեց այն մարդոց հետ, որոնց հանդիպեցաւ Էմմաուսի ճանապարհին, «Եւ անոնց աչքերը բացուեցան, եւ Ձինք ճանչցան: Եւ Ինք անոնցմէ աներեւոյթ եղաւ» (Ղուկաս 24.31):

Մենք նոյնպէս պիտի կարենանք անհետանալ եւ յայտնուիլ մէկ այլ վայրի մէջ մեր յարութիւն առած մարմիններով: Ասիկա կը բացատրէ, թէ մենք ինչպէս կրնանք մեծ տարածութիւններ անցնիլ նոր երկնքի եւ նոր երկրի ժամանակ: Այս ունակութիւնը անհրաժեշտ կ'ըլլայ մեզի, որովհետեւ Աստուծոյ քաղաքը 2250 քիլօ մետր երկարութիւն եւ նոյնքան լայնութիւն ունի, եւ բացի այդ՝ մենք կարիք կ'ունենանք ճամբորդելու դէպի միւս գալակտիկաները (աստղային ամբողջական համակարգերը): Նոյնպէս պիտի կարենանք թռչիլ օդին մէջ. յիշեցէ՛ք, որ Յիսուս վեր ելաւ դէպի Երկինք՝ Իր աշակերտներուն հետ քառասուն օր շարունակ հաղորդակցելէն յետոյ: Այն բաներէն մէկը, որ ճասթինը պատմած էր իր հօրը (այլ մարդիկ, որոնք եղած են Երկինք, եւ որոնց ես կը ճանչնամ, նոյնը կը պատմեն) այն էր, որ մարդը կրնայ քալել, սաւառնիլ կամ ակնթարթօրէն մէկ ուրիշ վայր տեղափոխուիլ: Իր շրջագայութեան ընթացքին ճասթինը երբեմն կը քալէր, իսկ երբեմն կը սաւառնէր՝ մէկ վայրէն միւսը հասնելու համար:

Քրիստոսի հազարամեայ թագաւորութիւնը

Մենք պէտք է խօսինք Աստուծոյ քաղաքի տեղափոխման մասին, բայց նախ՝ անդրադառնանք աստոր նախորդող իրադարձութիւններուն: Եկեղեցւոյ ժամանակաշրջանը պիտի աւարտի եօթնամեայ Մեծ պատուհասով: Անօրէնութեան մարդը՝ հակաքրիստոսը, ի յայտ պիտի գայ եւ շատերը պիտի մոլորեցնէ: Ան պիտի հակառակի այն ամէնուն, ինչ որ Աստուած կը կոչուի եւ երկրպագութիւն կը ստանայ, եւ կը մեծարէ ինքզինքը: Ան պիտի հալածէ սուրբերը եւ շատ ազգեր պիտի առաջնորդէ մեծ խաւարի եւ Աստուծոյ դէմ ապստամբութեան մէջ:

Այս ժամանակաշրջանին Տէրը պիտի գայ Իր սուրբերուն ետեւէն: Ոմանք կը հաւատան, որ ասիկա տեղի պիտի ունենայ նախքան այդ եօթնամեակի սկիզբը, միւսները՝ աստոր կիսուն, իսկ ոմանք՝ աստոր վերջաւորութեան: Այս գիրքին մէջ չեմ անդրադառնար այդ հարցին: Կարելորդ այն է, թէ արդեօ՞ք մենք պատրաստ ենք:

Քանի մը անգամ Նոր կտակարանին մէջ Պօղոսը կը խօսի Եկեղեցւոյ «յափշտակուելուն» մասին: Այդ հատուածներէն մէկուն մէջ գրուած է հետեւեալը.

«Կասնզի Տէրը Իր ազդարարութեան հրամանով, հրեշտակապետին ծայնով ու Աստուծոյ փողովը Երկինքէն պիտի իջնէ, եւ Քրիստոսով մեռածները առաջ յարութիւն պիտի առնեն, ետքը մենք ալ, որ որջ մնացած ենք, անոնց հետ պիտի յափշտակուինք՝ ամպերով Տիրոջը առջեւ ելլելու՝ օդին մէջ եւ այնպէս յափտեան Տիրոջ հետ պիտի ըլլանք» (Ա. Թեսաղոնիկեցիս 4.15–17):

Խօսքը հոս Քրիստոսի երկրորդ գալստեան մասին չէ, որովհետեւ այս անգամ Քրիստոսը պիտի չի գայ երկիր, այլ պիտի հանդիպի Իր հաւատարիմներուն հետ ամպերուն մէջ: Երկրորդ գալուստը տեղի պիտի ունենայ եօթնամեայ Մեծ պատուհասի աւարտին, երբ Յիսուս վերադառնայ սպիտակ ձիով՝ առաջնորդելով երկնային բանակները կամ Իր սուրբերու բազմութիւնը իրենց թիւով (տե՛ս Յուդա 14):

Հակաքրիստոսը, սուտ մարգարէն, համաշխարհային առաջնորդները եւ ազգերու բանակները պիտի հաւաքուին, որպէսզի կռուին Տիրոջ եւ Անոր բանակին դէմ: Այդ միօրեայ պայքարին մէջ Յիսուսը պիտի զարնէ զանոնք Իր սուրով, եւ երկնքի թռչունները պիտի ուտեն անոնց մարմինները: Այս իրադարձութիւնը կը կոչուի Արմազեդոն, քանի որ այն տեղի պիտի ունենայ Մեգիդոյի դաշտավայրին մէջ, որ կը գտնուի Կարմեդոս սարէն մինչեւ Երուսաղէմ գտնուած տարածքին մէջ (տե՛ս Յայտն. 16.16 եւ 19.11–21):

Ամբողջ աշխարհին մէջ պիտի ըլլան բազմաթիւ մարդիկ, որոնք ո՛չ պիտի ապստամբին Տիրոջ դէմ այդ պատերազմին մէջ, ո՛չ ալ պիտի նուիրուին հակաքրիստոսին: Շատ աստուածաբաններ կը հաւատան, որ անոնք կենդանի պիտի մնան եւ պիտի ապրին միւս ժամանակաշրջանին մէջ, որ սովորաբար պիտի կոչուի Քրիստոսի հազարամեայ թագաւորութիւն: Անոնք պիտի մնան իրենց երկրներուն մէջ եւ ենթակայ պիտի ըլլան Քրիստոսի համաշխարհային իշխանութեան: Անոնք պիտի ունենան բնական մարմիններ եւ պիտի շարունակեն բնակեցնել երկիրը:

Այնպէս որ, ըստ էութեան, երկիրը պիտի բնակեցուի երկու տեսակի մարդոցով՝ որոնք կենդանի պիտի մնան Արմազեդոնի պատերազմէն յետոյ, եւ սուրբերով, որոնք պիտի վերադառնան Յիսուսին հետ: Սուրբերը պիտի ունենան փառաւորուած մարմիններ՝ Յիսուս Թագաւորի նմանութեամբ, եւ պիտի իշխեն Անոր հետ երկրի վրայ: Դժվար չէ հասկնալ, թէ ինչպէս այս երկու տեսակի մարդիկ պիտի հաղորդակցին: Ատիկա տեղի պիտի ունենայ նոյն կերպով, ինչպէս որ Յիսուս կը հաղորդակցէր Իր հետեւորդներուն հետ Իր յարութենէն յետոյ: Փառաւորուած սուրբերը պիտի կարենան խօսիլ, քալել, ուտել եւ հաղորդակցիլ բնական մարմիններ ունեցող մարդոց հետ:

Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ այդ ընթացքին պիտի ըլլայ համաշխարհային խաղաղութիւն, կամ, աւելի ճիշդ՝ տիեզերական խաղաղութիւն, քանի որ սատանան եւ անոր դէտերը պիտի կապուին հազար տարիով: Պիտի չըլլան պատերազմներ, նախապաշարումներ, ատելութիւն, ամօթ, յանցագործութիւններ, հիւանդութիւններ եւ այլն, քանի որ բոլոր ազգերը պիտի դառնան Աստուծոյ: Միքեայ մարգարէն կը գրէ.

«Վերջին օրերուն Տիրոջ տաճարը Երուսաղէմի մէջ պիտի դառնայ ամենակարեւոր վայրը երկրի վրայ: Մարդիկ ամբողջ աշխարհէն պիտի գան հոն՝ երկրպագելու համար: Շատ ազգեր պիտի գան եւ պիտի ըսեն. «Եկէ՛ք բարձրանանք Տիրոջ լեռը, դէպի Իսրայէլի Աստուծոյ տաճարը: Այդտեղ Ան պիտի սորվեցնէ մեզի Իր ճանապարհները, որպէսզի մենք հնազանդինք Անոր»: Որովհետեւ այդ օրերուն Տիրոջ ուսմունքը եւ Անոր Խօսքը դուրս պիտի գան Երուսաղէմէն: Տէրը միջազգային վէճեր պիտի լուծէ: Բոլոր ազգերը պիտի վերածեն իրենց թուրերը խոփերու, եւ իրենց նիզակները՝ գերանդիներու: Բոլոր պատերազմները պիտի դադրին, եւ զօրավարժանքներուն վերջ պիտի տրուի: Ամէն մէկը պիտի ապրի հանդարտօրէն իր տան մէջ՝ խաղաղութեամբ եւ բարգաւաճելով, որովհետեւ վախճալու ոչինչ պիտի ըլլայ: Ամենակարող Տէրը խոստացած է ասիկա» (Միքեայ 4.1–4, NLT):

Երկրի վրայ համաշխարհային բարգաւաճում պիտի սկսի. միջազգային ֆինանսական համակարգը ապահով պիտի ըլլայ, քանի որ ազգերը պիտի պահեն Աստուծոյ օրէնքները: Ատիկա զարմանալի ժամանակ պիտի ըլլայ:

Մեծ Սպիտակ գահի դատաստանը

Հազար տարուան ակարտէն յետոյ սատանան կարճ ժամանակով պիտի արձակուի բանտէն: Ան բոլոր ազգերը խաբելու թոյլտուութիւն պիտի ստանայ: Ասիկա չի վերաբերիր փառաւորուած մարմին ունեցող սուրբերուն, այլ միայն՝ բնական մարմին ունեցող ազգերուն՝ այն մարդոց, որոնք մնացած են Արմագեդոնէն յետոյ եւ անոնց, որոնք ծնած են Հազարամեայ թագաւորութեան ընթացքին:

Ապստամբները մէկտեղ պիտի հաւաքուին եւ պիտի շրջապատեն Երուսաղէմ քաղաքը՝ պատերազմի համար, եւ այդ ժամանակ Աստուծոյ կրակը պիտի իջնէ երկնքէն եւ պիտի սպառէ զանոնք: Սատանան պիտի նետուի կրակով եւ ծծումբով վառող լիճը եւ պիտի չարչարուի օր ու գիշեր՝ յաւիտեանս յաւիտենից: Ան այլեւս ազատ չ'արձակուի (տե՛ս Յայտն. 20.7–10):

Ատոր անմիջապէս պիտի հետեւի Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Դժոխքը (Հատէսը) պիտի տայ բոլոր սերունդներու մեռելներուն՝ սկսած Ադամի օրերէն մինչեւ այդ վերջին պատերազմը: Որոնք մուտք չգործեցին Եհովայի ուխտին մէջ Հին ուխտի ժամանակաշրջանին մէջ եւ ատկէ յետոյ չհնազանդեցան Յիսուսի իշխանութեան, պիտի կենան Թագաւորին առջեւ եւ հաշիւ պիտի տան, ինչպէս որ մենք տեսանք Անկախի, Խաբուածի եւ Յուսահատ սրտի դատաստաններուն մէջ: Ամէն մարդ, որուն անունը գրուած չէ Կեանքի գիրքին մէջ, յաւիտեան պիտի նետուի Կրակի լիճը՝ սատանային եւ անոր դեւերուն հետ:

Նոր երկինքը եւ նոր երկիրը

Հազիւ որ ներկայիս գոյութիւն ունեցող երկինքը եւ երկիրը կրակով մաքրուին (տե՛ս Բ. Պետր. 3.10–13), ի յայտ պիտի գան նոր երկինքը եւ նոր երկիրը: Յովհաննէս առաքեալը կը գրէ. «Ահա նոր երկինք մը ու նոր երկիր մը տեսայ, վասնզի առաջին երկինքը ու առաջին երկիրը անցան» (Յայտնութիւն 21.1):

Յովհաննէս առաքեալը կը շարունակէ՝ նկարագրելով, որ Նոր Երուսաղէմը պիտի իջնէ վերէն եւ յաւիտեան երկրի վրայ պիտի ըլլայ: Այս քաղաքը կը կոչուի Գառան կինը կամ հարսնցուն, որովհետեւ այն պիտի ըլլայ Տիրոջ բոլոր փրկուածներուն տունը՝ սկսած Ադամէն մինչեւ այն մարդիկ, որոնք ընդունուեցան փառքի մէջ Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ: Յովհաննէսը ընդհանուր կերպով կը նկարագրէ Նոր Երուսաղէմը.

«Եւ ան տարաւ ինծի Հոգիով՝ դէպի մեծ, բարձր լեռ մը, եւ ցոյց տուաւ ինծի Սուրբ քաղաքը՝ Երուսաղէմը, որ կ'իջնէ Երկնքէն՝ Աստուծմ: Այն լեցուած էր Աստուծոյ փառքով եւ կը պսպղար թանկարժէք քարի պէս, եւ բիրտեղեայ պարգութիւն ունէր՝ յասպիսի պէս: Ատոր պարիսպները լայն եւ բարձր էին, տասներկու դարպասներով, որոնք կը հսկուէին տասներկու հրեշտակներու կողմէն... Ամէն կողմէն՝ արեւելքէն, հիւսիսէն, հարաւէն եւ արեւմուտքէն երեք դարպասներ կային...

Այն հրեշտակը, որ կը խօսէր հետս, ձեռքին մէջ ոսկիէ չափման փայտ ուներ, որպէսզի չափէր քաղաքը, դարպասները եւ պարիսպը: Երբ ան չափեց այն, պարզեց, որ այն քառակուսի էր՝ նոյնքան լայն, որքան եւ երկար: Իրականութեան մէջ, այն խորանարդի ձեւ ուներ, որովհետեւ ատոր երկարութիւնը եւ լայնութիւնը եւ բարձրութիւնը 2250 քիլօմէթր էր՝ ամէն կողմէն: Ատկէ յետոյ ան չափեց պարիսպները եւ պարզեց, որ 65 մէթր հաստութիւն ունէին (հրեշտակը սովորական մարդկային չափման միաւոր կ'օգտագործէր):

Պարիսպը կառուցուած էր յասպիսէն, եւ քաղաքը մաքուր ոսկիէ էր՝ ապակիի պէս պարզ: Քաղաքի պարիսպը կառուցուած էր հիմնաքարերու վրայ, որոնք ներգարդարուած էին տասներկու թանկարժէք քարերով... Տասներկու դարպասները մարգարիտներէ էին՝ ամէն մէկ դարպաս մէկ մարգարիտէ մը: Եւ գլխաւոր փողոցը մաքուր ոսկի էր՝ ապակիի պէս պարզ» (Յայտնութիւն 21.10–21, NLT):

Այս քաղաքը յափշտակիչ է. այն հրաշալիք է, որուն պէս մենք ոչինչ տեսած ենք այս երկրին մէջ: Այն հոյակապ, պայծառ եւ պերճաշուք պիտի ըլլայ: Ատոր մէջ ոչ մէկ ապականութիւն պիտի ըլլայ, որովհետեւ այն ամբողջովին մաքուր է:

Յովհաննէսը կը շարունակէ իր նկարագրութիւնը.

«Եւ հրեշտակը ցոյց տուաւ ինծի մաքուր գետ մը՝ կեանքի ջուրով, բիրեղի պէս պարզ, որ կը հոսէր Աստուծոյ եւ Գառնան գահէն՝ անցնելով գլխաւոր փողոցի մէջտեղէն: Գետի ամէն կողմէն կ'աճէր մէկական կեանքի ծառ, որ տասներկու պտուղ կը բերէր՝ ամէն ամիս թարմ պտուղ տալով: Տերեւները կ'օգտագործուէին որպէս դեղամիջոց՝ ազգերը բժշկելու համար:

Այլեւ ոչ մէկ անիծուած բան կ'ըլլայ: Որովհետեւ Աստուծոյ եւ Գառնան գահը այդտեղ պիտի ըլլայ, եւ Անոր ծառաները պիտի երկրպագեն Անոր: Եւ անոնք պիտի տեսնեն Անոր երեսը, եւ Անոր անունը գրուած պիտի ըլլայ անոնց ճակատներուն: Եւ այդտեղ պիտի ջըլլայ գիշեր. լոյսերու կամ արեւի կարիք պիտի չըլլայ, որովհետեւ Տէր Աստուած պիտի լուսաւորէ զանոնք: Եւ անոնք պիտի իշխեն յաւիտեանս յաւիտենից» (Յայտնութիւն 22.1–5, NLT):

Ուշադրութիւն դարձրուցէ՛ք՝ Աստուածաշունչը յստակ կը յայտնէ, որ մենք պիտի տեսնենք Աստուծոյ երեսը: Մենք պիտի տեսնենք այն, ինչ որ Մովսէսը կը փափաքէր, եւ ինչէն մերժուեցաւ: Որքա՛ն զարմանալի եւ ոգեշնչող է ատիկա:

Նոյնպէս, ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ կեանքի ծառի տերեւները բժշկութիւն պիտի բերեն *ազգերուն*: Այս պնդումը շարք մը հետաքրքրական հարցեր կը յառաջացնէ: Ինչպիսի՞ մարդոցմէ բաղկացած պիտի ըլլան այդ ազգերը, քանի որ սուրբերը պիտի բնակին Նոր Երուսաղէմի մէջ: Որո՞նք վրայ սուրբերը պիտի իշխեն յաւիտեանս յաւիտենից: Արդե՞՞ք այս ընթացքին պիտի ըլլան բնական կերպով ծնած մարդիկ: Եսայեան կը պատասխանէ այս հարցումին:

«Ահա Ես կը ստեղծեմ նոր երկինք եւ նոր երկիր՝ այնքա՛ն հրաշալի, որ ոչ ոք այլեւ կը մտածէ նախկիններու մասին: Ուրա՛խ եղէ՛ք. յաւիտեան ցնծացէ՛ք Իմ ստեղծագործութեան մէջ: Եւ ահա, Ես պիտի ստեղծեմ Երուսաղէմը՝ որպէս երջանկութեան վայր: Անոր ժողովուրդը [փրկուած սուրբերը] ուրախութեան աղբիւր պիտի ըլլան: Ես պիտի ցնծամ Երուսաղէմի մէջ եւ պիտի լեցուիմ բերկրանքով Իմ ժողովուրդին համար: Եւ լացի եւ ողբի ծայն այլեւս պիտի չլսուի» (Եսայեայ 65.17–19, NLT):

Այժմ Եսայեան կը խօսի Երուսաղէմէն դուրս գտնուող մարդոց մասին.

«Երեխաները այլեւս չեն մահանար ընդամէնը քանի մը օրուան մէջ: Մեծահասակները այլեւս չեն մահանար՝ առանց օրերը լրացնելու: Մարդիկ այլեւս ծեր չեն համարուիր հարիւր տարեկանին: Միայն մեղաւորները կը մահանան այդքան երիտասարդ տարիքին: Այդ օրերուն մարդիկ կ'ապրին իրենց կառուցած տուներուն մէջ եւ կ'ուտեն իրենց խաղողի այգիներու պտուղէն: Անցեալի նման չ'ըլլար, երբ զաւթիչները կը խլէին տուները եւ կը գրաւէին խաղողի այգիները: Որովհետեւ Իմ ժողովուրդը

ծառերու պէս երկար պիտի ապրի եւ ժամանակ պիտի ունենայ՝ վայելելու իր աշխատանքի արդիւնքը: Անոնք պարապ տեղը չեն աշխատիր, եւ անոնց երեխաները դատապարտուած չեն ըլլար դժբախտութեան: Որովհետեւ անոնք Տիրոջմէն օրհնուած ժողովուրդ են, եւ անոնց երեխաները նոյնպէս օրհնուած պիտի ըլլան: Ես կը պատասխանեմ անոնց նոյնիսկ՝ մինչեւ անոնց կանչելը: Մինչ անոնք կը խօսին իրենց կարիքներու մասին, Ես կը պատասխանեմ անոնց աղօթքներուն: Գայլը եւ գառը միասին կը կերակրուին: Առիժը խոտ կ'ուտէ՝ եզան պէս: Թունաւոր օծերը այլեւս չեն խայթեր: Այդ օրերուն ոչ ոք կը վնասուի եւ կը կործանի Իմ սուրբ լեռան մէջ: Ես՝ Տէրս, խօսեցայ» (Եսայեայ 65.20–25):

Շատերը սխալմամբ կը վերագրեն այս հատուածը Քրիստոսի հազարամեայ թագաւորութեանը: Այնուամենայնիւ, հոս պարզօրէն գրուած է այն ժամանակաշրջանի մասին, երբ գոյութիւն ունին *նոր երկիրքը եւ նոր երկիրը*: Ուսումնասիրելով եւ՝ Յովհաննէս առաքեալի, եւ Եսայեայ մարգարէի խօսքերը՝ մենք կը տեսնենք, որ այս շրջանին մէջ Աստուծոյ քաղաքէն դուրս ապրող մարդիկ կան: Անոնք կը կառուցեն իրենց տուները յաւիտենութեան մէջ, տիեզերական խաղաղութեան եւ բարգաւաճման պայմաններուն մէջ: Այս մարդիկ չեն կրնար ըլլալ սուրբերը, որոնք կը բնակին Սուրբ քաղաքին մէջ, որովհետեւ անոնք արդէն ունին տուներ՝ կառուցուած անձամբ Յիսուսի կողմէն (տե՛ս Յովհ. 14.2–4):

Ուշադրութիւն դարձուցէք, որ այս մարդիկ երեխաներ պիտի ունենան: Ասիկա նոյնպէս չի կրնար վերաբերիլ փառաւորուած սուրբերուն, քանի որ Յիսուսը պարզ ըսաւ, որ փառաւորուած մարմին ունեցող մարդիկ երեխաներ պիտի չի ծնին, որովհետեւ անոնք չեն ամուսնանար: Ան ըսաւ. «Քանզի յարութեան ատեն ո՛չ կին կ'առնեն, եւ ո՛չ էրկան կը տրուին, հապա՛՜ Երկնքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են» (Մատթէոս 22.30): Ասիկա եւս մէկ փաստ էր, որ Ճասթինը հաստատեց Երկիրքը շրջագայելէն յետոյ:

Այս ազգերը կը բնակեցնեն նոր երկիրը եւ կը հարստացնեն այն՝ ցանելով, հնձելով եւ կառուցելով: Անոնք անխոջընդոտ կերպով պիտի շատնան եւ պիտի լեցնեն երկիրը, ինչպէս Ադամը եւ Եւան, եթէ չըլլար անոնց անկումը:

Ինչպէ՞ս կարելի է տրամաբանօրէն բացատրել ասիկա: Կայ մէկ տարբերակ, որը, թէեւ, կրնայ վիճարկելի ըլլալ. Հազարամեայ թագաւորութեան սկիզբէն յետոյ մարդոց բնական կեանքը պիտի երկարի, որովհետեւ մեր վերջին թշնամին՝ մահը, պիտի կործանի (տե՛ս Ա. Կորնթ. 15.26): Յիսուսը պիտի կործանէ մահուան անէժըը՝ թէ՛ հոգեւոր, թէ՛ միւթական: Այդ իսկ պատճառով, մարդկութիւնը կրնայ ապրիլ մինչեւ այդ Հազարամեայ թագաւորութեան աւարտը:

Հազարամեայ թագաւորութեան աւարտին հնարաւոր է, որ բնական մարմին ունեցող մարդիկ ստանան յաւիտենական կեանքի պարգեւը, եթէ չհաստանքին Աստուծոյ դէմ այն կարճ ժամանակուայ ընթացքին, երբ սատանան ազատ արծակուի: Սաղմոսերգուն կը գրէ. «Ատոր համար ազգերը յաւիտեանս յաւիտենից պիտի փառաբանեն Քեզ» (Սաղմոս 45.17, NLT): Այս տարբերակը կրնայ հաւանական ըլլալ, եթէ այս մարդիկ դառնան այնպիսին, ինչպիսին Ադամն ու Եւան էին՝ մինչեւ անկումը: Ադամը չէր ստեղծուած մահանալու համար, այլ՝ յաւիտեան ապրելու: Այս պարգեւը կորսուեցաւ անոր անհնազանդութեան պատճառով. անոր պատճառով իր ցեղը իյնկաւ մահուան եւ կործանման անէծքի տակ:

Միայն Քրիստոսով փրկուածները, որոնք փառաւորուած մարմիններ ունին, պիտի բնակուին Նոր Երուսաղէմին մէջ: Այնուամենայնիւ, Աստուծոյ խօսքէն կ'երեւայ, որ բնական մարմին ունեցող մարդիկ պիտի կարենան գալ այդ քաղաքը, ճաշակել ատոր պտուղը եւ երկրպագել Տիրոջը: Այս մասին կը գրէ Յովհաննէսը.

«Երկրի ազգերը պիտի քալեն [Նոր Երուսաղէմի] լոյսի մէջ, եւ այս աշխարհի իշխանները պիտի գան եւ պիտի բերեն իրենց փառքը ատոր մէջ: Ատոր դարպասները բնաւ չեն փակուիր օրուան վերջաւորութեան, որովհետեւ գիշեր չկայ: Եւ բոլոր ազգերը այդ քաղաքը պիտի բերեն իրենց փառքը եւ պատիւը» (Յայտնութիւն 21.24–26, NLT):

Սկիզբը մարդը անկում ապրեցաւ՝ տեղի տալով մեղքի գայթակղութեան: Ատոր պատիժը մահն էր՝ ե՛ւ նիւթական, ե՛ւ հոգեւոր, որ կ'աւարտէր յաւիտենական մահով: Այնուամենայնիւ, մարդու անկումը չկասեցուց Աստուծոյ սկզբնական յաւիտենական ծրագիրն այն մասին, որ մարդը պէտք է ապրի այս երկրի վրայ:

Արդեօ՞ք Աստուծոյ ծրագիրը կրնայ ձախողիլ մարդու անհնազանդութեան պատճառով: Ո՛չ: Փոխարէնը, Աստուած վերածեց մարդու պարտութիւնը օրհնութեան՝ Քրիստոսի փրկութեան միջոցով՝ ստեղծելով անկում ապրած մարդկութենէն *փառաւոր երկնային ժողովուրդ*, որ *պիտի կառավարէ* մարդկութիւնը նոր երկրին մէջ: Ասիկա կ'օգնէ մեզի հասկնալ Յիսուսին խօսքերը՝ հաւատարիմ տնտեսին. «Լաւ, բարի ծառայ, որովհետեւ քիչին մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր» (Ղուկաս 19.17): Կարելի՞ է, որ Հազարամեայ թագաւորութեան ժամանակ եւ նոր երկրի յաւիտենական ժամանակաշրջանին մէջ քաղաքներ ըլլան:

Եթէ մարդկութիւնը անկում չապրէր, Աստուած չէր ունենար փառաւորուած մարդոց դասակարգ, որը կ'օգնէր Իրեն՝ յաւիտեանս յաւիտենից կառավարել այս երկիրը եւ տիեզերքը: Ան կանխատեսեց ասիկա Իր յա-

ւիտենական իմաստութեամբ: Ահա թէ ինչու Յիսուսը կը կոչուի «Գառնուկը... որ աշխարհի սկիզբէն յետոյ մորթուած է» (Յայտնութիւն 13.8):

Աստուծոյ սկզբնական ծրագիրն էր՝ բնակեցնել այս երկիրը յաւիտեան ապրող բնական մարդոցմով, եւ այն պիտի իրականանայ՝ սկսեալ Հազարամեայ թագաւորութենէն եւ նոր երկրի յաւիտենական ժամանակաշրջանին մէջ: Յիսուսին խօսքերը ամբողջութեամբ պիտի կատարուին. «Քու թագաւորութիւնդ գայ, Քու կամբք ըլլայ՝ ինչպէս Երկինքը, նոյնպէս՝ երկրի վրայ» (Մատթէոս 6.10): Երկրի վրայ պիտի ըլլայ այնպէս, ինչպէս Ճասթինը տեսաւ Երկինքին մէջ. գեղեցիկ նոր գոյներ, կենդանի բոյսեր եւ քարեր, որոնք կը գովերգեն զԱստուած, կատարեալ ճարտարապետութիւն, կենդանի ջուրեր եւ այլն: Մէկ խօսքով՝ ճշմարտապէս կատարեալ աշխարհ:

Եսայեան կ'աւարտէ իր մարգարէական գիրքը՝ գրելով հետեւեալը նոր երկնքի ժամանակաշրջանին մասին.

«Ինչպէս որ Իմ նոր երկինքը եւ երկիրը պիտի մնան, այնպէս ալ դուք միշտ պիտի ըլլաք Իմ ժողովուրդը՝ այն անունով, որ երբեք չ'անհետանար»,- կ'ըսէ Տէրը: «Ամբողջ մարդկութիւնը պիտի գայ՝ երկրպագելու Ինծի շաբաթ-շաբաթ եւ ամիս-ամիս: Եւ երբ անոնք դուրս երթան, պիտի տեսնեն անոնց մահացած մարմինները, որոնք ապստամբած են Ինծի դէմ: Որովհետեւ որդերը, որոնք կ'ուտեն զանոնք, երբեք չեն մահանար, եւ կրակը, որ կ'այրէ զանոնք, երբեք չի մարիր: Որոնք կ'անցնին անոնց քովէն, բացարձակ սարսափով պիտի նային անոնց»» (Եսայեայ 66.22-24, NLT):

Այս միտքը խիստ սթափեցնող է, բայց ամբողջ յաւիտենութեան ընթացքին մենք պիտի կարենանք երթալ այնպիսի վայր մը, ուրկէ պիտի երեւայ, թէ ինչ սարսափելի ճակատագիրի արժանացած են սատանան, անոր հրեշտակները եւ այն մարդիկ, որոնք ապստամբեցան Տիրոջ դէմ: Թերեւս ասիկա Աստուծոյ իմաստութիւնն է՝ մշտապէս պահել բոլոր ստեղծուածներու առջեւ մեղքի եւ ապստամբութեան սարսափելի հետեւանքները: Մտածեցէ՛ք այդ մասին. սատանան ապստամբեցաւ, թէ եւ ոչ ոք զայթակղեցուց զինք: Եթէ Աստուած պահէ այս տեսարանը Իր ստեղծագործութեան առջեւ ամբողջ յաւիտենութեան ընթացքին, այն խիստ արդիւնաւէտ կերպով պիտի զսպէ բոլորը՝ Լիւցիֆերի եւ իր հրեշտակներու մեղքի մէջ իյնալէն:

Ինչպէս արդէն նշուեցաւ, փառաւորուած սուրբերը կ'ապրին Աստուծոյ քաղաքին մէջ՝ Նոր Երուսաղէմի մէջ: Մինչեւ Հազարամեայ թագաւորութեան սկիզբը անոնք կը կենան Քրիստոսի ատեանին առջեւ, որպէսզի ստանան իրենց վարձատրութիւնները եւ յաւիտենական ծառայողական դիրքերը՝ Յաւիտենական Թագաւորին ծառայելու համար: Մենք աւելի խորապէս կ'ուսումնասիրենք Քրիստոսի ատեանը յաջորդ գլուխին մէջ:

ՔՐԻՍՏՈՍԻ ԱՏԵԱՆԸ

*«Բայց դուն ինչո՞ւ համար քու եղբայրը կը դատես,
կամ դուն ինչո՞ւ քու եղբայրը կ'անարգես. Վասնզի ամէնքս
ալ Քրիստոսի ատեանին արջեւ պիտի կանգնինք...*

*Ուրեմն մեզմէ ամէն մէկը Աստուծոյ հաշիւ պիտի
տայ իր անձին համար»:*

— Հռովմայեցիս 14.10, 12

Բոլորս պիտի կանգնինք Քրիստոսի ատեանի արջեւ: Ո՞րուն կը դիմէ Պօղոսը այս հատուածին մէջ, հաւատացեալներո՞ւն, թէ՞ անհաւատներուն: Դիտարկելով այս խօսքերը իրենց համայօդուածով՝ կրնանք համոզուածութեամբ ըսել, որ ան կը դիմէ հաւատացեալներուն: Պօղոսը կը խօսի այն մասին, թէ որքան վատ է, երբ քրիստոնէան կը դատէ կամ կ'անարգէ իր եղբայրը՝ ըսելով, որ այդպէս վարուողները հաշիւ պիտի տան:

Այնպէս որ, Աստուծոյ արջեւ դատաստանի պիտի կենան ոչ միայն անհաւատները, ինչպէս տեսանք նախորդ գլուխներուն մէջ: Քրիստոնէաները նոյնպէս պիտի կենան Աստուծոյ գահին արջեւ, որպէսզի հաշիւ տան իրենց երկրային կեանքին համար: Այս ճշմարտութիւնը նաեւ կը շեշտադրուի Կորնթացիներուն ուղղուած Պօղոս արաքեալի երկրորդ նամակին մէջ, որ ուսումնասիրեցինք նախորդ գլուխին մէջ:

«...Մենք աւելի կ'ուզէինք հեռանալ այս մարմիններէն, քանի որ այդ պարագային Տիրոջ հետ կ'ըլլայինք: Այնպէս որ, մեր նպատակն է՝ մշտապէս հաճեցնել Ձինք թէ՛ հոս՝ այս մարմինով, թէ՛ այս մարմինէն դուրս: Որովհետեւ բոլորս պէտք է կենանք Քրիստոսի արջեւ՝ դատուելու համար: Ամէն մէկս պիտի ստանանք այն, ինչին որ արժանի ենք՝ այն բարիին կամ չարին համար, որ գործած ենք մեր մարմիններուն մէջ: Քանի որ մենք գիտենք Աստուծոյ այս հանդիսաւոր երկիւղին մասին, մենք մեծ ջանք կ'ընենք՝ մարդոց հանգելու համար» (Բ. Կորնթացիս 5.8–11, NLT):

Կրկին, ակնյայտ է, որ Պօղոսը չի խօսիր մեղաւորներու դատաստանին մասին, այլ՝ քրիստոնէաներուն: Գրուած է. «Մենք աւելի կ'ուզէինք հեռանալ այս մարմիններէն, քանի որ այդ պարագային Տիրոջ հետ կ'ըլ-

լայինք»: Այս հատուածը յստակ ցոյց կու տայ, թէ որուն կը դիմէ Պօղոսը: Ոչ մէկ անհաւատ Տիրոջ հետ կ'ըլլայ, երբ հեռանայ իր մարմինէն: Ան անմիջապէս կը տեղափոխուի դժոխք, իսկ անոր յաւիտենական տունը կ'ըլլայ Կրակի լիճը:

Ինչպէս արդէն ըսինք, անաստուած եւ անհաւատ մարդիկ պիտի կենան Մեծ Սպիտակ գահի դատաստանին առջեւ: Այս դատաստանը պիտի ըլլայ հաւատացեալներու դատաստանէն շատ աւելի ուշ, որուն մասին գրուած է վերոյիշեալ հատուածին մէջ:

Եկէ՛ք արագօրէն վերանայինք այն, ինչ որ սորվեցանք նախորդ գլուխին մէջ: Յիսուսը երկիր պիտի վերադառնայ երկնային զօրքերու հետ, պարտութեան պիտի մատնէ հակաքրիստոսը, պիտի բանտարկէ սատանան եւ հազար տարիով պիտի հաստատէ Իր իշխանութիւնը Երուսաղէմի մէջ: Ատկէ յետոյ սատանան ազատ պիտի արծակուի անդունդէն եւ կարճ ժամանակով բոլոր ազգերը խաբելու թոյլտուութիւն պիտի ստանայ: Երկնքէն իջնող կրակը պիտի սպառէ անոնց, որոնք կ'ապստամբին Աստուծոյ դէմ, իսկ սատանան յաւիտեան պիտի նետուի Կրակի լիճը: Ատկէ յետոյ բոլոր անաստուած եւ անհաւատ մարդիկ յարութիւն պիտի առնեն դժոխքէն, որպէսզի Մեծ Սպիտակ գահին առջեւ կենան: Յիսուսը կ'անուանէ ասիկա «դատաստանի յարութիւնը» (տե՛ս Յովի. 5.29): Անոնց, որոնց անունները գրուած չեն Կեանքի գիրքին մէջ, պիտի նետուին Կրակի լիճը:

Հաւատացեալներու դատաստանը տեղի պիտի ունենայ շատ աւելի վաղ, քան Մեծ Սպիտակ գահի դատաստանը: Ատոր ժամանակը յստակ նշուած չէ Աստուծոյ Խօսքին մէջ: Այնուամենայնիւ, մենք գիտենք, որ այն տեղի պիտի ունենայ եկեղեցոյ յափշտակուելէն ինչ որ ժամանակ յետոյ եւ Քրիստոսի Հազարամեայ թագաւորութենէն առաջ: Այնպէս որ, այս երկու խոշոր դատաստաններու միջեւ պիտի ըլլայ մօտաւորապէս հազար տարուան ժամանակահատուած (ասիկա այն փաստերէն մէկն է, որ արտացոլուած չէ Աֆապէլի այլաբանութեան մէջ):

Գրեթէ կրկնելով Հռովմայեցիներու թուղթին մէջ գրուածը՝ Բ. Կորնթացիս 5.10-ը կը յայտնէ. «Որովհետեւ ամենքս պէտք է յայտնի ըլլանք Քրիստոսի ատենանի առջեւ»: Ե՛ւ Հռովմայեցիս 14-րդ գլուխին մէջ, Ե՛ւ Բ. Կորնթացիս 5-րդ գլուխին մէջ «ատենան» բառը թարգմանուած է յունարէն «պեմա» բառէն: «Սթրոնկի համաբարբառը» կը սահմանէ այս բառը հետեւեալ կերպով. «աստիճան, ատենաբեմ [բարձրացուած հարթակ], այսինքն՝ ատենան [դատարան]»¹: Ըստ «Միջազգային Աստուածաշնչեան Ընկերութեան Մեկնութիւններու Ժողովածուին»՝ «Ատենանը՝ դատական աթոռ էր Հռովմի կայսրութեան քաղաքային դատարաններուն մէջ: Պօղոսը կ'օգտագործէ այս համեմատութիւնը՝ խօսելով Քրիս-

տոսի դատական գործունեության մասին»²: Հիմնուելով այս ամենուն վրայ՝ մենք կ'օգտագործենք *Քրիստոսի ատեանը* բառակապակցութիւնը, երբ խօսինք հաւատացեալներու դատաստանին մասին:

Քրիստոսի ատեանը բառացիօրէն Աստուծոյ դատարանն է: Աստուածաշունչը կը յայտնէ, որ Հայրը յանձնած է ամբողջ դատաստանը Որդիին (տե՛ս Յովհ. 5.22): Յիսուս Քրիստոսը ոչ միայն մեր Փրկիչն է, այլև մեր Ղատաւորը, եւ շուտով Ան պիտի դատէ Իր տունը: «Ղատաստան» բառը ամենապարզ կերպով նկարագրելու համար կարելի է ըսել, որ այն վճիռ է՝ հիմնուած հետաքննութեան վրայ, որուն արդիւնքը պիտի ըլլայ «կողմ» կամ «դէմ»:

Անթիւ մարդիկ եկեղեցւոյ մէջ տեղեակ չեն, որ իրենք հաշիւ պիտի այն ամենուն համար, ինչ որ ըրած են իրենց կարճ երկրային կեցութեան ընթացքին: Շատերը սխալական պատկերացում ունին այն մասին, որ իրենք որեւէ կերպով պիտի չդատուին, քանի որ արդէն փրկուած են: Անշուշտ, Յիսուսին արիւնը կը մաքրէ մեզ այն մեղքերէն, որոնք առիթ չէին տար մեզի մուտք գործելու Աստուծոյ թագաւորութիւն. այնուամենայնիւ, այն չ'ազատեր մեզ դատաստանէն, որուն ժամանակ պիտի քննուին մեր թէ՛ լաւ, թէ՛ վատ գործերը, որոնք գործած ենք փրկուելէն յետոյ:

Յաւիտեանական որոշումներ

Այն դատաստանները կամ վճիռները, որոնք պիտի կայացուին մեր վերաբերեալ Քրիստոսի ատեանին մէջ, յաւիտեանական պիտի ըլլան. ատոնք ընդմիշտ նոյնը պիտի մնան եւ որեւէ կերպով չեն փոխուիր:

Պահ մը կեցէ՛ք եւ յիշեցէ՛ք այս գիրքի առաջին գլուխները, որոնցմէ մենք կը փորձէինք մտովի հասկնալ յաւիտենութիւնը: Յակոբոսը կը պնդէ, որ մեր ժամանակաւոր կեանքը այս երկրի վրայ անհետացող շոգի է (տե՛ս Յակոբ. 4.14): Ասիկա այն փոխաբերական ձեւն է, որով ան կը համեմատէ մեր ութունէն հարիւր տարի տեւող կեանքը յաւիտենութեան հետ: Եթէ ան տիրապետէր այն թուաբանական գիտելիքներուն, որոնք մենք ունինք այսօր, ան աւելի յստակ պիտի ձեւակերպէր իր ըսածը: Թուաբանութիւն սորվելու ամենավաղ փուլին մէջ ես գիտցայ, որ որեւէ բան՝ բաժնած յաւերժութեան, հաւասար է զերոյի:

$$80 \text{ տարի} \div \text{յաւերժութիւն (յաւիտենութիւն)} = 0$$

$$100 \text{ տարի} \div \text{յաւերժութիւն (յաւիտենութիւն)} = 0$$

Եթե բաժնենք կամ համեմատենք որեւէ թիւ յաւերժութեան հետ, արհիւնքը զերօ պիտի ըլլայ: Կարելոր չէ, թէ քանի տարի դուք պիտի ապ-

րիք այս երկրին մէջ: Նոյնիսկ եթէ ապրիք 150 տարի մինչեւ մահանալը, կեանքը այս երկրի վրայ գերօ է, եթէ համեմատենք այն յաւիտենութեան հետ: Ատիկա կը նշանակէ, որ այն ամէնը, ինչ որ մենք՝ Յիսուս Քրիստոսին հաւատացողներս, կ'ընենք այս գերոյական ժամանակահատուածին մէջ, պիտի որոշէ, թէ *ինչպէս* պիտի անցընենք յաւիտենութիւնը: Յիշեցէք՝ մեր արծազանգը Յիսուսի խաչին, Անոր փրկարար շնորհքին, կ'որոշէ, թէ *ուր* պիտի անցընենք յաւիտենութիւնը: Այնուամենայնիւ, այն, թէ ինչպէս մենք կ'ապրինք մեր քրիստոնէական կեանքը, պիտի որոշէ, թէ *ինչպիսիս* պիտի ըլլայ մեր յաւիտենական կեանքը Անոր թագաւորութեան մէջ:

Կը յիշէ՞ք, որ մեր այլաբանութեան մէջ Եսասէրը եւ անոր ընկերները, որոնց ինքը հանդիպեցաւ Մեծ սրահին ետեւի շարքերուն մէջ, կը զոջալին, որ վատնեցին իրենց կարճ ժամանակը Էնտելի մէջ: Անոնք անցուցին իրենց հինգամեայ կեանքի մեծ մասը՝ ձգտելով իրենց ցանկութիւններուն եւ շահերուն, փոխարէնը ամբողջութեամբ նուիրուէին Ճէյլընի կամքը կատարելուն: Այսպիսով, մինչեւ իրենց կեանքի աւարտը անոնք ստիպուած էին ապրելու շատ աւելի ցած իրենց իրական ներուժէն, քանի որ անոնցմէ ամէն մէկը հնարաւորութիւն ունէր աշխատելու եւ ապրելու աւելի մօտ Ճէյլընին, կամ նոյնիսկ թագաւորելու Ճէյլընի կողքին անոր քաղաքին մէջ: Անկախ այն բանէն՝ անոնք յաջողութիւն ունեցան դպրոցը աւարտելէն յետոյ, թէ՛ ոչ, այժմ անոնց ապագան վերջնականօրէն որոշուած էր: Անոնց կեանքի յաջորդ 130 տարիները պիտի ըլլային անոնց կարճ՝ հինգ տարիներու անմիջական հետեւանքը: Մտածեցէ՛ք այդ մասին. 130 տարին՝ 5 տարուան հետ համեմատ: Ատիկա շատ երկար ժամանակ է: Այս երկրի վրայ շատ քիչերը կրնան նոյնիսկ մօտենալ այդ թիւին: Երանի՛ թէ Եսասէրը եւ միւսները գիտակցէին ասիկա, քանի տակաւին իրենց ժամանակը Էնտելի մէջ չէր սպառած: Այդ պարագային անոնց կեանքը, ամենայն հաւանականութեամբ, այլ կերպ պիտի դասաւորուէր:

Որքան ալ սթափեցնող ըլլայ մեր այլաբանութեան օրինակը, այն անկարելի է համեմատել մեր քննարկուող թեմային հետ: Մէկ այլ օրինակ բերենք: Պատկերացուցէ՛ք, որ ձեզի տրուած է մէկ օր, եւ այն, թէ ինչպէս դուք պիտի անցընէք այդ քսանչորս ժամը, պիտի որոշէ ձեր կեանքը յաջորդ հազար տարուան ընթացքին: Փորձեցէ՛ք պատկերացնել, թէ ինչ կը նշանակէ հազար տարին: Հազար տարի առաջ Ամերիկայի Միացեալ Նահանգները տակաւին չկար. Քրիստոֆըր Բոլումպոսը տակաւին ճամբայ չէր ինկած՝ նոր աշխարհը բացայայտելու համար. նոյնիսկ Անգլիոյ գրաւումը նորմանտացիներու կողմէն տակաւին տեղի չէր ունեցած:

Հազար տարին շատ երկար ժամանակ է: Այնուամենայնիւ, այդ մէկ օրը կ'որոշի ձեր վարձատրութիւնը՝ այն դիրքը, որ դուք պիտի զբաղեցնէք, այն աշխատանքը, որ պիտի կատարէք, այն մարդիկ, որոնց հետ

պիտի աշխատիք, այն, թէ ուր եւ ինչպիսի տան մէջ պիտի ապրիք, նոյնիսկ ձեր պատուհանէն երեւացող տեսարանը եւ ձեր կեանքի ամէն մանրուքը՝ հազար տարիով:

Ձեր կարծիքով, դուք պիտի փորձէի՞ք լաւագոյնս վարուիլ: Ինչպէ՞ս պիտի ապրէիք այդ օրը: Այն պիտի տարբերէ՞ր ձեր ներկայ կեանքէն: Դուք պիտի փոխէի՞ք ձեր առաջնահերթութիւնները: Կարելի՞ է ըսել, որ Տիրոջը հնազանդիլը բացարձակ առաջնահերթութիւն պիտի դառնար ձեզի համար: Արդե՞օք դուք աւելի մեծ ուշադրութեամբ պիտի կարդայիք Անոր Խօսքը եւ պիտի ձգտէիք աւելի ջանասիրաբար հնազանդելու աստոր: Դուք պիտի ձգտէի՞ք ազդելու մարդոց վրայ՝ Անոր թագաւորութեան համար: Դուք ուրիշ ձեւով պիտի վերաբերէի՞ք անոնց... Ձեր կեանքի փոփոխութիւններու ցուցակը անվերջ է: Այնուամենայնիւ, ասիկա անկարելի է համեմատել այն բանին հետ, ինչի մասին մենք հիմա կը խօսինք, քանի որ բաժնելով մէկ օրը 365.000 օրուայ (հազար տարուայ համարժէքը) կը ստանանք որոշակի թիւ, ոչ թէ՝ գերօ:

Եկէք աւելի առջեւ երթանք: Պատկերացուցէ՛ք, որ այն, թէ ինչպէս դուք կ'անցընէք այդ մէկ օրը, պիտի որոշէ ձեր կեանքը յաջորդ մէկ միլիոն տարուան ընթացքին՝ այն, թէ ինչ որ դուք պիտի ունենաք, այն աշխատանքը, որ կը կատարէք, այն մարդիկ, որոնց հետ կ'աշխատիք, թէ ուր եւ ինչ տան մէջ կ'ապրիք, ինչ ինքնաշարժ կը վարէք եւ այլն: Փորձեցէ՛ք պատկերացնել այդ ժամանակը: Մենք չենք կրնար ըմբռնել ատիկա, քանի որ մարդկութիւնը գրեթէ վեց հազար տարի կը գտնուի այս երկրին վրայ: Այնպէս որ, ատիկա պիտի ըլլար 150 անգամ աւելի երկար, քան ամբողջ մարդկութեան կեանքը մեր մոլորակին մէջ: Ատիկա ինքնին անըմբռնելի է: Այնուամենայնիւ, ատիկա նոյնպէս ոչինչ է այն բանին համեմատ, ինչի մասին կը խօսինք, քանի որ բաժնելով մէկ օրը 365.000.000 օրուայ (մէկ միլիոն տարուայ համարժէքը)՝ կրկին կը ստանանք որոշակի թիւ, ոչ թէ՝ գերօ: Նոյնիսկ եթէ բերէի այս օրինակը միլիառ կամ թռիլիոն տարուայ համար՝ համեմատելով աստուծոյ մէկ օրուայ հետ, մենք կրկին որոշակի թիւ կը ստանայինք:

Այնպէս որ, անկախ այն բանէն, թէ որքան մենք կ'ապրինք այս երկրի վրայ՝ մեր ժամանակը հոս՝ յաւիտենութեան համեմատ, գերօ է: Թերեւս ճիշդ ասիկա՞ է պատճառը, որ Պօղոս առաքեալը մեծ հրատապութեամբ կը յորդորէ մեզ այնպէս ապրելու, որ առաւելագոյն վարձատրութիւնը ստանանք: Կորնթացիներուն ուղղուած իր նամակին մէջ ան կը գրէ, որ ամէն մարդիկ կը մրցի՝ յաղթելու համար, իսկ յետոյ ան կը դիմէ բոլորիս.

«Դուք նոյնպէս պէտք է այնպէս վազէք, որ յաղթէք: Բոլոր մարդիկները խստօրէն կը սահմանափակեն իրենք զիրենք: Անոնք կ'ընեն ատիկա,

որպէսզի ժամանակաւոր մրցանակ չափին, իսկ մենք կ'ընենք ատիկա յաւիտենական մրցանակի համար: Այնպէս որ, ես կը վազեմ ուղիղ դէպի նպատակը, եւ իմ ամէն մէկ քայլը նպատակաւորուած է: Ես նման չեմ բռնցքամարտիկի, որուն հարուածները կը վրիպին: Ես կը վարժեցնեմ իմ մարմինը մարզիկի պէս՝ սորվեցնելով, թէ ինչ պէտք է ընէ այն» (Ա. Կորնթացիս 9.24–27, NLT):

Ըստ Պողոսին՝ մեր կեանքը ունի նպատակ, որ յաւիտենական եւ անթառամ մրցանակ ստանալն է: Այս կեանքին մէջ մենք պէտք է վազենք՝ յաղթելու համար: Եւ որպէսզի յաղթենք, մենք պէտք է խիստ կարգապահութիւն եւ ինքնատիրապետում ունենանք եւ նպատակաւորուած կեանք վարենք:

Տարիներ շարունակ ես զբաղած եմ մարզանքով: Երբ կը մասնակցէի Միացեալ Նահանգներու Թենիսի միութեան խաղերուն, Տեվիսի գաւաթի պատանեկան խաղերուն եւ Ուսանողական մարզածեւերու ազգային միութեան I Տիվիզիայի թենիսի մրցաշարքերուն, ես շատ կը մարզուէի: Ես խաղադաշտին մէջ կը մնայի օրական գրեթէ վեց ժամ եւ երբեմն հարիւրաւոր յատուկ հարուածներ կը կատարէի իմ մարզիչին եւ թիմակիցներուն հետ: Ես գիրքեր կը կարդայի խաղադաշտին մէջ մտաւոր ամրութիւնը պահպանելու մասին: Ես կը մարզուէի նաեւ խաղադաշտէն դուրս. կը զբաղէի ծանրամարտով, վազքով, պարանցատկով, ձեռնածութեամբ՝ ձեռքերու եւ աչքի համակարգումը բարելաւելու համար, եւ շատ այլ բաներով: Այն աստիճան նպատակաւորուած էի, որ մայրս սպառնաց տեղակոխելու իմ անկողինը մեր տան մօտակայքը գտնուող թենիսի խաղադաշտերը: Ես չէի զբաղեր որեւէ այլ բանով կամ այլ մարզածեւում, որ կրնար խոչընդոտել իմ առաջընթացը: Ես այդպէս կը վարուէի, որպէսզի յաղթի, որպէսզի ակոյտեան դառնայի, որպէսզի լաւագոյնը ըլլայի եւ վարձատրութիւն ստանայի լաւագոյնը ըլլալու համար:

Աստուծոյ թագաւորութեան մէջ ամէն ինչ քիչ մը ուրիշ է: Մենք չենք մրցիր այլ մարդոց հետ, այլ միայն՝ մենք մեր հետ, եւ մեր նպատակն է՝ հաճելի ըլլալ Յիսուսին մեր բոլոր գործերուն մէջ (տե՛ս Բ. Կորնթ. 5.9): Ուշադրութեամբ կարդալով Աստուծոյ Խօսքը՝ մենք կը տեսնենք Տիրոջ ցանկութիւնները այն բանին մէջ, թէ ինչպէս վերաբերինք մարդոց, ինչին ձգտինք, ինչին նուիրենք մեր ժամանակը, որուն կեանքին մէջ ազդեցութիւն ձգենք յաւիտենութեան համար, ինչպէս նուիրատութիւն կատարենք Աստուծոյ թագաւորութեան համար, ինչպէս օգնենք մարդոց, ինչպէս ներենք եւ այլն: Հետագային աւելի խորապէս կը քննարկենք այս ամէնը: Իմաստը այն է, որ մենք պէտք է ապրինք՝ յաղթելու համար:

Վարձատրութիւններու լայն շրջանակ

Աստուածաշունչը ցոյց կու տայ, որ հաւատացեալներուն տրուած յաւիտենական վարձատրութիւնները տարբեր պիտի ըլլան: Բացի այդ՝ պիտի ըլլայ վարձատրութիւններու լայն շրջանակ: Կան մարդիկ, որոնց բոլոր գործերը պիտի կորսուին եւ այրին իրենց աչքին առջեւ, այնինչ միւսները յաւիտեան պիտի թագաւորեն Քրիստոսին հետ (տե՛ս Ա. Կորնթ. 3.15, Յայտն. 3.21):

Շատերը կը ցնցուին՝ գիտնալով, որ իրենց վարձատրութիւնը կրնայ *կորսուիլ*, իսկ գործերը՝ *այրիլ*: Անոնք չեն հաւատար, որ Երկինքը նման բան մը կրնայ տեղի ունենալ: Այնուամենայնիւ, Աստուածաշունչը պարզ կը խօսի այս մասին:

Մինչեւ այս խօսքերը կարդալը, թոյլ տուէ՛ք ըսել, որ շատ անգամ Աստուածաշունչին մէջ կառուցելը կամ շինելը կ'օգտագործուի որպէս փոխաբերութիւն եւ կը վերաբերի մարդու կեանքը կառուցելուն: Այլ պարագաներուն Աստուածաշունչը կը խօսի եկեղեցւոյ մասին՝ որպէս շինութեան կամ տաճարի: Երկու պարագային ալ մենք կը նկարագրուինք որպէս շինարարներ, որոնք ազդեցութիւն կը ձգեն մեր իսկ կեանքին, այլ մարդոց կեանքերուն կամ ընդհանուր առմամբ՝ եկեղեցւոյ վրայ: Մինչեւ այս գիրքի աւարտը՝ ես յաճախակի պիտի անդրադառնամ այս փոխաբերութեան: Այսպիսով, Պօղոսը պարզ ցոյց կու տայ հետեւեալը.

«Ղուք նոյնպէս Աստուծոյ շինութիւնն էք... Բայց ամէն մէկը պէտք է զգոյշ ըլլայ, թէ ինչպէս կը կառուցուի: Որովհետեւ Աստուած արդէն դրաւ Յիսուս Քրիստոսը՝ որպէս միակ հիմքը, եւ այլեւս ոչ մէկ հիմք կրնայ դրուիլ: Ոմանք կ'օգտագործեն ոսկի եւ արծաթ եւ թանկարժէք քարեր՝ հիմքի վրայ կառուցելու համար. միւսները կ'օգտագործեն փայտ եւ խոտ եւ յարդ: Եւ ամէն մարդու աշխատանքի որակը պիտի երեւայ, երբ Քրիստոսի օրը բացայայտէ այն: Որովհետեւ այդ Օրը կրակը պիտի յայտնէ ամէն մէկուն գործը. կրակը պիտի փորձէ այն եւ ցոյց պիտի տայ ատոր իրական որակը: Եթէ այն, ինչ կառուցուած էր հիմքի վրայ, դիմանայ կրակին, կառուցողը վարձատրութիւն պիտի ստանայ: Բայց եթէ ինչ որ մէկուն գործը այրի, ան պիտի կորսնցնէ այն, բայց ինքը պիտի փրկուի, ըսես թէ ան կրակէն պրծած ըլլայ» (Ա. Կորնթացիս 3.9–15, TEV):

Մենք կ'որոշենք, թէ ինչպէս պիտի կառուցենք, եւ մենք ունինք երկու հիմնական ընտրութիւն մեր կեանքի ամէն մէկ պահը կառուցելու համար: Առաջինը՝ մենք կրնանք ձգտիլ դէպի ժամանակաւոր բաները՝ այն, ինչ որ հաճելի է մարմինին (փայտը, խոտը եւ յարդը): Երկրորդը՝ մենք կրնանք ապրիլ՝ ըստ մեր վերստին ծնած հոգիի ցանկութեան՝ հետեւելով Աստուծոյ յաւիտենական խօսքին (ոսկի, արծաթ եւ թանկար-

ծէք քարեր): Այն, թէ ինչպէս կը կառուցենք կամ կ'անցընենք մեր կեանքը, կ'որոշէ, թէ ինչ պիտի ըլլայ մեզի հետ, երբ Աստուծոյ ներկայութեան կրակը փորձէ մեր գործը:

Պիտի ստուգուին ոչ միայն մեր գործերը. մեր մտքերը, դրդապատճառները եւ մտադրութիւնները նոյնպէս ի յայտ պիտի բերուին: Ահա թէ ինչու հաւատացեալներու համար կարելոր է լսել Աստուծոյ խօսքը, ուշադրութիւն դարձնել ատոր եւ պահել այն մեր սրտերուն մէջ, որովհետեւ այն մշտապէս «կը բացայայտէ եւ կը մաղէ եւ կը վերլուծէ եւ կը դատէ սրտի մտքերն ու նպատակները» (Եբրայեցիս 4.12, AMP): Ոչինչ կրնայ թափանցել մեր սրտի խորքերը այնպէս, ինչպէս Աստուծոյ խօսքը:

Եթէ մենք ականջ դնենք մարդկային դատողութեան, տրամաբանութեան, հոգեբանութեան կամ իմաստութեան, մեր մտքերը եւ սրտի դրդապատճառները պիտի ընթանան դէպի ժամանակաւոր բաները, եւ շատ յաճախ մենք նոյնիսկ պիտի չհասկնանք առիկա՝ ինչպէս Եսասէրը մինչեւ Ղատաստանի սրահ մուտք գործելը: Այս պատճառով Յիսուս կը զգուշացնէ.

«Այն, ինչ որ ծածկուած է, ի յայտ կը բերուի, եւ այն, ինչ որ ծածկուած է, կը գտնուի եւ յայտնի կը դառնայ: Ուրեմն, ուշադիր եղէք, թէ ինչպէս կը լսէք, որովհետեւ ով ինչ որ բան մը ունի, անոր ատելին պիտի տրուի, եւ ով ոչինչ ունի, նոյնիսկ այն պզտիկը, որ ան կը կարծէ, թէ ունի, պիտի վերցուի անորմէ» (Ղուկաս 8.17,18, TEV):

Յիսուս կ'ըսէ մեզի, որ այն, ինչ որ մենք կը *լսենք* կամ ինչին *ուշադրութիւն կը դարձնենք*, կը թափանցէ մեր սիրտը եւ կը ձեւաւորէ մեր մտքերն ու մտադրութիւնները, որոնք իրենց կարգին կ'որոշեն, թէ ինչպէս կը կառուցենք մեր կեանքը: Մենք պէտք է մեծ ուշադրութեամբ ականջ դնենք Աստուծոյ խօսքին, քանի որ այն լոյս է մեր ճանապարհին: Առանց ատոր մենք միանշանակ կը շեղինք ճիշդ այնպէս, ինչպէս մարդը կը մոլորի ճանապարհէն խաւար գիշերով: Թերեւս որոշ ժամանակ մը դուք ճիշդ քալէք, բայց ի վերջոյ՝ կը մոլորիք:

Շեղելով՝ մենք կը սկսինք կառուցել մեր կեանքը՝ հիմնուած ժամանակաւոր արժէքներու վրայ: Առիկա չի բացայայտուիր, քանի տակաւին Աստուծոյ խօսքի լոյսը չէ լուսաւորած առիկա: Պօղոսը կը շարունակէ այս միտքը. «Բայց երբ ինչ որ բան կը բացայայտուի եւ կը յանդիմանուի լոյսէն, այն տեսանելի եւ պարզ կը դառնայ» (Եփեսացիս 5.13, AMP):

Եթէ մենք շեղինք, կրնայ կատարուիլ երկու բան. առաջին եւ լաւագոյն տարբերակը այն է, որ մենք կը լսենք Աստուծոյ խօսքը (քարոզներու միջոցով, այն անձամբ ընթերցելու ժամանակ, նաեւ՝ ընկերոջմէն կամ հոգեւոր առաջնորդէն) եւ այն կը յանդիմանէ մեր խիղճը:

Ահա թէ ինչու անչափ կարելոր է մշտապէս ընթերցել Աստուծոյ Խօսքը: Եթէ մենք իմաստուն ենք, արագօրէն կ'ապաշխարենք եւ ներում կը խնդրենք մեր մտքերուն, դրդապատճառներուն կամ մտադրութիւններուն համար: Այնուամենայնիւ, եթէ մեր խիղճը շարունակ սխալներ գործելէն բթանայ, մեզի համար դժուար կ'ըլլայ լսել Աստուծոյ Խօսքը, իսկ եթէ մեր խիղճը տաղուի կամ այրի, ատիկա գրեթէ անկարելի կ'ըլլայ: Ահա թէ ինչու Աստուածաշունչը կը խօսի մեր խիղճը մաքուր պահելու կարելորութեան մասին (տե՛ս Առակ. 4.23, Բ. Տիմոթ. 1.3): Եթէ մենք պաշտպանենք եւ մաքուր պահենք մեր խիղճը, դիւրաբար պիտի զգանք Կենդանի Խօսքի ներգործութիւնը մեր սրտին մէջ:

Երկրորդ տարբերակը, որ գերադասելի չէ, այն է, որ մեր դրդապատճառները պիտի բացայայտուին Ղատաստանի գահին առջեւ: Եթէ ատիկա տեղի ունենայ, մենք կը կորսնցնենք այն վարձատրութիւնը, որ կրնայիք ստանալ: Այնպէս որ, դուք պէտք է հարցնէք ձեզի՝ կ'արժէ՞ հակառակիլ Աստուծոյ Խօսքի յանդիմանութիւններուն: Ամէն անգամ, երբ ընէք ատիկա, ձեր սիրտը աւելի պիտի խստանայ եւ պիտի յայտնուի աւելի մեծ խաբէութեան մէջ: Մենք չենք հասկնար մեր վիճակը, եւ այն պիտի բացայայտուի միայն Աստուծոյ փառքի լոյսին տակ՝ Ղատաստանի գահի առջեւ:

Պատրաստուիլ մեր յաւիտենական ապագային

Մեր դատաստանի ժամանակ ոչինչ անյայտ պիտի մնայ: Ի յայտ պիտի գայ եւ պիտի բացայայտուի ամէն ինչ: Ահա թէ ինչու Պօղոսը կ'անուանէ Ղատաստանի գահը «Տիրոջ ահաւորութիւնը»: Ղատաստանի ժամանակ մանրակրկիտ պիտի ստուգուին մեր դրդապատճառները, մտադրութիւնները, մտքերը, խօսքերը, գործերը եւ այլն: Ըստ Աստուածաշունչին «Մեսիճ» թարգմանութեան Ա. Կորնթացիս 3.9 եւ 12–15-ին՝ Պօղոսին խօսքերը կառուցման եւ դատաստանի մասին, անչափ տպաւորիչ են:

«Կամ, ուրիշ ձեռով ըսելու համար՝ դուք Աստուծոյ տունն էք... Մեծ ուշադրութիւն դարձուցէ՛ք ձեր շինարարական նիւթերը ընտրելու ժամանակ: Կերջաւորութեան ստուգում պիտի ըլլայ: Եթէ դուք օգտագործէք աժանագին կամ ցածրորակ նիւթեր, դուք պիտի բռնուիք: Ստուգումը մանրակրկիտ եւ խստապահանջ պիտի ըլլայ: Դուք ոչ մէկ թերացում կրնաք պահել: Եթէ ձեր գործը անցնի ստուգումէն, շատ լաւ, իսկ եթէ ոչ՝ կառոյցի ձեր մասը պիտի քանդուի եւ կրկին պիտի կառուցուի, բայց դուք չէք կործանիր. դուք պիտի մնաք, բայց՝ հազիւ ազատած»:

Չեմ գիտեր՝ դուք ինչպէս, բայց եւ չեմ ուզեր հազիւ ազատած կենդանի մնալ Քրիստոսի ատենին առջեւ, քանի որ հոն պիտի որոշուի մեր յաւիտենական ճակատագիրը:

Կը պատկերացնէ՞ք, թէ որքան զարմացած պիտի ըլլան շատերը: Մեր այլաբանութեան մէջ ամէն մէկ կերպար լիովին յանկարծակիի եկաւ իր դատավճիռէն՝ բացի Բարեգործէն, որ պատրաստ էր: Միւսները լրջօրէն չէին վերաբերեր այն տարրական վարդապետութիւններուն, որոնց մասին իրենք պէտք է տեղեակ ըլլային ամենասկիզբէն:

Ես մշտապէս կը տեսնեմ, թէ ինչպէս այս աշխարհի իմաստուն մարդիկ կը պատրաստուին իրենց ապագային: Անոնք լաւ կը սորվին դպրոցին մէջ, որպէսզի կարենան յաջող քարիերա եւ ապագայ կառուցել: Անմիջապէս աշխատանքի անցնելով՝ անոնք տուն կը գնեն եւ արագօրէն կը վճարեն ատոր համար: Անոնք նոյնպէս խնայողական հաշիւներ եւ անհատական կենսաթոշակային փաթեթներ ձեռք կը բերեն: Ոմանք կը ներդնեն իրենց աւելորդ գումարները, որպէսզի ատոնք աշխատին իրենց համար: Անոնք կ'ընեն այդ ամէնը, որպէսզի պատրաստուին իրենց ապագային համար. անոնք չեն ցանկար կարիքի մէջ յայտնուիլ, յատկապէս՝ տարեց հասակին: Եթէ այդ մարդիկ պատրաստուէին իրենց կենսաթոշակային տարիքին այնպէս, ինչպէս շատ հաւատացեալներ կը պատրաստուին յաւիտենութեանը, անոնք մեծ դժուարութիւններ կ'ունենային: Ի տարբերութիւն շատերուն եկեղեցւոյ մէջ՝ անոնք շատ մտահոգուած եւ վախցած են:

Պատկերացուցէ՞ք մարդ մը, որ առաջին օրն է՝ թոշակի անցած է, եւ անոր հետ տեղի կ'ունենայ հետեւեալը: Նախ՝ կենսաթոշակային համակարգը կը սնանկանայ եւ միջոցներ չունի՝ անոր ամէն ամիս թոշակ տալու համար: Բացի այդ՝ այն դրամատունը, ուր անոր բոլոր խնայողութիւններն են, կը գոցուի՝ դադրեցնելով իր գործունէութիւնը: Անոր բոլոր խնայողութիւնները կը կորսուին: Նոյն օրը այդ մարդը կ'արթննայ կրակի մէջ. անոր տունը կ'այրի: Ան կը փախչի տունէն առանց որեւէ բանի՝ բացի իր վրայի հագուստէն: Անոր աչքերուն առջեւ կրակը վերջնականօրէն կը կործանէ այն ամէնը, ինչ որ կը պատկանէր իրեն:

Ինչպիսի՞ ողբերգական օր: Այնուամենայնիւ, Պօղոսը ցոյց կու տայ, որ յատկապէս ասիկա տեղի պիտի ունենայ որոշ քրիստոնէաներու հետ Դատաստանի գահին առջեւ: Կրկին լսեցէ՞ք անոր խօսքերը. «Բայց եթէ գործը այրի, կառուցողը մեծ կորուստ պիտի կրէ: Կառուցողը կը փրկուի, բայց՝ ինչպէս մարդ մը, որ հազիւ ազատած է մեծ կրակէն» (Ա. Կորնթացիս 3.15, NLT): Աստուծոյ թագաւորութեան մէջ գտնուող իմաստուն մարդիկ կը գիտակցին, որ մենք չենք կառուցեր ապագայ՝ մեր ծերութեան տարիներուն համար. մենք կը պատրաստուինք յաւիտենութեան:

Իմաստուն մարդիկ, որոնց մասին ես կը խօսիմ, անոնք են, որոնք կը ծրագրեն իրենց յաւիտենական ապագան: Անոնց կեանքը նպատա-

կատուղուած է, եւ անոնք գիտեն, որ իրենց յաւիտենական ճակատագիրը կ'որոշուի այն բանով, թէ ինչպէս իրենք կ'ապրին այս աշխարհին մէջ: Անոնք փառաւոր կերպով մուտք պիտի գործեն Աստուծոյ թագաւորութիւն, ոչ թէ հազիւ ազատած ներս պիտի մտնեն այն բանէն յետոյ, երբ իրենց բոլոր գործերը պիտի այրին եւ պիտի կործանին: Կարդացէ՛ք, թէ ինչ կը գրէ Պետրոսը այս մասին.

«Ուրեմն, իմ եղբայրներ, ա՛յլ աւելի եռանդուն կերպով հաստատ դարձուցէ՛ք ձեր կոչումը եւ ընտրութիւնը: Որովհետեւ, եթէ ընէ՛ք այս բաները, դուք երբեք չէ՛ք ձախողիք եւ ջերմ ընդունելութիւն կը ստանաք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան մէջ» (Բ. Պետրոս 1.10,11, NIV):

Ջերմ ընդունելութիւնն այն է, որ Տէրը պիտի ըսէ մեզի. «Լաւ, բարի եւ հաւատարիմ ծառայ, քիչ բաներու վրայ հաւատարիմ էիր, Ես քեզի շատ բաներու վրայ պիտի դնեմ. մտի՛ր քու Տիրոջ ուրախութիւնը» (Մատթէոս 25.21):

Կերջերս Տէրը տեսիլք մը ցոյց տուաւ: Ես տեսայ Աստուծոյ թագաւորութեան յաղթողները, որոնք շարքերով մուտք կը գործէին Աստուծոյ քաղաքը: Անոնք կ'անցնէին ոսկիէ փողոցներով՝ մինչ ճանապարհներու եզրին գտնուող բազմութիւնները կը ցնծային: Յիսուս Թագաւորը նստած էր բարձր հարթակի մը վրայ. ամբողջ քաղաքը կը տեսնէր Ջինք: Հաւատարիմ զինուորները կը շարունակէին քալել՝ բերելով Յիսուսին համար Իր աւարը, իսկ բազմութիւնները կը ցնծային: Այդ տեսիլքին մէջ ես կը զգայի, որ Տէրը կ'ըսէր Իր զինուորներուն. «Կեցցէ՛ք»:

Տէրը խօսեցաւ իմ սրտին. «Դուն կ'ուզես ըլլալ այդ զինուորներէն մէ՞կը, որոնք կը բերեն Ինձի համար հնձած պտուղները, թէ՞ ճանապարհի եզերքը կանգնած եւ ցնծացող մարդոցմէ մէկը»: Ես որոշում կայացուցի աւելի, քան նախկինին՝ հաստատ դարձնել իմ կոչումը եւ ընտրութիւնը: Ես վճռականօրէն գիտակցեցայ, որ կը ցանկամ բաւականութեամբ լեցուն ժպիտ տեսնել իմ Տիրոջ երեսին, երբ Ան վերանայի իմ կեանքը, ոչ թէ տրտմած հայեացք՝ այն գիտակցումէն, որ այն ներուժը, որ Ան տուած էր ինձ, կորսուած է:

Ես նոյնպէս մտադրուած եմ յայտնի դարձնել այս ճշմարտութիւնը իմ բոլոր սերնդակիցներուն, որոնք կը սիրեն զԱստուած, որպէսզի անոնք մուտք գործեն Անոր փառաւոր ներկայութեան մէջ այն աւարով, որուն Ան լիովին արժանի է, եւ տեսնեն մեր Հօր փառաւոր ժպիտը: Մենք կ'որոշենք, թէ արդեօ՞ք ջերմ ընդունելութեան պիտի արժանանանք Երկինքը՝ այս երկրին մէջ կատարած ծառայութեան միջոցով: Այս ճշմարտութիւնը՝ յաջորդ գլուխները գրելու գլխաւոր պատճառն է:

Յաջորդ գլուխներուն մէջ

Յաջորդ գլուխներուն մէջ պիտի քննարկենք այն գլխաւոր բնագաւառները, ըստ որոնց մենք պիտի դատուինք կամ պիտի վարձատրուինք: Թէեւ պիտի չկարենանք մանրամասնօրէն քննարկել ամէն ինչ, սակայն պիտի անդրադառնանք ամենակարեւոր հարցումներուն: Մենք լաւ հիմք պիտի դնենք, որուն վրայ դուք պիտի կարենաք յաւիտենական նշանակութիւն ունեցող կեանք կառուցել:

Որպէս ամփոփում՝ դանդաղօրէն կարդացէ՛ք Պետրոսի խօսքերը: Թոյլ տուէ՛ք, որ ատոնք յիշեցնեն ձեզ այն ճշմարտութիւնները, որոնք իմացաք այս գլուխին մէջ: Այս հատուածի բանալի բառերը եւ արտայայտութիւններն ա՛լ աւելի կեանքի պիտի կոչեն ձեր մէջ այն, ինչ որ մենք սորվեցանք: Պետրոսի խօսքերը նոյնպէս պիտի պատրաստեն ձեզ այն նիւթի համար, որ պիտի ուսումնասիրենք յաջորդ գլուխին մէջ:

«Այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է Աստուածահաճոյ կեանքի համար, հրաշքով տրուած է մեզի՝ Աստուծոյ քով մեզ Հրաւիրողին անձամբ եւ մտերմօրէն ճանչնալու միջոցով... Այնպէս որ, ժամանակ մի՛ կորսնցնէք եւ սկսէ՛ք կառուցել այն բանին վրայ, ինչ որ տրուած է ձեզի՝ ամբողջացնելով ձեր հիմքային հաւատքը լաւ բնաւորութեամբ, հոգեւոր հասկացողութեամբ, սթափ կարգապահութեամբ, ջերմեռանդ համբերութեամբ, երկիւղալի ականածանքով, ջերմ ընկերասիրութեամբ եւ առատածեռն սիրով, եւ թող որ ասոնցմէ ամէն մէկը յարմարի միւսին հետ եւ զարգացնեն միմիանց: Երբ այս յատկանիշները գործեն եւ աւելնան ձեր մէջ, ձեր կեանքին մէջ ոչինչ կ'ուշանայ. ոչ մէկ օր կ'անցնի՝ առանց իր վարձատրութեան, մինչ դուք կը հասուննաք մեր Տէր Յիսուսի ճանաչողութեամբ... Այնպէս որ, ընկերներ, հաստատեցէ՛ք Աստուծոյ հրաւերը՝ ուղղուած ձեզի, եւ այն, որ Ան ընտրեց ձեզ: Մի՛ հետածգէք ատիկա. ըրէ՛ք ատիկա հիմա: Ըրէ՛ք ատիկա, եւ ձեր կեանքը հաստատուած կ'ըլլայ, եւ դուք ուղիղ ու բաց ճանապարհով մուտք կը գործէք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի յաւիտենական թագաւորութեան մէջ: Քանի որ վտանգները շատ են, թէեւ դուք բոլորովին տեղեկացուած էք այս ճշմարտութենէն եւ կեանքէն, ես նոյնիսկ մէկ վայրկեան պիտի չդադրիմ գրաւել ձեր ուշադրութիւնը այս բաներու նկատմամբ: Ասիկա այն պաշտօնն է, որուն ես նշանակուած եմ՝ սթափ պահել ձեզ յաճախակի յիշեցումներով, եւ ես կը կատարեմ այն, քանի տակաւին կ'ապրիմ» (Բ. Պետրոս 1.3,5–8,10–13, MSG):

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲՎԺԻՆ ՉՈՐՍ, ԳԼՈՒԽՆԵՐ 8-10

1. Հաւանաբար, ԱՖապէլի քաղաքացիներու դատաստանի ամենատպաւորիչ դրուագներէն մէկը այն էր, որ անոնք նոր անուն կը ստանային: Ստածեցէ՛ք այն մասին, թէ ով էիք դուք, եւ ինչպիսին էիք՝ մինչեւ Քրիստոսին ընդունիլը, եւ թէ ինչպէս Յիսուս փոխեց ձեր կեանքը: Ձեր կարծիքով եւ հաշուի առնելով ձեր կեանքին մէջ մինչեւ օրս տեղի ունեցածը՝ ինչպէ՞ս ձեր անուան պատմութիւնը արդէն իսկ կրնայ փոխուած ըլլալ:
2. Ձեր կարծիքով՝ ինչո՞ւ Երկինքը ուրախութեան վայր է, ուր պիտի սրբուի ամէն արցունք մարդոց աչքերէն, թէեւ հաւատացեալները կրնան մեծ կորուստ կրել իրենց կեանքի ընթացքի պատճառով:
3. Ձեր իսկ բառերով բացատրեցէ՛ք, թէ դատաստանի ժամանակ ինչը առանձնացուց Բարեգործը իր հասակակիցներէն: Սենք ի՞նչ կրնանք սորվիլ անոր օրինակէն:
4. Իններորդ գլուխին մէջ գրուած էր այն մասին, թէ ինչպիսին է Երկինքը՝ համաձայն Աստուածաշունչի: Կա՞ր արդեօք այնպիսի բան այդ նկարագրութեան մէջ, ինչ որ զարմացուց ձեզ, եւ ո՞րն էր ատիկա:
5. Տասներորդ գլուխին մէջ գրուած է. «Անշուշտ, Յիսուսի արիւնը կը մաքրէ մեզ այն մեղքերէն, որոնք առիթ չէին տար մեզի մուտք գործել Աստուծոյ թագաւորութիւն. Այնուամենայնիւ, այն չ'ազատեր մեզ դատաստանէն, որուն ժամանակ պիտի քննուին մեր թէ՛ լաւ, թէ՛ վատ գործերը, որոնք մենք գործած ենք փրկուելէն յետոյ»: Ինչպիսի՞ն էր ձեր սկզբնական արծագանգը այս պնդումին: Ի՞նչ կը մտածէք դուք հիմա՝ այս բաժինը աւարտելէն յետոյ:



ԲԱԺԻՆ ՆԻՍԻ



ԱՍՏՈՒԾՈՅ ՏՈՒՄԸ

«...Դուք նոյնպէս միասին կը կառուցուիք
որպէս Աստուծոյ բնակարան...»:

— Եփեսացիս 2.22

Մենք պիտի բաժնենք հաւատացեալի դատաստանը երկու խոշոր բաժիններու: Առաջինը՝ մեր մասնակցութիւնն է Աստուծոյ թագաւորութիւնը կառուցելու մէջ, համաձայն մեր կոչումներու եւ պարգեւներու: Երկրորդը՝ մարդոց կեանքերը կառուցելն է, ինչ որ, անշուշտ, կ'ընդգրկէ նաեւ մեր կեանքը: Ինչ կը վերաբերի մարդոց կեանքերը կառուցելուն, հաշուի պիտի առնուի այն ազդեցութիւնը, որ մենք գործած ենք անոնց վրայ: Ինչ կը վերաբերի մեր կեանքը կառուցելուն, հաշուի պիտի առնուի այն, թէ որքանով մենք համագործակցած ենք Աստուծոյ շնորհքին հետ՝ մեզմէ քրիստոսանման բնաւորութիւն ձեւաւորելու համար: Վերջինը, անկասկած, Աստուծոյ խօսքին արծագանգելու, հաւատալու եւ հնազանդելու հետեւանք է: Մեր վարքը եւ գործերը, խօսքերը, մտքերը եւ դրդապատճառները պիտի քննուին բոլոր պարագաներուն:

Նախ մենք պիտի անդրադառնանք այն բանին, թէ ինչպիսի դատաստանի պիտի ենթարկուի մեր մասնակցութիւնը Աստուծոյ թագաւորութիւնը կառուցելու մէջ, որմէ յետոյ պիտի խօսինք մեր անձնական կեանքին մասին:

Ի՞նչ կրնաք ընել Ինծի համար

Մենք կրնանք կառուցել Աստուծոյ թագաւորութիւնը միմիայն Սուրբ Հոգիին հնազանդելով, քանի որ մենք չենք կրնար յաւիտենական արժէք ունեցող որեւէ բան ընել՝ առանց Յիսուս Քրիստոսի շնորհքին: Աստուծոյ խօսքը կ'ըսէ. «Եթէ Տէրը չչինէ տունը, զուր տեղը կ'աշխատին շինողները» (Սաղմոս 127.1): Այս խօսքը պարզօրէն ցոյց կու տայ, որ մենք կրնանք կառուցել առանց Սուրբ Հոգիին, բայց մեր կառուցածը անարժէք կ'ըլլայ յաւիտենութեան լոյսին տակ: Այն կ'այրի Դատաստանի գահին առջեւ: Անչափ կարեւոր է, որ հասկնանք ասիկա:

Հին կտակարանին մէջ Աստուած կը պատուիրէ խումբ մը մարդոց, որոնք զբաղած էին Իրեն ծառայելով.

«Երկինքը՝ Իմ գահն է, եւ երկիրը՝ Իմ ոտքերու պատուանդանը: Ի՞նչ տուն կրնաք կառուցել Ինծի համար, ի՞նչ վայր, որ Ես բնակիմ հոն: Ես Ինքս ստեղծած եմ ամբողջ տիեզերքը: Ինծի հաճելի են այն մարդիկ, որոնք խոնարհ եւ ապաշխարող են, որոնք կը վախճան Ինծմէ եւ կը հնազանդին Ինծի» (Եսայեայ 66.1,2, TEV):

Պարզ ըսելու համար՝ Տէրը նկատի ունի. «Ես Աստուած եմ: Դուք բոլորովին կը գիտակցի՞ք, թէ իրականութեան մէջ ով եմ Ես: Ձեր կարծիքով, դուք ի՞նչ կրնաք ընել Ինծի համար»: Գաղափարը այն մասին, որ մենք կրնանք այնպիսի բան ստեղծել, ինչ որ Աստուծոյ անհրաժեշտ պիտի ըլլայ, կը նմանի այն բանին, որ խումբ մը մրջիւններ կ'ըսեն մարդու մը. «Մենք տուն պիտի կառուցենք քեզի համար»: Որքա՛ն ծիծաղելի է: Մենք ոչինչ կրնանք ընել մեր ուժերով՝ մեր վեհ, անըմբռնելի եւ զարմանալի Աստուծոյ ծառայելու եւ հաճեցնելու համար: Իրականութեան մէջ, Ան չունի մեր կարիքը:

Այնուամենայնիւ, Աստուած ցոյց կու տայ, թէ ով կրնայ հաճեցնել եւ օգտակար դառնալ Իրեն: Այն մարդիկ, որոնք խոնարհ եւ ապաշխարող են, որոնք կը վախճան Աստուծմէ եւ կը հնազանդին Անոր: Աստուած Իր թագաւորութիւնը կառուցելու արտօնութիւն կու տայ այդպիսի մարդոց: Ինչպէ՞ս անոնք կրնան օգտակար ըլլալ նման անսահման Աստուծոյ: «Ոչ թէ զօրութեամբ, եւ ոչ թէ ուժով, այլ՝ Իմ Հոգիով,– կ'ըսէ Ջօրաջ Տէրը» (Ջաքարեայ 4.6): Արդիւնաւէտ է այն աշխատանքը, որուն մէջ մարդը կը համագործակցի Սուրբ Հոգիին հետ: Միայն այդ պարագային է, որ մշակի աշխատանքը զուր չէ:

Գործակիցներ

Գոյութիւն ունի ապշեցնող ճշմարտութիւն մը. որքան ալ մեծ եւ զարմանալի ըլլայ մեր Տէր Աստուած, Ան, Իր իսկ որոշումով, սահմանափակեց Իր գործունէութիւնը այս երկրի վրայ ճիշդ ամենասկիզբը, երբ իշխանութիւն տուաւ մարդուն մեր մոլորակին վրայ: Հետեւաբար, Աստուծոյ կարելի է սահմանափակել:

Թերեւս ասիկա զարմացնէ ձեզ, բայց այս մասին Աստուածաշունչին մէջ բազմաթիւ օրինակներ կան : Աբրահամի ժառանգները «սահմանափակեցին Իսրայէլի Սուրբը» (Սաղմոս 78.41, NKJV): Մէկ ուրիշ հատուածի մէջ Յիսուս ըսաւ Իր երկրի հոգեւոր առաջնորդներուն. «Այսպէս դուք

զերօ, դատարկ ու ապարդիւն կը դարձնէք Աստուծոյ Խօսքը [Աստուծոյ Խօսքի հեղինակութիւնը] ձեր աւանդութեամբ» (Մարկոս 7.13, AMP): Մենք պէտք է համագործակցինք Աստուծոյ հետ, որպէսզի իրականացնենք Անոր նպատակը: Այդ նպատակը, ընդհանուր առմամբ, հետեւեալն է. ունենալ ժողովուրդ՝ վերափոխուած ըստ Յիսուսի պատկերին եւ նմանութեան, որուն հետ Ան կրնայ բնակիլ ամբողջ յաւիտենութեան ընթացքին: Ահա թէ ինչու մենք կը կոչուինք Աստուծոյ գործակիցները.

«Մենք գործակիցներ (աշակիցներ եւ միասին աշխատող մշակներ) ենք Աստուծոյ հետ եւ Աստուծոյ համար. դուք Աստուծոյ պարտէզն էք, խաղողի այգին եւ մշակուող դաշտը, [դուք էք] Աստուծոյ շինութիւնը» (Ա. Կորնթացիս 3.9, AMP):

Գրեթէ ամէն անգամ, երբ Նոր կտակարանը կը խօսի յաւիտենական արժէք ունեցող գործերու մասին, ատոնք կը համեմատուին դաշտային աշխատանքի կամ շինարարութեան հետ: Դաշտային աշխատանքի այլաբանութիւնը կ'օգտագործուի, որովհետեւ երկիրը այն դաշտն է, ուր ներկայիս տեղի կ'ունենայ Աստուծոյ թագաւորութեան աճը: Ամբողջ Երկինքը կը ցնծայ՝ հետեւելով, թէ ինչպէս սուրբերը կը կառուցեն Աստուծոյ թագաւորութիւնը այս երկրի վրայ: Շինարարութեան փոխաբերութիւնը կ'օգտագործուի, քանի որ Աստուած կը փնտռէ մշտական բնակարան, եւ մենք՝ այն կենդանի քարերն ենք, որոնցմէ Ան կը կազմէ Իր բնակարանը:

Պետրոսը կը գրէ. «Հիմա Աստուած կը կառուցէ Իր հոգեւոր տաճարը ձեզմով՝ ինչպէս կենդանի քարերով» (Ա. Պետրոս 2.5, NLT): Պօղոսը կը գրէ. «Միասին մենք Անոր տունն ենք... խնամքով իրար միացուած Անոր մէջ» (Եփեսացիս 2.20,21, NLT): Այնպէս որ, ըստ էութեան, մենք այս երկրի վրայ ենք, որպէսզի կառուցենք Աստուծոյ փառաւոր տաճարը կամ *տունը*՝ մարդոց փրկութեան բերելու, սորվեցնելու, ծառայելու եւ նմանատիպ գործունէութեան միջոցով: Իւրաքանչիւրս ունի իր դերը՝ ե՛ւ որպէս անարատ կենդանի քար, ե՛ւ որպէս շինարար, որուն շնորհիւ կենդանի քարերը կը յարմարեցուին, կը միանան իրար եւ կը դառնան փառաւոր տուն Աստուծոյ համար: Այս այլաբանութիւնը կը նկարագրէ մեր պարտաւորութիւնները մեր կեանքին եւ Աստուծոյ թագաւորութեան մէջ, որոնց համար բոլորս հաշիւ կու տանք:

Տուն՝ անհատական նախագծով

Եթէ ես շինարար ըլլամ, կը նախագծեմ այն տունը, որ պէտք է կառուցեմ, նախքան որեւէ գործ սկսիլը: Պատրաստուած գծագիրներու վրայ պիտի նշուին, թէ ինչպէս պէտք է կառուցել այդ տունը եւ

ինչ շինանիւթեր պէտք է օգտագործել: Բայց ասիկա տակաւին վերջը չէ: Ամէն մէկ շինարար գիտէ, որ իր գործի ամենակարեւոր մասերէն մէկը՝ գործակատարներու աշխատանքը ճիշդ կազմակերպելն է: Ան պէտք է պայմանաւորուի տան հիմնակառոյցը կանգնեցնողներու, կրածուլողներու, ջրմուղագործներու, ելեկտրագէտներու, սալիկներ տեղադրողներու եւ շատ ուրիշ մարդոց հետ: Յատկապէս այս մարդիկը փաստացիօրէն կը կառուցեն տունը: Եթէ անոնց աշխատանքներու հերթականութիւնը ճիշդ կազմակերպուած չըլլայ, անխուսափելիօրէն խառնաշփոթ կը սկսի: Օրինակ՝ պատկերացուցէք, թէ ինչ կ'ըլլայ, եթէ գաճաքարի ստուարաթուղթերու տեղադրման աշխատանքները նշանակուին ելեկտրալարերը անցընելէն եւ ձայնամեկուսացումը կատարելէն առաջ:

Եթէ գործակատարներէն մէկը վատ աշխատանք կատարէ կամ ուշացնէ ժամկէտները, շինարարը կը կանչէ մէկ այլ մարդ՝ անոր աշխատանքը կատարելու համար: Նոր նշանակուած աշխատողը պէտք է գայ կարճ ժամանակին եւ, հաւանաբար, ստիպուած կ'ըլլայ քանդել նախկին գործակատարի սխալ կառուցած հատուածը: Եւ նոյնիսկ եթէ գործակատարներէն մէկը չհասցնէ կատարել իրեն յանձնարարուած աշխատանքը, շինարարը կ'ընէ ամէն ինչ՝ գործը աւարտելու համար:

Ես նոյնպէս նկատած եմ, որ երբ շինարարը *տուն կը կառուցէ իրեն համար*, ան մանրախնդրօրէն կը գտնէ լաւագոյն գործակատարները: Ան կ'ապահովէ անոնց լաւագոյն նիւթերով եւ անհրաժեշտ ամէն ինչով՝ գործը ճիշդ կերպով կատարելու համար: Ան մեծ ուշադրութեամբ կը վերահսկէ ամբողջ աշխատանքը: Աստուած՝ *Իր տան* Շինարարն է, բայց Անոր տունը՝ քաղաք է, որ բաղկացած է մարդոցմէ:

Սովորաբար յատուկ տուններուն անուններ կու տան: Օրինակ՝ Անգլիոյ թագուհիին տունը կը կոչուի Պուքինկիէմեան պալատ: Միացեալ Նահանգներու նախագահի տունը կը կոչուի Սպիտակ տուն: Կան այլ տուներ, որոնց մասին դուք թերեւ չէք լսած: Դերասանուհի Ֆիլիս Քալվըրթի տունը կը կոչուի Տուն՝ բլուրի վրայ: Դերասան եւ բեմադրիչ Չարլզ Այվըն Վենսի տունը կը կոչուի Կաղնիներու տնակ: Վիպասան Չարլզ Տայլըրի տունը կը կոչուի Հին սարդոստայն: Եւ այսպէս շարունակ: Այնուամենայնիւ, Աստուած անուանած է Իր տունը շատ աւելի վաղ, քան ռեւէ մարդ մտածած է այդ մասին: Ան Սիօն անուանած է Իր յաւիտենական տունը, ոը տակաւին կառուցման ընթացքի մէջ է: Գրուած է.

«Որովհետեւ Տէրը Սիօնը ընտրեց, հաւնեցաւ զանիկա Իրեն բնակարան շինելու համար: Այս է յաւիտեան Իմ հասնգստավայրս, հոս պիտի բնակիմ, որովհետեւ ասոր հաւնեցայ» (Սաղմոս 132.13,14):

Եթէ դուք արտօնութիւն ունեցած էք կառուցելու ձեր երազանքի տունը, դուք գիտէք, թէ ինչպիսի ոգեշնչմամբ եւ ակնկալիքով կը սպասէք, որ աւարտէք այն: Դուք կը ցանկաք հանգստանալ այդ տունին մէջ եւ ուրախութիւն ու խաղաղութիւն գտնել այդտեղ:

Լիզան եւ ես անհատական նախագծմամբ տուն կառուցելու արտօնութիւն ունեցանք 1990-ական թուականներու կիսուն: Երբ տակաւին կ'ապրէինք Ֆլորիտա նահանգի Օռլանտօ քաղաքին մէջ, Ռոպերթ անունով շատ յայտնի շինարար մը, որ կը սիրէր մեր ծառայութիւնը, այցելեց մեզ եւ ըսաւ. «Ես կ'ուզեմ տուն կառուցել ձեզի համար»: Այդ ժամանակ մենք շատ փոքր տուն ունէինք, եւ մտածեցինք, որ անոր գիները շատ բարձր կ'ըլլային մեզի համար: Երբ մենք մերժեցինք անոր առաջարկը, ան ըսաւ. «Ես կը կառուցեմ ասիկա Աստուծոյ գինով»:

Ինչպէս հետագային պարզուեցաւ, ան նոյնիսկ մէկ սենթի շահոյթ չէր ունեցած այդ տունէն:

Մինչեւ այդ մենք երկու տուն ունեցած էինք: Երկուքն ալ փոքր տուններ էին՝ կառուցուած ըստ պատրաստ նախագիծերու. այսինքն՝ մենք որեւէ կապ չունէինք աստուծոյ նախագծման մէջ: Ես երբեք չեմ մոռնար, երբ մեր գրոյցէն քանի մը օր յետոյ Ռոպերթը եկաւ մեր փոքրիկ տունը, նստեցանք մեր խոհանոցի սեղանին շուրջ, դատարկ թուղք փռեց սեղանին եւ ոգեշնչուած ըսաւ. «Գծեցէ՛ք ձեր երազանքի տունը»:

Մենք ցնցուած էինք. մենք չէինք պատկերացներ, որ կարելի էր նման բան մը ընել: Կինս անմիջապէս գործի անցաւ եւ սկսաւ գծել: Ան տարիներ շարունակ կ'երագէր այդ հնարաւորութեան մասին: Քիչ յետոյ ես նոյնպէս ներգրաւուեցայ այդ ընթացքին մէջ: Մենք մեծ ուրախութեամբ կ'ընէինք ասիկա, եւ որքան աւելի կը հասկնայինք, որ կրնանք նախագծել մեր տունը՝ ինչպէս որ կ'ուզենք, այնքան մեր ոգեշնչումը կ'աւելնար: Ոչինչ կը սահմանափակեր մեզ:

Ատկէ յետոյ մեր երազանքի տունը՝ գծած թուղթի վրայ, ուղարկուեցաւ ճարտարապետներու եւ նախագծողներու քով: Քանի մը օր յետոյ Ռոպերթը ցոյց տուաւ մեզի տան վերջնական նախագիծը: Մենք անհամբեր կը սպասէինք շինարարութեան սկիզբին:

Այն պահէն, երբ Ռոպերթի շինարարական խումբը սկսաւ փորել հողը, եւ աշխատանքները սկսան, մենք շինհրապարակ կ'երթայինք ամէն օր, իսկ երբեմն՝ օրը երկու անգամ, ամբողջ շինարարութեան ընթացքին: Մենք այնքան կը շտապէինք. հազիւ կը համբերէինք, մինչեւ որ մեր տան եւս մէկ մասը կը կառուցուէր: Այդ քանի մը ամիսները տարիներ թուացին մեզի, իսկ օրերը՝ շաբաթներ, քանի որ մենք կ'ակնկալէինք մեր տան ամէն հերթական աշխատանքի կատարումը եւ, ի վեր-

ջոյ, կը սպասեինք, որ պիտի տեղափոխուէինք այդտեղ: Մենք զարմանքով կը հետեւէինք, թէ ինչպէս մեր երազանքը՝ պարապ թուղթի վրայ գծած, կեանքի կը կոչուէր մեր աչքերուն առջեւ:

Մեր վերապրումները կարելի է շատ աննշան կերպով համեմատել Աստուծոյ զգացումներու եւ Իր երազանքի տան աւարտին սպասելուն հետ, սակայն Ան քանի մը ամիսէ շատ աւելի կը սպասէ ատոր: Ան կը սպասէ Իր տան աւարտին աշխարհի ստեղծագործութենէն ի վեր: Գրուած է. «Տէրը շինեց Սիօնը» (Սաղմոս 102.16) եւ «Սիօնի մէջէն՝ գեղեցկութեան կատարելիութենէն, Աստուած կը փայլի» (Սաղմոս 50.2):

Աստուած քանի մը հազար տարի է՝ կ'աշխատի Իր տան վրայ: Ան նախագծած է այն՝ նախքան մարդուն ստեղծելը: Շնորհիւ Իր ամենագիտութեան՝ Ան գիտէր, որ մարդը անկում պիտի ապրէր, թէւ ասիկա Իր ծրագիրը եւ Իր գործը չէր: Այնպէս որ, Իր կանխագիտութեամբ Ան որոշեց կառուցել Սիօնը, որ բաղկացած պիտի ըլլայ փրկագնուած մարդկութենէն:

Աստուած պէտք է սկսեր հիմքէն եւ գլխաւոր անկիւնաքարէն, որ անձամբ Յիսուս Փրկիչն է: Հայրը կ'ըսէ Անոր մասին. «Տե՛ս, ես քար մը կը դնեմ Սիօնի մէջ՝ փորձուած քար, թանկարժէք անկիւնաքար՝ որպէս հաստատ հիմք» (Եսայեայ 28.16, NIV): Քանի որ Հայրը նախագծեց եւ ծրագրեց Իր տունը արարչագործութենէն առաջ, Յիսուսը կը կոչուի «...աշխարհի սկիզբէն ի վեր մորթուած Գառնուկ» (Յայտնութիւն 13.8): Պետրոս կը գրէ. «Որ ճանչցուած էր աշխարհի սկիզբէն առաջ» (Ա. Պետրոս 1.20):

Յիսուս ոչ միայն հիմքը եւ գլխաւոր անկիւնաքարն է, այլեւ՝ գլխաւոր գործակատարը: Յիսուսը չթերացաւ Իր յանձնարարութեան մէջ, այլ անթերի կատարեց այն: Անմիջապէս Իր խաչելութենէն առաջ Ան աղօթեց Իր Հօրը. «Ես *աւարտեցի* այն գործը, որ Դուն տուած էիր Ինձի, որ ընէի» (Յովհաննէս 17.4, NKJV):

Հայր Աստուած սկսաւ Իր տան ամբողջական նախագիծը՝ որոշելով յստակ ժամանակ Յիսուսի աշխատանքին համար (տե՛ս Գաղատ. 4.4): Ատկէ յետոյ Ան նշանակեց մնացած գործակատարներուն՝ մեզ բոլորս: Այնուամենայնիւ, ինչպէս արդէն նշեցինք, մենք պէտք է ըլլանք ոչ միայն Անոր տան գործակատարները, այլեւ կառուցման նիւթը: Ինչպէս Պողոսը կը գրէ. «[Ան] ընտրեց մեզ Անորմով *աշխարհը ստեղծելէն առաջ*, որ մենք սուրբ եւ անարատ ըլլանք Անոր առջեւ» (Եփեսացիս 1.4): Կը նշանակէ՝ մենք Անոր տան կառուցման նիւթն ենք՝ այդ տան կենդանի քարերը:

Աստուած նաեւ ընտրեց մեզ՝ որպէս գործակատարներ, քանի որ գրուած է. «Որովհետեւ մենք Աստուծոյ գործակիցներն ենք՝ ստեղ-

ծուած Քրիստոս Յիսուսին, որպէսզի կատարենք այն բարի գործերը, որոնք Աստուած նախապէս պատրաստած է մեզի համար» (Եփեսացիս 2.10, NIV): Ուշադրութիւն դարձուցէք, որ Ան նախապէս որոշած է մեզի յանձնարարուած առաջադրանքները: Աստուածաշունչին մէջ գրուած չէ, որ մեր առաջադրանքները տրուած են աշխարհը հիմնադրուելէն ի վեր, թէւ ատիկա, անկասկած, հնարաւոր է: Անշուշտ, մենք գիտենք, որ «...գործերը աշխարհի սկիզբէն կատարուած էին» (Եբրայեցիս 4.3): Այնուամենայնիւ, ինչ կը վերաբերի մեր անձնական առաջադրանքներուն, միակ բանը, որ մենք կը գտնենք այն է, որ ատոնք տրուած են մեր ծնելէն առաջ: Դաւիթը կ'ըսէ. «Դուն տեսար ինձի մինչեւ իմ ծնիլը: Իմ կեանքի ամէն օրը գրուած էր Քու գիրքին մէջ: Ամէն վայրկեանը ծրագրուած էր, երբ իմ օրերէն ոչ մէկը տակաւին եղած էր» (Սաղմոս 139.16, NLT):

Մեր կեանքի գործը նախասահմանուած էր, մինչեւ որ մենք ձեւաւորուեցանք մեր մօր որովայնին մէջ: Այս ճշմարտութիւնը գրուած է Երեմիայի գիրքին մէջ. «Ես ճանչցայ քեզ մինչեւ որ ձեւաւորեցի քեզ քու մօր որովայնին մէջ: Մինչեւ քու ծնիլը ես առանձնացուցի քեզ եւ նշանակեցի քեզ որպէս Իմ պատուիրակ աշխարհին մէջ» (Երեմեայ 1.5, NLT): Պօղոս առաքեալը նոյնպէս կը գրէ. «Բայց երբ որ բարեհաճեց Աստուած, որ իմ մօր որովայնէն զիս որոշած է եւ Իր շնորհքով կանչած է...» (Գաղատացիս 1.15,16): Այս վկայութիւնները միայն կը հաստատեն Դաւիթի խօսքերը, որ մինչեւ ծնիլը բոլորս առանձնացած եղած ենք, որ յատուկ գործ կատարենք Աստուծոյ համար:

Այնպէս որ, գոյութիւն ունի զարմանալի ճշմարտութիւն. Աստուած գիրք գրած է ձեր մասին մինչեւ ձեր ծնիլը՝ որոշելով ձեր կեանքի ամէն մէկ վայրկեանը, երբ ձեր օրերէն ոչ մէկը տակաւին չէր եղած: Հարցը այն է, թէ արդեօ՞ք մենք կը կատարենք այն, ինչ որոշուած է մեզի համար: Սողոմոնը կը գրէ.

«Ես գիտեմ, որ այն ամէնը, ինչ Աստուած կ'ընէ, կը մնայ յաւիտեան: Ոչինչ կ'աւելնայ ատոր, եւ ոչինչ կը պակսի ատորմէ: Աստուած կ'ընէ ատիկա, որ մարդիկ վախնան Իր առջեւ: Այն, ինչ որ կայ, արդէն եղած է, եւ այն, ինչ որ պէտք է ըլլայ, արդէն եղած է. եւ Աստուած հաշիւ կը պահանջէ անցածի համար» (Ժողովող 3.14,15, NKJV):

Այս խօսքերուն մէջ այնքան բան գրուած է: Առաջին հերթին, Աստուած ծրագիր ունի: Ոչինչ կրնայ խանգարել ատոր իրականացումը, եւ մարդկութիւնը ոչինչ կրնայ անելցնել ատոր: Սողոմոնը կը շարունակէ՝ ըսելով, որ այն ամէնը, ինչ ներկայիս կը կատարուի, շատ ատենէ ի վեր

Աստուծոյ մտքին մէջ եղած է: Այն, ինչ պիտի կատարուի ապագային, նոյնպէս շատ վաղուց եղած է Աստուծոյ ծրագրին մէջ: Այնուամենայնիւ, մենք պէտք է հաշիւ տանք այն ամէնուն համար, ինչ որ արդէն եղած է: Արդեօ՞ք մենք քայլ առած ենք դէպի այն ամէնը, ինչ որ Աստուած պատրաստած էր մեզի համար: Թերեւս մենք ամէն ինչ փճացուցա՞ծ կամ թերացա՞ծ ենք մեր գործին մէջ: Թերեւս Աստուած ստիպուած եղած է նշանակել մէկ ա՞յլ մարդու՝ կատարելու համար այն առաջադրանքը Իր հիմնական ծրագրին, որուն համար մենք կանչուած եղած էինք:

Այս պահուն ես պէտք է կարելոր յայտարարութիւն մը ընեմ: Ամէն մարդու կեանքին մէջ Աստուածային կոչում կայ: Մեզմէ ամէն մէկը Աստուծոյ տան ծրագրին կարելոր մասն է: Այնպէս որ, լաւ կ'ըլլայ, որ մենք գիտնանք հետեւեալ ճշմարտութիւնը.

Ինչ կը վերաբերի ձեր կոչման, դուք պիտի չդատուիք ըստ այն գործերու, որոնք ըրած էք, այլ՝ ըստ այն գործերուն, որոնց համար կանչուած եղած էք:

Առիթ տուէ՛ք օրինակ մը բերել: Դատաստանի գահին առջեւ Յիսուս կրնայ ըսել.

– Աւետարանիչ Անտերսըն, Ես կանչած էի քեզ՝ հպուելու բազմաթիւ մարդոց: Առջե՛ւ եկուր եւ հաշի՛ւ տուր անոնց համար:

Այդ մարդը կրնայ գալ Յիսուսին առջեւ՝ շփոթած եւ դողալով, եւ ըսել.

– Տէ՛ր, Դուն կ'ուզէիք ըսել՝ հաշուապահ Անտերսըն, այնպէս չէ՞: Ես հաշուապահական ընկերութիւն ունեցած եմ: Ատիկա էր իմ աշխատանքը: Ես կ'աշխատէի շատ եկեղեցիներու եւ շահոյթ չհետապնդող կազմակերպութիւններու հետ: Շատերը մուտք գործեցին Քու թագաւորութիւնը այդ ծառայութիւններուն միջոցով: Դուն շփոթա՞ծ ես զիս ինչ որ մէկու մը հետ:

Տէրը կրնայ պատասխանել.

– Ո՛չ: Ես կանչած էի քեզ մինչեւ քու ծնիլը՝ շահելու բազմաթիւ մարդիկ Ինծի համար Ասիայի մէջ: Հաշի՛ւ տուր այն մասին, թէ ուր են անոնք: Եթէ դուն հնազանդէիք Ինծի, մեծ վարձատրութիւն կը ստանայիր այն պտուղին համար, որ կը հաւաքէիք Իմ թագաւորութեան համար: Իսկ հիմա քու գործերը կ'այրին, քանի որ Դուն չես հնազանդած ինծի:

Կրնայ նաեւ ըլլալ հետեւեալը: Յիսուս կրնայ ըսել.

– Հաշուապահ Ճո՛նս, Ես կանչած էի քեզ՝ յատուկ գործի համար: Առջե՛ւ եկուր եւ հաշի՛ւ տուր ատոր համար:

Այդ մարդը կրնայ շփոթած առջեւ երթալ եւ դողալով ըսել.

– Տէ՛ր, Դուն կ'ուզէիր ըսել՝ հովիւ ճոնս, ճի՞շդ է: Ես ինը հարիւր անդամ ունեցող եկեղեցւոյ հովիւ եղած եմ: Ջերոյէն կառուցած եմ այդ եկեղեցին:

Տէրը կրնայ պատասխանել.

– Ո՛չ, Ես կանչած էի քեզ՝ ըլլալու գործարար ոլորտին մէջ: Դուն պէտք է խոշոր հաշուապահական ընկերութիւն կառուցէիր, որ պիտի օգնէր Իմ եկեղեցիներէն եւ ծառայութիւններէն շատերուն արդիւնաւետ կատարելու այն, ինչին համար, որ Ես կանչած էի զանոնք: Եթէ դուն ջանասիրաբար փնտռէիր Ջիս, Ես ցոյց պիտի տայի քեզի ասիկա: Այդ ժամանակ բոլոր մարդիկ, որոնց կեանքին մէջ այդ ծառայութիւնները ազդեցութիւն կը ձգէին, կը հաշուեգրուէին քեզի. դուն կը վարձատրուէիր ամէն մէկ մարդու համար: Իսկ այժմ ոչինչ կը ստանաս քու գործին համար, քանի որ դուն չես հնազանդած Ինձի:

Ես նոյնպէս նշանակած էի քեզ կարգ ու կանոնի ծառայութեան ղեկավար, եկեղեցւոյ մը մէջ, որ կը գտնուէր այն քաղաքի միւս մասը, որուն մէջ դուն սկսար քու եկեղեցին: Թէեւ այդ եկեղեցւոյ անդամներու թիւը ընդամէնը հինգ հարիւրէն քիչ մը աւելի էր, սակայն անոնք հպուեցան շատերուն այդ քաղաքին մէջ: Եթէ դուն հնազանդէիր Ինձի, բոլոր քսան հազար մարդիկ, որոնց Անոնք բերին յաւիտենութեան մէջ, կը հաշուեգրուէին քեզի, որովհետեւ դուն կ'ըլլայիր այն եկեղեցւոյ կարելոր մասը, ուր Ես կանչած էի քեզ: Քանի որ դուն այդ եկեղեցւոյ մէջ չէիր, դու վարձատրութիւն չես ստանար այդ քսան հազար մարդու համար:

Թոյլ տուէք իրական դէպք մը պատմել: Մեր ծառայութեան խորհուրդի անդամներէն մէկը, որ իմ մտերիմ ընկերն է, ծաղկունք ապրող եկեղեցի մը կը հովվէ Միացեալ Նահանգներու հարաւ-արեւելեան մասին մէջ: Ան սկսաւ իր եկեղեցին 1991 թուականին՝ քսաներկու մարդոցմով, եւ հիմա այն գրեթէ չորս հազարի կը հասնի: Անոր եկեղեցին այն եկեղեցիներէն մէկն է, ուր Ես շատ դիւրաբար կը քարոզեմ, քանի որ մարդիկ հոգեւոր ծարաւ ունին: Այդ եկեղեցին շատ մարդոց է փրկութեան բերած եւ աշակերտած:

Եկեղեցին արագօրէն կ'աճէր բազմաթիւ աղօթքներու, ազդեցիկ քարոզներու եւ մեծ աշխատանքի շնորհիւ: Անոնք գեղեցիկ շէնք կառուցեցին՝ շատերը տեղաւորելու համար: Քանի մը տարի յետոյ իմ ընկերը նկատեց աչքի ինկող ալեհեր եւ միշտ լաւ հագած տղամարդ մը, որ կը յաճախէր ծառայութիւններուն: Ան նոյնպէս նկատեց, որ ամէն ծառայութեան ընթացքին անոր աչքերէն արցունքներ կը հոսէին, եւ զգաց, որ ատոնք ուրախութեան արցունքներ չէին:

Ի վերջոյ, այդ մարդը մօտեցաւ հովիւի օգնականներէն մէկուն եւ պատմեց, որ 1981 թուականին Տէրը պարզ ըսած էր իրեն, որ ինք պէտք է եկեղեցի սկսէր այդ քաղաքին մէջ: Քանի մը օր յետոյ ան տեսած էր երագին մէջ այն շէնքը, ուր իր եկեղեցին հաւաքոյթներ կ'անցընէր: Այդ երագը այնքա՛ն վառ էր, որ ան վարպետ նկարիչ մը գտած էր, որ օգնած էր անոր գծել իր տեսած շէնքը: Ատկէ յետոյ ան բախած էր դժուարութիւններու եւ հրաժարած էր եկեղեցի սկսիլ: Ան ծառայած էր այլ քաղաքներուն կարճ ժամանակով, եւ ի վերջոյ կրկին զբաղած էր գործարարութեամբ:

Այնուհետեւ ան կը բանայ խնամքով ծալած թուղթ մը եւ կ'ըսէ այդ հովիւի օգնականին, որ այդտեղ գծագրիչին կողմէն պատկերուած շէնքն է, որ ան նկարած էր 1981 թուականին: Նայելով այդ նկարին՝ հովիւի օգնականը ապշեցաւ: Ատիկա նոյն շէնքն էր, որ իմ ընկերը տարիներ յետոյ կառուցած էր, եւ որտեղ անոնք հաւաքոյթներ կանցընէին: Այդ ժամանակուրնէ իմ ընկերը մխիթարած է այդ մարդը, բայց ան կ'ըսէ, որ իր համար շատ դժուար է յաղթահարել իր զգացումները: (Անշուշտ, Աստուած չ'ուզեր, որ ան ապրի դատապարտութեան մէջ, այլ՝ սորվի, աճ ունենայ եւ հասկնայ, թէ ինչպէս ինքը կրնայ արդիւնաւէտ կերպով ծառայել Աստուծոյ մինչեւ կեանքի աւարտը):

Քանի մը տարի առաջ ես կը քարոզէի այս թեմայով մեծ համաժողովի մը ընթացքին: Ծառայութենէն յետոյ հովիւ մը՝ շատ ազդուած եւ քիչ մը վրդովուած, մօտեցաւ մեր խումբի անդամներէն մէկուն եւ հարցուց.

– Ան լուրջ չէր խօսեր այդ մասին, այնպէս չէ՞:

– Ան նկատի ունէր այն, ինչ որ ըսաւ,– պատասխանեց իմ խումբի անդամը:– Ասիկա գրուած է Աստուծոյ խօսքին մէջ: Իսկ ի՞նչ պատահած է:

Այդ հովիւը, որ յիսուն անց էր, պատասխանեց.

– Երբ ես երիտասարդ էի, վառ երագ տեսայ այն մասին, որ կ'ապրէի Ֆիլիփիններու մէջ եւ կը ծառայէի այդ ժողովուրդին: Այդ երագը այնքա՛ն իրական էր, որ ես համոզուած էի, որ պիտի տեղափոխուէի այդ երկիր: Բայց ատիկա այդպէս ալ տեղի չունեցաւ, եւ ես արդէն երեսուն տարի է՝ եկեղեցւոյ հովիւ եմ:

Մեր խումբի անդամը մեղմօրէն պատասխանեց.

– Եւ դուք ի՞նչ կը պատրաստուիք ընել:

Այդ հովիւը ոչինչ ըսաւ, պարզապէս հեռացաւ:

Մէկ տարի յետոյ մեր խումբի անդամը լուր ստացաւ այդ մարդէն: Ան այլեւս հովիւ չէր: Ան փոխանցած էր եկեղեցին իր օգնականներէն մէկուն եւ այժմ մեծ հաճոյքով կ'ապրէր Ֆիլիփիններու մէջ: Այդ նախկին

հովիւը կը գրէր. «Առաջին անգամ իմ կեանքին մէջ ես կը զգամ, որ կ'ընեմ ճիշդ այն, ինչին համար ստեղծուած եմ»:

Առիթ տուէք պատմել մէկ ուրիշ պատմութիւն, որ կը հաստատէ այս ճշմարտութիւնը: Կարճ ժամանակ առաջ իմ ընկերներէն մէկը հանդիպում կազմակերպեց իմ եւ ԱՄՆ-ի Ռազմածովային նաւատորմին մէջ ծառայող «ծովային փոկի»* մը հետ: Այս գիրքը գրելու ժամանակ այդ մարդը տակաւին զինուորական ծառայութեան մէջ էր: Այնպէս որ, անոր ինքնութիւնը պաշտպանելու համար, ես պիտի փոխեմ անոր անունը եւ Փոլ պիտի անուանեմ զինք: Երկու ժամ շարունակ ես երկիւղածութեամբ կը լսէի անոր վկայութիւնը:

Արդէն մօտաւորապէս քսան տարեկանին Փոլը երկամեայ Աստուածաշնչեան դպրոց աւարտած էր եւ ուսումնական գործընթացի կ'անցնէր եկեղեցւոյ մը երիտասարդական ծառայութեան մէջ: Իր ուսումնական գործընթացի երկրորդ ամրան ատեն Փոլին մեղադրեցին եկեղեցւոյ աղջիկներէն մէկուն հետ սեռական կապ ունենալու մէջ: Փոլը ըսաւ ինծի.

– Ճո՛ն, ես չէի կենակցած այդ աղջկան հետ: Նոյնիսկ գրաւիչ չէի համարեր զինք: Այնուամենայնիւ, եկեղեցւոյ առաջնորդները ոչ միայն հաւատացին այդ լուրին, այլեւ չմոռցան այն, եւ ես կորսնցուցի ամէն ինչ: Ոչ ոք այլեւս կը վստահէր ինծի: Անոնք արատաւորեցին իմ անունը եւ խնդրեցին (թէեւ իրականութեան մէջ հարկադրեցին) ինծի՝ հեռանալ:

Փոլը շարունակեց.

– Ես կը փնտռէի Աստուծոյ այնպէս, ինչպէս երբեք չէի փնտռած: Մէկ անգամ աղօթքի մէջ լսեցի, թէ ինչպէս Աստուած յստակ ըսաւ. «Ես չեմ կանչած քեզ եկեղեցական ծառայութեան մէջ, այլ կանչած եմ զինուորական ծառայութեան մէջ»:

Փոլը դիմեց Ցամաքային ուժերի, Ծովային ուժերու եւ Օդային ուժերու հաւաքագրող կեդրոններ, բայց զինք ոչ մէկ տեղ ընդունեցին: Մնացած էր միայն ռազմածովային նաւատորմը:

Երբ Փոլը դիմեց ռազմածովային նաւատորմ, հաւաքագրող սպան սկսաւ թուարկել առկայ պաշտօնատեղերու ցուցակը: Փոլը խիստ հիասթափեցաւ, որովհետեւ ատոնցմէ ոչ մէկը արծագանգ չէր գտներ իր սրտին մէջ՝ որպէս առաջնորդութիւն Աստուծմէ: Ջանալով բաց չձգել նորակոչիկին՝ սպան առաջարկեց նաեւ յատուկ ծրագրեր ռազմածովային նաւատորմի շրջանակներուն մէջ: Իմ նոր ընկերը ըսաւ, որ լսելով «ծովային փոկերու» մասին՝ ան հասկցաւ, որ յատկապէս աստի-

* Յատուկ նշանակութեան զօրքեր ամերիկեան ռազմածովային նաւատորմին մէջ, որոնց անուան յապաւումը (SEAL) նման է անգլերէն «փոկ» բառին:

կա պէտք է ընտրեր: Ան ստորագրեց զինուորական ծառայութեան պայմանագիրը:

Հաւաքագրող սպան փորձեց տարհանոգել Փոլին, քանի որ շատ քիչերը կ'անցնէին «ծովային փոկերու» նախապատրաստական ծրագիրը: Ան տեղեկացուց Փոլին, որ այդ հաւաքագրման գրասենեակ դիմողներէն ոչ մէկը անցած է այդ ծրագիրը, եւ որ այն կը համարուի ամենածանր զինուորական պատրաստութիւնը ամբողջ աշխարհին մէջ: Այնուամենայնիւ, Փոլը մեծ վճռականութիւն եւ ոգեշնչում կը զգար, քանի որ պէտք է կատարեր առաջին քայլը դէպի Աստուծոյ որոշուած ճանապարհը: Ան պնդեց, որ պէտք է ընդգրկուեր ճիշդ այդ խումբին մէջ:

Այնուամենայնիւ, ատոր ճանապարհին երկու լուրջ խոչընդոտ կար: Առաջինը՝ Փոլը լողալ չէր գիտեր: Ան ստիպուած էր աղօթել ատոր համար եւ ի վերջոյ ինքնուրոյն լողալ սորվիլ: Երկրորդը, ինչ որ աւելի հետաքրքրական կը դարձնէ անոր պատմութիւնը, այն է, որ երբ ան երեխայ էր, անոր ականջներուն մէջ յաճախ բժշկական խողովակներ կը դնէին. ան բազմաթիւ վիրահատութիւններ տարած էր՝ ականջներու խոռոչները բանալու համար: Այդ պատճառով արդէն երիտասարդ հասակին, երբ անոր ականջներու խոռոչները նոյնիսկ քիչ մը կը թրջուէին, ան տանջալի ցաւ կը զգար, որուն մէջ յաճախ ականջներու ուժգին բորբոքում կը յաջորդէր: Չնայած այդ ամէնուն՝ ան ի սրտէ կը հաւատար, որ Աստուծոյ կանչը այնպիսի բան չէր ըլլար, ինչին ինքը կրնար հասնիլ իր ուժերով:

Փոլը ինքնուրոյն լողալ սորվեցաւ եւ սկսաւ ջանասիրաբար աղօթել, որ իր ականջները բժշկուէին: Ամէնօրեայ ջրային մարզումները ցաւ կը պատճառէին անոր, բայց ան չէր յանձնուեր: Չորս ամիս շարունակ դիմանալէն եւ ամէն օր ուժգին ցաւ զգալէն յետոյ Փոլը արդէն կրնար ոչ միայն լողալ, այլեւ սուզուիլ մեծ խորութիւններու մէջ՝ բացարձակապէս առանց ցաւ զգալու: Ան բժշկուած էր եւ պատրաստ էր մասնակցելու «ծովային փոկերու» նախապատրաստական ծրագրին:

Նախապատրաստական ծրագիրն անցնելու ժամանակ Փոլը բախեցաւ շատ մեծ դժուարութիւններու, բայց ի վերջոյ անցաւ այն եւ միացաւ այդ պատերազմներով թրծուած եղբայրութեան: Ան արդէն տասնչորս տարուայ «ծովային փոկ» էր: Ան կրնար պատմել շատ պատմութիւններ այն մասին, թէ ինչպէս Աստուած միջամտած էր իրենց զինուորական առաքելութիւններու ժամանակ, եւ այն ալ՝ այնպիսի հրաշագործ ձեւերով, որ զինք լսելու ժամանակ կը փշաքաղուէի:

Այդ երեկոյ ես գիտէի, որ նստած էի Աստուծոյ մեծ ծառայողի կողքին, որ կանչուած չէր ամպիոնի ետեւ կանգնելու համար: Ան կանչուած

էր՝ հասնելու զինծառայողներուն եւ ծառայելու մեր ազգին: Այսօր Փոլլը պարզ «ծովային փոկ» չէ. ան «ծովային փոկերու» հրահանգիչ է: Ան թոյլ տուաւ Աստուծոյ շտկել իր ընթացքը, որպէսզի մուտք գործէր այն բարի գործին մէջ, որ ծրագրուած էր իր համար:

Ես շատ օրինակներ լսած եմ մարդոց մասին, որոնք, ի տարբերութիւն Փոլլին, չեն կատարած իրենց նախասահմանութիւնը: Ես ինքս նման օրինակներ տեսած եմ: Աւելի քան քսան տարի շարունակ ես եղած եմ բազմաթիւ եկեղեցիներու մէջ ամբողջ աշխարհով: Տեսած եմ աւագ հովիւներ, որոնք, ինչպէս ես գիտէի իմ սրտին մէջ, կանչուած էին հովիւի օգնականներ ըլլալու: Ես տեսած եմ գործարար մարդիկ, որոնք, ինչպէս ես գիտէի, պէտք է լրիւ ժամանակուան ծառայութեան մէջ ըլլային, եւ նոյնիսկ հովիւներ, որոնք կանչուած էին գործարար աշխարհին մէջ: Ես տեսած եմ մարդիկ ընկերակցական կառավարման կամ գործարար ոլորտներուն մէջ, որոնք սխալ տեղ էին. անոնք կ'աշխատէին ինչ որ մէկուն քով, քանի որ կը վախնային, որ պիտի ծախողէին, եթէ սկսէին իրենց սեփական գործը: Ես նոյնպէս տեսած եմ մարդիկ, որոնք անհաւատարիմ էին իրենց ղեկավարներուն, քանի որ կը ցանկային սեփական գործ ունենալ:

Ես տեսած եմ մարդիկ, որոնք ամուսնացած են Աստուծոյ կամքին հակառակ, ինչի պատճառով չեն կատարած իրենց կոչումը: Միւսները ենթարկուած են իրենց ընկերներու ազդեցութեան կամ խնդիրներու մէջ յայտնուած են անոնց պատճառով եւ կրկին չեն կատարած իրենց կոչումը: Ես տեսած եմ մարդիկ, որոնք ինկած են հանգիստի, մարզանքի, դրամի կամ իշխանութեան ձգտելու ծուղակը: Կարելի է անթիւ օրինակներ բերել, բայց իմաստը անիկա է, որ այդ հաւատացեալները չեն կատարած իրենց կոչումը Աստուծոյ տան կառուցման ծրագրին մէջ:

Այս խօսքերը կը սթափեցնեն մեզ, բայց բարի լուրը այն է, որ մեզմէ ոչ ոք պէտք է շեղի այն ուղիէն, որ Աստուած դրած է մեր առջեւ: Աստուած՝ մեր պատմութեան հեղինակն է, եւ Ան ի զօրու է առաջնորդել մեզ, որ աւարտին հասցնենք այն: Մենք պէտք է տանք մեզի հետեւեալ հարցը. ինչպէ՞ս գիտնամ, թէ ինչի համար կանչուած եմ ես՝ որպէս գործակատար: Մենք կը պատասխանենք այս կարեւոր հարցումին յաջորդ գլուխին մէջ: Նոյնպէս պիտի խօսինք այն մասին, թէ ինչպէս վերադառնանք, եթէ շեղած ենք ճիշդ ճանապարհէն:

ԿԱՆՉՈՒՄԸ ԱՍՏՈՒԾՄԷ

*«Որովհետև Աստուծոյ պարգեւները եւ
Անոր կանչը երբեք ետ չեն վերցուիր»:*
— Հռովմայեցիս 11.29, NLT

Շատերը կը սարսափին այն մտքէն, որ մարդը կրնայ շեղիլ Աստուծոյ ծրագիրէն՝ նոյնիսկ հետեւելով այնպիսի բաներու, որոնք բարի կամ Աստուածապաշտ կը թուան: Նման արձագանգը կարելի է հասկնալ: Այնուամենայնիւ, յիշեցէք, որ մենք կանչուած չենք՝ վախճալու ձախողումէն կամ պատիժէն. մենք կանչուած ենք, որ ունենանք Աստուծոյ երկիւղը: Տիրոջ երկիւղը կը պահէ մեզ Անոր խորհուրդին մէջ, Որուն մասին գրուած է. «Քու ականջները պիտի լսեն Ձինք: Անմիջապէս քու ետեւէն ձայն մը պիտի ըսէ. «Ասիկա է այն ճանապարհը, որմով դուն պէտք է երթաս՝ դէպի աջ կամ ձախ»» (Եսայեայ 30.21, NLT): Այնպէս որ, եկէք խօսինք այն մասին, թէ ինչպէս գիտնանք մեր տեղը Աստուծոյ տան կառուցման մէջ:

Առաջինը. դուք ջանասիրաբար փնտռա՞ծ էք զԱստուած:

Եթէ ձեզ հարցնեն, թէ արդեօ՞ք դուք կը կատարէք ձեր նախասահմանութիւնը, թերեւս մտածէք. *«Ես կ'ուզէի, որ այդպէս ըլլար: Բայց չեմ գիտեր, թէ ինչու համար կանչուած եմ»*: Առաջին հարցը, որ դուք պէտք է տաք ձեզի այն է, թէ արդեօ՞ք դուք ջանասիրաբար փնտռած էք զԱստուած: Գրուած է, որ Աստուած կը վարձատրէ Ձինք ջանասիրաբար եւ հաւատքով փնտռողներուն (տե՛ս Եբր. 11.6), ոչ թէ անոնց, որոնք ժամանակ առ ժամանակ կը փնտռեն Ձինք՝ լեցուն հարցերով եւ կասկածներով: Եթէ ինչ որ մէկը ջանասիրաբար փնտռէ զԱստուած՝ լիովին ակնկալելով, որ պատասխան պիտի ստանայ, Աստուած ցոյց պիտի տայ, թէ որն է անոր կոչումը այս աշխարհին մէջ:

Այն բանէն յետոյ, երբ ես փրկուեցայ Փուրտեու համալսարանի տղաներու հանրակացարանին մէջ, անմիջապէս սկսայ փնտռել Աստուծոյ կամքը: Ես կը սորվէի ճարտարագիտական համալսարանի մէջ եւ իւրաքանչիւր երկրորդ կիսամեակին կ'աշխատէի «ԷյՊիեմ» ընկերութեան մէջ:

Այն գործօններին մէկը, որոնք դրդեցին զիս գիտնալ իմ կոչումը՝ Աստուծոյ հնազանդելու ցանկութեան հետ մէկտեղ, իրադարձութիւն մըն էր, որ տեղի ունեցաւ իմ փրկութենէն քանի մը ամիս յետոյ: Ես գրասենեակի մը մէջ էի ութ-տասը այլ ճարտարագէտներու հետ, որոնք կը սօսէին իրենց դասընկերներէն մէկուն երեսունութերորդ տարեդարձը այդ ընկերութեան մէջ: Մենք պարզապէս կը գրուցէինք, եւ այդ մարդը ըսաւ բոլորիս.

– Այս երեսունութ տարուան ընթացքին ամէն օր ես ատելութեամբ աշխատանքի եկած էի:

Միւս ճարտարագէտները համաձայնեցան կամ քնծիծաղեցան. բոլորը՝ բացի ինծմէ: Ես ապշած էի:

Ես նորեկ էի այդ փորձառու մասնագէտներուն միջեւ եւ զարմացայ, թէ ինչու ոչ ոք հակառակը ըսաւ: Եւ հարցուցի.

– Ինչո՞ւ երեսունութ տարի աշխատած էք հոս, եթէ կ'ատէք այս գործը:

Ան շրջուեցաւ, նայեցաւ ինծի եւ ըսաւ.

– Ասիկա պարզապէս աշխատանք է:

Ես ինքս սկսած էի հակակրանքով աշխատանքի գալ: Իմ հայրը նոյնպէս ճարտարագէտ էր. Ան կ'ըսէր, որ ատիկա լաւ մասնագիտութիւն է, որ այդ աշխատանքը ապահով է եւ լաւ կը վարձատրուի: Բայց այդ դէպքը փոխեց իմ կարծիքը: Ես մտածեցի. *«Ո՛ր մէկ դրամ, ո՛ր մէկ ապահովութիւն եւ ոչ մէկ այլ բան կը խանգարէ զիս կատարելու այն, ինչին համար որ ես այս աշխարհ եկած եմ»*: Ես որոշում կայացուցի այդ գրասենեակին մէջ, որ պիտի գիտնամ, թէ ինչի համար կանչուած եմ, եւ թէ որն է յաջորդ քայլը դէպի իմ կոչումը:

Ես յայտնաբերեցի, որ Աստուած ցոյց պիտի տայ ձեր կեանքի կոչման ընդհանուր պատկերը, եթէ դուք փնտռէք Զինք ձեր հոգեւոր ընթացքի վաղ շրջանին: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ Ան ցոյց պիտի տայ ձեզի վերջը՝ սկիզբէն: Երիտասարդ հասակին Աստուած յայտնեց Յովսէփին, որ ան մեծ առաջնորդ պիտի ըլլայ, եւ նոյնիսկ անոր հայրը եւ եղբայրները պիտի ծառայեն իր հովանիին տակ: Այնուամենայնիւ, անցան տարիներ, մինչեւ որ ատիկա կատարուեցաւ: Մովսէսը գիտէր, որ պիտի առաջնորդէր Իսրայէլի ժողովուրդը, ատկէ առնուազն քառասուն տարի առաջ: Դաւիթը գիտցաւ, որ թագաւոր պիտի ըլլար, երբ տակաւին պատանի գառնարած էր, բայց անցան շատ տարիներ, մինչեւ որ ան սկսաւ առաջնորդել Իսրայէլը: Նոյնը կատարուեցաւ շատ այլ մարդոց հետ:

Ես կը ծրագրէի առաջին գիտական աստիճանն ստանալ Փուրտեու համալսարանին մէջ՝ որպէս ճարտարագէտ, շարունակել ուսումս՝ ստանալով տնտեսական կառավարման մագիստրոսի աստիճան Հարվըրտի համալսարանին մէջ եւ աշխատիլ ամերիկեան խոշոր ընկերութիւններու բարձրագոյն կառավարման ոլորտին մէջ: Ես պիտի ամուս-

նանայի, տարեկան քանի մը անգամ արձակուրդ պիտի առնէի եւ իմ ամբողջ եկամուտի տասներորդ մասը Աստուծոյ պիտի տայի: Ես այդպէս կը պատկերացնէի Անոր ծառայելը:

Որքան ասելի կը փնտռէի զԱստուած, այնքան ասելի կը զգայի, որ կանչուած եմ ծառայութեան համար: Ինծի աստիկա նոյնպէս հաճելի չէր, բայց ես բաւական խելացի գտնուեցայ՝ հասկնալով, որ եթէ հնազանդիմ Աստուծոյ, ես պիտի կայանամ կեանքին մէջ եւ իմ կեանքէն բաւականութիւն պիտի ստանամ: Հազիւ որ ես ըսի Աստուծոյ, որ պիտի հնազանդիմ Անոր, ինչ ալ Ան ըսէ, Աստուած սկսաւ ցոյց տալ իմ կոչման ընդհանուր պատկերը:

Տակաւին 1980-ական թուականներու սկիզբը Աստուած ցոյց տուած էր ինծի, որ ապագային Աստուծոյ Խօսքով ես ազդեցութիւն պիտի ձգեմ շատ ազգերու վրայ, եթէ հնազանդ մնամ Անոր: Կարիք չկայ ըսելու, որ աստիկա անհասանելի թուաց ինծի: Ես չէի պատկերացներ, թէ ինչպէս աստիկա կրնար տեղի ունենալ: Ես մեծցած էի փոքրիկ քաղաքի մէջ եւ չէի ճանչնար ազգային կամ միջազգային ազդեցութիւն ունեցող ոչ մէկ ծառայող:

Ինչպէս Յովսէփի եւ Դաւիթի պարագային, Աստուած ցոյց կու տայ մեզի վերջնական պատկերը, բայց ոչ՝ այն քայլերը, որոնք մենք պէտք է ընենք, որպէսզի հասնինք ատոր: Ան այդպէս կը վարուի, որպէսզի մենք շարժինք հաւատքով, ոչ թէ մեր դատողութեամբ: Մենք պէտք է ձգտինք հնազանդիլ Անոր ըսածին եւ քալել դէպի նպատակը: Այնուամենայնիւ, յաճախ յաջորդ քայլը ընելու ժամանակ մեզի կը թուայ, թէ կ'երթանք ոչ թէ դէպի մեր նպատակը, այլ՝ բոլորովին հակառակ ուղղութեամբ: Յովսէփը երազ տեսաւ մեծ առաջնորդ ըլլալու մասին, ինչէն յետոյ ստրկութեան վաճառուիլը եւ տասը տարի շարունակ ստրուկ մնալը այնքան էլ տրամաբանական չէին թուար: Ահա թէ ինչու գրուած է. «Վստահի՛ր Տիրոջը քու ամբողջ սրտով. մի՛ ապաւինի՛ր քու մտքին: Փնտռէ՛ Անոր կամքը քու բոլոր գործերուն մէջ, եւ Ան պիտի առաջնորդէ քու շաւիղները» (Առակաց 3.5,6, NLT):

Քանի մը ամիս յետոյ՝ համալսարանի ասարտական տարին, ես մնացի համալսարանական հանրակացարանին մէջ, մինչ միւս ուսանողները չորսօրեայ արձակուրդի էին Գոհութեան տօնը նշելու կապակցութեամբ: Ես ծոմ կը պահէի եւ կ'աղօթէի՝ փնտռելով Աստուծոյ առաջնորդութիւնը եւ կամքը իմ կեանքին մէջ: Երկու ամիս յետոյ առաջնորդութիւն ստացայ յաջորդ քայլին համար, եւ կը թուար՝ այն լիովին հակառակ էր այն քայլերուն, որոնք ես կրնայի ընել դէպի ծառայութիւնը: Միակ տրամաբանական տարբերակը՝ Աստուածաշնչեան դպրոց ընդունուիլն էր, բայց Տէրը առաջնորդեց զիս, որ դիմում ներկայացնեմ ճարտարագէտի աշխատանք ստանալու համար: Ահա թէ ինչու Աստուած կը պատուիրէ մեզ չապաւինիլ մեր մտքին:

Համալսարանին մէջ ես ծանօթացած էի շատ ընկերութիւններու հետ, եւ գրեթէ անմիջապէս հասկցայ, որ պէտք է աշխատիմ Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքի Ռոքուել ընկերութեան մէջ: Ատիկա անտրամաբանական կը թուար, որովհետեւ Տալլասի մէջ չկային Աստուածաշնչեան դպրոցներ, որոնց մասին ես տեղեակ էի: Տասներեք աշխատանքային առաջարկ ստացայ տարբեր քաղաքներէ, որոնցմէ մէկ քանիին մէջ Աստուածաշնչեան դպրոցներ կային, եւ բոլորը կ'առաջարկէին աւելի բարձր աշխատավարձ, քան Ռոքուելի մէջ: Այնուամենայնիւ, ես պարզապէս հնազանդեցայ:

Տալլաս հասնելուն պէս զացի եկեղեցի մը, եւ Տէրը ցոյց տուաւ ինձի, որ պէտք է տնկուիմ այդտեղ: Ես հոգեւոր աճ ունեցայ այդ եկեղեցւոյ մէջ՝ ծառայելու միջոցով: Այդ եկեղեցւոյ մէջ ծառայելը սկիզբ դրաւ այն ընթացքին, որ բերաւ ինձի հոն, ուր ես հիմա կը գտնուիմ:

Երկրորդ. դուք տնկուած է՞ք Աստուծոյ տունին մէջ

Ահա եւ երկրորդ պատճառը, թէ ինչու շատերը չեն գիտնար Աստուծոյ կամքը իրենց համար: Անոնք չեն տնկուիր տեղական եկեղեցւոյ մէջ: Աստուծոյ Խօսքը կը յայտնէ մեզի. «Տիրոջ տան մէջ տնկուածները մեր Աստուծոյն սրահներուն մէջ պիտի ծաղկին(բուսնին)» (Սաղմոս 92.13):

Այն մարդիկ, որոնք կը տնկուին Աստուծոյ տան մէջ (որ այսօր տեղական եկեղեցին է), պիտի բուսնին կամ պիտի ծաղկին *Աստուծոյ սրահներուն մէջ: Աստուծոյ սրահներէն* մէկը՝ Քրիստոսի ատեանն է: Այնպէս որ, մենք ծաղկունք կ'ապրինք ե՛ւ հիմա, ե՛ւ Ղատաստանի ժամանակ, եթէ տնկուինք եւ արմատ նետենք տեղական եկեղեցւոյ մէջ: Ասիկա Աստուծոյ ծրագիրն է:

Եկեղեցին կարգուած է Տիրոջ կողմէն, ոչ թէ մարդոց: Յիսուս կ'ըսէ. «Ես... կը շինեմ Իմ եկեղեցին, եւ դժոխքի դռները չեն կրնար յաղթել այն» (Մատթէոս 16.18): Ուշադրութիւն դարձուցէ՛ք «շինել» բառին: Ինչպէ՞ս Յիսուս կրնայ շինել կամ կառուցել Իր եկեղեցին, եթէ Ինքը ֆիզիքապէս հոս չէ: Պատասխանն է՝ Իր մարմինի, այսինքն՝ մեր միջոցով: Կրկին՝ ասիկա է պատճառը, որ մենք Անոր գործակիցներն ենք (կամ՝ գործակատարները): Ան կու տայ մեզի Իր շնորհքը, կարողութիւնները, պարգեւները եւ գերբնական զօրութիւնը: Այնուամենայնիւ, մենք պէտք է զիջող եւ հնազանդ անօթներ ըլլանք՝ Անոր գործը կատարելու համար: Հարցը հետեւեալն է՝ արդե՞՞ք մենք կը բարձրացնենք Անոր եկեղեցին՝ համագործակցելով Անոր հետ, թէ՞ կ'առաջնորդուինք սեփական ծրագրերով:

Յիսուսը հիմնած է համաշխարհային եկեղեցին, որ ենթաբաժնուած է տեղական եկեղեցիներու: Այս պնդման անթիւ օրինակներէն մէկը Անոր

խօսքերն են Յայտնութիւն գիրքին մէջ՝ ուղղուած եօթ առանձին տեղական եկեղեցիներու, որոնք կը գտնուէին Եփեսոսին, Ջմուռնիային, Պերգամոնին, Թիւատիրին, Սարդիկէին, Ֆիլատելֆիային եւ Լաւողիկէին:

Աստուածաշունչին մէջ եկեղեցին նաեւ կ'անուանուի Քրիստոսի մարմին: Եւ ինչպէս որ ընդհանուր եկեղեցին ենթաբաժնուած է տեղական եկեղեցիներու, այնպէս ալ ընդհանուր Քրիստոսի մարմինը ենթաբաժնուած է տեղական մարմիններու:

Տէրը Ինքը կ'որոշէ Իր ժողովուրդի տեղը Իր մարմնին մէջ: Պօղոսը կ'ըսէ մեզի. «Բայց հիմա Աստուած անդամները՝ անոնց ամէն մէկը դրաւ մարմինի մէջ՝ ինչպէս կամեցաւ» (Ա. Կորնթացիս 12.18): Թերեւս հետեւեալ արտայայտութիւնը զարմացնէ ձեզ, բայց *մենք չենք որոշէր, թէ որ եկեղեցին երթանք. Աստուած կ'որոշէ առիկա:*

Կեցէ՛ք եւ պահ մը նտածեցէ՛ք այս մասին: Շատերը կ'ընտրեն, թէ որ եկեղեցին յաճախեն, ըսես խօսքը մթերային խանութներու մասին է, փոխարէնը հարցնեն Աստուծոյ, թէ Ան ուր կը ցանկայ, որ անոնք ըլլան: Ինչպէ՞ս դուք կրնաք կատարել ձեր կոչումը, եթէ չէք գտնուիր Անոր մարմինի ճիշդ բաժնին մէջ: Մարդուն մարմինի ամէն մէկ մաս խնամքով միացուած է համապատասխան հատուածներու՝ համաձայն Աստուծոյ ծրագիրին: Ձեռքը մեծ դժուարութիւններ կ'ունենար, եթէ այն միացուած ըլլար ծնկապանակին: Նոյն կերպով, մենք պէտք է փնտռենք Աստուծոյ կամքը, երբ կը պատրաստուինք տեղափոխուիլ որեւէ քաղաք կամ միանալ որեւէ տեղական եկեղեցւոյ:

Մեզմէ ամէն մէկը ունի իր դերը տեղական եկեղեցւոյ մէջ: Գրուած է.

«Արդ դուք Քրիստոսի մարմնին էք եւ իւրաքանչիւրը մաս կը կազմէ Անոր մարմինին: Եւ Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիներ. նախ...» (Ա. Կորնթացիս 12.27,28):

Ատկէ յետոյ Պօղոսը կը թուարկէ շարք մը գլխաւոր ծառայութիւններ տեղական եկեղեցւոյ մէջ: Թէեւ այս հատուածին մէջ ան սպառիչ ցուցակ չի տրամադրեր մեզի, մենք գիտենք այլ նորկտակարանեան հատուածներէն, որ ամէն մէկ հաւատացեալ Քրիստոսի մարմինի մասն է, եւ ամէն մէկը կենսականօրէն կարելոր դեր կը կատարէ, որ չի տարբերիր մեր մարմինի մասերու դերէն: Եթէ մենք չենք գործեր այն մարմինին մէջ, որուն մէջ նշանակուած ենք, տեղական եկեղեցին հաշմանդամ կը դառնայ, ինչպիսիս որ կ'ըլլար ձեր մարմինը, եթէ ձեր անդամներէն ինչ որ մէկը (օրինակ՝ ոտքը, աչքը կամ երիկամը) գործէր անկախ ձեզմէ, բոլորովին չգործէր կամ առանձնանար մարմինէն:

Ցաւալին այն է, որ Յիսուս Քրիստոսի ծառայութիւնը չ'իրականանար մեր քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, որովհետեւ տեղական եկեղեցիները

ծանր հաշմանդամ են: Ո՞րն է ատոր պատճառը: Յաճախ պատճառը ոչ թե անարդիանաւետ առաջնորդներն են, այլ հաւատացեալները, որոնք կը ցանկան անկախ ըլլալ: Կրնա՞ք պատկերացնել, եթէ իմ աչքը, ոտքերը, ոտնաթաթերը կամ մարմինիս մէկ ուրիշ մաս որոշէր, որ պիտի ընէ՝ ինչ որ կը ցանկայ: Զարմանալի է, թէ Աստուած ինչ կրցած է կատարել Ամերիկայի մէջ, եթէ հաշուի առնենք մեր տեղական եկեղեցիներու վիճակը:

Ո՞րն էր պատճառը, որ առաջին եկեղեցին՝ ի հակադրութիւն մեր օրերուն, արագօրէն է բուռն կերպով կ'աճէր: Եկէ՛ք տեսնենք.

«Անոնք միացան այլ հաւատացեալներու հետ եւ նուիրուեցան առաքեալներու ուսմունքներուն եւ շփումին, Տիրոջ ընթրիքին բաժնեկցելուն եւ աղօթքին... Եւ հաւատացեալները մշտապէս միասին կը հաւաքուէին... Անոնք ամէն օր միասին կ'երկրպագէին Տաճարին մէջ, կը հանդիպէին տուներուն մէջ՝ Տիրոջ ընթրիքի համար, եւ կը կիսուէին իրենց կերակուրով մեծ ուրախութեամբ եւ առատածեռնութեամբ՝ ամբողջ այդ ընթացքին փառաբանելով զԱստուած եւ վայելելով բոլոր մարդոց բարեացակամութիւնը: Եւ ամէն օր Տէրը կ'աւելցնէր անոնց խումբի այն մարդիկը, որոնք կը փրկուէին» (Գործք 2.42–47, NLT):

Դուք կը տեսնէք, որ հաւատացեալները տնկուած էին տեղական մարմինին մէջ: Անոնք միասին կ'երկրպագէին, կը լսէին միեւնոյն ուղերձները, ընդհանուր տեսիլք ունէին եւ միաբան էին: Վերջաւորութեան եկեղեցին առողջ աճ ունէր: Մարդիկ կը ծառայէին Տիրոջը իրենց տեղական եկեղեցւոյ միջոցով, եւ այդ ծառայութիւնը կ'ազդէր նաեւ անոնց ընտանեկան կեանքին վրայ:

Առաջին եկեղեցւոյ հաւատացեալներու համար տեղական եկեղեցւոյ մասնիկը ըլլալը անոնց կեանքն էր: Որոշ ժամանակ յետոյ նոյնիսկ խնդիր յառաջացաւ, երբ որոշ այրիներու սնունդ չէր տրամադրուեր: Առաքեալները համախմբեցին հաւատացեալներու տեղական մարմինը եւ ըսին անոնց, որ լաւ չէ, որ առաջնորդները ձգեն Աստուծոյ Խօսքի ծառայութիւնը՝ կերակուր մատակարարելու համար. «Նայեցէ՛ք ձեր մէջ, եղբայրներ,– ըսին առաքեալները,– եւ ընտրեցէ՛ք եօթ տղամարդ, որոնք յարգանք կը վայելեն, լեցուած են Սուրբ Հոգիով եւ իմաստութեամբ: Մենք պիտի նշանակենք զանոնք այս գործին համար» (Գործք 6.3, NLT):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ առաջնորդները չըսին. «Մեզի կամաւորներ պէտք են: Ինչ որ մէկը կրնա՞յ ժամանակ տրամադրել՝ այս կիներուն ծառայելու համար»: Ո՛չ, բոլոր հաւատացեալները նուիրուած կը ծառայէին, որովհետեւ անոնք տնկուած էին տեղական եկեղեցւոյ մէջ: Անձամբ եւ կը հաւատամ, որ ամէն մէկ անդամ յոյս ունէր, որ ինքը պիտի ընտրուէր՝ ծառայելու համար: Ընտրուեցան եօթ տղամարդիկ.

«Ասոնց առաքեալներուն առջեւ կայնեցուցին: Անոնք ալ աղօթք ընելով ձեռքերնին անոնց վրայ դրին:

Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր, ու աշակերտներուն թիւը խիստ կը շատնար Երուսաղէմի մէջ: Նոյնիսկ քահանաներէն շատեր նոր հաւատքին կը յարէին» (Գործք 6.6,7):

Առաքեալները ձեռնադրեցին այդ եօթը մարդիկը: Այն օծութիւնը, որ անոնք կը փոխանցէին, նախատեսուած չէր ամպիոնէն ծառայելու, տնային խումբերուն սորվեցնելու, փառաբանութիւն եւ երկրպագութիւն առաջնորդելու կամ ծառայողական ճանապարհորդութեան երթալու համար: Այն նախատեսուած էր եկեղեցւոյ այրիներուն սնունդ մատակարարելու համար: Ջարմանալի՜ է:

Այնուամենայնիւ, ուշադրութիւն դարձուցէ՛ք՝ հազիւ որ այդ եօթ տղամարդիկ ստանձնեցին իրենց ծառայութիւնը Քրիստոսի մարմնին մէջ, որքան ալ այն անկարելոր թուար, *Աստուծոյ խօսքը տարածուեցաւ*, եւ աշակերտներու թիւը խիստ շատցաւ Երուսաղէմի մէջ: Հոս մենք զարմանալի փաստ մը կը յայտնաբերենք: Գործք առաքելոց առաջին գլուխէն մինչեւ հինգերորդ գլուխի աւարտը քանի մը անգամ կ'օգտագործուի «աւելնալ» («շատնալ») բառը՝ Երուսաղէմի եկեղեցւոյ աճը նկարագրելու համար: Ահա որոշ դէպքեր.

«...Եւ այդ օրը մօտաւորապէս երեք հազար մարդ *աւելցաւ անոնց*» (Գործք 2.41, NKJV):

«Եւ Տէրը ամէն օր փրկուածներուն թիւը կ'աւելցնէր եկեղեցւոյ հետ» (Գործք 2.47):

«Եւ հաւատացեալները հետզհետէ *կ'աւելնային* Տիրոջը բազմութիւններով՝ եւ տղամարդիկ, եւ կանայք» (Գործք 5.14, NKJV):

Մինչեւ այս պահը, միայն առաքեալները կը կատարէին ծառայութեան գործը տեղական եկեղեցւոյ մէջ, եւ Պետրոսը միակ քարոզիչն էր, որուն մասին գրուած է:

Այնուամենայնիւ, ինչ որ պահ մը հաւատացեալները գիտակցեցան, որ ամէն մէկը երկու կարելոր պարտականութիւն ունի: Առաջինը՝ հռչակել եւ սորվեցնել Աւետարանը այլ մարդոց: Երկրորդը՝ կատարել որեւէ գործ տեղական եկեղեցւոյ մէջ:

Գործք 5.42–6.1-ին գրուած է, թէ ինչ տեղի ունեցաւ, երբ բոլոր հաւատացեալները գիտակցեցան, որ պէտք է պատմեն Յիսուսի յարութեան զարմանալի պատմութիւնը. «Եւ ամբողջ օրը չէին դադրած տաճարին եւ տուններուն մէջ սորվեցնել եւ Յիսուս Քրիստոսին մասին աւե-

տարանելի: Եւ այն օրերուն, երբ որ աշակերտները շատցան...»: Պետրոսը ոչ մէկ պարագային կրնար քարոզել ամէն տունի, որովհետեւ այդ ժամանակ չկար ձայնասփիւռ, հեռուստատեսութիւն եւ համացանցային կապ: Հոսկէ մենք կը տեսնենք, որ բոլոր հաւատացեալները կը հռչակէին եւ կը սորվեցնէին Յիսուս Քրիստոսի Աւետարանը իրենց դրացիներուն: Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ այժմ եկեղեցւոյ մէջ աշակերտները ոչ թէ կ'աւելնային, այլ՝ կը շատնային: Ասիկա առաջին անգամն է Գործք առաքելոց գիրքին մէջ, երբ գրուած է բուռն աճի մասին:

Այնուամենայնիւ, ասորմով շատացումը չաւարտիր: Հազիւ որ հաւատացեալները ստանձնեցին իրենց ծառայութիւնները եկեղեցւոյ մէջ (որուն օրինակը՝ այրիներուն ծառայող մարդիկն էին), գրուած է, որ հաւատացեալներու թիւը ոչ թէ պարզապէս կը շատնար, այլ՝ *խիստ կը շատնար*: Խիստ շատնալը կը նշանակէ՝ *աննախադէպ աճ*:

Թոյլ տուէ՛ք ցոյց տալ ձեզի տարբերութիւնը աւելացման եւ շատացման (կամ՝ խիստ շատացման) միջեւ: Պատկերացուցէ՛ք, որ կայ հովիւ մը, որ ամէն ամիս 10.000 մարդ կը շահի Տիրոջ համար: Դուք կը համարէի՞ք, որ անոր ծառայութիւնը արդիւնաւէտ է: Ամենայն հաւանականութեամբ՝ այո՛: Բայց գիտէ՞ք, թէ որքան ժամանակ կը պահանջուէր, որպէսզի ան հասնէր ամբողջ աշխարհին: Պատասխանը ցնցող է՝ 50.000 տարի, եւ այն ալ՝ եթէ այդ ընթացքին ոչ ոք ծնի եւ մահանայ: Այսինքն՝ ուր անգամ աւելի երկար, քան մարդկութեան կեանքը այս երկրի վրայ: Ասիկա անհնա՛ր է:

Այժմ թոյլ տուէ՛ք խիստ շատացման օրինակ մը բերել: Օրինակ՝ դուք կը շահիք երկու մարդ եւ կ'ընդգրկէք զանոնք ձեր տեղական եկեղեցւոյ մէջ: Յաջորդ ամիս անոնցմէ երկուքն ալ երկուքական մարդ կ'առաջնորդեն Տիրոջը եւ կ'ընդգրկեն զանոնք եկեղեցւոյ մէջ: Յաջորդ ամիս այդ չորսը կ'ընեն նոյնը, եւ յաջորդ ամիս այդ ութ մարդոցմէ ամէն մէկը երկու մարդ կ'առաջնորդէ Տիրոջը եւ կը միացնեն եկեղեցւոյ: Եթէ այսպէս շարունակուի, գիտէ՞ք, թէ որքան ժամանակ կը պահանջուի՝ Աւետարանը ամբողջ երկրի բնակչութեան հասցնելու համար: Պատասխանն է՝ ընդամէնը երեսուներեք ամիս: Այո՛, կը պահանջուի երեք տարիէն պակաս ժամանակ: Ասիկա խիստ շատնալն է:

Այժմ կը հասկնա՞ք, թէ ինչպէս կրնար տեղի ունենալ հետեւեալը Աստուածաշունչին մէջ.

«Ասիկա շարունակուեցաւ երկու տարի, մինչեւ որ Ասիայի [գաւառի] *քորոր* բնակիչները՝ հրեաները, ինչպէս նաեւ յոյները, լսեցին Տիրոջ Խօսքը...» (Գործք 19.10, AMP):

Բոլոր բնակիչները: Եթէ Աստուածաշունչին մէջ գրուած է՝ *քորոր*, կը նշանակէ՝ խօսքը ամէն մէկուն մասին է: Հոս գրուած է ոչ թէ քաղա-

քի, այլ՝ ամբողջ տարածաշրջանի մը մասին: Անոնք չունին արբանեակներ, հեռուստատեսութիւն, ծայնասփիւռ, ընկերակցական ցանցեր, եւ նոյնիսկ՝ հեծանիւներ: Ասիկա աննախադէպ աճ է:

Խիստ շատացման համար անհրաժեշտ է հաւատացեալներու առողջ մարմին: Առողջ մարմինը բաղկացած է տեղական եկեղեցւոյ մէջ տնկուած հաւատացեալներէ, ինչը կը նշանակէ, որ անոնք կը ծառայեն այդ տեղական եկեղեցւոյ մէջ (կը կերակրեն այրիները, կը պահպանեն կարգ ու կանոնը, կը հսկեն կառատունքը, կը դիմաւորեն մարդիկ, կը քարոզեն Աւետարանը բանտերուն մէջ, կը ծառայեն մանուկներուն եւ այլն): Այդ ծառայող մարդիկ նոյնպէս կը հասցնեն Աւետարանը իրենց աշխատակիցներուն եւ դրացիներուն եւ կը միացնեն զանոնք իրենց տեղական եկեղեցւոյ մէջ: Յիշեցէ՛ք՝ Յիսուսը պատուիրեց աշակերտել բոլոր ազգերը, ոչ թէ պարզապէս դարձի բերել զանոնք: Մենք պէտք է տեղական եկեղեցի բերենք այն մարդիկը, որոնց կը քարոզենք, որպէսզի անոնք սորվին այն ամէնը, ինչ որ Յիսուս պատուիրեց մեզի (տե՛ս Մատթէոս 28.20): Անհրաժեշտ է տեղական եկեղեցւոյ լիարժէք մարմին, որուն մէջ կը գործեն բոլոր պարգեւները, որպէսզի մարդիկ հասունանան Քրիստոսի մէջ:

Բանալին՝ տեղական եկեղեցւոյ մէջ տնկուած ըլլալն է, որովհետեւ հոն մենք ծաղկունք կ'ապրինք: Փիլիպպոսը՝ եօթը տղամարդոցմէ մէկն էր, որոնց ընտրեցին այրիներու սեղաններուն ծառայելու համար: Այնուամենայնիւ, յետոյ Գործք առաքելոց գիրքին մէջ անոր անունը արդէն Փիլիպպոս աւետարանիչ է: Անոր ծառայութիւնը ընդլայնուեցաւ եւ ընդգրկեց բազմաթիւ քաղաքներ: «Եւ հետեւեալ օրը հոնկէ դուրս ելանք մենք՝ Պողոսի ընկերներս, եկանք Կեսարիա եւ, Փիլիպպոս աւետարանիչի տունը մտնելով, որ այն եօթէն էր, անոր քով կեցանք» (Գործք 21.8):

Թէեւ Փիլիպպոսը արդէն մեծ աւետարանիչ էր, եւ Տէրը զինք այլ քաղաք տեղափոխած էր, զինք տակաւին կը ճանչնային որպէս այն եօթ տղամարդոցմէ մէկը, որոնք սնունդ կը մատակարարէին այրիներուն: Տեղական եկեղեցւոյ մէջ ծառայելը առանցքային դեր կատարեց Փիլիպպոսի համար՝ օգնելով անոր մտնելու իր կեանքի կոչման մէջ: Ես կ'ըսեմ մարդոց հետեւեալը. «Թերեւս դուք մեծ կոչում ունիք, բայց այն պատշաճ կերպով չի հասուննար, եթէ սկիզբ չառնէ տեղական եկեղեցւոյ մէջ տնկուելէն»:

Թոյլ տուէք կրկնել սաղմոսերգուի բառերը. «Տիրոջ տան մէջ տնկուածները մեր Աստուծոյ սրահներուն մէջ պիտի բուսնին (ծաղկին)» (Սաղմոս 92.13): Մտածեցէ՛ք «տնկուած» բառի մասին: Որպէսզի հասկնաք, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ թագաւորութիւնը, դուք պէտք է մտածէք ցանքի եւ հունձքի օրէնքի մասին: Յիսուս ըսաւ Իր աշակերտներուն, որ եթէ

անոնք չհասկնային սերմի, հողի եւ հունձքի սկզբունքները, անոնք չէին կրնար հասկնալ Իր ամակներէն ոչ մէկը (տե՛ս Մարկ. 4.13): Պարզ ըսելու համար՝ Աստուծոյ ամբողջ թագաւորութիւնը այնպէս է.

«...որպէս թէ մէկ մարդ սերմ նետէր հողին մէջ: Եւ գիշեր-ցերեկ քնանար եւ արթննար, եւ սերմը բուսնի եւ աճի այնպէս, որ ան չի գիտեր: Որով-հետեւ երկիրը ինքն իրեն պտուղ կը բերէ՝ ամառ խոտը, յետոյ հասկը, եւ անոնցմէ յետոյ լեցուած ցորեն՝ հասկի մէջ: Բայց երբ որ պտուղը տայ, շուտով պիտի ուղարկէ մանգաղը, որովհետեւ հունձքը հասած է» (Մարկոս 4.26–29):

Ենթադրենք՝ ես բուռ մը տարբեր տեսակի սերմեր ունիմ, եւ բոլորը մրգատու ծառերու սերմեր են, բայց ես ծանօթ չեմ ատոնց: Միակ միջոցը, որով կրնամ գիտնալ, թէ ինչ սերմեր ունիմ, ատոնք ցանելն է, հողի մէջ դնելէն որոշ ժամանակ յետոյ ես կը գիտնամ, թէ ինչ սերմեր էին ատոնք:

Ամէն մէկուս ներսը Աստուած կը դնէ նախասահմանուած կոչում եւ պարգեւներ՝ այդ կոչումը իրականացնելու համար. «Ան նորովի ստեղծեց մեզ Քրիստոս Յիսուսի մէջ, որպէսզի մենք ընենք այն բարի բաները, որոնք Ան վաղուց ծրագրած է մեզի համար» (Եփեսացիս 2.10, NLT), եւ «Որովհետեւ Աստուծոյ շնորհքը եւ կոչումը զոջալ չունի» (Հռովմայեցիս 11.29): Ըստ Յիսուսին՝ իմ կոչումը եւ պարգեւները իմ ներսն են՝ սերմի տեսքով: Եթէ ես տնկուիմ եկեղեցւոյ մէջ, ես կը հասնիմ այն կոչումին, որ Աստուած տուած է ինծի: Հակառակ պարագային՝ ես կրնամ օգտագործել իմ պարգեւները ոչ այնպէս, ինչպէս նախատեսած է իմ Ստեղծողը: Այնպէս որ, մի՛ խաբուիք յաջողութեամբ՝ ըստ այս աշխարհի չափանիշներուն: Թերեւս դուք մեծ յաջողութեան հասնիք՝ շնորհիւ ձեր պարգեւներուն, բայց գործածեցէք ատոնք Տիրոջ ծրագրին անհնազանդ կերպով:

Թոյլ տուէք օրինակ մը բերել: Այս աշխարհին մէջ կան շատ երգիչներ, որոնք հրաշալի ձայն ունին եւ իրենց կատարումով կրնան յուզել մարդոց՝ մինչեւ արցունքները: Այդ պարգեւը տրուած էր անոնց, որպէսզի անոնք փառաւորէին զԱստուած եւ դրդէին մարդիկ՝ փնտռելու Անոր սիրտը եւ ցանկութիւնները: Այնուամենայնիւ, անոնք այնպէս ալ չկատարեցին իրենց նախասահմանութիւնը, քանի որ չփրկուեցան եւ չտնկուեցան որեւէ տեղական եկեղեցւոյ մէջ:

Ես կրնամ բազմաթիւ օրինակներ բերել այն մարդոց մասին, որոնք չեն ընդունած Յիսուսը իրենց կեանքի ընթացքին: Այնուամենայնիւ, կան մարդիկ, որոնք նուիրած են իրենց սիրտը Յիսուսին, բայց անկանոն կերպով կը յաճախեն եկեղեցի: Անոնք չեն կատարեր իրենց բարձրագոյն կոչումը Աստուծոյ թագաւորութեան մէջ, քանի որ տնկուած չեն: Թերեւս անոնք

կանչուած են, որ ազդեցութիւն ձգեն մարդոց վրայ եկեղեցիէն դուրս, եւ թերեւս անոնք կ'ընեն ատիկա որոշ չափով, բայց անոնց ազդեցութիւնը շատ ատելի մեծ պիտի ըլլար, եթէ տնկուած ըլլային եկեղեցւոյ մէջ:

Մարդը կրնայ զգալ, որ որոշակի պարգեւներ ունի եւ, իր կարծիքով, լաւագոյնս գործածել ատոնք: Այնուամենայնիւ, ինչպէս որ դուք չէք կրնար գիտնալ, թէ ինչ ձեւ, ամրութիւն եւ այլ յատկանիշներ կ'ունենայ ծառը, քանի տակաւին այն սերմի տեսքով է, այդպէս ալ չէք կրնար գիտնալ, թէ ինչպիսի կոչում Աստուած տուած է ձեզի, մինչեւ չտնկուիք տեղական եկեղեցւոյ մէջ: Ասիկա Աստուծոյ ծրագիրն է, ոչ թէ մարդունը:

Յաջորդ խնդիրը այն է, որ հաւատացեալները այլ եկեղեցի կ'երթան, երբ իրենց եկեղեցւոյ մէջ խնդիրներ կ'առաջանան: Այսօր մարդիկ դիւրաբար կը հեռանան եկեղեցիէն, եթէ ինչ որ սխալ բան տեսնեն, յատկապէս՝ առաջնորդներու մօտ: Թերեւս խնդիրը այն է, թէ ինչպէս առաջնորդները կը ղեկավարեն եկեղեցին, ինչպէս կը հաւաքուին զոհաբերութիւնները, կամ ինչպէս կը ծախսուին գումարները: Եթէ մարդոց հաճելի չէ այն, ինչ որ կը քարոզէ հովիւը, անոնք կը հեռանան: Թերեւս հովիւին դժուար է մօտենալ կամ, ընդհակառակը՝ ան ազատ կերպով կը հաղորդակցի մարդոց հետ: Կամ խնդիրը այն է, որ մարդը քիչ ուշադրութիւն կը ստանայ իր համայնքի անդամներէն: Այս ցուցակը կարելի է անվերջ շարունակել: Փոխարէնը պայքարին իրենց դժուարութիւններու հետ եւ պահպանեն յոյսը իրենց սրտին մէջ, մարդիկ կը փախչին հոն, ուր, կը թուայ, թէ հակառակութիւն չկայ:

Եկէ՛ք ճիշդը խօսինք: Յիսուսը՝ եկեղեցւոյ միակ կատարեալ հովիւն է անդամն է: Այդ պարագային, ինչո՞ւ մենք՝ արեւմտեան մշակոյթի մարդիկ, կը փախչինք խնդիրներէն, փոխարէնը համարձակ ընդունինք եւ հարթենք ատոնք: Մենք կը սկսինք երթալ եկեղեցիէ եկեղեցի՝ անթերի առաջնորդներ եւ անդամներ ունեցող համայնք փնտռելով:

Բայց յիշեցէ՛ք՝ սատանան կը փորձէ վիրաւորել մեզ եւ հեռացնել այն տեղէն, ուր Աստուած կարգած է մեզ: Մեր թշնամին կ'ուզէ արմատախիլ ընել մարդիկ այն տեղէն, ուր Աստուած տնկած է զանոնք: Եթէ ան կարենայ հեռացնել ձեզ, կը նշանակէ՝ անոր ծրագիրը յաջողեցաւ: Եթէ դուք անսասան մնաք նոյնիսկ մեծ դժուարութիւններու ժամանակ, դուք կը խափանէք անոր ծրագիրները եւ կ'իրականացնէք Աստուծոյ ծրագիրը:

Կրկին՝ «Տիրոջ տան մէջ *տնկուածները* մեր Աստուծոյ սրահներուն մէջ պիտի բուսնին»: Ի՞նչ պիտի կատարուի բոյսի հետ, եթէ այն երեք շաբաթը մէկ տեղափոխուի: Այդ բոյսի արմատները պիտի թուլանան, եւ այն լիարժէք պիտի չաճի եւ պիտի չհասուննայ: Եթէ որեւէ բոյս շարունակ տնկուի տարբեր տեղերու մէջ, կը մահանայ:

Շատերը եկեղեցի է եկեղեցի կ'երթան՝ փորձելով զարգացնել իրենց ծառայողական կոչումը: Եթե անոնց չեն ընդունիր հոն, ուր անոնք կարգուած են, վիրաւորանքը դիւրաբար գլուխ կը բարձրացնէ: Եթէ ըլլայ այնպիսի բան, որուն հետ անոնք համաձայն չեն, անոնք կը վիրաւորուին եւ կը հեռանան: Անոնք կ'երթան՝ մեղադրելով եկեղեցւոյ առաջնորդները: Այդ մարդիկ կուրօրէն չեն տեսներ իրենց իսկ բնաւորութեան թերութիւնները եւ չեն հասկնար, որ Աստուած կը մաքրէ իրենց այն ճնշման միջոցով, որուն իրենք կ'ենթարկուին: (Այս ճշմարտութիւնը չի սահմանափակուիր ծառայութեամբ, այլ կը վերաբերի նաեւ ամուսնութեան, աշխատանքին եւ այլ յարաբերութիւններուն):

Եկէք սորվինք բոյսերու եւ ծառերու օրինակով, որ Աստուած ցոյց կու տայ մեզի: Երբ պտղատու ծառի շիւղ տնկեն հողին մէջ, այն պէտք է դիմանայ ուժգին անձրեւներու, քամիներու եւ կիզիչ արեւի: Եթէ այդ շիւղ խօսիլ գիտնար, պիտի ըսէր. «Կը խնդրե՛մ, հեռացուցէ՛ք զիս հոսկէ: Տարէ՛ք հոն, ուր չկան ուժասպառ ընող տաքութիւն եւ քամոտ փոթորիկներ»:

Եթէ այգեպանը լսէր այդ շիւղն, իրականութեան մէջ, վնաս պիտի հասցնէր ատոր: Ծառերը կը դիմանան կիզիչ արեւին, քամիներուն եւ անձրեւներուն՝ իրենց արմատները աւելի խորացնելու միջոցով: Անոնց դժուարութիւնները՝ անոնց դիմացկունութեան աղբիւրն են: Անոնց շրջապատող բնութեան տարրերու խստութիւնը կը ստիպէ զանոնք կեանքի այլ աղբիւր որոնելու: Ի վերջոյ, անոնց արմատները այնքան խորունկ կ'երթան, որ նոյնիսկ ամենաուժգին փոթորիկները չեն կրնար խանգարել անոնց պտղաբերութեան: Իմանալով այս մասին՝ մենք պէտք չէ հակառակինք այն դժուարութիւններուն, որոնք Աստուած թոյլ կու տայ, որպէսզի հաստատէ մեզ մեր կոչումին մէջ:

Երրորդը. ձեր կեանքին մէջ կա՞ն ետ պահող հանգամանքներ

Վերջին պատճառը, թէ ինչու մարդիկ չեն բացայայտեր եւ չեն կատարեր իրենց կոչումը, անոնց ետ պահող հանգամանքներն են: Այդ ծանրութիւնները թոյլ չեն տար մարդոց անցնելու եւ աւարտելու իրենց ընթացքը:

Պօղոսը կը գրէ իր մասին. «Բայց ես կը համարեմ, որ իմ կեանքը ոչինչ կ'արժէ ինձի համար. ես միայն կը ցանկամ աւարտել իմ առաքելութիւնը եւ այն գործը, որ Տէր Յիսուս տուած է ինձի» (Գործք 20.24, TEV): Պօղոսը քաջատեղեակ էր իր կեանքի առաքելութեան մասին: Ան ունէր գործ, որ պէտք է աւարտէր, եւ ան նոյնպէս տեղեակ էր, որ այն տակաւին աւարտած չէր: Ինչպէ՞ս կրնար իմանալ այդ մասին: Նոյն կերպով, ինչպէս Յիսուսը, ինչպէս Պետրոսը (տե՛ս Բ. Պետր. 1.14), եւ ինչպէս միւսները, որոնք կը փնտռեն զԱստուած, կը տնկուին եկեղեց-

ւոյ մէջ եւ կը յարատեւեն: Տէրը կը յայտնէ ատիկա ամէն մէկուն, որ չի համարեր իր կեանքը աւելի կարելոր, քան Աստուծոյ կամքը: Ահա եւ վերջին պայմանը. եթէ մենք ամբողջութեամբ նուիրենք մեր կեանքը Աստուծոյ ցանկալի ծրագիրը կատարելուն, մենք ոչ միայն կը գիտնանք մեր կոչումը, այլեւ կը կատարենք այն:

Մենք այս մասին օրինակ կը գտնենք Աւետարաններուն մէջ: Անգամ մը, երբ Յիսուսը քաղաքէ մը միւսը կ'երթար, տեղի ունեցաւ հետեւեալը. «Եւ եղաւ, որ Ան երթալու ժամանակ՝ ճանապարհին մարդ մը Անոր ըսաւ. «Ես Քու ետեւէն պիտի գամ, ուր որ երթաս, Տէր»» (Ղուկաս 9.57):

Այս խօսքերը ըսող մարդը ոգեշնչուած, ջերմեռանդ եւ անկեղծ էր: Ան կը ցանկար հետեւիլ Յիսուսին մինչեւ վերջ: Այնուամենայնիւ, Յիսուսը կը տեսնէ սրտի իրական դրդապատճառները եւ այն ծուղակները, որոնք քողարկուած են խանդավառութեան ետեւը: Ան տեսաւ այն, ինչ որ ետ կը պահէր այդ մարդը եւ առիթ չէր տար անոր կատարելու իր կոչումը, եւ ըսաւ անոր. «Աղուէսները որջեր ունին, եւ երկնքի թռչունները՝ բոյներ, բայց մարդու Որդին տեղ չունի, որ գլուխը դնէ» (Ղուկաս 9.58):

Ամենայն հաւանականութեամբ, այդ մարդը յարմարաւէտ եւ ապահով կեանք կը վարէր՝ ըստ այս աշխարհի չափանիշներու: Թերեւս ան լաւ աշխատանք ունէր, արդէն վճարած էր իր տան կալուածագրաւի պարտքի զգալի մասը եւ կենսաթոշակային փաթեթ ծեռք բերած էր իր ծերութեան տարիներուն համար: Յիսուսը ոչ երկիմաստ կերպով մատնացոյց ըրաւ այս աշխարհի ապահովութեան՝ ըսելով, որ Ինքը տեղ չունի գլուխը դնելու համար:

Ես գրեթէ կը տեսնեմ, թէ ինչպէս Ան եւ բազմութեան մէջ գտնուող այլ մարդիկ դանդաղօրէն ետ գացին եւ, ի վերջոյ, հեռացան: Ամենայն հաւանականութեամբ, այդ մարդը կ'ուզէր ըսել. «Յիսուս, ես պիտի պահպանեմ կարգ ու կանոնը Քու հաւաքոյթներու ժամանակ, պիտի նուազեմ փառաբանութեան խումբին մէջ եւ նոյնիսկ կառատան մէջ պիտի դասաւորեմ տարեց մարդոց ինքնաշարժները, որոնք կը յաճախեն Քու համաժողովին մեր քաղաքին մէջ»: Այնուամենայնիւ, Յիսուսին հետեւելու հրապուրանքը յանկարծ կորսնցուց իր փայլքը, եւ Անոր ծառայելու բարի մտադրութիւնները արագօրէն չքացան: Այնպէս որ, այդ մարդը, ինչպէս եւ շատերը, հեռացաւ, քանի որ ան մտադրուած էր աջակցիլ Յիսուսին, բայց ոչ՝ լիովին տրուիլ Անոր:

Յիսուսը նայեցաւ մէկ ուրիշ մարդու, որ տակաւին պատրաստակամ էր, եւ ըսաւ. ««Հետեւի՛ր Ինծի»: Եւ ան ըսաւ.

«Տէ՛ր, հրամա՛ն տուր, որ երթամ՝ առաջ իմ հայրը թաղեմ»: Յիսուսը անոր ըսաւ. «Թող մեռելները իրենց մեռելները թաղեն, իսկ դուն գնա՛ Աստուծոյ արքայութիւնը քարոզէ»» (Ղուկաս 9.59,60):

Ինչպիսի՜ խիստ պատասխան: Թերեւս ոմանք մտածեն, որ Յիսուս սաստկութեամբ եւ քիչ մը կոպտօրէն պատասխանեց անոր: Այնուամենայնիւ, մենք պէտք է հասկնանք այդ ժամանակուայ մշակոյթը: Աստուածաբանները կ'ըսեն, որ համաձայն աւանդոյթի՝ երբ ընտանիքի հայրը կը մահանար, առաջնեկը պարտաւոր էր թաղել զինք: Իր պարտաւորութիւնը կատարելու պարագային ան կը ստանար կրկնակի ժառանգութիւն՝ միւս որդիներու համեմատ: Այնուամենայնիւ, եթէ առաջնեկը չկատարէր հայրը թաղելու պարտաւորութիւնը, կրկնակի չափը կ'անցնէր երկրորդ որդիին:

Այդ մարդը կեդրոնացած էր դրամի վրայ: Ամենայն հաւանականութեամբ՝ ան կը սիրէր յարմարաւէտ կեանք վարել, ինչը ի վերջոյ առիթ չէր տար անոր՝ Յիսուսին հետեւելու: Ան պիտի շեղէր կամ այնպիսի որոշումներ պիտի կայացնէր, որոնց հիմքը պիտի ըլլար դրամը, ոչ թէ Աստուծոյ ծրագիրը:

Ես գրեթէ համոզուած եմ, որ ստանալով այս հրահանգը Տիրոջմէն՝ այդ մարդը շատերուն հետ միասին սկսաւ ետ երթալ: Անոր պատասխանը կրնար այսպէս հնչել. «Յիսուս, ես պիտի ծառայեմ Քու համաժողովներուն ատեն մեր քաղաքին մէջ: Ես պիտի երգեմ երգչախումբին մէջ կամ պիտի նուագեմ հարուածային գործիքներու վրայ: Ես կրնամ ատիկա: Ես մեծ սիրով պիտի ընեմ այդ բաները եւ ոչինչ կը պահանջեմ իմ ծառայութեան դիմաց»: Յիսուսին հետեւելու ոգեշնչումը կորսնցուց գրաւութիւնը անոր եւ բազմաթիւ մարդոց համար:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք՝ այդ մարդը չըսաւ, որ պիտի չհետեւի Յիսուսին: Ան ըսաւ, որ պիտի հետեւի Անոր, բայց անոր պարտութեան բանալին *«հրաման տո՛ւր... առաջ»* բառերն են: Ան մտադրուած էր իրակաւնացնել այն, ինչ կը ցանկար, մինչեւ իր կեանքը Յիսուսին նուիրելը:

Եթէ մենք կը ցանկանք գիտնալ Աստուծոյ ծրագիրը մեր կեանքի համար եւ կատարել այն, մենք պէտք չէ կարելորենք ոչ մէկ բան աւելի, քան Անոր կամքը: Ես տեսած եմ անթիւ հաւատացեալներ, որոնք դադրած են հնազանդիլ Աստուծոյ, քանի որ որոշած են նախ՝ զբաղիլ իրենց առաջնահերթութիւններով: Որքա՛ն ցաւալի է, որ անոնք չեն կատարած իրենց կոչումը, եւ անհրաժեշտ է գտնել այլ մարդու՝ անոնց գործը աւարտելու համար: Ի՞նչ պիտի ըլլայ անոնց հետ Դատաստանի գահին առջեւ:

Վերադառնանք մեր պատմութեան: Բազմութիւնը աւելի կը նօսրանար, բայց եւս կամաւոր մը առջեւ եկաւ.

«Ուրիշ մըն ալ ըսաւ. «Տէ՛ր, ես Քու ետեւէն պիտի գամ, բայց ինձի հրաման տուր, որ առաջ իմ տանս մէջ եղողներուն հրաժարական ողջոյնս տամ»: Յիսուս ըսաւ անոր. «Ով որ ձեռքը մաճին (կամ՝ գութանին) վրայ դնէ եւ ետեւ նայի, Աստուծոյ թագաւորութեան համար յարմար չէ» (Ղուկաս 9.61,62):

Կրկին, ուշադրութիւն դարձուցէ՛ք «առաջ» բառին: Ակնյայտ է, որ այդ մարդը շատ մօտ էր իր ընտանիքին, ան ունէր ընկերներ կամ նոյնիսկ՝ նշանած: Ան պարզապէս կ'ուզէր քննարկել Գալիլիացի Մարդուն հետեւելու իր որոշումը անոնց հետ: Ի վերջոյ, անոր մտերիմները պիտի որոշէին, թէ արդեօ՞ք ան պիտի ծառայէր Յիսուսին: Տէրը իսկոյն հակառակեցաւ ատոր՝ ըսելով, որ ան յարմար չ'ըլլար Աստուծոյ թագաւորութեան ծառայելու համար:

Ես գրեթէ կը տեսնեմ, թէ ինչպէս այդ մարդը կը հեռանայ մէկ ուրիշ ստուար խումբի հետ: Կը պատկերացնեմ, որ ան կ'ըսէ. «Յիսու՛ս, ես կրնամ հասարակական կապեր ստեղծել եւ մարդկային աղբիւրներ հայթայթել: Ես կրնամ դառնալ Քու ծառայութեան խորհրդատուն եւ իսկապէս լաւ աշխատողներ գտնել Քեզի համար: Ես նոյնպէս կրնամ վարձել մեր տեղական համաժողովներու սրահը, երբ յաջորդ անգամ հաւաքոյթներ անցընես մեր քաղաքին մէջ: Եւ երբ Դուն գաս, ես պիտի կազմակերպեմ կարգ ու կանոնի եւ մարդոց ողջունող խումբերու աշխատանքը: Ես նոյնիսկ անձամբ կը ծառայեմ Քեզի, եթէ ցանկաս: Ես պատրա՛ստ եմ ծառայելու Քեզի»:

Ամենայն հաւանականութեամբ, այդ պահուն խանդավառուած հետեւորդներու ստուար բազմութիւնը նօսրացաւ Յիսուսի աչքին առջեւ՝ հասնելով մինչեւ գրեթէ եօթանասուն մարդու: Սկիզբը, հաւանաբար, ներկայ էին հազարաւոր մարդիկ, բայց Ան յայտնեց Իր տեսանկիւնը մարդոց ետ պահող երեք խոշոր հանգամանքներու՝ ապահովութեան, դրամի եւ փոխյարաբերութիւններու վերաբերեալ: (Կան նաեւ այլ հանգամանքներ, որոնք ետ կը պահեն մարդոց, օրինակ՝ հաճոյքները, ձգտումները այնպիսի բաներու հանդէպ, որոնք չեն համապատասխաներ Աստուծոյ կամքին, եւ այլն, բայց իմ տարիներու փորձառութեան ընթացքին տեսած եմ, որ այս երեքը գլխաւոր հանգամանքներն են):

Կարդալով Աւետարանները՝ շատերը կ'անտեսեն Դուկասի յաջորդ անչափ կարեւոր խօսքը, քանի որ այն յաջորդ գլուխին մէջ է: Այնուամենայնիւ, թոյլ տուէք յիշեցնել ձեզի, որ Դուկասի գիրքը՝ ամբողջական երկար նամակ է: Հետագային եկեղեցին աւելցուց գլուխները եւ խօսքերը՝ դիւրին յղումներ ընելու նպատակով: Ահա թէ ինչ կը գրէ Դուկասը.

«Այս բանէն ետքը, Տէրը ուրիշ եօթանասուներկուք ալ որոշեց եւ զանոնք Իր առջեւէն երկու-երկու դրկեց այն բոլոր քաղաքները եւ տեղերը, ուր որ Ինք պիտի երթար: Եւ ըսաւ անոնց. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ...»» (Դուկաս 10.1,2):

Այս խօսքերը այնքա՛ն շատ բան կ'ըսեն: Նախ եւ առաջ, ուշադրութիւն դարձուցէք «այս բանէն ետքը» բառերուն: Մենք պէտք է հարցնենք՝ ինչէ՞ն յետոյ: Պատասխանն է՝ այն բանէն յետոյ, երբ Յիսուսին

աչքի առջեւ բազմութիւնը նօսրացաւ, մինչեւ որ մնացին խումբ մը մարդիկ, որոնք տակաւին կ'ըսէին իրենց մտքին մէջ. «Կարելոր չէ, թէ ինչ գին պէտք է վճարել՝ Անոր հետեւելու համար: Ես կ'ուզեմ, եւ ես կ'ընե՛մ ատիկա»: Անոնք լսեցին Յիսուսին պատասխաններն ապահովութեան, դրամի եւ փոխարաբերութիւններու վերաբերեալ եւ որոշում կայացուցին, որ ոչինչ խանգարած է զիրենք՝ կատարելու Աստուծոյ կոչումը:

Ատկէ յետոյ Յիսուս կարգեց նոր խումբի անդամներ, որոնք, ամենայն հաւանականութեամբ, մինչեւ այդ մնացած միակ մարդիկն էին: Նոր կտակարանին մէջ «կարգել» եւ «ընտրել» բառերը կը գործածուին որպէս հոմանիշներ: Կարգուած մարդը ընտրուած է, իսկ ընտրուած մարդը՝ կարգուած: Յիսուսը բան մը կ'ըսէ Մատթէոսի Աւետարանի երկու տարբեր հատուածներուն մէջ: Եթէ Ան նոյնութեամբ կը կրկնէ Իր ըսածը երկու տարբեր հատուածներու մէջ, կը նշանակէ՝ մենք պէտք է մեծ ուշադրութիւն դարձնենք այդ խօսքերուն: Ահա այդ արտայայտութիւնը. «Որովհետեւ շատերը կանչուած են, բայց քիչերը ընտրուած են» (Մատթէոս 20.16, 22.14):

Շատերը կանչուած են: Քանի՞ն: Ճիշդ պիտի ըլլայ ըսել, որ կանչուած են բոլորը: Բոլոր հաւատացեալներու կեանքին մէջ կանչ կայ, եւ անոնք ունին անհրաժեշտ պարգեւներ՝ այն իրականացնելու համար: Այնուամենայնիւ (եւ ասիկա կրնայ խիստ զարմացնել ձեզ), միայն քիչերը ընտրուած կամ կարգուած են՝ այդ կանչը իրականացնելու համար: Ինչո՞ւ քիչերը կարգուած են: Քանի որ միայն քիչերը պիտի ձգեն իրենց բոլոր ցանկութիւնները, ապահովութիւնը, ծգտումը դրամի հանդէպ, խոչընդոտող փոխարաբերութիւնները եւ այլ բաներ՝ իրենց կանչը իրականացնելու համար:

Ուշադրութիւն դարձուցէ՛ք, որ Յիսուս ըսաւ. «Հունձքը շատ է, բայց մշակները՝ քիչ» (Մատթէոս 9.37): Այն, որ մեր սերունդը փրկուած չէ, Աստուծոյ մեղաւորութիւնը չէ, որովհետեւ Աստուած «կը կամենայ, որ ամէն մարդ փրկուի եւ ճշմարտութեան գիտութեանը գայ» (Ա. Տիմոթէոս 2.4): Մենք ենք, որ պէտք է կանգնենք Անոր ատենի առջեւ եւ հաշիւ տանք, թէ ինչու մեր սերունդը չէ փրկուած: Եթէ մենք կատարենք մեր կոչումը, չենք դատուիր: Այնուամենայնիւ, եթէ մենք թոյլ տանք, որ այս աշխարհի ետ պահող հանգամանքները խոչընդոտեն մեզ, մեր դատաստանը զգաստացնող կ'ըլլայ:

Թերեւս ըսէք. «Ես մէկ մարդ եմ՝ շատերու մէջ»: Ի՞նչ կ'ըլլար, եթէ ձեր լեարդը ըսէր. «Ես մարմինի անկարելոր անդամ եմ, եւ ոչ ոք կը նկատէ զիս եւ իմ աշխատանքը: Այնպէս որ, ես կ'ընեմ՝ ինչ որ կ'ուզեմ, եւ ոչ թէ այն, ինչին համար ստեղծուած եմ»: Ինչպէս գիտէք, առանց լեարդի

մարմինը լուրջ խնդիրներ կ'ունենայ: Ի՞նչ կ'ըլլար, եթե նոյնը ըստին թոքերը, ոտքը, ոտնաթաթը կամ՝ մարմնի մէկ ուրիշ մաս: Եկեղեցւոյ ամէն անդամ նոյնքան կարեւոր է, որքան մարմնի ամէն մէկ անդամը:

Ահա զգաստացնող փաստ մը. Յիսուս կ'ըսէ մեզի, որ միայն քիչերը կը կատարեն իրենց նախասահմանութիւնը՝ որպէս Աստուծոյ տան գործակատարներ: Իւրաքանչիւր հաւատացեալ կանչուած է՝ կառուցելու համար, բայց քիչերը կ'իրականացնեն իրենց կոչումը: Ասիկա կը նշանակէ, որ հաւատացեալներու դատաստանին կեցողներու մեծ մասը կորուստ կը կրէ եւ փառաւոր վարձատրութիւն չստանար:

Ես գիտեմ, որ ասիկա ուրախալի լուր չէ: Այնուամենայնիւ, կայ նաեւ բարի լուր. դուք կրնաք սկսիլ ճիշդ այս պահէն: Դուք կրնաք ծունկի իջնել, աղօթել եւ խնդրել Աստուծոյ մէջէն ձեզ այն ամէնուն համար, ինչ որ դուք հանդուրժած էք, եւ ինչին պատճառով չէք հնազանդած Անոր կամքին, իսկ յետոյ քայլ առ քայլ առաջ շարժիլ: Սմիթ Ռիկլսվորթը, որ քսաներորդ դարի մեծ անտարանիչներէն էր, սկսաւ իր ծառայութիւնը, երբ արդէն յիսունը անց էր. երբեք չափազանց ուշ չէ:

Յիշեցէ՛ք, որ գոյութիւն ունին պայմաններ՝ արդիւնաւէտ կերպով կառուցելու համար: Առաջինը՝ հաւատքով փնտռեցէ՛ք զԱստուած: Երկրորդը՝ տնկուեցէ՛ք այն տեղական եկեղեցւոյ մէջ, որ Աստուած ցոյց կու տայ ձեզի, եւ հնազանդ եղէք այդ տեղական մարմնի առաջնորդներուն: Եւ երրորդը՝ ազատեցէ՛ք այն ամէնէն, ինչ որ ետ կը պահէ ձեզ: Երբ Աստուած ցոյց տայ այն ծանրութիւնները, որոնք ետ կը պահեն ձեզ, խնդրեցէ՛ք, որ Անոր սուրը կտրէ ատոնց կապերը ձեր անձի կամ մարմնի հետ: Անոր շնորհքը բաւական է՝ ձեզ ազատելու համար:

Ամբողջ վարձատրութիւնը¹

Ես պիտի խօսիմ եւս մէկ բանի մասին, մինչեւ յաջորդ գլուխին անցնիլը: Կան մարդիկ, որոնք այդպէս ալ չեն սկսած կառուցել Աստուծոյ տունը կամ դադրած են կառուցել այն: Անոնք շեղած են ժամանակաւոր փառք ունեցող բաներով՝ այս աշխարհի հարստութեան, ազդեցութեան, իշխանութեան կամ հաճոյքներու հանդէպ մոլուցքով, ինչպէս նաեւ՝ մարդոց հաճեցնելով: Այս ամէնը ի չիք պիտի դառնայ: Մի՛ խաբուիք, մի՛ շեղիք եւ մի՛ մոլորիք: Կենդրոնացա՛ճ մնացէ՛ք: Դուք գո՛րծ ունեցէ՛ք ընելու Քրիստոսին մէջ, եւ ձեր գործը պէտք է աւարտի՛ն հասնի:

Կ'ըլլան մարդիկ, որոնց կեանքի որոշ ժամանակահատուածի կամ, նոյնիսկ, ամբողջ կեանքի գործերը չեն մնար: Ատոնք պիտի քանդուին եւ չեն ըլլար Աստուծոյ յաւիտենական տան մասը: Կրնա՞ք պատկերացնել ատիկա:

Որպէսզի օգնեմ ձեզի հասկնալու այս խօսքերու լրջութիւնը, թոյլ տուէք վերադառնալ մեր տան կառուցուման: Քանի որ ես ամէն օր կ'երթայի տան շինհրապարակ, գործակատարները շատ լաւ կը ճանչնային զիս եւ «քարոզիչ» կ'անուանէին:

Ամէն անգամ, երբ ինքնաշարժս կը մօտենար շինհրապարակին, աշխատողներու ռոք երաժշտութեան ձայնը կը մարէր: Զիս տեսնելուն պէս անոնցմէ մէկը արագօրէն կը վազէր դիւրակիր նուագարկիչի քով եւ կ'անջատէր: Ես ներքուստ կը ժպտայի, քանի որ անոնք երկիւղածութիւն ունէին Աստուածային իրողութիւններու հանդէպ: Մենք քիչ մը կը գրուցէինք: Ես բաւականին հետաքրքրական գրոյցներ ունեցած եմ այդ մարդոց հետ, ինչպէս նաեւ քանի մը հրաշալի հնարաւորութիւններ՝ անոնց ծառայելու համար:

Կը յիշեմ, որ մեր գրոյցներէն մէկուն ժամանակ գործակատարները կը պատմէին ինծի այն գեղեցիկ տուններու մասին, որոնց կառուցման մէջ իրենք մասնակցութիւն ունեցած էին: Անոնցմէ ըսես լոյս ճառագէր, երբ կը պատմէին իրենց աշխատանքի մասին: Կարելի էր տեսնել անոնց մեծ գոհունակութիւնը եւ բաւականութիւնը գերազանց աշխատանքներու մէջ մասնակցութիւն ունենալու շնորհիւ: Անոնց մէջ ամօթի նշոյլ անգամ չկար. անոնք միայն կ'ուրախանային այն աշխատանքով, որմէ օգուտ ստացած են ուրիշ ընտանիքներ, եւ որոնք յայտնի են գեղեցիկ տուններու սիրահարներուն:

Թոյլ տուէք մէկ քայլ առաջ երթալ: Կը պատկերացնէ՞ք, թէ ինքզինքը ինչպէս կը զգայ այն մարդը, որ կառուցած է Ապիտակ տունը Ուաշինկթօնի մէջ: Պատկերացուցէք այն օրը, երբ անոր զաւակը տուն կու գայ դպրոցէն եւ կը պատմէ, որ իրենք սորված են իրենց երկրի ամենայայտնի տունին մասին, եւ խանդավառութեամբ կը յայտարարէ, որ իրենց դասարանը զբօսապտոյտի պիտի երթայ՝ այն տեսնելու համար:

Կը պատկերացնէք այն թրթիռը, որուն միջոցով այդ մարդը կ'ըսէ իր որդիին կամ դուստրին, որ ինքը մասնակցութիւն ունեցած է այդ տան կառուցմանը: Կը պատկերացնէ՞ք անոր զգացմունքները, երբ ան զբօսապտոյտի կ'երթայ իր երեխայի դասարանին հետ դէպի Փենսիլվանիայի պողոտայ, 1600 հասցէն: Կը պատկերացնէ՞ք, թէ ինչ կը զգայ ան՝ տեսնելով իր երեխային ոգեշնչումը եւ հպարտութիւնը այն պահուն, երբ անոր դասարանցիները կը գիտնան, որ ինքը մասնակցութիւն ունեցած է այն տան կառուցման, ուր կ'ապրի Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախագահը:

Նման բան մը կարելի է ըսել նաեւ մեր մասին, սակայն մենք չենք աշխատիր այնպիսի տան վրայ, որ մէկ օր պիտի քանդուի եւ պիտի

փոխարինուի: Մենք կ'աշխատինք այն տան վրայ, որ յաւիտեան պիտի ըլլայ ամբողջ տիեզերքի ուշադրութեան առարկան: Այո՛: Յիշեցէ՛ք Միքեայ մարգարէի խօսքերը. «Եւ շատ ազգեր պիտի երթան ու ըսեն. «Եկէ՛ք Եհովային լեռը՝ Յակոբին Աստուծոյն տունը ելլենք, որպէսզի Ան մեզի Իր ճամբաները սորվեցնէ, որ Անոր շաւիտերուն մէջ քալենք: Վասնզի օրէնքը՝ Միօնէն ... պիտի յայտնուի» (Միքիայ 4.2):

Տիեզերքի ամբողջ գործունեութիւնը պիտի պտղտի այդ տան շուրջ: Այն իմաստութիւնը եւ օրէնքները, որոնք պիտի կառավարեն ամբողջ տիեզերքը, պիտի ելլեն ատոնց: Եւ զարմանալին այն է, որ այն նոյնքան գեղեցիկ պիտի ըլլայ տասը թռիչիոն տարի անց, որքան այն օրը, երբ աւարտի:

Անգամ մը եւ Ամերիկայի Միջին Արեւմուտքը գտնուող մեծ եկեղեցւոյ մէջ էի: Այդ եկեղեցւոյ փառաբանութեան աւագը պատմեց, որ Աստուած վառ երազ ցոյց տուած էր իրեն: Այդ երազին մէջ ան Երկինք գացած էր, ուր մեծ ծառայող մը տեսած էր եւ հաղորդակցած էր անոր հետ: Այդ դէպքը տեղի ունեցած էր այդ ծառայողի ննջելէն մէկ տարի յետոյ: Այդ մարդը ծառայած էր Բաբելոն քան վաթսուն տարի՝ մինչեւ վերջ հաւատարիմ մնալով, եւ գացած էր դէպի իր վարձատրութիւնը մեր հազարամեակի սկիզբը: Ան մեծ ժպիտով ըսած էր այդ եկեղեցւոյ փառաբանութեան աւագին. «Հոս շատ Բաբելոն լաւ է, քան ես կը պատկերացնէի»:

Անոնք գրուցած էին տարբեր հարցերու շուրջ, ինչէն յետոյ այդ ծառայողը շրջուած էր եւ ցոյց տուած էր իր կատարած գործը Սիօնի մէջ: Այն ահռելի էր: Անոր հաւատարմութեան ազդեցութիւնը շատ Բաբելոն էր, քան ինքը կրնար երազել, եւ այն իր աչքերու առջեւ էր: Ան կրնար մատնացոյց ընել իր գործը, ինչպէս այն գործակատարները, որոնք կը պատմէին ինձի իրենց գործերու մասին: Ինչպիսի՛ յաւիտենական վարձատրութիւն:

Պարզապէս պատկերացուցէ՛ք, որ ամբողջ յաւիտենութեան ընթացքին դուք պիտի կարենաք ցոյց տալ ձեր մասը Անոր տան կառուցման մէջ ոչ միայն ձեր ժառանգներուն, այլեւ անթիւ մարդոց, որոնք պիտի գան տեսնելու Սիօնը՝ Աստուծոյ փառաւոր տունը: Կը պատկերացնէ՞ք, որ ամբողջ յաւիտենութեան ընթացքին պիտի մօտենան եւ պիտի նային Աստուծոյ տան գեղեցկութեանը՝ խօսելով այն մասին, թէ ինչ ներդրում ունեցած էք դուք:

Դիտարկենք մէկ այլ տարբերակ: Պատկերացուցէ՛ք, որ ձեր գործը որեւէ կերպով ներկայացուած չէ այդտեղ, քանի որ դուք բարեյաջող աւարտ չէք ունեցած: Կը պատկերացնէ՞ք, որ ազգերը պիտի գան, որպէսզի տեսնեն, թէ ինչ ըրած էք, եւ դուք ոչինչ կրնաք ցոյց տալ անոնց ամբողջ յաւիտենութեան ընթացքին, որովհետեւ այն հատուածը, որ

պէտք է կառուցուէր ձեր կողմէն, քանդուած եւ փոխարինուած է: Յիշեցէ՛ք Պօղոսին խօսքերը Աստուածաշունչի «Մեսիճ» թարգմանութենէն.

«Եթէ ձեր գործը անցնի ստուգումը, շատ լաւ: Եթէ ոչ, կառոյցի ձեր մասը պիտի քանդուի եւ կրկին պիտի կառուցուի» (Ա. Կորնթացիս 3.14,15):

Ասիկա իսկապէս որ յաւիտենական կորուստ է: Ցաւօք, ասիկա իրականութիւն է: Բայց թանկագին ընկեր, ես չեմ ուզեր, որ ատիկա պատահի ձեր հետ: Աստուած նոյնպէս չի ցանկար ատիկա: Եւ հիմա դուք կրնաք որոշում կայացնել, որ ձեր հետ նման բան չի պատահիր: Աստուած շնորհք տուած է ձեզի՝ Սիօնը կառուցելու համար: Ինչպէս կը գրէ Յովհաննէս առաքեալը.

«Ձգո՛յ՛ջ եղիր, որ չկորսնցնես *այն մրցանակը*, որուն համար մենք այսօր շատ աշխատած ենք: Ջանասէ՛ր եղիր, որ ստանաս քու *ամբողջ վարձատրութիւնը*» (Բ. Յովհաննէս 8, NLT):

Տէրը այնպէս ըրած է, որ Իր զաւակներէն իւրաքանչիւրը հնարաւորութիւն ունենայ ստանալու ամբողջական վարձատրութիւն՝ Իր տունը կառուցելու համար: Ձեր աշխատանքը երբեք չանցնիր, երբեք չի հիննար, եւ երբեք փոխարինուելու կարիք չ'ունենար: Եթէ դուք ապաւինիք Աստուծոյ շնորհքին եւ արդիւնաւէտ կառուցէք, բիրաւոր հրեշտակներ եւ մարդիկ յաւիտեանս յաւիտենից պիտի հիանան ձեր գործով:


ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՅԻՆԳ, ԳԼՈՒԽՆԵՐ 11, 12

1. Մենք գիտենք, որ Աստուած կարիք չունի, որ որեւէ բան ընենք Իր համար, բայց Ան կ'ուզէ, որ մենք գործենք Իր հետ: Ի՞նչ կը յայտնէ ասիկա մեզի Անոր, ինչպէս նաեւ Անոր թագաւորութեան եւ մեր մասին:
2. Սաղմոս 139.16-ը կը յայտնէ մեզի, որ նոյնիսկ մեր ծնելէն առաջ Աստուած գիրք գրած է՝ մեր ամբողջ կեանքը: Ինչպէ՞ս կրնանք գիտնալ, թէ Աստուած ինչ գրած է մեր եզակի պատմութիւններուն մէջ:
3. Հնարաւոր է (թերեւս նաեւ դիւրին է) անցնիլ մեր կեանքը, թուացեալ բարի գործեր ընելով, բայց այդպէս ալ չկատարել այն, ինչին համար կանչուած ենք: Կա՞յ արդեօք այնպիսի բնագավառ ձեր կեանքին մէջ, որ դուք անգործութեան մատնած էք վախի եւ հիասթափութեան պատճառով: Պէտք չէ՞ արդեօք փնտռել զԱստուած եւ խնդրել, որ Ան նորոգէ այդ բնագավառը:
4. Տասներկորդ գլուխին մէջ մենք խօսեցանք երեք պայմաններու մասին, որոնց միջոցով կրնանք կառուցել մեր կեանքը՝ համաձայն Աստուծոյ կամքին. Ձինք ջանասիրաբար փնտռելը, Անոր տան մէջ տնկուիլը եւ մեզ ետ պահող հանգամանքներէն ազատիլը: Այս երեքէն ո՞ր մէկը աւելի շատ կը վերաբերի ձեզի: Ինչպէ՞ս դուք կրնաք աճ ունենալ ատոնց մէջ:
5. Յաւիտենութեան մէջ մենք կրնանք ստանալ ամբողջական վարձատրութիւն, մասնակի վարձատրութիւն եւ նոյնիսկ՝ ոչ մէկ վարձատրութիւն: Ձեր կարծիքով՝ ի՞նչ է ամբողջական վարձատրութիւնը:



ԲԱԺԻՆ ՎԵՅ



ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄ

*«Հնծողները լաւ վարձատրութիւն կը ստանան,
 եւ այն պտուղը, որ անոնք կը հնծեն, մարդիկ են, որոնք
 բերուած են դէպի յաւիտենական կեանքը: Ինչպիսի՛
 ուրախութիւն կը սպասուի թէ՛ ցանողին, թէ՛ հնծողին:
 Դուք գիտէք ասացուածքը. «Մէկը կը ցանէ,
 իսկ միւսը կը հնծէ»:
 Եւ այն ճշմարիտ է»:*
 — Յովհաննէս 4.36,37, NLT

*«Ան, որ կը ցանէ, եւ ան, որ կը ջրէ, կ'աշխատին որպէս
 մէկ խումբ՝ նոյն մտադրութեամբ: Բայց եւ այնպէս,
 անոնք պիտի վարձատրուին անհատապէս՝
 ըստ իրենց ծանր աշխատանքին»:*
 — Ա. Կորնթացիս 3.8, NLT

Այն մարդիկ, որոնք հաւատարմօրէն կը ծառայեն Աստուծոյ թա-
 փառութեան մէջ՝ կառուցելով Անոր տունը, պատկառելի յաւի-
 տենական վարձատրութիւն պիտի ստանան: Մենք պիտի վարձատրու-
 լինք մեր գործին համար անհատապէս՝ ըստ մեր կատարածին: Մեզմէ
 ամէն մէկը տարբեր պարտականութիւններ ունի, բայց մեր բոլոր տար-
 բեր կոչումները մէկ արդիւնք պիտի տան՝ մարդիկ, որոնք յաւիտենա-
 կան փրկութիւն պիտի ստանան:

Շատերը կը հաւատան, որ միայն միլիոնաւոր կեանքերու հարող ծա-
 ռայողները պիտի կանգնին Երկնքի առաջին շարքերը եւ պիտի ստա-
 նան մեծագոյն վարձատրութիւնները: Այնուամենայնիւ, ատիկա ճշմա-
 րիտ չէ: Աստուած չի վարձատրեր այնպէս, ինչպէս մարդիկ: Ան կը
 վարձատրէ՝ ըստ արդար գործերու՝ հիմնուած հնազանդութեան վրայ:
 Եթէ Ան վարձատրէր ըստ մարդկային չափանիշներու, Աստուծոյն ծա-
 ռայելը պիտի նմանէր գործարար ձեռքբերումներ ունենալուն: Ինչպէս
 տեսանք նախորդ երկու գլուխներուն մէջ, ամէն ինչ բոլորովին ուրիշ
 ձեւով է: Աստուած կը դատէ եւ կը վարձատրէ համաձայն մեր կոչման՝
 այն գործին, որուն համար Ան զօրութիւն տուած է մեզի:

Զօրացած՝ շնորհքով

Մ.թ. 56 թուականին՝ իր ընթացքը ասարտելին գրեթե տասը տարի առաջ Պողոսը գրեց, որ ինքը «առաքեալներէն յետինն» է (Ա. Կորնթացիս 15.9): Ասիկա տարօրինակ պիտի թուայ այն մարդոց, որոնք ուսումնասիրած են եկեղեցւոյ պատմութիւնը: Պողոսը ազդեցութիւն ձգած էր այդ ժամանակուան ամբողջ յայտնի աշխարհին վրայ եւ ունեցած էր աւելի մեծ ձեռքբերումներ Աստուծոյ թագաւորութեան համար, քան ուել մարդ իր օրերուն մէջ: Անկասկած՝ ան իր ժամանակուան մեծագոյն առաքեալն էր: Այդ պարագային, ինչպէ՞ս կրնար նման բան ըսել: Թերեւս ան պարզապէս կը չափազանցե՞ր: Ատիկա անկարելի է. անկարելի է ստել Սուրբ գիրքերը գրելու ժամանակ: Սուրբ Հոգին թոյլ պիտի տար, որ այս պնդումը գրուէր միայն՝ եթէ Պողոսը իրականութեան մէջ հաւատար իր խօսքերուն:

Պատասխանը շարունակութեան մէջ է. «Բայց *Աստուծոյ շնորհքով եմ՝ ինչ որ եմ*, եւ Անոր շնորհքը, որ Իմ մէջ է, ունայն չեղաւ, այլ *անոնց ամէնէն աւելի աշխատեցայ. սակայն ոչ թէ ես, այլ Աստուծոյ շնորհքը, որ ինծի հետ է*» (Ա. Կորնթացիս 15.10):

Հետաքրքական է, որ Պողոսը կը խոստովանէր, որ իր ձեռքբերումները աւելին էին, քան միւս առաքեալներունը, բայց ան տակաւին ինքզինքը կը համարէր անոնցմէ յետինը: Անոր խօսքերը կը բացատրեն այս թուացեալ հակասութիւնը. «Բայց Աստուծոյ շնորհքով եմ՝ ինչ որ եմ»: Պողոսը կ'առանձնացնէր ինքզինքը այն ամէնէն, ինչ որ Աստուծոյ շնորհքը կ'ընէր իր միջոցով: Ան քաջատեղեակ էր, որ չէր կրնար ոչինչ աւելցնել այն կոչումին, որ Աստուած տուած էր իրեն, եւ ո՛չ ալ իրեն տրուած կարողութենէն աւելի բան մը կատարել: Այս ամէնը կ'ամփոփուի մէկ բառով՝ «*շնորհք*»: Եւ ասիկա կը վերաբերի բոլոր հաւատացեալներուն, ինչ կոչում ալ անոնք ունենան:

Թոյլ տուէք բաժնեկցիլ իմ ծառայողական փորձառութեամբ: Իմ կողմէն գրուած գիրքերը այժմ թարգմանուած են աւելի քան իննսուն լեզուներով եւ միլիոնաւոր օրինակներով տարածուած են աշխարհով մէկ: Մենք անթիւ վկայութիւններ ստացած ենք այն մասին, որ ատոնք մարդոց կեանքերը կը փոխեն:

Յաճախ մարդիկ կը մօտենան ինծի եւ կը հարցնեն, թէ որն է իմ գիրքեր գրելու գաղտնիքը: Ես իմ ներսէն կը ծիծաղիմ՝ յիշելով, թէ որքան վատ կը տիրապետէի գրաւոր անգլերէնին, մինչեւ որ Աստուծոյ շնորհքը դրսեւորուեցաւ իմ կեանքին մէջ: Ինձմէ ժամեր կը պահանջուէր՝ երկու էջանոց շարադրութիւն մը գրելու համար, եւ կը թուար՝ ես կը փձացնէի նօթատետրիս կէտը, մինչեւ որ կարենայի առաջին պարբերութիւնը գրել: Այժմ, երբ ես կը գրեմ, բառերը դուրս կը թռչին ինձմէ: Ես շատ աւելի լա-

ւատեղեակ են, քան ոեւէ մարդ, թէ Ով կը գրէ իմ գիրքերը: Իրականութեան մէջ, ես պարզապէս առաջին մարդն եմ, որ կը կարդայ ստոնք:

Մէկ անգամ հարցազրոյցի մը հրաւիրուած էի ազգային հեռուստաալիքներէն մէկուն մէջ, եւ խօսքը իմ գիրքերու ուղերձներու մասին էր: Այնուամենայնիւ, այդ հարցազրոյցի ընթացքին հաղորդավարը սկսաւ աւելի շատ կեդրոնանալ իմ եւ իմ ձեռքբերումներուն, քան՝ իմ ուղերձներուն վրայ: Ես շատ անյարմար զգացի, եւ սկսայ փնտռել Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը իմ ներսը՝ մեր զրոյցի ընթացքը փոխելու համար:

Քանի մը վայրկեանէն ընդմիջումն էր, որմէ յետոյ ամենայարմար պահն էր՝ ըսելու այն, ինչ Սուրբ Հոգին տուաւ ինձի: Ես մէջբերեցի Սողոմոնի խօսքերը. «Գիտեմ, թէ Աստուծոյ ամէն ըրածը յաւիտեան պիտի մնայ. Անոր վրայ բան մը աւելցնել կամ անկէ պակսեցնել կարելի չէ: Աստուած անկկա ըրաւ, որպէսզի Իր երեսէն վախճան: Ինչ որ եղած է, հիմա ալ կայ ու ինչ որ պիտի ըլլայ՝ արդէն եղած է: Աստուած անցածը կը փնտռէ» (Ժողովող 3.14,15):

Ես շարունակեցի.

– Կան անթիւ հովիւներ եւ ծառայողներ, որոնք կը կատարեն այն, ինչի համար Աստուած կանչած է զիրենք: Ոմանք կը հովվեն հարիւր անդամէ բաղկացած եկեղեցիներ գիւղական տարածքներուն մէջ: Միւսները կը ծառայեն կորսուած եւ տառապեալ մարդոց՝ զարգացող ազգերու մէջ: Անոնք ցանած են իրենց կեանքը միսիոներական դաշտերուն մէջ: Միւսները ամէն օր կ'աշխատին խոշոր քաղաքներու կեդրոնական շրջաններուն մէջ. անոնք կը դնեն իրենց կեանքերը, որպէսզի օգնեն այն մարդոց, որոնք միւսները անարժան կը համարեն: Ուրիշները հաւատարմօրէն կը ծառայեն Աստուծոյն գործարար դաշտին մէջ, եւ այսպէս շարունակ: Ամենայն հաւանականութեամբ՝ այդ մարդիկ երբեք հրաւիր չեն ստանար այս հաղորդմանը, բայց անոնցմէ շատերը պիտի կանգնին Երկնքի առաջին շարքերը, որովհետեւ անոնք հնազանդ են այն գործին մէջ, որուն համար կանչուած եղած են եւ անոնք ըրած են ատիկա մաքուր դրոյապատճառներով:

Ես շարունակեցի.

– Ինչ կը վերաբերի ինձի, Աստուած կանչած է՝ Իրեն համար յատուկ աշխատանք կատարելու, եւ այն հպած է բազմաթիւ մարդոց: Ահա թէ ինչու դուք հրաւիրած էք զիս այս հաղորդման: Այնուամենայնիւ, ես ոչինչ կրնամ աւելցնել այն ամէնուն, ինչի համար կանչուած եմ: Ես չեմ կրնար ընդլայնել, բարելաւել կամ աւելի շատ տարածել այս աշխատանքը իմ կարողութեամբ: Միակ բանը, որ կրնամ ընել, ամէն ինչ խառնաշփոթի վերածելն է, եւ ատիկա երկիւղ կ'առաջացնէ իմ մէջ:

Մեր հարցազրոյցը անմիջապէս հանդիսաւոր դարձաւ: Հաղորդավարը, որ նոյնպէս միջազգային ծառայութեան ղեկավար էր, հասկցաւ

իմ խօսքերը եւ փոխեց հարցազրոյցի ուղղութիւնը՝ կրկին անդրադառնալով մարդոց ծառայելուն:

Այս խօսքերը կը վերաբերին իւրաքանչիւրին: Թերեւս դուք կանչուած էք՝ ըլլալու կին եւ մայր, ծառայելու ձեր տեղական եկեղեցւոյ մանկական բաժնին մէջ եւ բարեխօսելու ձեր աղօթքի սենեակին մէջ: Եթէ հաւատարմօրէն ընէք ատիկա մինչեւ վերջ, դուք մեծ վարձատրութիւն պիտի ստանաք ձեր հնազանդութեան համար: Թերեւս դուք կանչուած էք՝ ըլլալու ձեր եկեղեցւոյ բանտերու ծառայութեան մէջ, հպելու մարդոց գործարար բնագաւառին եւ մեծ նուիրատուութիւններ կատարելու ծառայութեան գործին համար: Եթէ հաւատարմօրէն ընէք ատիկա մինչեւ վերջ եւ կատարէք ձեր ծառայութիւնը սրտանց՝ ինչպէս Տիրոջ համար, դուք պիտի վարձատրուիք նոյն կերպով, ինչպէս այն աւետարանիչը, որ փրկութեան բերած է հոծ բազմութիւն մը:

Կարելի է անթիւ նման օրինակներ բերել: Անձամբ ես կը հաւատամ, որ Երկնքի առաջին շարքերը մենք պիտի տեսնենք բազմաթիւ մայրեր, գործարար մարդիկ, պարզ աշխատաւորներ եւ այլն, որոնք մեծագոյն վարձատրութիւններ պիտի ստանան Տիրոջմէն:

Աստուծոյ բանակը այս երկրի վրայ

Յիսուս Քրիստոսի եկեղեցին՝ Աստուծոյ բանակն է այս երկրի վրայ: Բոլորս պիտի ստանանք դիրքեր եւ պարգեւներ՝ մեր առաքելութիւնը կատարելու համար: Տարիներ առաջ Տէրը արթնցուց կինս եւ մեծ բանակ մը ցոյց տուաւ անոր Հոգիին մէջ: Գիշերուան ժամը չորսն էր, բայց ան անմիջապէս արթնցուց գիւ, որպէսզի պատմէր, թէ ինչ տեսած էր տեսիլքով: «Ճո՛ւն,– ըսաւ ան,– ատիկա ռազմական միաւորում էր, ուր ամէն մէկը գիտէր իր զինուորական կոչումը, դիրքը եւ պարտականութիւնները: Անոնք կը քալէին գերազանց կարգով, եւ բոլոր պաշտօններու մէջ բաց (պարապ) տեղեր կային, որոնք, ինչպէս ես տեսայ, կ'ամբողջանային նոր մարդոցմով: Ես տեսայ, որ ես եւ դուն տեղափոխուեցանք դէպի մեր ծառայութեան դիրքերը: Կարիք չկար, որ ինչ որ մէկը նայէր միւսին՝ հասկնալու համար, թէ ինչ ուղղութեամբ պէտք է քալել: Բոլորը կատարեալ միաբանութեան մէջ էին, որովհետեւ անոնց հայեացքը Տիրոջ վրայ էր»:

Ան շարունակեց՝ ըսելով այնպիսի բան, ինչ որ գրաւեց իմ ուշադրութիւնը. «Ոչ ոք կը ցանկար միւսին դիրքը: Բոլորը գոհ էին՝ ծառայելով այն վայրին մէջ, որ Տէրը իրենց համար ստեղծած էր»:

Դուք հասկցա՞ք ասիկա: Ոչ ոք ամբողջ բանակին մէջ կը նախանձէր միւսին ծառայութեան: Ամէն մէկը գոհ էր եւ երջանիկ՝ գործելով իր դիրքին մէջ:

Մտապահելով ասիկա՝ վերադառնանք մեր անհատական նախագիծ ունեցող տան օրինակին: Յիշեցե՛ք, թե ինչ գրուած է Աստուածաշունչին մէջ. «Տունը կը շինուի իմաստութեամբ» (Առակաց 24.3): Գոյութիւն ունի երկու տեսակի իմաստութիւն, որոնցմով մենք կրնանք կառուցել՝ մէկը ի վերուստ է, իսկ միւսը՝ ոչ:

«Ո՞վ է ձեր մէջ իմաստուն եւ խելացի, թող իր բարի վարքով ցոյց տայ իր գործերը իմաստութեան հեգութեամբ: Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունիք ձեր սրտերուն մէջ, մի՛ պարծենաք եւ սուտ մի՛ խօսիք ճշմարտութեան դէմ: Այս իմաստութիւնը վերէն իջած չէ, այլ՝ երկրաւոր, շնչաւոր եւ դիւակաւ: Որովհետեւ՝ ուր որ նախանձ եւ կռիւ կայ, հոն անկարգութիւն եւ ամէն չար բաներ կան» (Յակոբոս 3.13–16):

Անկախ այն բանէն, թէ ինչ կ'ընենք մենք, եւ թէ որքան լաւ կը թուայ ատիկա, եթէ մեր շարժառիթները լեցուն են նախանձով եւ եսասիրական ձգտումներով, կը նշանակէ՝ մենք կը կառուցենք մարմնաւոր, ոչ սուրբգրային եւ դիւային դրդապատճառներով, ինչ որ ոչ մէկ պարագային կը վարձատրուի:

Ուեպսթըրը կը սահմանէ նախանձը որպէս «դժգոհութեան եւ ազահութեան զգացում՝ կապուած մէկ ուրիշ մարդու առաւելութիւններուն, յաջողութեան, ունեցուածքին եւ այլնի հետ»¹: Եթէ նայինք Աստուծոյ կանչին այս աշխարհի աչքերով, նախանձը անխուսափելի կ'ըլլայ: Կային քարոզիչներ, որոնք կը նախանձէին Պօղոսի կոչումին: Ան կը գրէ. «Ճշմարիտ է, որ ոմանք կը քարոզեն Քրիստոսին մասին՝ մեկնելով *նախանձէն* եւ մրցակցութենէն, բայց այլ մարդիկ ատիկա կ'ընեն բարի կամեցողութենէն: Վերջինները կ'ընեն ատիկա սիրով՝ գիտնալով, որ ես հոս եմ Աւետարանի պաշտպանութեան համար: Առաջինները կը քարոզեն Քրիստոսի մասին *եսակեղրոն ձգտումներով*» (Փիլիպպեցիս 1.15–17, NIV):

Այդ ծառայողները գոհ չէին այն կոչումէն, որ Աստուած տուած էր իրենց. Անոնք կը ցանկանային ունենալ Պօղոսի յաջողութիւնը: Այդ *նախանձը* յառաջացած էր անոնց *եսակեղրոն ձգտումներէն*: Ձգտումը՝ ինչ որ բանի հասնելու ուժգին եւ եռանդուն ցանկութիւն է: Երբ մեր ձգտումները եսակեղրոն են, մենք կը կենդրոնանանք մեր վրայ, ոչ թէ՛ այլ մարդոց օգտին: Նման դրդապատճառը միայն անկարգութիւն եւ վիճաբանութիւններ կը յառաջացնէ եւ դուռ կը բանայ ամէն չար բանի համար:

Աստուածային իմաստութիւնը, ի տարբերութիւն եսակեղրոն ձգտումներուն, կը բորբոքէ ոչ թէ *մեր եսակեղրոն ձգտումները*, այլ մեր մէջ *Աստուծոյ թագաւորութեան հանդէպ ջերմեռանդութիւն* կը բորբոքէ: Այն կը կառուցէ՝ ըստ Գլխաւոր Նախագծողի ուզածին եւ Անոր սրտի ցանկութեան: Այս իմաստութեան մասին գրուած է. «Բայց վերին իմաս-

տութիւնը նախ եւ առաջ սուրբ է, եւ յետոյ՝ խաղաղարար, հեգ, հլու, ողորմութեամբ եւ բարի պտուղներով լի, անկողմնասէր, անկեղծ» (Յակոբոս 3.17):

Աստուծոյ իմաստութիւնը սուրբ է: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ այն երկերեսանի չէ. այն չունի Աստուածապաշտութեան կերպարանք՝ խառնուած նախանձով կամ եսասիրական դրդապատճառներով: Աստուծոյ իմաստութեան շարժառիթը՝ Տիրոջը հաւատարիմ ըլլալը եւ Անոր առաջադրանքները ուրախութեամբ ընդունիլն է: Աստուծոյ իմաստութեան նպատակն է՝ ոչ թէ ըլլալ մեծագոյնը, այլ ըլլալ հնազանդ Անոր կանչին: Այն պիտի դրդէ ձեզ ցնծալու Աստուծոյ թագաւորութեան յառաջխաղացմամբ, անկախ այն բանէն՝ ատիկա տեղի պիտի ունենայ մե՞ր, թէ՞ այլ մարդոց միջոցով:

Աստուածային իմաստութիւնը մշտապէս կը կեդրոնանայ այլ մարդոց օգտին վրայ, ոչ թէ՝ սեփական: Այն խաղաղարար է, չի վիճաբանիր, չի գոռոզանար, չի քննադատեր եւ չի տիրապետեր մարդոց: Ատոր հիմնական դրդապատճառը այն է, որ մարդիկ Աստուածապաշտութեամբ վարուին եւ իրենց կոչումը կատարեն: Կան մարդիկ, որոնք կը սիրեն ծառայութիւնը եւ կը հանդուրժեն մարդկութիւնը, բայց կան մարդիկ, որոնք կը սիրեն մարդիկ եւ կը դիտարկեն իրենց ծառայութիւնը, որպէս անոնց ծառայելու միջոց: Վերջին տեսակի մարդիկ կ'առաջնորդուին Աստուծոյ իմաստութեամբ:

Աստուածային իմաստութեան մէկ այլ յատկանիշը *հնազանդութիւնն* է: Երբ մենք գոհ ենք մեր կոչումէն, մենք հնազանդ կ'ըլլանք Աստուծոյ անմիջական եւ լիազօրուած իշխանութեան: Մենք կը տեսնենք Աստուծոյ տան կառուցման ընդհանուր պատկերը, որ կը վերահսկէ միայն մէկ ճարտարապետ, Նախագծող եւ Շինարար: Ան լիազօրած է Իր իշխանութիւնը, կարողութիւնները եւ առաջադրանքները Իր եկեղեցւոյ տարբեր մարդոց: Դատաստանի գահի առջեւ մեծ վարձատրութիւն պիտի ստանան անոնք, որոնք հնազանդ կը մնան իրենց առաջնորդներուն: Այն հովիւներու օգնականները, որոնք եկեղեցիներ բաժնած են, այն աշխատողները, որոնք թէեւ աշխատավարձք ստացած են իրենց ղեկավարներէն, բայց կառուցած են իրենց գործը անոնց գործի հիման վրայ, եւ բոլոր այդպիսի մարդիկ դատաստանի ժամանակ ահռելի կորուստ պիտի կրեն, նոյնիսկ եթէ անոնք մեծ արդիւնքներու հասած ըլլան իրենց ապստամբութեամբ:

Թոյլ մի՛ տաք, որ արդիւնքները խաբեն ձեզ: Մենք կրնանք մեծ արդիւնքի հասնիլ, բայց, միեւնոյնն է, անհնազանդ ըլլալ Աստուծոյ իշխանութեան: Յիշեցէ՛ք Մովսէսը: Տէրը պատուիրեց անոր խօսիլ ժայռին,

որպեսզի ջուրը հրաշքով բխի: Ան չհնազանդեցաւ: Փոխարէնը՝ բարկութեամբ զարկաւ ժայռին: Տուրը, միեւնոյնն է, բխեցաւ եւ այնքան, որ բաւականացուց երեք միլիոն մարդ անապատին մէջ: Մարդիկ թերեւս կ'ըսէին. «Անշուշտ, Աստուած կը լսէ Մովսէսին: Ինչպիսի՞ գօրութիւն»:

Այնուամենայնիւ, երբ անոնք խմեցին եւ վերջացուցին, Աստուած մէկ կողմ կանչեց Մովսէսը եւ ըսաւ, որ ան չի մտներ Խոստման երկիր՝ իր անհնազանդութեան պատճառով: Մովսէսը արդիւնքներու հասաւ, այն ալ՝ հրաշագործ արդիւնքներու: Բայց յաջողութեան ցուցանիշը ոչ թէ արդիւնքներն են, այլ՝ հնազանդութիւնը: Աստուածային իմաստութիւնը արմատացած է Տիրոջ երկիրի մէջ, որուն համար Աստուծոյ կամքը բարձր է որեւէ իրավիճակէ, երեւոյթէ եւ մարդէ: Այն մարդիկ, որոնք Աստուծոյ երկիրը ունին, լիարժէք կերպով հնազանդ են Անոր իշխանութեան:

Եկէ՛ք վերադառնանք իմ կնոջ տեսիլքին: Ան ըսաւ ինձի այդ առաւօտ. «Ճո՛ն, բոլոր զինուորները ճիշդ նոյն դէմքը ունէին»: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ այդ բանակը անդէմ էր: Ասիկա ցոյց կու տայ, որ Աստուած գերաստղերու համար դիրքեր չունի: Երբ հասկնանք ասիկա, մենք այլեւս չենք ցանկար ուրիշ մարդու դիրքը եկեղեցւոյ մէջ եւ չենք ապստամբիր մեր առաջնորդներուն դէմ՝ աւելի բարձր դիրք ունենալու համար: Մեր յառաջխաղացումը կու գայ ի վերուստ, միայն՝ եթէ մենք տնկուած մնանք:

Տարբեր մակարդակներ

Աւետարաններուն մէջ գրուած են երկու նմանատիպ առակներ, որոնցմէ ամէն մէկը կը պատկերէ այլ ճշմարտութիւն մը Դատաստանի գահի վերաբերեալ: Այդ առակներէն մէկը տաղանդներու մասին է, իսկ միւսը՝ մնասներու: Տաղանդներու մասին առակը կը շեշտադրէ այն ճշմարտութիւնը, որ բոլոր հաւատացեալներու կոչումը եւ պարգէւները միեւնոյն մակարդակի վրայ չեն:

«Օտար երկիր գացող մարդ մը կանչեց իր ծառաները եւ իր ունեցածը անոնց յանձնեց: Մէկուն տուաւ հինգ տաղանդ, ու մէկուն՝ երկուք, եւ մէկուն՝ մէկ: Ամէն մէկուն իր կարողութեանը չափ ու անմիջապէս ճամբայ ելաւ» (Մատթէոս 25.14,15):

Օտար երկիր գացող մարդը կը խորհրդանշէ Յիսուսին, իսկ ծառաները՝ մեզի: Տաղանդը՝ դրամական չափ է, բայց քանի որ մենք առակ կը դիտարկենք, այն, հաւանաբար, այլ բան կը խորհրդանշէ:

Տարբերակներէն մէկը, որուն ես անձամբ կը հաւատամ, այն է, որ տաղանդները կը խորհրդանշեն մեր կոչումին եւ պարգէւներուն տարբեր մակարդակները: Օրինակ՝ որոշ մարդոց ծառայութիւնը այնպիսի մակար-

դակի վրայ է, որ անոնք կը հասնին ազգերու, միւսները՝ քաղաքներու, իսկ ուրիշները՝ տնային խումբերու որեւէ եկեղեցւոյ մէջ: Որոշ գրողներ կը հասնին միլիոնաւոր մարդոց, միւսները՝ հազարաւորներու, իսկ ուրիշները՝ հարիւրաւորներու: Ինչ որ մէկը, որ առաջնորդ ըլլալու պարգեւ ունի, կրնայ հազարաւոր անդամներ ունեցող եկեղեցի կառուցել, այնինչ միւսները կրնան աշխատիլ միայն միջին կամ փոքր չափ ունեցող եկեղեցիներու մէջ: Կան գործարար մարդիկ, որոնց ձեռնարկատիրական կարողութիւնները թոյլ կու տան կառուցելու ընկերութիւններ, որոնց միջոցով անոնք հարիւր հազարաւոր տոլարներ կը տրամադրեն Աստուծոյ թագաւորութեան համար: Միւսներու ընկերութիւնները միլիոնաւոր տոլարներու եկամուտ կ'ունենան, այնինչ ուրիշները կը կառուցեն քանի մը ընկերութիւններ, որոնց շնորհիւ կրնան միլիոններու կամ միլիարներու հասնող միջոցներ տրամադրել Աստուծոյ թագաւորութեան համար:

Եկէ՛ք վերադառնանք մեր առակին: Ուշադրութիւն դարձուցէ՛ք աստոր մէջ գտնուող երկու կարեւոր պնդումներուն: Առաջինը՝ բոլոր ծառաները ինչ որ բան մը ստացան: Կը նշանակէ՝ եկեղեցւոյ մէջ չկայ ոեւէ մարդ, որ կոչում չունենայ (նաեւ՝ աստոր ուղեկցող պարգեւներ): Երկրորդը՝ կոչումներուն եւ պարգեւներուն տարբեր մակարդակները տրուեցան՝ ըստ անոնց կարողութեան: Այնուամենայնիւ, մենք պէտք է յիշենք, որ Աստուած կարողութիւն կու տայ մեզի: Չկայ այնպիսի արժէքաւոր բան մը մեր կեանքին մէջ, որ մենք չենք ստացած, որովհետեւ Աստուածաշունչը կը պնդէ. «Քանզի ո՞վ է ան, որ տարբեր կ'ընէ քեզ ուրիշներէն, եւ ի՞նչ ունիս, որ չես առած եւ եթէ առած ես, ինչո՞ւ չառածի պէս կը պարծենաս» (Ա. Կորնթացիս 4.7):

Այս առակին մէջ հինգ տաղանդի կոչում եւ պարգեւներ ունեցող մարդը կրկնապատկեց իր մէջ կատարած ներդրումը: Երկու տաղանդ ունեցող մարդը նոյնը ըրաւ: Անձամբ ես համոզուած եմ հետեւեալին մէջ. թէեւ Աստուած տուած է Իր պարգեւները ամէն մէկուս, մենք պէտք է համազործակցինք այլ մարդոց հետ, որպէսզի ունենանք այն արդիւնքը, որ Ան կը ցանկայ:

Այնուամենայնիւ, մէկ տաղանդի կոչում ունեցող մարդը կրնար համարել, որ իր մէջ ներդրուած աւանդը աննշան էր: Անոր կարծիքով՝ իր տէրը անազնիւ, անխոհեմ եւ խիստ էր: Ան կրնար մտածել. *«Ինչո՞ւ ես ստացայ ատելի քիչ, քան միւսները: Ինչո՞ւ անոնք համազգային կամ համաքաղաքային ազդեցութիւն ունին: Ինչո՞ւ անոնք ունին քարոզելու, երգելու կամ գրելու կարողութիւն, իսկ ես՝ ոչ: Ինչո՞ւ իմ ընկերութիւնը չունեցաւ այնպիսի աճ, ինչպէս միւսներունը»*: Եւ այսպէս շարունակ: Այնպէս որ, ան պահեց իր տաղանդը: Ան չկատարեց իր կոչումը: Ան

օգտագործեց իր պարգեւը իր համար կամ այնպիսի բնագաւառներուն մէջ, որոնք օգուտ չբերին Աստուծոյ թագաւորութեան:

Երկար ժամանակ յետոյ այդ ծառաներու տէրը եկաւ՝ անոնց հետ հաշիւ տեսնելու: Առաջին երկուքը, որոնք կրկնապատկեցին իրենց վստահուածը, վարձատրուեցան նոյն գովեստի խօսքերով. «Անոր տէրն ալ ըսաւ անոր. «Ապրի՛ս, բարի ու հաւատարիմ ծառայ, քիչ բանի մէջ հաւատարիմ եղար, քեզ շատ բաներու վրայ պիտի կեցնեմ. Մտի՛ր քու Տիրոջդ ուրախութեանը մէջ» (Մատթէոս 25.21): Հինգ տաղանդի կոչում եւ պարգեւներ ունեցող ծառան չստացաւ աւելի մեծ գովեստ, քան երկու տաղանդի կոչում եւ պարգեւներ ունեցողը, քանի որ երկուքն ալ հաւատարիմ եւ ջանասէր էին: Ասիկա կրկին կը հաստատէ, որ Աստուած միայն կը պահանջէ մեզմէ հաւատարիմ ըլլալ այն բանին մէջ, ինչ որ Ինքը տուած է մեզի:

Մէկ տաղանդ ունեցող մարդը խստօրէն յանդիմանուեցաւ, եւ անոր տէրը պատուիրեց վերցնել անոր վստահուածը եւ տալ այն երկուքէն մէկուն: Անհաւատարիմ ծառան մեծ կորուստ կրեց, իսկ հաւատարիմը ստացաւ նոյնիսկ աւելին:

Կը յիշեմ 1992 թուականը, երբ Աստուած պատուիրեց ինծի գիրք գրել: Աղօթքի ժամանակ ես գրեթէ ծիծաղեցայ անհաւատութենէն՝ չհաւատալով իմ սրտին մէջ լսածին: Ես չէի կրնար սիրել եւ նոյնիսկ կ'ատէի գրաւոր անգլերէնը: Եթէ ինչ որ մէկը ըսէր, որ ես պէտք է գիրք գրեմ, ես այնպէս կը ծիծաղէի, որ ան շփոթուած կ'երթար:

Այնուամենայնիւ, տասը ամիս յետոյ երկու կին քովս եկան երկու շաբթուան տարբերութեամբ եւ տուին միեւնոյն մարգարէական խօսքը. «Ճո՛ն, եթէ դուն չգրես այն, ինչ որ Աստուած տուած է քեզի, Ան կու տայ այդ ուղերձը մէկ ուրիշ մարդու, իսկ դուն պիտի դատուիս»: Ես դող զգացի եւ հաւատքով քայլ առի, իսկ մնացածը արդէն անցեալին մէջ: Եթէ ես չհնազանդէի, ինչ որ մէկը պիտի գրէր այս ուղերձները, իսկ ես պիտի կորսնցնէի ինծի վստահուած տաղանդը:

Բազմապատկել մեզի տրուածը

Մենք լայնօրէն քննարկեցինք այն, որ դուք ոչինչ կրնաք աւելցնել ձեր կոչումին կամ պարգեւներուն: Այժմ ուշադրութիւն դարձնենք այն բանին, որ ամէն հաւատացեալ պէտք է *բազմապատկէ* իրեն տրուածը: Այս ճշմարտութիւնը յստակ կ'երեւի մնասներու մասին առակին մէջ, որ թէեւ նման է տաղանդներու մասին առակին, բայց մեծապէս կը տարբերի ատորմէ: Յիսուս կ'ըսէ.

«Ազնուական մարդ մը հեռու երկիր գնաց՝ իրեն համար թագաւորութիւն առնելու եւ ետ դառնալու: Իր տասը ծառաները կանչելով՝ իւրաքանչիւրին տասը մնաս տուաւ ու ըսաւ անոնց. «Բանեցուցէ՛ք ատոնք, մինչեւ ես գամ»» (Ղուկաս 19.12,13):

Մնասը, ինչպէս եւ տաղանդը, դրամական չափ է: Բայց այս առակին մէջ իւրաքանչիւրը ստացաւ մէկական մնաս, այսինքն՝ նոյն չափը: Այդ իսկ պատճառով, մնասները չեն խորհրդանշեր մեր կոչումին եւ պարգեւներուն մակարդակը, ինչպէս տաղանդները: Մնասը կը խորհրդանշէ Աստուծոյ Խօսքի ճշմարտութիւնները, մեր հաւատքի հիմքերը, Աստուծոյ սէրը՝ սփռուած մեր սրտերուն մէջ, եւ այն օրհնութիւնները, որոնք կը տրուին ամէն հաւատացեալի՝ Աստուծոյ հետ ուխտ ունենալու պատճառով: Ամէն մարդ ստացած է նոյն չափը. ոչ ոք լրացուցիչ չափ ստացած է՝ սկիզբի համար:

Այս առակը այն մասին է, թէ ինչ ունի իւրաքանչիւր հաւատացեալ Քրիստոսի մէջ: Աստուածաշունչին մէջ գրուած է. «Ուրեմն, մէկը թող չպարծենայ մարդոցմով, վասնզի ամէն բան ծերն է» (Ա. Կորնթացիս 3.21,22): Եւ կրկին՝ «Օրհնեալ է Աստուած եւ մեր Տէր Յիսուս Քրիստոսին Հայրը, որ մեզ օրհնեց ամէն հոգեւոր օրհնութեամբ երկնաւորներուն մէջ Քրիստոսով» (Եփեսացիս 1.3): Այս օրհնութիւնները մերն են Քրիստոսին մէջ, բայց ատոնք կ'իւրացուին եւ կը դրսեւորուին այս երկրին մէջ մեր հաւատքի միջոցով: Եւ ատոնք կը բազմապատկուին մեր հնազանդութեամբ, աղօթքներով եւ զոհաբերութիւններով: Ահա թէ ինչու ազնուականը, որ կը խորհրդանշէ Յիսուսին, կ'ըսէ իր ծառաներուն (որոնք կը խորհրդանշեն մեզի). «Բանեցուցէ՛ք՝ մինչեւ ես գամ»: Մենք պէտք է վերցնենք այն, ինչ որ տրուած է մեզի, եւ կը *բազմապատկենք* ատիկա Աստուծոյ փառքի համար:

Տեսնենք, թէ ինչ արդիւնքներու հասան այդ ծառաները.

«Բայց երբ անիկա թագաւորութիւնը առնելով ետ դարձաւ, իրեն կանչեց այն ծառաները, որոնց ստակ տուեր էր, որպէսզի գիտնայ, թէ ով ինչ շահեցաւ: Առաջինը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, քու մնասդ տասը մնաս շահեցաւ»: Տէրը ըսաւ անոր. «Ապրի՛ն, բարի ծառայ, որովհետեւ քիչ բանի մէջ հաւատարիմ եղար, տասը քաղաքի վրայ իշխանութիւն ունեցիր»: Երկրորդը եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, քու մնասդ հինգ մնաս շահեցաւ»: Եւ ըսաւ անոր. «Դուն ալ հինգ քաղաքի վրայ եղիր»: Ուրիշ մըն ալ եկաւ ու ըսաւ. «Տէ՛ր, ահա քու մնասդ, որ թաշկինակի մը մէջ ծրարած կը պահէի»» (Ղուկաս 19.15–20):

Ազնուականը խստօրէն յանդիմանեց վերջին մարդը, եւ այն մնասը, որ ան ունէր, վերցուեցաւ եւ տրուեցաւ անոր, որ մէկ մնասէն տասը շա-

հած էր: Տէրը ըսաւ. «Ասոր համար կ'ըսեմ ձեզի, թէ ամէն ունեցողին պիտի տրուի, եւ չունեցողէն՝ *ինչ ալ որ ունի, վեր պիտի առնուի*» (Խօսք 26):

Այս առակին մէջ Յիսուս կը խօսի տասը ծառաներէն միայն երեքի հետ: Կրկին, այս առակի կարեւոր տարբերութիւնը այն էր, որ ամէն մէկը սկսաւ նոյն չափով, բայց մէկը տասնապատիկ աւելցուց իր ունեցածը, միւսը՝ հնգապատիկ, իսկ երրորդը ընդհանրապէս ոչինչ աւելցուց: Մենք նոյնպէս կը տեսնենք, որ վարձատրութիւնները կը տարբերին ըստ այն բանին, թէ որքան արդիւնաւէտ են ծառաները: Անոնց յաջողութիւնը որոշեց, թէ քանի քաղաքի վրայ պիտի իշխէին:

Այն, թէ ինչպէս մենք կը բազմապատկենք մեզի աւանդուածը, պիտի որոշէ, թէ որքան իշխանութիւն մեզի կը վստահուի Հազարամեայ թագաւորութեան ընթացքին, ինչպէս նաեւ՝ նոր երկրի եւ նոր երկնքի ժամանակ: Հաւատարիմները պիտի իշխեն Քրիստոսի հետ, բայց բոլորը չեն ունենար նոյն իշխանութիւնը: Մեր աշխատասիրութիւնը հոս պիտի որոշէ, թէ ինչ չափով մենք պիտի իշխենք Անոր հետ յաւիտենութեան մէջ: Ամէն մէկս սկսած ենք նոյն կերպով՝ մէկական մնասով. այնպէս որ, հաւատարիմ կինը եւ մայրը, որ ջանասիրաբար կը ծառայէ եկեղեցւոյ մէջ, կրնայ պարգեւատրուիլ միեւնոյն չափով, ինչպէս աւետարանիչը, ով Քրիստոսին առաջնորդած է հարիւր հազարաւոր մարդիկ:

Այս առակը ցոյց կու տայ, որ ամէն մէկը կրնայ շատ անգամ բազմապատկել իր մնասը: Մեր անձնական կեանքին մէջ կրնանք տարածել կամ կառուցել Աստուծոյ թագաւորութիւնը այնքան շատ կամ քիչ, որքան ցանկանք. Մենք կ'որոշենք ասիկա: Իրականութեան մէջ, որոշ հարցերու մէջ մենք լիովին սահմանափակ ենք: Թերեւս դուք չընդունիք ասիկա, բայց թոյլ տուէք ցոյց տալ այս օրինակներու միջոցով: Ես կրնամ շատ օրինակներ բերել, բայց ընդամէնը մէկ քանին կրնան բանալ ձեր սրտի դուռը այս հոգեւոր սկզբունքի համար: Այնուամենայնիւ, մինչեւ ատոնց անցնիլը նախ՝ կարդանք Պետրոս առաքեալի խօսքերը.

«Շնորհքը... շատնայ ձեր վրայ Աստուծոյ եւ մեր Տէր Յիսուսի գիտութեամբ: Ինչպէս որ Անոր աստուածային զօրութիւնը շնորհեց մեզի այն ամէնը, որ կեանքի եւ աստուածապաշտութեան համար պէտք է...» (Բ. Պետրոս 1.2,3):

Շնորհքը կրնայ *շատնայ (աւելնայ)* կամ *բազմապատկուիլ* մեր կեանքին մէջ: Յակոբոսը կը գրէ. «Բայց Ան աւելի ու աւելի շնորհք կու տայ մեզի» (Յակոբոս 4.6, AMP): Միայն Անոր շնորհքով մենք կրնանք այնպիսի գործեր ընել, որոնք արժէք կ'ունենան Աստուծոյ թագաւորութեան մէջ: Այս կարողութիւնը կ'աւելնայ զԱստուած մտերմօրէն ճանչնալու շնորհիւ: Ահա թէ ինչու ամէն հաւատացեալ պէտք է որակեալ

ժամանակ անցրնէ Աստուծոյ հետ: Մենք պէտք է աղօթենք, կարդանք Աստուծոյ Խօսքը եւ Աստուծո՛մէ ոգեշնչուած գիրքեր, լսենք օծուած քարոզներ, եւ այդ ընթացքին նայինք ու լսենք Սուրբ Հոգիին՝ սպասելով Անոր յայտնութեան: Երբ այսպէս վարուինք, շնորհքը կ'աւելնայ մեր կեանքին մէջ, եւ մենք աւելի արդիւնաւէտ պիտի դառնանք:

Ես բացայայտած եմ, որ որքան աւելի կը ճանչնամ զԱստուած եւ Անոր ճանապարհները, այնքան աւելի արդիւնաւէտ պիտի դառնամ: Եթէ բութ ծայրով կացին ունենամ, ինձմէ ամբողջ օր մը պիտի պահանջուի ծառ մը կտրելու համար: Այնուամենայնիւ, եթէ ես սրեմ այն, կրնամ օրական հինգ ծառ կտրել՝ նոյնքան ուժ գործադրելով: Ահա թէ ինչ տեղի կ'ունենայ, երբ շնորհքը կը շատնայ կամ կը բազմապատկուի մեր կեանքին մէջ: Մենք աւելի արդիւնաւէտ կը դառնաք:

Ես կը յիշեմ, որ տարիներ առաջ մենք կը վկայէինք միաստեռականներու տողանցքի մասնակիցներուն Թեքսաս նահանգի Տալլաս քաղաքին մէջ: Երկու ժամ շարունակ ես այդ կորսուած մարդոց հետ կը խօսէի Յիսուսի մասին, իսկ անոնք այնպէս կը նայէին ինձի, կարծես ես այլ աշխարհէն ըլլայի: Ոմանք գրեթէ իմ խօսելուն զուգահեռ կը պատասխանէին ինձի Աստուածաշնչեան հատուածներով: Ես կը զգայի, որ առջեւ ըսես անանցնելի պատ ըլլար: Ատիկա նման էր կրադիւսի վրայ սերմեր նետելուն:

Յանկարծ Տէրը շնչաց. «Նայի՛ր Ինձի, եւ Ես ցոյց պիտի տամ, թէ ինչ ընես»: Յաջորդ երեսուն վայրկեանի ընթացքին Աստուած առաջնորդեց զիս քանի մը հոգիի քով եւ խօսքեր տուաւ, որ խօսէի անոնց հետ: Այս անգամ մարդիկ կ'ընդունէին իմ ըսածները, եւ երեք տղամարդ իրենց կեանքը յանձնեցին Յիսուս Քրիստոսին: Երբ ես սկսայ հետեւիլ Սուրբ Հոգիին եւ լսել այն, ինչ որ Ան կը խօսէր իմ սրտին մէջ, իմ արդիւնաւէտ ըլլալու կարողութիւնը աւելցաւ:

Ես տեսած եմ ասիկա իմ կեանքի իւրաքանչիւր բնագաւառին մէջ: Աստուծոյ Խօսքի մէջ աճ ունենալուն զուգահեռ ես կրնայի աւելին ընել՝ աւելի կարճ ժամանակուայ մէջ: Ես գտայ ճշմարտութեան ճանապարհներ, որոնք խնայեցին ժամեր, օրեր եւ նոյնիսկ ամիսներ ինձի համար: Աղօթքները աւելի զօրաւոր կը դառնան, Աստուծոյ ներկայութիւնը կը սկսի աւելի զօրաւոր դրսեւորուիլ, եւ ես կրնամ աւելի արդիւնաւէտ կերպով հալի մարդոց կեանքերուն: Աստուածաշունչը ասիկա կը խոստանայ.

«Տիրոջ երկիւղը՝ իմաստութեան սկիզբն է: Սուրբին ճանչնալը հանձար կու տայ: Իմաստութիւնը կը շատցնէ քու օրերը եւ կ'աւելցնէ տարիներ քու կեանքին» (Առակաց 9.10,11, NLT):

Այս հատուածին մէջ երկու խոստում կայ. աւելցած տարիներ, այսինքն՝ երկար կեանք եւ շատցած օրեր: Երկրորդ խոստումը նոյնը չէ, ինչ որ աւելցած տարիները, քանի որ ատիկա ոչ անհրաժեշտ կրկնութիւն կ'ըլլար: Այն կը նշանակէ՝ նոյն ժամանակահատուածին մէջ աւելին հասցնելու կարողութիւն: Մէկ այլ հատուածին մէջ այս նոյն յատկանիշը կը կոչուի «երկար օրեր». «Վասնզի քեզի երկար օրեր եւ կենդանութեան տարիներ եւ խաղաղութիւն պիտի աւելցնեն (շատցնեն) քեզի համար» (Առակաց 3.2): Այս խօսքի հեղինակը կը գրէ Աստուծոյ խօսքին ականջ դնելու մասին, ինչպէս եւ Պետրոսը՝ վերոյիշեալ բերուած սուրբգրային հատուածներէն մէկուն մէջ: Ուշադրութիւն դարձուցէք, որ մարդուն կը տրուին ոչ միայն երկար տարիներ, այլեւ երկար օրեր: Աստուծոյն լսելը եւ հետեւիլը կ'աւելցնէ մեր ժամանակը:

Բազմապատկում՝ զոհաբերելու միջոցով

Ան, որ մտերմօրէն կը ճանչնայ զԱստուած, ուրախ եւ առատածեռն զոհաբերող կը դառնայ, քանի որ Ան մեծ պարգեւներ տուող Աստուած է: Ան տուաւ մեծագոյն պարգեւը՝ Իր Որդին: Աստուծոյ համար Յիսուսէն սուղ ոչինչ կայ: Տէրը երբեք անկարելի եւ անարժէք նուէրներ չի տար: Ան տուաւ Յիսուսը, որովհետեւ կը սպասէր մեծ հունձքի՝ բազմաթիւ որդիներու եւ դուստերու, որոնք մուտք կը գործէին Իր ընտանիք, եւ Անոր սպասուած հունձքը տակաւին կը հաւաքուի:

Հաւատքով զոհաբերելը՝ մեր ունեցածը բազմապատկելու եւս մէկ անխափան միջոց է: Մեր զոհաբերութիւնները կը բազմապատկեն այն, ինչ կը պատկանի մեզի, եւ յաւիտենական ազդեցութիւն կը ձգեն մարդոց վրայ, ինչպէս եւ այն պարագային, երբ Հայրը զոհաբերեց Յիսուսը մեզի համար: Յիսուս յատուկ կ'ըսէ մեզի. «Կ'ըսեմ ձեզի՝ օգտագործեցէ՛ք այս աշխարհի հարստութիւնը, որ ընկերներ շահիք ձեզի համար, որպէսզի երբ այն այլեւս չըլլայ, դուք երկնային բնակարաններու մէջ ընդունուիք» (Ղուկաս 16.9, NIV): Եթէ մենք պատշաճ կերպով օգտագործենք մեր դրամը, այն պիտի ազդէ մեր կեանքի որակի վրայ Երկինքը եւ Նոր Երուսաղէմի մէջ՝ այն ժամանակ, երբ այդ դրամը այլեւս չըլլար: «Ինչպէս գրուած է՝ Ան [բարերարը] կը ցրէ. Ան կու տայ աղքատներուն. Անոր արդար, բարի, մեծահոգի եւ բարերար գործերը պիտի շարունակուին եւ պիտի մնան յաւիտեան» (Բ. Կորնթացիս 9.9, AMP):

Մարդը կրնայ աղքատ ըլլալ ոչ միայն նիւթապէս, այլեւ՝ հոգիով: Ինչ որ մէկը կրնայ միլիոնաւոր տոլարներ ունենալ, բայց հոգիով աղքատ ըլլալ: Ասոր օրինակներէն մէկը Ջաքէոսն է: Յիսուս ըսաւ՝ նկա-

րագրելով իր առաքելութիւնը. «Տիրոջ Հոգին Իմ վրայ է, որուն համար ալ օծեց Ջիս: Ան ուղարկած է Ջիս *աղքատներուն* աւետարանելու...» (Ղուկաս 4.18): Աւելի ուշ Ան քաղաք մը կը մտնէ, կը գտնէ հոն ապրող ամենահարուստ մարդը եւ կը դիմէ անոր մեծ բազմութեան առջեւ՝ ըսելով. «Այսօր Ես պէտք է հիւր ըլլամ քու տունին մէջ» (Ղուկաս 19.5, NLT): Թէեւ Ջաքոնը այդ քաղաքի ամենահարուստ մարդն էր, ան, ինչպէս պարզուեցաւ, ամենաաղքատն էր: Ուրիշ ձեւով ըսելու համար՝ ան միւսներէն աւելի շատ կը գիտակցէր, թէ որքան ունէր Աստուծոյ կարքը: Յիսուսը ծառայեց շատ հարուստ մարդոց, որոնք լաւ կը գիտակցէին, որ Աստուծոյ Խօսքի պէտքը ունէին:

Ծառայութիւնները կը բարձրանան, որպէսզի կատարեն Յիսուսի գործը՝ ազդարարեն եւ սորվեցնեն Աստուծոյ Խօսքը աղքատներուն: Աստուծոյ գործին դրամներ նուիրաբերելով՝ մենք կը ցանենք աղքատներու կեանքին մէջ, եւ մեր գործերը կը մնան յաւիտեան: Քանի տակաւին դուք սերմ ունիք,– իսկ Աստուած կ'ըսէ, որ պիտի տայ ձեզի սերմ,– դուք կրնաք բազմապատկել ձեր ջանքերը՝ Աստուծոյ թագաւորութիւնը կառուցելու համար:

Ինչպէ՞ս ձեր պարգելը կը բազմապատկուի: Եթէ դուք, օրինակ, խնձորի սերմ ցանէք, մէկ օր դուք խնձորներու հունձք պիտի ունենաք: Բայց աւելի կարելորդ այն է, որ բոլոր այդ խնձորներուն մէջ նոր սերմեր պիտի ըլլան: Եթէ այդ սերմերը ցանուին, ատոնք աւելի մեծ հունձք պիտի տան, եւ այսպէս շարունակ: Նոյնը ճշմարիտ է մեր դրամներու պարագային: Տեսէք, թէ Պօղոս առաքեալը ինչ կը գրէ կորնթացիներուն՝ անոնց զոհաբերութիւններուն մասին.

«Որովհետեւ ասիկա կ'ըսեմ, թէ՛ խնայելով սերմողը, խնայելով ալ պիտի հնձէ, եւ առատութեամբ սերմողը առատութեամբ ալ պիտի հնձէ: Ամէն մէկը՝ ինչպէս որ իր սրտովը կը յօժարի, ոչ թէ տրտմութեամբ կամ ստիպմամբ, վասնզի Աստուած յօժարակամ (ուրախ սրտով) տուողը կը սիրէ» (Բ. Կորնթացիս 9.6,7):

Մեր բազմապատկուած հունձքը ուղիղ համեմատական պիտի ըլլայ մեր ցանքի չափին: Ուշադրութիւն դարձուցէք, որ Աստուած չ'որոշէր մեր ցանքը. մենք կ'որոշենք, թէ որքան կը ցանկանք տալ: Եթէ մենք, հաւատքէն եւ սէրէն դրդուած, որոշենք առատաձեռն ըլլալ, մեր նուիրատուութիւնները մեծապէս կ'աւելնան. «Ան, Որ սերմ կը մատակարարէ ցանողին եւ հաց՝ կերակուրի համար, նոյնպէս *կը մատակարարէ եւ կ'աւելցնէ* ձեր *սերմացուներու պաշարը* եւ կը շատցնէ *ձեր արդարութեան հունձքը*» (Բ. Կորնթացիս 9.10, NIV):

Տէրը կը մեծցնէ մեր սերմացուներու պաշարը՝ նման խնձորներու օրինակին, որ քիչ առաջ բերի: Եթէ մենք ցանենք այն, ինչ որ ունինք, աւելի շատ սերմ պիտի ստանանք: Ասիկա պիտի շարունակուի այնքան, մինչեւ որ մենք այնպիսի սերմացուներու պաշար ունենանք, որ կարենանք մեծապէս օրհնել մարդոց:

Մեր զոհաբերութիւններու միջոցով Աստուած կը շատցնէ *մեր արդարութեան հունձքը*: Ահա թէ ինչն է իսկապէս ոգեշնչող: Ասիկա կը նշանակէ, որ մեր յաւիտենական վարձատրութիւններու հունձքը պիտի աւելնայ. մենք վարձատրութիւն պիտի ստանանք նաեւ այն մարդոց համար, որոնց հպած ենք մեր զոհաբերութիւններով: Այնպէս որ, ըստ էութեան, մենք կը բազմապատկենք մեր մնասները՝ մեր առակի ծառաներուն պէս:

Գործընկերութիւն

Երբ օգնութիւն կը տրամադրենք մարդոց, յատկապէս՝ կարիքաւորներուն, որոնք չեն կրնար հատուցել մեզ, մենք վարձատրութիւն կը ստանանք ե՛ւ այս կէտնքին մէջ, ե՛ւ դատաստանի ժամանակ: Բացի այդ, մենք կրնանք բազմապատկել Աստուծոյ թագաւորութիւնը կառուցելու մեր ջանքերը՝ *գործընկեր դառնալով* Աւետարանի տարածման: Ահա թէ Պօղոսը ինչ կը գրէ Փիլիպպէի հաւատացեալներուն, որոնք ֆիւնանսապէս կ'աջակցէին իր ծառայութեան.

«Բայց ճիշդ եւ գովեստի արժանի եւ վեհանձն է ձեր կողմէն իմ կարիքներու համար միջոցներ նուիրաբերելը եւ իմ հետ իմ դժուարութիւնները կիսելը: Եւ դուք՝ փիլիպպեցիներդ, լաւ գիտէք, որ իմ Աւետարանի ծառայութեան վաղ օրերուն, երբ զացի Մակեդոնիայէն, ոչ մէկ եկեղեցի (համայնք) չէր համագործակցեր հետս եւ չէր բանար [հաշուարկային եւ վարկային] հաշիւ՝ տալու եւ ստանալու համար, բացի միայն ձեզմէ: Որովհետեւ նոյնիսկ Թեսաղոնիկէի մէջ դուք ուղարկեցիք [ինձի աջակցութիւն] իմ կարիքներու համար ոչ միայն մէկ անգամ, այլեւ երկրորդ անգամ» (Փիլիպպեցիս 4.14–16, AMP):

Պօղոսը կը խօսի այն մասին, որ փիլիպպեցի հաւատացեալները իր ծառայութեան *գործընկերներն* էին: Գործընկերութիւնը կը սահմանուի որպէս «յարաբերութիւն անհատներու կամ խումբերու միջեւ, որ կը բնութագրուի համագործակցութեամբ եւ փոխադարձ պարտաւորութիւններով՝ որոշակի նպատակի հասնելու համար»²: Առողջ, Աստուծմէ տրուած գործընկերութիւնը մշտապէս թոյլ կու տայ ատոր մէջ ներգրաւուած անձանց ընելու աւելին, քան այն, ինչ որ ինքնուրոյն ընելու մասին անոնք չէին ալ կրնար երազել:

Ինչպէս ըսի, Յիսուս յանձնարարեց մեզի երթալ ամբողջ աշխարհով եւ *աշակերտել* բոլոր ազգերուն, ոչ թէ պարզապէս դարձի բերել զանոնք: Այս յանձնարարութիւնը կը վերաբերի ամէն հաւատացեալի: Այնուամենայնիւ, եթէ բոլոր հաւատացեալները լրիւ ժամանակով միսիոներական դաշտ երթային, որպէսզի կատարէին այս յանձնարարութիւնը, ինչպէ՞ս Աւետարանը պիտի ֆինանսաւորուէր: (Կրկին՝ ահա այն պատճառներէն մէկը, թէ ինչու Աստուած տարբեր կոչումներ եւ պարգեւներ կու տայ ամէն մարդու): Տէրը ոչ մէկ պարագային նախատեսած է, որ ծառայողները ստանան իրենց անհրաժեշտ դրամական միջոցները հրեշտակներու միջնորդութեամբ կամ երկինքէն ինկող դրամի միջոցով: Փոխարէնը, Ան զոհաբերելու արտօնութիւն տուած է Իր մարմինն՝ ստեղծելով գործընկերութիւնը:

Աստուած կանչած է որոշ մարդիկ եւ օժտած է զանոնք ծառայութեան պարգեւներով՝ բազմութիւններու հասնելու համար: Ինչպէս արդէն նշեցինք, Ան կու տայ յատուկ պարգեւներ, կարողութիւն եւ օժութիւն՝ այս նպատակը իրականացնելու համար: Ան եկեղեցւոյ մէջ այս առաջադրանքը չէ տուած բոլորին, այլ՝ որոշ մարդոց (տե՛ս Եփես. 4.11): Ան Իր ծրագրի մէկ այլ անբաժանելի մասը յանձնարարած եւ վստահած է եկեղեցւոյ մնացած մարդոց: Անոնք պէտք է աշխատին, եկամուտ կամ աշխատավարձ ստանան եւ հասնին Աւետարանով իրենց ազդեցութեան շրջանակին մէջ գտնուող մարդոց: Այնուամենայնիւ, եթէ դուք կ'աշխատիք լրիւ ժամանակով, ինչպէ՞ս պիտի կարենաք բազմութիւններու հասնիլ: Պատասխանը՝ գործընկերութիւնն է:

Եթէ դուք ունենայիք այնպիսի ապրանք, որ կրնար փոխել մարդոց կեանքերը, բայց ի վիճակի ըլլայիք ամէն ամիս պատրաստելու ընդամէնը երկու օրինակ, անհնարին կ'ըլլար հասցնել այն ձեր քաղաքին, ձեր երկրին կամ ամբողջ աշխարհին: Այնուամենայնիւ, եթէ ըլլար ընկերութիւն մը, որ յատուկ սարքաւորումներ ունենար՝ այդ ապրանքէն ամսական հազարաւոր օրինակներ արտադրելու համար, դուք պիտի դառնայիք անոնց գործընկերը, որպէսզի կատարէիք ձեր առաջադրանքը: Այդ պարագային դուք պարզապէս չէիք հասներ ամսական երկու մարդու (անձնական աւետարանչութեան եւ աշակերտելու օրինակը), այլ՝ հազարաւոր մարդոց, որոնց այդ ընկերութիւնը պիտի հասներ: Դուք արդիւնաւէտ կերպով պիտի բազմապատկէիք ձեր տաղանդները եւ ջանքերը՝ պարզ գործընկերութեան միջոցով:

Պօղոսի խօսքը՝ ուղղուած փիլիպպեցիներուն, կը վերաբերի ճիշդ այս սկզբունքին: Ան կը շարունակէ. «Ես ոչ թէ կը ձգտիմ կամ կը սպասեմ [ձեր] պարգեւին, այլ կը ձգտիմ եւ կը սպասեմ այն *պտուղին, որ կը*

հաշուեգրուի ձեզի [օրհնութեան հունձքին, որ կը կուտակուի ձեր հաշուին]» (Փիլիպպեցիս 4.17, AMP):

Ուշադրութիւն դարձուցէ՛ք «այն պտուղին, որ կը հաշուեգրուի ձեզի» արտայայտութեան: Փիլիպպեցի հաւատացեալները կը բազմապատկէին մարդոց հասնելու եւ սորվեցնելու իրենց ջանքերը. անոնք դրամական միջոցներ կը ցանէին Պօղոսի կեանքին եւ ծառայութեան մէջ՝ որպէս անոր գործընկերներ: Անոնք կու տային ժամանակաւորը՝ վերածելով այն յաւիտենականի, եւ վերջաւորութեան կը բազմապատկուէր թէ՛ մէկը, թէ՛ միւսը:

Պօղոսը կը գրէ, որ գործընկեր դառնալով՝ դուք կ'ունենաք «օրհնութեան հունձք, որ կը կուտակուի ձեր հաշուին»: Խօսքը ձեր երկնային հաշուի մասին է: Երբ դուք կենաք Քրիստոսի ատեանին առջեւ, դուք պիտի վարձատրուիք ոչ միայն այն մարդոց համար, որոնց անձամբ հպած էք ձեր աշխատավայրին, բնակավայրին, ուսումնական հաստատութիւններուն մէջ եւ այլուր, այլեւ հազարաւոր կամ միլիոնաւոր մարդոց, որոնց դուք հասած էք եւ աշակերտած էք Աստուծո՛մէ կարգուած ծառայութիւններու գործընկեր ըլլալով: Ահա թէ ինչու Աստուածաշունչը կոչ կ'ընէ մեզի. «Տուէ՛ք առատածեռնութեամբ, որովհետեւ ձեր նուէրները հետագային պիտի վերադառնան ձեզի: Բաժնեցէ՛ք ձեր նուէրները շատերուն» (Ժողովող 11.1,2, NLT):

Եթէ դուք հետեւողականօրէն նուիրատուութիւններ կատարէք Աստուծո՛մէ նշանակուած ծառայութիւններուն (որոնց կարգին է նաեւ ձեր տեղական եկեղեցին), դուք պիտի հպիք մարդոց անոնց գործունէութեան միջոցով: Դուք բաժին պիտի ունենաք անոնց բոլոր գործերէն, քանի որ դուք անոնց գործընկերն էք: Ահա ոգեշնչող լուր մը. որքան շատ ներդնէք, այնքան մեծ պիտի ըլլայ ձեր վարձատրութիւնը:

Իմացէ՛ք, որ Աստուած կը գնահատէ ձեր նուիրատուութիւնը ոչ այնքան գումարի չափով, որքան այն հաւատարմօրէն ցանելով: Հայր Աստուած կը փնտռէ սրտէն բխող նուիրատուութիւններ: Ան կը սիրէ եւ կ'օրհնէ այդ սրտի դիրքը, ոչ թէ պարզապէս գումարի չափը: Օրինակ՝ ինչ որ մէկը կրնայ հաւատարիմ ըլլալ ամսական երեսուն տոլար նուիրաբերելու մէջ, բայց այդ մարդուն համար ատիկա իսկապէս զգալի գումար է: Աստուած կը դիտարկէ այդ նուիրատուութիւնը ոչ թէ ուղղակի որպէս դրամական չափ, որովհետեւ այն տրուած է նուիրաբերողի անձնական կարիքները հոգալու հաշուին: Թերեւս մէկ ուրիշ մարդ ամսական հազար տոլար նուիրաբերէ, բայց այդ միջոցները տրուին անոր աւելցուկէն. այդ նուիրատուութիւնը զգալի գումար չ'ըլլար անոր համար, եւ ան ոչինչ կը զոհէ՝ ատիկա ընելով: Երկուքն ալ հրաշալի են եւ սուղ են Աս-

տուժոյ համար, բայց Աստուած կը համարէ, որ աւելի շատ կու տայ երեսուն տոլար նուիրաբերողը: Այս տեսանկիւնը կը նկարագրուի իր երկու լուծման գոհաբերող այրի կնոջ օրինակով (տե՛ս Մարկ. 12.41–44):

Մենք նոյնպէս պէտք է մտապահենք, որ Աստուած կը բազմապատկէ մեր նուիրատուութիւնները այս երկրային կեանքին մէջ, ինչ որ թոյլ կու տայ մեզի աւելի մեծ նուիրատուութիւններ ընել: Աստուածաշունչը կը պնդէ. «Կան մարդիկ, որոնք [առատաձեռն կերպով] կը ցրեն, բայց ա՛լ աւելի շատ կ'ունենան» (Առակաց 11.24, AMP): Մտածեցէ՛ք այս մասին: Ձեր ներդրումները կը շատնան ոչ միայն յաւիտենութեան մէջ, այլեւ՝ բնական աշխարհին մէջ, եւ ասով դուք աւելի շատ մարդոց հասնելու հնարաւորութիւն կ'ունենաք: Ասիկա շրջան մըն է, որ շարունակ կը վերսկսի եւ կ'ընդլայնի:

Քսաներկու տարի առաջ գործարար մարդոց խումբ մը, որ ես կը ճանչնամ, միաբանեցան եւ որոշում կայացուցին նուիրել իրենց եկամուտներու որոշակի մասը Աւետարանի տարածումին: Անոնց սկիզբը փոքր էր, բայց ամէն տարի անոնց ներդրումները կ'աւելնային: Անոնք կայուն մնացին իրենց նուիրատուութիւններու եւ համագործակցութեան մէջ: Անոնց նուիրատուութիւնները այնքան մեծցան, որ առաջին տասը տարուայ ընթացքին ատոնք կը կազմէին աւելի քան 120 միլիոն տոլար: Անոնք վերցուցած էին իրենց մնասը եւ բազմապատկած էին այն Աստուծոյ թագաւորութեան համար: Անոնց վարձատրութիւնը մեծ կ'ըլլայ:

Եկեղեցւոյ մէջ կան բազմաթիւ գործարար մարդիկ, որոնց ձեռնարկութիւնները մեծ յաջողութիւն ունին. այնուամենայնիւ, շատերը Աստուծոյ թագաւորութեան համար կու տան միայն իրենց եկամուտներու չնչին մասը: Թէեւ հասարակութեան կարծիքով՝ անոնք շատ յաջողակ են, ինչպէ՞ս Տէրը կը վերաբերի անոնց կեանքին: Նոյնիսկ եթէ անոնք միլիոնաւոր տոլարներ վաստակած ըլլան, արդեօ՞ք անոնք պիտի չդատուին՝ ինչպէս այն մարդը, որ պահեց իր մնասը: Անոնք չբազմապատկեցին այն, ինչ տրուած էր իրենց, Աստուծոյ թագաւորութեան համար: Այս կերպով ապրող մարդիկ *չեն շարժիր յաւիտենութեամբ*:

Վերջերս ես կոլֆ կը խաղայի գործարարի մը հետ, որ երբեմն նուիրատուութիւններ կ'ընէր մեր ծառայութեան: Խաղէն յետոյ ան տարաւ ինձի իմ հիւրանոցը: Ճանապարհին ան ըսաւ.

– Ճո՛ւն, ես գրեթէ յիսուն տարեկան եմ: Ես շատ աշխատած եմ, որպէսզի իմ ընկերութեան շրջանառութիւնը հասցնեմ ինը միլիոն տոլարի: Ամէն ինչ լաւ է, իմ ընկերութիւնը կանոնաւոր կը գործէ, կինս եւ երեխաներս ապահովուած են իրենց ամբողջ կեանքի ընթացքին: Ինչո՞ւ ես

պէտք է օրնիբուն աշխատիմ յաջորդ տասը տարուայ ընթացքին, որ-պէսզի հասցնեմ իմ ձեռնարկութեան շրջանառութիւնը երեսունէն քա-ռասուն միլիոն տոլարի:

Ես հասկցայ, որ ան չէր համարեր իրեն Աստուծոյ տան կառուցման կարելոր մասը: Ան կը դիտարկէր ինծի որպէս կարելոր անձնաւորու-թիւն Աստուծոյ թագաւորութեան մէջ, սակայն ան չէր տեսներ իր կարե-ւորութիւնը:

Ես արագօրէն պատասխանեցի Անոր մէկ այլ հարցումով.

– Պատկերացուր, որ ես ըստի քեզի. «Ես շատ աշխատած եմ. գրած եմ տասնեօթ գիրք, ճամբորդած եմ տասնմէկ միլիոն քիլօ մետր եւ քա-րոզած եմ հազարաւոր ուղերձներ: Իմ կեանքը ապահով է, իմ ծառա-յութիւնը կանոնաւոր կը գործէ, կինս եւ երեխաներս ապահովուած են իրենց ամբողջ կեանքի ընթացքին: Ինչո՞ւ ես պէտք է օրնիբուն աշխա-տիմ, որպէսզի նոր գիրքեր գրեմ, նոր ուղերձներ քարոզեմ եւ ճամբոր-դեմ: Կը կարծես՝ ի՞նչ պիտի պատասխանէր Յիսուսը:

Ան ծիծաղեցաւ եւ ըսաւ.

– Ես չէի ուզեր քու տեղը ըլլալ՝ երբ կանգնէի Անոր առջեւ:

– Դուն ճիշդ նոր պատասխանեցիր քու հարցին,– անմիջապէս ըսի ես: Ես թոյլ տուի, որ ան պահ մը մտածէ, իսկ յետոյ շարունակեցի.

– Այն պարզեւները, որոնք Յիսուսը տուած է ինծի՝ Իր թագաւորու-թիւնը կառուցելու համար, քարոզելը եւ գրելն են: Այն պարզեւը, որ Յի-սուս տուած է քեզի՝ Անոր թագաւորութիւնը կառուցելու համար, դրամ վաստակիլն է՝ Իր թագաւորութեան մէջ ներդրումներ կատարելու հա-մար: Դուն չես տեսներ ընդհանուր պատկերը: Ես սահմանափակ եմ Յիսուսին ծառայելու մէջ՝ քու հնազանդութեամբ կամ անհնազանդու-թեամբ, ինչպէս որ իմ բերանը չէր կրնար քարոզել այն մարդոց, որոնց պէտք է քարոզեր, եթէ իմ ոտքերը որոշէին այլեւս չգործել եւ չտանիլ զիս անոնց քով:

Այդ մարդը ցնցուած էր:

Ես զանգահարեցի անոր վեց ամիս յետոյ եւ հարցուցի, թէ ինչպէս է: Ան պատասխանեց.

– Ճո՛ն, այն խօսքերը, որոնք դուն ըսիր ինծի վեց ամիս առաջ, ամէն օր կը հետապնդեն զիս՝ լաւ իմաստով: Ես օրնիբուն կ'աշխատիմ, որ-պէսզի կարենամ աւելի մեծ շահոյթ ստանալ եւ աւելի շատ զոհաբերել:

Ես հաւնեցայ անոր խոնարհութիւնը:

Կինս եւ ես կը ճանչնանք մէկ ուրիշ գործարար, որ հաստատուե-ցաւ մեր եկեղեցւոյ մէջ եւ սկսաւ մեծ եռանդով ծառայել. ան կը ծառա-յէր հոն, ուր որ պէտք էր: Ան գիտէր, որ կանչուած էր ոչ թէ լրիւ ժամա-

նակուայ ծառայութեան համար, այլ՝ գործարար ոլորտին մէջ ըլլալու: Ան որոշեց ապրիլ իր եկամուտի 10 տոկոսով եւ զոհաբերել 90-ը: Ան հասաւ իր նպատակին, բայց նոյնիսկ այդ 10 տոկոսով շատ գեղեցիկ ինքնաշարժ եւ շքեղ տուն ունէր: Անոր համագործակցութիւնը Աստուծոյ թագաւորութեան հետ ընդլայնեց անոր գործը, եւ անոր 10 տոկոսը աւելցաւ: Ան կիրառեց Յիսուսին սկզբունքը. որ ով որ հաւատարիմ է քիչ բաներու մէջ, հաւատարիմ կ'ըլլայ նաեւ շատ բաներու մէջ:

Կայ եւս մէկ պատճառ՝ գործընկեր դառնալու համար: Մենք կրնանք հատուցել այն ծառայութիւններուն, որոնք հպած են մեր կեանքին: Պօղոսը կը գրէ. «Եթէ մենք ցանած ենք հոգեւոր բարիք [հոգեւոր բարիքի սերմը] ձեր մէջ, [արդեօք չափազանց] մե՞ծ բան է, եթէ հնձենք ձեր նիւթական ստացուածքէն: Եթէ միւսները արդարացիօրէն կ'ակնկալեն ասիկա ձեզմէ, չէ՞ որ մենք ալ [աւելի մեծ յաւակնութիւն ունինք]» (Ա. Կորնթացիս 9.11,12, AMP):

Այս աշխարհին մէջ կը գործեն միեւնոյն սկզբունքները: Եթէ ձեր ընկերներէն մէկը նուէր տայ ձեզի, դուք շնորհակալական երկտող չէք ուղարկեր մէկ ուրիշ ընկերոջ: Դուք շնորհակալութիւն կը յայտնէք անոր, որ օրինած է ձեզ, եւ ատորմով ա՛լ աւելի կ'ամրապնդէք ձեր յարաբերութիւնները: Աստուած այսպիսին դարձուց գործընկերութիւնը յատուկ նպատակով. որքան աւելի շատ մարդոց կը հալի առանձին ծառայութիւնը, այնքան այդ ծառայութեան դրամական կարիքները աւելի կը մեծնան: Այնպէս որ, եթէ անոնք, որոնք կրած են ինչ որ ծառայութեան ազդեցութիւնը, ի պատասխան դրամական միջոցներ տրամադրելու այդ ծառայութեան (նոյնիսկ եթէ անոնց ներդրումը նման ըլլար այրի կնոջ երկու լումային), անոնք լիովին պիտի հոգային այդ ծառայութեան պահպանման եւ ընդլայնման բոլոր ծախսերը:

Պօղոսը կ'աւարտէ փիլիպպեցիներուն ուղղուած իր խօսքը՝ գրելով հետեւեալը.

«Բայց ես ստացած եմ [ձեր ամբողջական վճարումը] եւ աւելին. ես ունիմ այն ամէնը, ինչ որ անհրաժեշտ է ինձի, եւ առատօրէն մատակարարուած եմ՝ այժմ, երբ ընդունած եմ Եպափրոդիտոսէն այն պարգեւները, որոնք դուք ուղարկեցիք ինձի: [Ատոնք] ընծայի եւ զոհաբերութեան անուշահոտ բուրմունք են, որ Աստուած կ'ընդունի, եւ որը հաճելի է Անոր: Եւ իմ Աստուած առատօրէն մատակարարէ [մինչեւ վերջ լեցնէ] ձեր ամէն մէկ կարիքը՝ ըստ Իր հարստութեան՝ փառքով, Քրիստոս Յիսուսին մէջ» (Փիլիպպեցիս 4.18,19, AMP):

Խոստումը այն մասին, որ Աստուած պիտի մատակարարէ ամէն մէկ կարիք Իր հարստութեան չափով, տրուած է տարբեր ծառայութիւններ

րու գործընկերներուն: Եթէ դուք տասանորդ կու տաք եւ որեւէ ծառայութեան գործընկեր էք, կրնաք հիմնուիլ այս խոստումին վրայ. դուք երբեք չէք յայտնուիր կարիքի մէջ:

Բազմապատկում աղօթքի միջոցով

Մեր ջանքերը բազմապատկելու միջոցներէն եւս մէկը աղօթքն է: Ինչպէս եւ մեր նիւթական միջոցները տարբեր ծառայութիւններուն տրամադրելու պարագային, մենք կրնանք յաւիտենական ազդեցութիւն ձգել բազմաթիւ մարդոց կեանքին մէջ, որոնց կը հանդիպինք միայն Երկինքը: Ատիկա տեղի կ'ունենայ, երբ մենք աղօթենք մարդոց, ընտանիքներու, եկեղեցիներու, քաղաքներու եւ ազգերու համար: Մենք նոյնպէս կրնանք հալի մարդոց՝ աղօթելով ծառայութիւններու համար: Մեր ծառայութիւնը ունի ե՛ւ դրամական, ե՛ւ աղօթքի գործընկերներ: Աղօթքի գործընկերը այն մարդն է, որ յանձն կ'առնէ ամէն օր աղօթել «Մեսէնձըր Ինթերնէշընլ» ծառայութեան համար:

Մարդիկ յաճախ կը մօտենան ինձի եւ կ'ըսեն. «Ես ամէն օր կ'աղօթեմ ձեզի համար»: Ես միշտ կը տեսնեմ՝ անոնք անկե՞ղծ են, թե՞ պարզապէս կ'ըսեն ատիկա: Ես կ'ըսեմ իրականութեան մէջ աղօթող մարդոց. «Ձեր աղօթքը մեծագոյն բանն է, որ կրնաք ընել՝ մեզի օգնելու համար», եւ ատիկա ճշմարիտ է: Երբ մարդիկ կ'աղօթեն, ծառայութեան ազդեցութիւնը կը տարածուի՝ հպելով ատելի շատ մարդոց: Բացի այդ՝ աղօթքի շնորհիւ Աստուած կը շարժէ մարդոց սրտերը, որպէսզի անոնք նուիրատուութիւններ կատարեն Իր գործի համար: Այնպէս որ, եթէ ես ստիպուած ըլլայի ընտրութիւն կատարելու աղօթքի գործընկերոջ եւ դրամական գործընկերոջ միջեւ, ես կ'ընտրեի առաջինը: Այնուամենայնիւ, երկուքն ալ խիստ անհրաժեշտ են:

Բազմապատկում ծառայելու միջոցով

Գոյութիւն ունի մեր ջանքերը բազմապատկելու եւս մէկ միջոց՝ տարբեր ծառայութիւններուն ծառայելը: Մեր կազմակերպութիւնը ունի բազմաթիւ օգնականներ եւ աշխատողներ, որոնց Լիզան եւ ես մշտապէս կը յիշեցնենք, որ Ղատաստանի գահի առջեւ անոնց պիտի հաշուեգրուի ամէն մէկ մարդու կեանքը, որուն կը հալի մեր ծառայութիւնը:

Ես գիտեմ այս մասին Ղաւիթի խօսքերէն՝ ուղղուած մարտէն վերադարձած իր բոլոր զինուորներուն: Ա. Թագաւորաց 30-րդ գլխուն մէջ գրուած է, որ Ղաւիթը հետապնդեց ամաղեկացիներուն եւ վերադարձուց այն ամէնը, ինչ որ գողցուած էր Իսրայէլի ճամբարէն: Երբ Ղաւիթը

եւ իր մարդիկ վերադարձան ճամբար, Դաւիթի հետ գացած զինուորներէն մէկ քանին չէին ցանկար կիսուիլ աւարով անոնց հետ, որոնք մնացած էին՝ ընդհանուր ունեցուածքը հսկելու համար: Բայց լսեցէ՛ք Դաւիթի պատասխանը.

«Մենք հաւասար կը կիսուինք՝ թէ՛ անոնք, որոնք կ'երթան մարտի, եւ թէ անոնք, որոնք կը հսկեն մեր ունեցուածքը»: Այդ ժամանակուրնէ Դաւիթը օրէնք դարձուց ատիկա ամբողջ Իսրայէլի համար, եւ մարդիկ մինչեւ օրս կը հետեւին ատոր» (Ա. Թագաւորաց 30.24,25, NLT):

Դաւիթը՝ Քրիստոսի խորհրդապատկերն էր: Այնպէս որ, եթէ գրուած է. «Այդ ժամանակուրնէ Դաւիթը օրէնք դարձուց ատիկա ամբողջ Իսրայէլի համար, եւ մարդիկ մինչեւ օրս կը հետեւին ատոր», կը նշանակէ՝ այս սկզբունքը մինչեւ օրս կը վերաբերի Յիսուսին եւ Անոր եկեղեցւոյ: Դատաստանի գահի առջեւ այն ամէնը, ինչ կատարուած է որեւէ ծառայութեան կողմէն, չի վերագրուիր միայն ծառայութեան ղեկավարին, այլեւ անոնց, որոնք հաւատարմօրէն ծառայած են, զոհաբերած եւ աղօթած են, նոյնիսկ եթէ անոնք չեն եղած մարտի դաշտը:

Վերաբերմունքը կարելոր է

Մենք արդէն նշած ենք, որ մեր ծառայութեան համար վարձատրութիւն ստանալու կարելորագոյն պայմաններէն մէկը մեր վերաբերմունքն է: Հաշուի պիտի առնուին ոչ միայն մեր գործերը, այլեւ ատոնց ետեւը գտնուող դրդապատճառները, որոնք իրենց կարգին կը ձեւաւորուին ձեր վերաբերմունքով: Աստուած կ'ըսէ. «Եթէ դուք յօժարիք եւ հնազանդիք, երկրի բարիքը պիտի ուտէք» (Եսայեայ 1.19):

Ես կը յիշեմ շրջան մը, երբ չորութիւն կը զգայի իմ հոգեւոր կեանքին մէջ: Կը թուար՝ ես ոչինչ կը ստանայի մեր եկեղեցական ծառայութիւններէն, յատկապէս՝ իմ հովիւի քարոզներէն: Ես բոլորովին թարմութիւն չունէի:

Ես կ'աշխատէի ութ հազար անդամ ունեցող եկեղեցւոյ մէջ եւ հաշուետու էի անմիջապէս հովիւին, բայց սկսած էի քննադատել զինք: Մէկ օր՝ առաւօտեան, Աստուած խօսեցաւ հետս. «Խնդիրը քու հովիւին մէջ չէ, այլ՝ քու մէջ»:

Ես ապշած էի: «Ո՞րն է իմ խնդիրը»,– հարցուցի:

Տէրը հարցուց ինձի, թէ ի՞նչ գրուած է Եսայեայ 1.19-ին մէջ: Ես մէջբերեցի վերոյիշեալ խօսքը, ինչպէս որ կը յիշէի, եւ Ան շարունակեց. «Ահա՛ եւ քու խնդիրը: Դուն շարունակ կ'ըսես, որ չես կերակրուիր, եւ ատիկա ճիշդ է, որովհետեւ դուն չես ուտեր երկրի բարիքը»:

Ես հակառակեցայ. «Ես հնազանդ եմ: Կ'ընեմ այն, ինչ որ իմ հովիւը կը խնդրէ»:

Տէրը պատասխանեց. «Ես չըսի, որ եթէ հնազանդ ըլլաս, պիտի ուտես երկրի բարիքը: Ես ըսի՝ եթէ դուն *յոժար* եւ հնազանդ ըլլաս»: Ան շարունակեց. «Հնազանդութիւնը կապուած է քու գործերուն հետ, իսկ *յոժարութիւնը*՝ քու վերաբերմունքին: Իսկ քու վերաբերմունքէն վատ հոտ կու գայ»:

Տէրը ցոյց կու տար, որ ես կը հնազանդէի եւ նոյնիսկ հնազանդ տեսք ունէի, բայց կը քննադատէի, կը տրտնջայի եւ կը դատապարտէի. իմ վերաբերմունքը կ'ազդէր իմ ծառայելու դրդապատճառներուն վրայ:

Ես անմիջապէս ապաշխարեցի, եւ յաջորդ ծառայութեան Երկինքը բացուեցաւ: Ես կրկին կը ստանայի Աստուծո՛մէ: Երբ իմ հովիւը կը քարոզէր, աչքերէս արցունքներ կը հոսէին: Ես կը մտածէի, թէ որքան բան կորսնցուցած էի ամիսներ շարունակ՝ իմ վերաբերմունքին պատճառով: Կարճ ժամանակ յետոյ ինծի համար պարզ դարձան Պօղոսի հետեւեալ խօսքերը՝ ոգեշնչուած Սուրբ Հոգիէն. «Որովհետեւ ասիկա էր ձեզի գրելու իմ նպատակը՝ ստուգել ձեր վերաբերմունքը եւ տեսնել, թէ արդեօ՞ք կը դիմանաք այդ ստուգման, արդեօ՞ք հնազանդ եւ միաբան էք [իմ պատուէրներուն հետեւելու մէջ] ամէն ինչի մէջ» (Բ. Կորնթացիս 2.9, AMP):

Ես հասկցայ, որ Աստուած պիտի ստուգէ, թէ ինչ վերաբերմունքով մենք կը հնազանդինք Իր կամքին: Ես չեմ խօսիր այն մասին, որ պէտք է հանդուրժել սատանայի յարձակումները, որովհետեւ Յիսուս զին վճարած է, որ ազատէ մեզ այդ բաներէն: Մենք պէտք է մշտապէս հակառակինք թշնամիին՝ հաւատքի, աղօթքի եւ Աստուծոյ խօսքը խօսելու միջոցով: Ես կը խօսիմ այն մասին, թէ ինչպէս մենք կը վերաբերինք այն ճանապարհին, որ Աստուած ընտրած է մեզի համար: Պօղոսը կը գրէ այս մասին. «Ձեր վերաբերմունքը պէտք է ըլլայ նոյնը, ինչ Քրիստոս Յիսուսինը» (Փիլիպպեցիս 2.5, NLT): Յիսուս ոչ միայն խմեց այն բաժակէն, որ Աստուած պատրաստած էր Իրեն համար, այլեւ *յոժարութեամբ* ըրաւ ասիկա: Ահա թէ ինչու Պօղոսը կը պատուիրէ. «...մշտապէս նորոգուեցէ՛ք ձեր մտքի հոգիով [ունենալով թարմ մտաւոր եւ հոգեւոր վերաբերմունք]» (Եփեսացիս 4.23, AMP):

Մենք պէտք է այսպէս վարուինք, քանի որ մեր վերաբերմունքը կ'ազդէ մեր դրդապատճառներուն վրայ, իսկ Ռատաստանի գահի առջեւ մենք կը վարձատրուինք ոչ միայն մեր գործերու համար, այլեւ ատոնց ետեւը պահուած դրդապատճառներու: Կրկին կարդանք Պօղոսի խօսքերը.

«Որովհետեւ բոլորս պէտք է յայտնուինք եւ երեւանք՝ ինչպէս որ կանք, Քրիստոսի ատեանի առջեւ, որպէսզի ամէն մէկը ստանայ [իր վճարը]՝ ըստ իր մարմինին մէջ կատարած գործերուն՝ թէ՛ բարի, թէ՛ չար [հաշուի առնելով անոր նպատակը եւ դրդապատճառները, եւ այն, թէ ինչ ձեռքբերումներ ունեցած է ան, ինչով զբաղած եղած է, եւ ինչպիսի գործերու նուիրուած է ինքզինքը եւ իր ուշադրութիւնը]» (Բ. Կորնթացիս 5.10, AMP):

Ես կը տրտմիմ, երբ կը տեսնեմ, որ մարդիկ դառնութեամբ կը ծառայեն Աստուծոյ: Անոնք դադրած են կեանքին յաւիտենութեան տեսանկիւնէն նայելէ: Անոնք կը շարունակեն ծառայել, բայց կը յոգնին, կը նախանձին եւ եսակեղրոն կը դառնան: Շատերը սկսած են ջերմեռադութեամբ, սակայն բարեյաջող աւարտ չեն ունեցած: Նման վերաբերմունքը եւ դրդապատճառները դարձած են աւելի շատ մարդոց անկման պատճառը, քան որեւէ այլ բան, որ կրնամ մտաբերել: Ահա թէ ինչու Աստուծոյ Խօսքը կը զգուշացնէ մեզ. «Ձգուշացէ՛ք, չըլլա՛յ որ մէկը Աստուծոյ շնորհքէն ետ մնայ, չըլլա՛յ որ դառնութեան արմատ մը վեր երեւնալով ձեզ նեղէ, ու անով շատերը պղծուին» (Եբրայեցիս 12.15):

Ուշադրութիւն դարձուցէք, որ համաձայն այս Խօսքին՝ շատերը կրնան պղծուիլ: Ես շարունակ տեսած եմ այս երեւոյթը իմ՝ աւելի քան երեսուն տարուայ լրիւ ժամանակուայ ծառայութեան ընթացքին: Այս Խօսքը՝ Աստուածաշունչի «Էմփիլիֆայտ» թարգմանութեամբ, կը խրախուսէ մեզ «հեռատես ըլլալ եւ զգուշօրէն հետեւիլ [մէկս միւսին]»: Մենք պէտք է այնպէս հաղորդակցինք մէկս միւսին հետ, որ այս դառնութիւնը չկարենայ բոյն դնել մեր մէջ, որովհետեւ մենք չենք ցանկար, որ մեր սիրելիները ձախողին կամ չստանան իրենց ամբողջական վարձատրութիւնը որեւէ վերաբերմունքի պատճառով, որ արմատ նետած էր անոնց սրտին մէջ եւ այդպէս ալ չէր հեռացուած:

Այս հարցին մէջ կինս եւ ես շատ ուշադիր ենք մեր չորս երեխաներուն եւ մեր աշխատողներուն հանդէպ: Մենք կանչուած ենք լրիւ ժամանակով ճանապարհորդելու համար, եւ մեր երեխաներուն շնորհք տրուած է՝ մեր կենսառձին յարմարելու համար: Այնուամենայնիւ, մենք չենք ուզեր, որ անոնք կորսնցնեն այդ շնորհքը: Մենք կը խրախուսենք զանոնք, կը յորդորենք ճիշդ վերաբերմունք ունենալ եւ զօրաւոր ըլլալ:

Կը յիշեմ, որ մէկ անգամ, երբ նստած էի չորս որդիներուս հետ, ըսի անոնց.

– Տղանե՛ր, դուք լաւ գիտէք, որ ամսուան մեծ մասը ես տուներ չեմ ըլլար: Ձեր մայրը նոյնպէս ամսուայ մէջ քանի մը օր տուներ չ'ըլլար: Պատճառը այն է, որ Աստուած այդպիսի կոչում տուած է մեզի: Ան որոշած է, որ մենք ճիշդ այդ կերպով հպինք մարդոց՝ Անոր փառքի համար, եւ կառուցենք Անոր թագաւորութիւնը:

Ես շարունակեցի.

– Դուք կրնաք դիտարկել Աստուծոյ կանչը մեր կեանքը երկու ձեւով: Կրնաք մտածել, որ կը մնաք առանց ձեր ծնողներու եւ չունիք սովորական ընտանեկան կեանք: Կամ՝ կրնաք դիտարկել ասիկա որպէս *ձեր* ծառայութիւնը, ոչ միայն ձեր ծնողներունը: Ասիկա ձեր ծառայութիւնն է այն իմաստով, որ դուք կը ցանէք ձեր ծնողներուն եւ կ'ուղարկէք զանոնք հպելու հազարաւոր մարդոց եւ իրագործելու Աստուծոյ նպատակները անոնց կեանքին մէջ: Եթէ դուք այսպիսի վերաբերմունք ունենաք, վարձատրութիւն կը ստանաք Քրիստոսի ատեանի առջեւ ամէն մէկ մարդու համար, որուն կեանքին մէջ մենք ազդեցութիւն ձգած ենք: Այնուամենայնիւ, եթէ դուք մտածէք, որ ինչ որ բան կը կորսնցնէք, դուք ոչ մէկ վարձատրութիւն կը ստանաք այն մարդոց համար, որոնց կը հալի մեր ծառայութիւնը: Այնպէս որ, տղանե՛ր, իմ ըսածը կարելի է ամփոփել մէկ բառով՝ *վերաբերմունք*:

Որդիներս ընդունեցին իմ խօսքերը. վերջաւորութեան անոնք երբեք չէին տրտնջար մեր ճանապարհորդութիւններու պատճառով: Իրականութեան մէջ յաճախ, երբ Լիզան եւ ես կ'երկմտէինք որեւէ հրաւեր ընդունելու համար, մեր որդիները կը խրախուսէին մեզ, որ համաձայնէինք: Մենք իւրայատուկ յարաբերութիւններ ունինք անոնց հետ: Անոնցմէ ամէն մէկը կը սիրէ զԱստուած, եւ բոլորը կը ծառայեն մեզի հետ մեր ծառայութեան մէջ: Փա՛ռք Աստուծոյ Անոր զարմանալի շնորհքի համար: Մեր որդիները կը բազմապատկեն իրենց մնասները՝ սկսած իրենց մանկութենէն:

Ես կ'ըսեմ նոյնը մեր աշխատողներուն.

– Դուք կրնաք համարել, որ պարզապէս կ'աշխատիք հոս. այդ պարագային, ի վերջոյ, կը յոգնիք եւ կը դառնանաք, եւ ոչ մէկ վարձատրութիւն կը ստանաք Քրիստոսի ատեանին առջեւ: Բայց դուք կրնաք մտածել, որ արտօնուած էք հպելու միլիոնաւոր մարդոց կեանքերու: Ամէն մէկ գիրք, որ դուք փոստով կ'ուղարկէք, ամէն մէկ ելեկտրոնային նամակ, որ դուք կ'օգնէք մեզի՝ պատասխանել, ամէն մէկ մարդու, որուն դուք կը հասնիք ընկերակցական ցանցերու միջոցով, ամէն մէկ հաւաքոյթ, որ դուք կը կազմակերպէք, եւ մնացած բոլոր գործերը, որոնք կ'ընէք, կը դարձնեն ձեզ այն գործունէութեան կարելոր մասը, որ Աստուած կ'իրականացնէ այս ծառայութեան միջոցով: Դուք ազդեցութիւն կը ձգէք այն մարդոց վրայ, որոնց Աստուած որոշած է հալի այս ծառայութեան միջոցով: Դուք նման էք Դաւիթի զինուորներուն, որոնք մնացած էին՝ բանակի ունեցուածքը հսկելու համար»:

Անոնք կ'ընդունին այս ճշմարտութիւնը եւ ճիշդ վերաբերմունք ունին: Որպէս առաջնորդ՝ ես պէտք է կեանքի խօսքեր խօսիմ, որոնք կ'օգնեն պահպանել այս վերաբերմունքը, թէեւ, ի վերջոյ, ամէն մարդ ինքն է պատասխանատուն իր վերաբերմունքին համար:

Ճիշդ վերաբերմունք ունենալը կ'օգնէ մեզի՝ բազմապատկելու մեր մնասնէրը եւ բարեյաջող աւարտել մեր ընթացքը: Աստուած կը կառուցէ իր տունը. ինչպիսի՛ մեծ արտօնութիւն է Անոր գործակիցը ըլլալը: Այնպէս որ, կարելոր չէ, թէ որքան աննշան կը թուայ ձեր գործը. յիշեցէ՛ք, որ ամէն մէկ մասնիկ կենսականօրէն կարելոր է: Ղուբ կ'ընտրէք՝ ըլլալ արդիւնաւէ՞տ, թէ՞ ոչ արդիւնաւէտ: Ես ունիմ միեւնոյն յոյսը ձեզի համար, ինչ որ Յովհաննէս առաքեալը. «Ձգուշութիւն ըրէ՛ք ձեր անձերուն, որ չկորսնցնենք այն, որ վաստակեցանք, հապա՛ որպէսզի լման վարձքն առնենք» (Բ. Յովհաննէս 8):

ԱՆՁՆԱԿԱՆ ԱՉԴԵՑՈՒԹԻՒՆ

*«Բայց դուն գիտես... թէ ինչպէս ես կ'ապրիմ,
 եւ թէ որն է իմ կեանքի նպատակը: Դուն գիտես իմ
 հաւատքը, եւ թէ որքան ժամանակ ես չարչարուած եմ:
 Դուն գիտես իմ սէրը եւ համբերութիւնը»:*
 — Բ. Տիմոթէոս 3.10, NLT

Յախտենութեան մէջ մենք նաեւ կը վարձատրուինք կամ կորուստ կը կրենք այն պատճառով, թէ ինչ ազդեցութիւն ձգած ենք մարդոց կեանքին մէջ: Ասիկա կը վերաբերի ոչ միայն մեր ծառայութեան, այլեւ մեր անձնական կեանքին (որ նոյնքան կարելոր է). այսինքն՝ պիտի գնահատուի այն, թէ ինչպէս մենք ապրած ենք եւ ինչ վերաբերմունք ունեցած ենք մարդոց հանդէպ:

Այն, թէ ինչպէս մենք կը դիտարկենք մարդոց, կը ձեւաւորէ մեր վերաբերմունքը անոնց հանդէպ՝ կա՛մ կառուցողական, կա՛մ կործանարար կերպով: Եթէ մենք համարենք, որ ուրիշները աւելի ցած են մեզմէ, մենք այդպէս ալ կը վերաբերինք անոնց: Մենք կ'անտեսենք անոնց կարիքները եւ մեծամտօրէն կը խօսինք անոնց հետ: Եթէ մենք գնահատենք մարդկութիւնը, մենք կը ձգտինք կառուցելու եւ զօրացնելու զանոնք՝ մեկնելով գթասրտութենէն եւ սէրէն:

Եթէ մարդոց դիտարկենք որպէս միջոց, մենք կը շահագործենք զանոնք, յատկապէս այն պարագային, եթէ արժեւորենք մեր երազանքները, կարիքները կամ ցանկութիւնները աւելի, քան անոնց: Եթէ մենք դիտարկենք մարդոց՝ որպէս Աստուծոյ պատկերով ստեղծուածներ, որոնք անչափ թանկ եւ արժէքաւոր են, մեր դրդապատճառը կ'ըլլայ զանոնք օրհնելը, նոյնիսկ եթէ ասիկա մեր հաշուոյն պիտի ըլլայ: Ասիկա կը կոչուի քրիստոսանման վարք:

Եսասիրութեան ամրութիւնները

Մինչեւ Յիսուսը ճանչնալը եւ շատ եսակէդրոն անձնաւորութիւն էի: 1979 թուականին՝ Իմ դարձի գալէն յետոյ, Սուրբ Հոգին ստիպուած էր յարձակում գործելու եսասիրական ամրութիւններու վրայ իմ վարքին

մէջ: Այնպէս որ, իմ առաջին տասնամեակը Քրիստոսի մէջ ուժգին պայքարներու շրջան էր:

Իմ կեանքի ամրութիւններէն մէկը սեռական կիրքն էր: Ես չէի կրնար հակառակիլ պոռնոկրաֆիայի գայթակղութեան: Ես ազատագրուեցայ ատորմէ քառօրեայ ծոմի արդիւնքին: Ատիկա տեղի ունեցաւ 1985 թուականին՝ վեց տարի տեւող պայքարէն յետոյ: Ազատելէն ետք սկսաւ իմ մտքի նորոգման ընթացքը:

Յաջորդ քանի մը տարիներու ընթացքին ես յայտնաբերեցի այդ կիրքի արմատը: Աստուծոյ սէրը շարունակ կ'աւելնար իմ սրտին մէջ, եւ ես կը սկսեի ա՛լ աւելի արժեւորել մարդկութիւնը: Ես հասկցայ, որ իմ նախկին կախուածութեան հիմքը ծայրագոյն աստիճանի եսասիրութիւնն էր: Պոռնոկրաֆիա դիտելը կամ կ'ինտրուս ցանկասիրութեամբ նայիլը կը նշանակէ պատուեզրկել զանոնք եւ վերաբերիլ միսի կտորի պէս: Ժամանակի ընթացքին իմ մէջ զգուանք յառաջացաւ նման բաներու հանդէպ:

Իմ մէջ սկսաւ ա՛լ աւելի հաստատուիլ յայտնութիւնը այն մասին, որ կանայք ստեղծուած են Աստուծոյ պատկերով եւ պսակուած են փառքով ու պատիւով: Ես շատ վաղուց գիտէի այս ճշմարտութիւնը, բայց ատիկա պարզապէս մտաւոր գիտելիք էր, ոչ թէ՝ իմ էութեան մասը: Ժամանակի ընթացքին ես բացայայտեցի, թէ որքան իրական է, երբ Աստուած կը սկսի փոխել ձեզ: Երբ առջեւս պոռնոկրաֆիկ պատկերներ կը յայտնուէին՝ պաստառներու, ամսագրերու կազմերու կամ հեռատեսիլի վրայ, ես կը զգայի, որ ատիկա յարձակում էր՝ ուղղուած իմ դէմ: Ես խստօրէն կը բարկանայի, որ այն անձնաւորութիւնը, որուն համար Յիսուսը թափեց Իր արիւնը, նսեմացած է մինչեւ միսի կտորը: Իմ վերաբերմունքը կանանց հանդէպ փոխուեցաւ, երբ այս յայտնութիւնը աւելցաւ իմ մէջ:

Ես ցնցուած եմ այն բանով, թէ ինչպէս տղամարդիկ կը վերաբերին կանանց, նոյնիսկ՝ եկեղեցւոյ որոշ տղամարդիկ: Ջանոնք կը համարեն թերարժէք եւ պակաս կարեւոր, եւ նոյնիսկ կ'արհամարհեն: Ատիկա անմտութիւն է: Տղամարդիկ եւ կանայք Աստուծոյ թագաւորութեան հաւասար ժառանգներ են, եւ որպէս աւելի ուժեղ անօթներ (ինչ կը նշանակէ՝ աւելի ուժեղ մարմին, ոչ թէ՝ անձ կամ սիրտ)՝ տղամարդիկ պէտք է աւելի շատ կ'ինտրուս պատուեն, քան զիրենք: Տղամարդիկ պէտք է յարգեն, արժեւորեն, գնահատեն, պաշտպանեն եւ մշտապէս ձգտին բարձրացնելու կ'ինտրուս: Ամուսիններ՝, դուք ձեր միութեան առաջնորդն էք, բայց առաջնորդութիւնը Աստուծոյ թագաւորութեան մէջ կը նշանակէ, որ դուք կը դնէք ձեր կեանքը ձեր ընտանիքի համար՝ ծառայելու միջոցով: Ատիկա չի նշանակել, որ դուք պէտք է իշխէք ձեր կանանց եւ երեխաներուն: Եթէ դուք կը համարէք, որ առաջնորդութիւնը կը նշանակէ՝ իշխել ձեր կնոջ վրայ, ձեր վերաբերմունքը կը խոցէ եւ կը կործանէ

զինք, ոչ թէ կը կառուցէ անոր կեանքը: Եւ դուք դատաստանի ժամանակ հաշիւ պիտի տաք ատոր համար:

Ընդունուած ըլլալու ցանկութիւնը

Եսասիրութեան եւս մէկ դրսեւորում, որ Աստուած բացայայտեց իմ մէջ, ա՛յլ աւելի խաբուսիկ էր: 1980-ական թուականներու կէսերուն ես կ'աշխատէի եկեղեցւոյ մը մէջ, որուն աշխատակազմը բաղկացած էր մօտաւորապէս 400 մարդէ, իսկ անդամներու թիւը կը գերազանցէր ութ հազարը: Այն ազդեցութիւն ունէր մեր երկրի հազարաւոր եկեղեցիներուն վրայ:

Այդ ժամանակ ես կ'ատէի որեւէ տեսակի առճակատում եւ ամէն գնով կը խուսափէի ատկէ: Ես չափազանց բարի եւ քաղաքավար էի բոլորին հանդէպ: Մշտապէս հաճելի խօսքեր կ'ըսէի մարդոց, նոյնիսկ երբ գիտէի, որ իմ ըսածը ճիշդ չէր: Մարդիկ զիս կը համարէին ամենահաճելի աշխատակիցը եկեղեցւոյ ամբողջ աշխատակազմին մէջ: Ես պարբերաբար կը լսէի այդ մասին այլ մարդոցմէ, եւ ատիկա մեծ բաւականութիւն կը պատճառէր ինծի:

Անգամ մը աղօթքի մէջ Աստուած հարցուց ինծի. «Ո՞ւր ըսած եմ Ես Ա. Կորնթացիս 13-րդ գլուխին մէջ, որ սէրը հաճելի է»:

Ես անակնկալի եկայ եւ պատասխանեցի. «Ո՛չ մէկ տեղ»:

Աստուած ըսաւ. «Որդի՛ս, գիտե՞ս, թէ ինչու դուն միայն հաճելի բաներ կ'ըսես մարդոց, նոյնիսկ երբ ատիկա ճիշդ չէ»:

«Ո՛չ, ես չեմ մտածած այդ մասին», – պատասխանեցի ես:

Ան անմիջապէս ըսաւ. «Դուն կը վախնաս, որ անոնք մերժեն քեզ: Որո՞ւն ուղղուած է քու սէրը՝ քե՞զի, թէ՞ անոնց: Եթէ դուն իսկապէս սիրես մարդկութիւնը, դուն պիտի ըսես անոնց ճշմարտութիւնը, անկախ այն բանէն՝ անոնց հաճելի պիտի ըլլա՞յ, թէ՞ ոչ: Դուն աւելի մտահոգուած պիտի ըլլաս անոնց բարեկեցութեամբ եւ պիտի ցանկաս օգնել, նոյնիսկ եթէ այդ պատճառով անոնք մերժեն քեզ»:

Ես պարզօրէն տեսայ իմ եսասիրութիւնը՝ քողարկուած քաղաքավարութեամբ. այդ ցաւոտ ճշմարտութիւնը բացուեցաւ ինծի համար: Ես կ'օգտագործէի մարդիկ, որպէսզի լրացնէի իմ ընդունուած ըլլալու կարիքը: Ես կ'ուզէի հաւանութիւն ստանալ անոնցմէ, որպէսզի մեղմէի իմ անապահովութեան զգացումը: Ես չէի կարելորէր մարդոց օգնելը, այլ ընդամէնը կ'ուզէի ընդունուած ըլլալ անոնցմէ:

Ասիկա է պատճառը, որ անթիւ ծառայողներ կը քարոզեն Աստուծոյ Խօսքի միայն «դրական» կողմը: Անոնք կը խուսափին զգուշացնելէն, շտկելէն եւ յանդիմանելէն: Անոնք կը մտահոգուին, որ ատիկա պիտի վիրաւորէ եկեղեցւոյ անդամները, եւ վերջաւորութեան եկեղեցի յաճա-

խողներու թիւը կը պակսի, սակայն անոնք ճշմարտապէս չեն սիրեր իրենց համայնքները:

Ո՞վ է այդպիսի սիրոյ կեդրոնը՝ ուրիշնե՞րը, թե՞ մարդու «ես»-ը: Եթէ մենք տեսնէինք, որ ինչ որ մէկը աչքակապը հագած կը քալէ դէպի ժայռի ծերպը, արդեօք մենք չէինք գոչեր, որ փրկէինք զինք վտանգէն: Այնուամենայնիւ, ես լսած եմ, թէ այդ «սիրող ծառայողներէն» ոմանք ինչ կը խօսին, երբ կողմնակի մարդիկ չեն տեսներ զանոնք. այն, թէ ինչպէս անոնք կը խօսին մարդոց մասին, տագնապ կը յառաջացնէ: Անոնք այնպէս կը վերաբերին մատուցողներուն, առաքիչներուն եւ ընդհանրապէս սպասարկման ոլորտին մէջ աշխատող մարդոց, ըսես անոնք երկրորդ կարգի քաղաքացիներ են: Ի՞նչ ազդեցութիւն կը ձգեն նման հաւատացեալներ մարդոց վրայ, երբ ոչ ոք կը տեսնէ զանոնք: Անոնք հաշիւ պիտի տան այն ազդեցութեան համար, որ ձգած են այն մարդու վրայ, որուն հետ հաղորդակցած են:

Սիրալիրութենէն դէպի խստութիւնը

Երբ ես ստացայ այս յայտնութիւնը, ճօճանակը անցաւ հակառակ կողմը: Ես խիստ քարոզիչ դարձայ: Աստուծոյ սէրը մարդոց հանդէպ տակաւին չկար իմ սրտին մէջ: Ես աւելի շատ կը մտածէի ճիշդ ըլլալու մասին, քան՝ մարդոց յաւիտենական բարեկեցութեան: Երբեմն այն եկեղեցիները, որոնց մէջ ես կը քարոզէի, վատ դրութեան մէջ կը յայտնուէին իմ պատճառով: Ես տակաւին կեդրոնացած էի իմ «ես»-ին վրայ, բայց իմ եսասիրութիւնը կ'արտայայտուէր այլ կերպով: Իմ վարքը հետեւեալ սուրբգրային հատուածի դասական օրինակն էր. «Դուք կը մտածէք, որ բոլորը պէտք է համաձայնին ձեր կատարեալ գիտելիքի հետ: Թէեւ մենք կրնանք կարելոր զգալ մեզ գիտելիքի պատճառով, սէրն է, որ իրականութեան մէջ կը կառուցէ եկեղեցին» (Ա. Կորնթացիս 8.1,2, NLT):

Այսօր ես ետ կը նայիմ ծառայութեան վաղ տարիներուն եւ այնքան անյարմար կը զգամ ինձի այն պատճառով, որ որոշ հովիւներ ստիպուած էին հարթելու իրենց եկեղեցւոյ մէջ ստեղծուած իրավիճակը իմ հեռանալէն յետոյ: Եթէ այդ ժամանակ ես հովիւ ըլլայի, ոչ մէկ պարագային կը հրաւիրէի ճոն Պիվիըրը՝ իմ եկեղեցւոյ մէջ ծառայելու համար: Ես այնքան շնորհակալ եմ այն առաջնորդներէն, որոնք կը տեսնէին զԱստուած եւ Անոր ժողովուրդին ծառայելու անկեղծ ցանկութիւնը իմ ներքը, թէեւ ես տակաւին հոգեւոր աճի մեծ կարիք ունէի:

Ես այլեւս չէի շողոքորթեր, որպէսզի ստանայի մարդոց հաւանութիւնը եւ խուսափէի մերժուածութենէն: Ես կը խօսէի ճշմարտութիւնը եւ կը հակառակէի մարդոց, բայց կ'ընէի ատիկա նոյն եսասիրական դրդա-

պատճառներով, որոնք տակաւին ծածկուած էին ինձմէ, եւ որոնցմէ Աստուած կը մաքրէր զիս:

Քանի տարի յետոյ յայտնի հովիւ մը քննադատեց զիս շատ ազդեցիկ առաջնորդներու առջեւ: Անոր խօսքերը հասան ինձի երեք տարբեր աշխարհամասերէն: Սկիզբը եւ շատ բարկացայ եւ յուսահատեցայ, բայց զիտէի, որ վիրաւորանքը միայն զիս Աստուծմէ պիտի հեռացնէր: Ի վերջոյ, այդ մարդու յարձակումը՝ ուղղուած ինձի, ստիպեց, որ աղաղակեմ Աստուծոյ՝ խնդրելով Անոր սէրը այնպէս, ինչպէս նախկինին երբեք չէի խնդրած: Ես ջերմեռանդօրէն կը խնդրէի Աստուծմէ աւելի շատ գթասրտութիւն տալ ինձի: Առանց իմ հասկնալուն՝ ժամանակի ընթացքին Աստուած հասունցուց իմ սրտին մէջ Իր սէրը Իր սուղ ժողովուրդի հանդէպ:

Այս ընթացքին Տէրը յայտնութիւն մը տուաւ, որ փոխեց իմ ծառայութիւնը: Թերեւս մտածէք, որ շատ խորունկ բան պիտի լսէք, բայց այն շատ պարզ է: Թերեւս դուք նոյնիսկ կարծէք, որ այն թեթեւ մը անհեթեթ կը հնչէ, մինչեւ որ մտորէք աստոր շուրջ: Ահա այդ յայտնութիւնը. «Դգալ մը շաքարը կ'օգնէ խմել դեղը»: Ես հասկցայ, որ դեղի ազդեցութիւնը չի թուլանար, երբ աստոր քաղցր կ'աւելցնեն: Մարդիկ պարզապէս աւելի դիրաբար կը խմեն այն, եւ որպէս կանոն, այն նոյնիսկ հաճելի կը թուայ:

Այսօր անթիւ առաջնորդներ կ'ըսեն ինձի. «Ճո՛ն, ես կը զարմանամ, թէ ինչպէս դուն խնդացուցիր բոլորիս այն ընթացքին, երբ Աստուծոյ Խօսքը կը զտէր մեր սիրտը: Դուն կեանք ներշնչեցիր նման լուրջ թեմայի մէջ»: Երբ ես առաջին անգամ այդպիսի խօսքեր լսեցի, հասկցայ, որ կը հասունանամ Աստուծոյ շնորհքով: Ես այնքա՛ն շնորհակալ եմ Անոր:

Ամենայն հաւանականութեամբ, այն հովիւը, որ քննադատեց զիս այլ առաջնորդներու առջեւ, չէր ուզեր օրհնել զիս, սակայն ան դարձաւ մեծագոյն օրհնութիւններէն մէկը իմ կեանքին մէջ: Դուք պէտք է յիշէք, որ երբեմն Աստուած կ'օգտագործէ մարդոց չար մտադրութիւնները, որպէսզի օգնէ ձեզի մուտք գործելու Իր կամքին մէջ: Ան օգտագործեց Յուդայի դաւաճանութիւնը, որպէսզի իրագործէր Յիսուսի խաչելութիւնը, որ նախասահմանուած էր Անոր համար: Ան օգտագործեց Յովսէփի եղբայրներու չար մտադրութիւնները, որպէսզի իրականացնէր այն երազը, որ տուած էր անոր եւ այլն:

Նպատակը՝ Աստուծոյ սէրն է

Ընդհանուր առմամբ, հարցը այն է, թէ ինչպէս մենք կը տեսնենք մարդիկ: Եթէ մենք թոյլ տանք, որ Աստուծոյ սէրը եւ գթասրտութիւնը աւելնան մեր կեանքին մէջ, մենք չենք անարգել մարդիկ: Եթէ մենք համարենք, որ ուրիշները աւելի ցած են մեզմէ, մենք կը քննադատենք,

կը դատապարտենք, կոպիտ կը վարուինք մարդոց հետ եւ այլն: Կար-
դացէ՛ք, թէ Պօղոսը ինչ կը գրէ հռովմայեցի հաւատացեալներուն.

«Ինչո՞ւ դուն կը քննադատես եւ կը դատես քու եղբայրը: Կամ ինչո՞ւ
բարձրէն կը նայիս քու եղբօրը եւ կ'անարգես զինք: Որովհետեւ բոլորս
պէտք է կենանք Աստուծոյ ատեանի առջեւ... Այնպէս որ, ամէն մէկս
պէտք է հաշիւ տանք մեզի համար (պատասխան տանք դատելու հա-
մար) Աստուծոյ» (Հռովմայեցիս 14.10, AMP):

Եթէ հաւատացեալները անուշադրութեան մատնեն երկրորդ մեծա-
գոյն պատուիրանը, որ մէկը միւսին սիրելն է, մենք անխուսափելիօրէն
կ'իյնանք այն ծուղակը, որուն մասին Պօղոսը կը գրէ վերոյիշեալ հատու-
ածին մէջ, այսինքն՝ կը սկսինք անարգել մարդիկ: Այս մտածելակերպը
յատուկ է այնպիսի մարդոց, որոնք ստացած են Աստուածաշնչեան գի-
տելիքներ, բայց չունին Սուրբ Հոգիին պտուղը:

Աստուածաշունչը կը յայտնէ մեզի, որ Աստուած սէր է: Շատ կար-
եւոր է նշել, որ սէրը՝ Աստուած չէ: Այս երկու արտայայտութիւններու
միջեւ մեծ տարբերութիւն կայ: Աստուծոյ Անձը, ճանապարհները եւ
մտադրութիւնները չեն սահմանափակուիր այն բանով, թէ ինչպէս մենք
կը սահմանենք սէրը, որովհետեւ ոչ ոք կը ճանչնայ սէրը, քանի տակա-
ւին չէ ճանչցած Յիսուսը: Ան սիրոյ ճշմարիտ էութիւնն է:

Նոյնպէս, ոչ մէկ տեղ Աստուածաշունչին մէջ գրուած է. «Աստուած
սէր ունի»: Ան ունի գօրութիւն, պարգեւներ, իշխանութիւն, եւ այսպէս
շարունակ, բայց Յիսուսը՝ սիրոյ ճշմարիտ էութիւնն է: Այդ պարագա-
յին, մենք պէտք չէ տարբերինք Անորմէ, քանի որ մենք վերածնած ենք՝
ըստ Անոր բնութեան: Ահա թէ ինչու Պօղոսը կը գրէ.

«Եթէ ես կարենայի խօսիլ որեւէ երկրային կամ երկնային լեզուով, բայց
չսիրէի մարդիկ, ես միայն անիմաստ աղմուկ կը հանէի՝ նման բարձ-
րածայն կոչնազանգի կամ զրնգացող ծնծղայի: Եթէ ես ունենայի մար-
գարեութեան պարգեւը, եւ եթէ գիտնայի ապագայի բոլոր խորհուրդ-
ները եւ ամէն ինչ՝ ամէն ինչի մասին, բայց չսիրէի մարդիկ, ի՞նչ օգուտ
ատորմէ: Եւ եթէ ես ունենայի հաւատքի պարգեւը, որ խօսէի լեբան, եւ
այն տեղափոխուէր, բայց սէր չունենայի, ես ոչինչով օգտակար կ'ըլ-
լայի ոչ ոքի: Եթէ ես տայի իմ ամբողջ ունեցուածքը աղքատներուն եւ
նոյնիսկ զոհաբերէի իմ մարմինը, եւ կրնայի պարծենալ այդ մասին,
բայց եթէ չսիրէի մարդիկ, ես ընդհանրապէս ոչ մէկ արժէք կ'ունենայի»
(Ա. Կորնթացիս 13.1–3, NLT):

Սէրը չի բխիր մեր խօսքերէն: Մենք կրնանք ըսել, որ կը հոգանք ինչ
որ մէկուն մասին, բայց մեր գործերը կրնան ցոյց տալ հակառակը: Սէ-

րը նաեւ չի բխիր մեր գործերէն: Պօղոսը կ'ըսէ վերոյիշեալ հատուածին մէջ, որ մենք կրնանք այնպիսի գործեր ընել, որոնք կ'ընեն միայն մեծագոյն սէր ունենալու պարագային (ամբողջ ունեցումօքը աղքատներուն տալը եւ մարմինը զոհաբերելը), բայց ընել ատիկա Աստուծոյ սէրէն անջատ: Մենք կը տեսնենք, որ ճշմարիտ սէրը կը բխի մարդու սրտէն:

Երբ սիրենք, մենք համբերատար եւ բարի կ'ըլլանք մարդոց հանդէպ: Մենք չենք նախանձիր անոնց յաջողութեան, քանի որ ի սրտէ կը ցանկանք, որ անոնք յաղթանակներ ունենան: Մենք երբեք չենք պարծենար մեր մասին, եւ կը խուսափինք գոռոզութենէն ու հպարտութենէն: Մենք չենք պահանջեր, որ ամէն ինչ մեր ուզածով ըլլայ: Մենք չենք ջղայնանար մեր անհամբերութեան պատճառով: Մենք չենք յիշեր, երբ մարդիկ սխալ վարուին մեր հետ, այլ կը ներենք եւ կը ձգենք բոլոր պարտքերը: Մենք երբեք չենք ժպտար՝ անարդարութիւն տեսնելով, այլ կը ձգտինք ողորմութեան եւ ճշմարտութեան: Մենք երբեք չենք հրաժարիր ոչ մէկէն եւ չենք կորսնցներ մեր հաւատքը մարդոց հանդէպ, այլ միշտ կը հաւատանք անոնց համար լաւագոյնին: Մենք միշտ անմեղ կը համարենք մարդիկ այն պարագային, եթէ անոնց մեղաւորութիւնը ապացուցուած չէ, եւ նոյնիսկ եթէ պարզուի, որ անոնք մեղաւոր են, մենք յոյս կ'ունենանք, որ անոնք պիտի ապաշխարեն եւ պիտի վերականգնուին: Մենք յոյսով լեցուած կ'ըլլանք եւ կը դիմանանք ամէն նեղութեան՝ Աստուծոյ թագաւորութեան կամ մէկ այլ մարդու բարեկեցութեան համար: Ըստ էութեան, մեր կեանքի նպատակը կ'ըլլայ մարդոց՝ Աստուծոյ մէջ կառուցելը, ինչ որ հնարաւոր է միայն՝ եթէ անոնք նմանին Քրիստոսին եւ կատարեն Անոր կամքը իրենց կեանքին մէջ:

Առաջնորդը, որ ազդեցութիւն ձգեց շատերու վրայ

Քանի տարի առաջ մասնակցեցայ իմ մտերիմ ընկերներէն մէկուն հոգեհանգիստի արարողութեան: Անոր անունը Ճէք Ուոլես էր: Ան հիմնադրած էր «Տեթրոյթի համաշխարհային աւետարանչութիւն» եկեղեցին Միչիկըն նահանգի Տեթրոյթ քաղաքին մէջ: Այս եկեղեցին, որուն անդամները տարբեր ռասայական պատկանելիութիւն ունէին, ընդամէնը տասը տարուայ մէջ հասած էր չորս հազարի: Ճէքը Ջիմպայուէ կ'երթար, որպէսզի քարոզէր աւետարանչական հաւաքոյթի մը ժամանակ, սակայն ինքնաթիռէն իջնելէն յետոյ ան սրտի կաթուած ունեցաւ եւ մահացած ինկաւ:

Հազարաւոր մարդիկ եկան Ճէքի հոգեհանգստի արարողութեան՝ ծառայութիւններու ղեկավարներ ամբողջ Միացեալ Նահանգներէն,

պետական պաշտօնեաներ, խոշոր ընկերութիւններու փոխնախագահներ, ինչպէս նաեւ՝ բազմաթիւ պարզ աշխատաւոր մարդիկ, անտուն թափառականներ, նաեւ՝ մայրեր, որոնք կ'ապրէին պետական նպաստներով: Այդ մարդիկ կը գտնուէին անոր եկեղեցւոյ ազդեցութեան շրջանակին մէջ: Շատերը, որոնք չէին ճանչնար Յիսուսը՝ որպէս Տէր, նոյնպէս մասնակցեցան անոր հոգեհանգիստի արարողութեան: Անոնց կարգին էին հիւրանոցներու եւ ճաշարաններու աշխատակազմերու անդամներ եւ այլ մարդիկ այդ քաղաքին մէջ, որոնց կեանքին մէջ ան անձամբ ազդեցութիւն ձգած էր:

Ճէքի եկեղեցւոյ չպատկանող մարդոց ներկայութիւնը չզարմացուց զիս: Ճէքը եւ ես շատ ժամանակ անցուցած ենք միասին անոր եկեղեցիէն դուրս, եւ ես այնքա՛ն օրհնուած էի այն բանով, թէ ինչպէս ան կը վերաբերէր մարդոց: Ան կը վերաբերէր ամէն մէկուն՝ որպէս արժէքաւոր եւ սուղ անձնաւորութիւն: Ան մեծ ձեռացիր կու տար մատուցողուհիներուն եւ հիւրանոցներու աշխատողներուն: Ես երբեմն քիչ մը կը վարանէի՝ մտածելով, որ թերեւս ատիկա չափազանցութիւն էր, բայց այդ անմիտ մտածելակերպը շտկուեցաւ մէկ անգամ, երբ Ճէքը ըսաւ ինձի, թէ որքա՛ն արժէքաւոր եւ սուղ են այդ մարդիկ Աստուծոյ համար: Երբ դուք Ճէքի հետ էիք, ան պարզապէս չէր համոզեր ձեզ, որ դուք ամենակարեւոր մարդն էք. դուք իսկապէս ամենակարեւոր մարդն էիք անոր համար:

Հոգեհանգստի արարողութիւնը տեսց չորս ու կէս ժամ: Անոր ընկեր-ծառայողներէն շատերը խնդրեցին բաժնեկցիլ քանի մը վայրկեանով: Այն բանէն յետոյ, երբ մեզմէ չորս կամ հինգ մարդ խօսեցան այն մասին, թէ որքան մտերիմ էինք մենք Ճէքի հետ, եւ թէ որքան սուղ էր ան մեզի համար, շատ յայտնի ծառայող մը ոտքի կանգնեցաւ եւ ըսաւ. «Ես կը կարծէի, որ ես էի անոր լաւագոյն ընկերը»: Բոլորը ծիծաղեցան:

Բոլորս գիտէինք, որ Ճէքը ամէն մէկս կը համարէր իր ամենամօտ ընկերը եւ այդպէս ալ կը վերաբերէր մեզի: Այդ մեծ առաջնորդը ազդեցութիւն ձգեց ոչ միայն ազգերու վրայ՝ իր աւետարանչական հաւաքոյթներով եւ հեռատեսիլային հաղորդումներով, այլեւ այն մարդոց վրայ, որոնց հետ անձամբ կը հաղորդակցէր: Անոր համար կարեւոր չէր՝ դուք խոշոր ընկերութեան գործադիր տնօրէ՞ն էք, թէ՞ պետական նպաստ կը ստանաք: Ճէքը գիտէր, թէ ինչպէս հաղորդակցէր ձեր հետ եւ ինչպէս սիրէր ձեզ՝ որպէս մարդ: Ճէքը ոչ միայն հաւատարիմ էր իր կոչման եւ պարգեւներուն մէջ, այլեւ կը բազմապատկէր իր մնասները կեանքի ամէն բնագաւառի մէջ:

Պահակը, որ ազդեցութիւն ձգեց շատերու վրայ

Ղուբ երբեք չէք տեսներ ամպիոնի ետեւը որոշ մարդիկ, որոնք շատ մեծ ազդեցութիւն ունեցած են իմ կեանքին մէջ: Այդ մարդոցմէ մէկը Մայքն է, որ նիւթական բաժնի աշխատակից էր «Ռոքուել Ինթերնեշընլ» ընկերութեան մէջ: Ես ծանօթացայ անոր հետ քրիստոնեայ դառնալէն երկու տարի յետոյ: Աշխատավայրին մէջ մեր գրասեղանները իրար մօտիկ էին, եւ մենք կը գրուցէինք Աստուծոյ մասին ընդմիջումներու եւ ճաշի ժամերուն: Հետագային մենք սկսանք ժամեր շարունակ հաղորդակցիլ կա՛մ իմ, կա՛մ անոր տունը, ինչպէս նաեւ՝ եկեղեցւոյ մէջ: Մայքի անկեղծութիւնը եւ գործնական իմաստութիւնը՝ հիմնուած Աստուծոյ Խօսքի վրայ, շատ մեծ ազդեցութիւն ձգեցին իմ կեանքին մէջ: Ես նոյնպէս տպաւորուած էի այն բանով, թէ ինչպէս ան կը պատուէր, կը սիրէր եւ կը յարգէր իր կինը, մանուկները եւ իւրաքանչիւրը, որուն կը հանդիպէր:

Ես հեռացայ «Ռոքուելէն» եւ ծառայող դարձայ: Կարճ ժամանակ յետոյ Մայքը նոյնպէս հեռացաւ աշխատանքէն եւ հիմնադրեց իր հաշուապահական ընկերութիւնը, որ մինչեւ օրս կը գործէ: Անոր գործը շատ յաջողակ դարձաւ: Ան օգնած է անլի քան տասներկու հազար յաճախորդի՝ հարկային յայտարարագրեր լրացնել եւ հաշուապահական հաշուառում իրականացնել, եւ անոնցմէ հինգ հազարը դարձած են անոր մշտական յաճախորդները: Անոնք կ'աշխատէին Մայքի հետ տարիներ շարունակ՝ անոր անկեղծութեան եւ ազնուութեան շնորհիւ:

Վերջերս հարցուցի Մայքին, թէ իր յաճախորդներէն քանիի՞ն ան քարոզած է Աստուծոյ Խօսքը: Ան պատասխանեց.

– Ճո՛ն, ամենահամեստ հաշուարկներով՝ մօտաւորապէս 90 տոկոսին:

Կը նշանակէ՞ ան քարոզած է անլի քան տասը հազար մարդու: Ես ապշած էի: Ես շարունակեցի՝ հարցնելով, թէ քանիի՞ն ան փրկութեան առաջնորդած է: Ան պատասխանեց.

– Հարիրաւոր մարդոց: Անցեալ շաբաթ, օրինակ, իմ յաճախորդներէն մէկը, որ Քուպայէն է, ընդունեց Տէրը եւ աղօթեցի, որ ան բժշկուէր քաղցկեղէն:

Մայքը նոյնպէս օգնած է շատ ծառայութիւններու ճիշդ կերպով կառուցելու իրենց հաշուապահութիւնը: Մայքը կ'օգնէր նաեւ մեր ծառայութեան, երբ այն տակաւին կազմաւորման փուլին մէջ էր: Ան հասկցաւ, որ Աստուած կանչած էր ինձի, եւ տարիներ շարունակ կը պատրաստէր իմ հարկային յայտարարագրերը՝ առանց որեւէ վճարման: Մայքը

ազդեցութիւն ձգած է բազմաթիւ մարդոց կեանքերուն մէջ շատ տարբեր ձեւերով:

Կը յիշեմ, որ մեր երկար գրոյցներու ընթացքին Մայքը կը պատմէր պահակի մը մասին, որ ազդեցութիւն ունեցած էր իր կեանքի վրայ աւելի շատ, քան ոեւէ այլ մարդ: Վերջերս ես զանգահարեցի անոր եւ կրկին հարցուցի այդ մարդուն մասին: Մայքը լալով ըսաւ.

– Ճո՛ւն, իմ ինը մօրաքոյրներէն եւ քեռիներէն վեցը աւարտած են իրենց կեանքը հոգեբուժարանին մէջ, եւ իմ մայրը անոնց կարգին էր: Իմ երկու պապերը հրազէնով սպաննուած են: Ընտանիքս շատ խառնաշփոթ կեանք ունէր, եւ անոնց ճակատագիրը կը սպասէր նաեւ ինծի:

Այնուամենայնիւ, ֆինանսական դժուարութիւններու պատճառով մայրս ուղարկեց զիս մէկ ուրիշ ընտանիք, որպէսզի անոնք հոգային իմ մասին: Ես եօթը տարի ապրեցայ այդ մարդոց հետ: Այդ ընտանիքի հայրը պահակ էր տեղական թուղթի գործարանին մէջ: Անոր անունը Չառլի էր: Անոր անկեղծութիւնը եւ նուիրուածութիւնը Յիսուսի հանդէպ եւ սէրը մարդոց հանդէպ քանդեցին անէծքն իմ կեանքին մէջ: Ամէն շաբաթ ան եկեղեցի կը տանէր զիս եւ կը սորվեցնէր Աստուծոյ ճանապարհները: Անոր ազդեցիկ ըլլալը օգնեց ինծի՝ դառնալու այնպիսին, ինչպիսին այսօր կամ: Մէկ անգամ իմ աղջիկը շարադրութիւն գրած էր եւ վերնագրած էր «Մեծագոյն մարդը, որուն երբեք չեմ ճանչցած»: Այն Չառլիին մասին էր:

Հաւանաբար, դուք երբեք ոչինչ կ'իմանայիք Չառլիի մասին որեւէ տեղէն, եթէ չըլլար այս գիրքը: Այնուամենայնիւ, անոր ազդեցութիւնը տարածուեցաւ դէպի այն հազարաւոր մարդիկ, որոնց ծառայեց Մայքը: Ան հպեցաւ նաեւ իմ կեանքին՝ Մայքի միջոցով: Այնպէս որ, այն միլիոնաւոր մարդիկ, որոնց ես ծառայելու արտօնութիւն ունեցած եմ, անուղղակի կերպով շահուած են Աստուծոյ համար նաեւ Չառլիի միջոցով: Դուք կը տեսնէ՞ք, թէ ինչպէս պարզ պահակ բազմապատկեց իր մնասները: Մէկ օր ան մեծ վարձատրութիւն պիտի ստանայ ատոր համար:

Ազդեցութիւն ապագայ սերունդներու վրայ

Ասիկա կը յիշեցնէ ինծի իրական պատմութիւն մը, որ իմ աշխատակիցներէն մէկը վերջերս կարդաց ինծի համար: Այն աթէիսթի մը մասին է, որուն անունը Մաքս Ճուքս էր, եւ Աստուածավախ մարդու մը, որուն անունը Ճոնաթան Էտուարտս էր: Ահա այդ պատմութիւնը.

«Մաքս Ճուքսը աթէիսթ էր եւ անօրէն մարդ էր: Ան ամուսնացաւ անպարկեշտ աղջկայ մը հետ: Անոնց միութեան վերջաւորութեան ծնած

մարդոցմէ 310-ը մահացան որպէս մուրացկան, 150-ը յանցագործներ էին, 7-ը՝ մարդասպաններ, 100-ը՝ գինովներ. անոնց սերունդներու կիներուն կէսէն աւելին մարմնավաճառ էր: Այն նահանգը, ուր ան ծնած էր, ստիպուած էր ընդհանուր առմամբ մէկ ամբողջ եւ մէկ քառորդ միլիոն տոլար ծախսել անոր 540 ժառանգներու համար:

Բայց փա՛ռք Աստուծոյ՝ այս սկզբունքը երկկողմանի է: Գոյութիւն ունի մէկ այլ ընտանեկան արձանագրութիւն, որ կը պատմէ ամերիկացի մեծ ծառայող ճոնաթան Էտուարտսի սերունդներու մասին: Ան կ'ապրէր նոյն ժամանակ, ինչ Մաքս Ճուքսը, բայց ամուսնացաւ Աստուածապաշտ աղջկայ մը հետ: Յայտնաբերած է առնուազն 1394 մարդ, որոնք եղած էին ճոնաթան Էտուարտսի ժառանգները: Անոնցմէ 13-ը դարձած էին համալսարաններու նախագահներ, 65-ը՝ համալսարանական փրոֆէսորներ, 3-ը՝ ԱՄՆ-ի ծերակուտականներ, 30-ը՝ դատաւորներ, 100-ը՝ իրաւաբաններ, 60-ը՝ բժիշկներ, 75-ը՝ ցամաքային եւ ծովային զօրքերու սպաներ, եւս 100-ը՝ քարոզիչներ եւ միսիոներներ, 60-ը՝ յայտնի հեղինակներ, մէկը՝ ԱՄՆ-ի փոխնախագահ, 80-ը՝ տարբեր աստիճանի պետական պաշտօնեաներ, 295-ը աւարտած էին բարձրագոյն ուսումնական հաստատութիւններ, ինչպէս նաեւ անոնց կարգին էին նահանգապետներ եւ նախարարներ՝ այլ երկիրներուն մէջ: Այն նահանգը, որ ան ծնած էր, նոյնիսկ մէկ սենթ չէր ծախսած անոր ժառանգներու վրայ»¹:

Այս մնասները բազմապատկելու եւս մէկ միջոց է: Այս մարդիկ՝ Չառլին, Մայքը եւ ճոնաթան Էտուարտը, ազդեցութիւն ձգած են բազմաթիւ մարդոց կեանքերուն մէջ: Անոնց ազդեցութիւնը շարունակած է տարածուիլ սերունդէ սերունդ: Այնուամենայնիւ, անոնք հպած են բազմաթիւ մարդոց, որոնց մասին մենք խօսեցանք, ոչ թէ իրապարակային ծառայութեամբ, այլ՝ իրենց անձնական կեանքով:

Աստուած կու տայ այս արտօնութիւնը իւրաքանչիւրիս: Այն, թէ ինչպէս դուք կը վերաբերիք ոստիկանին, ինչպէս կը խօսիք ձեր հովիւին հետ, ինչպէս դուք կը վերաբերիք ձեր մանուկներուն, ինչպէս կը տնօրինէք ձեր միջոցները, ինչ կը խօսիք մարդոց մասին եւ այլն, ազդեցութիւն կը ձգէ ձեզ շրջապատող մարդոց վրայ: Այսպիսով, դուք պիտի կառուցէ՞ք մարդոց կեանքերը, թէ՞ զլորման քար պիտի դառնաք:

«Այո՛, մեզմէ ամէն մէկը պէտք է անձամբ հաշիւ տայ Աստուծոյ: Այնպէս որ, այլեւս մի՛ դատապարտէք մէկը միւսին: Փոխարէնը՝ որոշում կայացուցէք այնպէս ապրիլ, որ խոչընդոտ չդնէք մէկ ուրիշ քրիստոնէայի ճանապարհին... Եկէք ձգտինք ներդաշնակութեան՝ եկեղեցւոյ մէջ, եւ փորձենք կառուցել մէկս միւսին» (Հռովմայեցիս 14.12,13, 19):

Պօղոսը ուղղակիօրէն կը կապակցէ ասիկա Աստուծոյ Դատաստանի գահի հետ: Հոն մանրակրկիտ ձեւով պիտի քննուի մեր ամբողջ ազ-

դեցութիւնը մարդոց վրայ: Անչափ կարելոր է, որ մշտապէս յիշենք ասիկա, որպէսզի յաղթանակներ ունենանք, ոչ թէ շարունակ մտածենք մեր մասին:

Ռեպեթա Ռութըր Սփրինկըրը կ'ապրէր տասնիններորդ դարը: Անոր շնորհուած էր երկարատեւ այցելութիւն դէպի Երկինք՝ նախքան անոր հեռանալը այս կեանքէն՝ իր յաւիտենական վարձատրութիւնը ստանալու համար: Վերադառնալով՝ ան գրեց իր դասական դարձած գիրքը, որը կը կոչուի *«Ինթրա Մուրոս»*: Ատոր մէջ ան կը մէջբերէր իր ազգականներէն մէկուն խօսքերը, որուն հետ շատ ժամանակ անցուցած էր Երկինքը: Ան կը գրէր, որ այդ ազգականը՝ իր ամուսինին եղբայրը, մտերիմ էր Տիրոջ հետ: Այդ մարդը ըսած էր հետեւեալը.

«Երանի՛ մենք հասկնայինք, քանի տակաւին մահկանացու ենք, որ օրըստօրէ կը կառուցենք յաւիտենութեան համար: Այդ պարագային, մեր կեանքը կը փոխուէր շատ առումներով: Ամէն սիրալիր խօսք մը, ամէն մէկ մեծահոգի միտք, ամէն մէկ անձնագոհ արարք գալիք կեանքին մէջ յաւիտենական գեղեցկութիւն ունեցող սիւն կը դառնայ»²:

Մարդոց դէպի Յիսուսը առաջնորդելը

Մեծագոյն ազդեցութիւնը, որ կրնաք ձգել մարդոց կեանքին մէջ, անոնց դէպի Քրիստոս առաջնորդելն է: Հասկնալով, թէ ինչպիսին պիտի ըլլան յաւիտենական դատաստանները՝ դուք կը ձգտիք պատմել մարդոց փրկութեան ծրագրի մասին: Գրուած է. «Ան, որ իմաստուն է, կը գրաւէ մարդիկ [Աստուծոյ համար՝ որպէս մարդոց ձկնորս. Ան կը հաւաքէ եւ կը ստանայ անոնց *յաւիտենութեան* համար]» (Առակաց 11.30, AMP):

Երբ նորահաւատ էի, ճնշուածութիւն կը զգայի՝ մտածելով, որ պէտք է քարոզէի Աւետարանը անոր, որուն կը հանդիպէի: Այնուամենայնիւ, հետագային սորվեցայ ապաւինիլ Սուրբ Հոգիի առաջնորդութեան այն հարցին մէջ, թէ երբ եւ ինչ պէտք է խօսիմ: Ես հասկցայ, որ նոյնիսկ Յիսուս ըսաւ, որ միայն կ'ընէ՝ ինչ որ կը տեսնէ Իր Հայրը ընելով: Աստուծոյ հետ մեր ընթացքի մէջ գոյութիւն ունի հոսք, ոչ թէ հարկադրանք, որ տհաճութիւն կը յառաջացնէ եւ կը վանէ մարդոց:

Այնուամենայնիւ, մարդոց յաւիտենական կեանքին առաջնորդելու մղումը մշտապէս մեզի հետ կ'ըլլայ, մինչեւ մեր երկնային տունը երթալը: Եւ Աստուծոյ սէրը կը բորբոքէ այս ցանկութիւնը: Երբ դուք Քրիստոսին կ'առաջնորդէք ինչ որ մէկը, բոլոր հրեշտակները, ինչպէս նաեւ՝ անձամբ Աստուած, կը ցնծան անասելի ուրախութեամբ: Յիսուս կ'ըսէ. «Հնծողները լաւ վարձատրութիւն կը ստանան, եւ այն պտուղը, որ

անոնք կը հնձեն, մարդիկ են, որոնք բերուած են դէպի յաւիտենական կեանքը» (Յովհաննէս 4.36, NLT):

Ես արտօնութիւն ունեցայ առաջնորդելու իմ կինը դէպի Տէրը մեր առաջին ժամադրութեան: Յիսուսին ընդունելէն կարճ ժամանակ յետոյ ես որոշում կայացուցի ոչ մէկ աղջկայ հետ ժամադրուիլ, մինչեւ որ Աստուած բերէր քովս իմ կինը: Ես գիտէի, որ Աստուած բերաւ Եւան Ադամին քով, եւ մտածեցի, որ Ան կրնար ընել նոյնը ինծի համար:

Մինչեւ քրիստոնէայ դառնալը ես կը ժամադրուէի շատ աղջիկներու հետ: Դարձի գալէն յետոյ ժամադրուեցայ քանի մը քրիստոնէայ աղջիկներու հետ եւ հասկցայ, որ ատիկա կը խանգարէ Աստուծոյ հետ իմ ընթացքը: Ամէն անգամ, երբ ես կը խզէի յարաբերութիւնները հերթական աղջկայ հետ, երկուքիս ներսն ալ ցաւ կը յառաջանար: Կարճ ժամանակ յետոյ հասկցայ, որ ատիկա օգտակար չէր ինծի համար: Այնպէս որ, ես որոշեցի աղօթել՝ ոեւէ աղջիկ ժամադրելէ առաջ:

Այդ ժամանակ իմ կինը թեթեւ վարքի տէր աղջիկ էր: Ուսանող մը ըսաւ ինծի, որ ան ամենաթէժ աղջիկն է ամբողջ համալսարանին մէջ: Չեմ գիտեր՝ արդեօ՞ք ատիկա լիովին ճիշդ էր, բայց մօտ էր ճշմարտութեան: Երբ սկսայ հաղորդակցիլ Լիզային հետ, ես արդէն մէկ տարի ոչ մէկ աղջկայ հետ ժամադրուած էի, եւ մասամբ այն պատճառով, որ ամէն անգամ, երբ կը հարցնէի Տիրոջը, Ան կը պատուիրէր ինծի ժամադրութեան չերթալ: Այնուամենայնիւ, ես զգացի Սուրբ Հոգիին առաջնորդութիւնը, որ պէտք է հրաւիրէի Լիզան մեր յառաջիկայ Աստուածաշնչեան ուսումնասիրութեան զբօսախնճոյքին, եւ ան համաձայնեցաւ:

Զբօսախնճոյքէն յետոյ Լիզան եւ ես զբօսելով վերադարձանք համալսարան, եւ ես քարոզեցի անոր Աւետարանը կէսգիշերէն մինչեւ գիշերուան 01:30-ը: Ան ընդհատեց զիս՝ խնդրելով, որ անմիջապէս փրկութեան առաջնորդի գինք: Այդ իրադարձութենէն կարճ ժամանակ յետոյ երկուքս ալ գիտէինք, որ մեր ամուսնութիւնը Աստուծոյ կամքն էր: Կրնամ անկեղծօրէն ըսել, որ ես իսկապէս շահեցայ մեր ամուսնութենէն: Ես չէի դառնար այնպիսին, ինչպիսին այսօր եմ, եթէ ան իմ կողքիս չըլլար:

Լիզան հպած է միլիոնաւոր կեանքերու: Ան պտղաբեր հեղինակ է եւ անարդարութեան դէմ պայքարող ջատագով: Ան կը քարոզէ բազմաթիւ համաժողովներու մէջ, որոնք տեղի կ'ունենան աշխարհով մէկ: Ի՞նչ կ'ըլլար, եթէ ես չօգտագործէի՝ զինք դէպի Աստուծոյ առաջնորդելու հնարաւորութիւնը: Ի՞նչ կ'ըլլար, եթէ ես վախճանայի, որ ան կը ծաղրէր զիս, եւ չպատմէի Յիսուսի մասին: Համոզուած եմ՝ Աստուած պիտի ուղարկէր մէկ ուրիշը: Ես կը կորսնցնէի Աստուծոյ լաւագոյն ընտրութիւնը ինծի համար եւ բաժին չէի ստանար բոլոր այն մարդոց համար, որոնց

կեանքին մէջ ան յաւիտենական ազդեցութիւն ձգած է: Փա՛ռք Աստուծոյ Անոր պարգեւներուն համար:

Յիշեցէք՝ սերմը կը բազմապատկուի, բայց սերմը աննշան կը թուայ: Երբեք թեթևօրէն մի՛ վերաբերիք Սուրբ Հոգիի առաջնորդութեան. առաւել եւս՝ մի՛ անտեսէք Ձինք: Ամէնէն «աննշան» բաները, որոնց Աստուած առաջնորդած է զիս, իմ կեանքին մէջ վերածուած են ամէնէն ակնառու բազմապատկման գործօններու: Աստուած կը ցանկայ, որ դուք բազմապատկու՞մ ունենաք ձեր կեանքին մէջ, եւ կը ցանկայ վարձատրել ձեզ ատոր համար:

Վերջին յորդորը

Այնքա՛ն բան դրուած է խաղաքարտին: Մենք չենք կրնար թեթևամտօրէն վերաբերիլ այն ժամանակին, որ վստահուած է մեզի այս երկրի վրայ: Մարդոց յաւիտենութիւնը կախուած է այն բանէն, թէ արդեօ՞ք կը հնազանդինք Աստուծոյ ծրագրին: Անոր կամքն է, որ բոլորը փրկուին եւ նմանին Յիսուսին: Ան չի ցանկար, որ ինչ որ մէկը ետ մնայ:

Ամբողջ սերունդ մը կորսուեցաւ. անապատին մէջ Եգիպտոսէն դուրս գալէն յետոյ: Անոնց կը տանէր բոլոր ժամանակներու մեծագոյն առաջնորդը, բայց միեւնոյնն է՝ անոնք ձախողեցան: Մենք կրնանք հրաշալի առաջնորդներ ունենալ, բայց մեր սերունդի մէջ Գլխաւոր Շինարարի ծրագիրը կատարելը կախուած է մեզմէ: Ան յայտարարեց. «Եւ արքայութեան այս Աւետարանը ամբողջ տիեզերքին մէջ պիտի քարոզուի՝ բոլոր հեթանոսներուն վկայութիւն ըլլալու համար, եւ այն ժամանակ պիտի գայ վերջը» (Մատթէոս 24.14): Եկէք չկորսնցնենք մեր առաջադրանքը. հիմա՛ է ժամանակը: Այն մօտեցած է, եւ Ան մեր դրան մօտ է: Եթէ չկատարենք մեր կոչումը, Աստուած ստիպուած կ'ըլլայ բարձրացնել մէկ ուրիշ սերունդ, ինչպէս Յեսուի սերունդն էր, որպէսզի աւարտէ Իր տունը, որովհետեւ Ան արդէն յայտարարած է, որ Իր տունը լեցուն պիտի ըլլայ:

Մենք կը կատարենք Աստուծոյ ծրագրի մեր մասը, երբ կը բազմապատկենք այն, ինչ որ Ան վստահած է մեզի: Մի՛ յուսահատիք: Անկարելոր մի՛ համարէք ձեր գործը: Մի՛ կորսնցնէք ձեր ջերմեռանդութիւնը: Մի՛ հեռացնէք ձեր հայեացքը Նոր կտակարանի երկնային տեսիլքէն, որ պարզօրէն պատկերուեցաւ այս գիրքին մէջ: Ձեր սերնդակիցները կը սպասեն ձեզի: Ոմանք յուսահատօրէն կարիք ունին, որ յայտնեք անոնց Յիսուսը, իսկ ուրիշները կարիք ունին ստանալու Անոր խրախուսանքը եւ ուժը ձեզմէ: Ձեր յաւիտենական նախասահմանութիւնը նոյն-

պէս կը սպասէ ձեզի: Դուք յաջողութեան պիտի հասնիք, եթէ լիովին ապահինիք Անոր շնորհքին: Ան հաւատարի՛մ է:

Ես կը դիմեմ ձեզի որպէս Աստուծոյ թագաւորութեան համաքաղաքացիներ: Կատարեցէ՛ք ձեր կոչումը եւ հաստատ դարձուցէ՛ք ձեր ընտրութիւնը: Անցէ՛ք ձեր ընթացքը մինչեւ վերջ: Դուք ետ պիտի նայիք տասը միլիոն տարի յետոյ եւ պիտի ցնծաք, որ ճիշդ վարուեցաք: Դուք չէք կրնար չափէն շատ նուիրուած ըլլալ Աստուծոյ կամքին: Այնպէս որ, վազեցէ՛ք ձեր ասպարէզը՝ յաղթելու համար:

Որպէս վերջին խրախուսական խօսքեր՝ կ'ուղղեմ Պօղոսի ջերմեռանդ աղօթքներէն մէկը՝ բոլոր սուրբերուն համար.

«Թող որ Տէրը աւելի ու աւելի աճեցնէ ձեր սէրը մէկը միւսին եւ բոլոր մարդոց հանդէպ, որ ձեր սէրն այնքա՛ն մեծնայ, որքան մեր սէրը՝ ձեր հանդէպ: Այսպէս Ան կը զօրացնէ ձեզ, եւ դուք կատարեալ եւ սուրբ կ'ըլլաք մեր Աստուծոյ եւ Հօր ներկայութեան մէջ՝ երբ մեր Տէր Յիսուսը գայ անոնց հետ, որոնք կը պատկանին Իրեն» (Ա. Թեսաղոնիկեցիս 3.12,13, TEV):



*Աստուածաշունչին մէջ գրուած են բազմաթիւ խօսքեր
յաւիտենական վարձատրութիւններու մասին՝ շատ աւելի,
քան կարելի է գետեղել այս գիրքին մէջ:*

*Դուք կրնաք գտնել շարք մը հատուածներ յաւիտենական
դատաստաններու եւ վարձատրութիւններու
հիմնական բնագաւառներու մասին
DrivenByEternity.com/EternalRewards
յղումով (անգլերէնով):*

ՀԱՐՑՈՒՄՆԵՐ ՔՆՆԱՐԿՈՒՄԻ ՀԱՄԱՐ

ԲԱԺԻՆ ՎԵՑ, ԳԼՈՒԽՆՆԵՐ 13, 14

1. Ձեր կեանքին մէջ կա՞ն այնպիսի բնագաւառներ (թերեւս նոյնիսկ գլխաւոր բնագաւառներէն մէկը), որոնք անկարելի կամ անհետաքրքրական կը համարէք: Մտածեցէ՛ք ատոնց մասին երկնային տեսանկիւնէն: Ինչո՞ւ ձեր հաւատարմութիւնը այդ անկարելի թուացող բնագաւառներուն մէջ կրնայ կարելորդ ըլլալ Աստուծոյ համար:
2. Մեզմէ շատերը բնագոյրէն կը մրցակցին կամ կը համեմատուին մարդոց հետ: Ինչպէ՞ս կը փոխուի մեր մօտեցումը Աստուծոյ թագաւորութեան նկատմամբ, երբ չենք համեմատեր մեզ ուրիշներուն հետ:
3. Արդեօ՞ք ձեր կեանքին մէջ բազմապատկում կայ: Կրնա՞ք արդեօք աւելի լաւ կերպով տնօրինել ձեր ժամանակը, աղօթքները, տաղանդները եւ միջոցները:
4. Այս գիրքի ամենասկիզբը մէջբերեցինք Ա. Յովհաննէս 4.17-ը, ուր գրուած է, որ մենք կրնանք վստահութիւն ունենալ Քրիստոսի ատենի առջեւ: Կրնա՞ք բացատրել այս խօսքը՝ ձեր ներկայ գիտելիքներով:
5. Ինչպէ՞ս կրնաք նպատակաուղղուած կերպով յաւիտենական նշանակութիւն ունեցող կեանք կառուցել՝ սկսելով ճիշդ այս պահէն:

ՑԱՌԻԵԼՈՒԿԸ.

ԻՆՉՊԵՆ ՓՐԿՈՒԹԻՒՆ ԱՏԱՆԱԼ

«Եթե դաւանիս քու բերանով, որ Յիսուսը Տէր է, եւ հաւատաս քու սրտին մէջ, որ Աստուած յարութիւն տուաւ Անոր մեռելներէն, պիտի փրկուիս: Որովհետեւ քու սրտին մէջ հաւատալով է, որ կ'արդարանաս Աստուծոյ առջեւ, եւ քու բերանով դաւանելով է, որ կը փրկուիս»:

— Հռովմայեցիս 10.9,10, NLT

Աստուած կ'ուզէ, որ դուք յաւիտենական յաջողութիւն ունենաք: Ան ի սրտէ մտահոգուած է ձեզմով եւ կը ցանկայ, որ կատարէք Իր ծրագիրը ձեր կեանքի համար: Այնուամենայնիւ, կայ միայն մէկ ճանապարհ դէպի ձեր նախասահմանութիւնը. դուք պէտք է ընդունիք փրկութիւնը Աստուծոյ Որդու՝ Յիսուս Քրիստոսի միջոցով:

Յիսուսի մահուան եւ յարութեան շնորհիւ Աստուած ճանապարհ պատրաստեց, որպէսզի դուք մուտք գործէք Իր թագաւորութիւնը՝ որպէս Իր սիրելի որդի կամ դուստր: Յիսուսի զոհը խաչի վրայ ծրագրաւ յաւիտենական եւ առատ կեանք պարգեւեց ձեզի: Փրկութիւնը՝ Աստուծոյ պարգեւն է ձեզի. դուք չէք կրնար որեւէ բան ընել, որ շահիք փրկութիւնը կամ արժանանաք ատոր:

Այս սուղ պարգեւը ստանալու համար, առաջին հերթին դուք պէտք է խոստովանիք Ձեր Արարիչէն անկախ ապրելու մեղքը (որովհետեւ ասիկա ձեր գործած բոլոր մեղքերու արմատն է): Ապաշխարութիւնը՝ փրկութիւն ստանալու խիստ կարեւոր պայմանն է: Պետրոսը պարզօրէն նշեց ասիկա Գործք առաքելոց գիրքին մէջ՝ այն օրը, երբ հինգ հազար մարդ փրկութիւն ստացաւ. «Ուրեմն, զոջացէ՛ք եւ ե՛տ դարձէ՛ք, որ ձեր մեղքերը ջնջուին» (Գործք 3.19): Աստուածաշունչը կը յայտնէ, որ մեզմէ ամէն մէկը ծնած է որպէս մեղքի ստրուկ: Այս ստրկութիւնը սկիզբ առած է Ադամի մեղքէն, որ առաջինը գիտակցաբար անհնազանդ եղաւ Աստուծոյ: Ապաշխարելով դուք որոշում կը կայացնէք այլեւս չհնազանդիլ ձեր «ես»-ին եւ սատանային, որ սուտի հայրն է, այլ՝ հնազանդիլ ձեր նոր Տիրոջը՝ Յիսուս Քրիստոսին, Որ զոհած է Իր կեանքը ձեզի համար:

Դուք պետք է Յիսուսին յանձնէք ձեր կեանքի իշխանութիւնը: Յիսուսը որպէս Տէր ընդունիլը կը նշանակէ, որ դուք թոյլ կու տաք Անոր դեկավարելու ձեր կեանքը (հոգին, անձը եւ մարմինը) եւ այն ամէնը, ինչ որ կը պատկանի ձեզի. Ան բացարձակ իշխանութիւն կը ստանայ ձեր կեանքին մէջ: Այն պահուն, երբ ընէք ասիկա, Աստուած պիտի ազատէ ձեզ խաւարէն եւ պիտի տեղափոխէ Իր թագաւորութեան լոյսի եւ փառքի մէջ: Պարզ ըսելու համար՝ դուք անցում պիտի կատարէք խաւարէն դէպի լոյսը եւ պիտի դառնաք Անոր զաւակը:

Եթէ կ'ուզէք փրկութիւն ստանալ Յիսուսի միջոցով, կրկնեցէ՛ք այս աղօթքը.

«Երկնայի՛ն Աստուած, ես կը գիտակցիմ, որ մեղաւոր եմ եւ ինկած եմ Քու արդարութեան չափանիշէն: Ես արժանի եմ յաւիտեան դատապարտուելու իմ մեղքերուն համար: Շնորհակալութիւն, որ չես ձգեր զիս այս վիճակին մէջ, քանի որ ես կը հաւատամ, որ Դուն ուղարկեցիր Յիսուս Քրիստոսը՝ Քու Միածին Որդին, Որ ծնաւ կոյս Մարիամէն, որպէսզի մահանար ինծի համար եւ կրէր իմ դատավճիռը խաչին վրայ: Ես կը հաւատամ, որ Ան յարութիւն առաւ երրորդ օրը եւ այժմ նստած է Քու աջ կողմը՝ որպէս իմ Տէր եւ Փրկիչ: Այսօր ես կ'ապաշխարեմ, որ Քեզմէ անկախ եղած եմ եւ յաւիտեան կը յանձնեմ իմ կեանքը Յիսուսի իշխանութեան:

Յիսուս, ես կը դաւանիմ, որ Դուն իմ Տէրն ու Փրկիչն ես: Եկրորդ իմ կեանքին մէջ Քու Հոգիով եւ դարձուր ինծի Աստուծոյ զաւակ: Ես կ'որանամ խաւարի գործերը, որոնց ժամանակ մը կը յարէի, եւ այսօրուընէ այլեւս չեմ ապրիր ինծի համար: Ես կ'ապրիմ Քեզի համար՝ Քու շնորհքով, քանի որ Դուն տուած ես կեանքդ ինծի համար, որ յաւիտեան ապրիմ:

Շնորհակալութիւն, Տէր: Այժմ իմ կեանքը լիովին Քու ձեռքերուն մէջ է, եւ համաձայն Քու Խօսքին՝ ես երբեք չեմ ամչնար:»:

Բարի գալուստ Աստուծոյ ընտանիք: Ես կը խրախուսեմ ձեզ այս հրաշալի լուրը պատմելու մէկ այլ հաւատացեալի: Նոյնպէս կարելոր է, որ դուք միանաք որեւէ տեղական եկեղեցւոյ, որ կը հաւատայ Աստուածաշունչին, եւ հաղորդակցեցէ՛ք այլ մարդոց հետ, որոնք կը խրախուսեն ձեզ հաւատքի մէջ: Կրնաք ազատօրէն կապ հաստատել մեր ծառայութեան հետ (այցելեցէ՛ք MessengerInternational.org կայքը), եւ մենք պիտի օգնենք ձեզի եկեղեցի գտնելու ձեր բնակավայրին մէջ:

Դուք ճիշդ նոր ոտք դրիք ամենազարմանալի ճանապարհի վրայ: Կը մաղթե՛մ ձեզի առատ յայտնութիւններ, շնորհք եւ ընկերութիւն Աստուծոյ հետ ձեր ամենօրեայ կեանքին մէջ:

ՆՇՈՒՄՆԵՐ

Գլուխ 1

1. «Ուեպթերի անգլերէնի լիակատար բառարան» (Նեու Եորք, «Gramercy», 1993թ.), «յաւիտենութիւն» բառայօդուածը:
2. «Ամերիկեան ժառանգութեան անգլերէնի բառարան», Չորրորդ հրատարակութիւն (Նեու Եորք, «Houghton Mifflin», 2000թ.), «յաւիտենութիւն» բառայօդուածը: Յաւիտենութիւն. «յաւիտենական ըլլալու վիճակ կամ յատկանիշ. յաւիտենական. ժամանակից դուրս գոյութիւն ունեցող. հոսկէ՝ ժամանակէն դուրս գոյութեան վիճակ»:
3. Մերիլ Ֆ. Անկեր, «Անկերի նոր Աստուածաշնչեան բառարան», Ռ.Ք. Հարիսոնի խմբ. (Շիքալօ, «Moody», 1998թ.), «BibleSoft PCStudyBible», 4-րդ թող.:
4. Ռոպերթ Եանկ, «Եանկի Սուրբ գիրքի բառացի թարգմանութիւնը» (Կրենտ Ռեպիտս, Միշիկըն, «Baker», 1986թ.):

Գլուխ 3

1. Յայտնութիւն 2.23, AMP
2. Ղուկաս 16.2
3. Եբրայեցի 4.13, AMP
4. Յովհաննէս 8.24
5. Գործք 4.12, AMP
6. Յակոբոս 2.10, TLB
7. Եփեսացի 2.8,9, NLT (*Աստուած* անունը փոխուած է *Ճէյլընի՝* պատմութեան համապատասխանելու համար)
8. Ժողովող 9.5,6, NLT
9. Առակաց 24.20, NLT
10. Առակաց 13.13
11. Մատթէոս 22.13,14
12. Յայտնութիւն 22.14,15
13. Տիտոս 1.16, NLT (*Աստուած* անունը փոխուած է *Ճէյլընի՝* պատմութեան համապատասխանելու համար)
14. Ղուկաս 6.46, TEV
15. Մատթէոս 7.21–23, TLB (*Երկինք* բառը փոխուած է *Աֆապելի՝* պատմութեան համապատասխանելու համար)
16. Յակոբոս 2.14, 17–20, NLT (*Աստուած* անունը փոխուած է *Ճէյլընի՝* պատմութեան համապատասխանելու համար)
17. Եզեկիել 18.25, 27,28, TLB
18. Սաղմոս 50.16–21, TLB
19. Մատթէոս 22.13
20. Առակաց 30.12
21. Մատթէոս 24.12,13, TEV
22. Բ. Պետրոս 2.20,21, TEV (*Յիսուս Քրիստոս* անունը փոխուած է *Ճէյլընի՝* պատմութեան համապատասխանելու համար)
23. Եզեկիել 18.24–27, NLT
24. Մատթէոս 24.13
25. Յայտնութիւն 3.5, NASB
26. Առակաց 21.16, NIV
27. Մատթէոս 22.13,14

28. Երբայեցիս 10.26,27, 30,31, NLT (*Աստուած անունը փոխուած է Ճէյլընի՝ պատմութեան համապատասխանելու համար*)
29. Յակոբոս 3.1, NLT (*Եկեղեցի բառը փոխուած է դպրոցի, եւ Աստուած անունը փոխուած է Ճէյլընի՝ պատմութեան համապատասխանելու համար*)
30. Մարկոս 9.42
31. Դուկաս 12.45–48, NLT
32. Յուդայ 13, TEV
33. Սատթէոս 22.13,14
34. Յայտնութիւն 16.5–7, TEV

Գլուխ 4

1. *«Ամերիկեան ժառանգութեան բառարան»*, Երրորդ հրատարակութիւն (Նեու Եորք, «Houghton Mifflin», 1992թ.), «տարրական» բառայօդուածը:

Գլուխ 5

1. Ֆիլմերու վերանայումներ. *«Մաթրիքս»*, [http://www.pluggedinonline.com / movies/movies/a0000128.cfm](http://www.pluggedinonline.com/movies/movies/a0000128.cfm), մուտքը՝ Սեպտեմբեր 5, 2005թ.:
2. Ալեքսանտր Ռոպերթսի եւ Ճէյն Տոնալտսընի խմբ., *«Նիքիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Պոլիկարպոս. Նամակ փիլիպպեցիներուն», 10 հատոր (Կրենտ Ռեփիտս, Միշիկըն, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 1:
3. Ալեքսանտր Ռոպերթսի եւ Ճէյն Տոնալտսընի խմբ., *«Նիքիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Պոլիկարպոս. Նամակ փիլիպպեցիներուն», 10 հատոր (Կրենտ Ռեփիտս, Միշիկըն, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 2:
4. Ալեքսանտր Ռոպերթսի եւ Ճէյն Տոնալտսընի խմբ., *«Նիքիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Կդեմես Հռովմայեցի. Նամակ կորնթացիներուն», 10 հատոր (Կրենտ Ռեփիտս, Միշիկըն, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 32:
5. Ալեքսանտր Ռոպերթսի եւ Ճէյն Տոնալտսընի խմբ., *«Նիքիական ժամանակաշրջանին նախորդող հայրեր»*, «Կդեմես Հռովմայեցի. Նամակ կորնթացիներուն», 10 հատոր (Կրենտ Ռեփիտս, Միշիկըն, «Wm. Eerdmans Publishing Company», 1985թ.), գլ. 34:
6. Տէյվիտ Ու. Պերքոտի խմբ., *«Վաղ քրիստոնէական հաւատալիքներու բառարան»* («Hendrickson Publishers, Inc.», 1998թ.), էջ 586:
7. Նոյնը:
8. Ճոշ ՄաքՏաուել, *«Վճռական վկայութիւն»* (Սան Պերնարտինօ, Գալիֆորնիա. «Here's Life Publishers», 1972թ.), էջեր 50–52:

Գլուխ 6

1. Քենեթ Հեկին, *«Ես կը հաւատամ տեսիլքներուն»* (Թալսա, Օքլահոմա, «Faith Library Publications», 1984թ.), էջեր 68–71 (երկրորդ հրատարակութիւն, տասներորդ տպագրութիւն):
2. ՄԱԸ Ձեռնարկներու շարքէն, 1961–1997թթ., Միացեալ Աստուածաշնչեան Ընկերութիւն:
3. Տէյվիտ Ու. Պերքոտի խմբ., *«Վաղ քրիստոնէական հաւատալիքներու բառարան»* («Hendrickson Publishers, Inc.», 1998թ.):
4. Նոյնը:
5. Նոյնը:
6. Նոյնը:
7. Նոյնը:
8. *«Ամերիկեան ժառանգութեան անգլերէնի բառարան»*, Զորրորդ հրատարակութիւն. «Houghton Mifflin Co.», 2004թ. (ծրագրակազմի հրատարակութիւն):

Գլուխ 8

1. Ղուկաս 14.12–14
2. Մարկոս 12.43,44, TEV
3. Կողոսացիս 1.28 (*Քրիստոս* անունը փոխուած է *Ճէյլընի՛* պատմութեան համապատասխանելու համար)
4. Եզեկիել 13.10,11, NIV
5. Ա. Կորնթացիս 3.12–15, NLT
6. Ա. Թէսաղոնիկեցիս 2.19,20, NLT
7. Մատթէոս 12.36,37, TEV
8. Առակաց 12.14, TEV
9. Երեմեայ 11.20, NKJV
10. Երեմեայ 17.10, NLT (*Տէր* անունը փոխուած է *Ճէյլընի՛* պատմութեան համապատասխանելու համար)
11. Ոստ Մատթէոս 25.34–40-ի (TEV)
12. Բ. Կորնթացիս 9.10,
13. Բ. Կորնթացիս 9.9, AMP
14. Ղուկաս 14.11, AMP
15. Ղուկաս 19.14, NLT
16. Յայտնութիւն 2.26,27, NIV
17. Մատթէոս 25.21

Գլուխ 9

1. Պատմութեան անունները փոխուած են՝ գաղտնիութեան համար:

Գլուխ 10

1. Ճէյմս Սթրոնկ, «*Սթրոնկի Աստուածաշունչի սպարիչ համաբարբառ*» (Փիպոտի, Մասաչուսեթս, «Hendrickson Publishers», 1988թ.):
2. «Biblesoft»-ի «*Սթրոնկի նոր սպարիչ համաբարբառ*», (Սիեթլ, Ուաշինկթըն, «Biblesoft Inc.», 4-րդ թող., 1994թ.):

Գլուխ 12

1. Այս հատուածը փոխուած է այն նիւթէն, որ առաջին անգամ յայտնուեցաւ ին «*Անկոտրում հոգի. Այն զօրութիւնը, որուն կարիքը դուք ունիք՝ երբեք չյանձնուելու համար*» գիրքին մէջ (Քոլորատո Սփրինկս, Քոլորատո, «Waterbrook Press», 2011թ.), էջեր 217–219:

Գլուխ 13

1. «*Ուեպպըրի անգլերէնի լիակատար բառարան*» (Նեու Եորք, «Gramercy», 1993թ.), «նախանձ» բառայօդուածը:
2. «*Ամերիկեան ժառանգութեան անգլերէնի բառարան*», Չորրորդ հրատարակութիւն. «Houghton Mifflin Co.», 2004թ. (ծրագրակազմի հրատարակութիւն):

Գլուխ 14

1. Լեոնարտ Ռեյվենհիլ, «Սողոմի մէջ Աստուածաշունչ չկար» (Մինեսապոլիս, Մինեսոթա, «Bethany House», 1971թ.), էջ 155:
2. Ռեպեթա Ռուբըր Սփրինկըր, «*Իմ երազը Երկնքի մասին*». *Տասնիններորդ դարու դասական հոգեւոր աշխատութիւն, որու սկզբնական վերնագիրն էր «Ինթրա Մուրոս»* (Յինցինաստի, Օհաիօ, «Harrison House»), էջ 21:



«Մեսէնճըր Ինթերնեշնլ»

ծառայութեան նպատակն է՝ օգնել անհատներուն, ընտանիքներուն, եկեղեցիներուն եւ ազգերուն գիտակցելու եւ վերապրելու Աստուծոյ Խօսքի վերափոխող զօրութիւնը:

Շնորհիւ այս գիտակցման՝ պիտի փոխուին թէ՛ մարդիկ, թէ՛ ամբողջ բնակավայրեր, եւ հասարակութիւնը գործուն կերպով պիտի պայքարի այս աշխարհը կեղեքող անարդարութեան դէմ:

CloudLibrary.org կայքը առցանց հարթակ է, որ առիթ կու տայ ամբողջ աշխարհի մէջ գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն ստանալու անվճար թուայնացած ուսումնական նիւթեր՝ իրենց լեզուներով:

Այցելեցէ՛ք **CloudLibrary.org** կայքը եւ օգտուեցէ՛ք ճոն եւ Լիզա Պիվիրներու շարք մը այլ նիւթերէն աւելի քան 80 լեզուներով:

Ելեկտրոնային գիրքեր, օտիոյ եւ վիտիոյ ուսուցումներ, օտիոյ գիրքեր, Աստուածաշունչեր...

Կ'ուզէ՞ք աւելի՞ն: Տեսաժրէ՞ք պատկերակը.



**CLOUD
LIBRARY**



ԲԱՐԻ՞, ԹԵ՞ ԱՍՏՈՒԱԾ

ԻՆՉՈ՞Ւ ԲԱՐԻՆ ԱՌԱՆՑ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱԲԱՐԱՐ ՉԷ:



Եթէ ինչ որ բան մը բարի է, ատիկա պէտք է որ Աստուծո՛մէ ըլլայ, այնպէս չէ՞:

Մեր օրերուն մէջ «բարի» եւ «Աստուած» բառերը կարծես հոմանիշներ դարձած են: Մենք կը հաւատանք, որ այն, ինչ որ ընդհանուր առմամբ բարի կը համարուի, պէտք է որ համապատասխանէ Աստուծոյ կամքին: Առատածեռնութիւնը, խոնարհութիւնը, արդարութիւնը բարի են: Եսասիրութիւնը, ամբարտաւանութիւնը, դաժանութիւնը չար են: Կը թուայ՝ այս տարբերակումը շատ պարզ է:

Բայց արդե՞օք ամէն ինչ այդքան պարզ է: Եթէ բարին այդ աստիճան ակնյայտ է, ինչո՞ւ Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեզի զանազանութիւն անհրաժեշտ է՝ այն ճանչնալու համար:

«Բարի՞, թէ՞ Աստուած» գիրքը՝ սովորական ուղերձ մը չէ այն մասին, թէ ինչպէս դուք ձեզի լուծէք ձեր խնդիրները: Այս գիրքը պարզապէս չի խնդրեր ձեզմէ, որ փոխէք ձեր վարքը. այն պիտի ընէ աւելին: Այն պիտի տայ ձեզի կարողութիւն, որուն միջոցով դուք պիտի կարենաք հաղորդակցիլ Աստուծոյ հետ այնպիսի մակարդակի վրայ, որ պիտի փոխէ ձեր կեանքի իւրաքանչիւր բնագաւառը:

Այս գիրքը, նաեւ ճոն եւ Լիզա Պիվիրներու յաւելեալ միւսերը կրնաք ներբեռնել անվճար հետեւեալ կայքէջէն.



CloudLibrary.org

ԻնՊՊԻԱԻՐ՝ ՑԱԻԻՏԵՆՈՒԹԻՒՆ ԿՐ ՄՊԱՍՈՒԻ ՁԵՉԻ

Պատկերացուցե՛ք, որ դուք կը մասնակցիք փորձի մը, ըստ որում ձեր յաջորդ 24 ժամը պիտի որոշէ ձեր մնացած կեանքի որակը: Այդ փորձը հաշուի պիտի առնէ ամէն ինչ՝ սկսեալ ձեր աշխատանքէն մինչեւ այն թաղամասը եւ տունը, որուն մէջ դուք կ'ապրիք, որպէսզի որոշէ, թէ ինչպէս դուք պիտի անցընէք այդ մէկ օրը: Ինչպիսի՞ մօտեցում դուք կը ցուցաբերէիք այդ օրուան: Ձեր վարքը նպատակաուղղուած պիտի ըլլար, թէ՞ դուք ինքնահոսի պիտի ձգէիք ամէն ինչ՝ յոյս ունենալով, որ ամէն ինչ բարեյաջող պիտի ընթանայ:

Թերեւս այս գաղափարը անհաւանական թուայ, բայց այն պարզապէս յօրինուած չէ: Նոյն ձևով մեր այսօրուան որոշումները պիտի ազդեն մեր յաւիտենական կեանքին վրայ:

«Յաւիտենութեամբ շարժողները» գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ ճոն Պիվիրը կ'օգտագործէ դիպուկ այլաբանութիւն եւ կը վկայակոչէ բազմաթիւ Աստուածաշնչեան հատուածներ՝ պարզօրէն պատկերելով այն, թէ ինչպէս մեր երկրային կեանքը կ'որոշէ մեր յաւիտենական կեանքը:

Այն կեանքը, որ կը սպասէ մեզի այս աշխարհին հրաժեշտ տալէն ետք, պարզապէս ինչ որ վայր մը չէ, որուն մէջ մենք պիտի յայտնուինք. այն շատ աւելին է: Մի՛ սպասէք, մինչեւ որ չափազանց ուշ ըլլայ: Բացայայտեցե՛ք, թէ ինչպէս պէտք է ապրիլ, որ ձեր կեանքը նշանակութիւն ունենայ այսօր եւ յաւիտեան:



ճոն Պիվիրը եւ անոր կիներ՝ Լիզան, «Մեսինճըր Ինթերնեշընլ» ծառայութեան հիմնադիրներն են: Գոնը քարոզիչ է, նաեւ՝ հանրաճանաչ գրող: Առանց փոխգիջման՝ ան համարձակօրէն եւ ջերմեռանդօրէն կը քարոզէ ճշմարտութիւնը: Ան կ'ուզէ սատարել տեղական եկեղեցիներուն եւ օգտակար դառնալ առաջնորդներուն քրիստոնէական միութեան՝ անկախ անոնց բնակութեան վայրէն, լեզուէն կամ միջավայրէն: Մինչեւ օրս անոր միութիւնը թարգմանուած են աւելի, քան 90 լեզուներով, եւ միլիոնաւոր օրինակներով բաժնուած են ամբողջ աշխարհի տարածքին գտնուող հովիւներուն եւ առաջնորդներուն: Երբ ճոնը տունը գտնուի, սովորաբար կը փորձէ համոզել Լիզային միասին կոլֆ խաղալ, նաեւ կը հաղորդակցի իր չորս որդիներուն, հարսին եւ թոռնիկներուն հետ:



Ներբեռնեցե՛ք այս եւ այլ
միւթեր հետեւեալ կայքէն.
CloudLibrary.org



Այս գիրքը նուրբ է հեղինակին կողմէն
եւ վաճառքի ենթակայ չէ:



Կը իրաւաւորուած ստեղծէր
Տեսութիւնը անտեսելով: